ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1948

III

КНИГА ДОЛЖНА БЫТЬ
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗЖЕ
УКАЗАННОГО ЗДЕСЬ СРОКА

891.99(09) 670
Հ-25 | ՀՍՍՌ. Գրք. Ալպ.
Սովետական Գրականության
Պրոբլեմները. Գիրք 3 րդ.

au5. 362-S4r

III

ՆՎԻՐՎՈՒՄ Է

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ
30-ԱՄՅԱԿԻՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

ПРОБЛЕМЫ СОВЕТСКОЙ ЛИТЕРАТУРЫ

ЛИТЕРАТУРНЫЕ РАЗЫСКАНИЯ

КНИГА ВТОРАЯ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1947

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.99 (09)
Ղ-95

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

11
47548



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1947

Խմբագրությամբ՝ Հ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ և Է. ԹՈՓՉՅԱՆԻ

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի 1946 թ. օգոստոսի 14-ի «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին որոշումից և ընկ. Ա. Ժդանովի՝ այդ առթիվ Լենինգրադի պարտիական ակտիվի նիստում և գրողների ժողովում տված զեկուցումից հետո՝ Հայկական ՍՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտը նախապատրաստեց ու հրավիրեց իր հերթական 4-րդ գիտական սեսիան՝ նվիրված սովետական գրականության պատմության և տեսության մի քանի հիմնական պրոբլեմներին։

1947 թ. ապրիլի 21—23-ին կայացած, գիտական այդ սեսիայի արդյունքն է Ինստիտուտի «Գրական-բանասիրական հետազոտություններ»-ի այս գրքի առաջին բաժինը։

Այստեղ տրվում են Ինստիտուտի ավագ գիտ. աշխատակիցների՝ գիտական սեսիայում կարդացած զեկուցումները՝ «Սովետահայ գրականության պատմության պարբերացման (պերիոդիզացիայի) հարցի շուրջը» (Աս. Ասատրյան), «Սոցիալիստական ռեալիզմի պրոբլեմների շուրջը» (Էդ. Թոփչյան), «Դրական հերոսի կերպարը սովետական գրականության մեջ» (Ս. Հարությունյան), «Կլասիկ ժառանգությունը և սովետահայ գրականությունը» (Հ. Գյուլիքևխյան) և «Ռուս գրականության նշանակությունը սովետահայ գրականության համար» (Ա. Կարինյան)։

Նախ քան տպագրության հանձնելը, սեսիայում կարդացված զեկուցումները հեղինակների կողմից վերամշակվել ու լրացվել են, հաշվի առնելով սեսիայում՝ մտքերի փոխանակության ընթացքում արված ճիշտ դիտողությունները։

Գրքի երկրորդ բաժինը պարունակում է «Սովետահայ գրականության ժամանակագրությունը», որն ընդգրկում է սովետահայ գրականությունն սկզբից մինչև սովետական գրականության զարգացման նոր, հետպատերազմյան շրջանը նշանավորող ՀամԿ(բ)Պ

ԱԿ-ի պատմական որոշումները գրականության ու արվեստի մասին և ընկ. Ա. Ժդանովի ծրագրային զեկույցները «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին: «Ժամանակագրություն» կազմել են Ինստիտուտի կրտսեր գիտ. աշխատակիցներ Ա. Զաքարյանը և Հ. Ղազարյանը՝ Ինստիտուտի սովետական գրականության սեկտորի վարիչ ընկ. Էդ. Թոփչյանի ղեկավարությամբ:

«Գրական-բանասիրական հետազոտություններ»-ի երկրորդ գիրքը առաջին քայլն է, որ կատարում է Ինստիտուտը սովետական գրականության պատմության ու տեսության պրոբլեմների ուսումնասիրության բնագավառում Կոմկուսի Կենտրոնական Կոմիտեի պատմական որոշումների կենսագործման ուղղությամբ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

I

ՄԱՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՍ. ԱՍԱՏՐՅԱՆ

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ (ՊԵՐԻՈԴԻԶԱՑԻԱՅԻ) ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

1

*Լենինը մի առիթով նկատում է, որ մարքսյան «մատերիալիզմը երբեք պատմության մեջ ամեն ինչ բացատրելու հավակնություն չի ունեցել, այլ ձգտել է նշել պատմությունը բացատրելու, Մարքսի արտահայտությամբ ասած... «միակ գիտական» եղանակը»:**

Լենինի այս դիտողությունը վերաբերում է նաև գրականության պատմության խնդիրներին: Այստեղ մարքսյան մատերիալիզմի կիրառումով չի կարելի «ամեն ինչ բացատրելու հավակնություն ունենալ»: Այդ առավել ևս կարելի է ասել գրականության պատմության պարբերացման (պերիոդիզացիայի) նկատմամբ, որն իրեն ոչ թե, կամ ավելի ճիշտ, ոչ այնքան գրական կյանքի զարգացման ընթացքը, գրական երևույթներն իրենց բոլոր կողմերով բացատրելու նպատակ է առաջադրում, այլ միայն, կամ ավելի ճիշտ՝ ամենից ավելի հետապնդում է այդ զարգացման ընթացքի՝ որակապես իրարից տարբեր աստիճանները որոշելու և այդ աստիճանների շրջանակներում գրական երևույթները խմբավորելու խնդիրները, երևույթների հանգամանալից բացատրությունները վերապահելով բուն պատմությունը շարադրողներին:

Գրականության պատմության պարբերացման հնարավորությունն ու կարևորությունը հիմնված է այն իրողության վրա, որ ինչպես քաղաքացիական պատմությունը, նույնպես և հասարակու-

* Ленин, Соч. т. I, изд. 2-ое. стр. 66.

թյան հոգևոր կյանքի զարգացման պատմությունը, իրարից անկախ «դեպքերի, պատահականությունների» մի կուտակում չի, այլ օրինաչափ զարգացման ընթացք՝ անհատներն հենված հասարակական կյանքին, պայմանավորված այդ կյանքի բովանդակությամբ ու նրա զարգացման ուղղությամբ:

Ձեռնարկելով սովետահայ գրականության պատմության պարբերացման փորձին և ամենևին հավակնության չունենալով այդ պատմության բազմազան ու բարդ խնդիրներն ապահով կերպով լուծելու, մենք ձգտում ենք միայն տալ մեր գրականության վերջին 30-ամյակի պատմության կառուցման սխեման: Եվ եթե մեզ փորձ ի շահս հաջողվի այդ, ապա դրանով իսկ դպրոցին հնչեցրած կլինենք սովետահայ գրականության դասական պատմության ստեղծելու ժվարին աշխատանքը:

Նախքան պարբերացման սկզբունքների պարզաբանմանն անցնելը, կարևոր ենք համարում մի քանի խոսքով անդրադառնալու սովետական գրականության պատմության մասին հարցին: Ինչպիսի՞ն է լինելու այդ պատմությունը:

Ռուս գրականության պատմության հարցերին նվիրած իր նշանավոր հոդվածում վ. Բելինսկին գրում է.

«Գրականությանը ծանոթանալու և այն ուսումնասիրելու երեք ձև կա. առաջինը՝ զուտ բնագիտական, երբ բնագիտական վերլուծման է ենթարկվում ամեն մի նշանավոր գրող, երկրորդ՝ զուտ պատմական,— երբ տրվում է ոչ գրականության ընթացքի ու զարգացման ակնարկներ (обозрение). այս դեպքում ավելի ուշադրություն է դարձվում էպոխաներին ու գրականության ուղղություններին— դպրոցներին, քան առանձին դեմքերին: Երրորդ ձևը՝ այդ երկու ձևերի՝ բուն հնարավորության միացումն է. այս ձևը լավագույնն է»:*

Իր առաջարկած այս երրորդ ձևի համաձայն Բելինսկին հղացել էր ստեղծելու ռուս գրականության պատմության սկզբից մինչև իր ժամանակները: Այդ մասին է վկայում հիշյալ հոդվածի վերնագիրը՝ „Опыт истории русской литературы“, որ հեղինակը համզամանորեն քննության է առնում ու պարզում իր հղացած պատմության կառուցման հիմնական սկզբունքները:

---

* В. Белинский, Собр. Соч. том II, 1919 г., стр. 1011.

Մեզ թվում է, որ Բելինսկու առաջարկած այդ ձևը՝ գրականության ուսումնասիրության «զուտ քննադատական» և «զուտ պատմական» սկզբունքները միացնող ձևը, ամենից հարմար ու անհրաժեշտ ձևն է գրականության պատմության համար ընդհանրապես, առավել ևս ժամանակակից գրականության պատմությունն ուսումնասիրելու համար, մի պատմություն, որի սկիզբը և ամենավերջին՝ նոր սկսվող էտապն իրարից հեռու են միայն 30 տարով և որի ամենագլխավոր գործիչները, այդ պատմության սկզբնավորման մասնակիցներն ու նախորդներն էլ կենդանի են, գործում են, ստեղծագործում նորերի հետ միասին, հանդիսանալով նրա զարգացման հետագա ընթացքի ակտիվ մասնակիցները:

Գրականության պատմության բելինսկիական այդ տիպը ենթադրում է ներկայացնել գրականության պատմությունն ըստ նրա զարգացման էտապների հաջորդականության, ընդսմին տալով ոչ միայն այդ էտապների և գրական ուղղությունների— հոսանքների ընդհանուր տեսությունն ու բնութագիրը, այլև նշանավոր գրողների ստեղծագործությունների կոնկրետ քննադատական վերլուծումներ՝ նրանց տեղն ու նշանակությունը գտնելով ողջ գրականության զարգացման պատմական հեռանկարի մեջ:

Հետևելով Բելինսկուն, մենք կստանանք ոչ թե «զուտ պատմական» հայեցակետից կառուցված պատմություն, այլ քննադատական կամ քննական պատմություն: Պատմության այդ տիպն էլ անհրաժեշտ է այնպիսի մի երիտասարդ գրականության համար, որպիսին սովետական գրականությունն է ընդհանրապես, ու նրա օրգանական մի հատվածը հանդիսացող սովետահայ գրականությունը:

Համենայն դեպս Բելինսկու նշած այս տիպերից որն էլ ընտրելու լինենք սովետահայ գրականության պատմության համար, այնուամենայնիվ ճիշտ պարբերացումն առաջին անհրաժեշտ նախապայմանն է, առանց որի չի կարող ստեղծվել գրականության անցած ուղու գիտական պատմություն: Հետևաբար պարբերացման հարցը քննելու, նրանով առանձնապես զբաղվելու պահանջն առաջացել է մեր գրականության հետհոկտեմբերյան ժամանակաշրջանի զարգացման գիտական պատմությունն ստեղծելու անհետաձգելի խնդրից: Իսկ այս խնդիրն է՛լ ավելի հրատապ է դարձել Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի 1946 թ. օգոստոս-սեպտեմ-

բերյան պատմական որոշումներից հետո սովետական գրականության զարգացման նոր, հեղափոխության էտապի սկզբին, երբ անհրաժեշտ է հանրագումարի բերել անցած մոտ 30-ամյա ուղու արդյունքները, երբ անհրաժեշտ է լենինյան-ստալինյան թեորիայի լույսի տակ ընդհանրացումներ կատարել այդ ժամանակաշրջանի՝ իր տեսակի մեջ աննախընթաց հարուստ փորձի, ընդհանրացումներ, որոնք կնպաստեն մեր գրական-տեսողական մտքի, մեր գրական կուլտուրայի հետագա ճիշտ առաջընթացին՝ սովետական գրականության բոլշևիկյան պարտիականության ոգով:

Այժմ անդրադառնանք բուն հարցին՝ մեր գրականության պատմության պարբերացման հարցին, և ամենից առաջ նրա ելակետային սկզբունքներին: Պարբերացումը կատարելիս սովետական գրականության զարգացման ընթացքը պետք է դիտել ժամանակաշրջանի հետ, երկրի քաղաքական-հասարակական կյանքի հետ գրականության ունեցած կապի ու հարաբերության տեսակետից, յուրաքանչյուր էտապում սովետական հասարակության առաջընթացից բխող ժողովրդի ու պետության կենսական շահերի նկատմամբ գրականության ունեցած վերաբերմունքի տեսակետից և ոչ թե գրողների երկերի գեղարվեստականության ընդհանուր չափանիշների պահանջի տեսակետից: Բայց դեպքերում էլ, ի հարկե, գրողների երկերի որոշ գեղարվեստական արժանիքը մի մշտական նախապայման է գրականության պատմության մեջ նրանց հաշվի առնելու համար: Եվ այդ նախապրյալի առկայությամբ՝ գրողների երկերի հասարակական-պատմական արժեքը որոշվում է գրականության և սովետական հասարակության քաղաքական ու բարոյական կենսական շահերի առնչության հայեցակետից:

«Արվեստի յուրաքանչյուր երկ անպայման պետք է դիտել դարաշրջանի նկատմամբ, պատմական իրականության նկատմամբ նրա ունեցած հարաբերության մեջ և հասարակության նկատմամբ արվեստագետի ունեցած վերաբերմունքի մեջ»,* — գրել է վ. Բելինսկին: Բելինսկու այս պահանջը շատ կարևոր է մեր օրերի համար, անվերապահորեն կիրառելի մեր գրողների երկերի գնահատման, արժեքավորման համար: Բայց եթե այդ պահանջը ճիշտ է և ընդունելի (իսկ այն, անշուշտ ճիշտ է և ընդունելի առանց որևէ

* В. Г. Белинский, Собр. Соч. т. II, 1919 г., стр 278.

վերապահության) առանձին վերցրած «յուրաքանչյուր երկի» նկատմամբ, ապա առավել ևս այն ճիշտ ու կիրառելի պահանջ է ողջ պրականության նկատմամբ: Ուստի, ներկա դեպքում, սովետահայ պրականության պատմության պարբերացման հարցը քննելիս նրա պարբերացման նախընթաց բոլոր էտապների պրականությունը անպայման պետք է դիտել մեր դարաշրջանի, մեր պատմական արդիականության՝ սովետական իրականության նկատմամբ գրականության ունեցած հարաբերության, գրողների՝ սովետական հասարակության նկատմամբ ունեցած հարաբերության ու վերաբերմունքի տեսակետից: Այս պահանջի հետևողական կիրառումով հետքությամբ կարելի է գրականության պատմության ընթացքի մեջ տարբերել «որոշ հայտնականից», նկատել գրականության զարգացման այս կամ այն էտապում սովետական հասարակության խորի գրական-գաղափարական այն արտահայտությունները, որոնց գեմ մղված պայքարում աճել ու զարդացել է սովետահայ գրականությունը:

2

Գրականության պատմության պարբերացման հիմքում մենք դնում ենք քաղաքացիական պատմության պարբերացումը: Մենք ելնում ենք գրականության, իբրև իդեոլոգիայի՝ հասարակական-պատմական հիմքի մատերիալիստական ըմբռնումից, գրականության և պատմության, գրականության և երկրի հասարակական-քաղաքական կյանքի կապի ու փոխհարաբերության մարքսիստական ըմբռնումից, մենք ելնում ենք՝ բնկեր Ստալինի արտահայտությամբ ասած՝ «հասարակական կեցության և հասարակական գիտակցության միջև, նյութական կյանքի զարգացման պայմանների և հասարակության հոգևոր կյանքի զարգացման միջև եղած հարաբերության հարցի»* լուծման պատմա-մատերիալիստական բնորոշից: Սովետական գրականությունն իբրև սովետական իդեոլոգիայի մի կարևոր բնագավառ, շատ մոտ է իր հասարական-պատմական հիմքին և անորոշն կապված է սովետական մարդկանց հասարակական կեցության ու նրանց կենսական շահերի հետ, հանդիսանալով այդ կեցության հասարակական գիտակցության ամենաներգործուն ձևերից մեկը:

---

* Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, 1940 թ., էջ 667:

ի տարբերություն և ի հակադրություն մինչսոցիալիստական դարաշրջանների, ուր դրեթե միշտ էլ պրոլետարիատի ու ավյալ տիրապետող հասարակական կյանքի միջև կա որոշակի հակադրություն, ըստ որում դրական-գեղարվեստական մտքի պարզացման դասականը հենց այդ հակադրության մեջ է, ավյալ դարաշրջանի պրոլետարիատի և իր գոյության հիմքերի անհատանությամբ շահագրգռված հասարակական-քաղաքական սիստեմի միջև եղած հակադրության մեջ,— սոցիալիստական դարաշրջանում քացառված է այդ հակադրությունը: Այստեղ, սոցիալիստական հանրակարգում, դրական-գեղարվեստական մտքի զարգացման հիմքը գրականության և հասարակության ներդաշնակ կապի ու փոխազդեցության մեջ է, հասարակության ռևոլուցիոն զարգացմանն ակտիվորեն ընթացակից լինելու հրամայական պահանջի մեջ, որն առաջադրում է հասարակությունն իր կենսական շահերն արտահայտող գրականություններ: Իր հիմքում նույնական լինելով, գրականության ու քաղաքականության միջև եղած փոխհարաբերությունը սոցիալիստական հանրակարգում՝ մինչսոցիալիստականի համեմատությամբ այլ բնույթ է կրում: Իսկ այդ տարբերությունը բխում է հասարակական հարաբերությունների տարբերությունից, որնէն և դրական ինտելիգենցիայի ու նրա գործունեության միջավայրը հանդիսացող հասարակության միջև եղած փոխհարաբերությունից:

Պրոլետարական ռևոլուցիայի հաղթանակը, սոցիալիստական սիստեմի հաղթանակը վերացրել է հասարակության— ապրի բաժանումը, նրա պառակտումը անտագոնիստական, հակադիր դասակարգերի ու սոցիալական խմբերի, այդ թվում վերացրել է նաև ինտելիգենցիայի սոցիալական տարբեր խմբավորումները և նրա ու ժողովրդի միջև եղած հակադրությունը:

Սոցիալական-դասակարգային հակադրությունների, շահագործող դասակարգերի ու շահագործման վերացումով, անդասակարգ հասարակության հաստատումով հիմնովին փոխվում է նաև հասարակական կեցության և հասարակական գիտակցության միջև եղած փոխհարաբերության բնույթը: «Կոմունիստական պարտիայի մանիֆեստ»-ում մարքսիզմի հիմնադիրները հաստատել են, որ մինչսոցիալիստական հասարակությունների պատմությունը միշտ ընթացել է «դասակարգային հակադրություններով, որոնք զանա-

պան դարաշրջաններում զանազան կերպ են դոյացել». բայց «հասարակության մի մասի շահագործումը մյուսի կողմից հանդիսացել է այն փաստը, որ անցյալ բոլոր հարյուրամյակների համար բնորոշ էր: Ուստի զարմանալու ոչինչ չկա, որ չնայած բոլոր տարբերություններին ու բազմազանության, բոլոր դարերի հասարակական գիտակցության շարժվում է որոշ ընդհանուր ձևերի մեջ, գիտակցության այն ձևերի մեջ, որոնք բոլորովին կանհետանան միայն դասակարգերի հակադրության վերջնական անհետացման հետ միասին»:

«Կոմունիստական ռևոլյուցիան ամենաարմատական խզումն է անցյալից ժառանգած սեփականության հարաբերությունների հետ». «նրա դարպացման ընթացքում տեղի է ունենում ամենաարմատական խզում» նաև «անցյալից ժառանգություն ստացած գաղափարների»* ու գաղափարական սիստեմների հետ: Պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակով «հին բուրժուական հասարակության տեղը՝ իր դասակարգերով ու դասակարգային հակադրություններով՝ բռնում է մի ասոցիացիա, որի մեջ ամեն մեկի ազատ զարգացումը հանդիսանում է բոլորի ազատ զարգացման պայմանը»:**

Իսկ սրանից էլ բխում է այն, որ սոցիալիզմի դարաշրջանի դրակայությունը, իբրև նոր հասարակական կեցության արտահայտող հասարակական գիտակցության ձևերից մեկը, անդրադարձնելու է սոցիալական ճնշումներից ու շահագործումից ազատ մարդու ներդաշնակ միասնությունը՝ դասակարգային հակադրությունների հասարակության հետ, հասարակություն, որի մեջ առանձին անհատի ազատ զարգացումը բոլորի ազատ զարգացման պայմանն է: Ուստի նոր սոցիալիստական դարաշրջանի դրակայության հիմնական պրոբլեմը, հիմնական թեման՝ իր անմիջապես գործնական կապակցություններով՝ սոցիալիստական քաղաքակրթությունն է՝ սոցիալիստական հասարակության ներդաշնակ զարգացման գործընթացի, ոչ թե սոցիալիստական քաղաքակրթության զարգացումն է, ի տարբերություն մինչ սոցիալիստականի, ասենք բուրժուականի, ուր, ինչպես նկատել է Գորկին, «Գրականության հիմնական թեման է՝ անհատը հասարակության,

---

* Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, «Կոմունիստական Կուսակցության Մանիֆեստը», 1938 թ., էջ 71:

** Նույն տեղում, էջ 73:

պետության և բնության հանդեպ ունեցած իր հակապրության»*:

Ահա, այս էական առանձնահատկությունից էլ բխում է սոցիալիստական հասարակության գեղարվեստական իդեոլոգիանների, այդ թվում և գրականության զարգացման՝ որոշ ուրույն օրինաչափությունը, որը ներգաշնակ առումով «զուգահեռ» է և համընկնում է նրանց հասարակական-պատմական հիմքի՝ սոցիալիստական հասարակության զարգացման օրինաչափությանը:

3

Մենք մինչև այժմ քննում էինք ընդհանուր-պատմական և գրական-պատմական պարբերացման օբյեկտիվ հատկի ու ընդհանրության հարցը՝ պարզաբանելու և հիմնավորելու այն, թե ինչ՞ անհրաժեշտ է գրականության պատմության պարբերացման հիմքում դնել բաղաքացիական պատմության պարբերացումը և այդ հիման վրա պարզել ու հաստատել գրականության զարգացման օրինաչափությունը, իբրև երկրի պատմական կյանքի գաղափարախոսական արտահայտություն: Բայց միակողմանի, ուստի և սխալ կլիներ հարցի լուսաբանումը միայն այդ կողմից, սխալ կլիներ անտեսել ընդհանուր-պատմական և գրական-պատմական պրոցեսների ընդհանրության հետ միաժամանակ և նրանց միջև գոյություն ունեցող ակնհայտ տարբերությունը: Ուստի անհրաժեշտ է քննության առնել նաև այդ տարբերության հարցը, որի ճիշտ լուսաբանումով միայն կամբողջանա առաջադրված խնդրի քննությունն ու պարզաբանումը:

Ընդունելով ընդհանուր-պատմական և գրական-պատմական պրոցեսների օրինաչափության ընդհանրությունը, չի կարելի անտեսել այդ պրոցեսների օրինաչափական զարգացման դպալի, սակրնհայտ տարբերությունը: Իսկ դա՝ գրականության և պատմության զարգացման օրինաչափական ընթացքի միջև առկա տարբերությունը՝ բխում է առաջինի (իմա՝ գրականության) իբրև իդեոլոգիայի՝ իր հասարակական-պատմական հիմքի նկատմամբ ունեցած հարաբերական «անկախությունից», ինքնուրույնությունից:

«Ի հարկե,— գրում է Էնգելսը «Լյուդվիգ Ֆոյերբախը և գերմանական կլասիկ փիլիսոփայության վախճանը» աշխատության

---

* М. Горький, О литературе, 1935 г. стр. 382—3.

մեջ,— մտածողության պրոցեսի ընթացքը վերջիվերջո որոշում են նյութական կենսապայմանները այն մարդկանց, որոնց գլուխներում տեղի է ունենում այդ պրոցեսը», թեև «այս բանն այդ մարդկանց կողմից անհրաժեշտորեն չգիտակցված է մնում, որովհետև այլ կերպ ամբողջ իդեոլոգիան վերջ կունենար»: Բայց միաժամանակ՝ նկատում է Էնգելսը՝ «ամեն մի իդեոլոգիա, երբ նա արդեն մի անգամ առաջ է եկել, այնուհետև զարգանում է պատկերացումների տվյալ նյութի կապակցությամբ, ավելի ևս մշակելով վերջինները, ապա թե ոչ նա իդեոլոգիա չէր լինի, այսինքն չէր զբաղվի. մտքերի հետ իբրև ինքնուրույն անկախ զարգացող, միմիայն իրենց սեփական օրենքներին ենթարկվող էությունների հետ»:*

Մի այլ առիթով Էնգելսը նշում է, որ օրինակ՝ սոցիալիզմի թեորիայի պատմական զարգացումը կարող է ցայտուն մի ապացույց լինել՝ իդեոլոգիաների հարաբերականորեն ինքնուրույն զարգացման համար:

«Ինչպես ամեն մի թեորիա, նա (=սոցիալիզմը, Ա. Ա.) ևս պետք է սկզբնապես հարեր իրենից առաջ ստեղծված գաղափարապաշարին, որքան էլ որ նրա արմատները նյութական տնտեսական իրողությունների մեջ էին թաղված»,— գրում է Էնգելսը «Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն» աշխատության մեջ:**

Եվ ոչ միայն սոցիալիզմի թեորիան. բոլոր իդեոլոգիաների, այդ թվում և գեղարվեստականի՝ զարգացումն էլ ամեն մի տվյալ էտապում տեղի է ունենում՝ «սկզբնապես հարելով իրենից առաջ ստեղծված գաղափարապաշարին»:

Ընդունելով իդեոլոգիաների զարգացման հարաբերական ինքնուրույնությունը, Մարքսն ու Էնգելսը նշում են «իդեոլոգիայի— իբրև մտավոր պրոցեսի» երկու մոմենտ՝ ազգային և համընդհանուր գիտակցության մոմենտները: Այն ժամանակներից սկսած, երբ ժողովուրդների— ազգերի պատմությունն ընթանում է նրանց միջև հաստատված հետզհետե աճող տնտեսական ու քաղաքական հարաբերությունների առկայության պայմաններում, իդեոլոգիա-

* Ֆ. Էնգելս, «Լյուդվիգ Ֆոյերբախը և գերմանական կլասիկ փիլիսոփայության վախճանը», 1935, էջ 58.

** Տես այդ աշխ. հայերեն թարգմ., էջ 34:

ներկ պարզապես էլ անհրաժեշտ է անհամեմատ ավելի և համընդհանուր փոխկցության ներսո առնչության ու փոխազդեցության:

«Հին տեղական և ազգային ինքնաբավարարվածության ու կղզիացածության փոխարեն հանդես է գալիս ժողովուրդների փոխադարձ բազմակողմանի կապն ու կախումը: Եվ դա՝ ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր արտադրության ասպարիզում: Առանձին ժողովուրդների մտավոր գործունեության արդյունքը դառնում է ընդհանուր սեփականություն: Ազգային միակողմանիությունն ու սահմանափակությունն ավելի ու ավելի անհնար են դառնում: Բազմաթիվ ազգային և տեղական գրականություններից գոյանում է մի համաշխարհային գրականություն», — ասված է «Կոմ. Մանիֆեստում»:*

Այստեղից էլ հետևում է այն, որ համաշխարհային փոխկցության և համաշխարհային կնցության միջև առաջացող հակասությունն իր պատմական զարգացմամբ ավելի ժամանակի հետևից շատ ցածր մակարդակի վրա գտնվող արշ ժողովրդի մոտ կարող է առաջանալ շնորհիվ ոչ միայն ներազգային զարգացման պայմանների: Այդ կարող է առաջանալ նաև շնորհիվ այն բանի, որ այդ «հակասությունը գոյություն է ոչ թե նրա (ավելի ժողովրդի, Ա. Ա.) ազգային շրջանակներում, այլ նրա ազգային գիտակցության և այլ ժողովուրդների արտակարգի միջև, այսինքն՝ արևել միջազգային և համընդհանուր գիտակցության միջև»:**

Ինչևէ այս միտքը պարզ լույս է սփռում այն խորության վրա, որ իր տնտեսական-համաշխարհային զարգացման միջոցով այնքան հետամնաց կիսանոմադական գյուղատնտես Հայաստանում պրոլետարական հեղափոխության շարժման առաջացումը և պրոլետարական պետականության ստեղծումը իրոք նախապատրաստված պրոլետարական-սոցիալիստական գաղափարների համար:

Եվ սա, երբ Հոկտեմբերից հետո՝ 20-ական թվականներին այդպիսի գաղափարների առաջացման ու զարգացման ուղիների հարցը բոլոր վեճի առարկա էր,— Հայաստանում պրոլետարա-

---

* Տես Կ. Մարքս և Ֆր. Էնգելս, «Կոմ. կուս. Մանիֆեստը» հայերեն թարգմ. 1938 թ., էջ 48:

** Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, «Արվեստի մասին» 1943 թ., էջ 27—28:

Կան կուլտուրայի ու գրականության «անհնարինությունը» պատճառաբանվում էր՝ Հայաստանի նյութական տեխնիկական և ընդհանուր կուլտուրական հետամնացությամբ։ Այդ նշանակում է, թե սոցիալիստական կուլտուրայի անհնարինության «թեորիայի» ներկայացուցիչները, որոնք գիտակցորեն կանգնած էին մարքսիզմ-լենինիզմին թշնամի բանակում, իրենց «թեորիական» եզակետներով վարպետ մատերիալիստներ էին, որ գրականության, և ընդհանրապես իդեոլոգիաների զարգացումը մեխանիկական ուղիղ գծով կապված էին համարում միայն կոնկրետ տվյալ երկրի էկոնոմիկայի զարգացման մակարդակի հետ։

Մինչդեռ իդեոլոգիաների և հասարակության նյութական հիմքի հետ նրանց ունեցած կապի ու այդ հիմքով նրանց պայմանավորված լինելու հարցը մեծ է, հարկ է նկատի ունենալ ոչ միայն մի երկրի, այլև հասարակական-տնտեսական կյանքի ու հասարակական գիտակցության ձևերի զարգացման տվյալ մակարդակը բոլոր այն երկրների, որոնց հետ անդրանց կապված է տվյալ հետամնաց երկիրն իր պատմությամբ։

Մարքսիզմ-լենինիզմը չի ժխտում, այլ հաստատում է հասարակական կեցության ու հասարակական գիտակցության ձևերի անհամաչափ զարգացումը, *քան որում հնարավոր է համարում* արտադրողական ուժերի ու արտադրական հարաբերությունների, տնտեսական կուլտուրական տեսակետից համեմատաբար շատ հետամնաց երկրում իդեոլոգիաների համեմատաբար բարձր, շատ ավելի առաջադեմ ձևերի զարգացում։

Այսպես, ուրեմն, երբ հռոմեկիներս, որ կա իդեոլոգիայի մարքս-էնգելսյան բմբռնումով հարաբերական «անկախության» իր հասարակական-տնտեսական հիմքից, *մեզ համար այլևս հասկանալի կլինի այն փաստը, որ գրականության, իբրև իդեոլոգիայի զարգացման ընթացքը և բովանդակությունը ոչ միշտ են ճշգրտորեն համապատասխանում կամ համընկնում պատմության տվյալ ժամանակաշրջանին համապատասխան շրջանների — էտապների բովանդակությանն ու պատմական կյանքի օբեկտիվ ընթացքին։*

Այս ամենից հետևում է, որ ընդունելով ընդհանուր պատմական և գրական-պատմական զարգացման ընթացքի որոշակի տարբերությունը, առաջին հայացքից տրամաբանական կլիներ համապատասխանորեն տարբերել նաև պարբերացումը՝ քաղաքացիական

պատմության համար առանձին և գրականության պատմության համար՝ առանձին, ժամանակաշրջանների համապատասխան սահմանաբաժանումներով: Ձևական տրամաբանության տեսակետից այլ կերպ չի էլ կարելի վարվել, քան սահմանել՝ ժամանակագրական իրարից տարբեր պարբերացումներ պատմության ու գրականության համար առանձին առանձին՝ յուրց տալու, շեշտելու գրական կյանքի օրինաչափության առանձնահատկությունը՝ պատմականի համեմատությամբ: Բայց ձևական տրամաբանությունից բացի՝ կա նաև դիալեկտիկական տրամաբանություն, ըստ որի՝ տվյալ դեպքում անհրաժեշտ է ելնել ոչ թե պատմական ու գրական պրոցեսների տարբերությունից, այլ նրանց ներքին-հիմքային միասնությունից: Գրականության պատմության պարբերացման համար հիմք ընդունելով քաղաքացիական պատմության պարբերացման սահմանաբաժանումը, պետք է հնարավոր կլինի գրականության զարգացման ընթացքը դիտել երկրի հասարակական-քաղաքական կյանքի ֆոնի վրա և հենց այդ դեպքում շատ ավելի ցայտուն կերևվա գրական պրոցեսի զգալի տարբերությունը պատմականից: Ընդհանուր-պատմական և գրական-պատմական պրոցեսի առանձնահատկությունները նկատի ունենալով հանդերձ, ընդունելով գրականության զարգացման ընթացքի զգալի անհամաչափությունը քաղաքացիական պատմության համեմատությամբ, այնուամենայնիվ անհրաժեշտ է՝ գրականության պատմության պարբերացման համար իբրև հիմք և օրինակ վերցնել քաղաքացիական պատմության պարբերացումը, ըստ որում գրականության պատմության փուլերը (этап) որոշելիս՝ հիմք ընդունել քաղաքացիական պատմության պարբերացման սխեման:

Այդպիսով միայն ակնհայտ կդառնա, ցայտուն կերպով կերևա գրականության, իբրև իդեոլոգիայի հարաբերական «անկախության»— ինքնուրույնության իր հասարակական պատմական հիմքի նկատմամբ, պատմականի և գրականի անհամաչափությունը, որը մեծ մասամբ արտահայտվում է պատմականից՝ գրականի՝ մերթ առաջ ընկնելու, բայց մեծ մասամբ նո մնալու փաստով:

4

Ելնելով այն իրողությունից, որ XIX և XX դարերում հայ ժողովրդի— Հայաստանի պատմական բախտը և զարգացումը (ներ-

տույլ և կուլտուրայի զարգացման ընթացքը) սերտորեն կապված է Ռուսաստանի հետ, բնական է, որ Ռուսաստանի նույն շրջանի թե ընդհանուր-պատմական և թե գրական-պատմական պարբերացումն ընդունվի իբրև հիմք, ուղեցույց օրինակ՝ Հայաստանի — հայ ժողովրդի թե պատմության և թե գրականության զարգացման պարբերացումը կատարելու համար։ Իհարկե, սխալ կլիներ անտեսել նախասովետական Հայաստանի, իբրև ցարական պետության հետամնաց գաղութի և նրա մյուս՝ արևմտահայ հատվածի պատմական զարգացման զգալի առանձնահատկությունը, բայց դա կարելի է և պետք է հաշվի առնել հայ նոր գրականության պատմության պարբերացումը կատարելիս՝ չխախտելով պարբերացման հիմնական սխեման, որը համապատասխանելու է ռուսականին, թեկուզ որոշ, աննշան տարբերություններով։

Սովետական շրջանի մեր գրականության պատմության պարբերացումն սկզբունքորեն, իր պատմա-մեթոդոլոգիական հիմունքներով չպետք է տարբերվի նախընթաց ժամանակաշրջանի պարբերացումից. այն պետք է տրամաբանական շարունակությունը և զարգացումը լինի իր նախընթացի, իհարկե, հաշվի առնելով այն առանձնահատկությունները, որոնք բխում են վերջին դարաշրջանի սոցիալ-քաղաքական ու գաղափարախոսական նոր, նախընթացի համեմատությամբ՝ տարբեր բնույթից։ Եվ եթե Ռուսաստանի նոր շրջանի (XIX և XX դ. դ. մինչև Հոկտեմբերյան ռևոլյուցիան) պատմության և գրականության պարբերացման սխեման կարող է և պետք է հիմք ծառայի նույն շրջանի Հայաստանի պատմության ու գրականության պարբերացման համար, ապա այդ նույնը ավելի օրինական ու տրամաբանական է հետ-Հոկտեմբերյան ժամանակաշրջանի համար, երբ Հայաստանը՝ նախկին ցարական Ռուսաստանի հետամնաց ու ճնշված գաղութից դարձավ իր պետականությունն ունեցող միութենական ռեսպուբլիկա, ուր ժողովուրդը ազատորեն զարգացնում է երկրի էկոնոմիկան ու կուլտուրան սոցիալիստական հիմքերի վրա։ Հայ ժողովրդի այս ժամանակաշրջանի պատմությունն ու գրականությունը զարգացել է օրգանապես կապված Սովետական Ռուսաստանի ու ողջ Սովետական Միության պատմության ընթացքին։ Սովետական Հայաստանի զարգացումը նույն պատմական բովանդակությունն ունի, ինչ որ ողջ Միության և առաջին հերթին Սովետական Ռուսաստանի զար-

դացումը: Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայից Անդրկովկասում ու Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո՝ սկսված երկու սիստեմների՝ սոցիալիզմի ու կապիտալիզմի պայքարի ընթացքը՝ ռևոլյուցիայի քաղաքական հաղթանակի մոմենտից մինչև Հայրենական Մեծ Պատերազմի օրերը, սոցիալիզմի սիստեմի վերընթաց զարգացումը՝ արտադրության հիմնական միջոցների պետականացման մոմենտից սկսած մինչև սոցիալիստական սիստեմի լիակատար հաղթանակը՝ ստալինյան հնգամյակների իրականացումը և այդ ամենի հիմքի վրա՝ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի, արվեստի ու գրականության ստեղծումը — ահա Սովետական Ռուսաստանի և Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաների, ուրեմն և Հայկական ՍՍՌ-ի պատմության էական բովանդակությունը:

Սովետահայ գրականության պատմությունն իր հիմնական բովանդակությամբ, Սովետական Հայաստանի ու ողջ Սովետական Միության քաղաքացիական պատմության գրական-գեղարվեստական անդրադարձումն է, նույն այդ պատմությունն է՝ արված գեղարվեստական պատկերների միջոցով՝ դարաշրջանի ոգիով համակված՝ թե պոեզիայում, թե պրոզայում և թե դրամատուրգիայում:

Սովետահայ գրականությունը, իբրև Միության բազմազգի սովետական գրականության մի հատվածը՝ իր պատմական ու գաղափարական բովանդակությամբ միանման է մյուս եղբայրական ժողովուրդների և առաջին հերթին ռուսական սովետական գրականության հետ։ Առկա է նաև ստեղծագործական մեթոդի միասնությունն ու ընդհանրությունը միութենականի հետ, արտահայտված գեղարվեստական մտքի մարմնավորման հայկական-ազգային ձևով:

Այստեղից էլ հետևում է սովետահայ գրականության պատմության պարբերացման սկզբունքների, նրա կառուցման սխեմայի ընդհանրությունն ու միասնությունը Միության գրականության պատմության պարբերացման սկզբունքների ու սխեմայի հետ:

Այդ ընդհանրությունը հանրահայտ է, և ըստ հնարավորին ցույց կտրվի պարբերացման սխեմայում՝ գրականության զարգացման էտապների բնութագրման ժամանակ։ Բայց միասնության և ընդհանրության հետ միասին հարկ է, ընդհանուր սովետական

գրականության պատմության համեմատությամբ, նկատի ունենալ նաև սովետահայ գրականության զարգացման ընթացքի առանձին տարբերությունները՝ Սովետական Հայաստանի պատմական կյանքի ու սովետահայ գրականության զարգացման հատկապես առաջին էտապների համար։

5

Սովետահայ գրականության պատմության պարբերացումը որոշելիս մենք ղեկավարվում ենք ՀամԿ(բ)Պ Պատմության դասագրքի կազմողներին ուղղված ընկեր Ստալինի 1937 թ. մայիսյան նամակի դրույթներով ու պարբերացման սխեմայով և «ՀամԿ(բ)Պ Պատմության Համառոտ դասընթացով», որը լավագույն օրինակն է գիտականորեն հիմնավորված պարբերացման համաձայն գրված պատմության։

Ինչպես հայտնի է, ընկեր Ստալինն իր այդ պատմական նամակում նշում է՝ Պարտիայի պատմության մինչ այդ եղած դասագրքերի «արմատական թերությունների վերացման ուղին»՝ նպատակ ունենալով՝ «գիտական ու սկզբունքային պատշաճ բարձրության հասցնել պարտիայի պատմության ուսումնասիրությունը»* («Պրավդա»)։

Ընկեր Ստալինի առ այդ նամակում առաջադրված պարբերացման սկզբունքներն ու սխեման վերցնում ենք իբրև ուղեցույց օրինակ, որից ելնելով՝ մենք կազմում ենք սովետահայ գրականության պատմության պարբերացումը։ Ըստ որում՝ մեր գրականության պատմության անցած ուղու պարբերացման սխեման, այսինքն գրականության զարգացման հիմնական ժամանակաշրջաններն ու փուլերը (էտապները) որոշելիս, մենք անհրաժեշտ ենք համարում.

ա) Յուրաքանչյուր ժամանակաշրջանի և փուլի սկզբում տալ «պատմական համառոտ տեղեկանք երկրի տնտեսական ու քաղաքական կացության մասին»։

բ) Ոչ միայն շարադրել այն փաստերը, որոնք ցուցադրում են բազմազան գրական հոսանքների ու խմբավորումների առկայությունը և նրանց միջև ու նրանց ներսում եղած՝ հաճախ կատաղի, սուր պայքարը մինչև 1932 թ. ապրիլյան որոշումը ու նրանից հե-

* «Պատմական գիտության ճակատում», 1938 թ., էջ 15։

տա էլ մանավորապես Հայաստանում: Այլև պետք է անհրաժեշտ մարքսիստական բացատրություն տալ այդ փաստերին, մատնանշելով, որ հակապրոլետարական գրական հոսանքների ու խմբավորումների դեմ մղված պայքարը սկզբունքային պայքար էր սովետական կուլտուրայի սոցիալիստական ուղիով կատարվող զարգացումն ապահովելու համար, սկզբունքային պայքար էր բուրժուական և մանր բուրժուական գաղափարախոսությունների դեմ, կուլտուրայի ու գրականության մարզում՝ հանուն սովետական գրականության բոլշևիկյան պարտիականության:

Սովետահայ գրականության պատմության պարբերացումը որոշելիս և բուն պատմությունը շարադրելիս պետք է ղեկավարվել նաև ընկ. ընկ. Ստալինի, Ժդանովի և Կիրովի կողմից ՍՍՌՄ-ի պատմության դասագրքի վերաբերյալ արված հայտնի դիտողություններում առաջադրված այն պահանջով, ըստ որի՝ ՍՍՌՄ պատմության դասագրքում՝ Վելիկոռուսիայի պատմությունը չպետք է անջատվի ՍՍՌՄ-ի մյուս ժողովուրդների պատմություններից, ՍՍՌՄ-ի ժողովուրդների պատմությունն իր հերթին՝ չպետք է անջատվի համաեվրոպական պատմությունից, և առհասարակ՝ համաշխարհային պատմությունից:*

Վերաբերելով ու կիրառելով ստալինյան պատմագիտության այս պահանջը սովետահայ գրականության պատմության ու նրա պարբերացման նկատմամբ, պետք է ընդունել, որ մեր հետհոկտեմբերյան ժամանակաշրջանի գրականության պատմության հատորում գրականության զարգացման ընթացքի լուսաբանությունը չպետք է կատարվի անջատ ու միայն ուս, այլև ըստ հնարավորին՝ մյուս եղբայրական ժողովուրդների գրականությունների պատմությունից: Իսկ զարգացման տարբեր էտապների պատմական ժամանակաշրջանի նկարագիրն ու բնութագիրը տալիս հարկ է Սովետական Միության պատմության իրադարձություններին հարակցել համաեվրոպական ու համաշխարհային քաղաքական կյանքի կարևորագույն իրադարձությունների նշումը: Այդ անհրաժեշտ է ոչ միայն այն տեսակետից, որպեսզի ճիշտ ու բազմակողմանի պատկերացվի Սովետական Միության պատմական առաջընթացը միջազգային իրադրության պայմաններում, այլ և այն,

* «Պատմական գիտության ճակատում», 1938 թ., էջ 14:

որ ցույց տրվի, թե սովետահայ գրականությունն էապես ու էապես իր թեմատիկ ընդգրկումներով արձագանքել է նաև միջազգային կյանքին։ Հետևաբար միջազգային կյանքի արձագանքների փաստն ինքնին վկայում է, որ պետք է սովետահայ գրականության պատմությունը դիտվի ոչ միայն մեր ռեսպուբլիկայի և ոչ միայն Սոցիալիստական հայրենիքի կյանքի, այլև միջազգային բազմաբնական զարգացման ընդհանուր ֆոնի վրա։

Բացի այդ, իբրև մի մասնավոր՝ հայ գրականության զարգացման պատմական ուղու մի առանձնահատուկ մոմենտ՝ հարկ է նաև էապես ու էապես ղեպահնե հիշատակումներ անել Սիլյուքի՝ արտասահմանի հայ գրականության ընթացքի մասին՝ նրա ռեակցիոն-նացիոնալիստական և պրոգրեսիվ ու ռեվոլյուցիոն հատվածների մասին՝ սովետական կարգերի, Սովետական Հայաստանի վերաբերմամբ նրանց արտահայտած վերաբերմունքը բացահայտելով։ Հայաստանի Սովետական Գրողների II համագումարին Սիլյուքի հայ առաջավոր գրողների մասնակցության փաստը և համագումարում լսված զեկուցումը՝ արտասահմանի ժամանակակից հայ գրականության մասին, նշանակալից մի երևույթ է, որը կատարի առնց է առաջացրել արտասահմանի ռեակցիոն հայ մամուլում, վերջապես՝ 1946 թ. սկսված հայրենադարձի մեծ հոսանքի հետ մի քանի տասնյակ գրողների ու արվեստագետների Սովետական Հայրենիք վերադարձը,— կարևոր են դարձնում, որ մեր գրականության պատմության պարբերացման և բուն պատմության շարադրման ընթացքում, ըստ էապահների հիշատակվի Սիլյուքի հայ գրականության կարևորագույն երևույթները՝ պարզելու նաև այդ գրականության անցած ուղին՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման օրից մինչև մեր օրերը։

6

Իսկ ինչպե՞ս է սովետական գրականության պատմության պերիոդիզացիայի հարցի վիճակը, ի՞նչ է արված այս ուղղությամբ։ Մենք ծանոթ ենք վերջին տասնամյակում կատարված մի քանի նախագծերի, որոնց և հարկ է համառոտ կերպով անդրադառնալ։

Սովետական գրականության պատմության պարբերացման այդ նախագծերը, որոնք մեծ մասամբ կատարված են մինչպա-

տերազմյան տարիներին, վկայում են, որ նրանց հեղինակները չեն ղեկավարվել պարբերացման մի միասնական սկզբունքով, շեղվել են գրականության պատմության և երկրի քաղաքացիական պատմության օրգանական կապի դիալեկտիկական մատերիալիստական ըմբռնումից:

Պարբերացման այդ նախափորձերը քննենք իրենց ժամանակագրական հաջորդականությամբ:

Մենք նկատի ունենք ամենից առաջ Լ. Մ. Պոլյակի և Ե. Բ. Տագերի՝ միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի համար պատրաստած սովետական գրականության պատմության դասագրքում արված պարբերացումը: Այդ դասագիրքը, սկզբում „Современная литература" վերնագրով (1941 թ. լույս է տեսել նրա վերամշակված և ավելի քան երկու անգամ ընդարձակված հրատարակությունը նոր անունով՝ „Литература XX века") սկսել է հրատարակվել 1934 թվից, իբրև անմիջական արձագանք սովետական գրողների առաջին համագումարի: Մեր ձեռքի տակ չունենք այս գրքի առաջին հրատարակությունը, բայց դատելով նրա 1938 թ. տպված 5-րդ հրատարակությունից և 1941 թ. հիմնովին վերափոխված հրատարակությունից՝ հեղինակների սահմանած պարբերացումը հիմնականում նույնն է այդ գրքի բոլոր նախորդ հրատարակություններում: Իսկ այդ պարբերացման համաձայն սովետական գրականության զարգացումն անցել է երեք հիմնական էտապ՝ մինչև Հայրենական Մեծ Պատերազմի նախօրյակը. այդ էտապներն են՝

ա) Քաղաքացիական պատերազմի շրջան.

բ) Վերականգնման շրջան.

գ) Երկրի սոցիալիստական ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման համար մղված պայքարի շրջան:

Դասագրքի 1941 թ. հրատարակության մեջ այս վերջին՝ 3-րդ էտապն անվանված է «ծավալուն հարձակման և ստալինյան հնգամյակների շրջան» (стр. 200):

Այս պարբերացման թերությունն, ուրեմն և սխալն ակնհայտ է: Մեխանիկորեն մի (3-րդ) էտապի մեջ միացված են երկրի պատմության, ուրեմն և գրականության զարգացման, երեք որակապես իրարից տարբեր էտապները՝ իբրև «ծավալուն հարձակման և ստալինյան հնգամյակների շրջան»:

Գրեթե նույն շրջանումն է կատարված սովետական գրականության պատմության պարբերացման մեզ ծանոթ երկրորդ նախափորձը: Մենք նկատի ունենք Կ. Զելինսկու հոդվածը՝ «Սովետական գրականության պատմության կառուցման հարցերի» մասին,* առաջին և գրեթե միակ արժեքավոր հոդվածը, որ ջրջրեն դրվել ու քննության են առնվել սովետական գրականության պատմության մի շարք հիմնական հարցեր, այդ թվում և պարբերացման հարցը, որին հեղինակն անդրադարձել է շատ հակիրճ կերպով: Հիմնականում ճիշտ և ընդունելի է Զելինսկու պարբերացման սկզբունքային եղակետը, որ նրա մոտ ձևակերպված է այսպես.

«Գրականության պատմության պարբերացման համար իբրև եղակետ պետք է ընդունել մեր պատմական դարաշրջանի հիմնական բովանդակությունը,— այսինքն երկու սիստեմների՝ սոցիալիզմի և կապիտալիզմի երկու հաստարակական ֆորմացիաների, երկու աշխարհների պայքարը: Այդ հիմնական խնդրի լուծման լույսի տակ էլ պետք է դիտել սովետական գրական շարժումը, թե սոցիոլոգիական առումով, գրական կադրերի, գրողների կյանքի, երկրի կյանքի և այլ առումներով և թե այդ խնդրի (թեմայի)՝ դեպարվեստական կերպարների առանձնահատուկ լեզվով լուծելու առումով՝ այսինքն՝ նոր գրական ոճի հաստատման առումով: Այս հրատյքը պարունակում է նաև պատասխան սովետական գրականության պատմության մեթոդոլոգիական խնդիրներին վերաբերյալ հարցին»:**

Եվ ապա Զելինսկին գրում է, որ սովետական գրականության պատմաբանն իր գրականության պատմությունը պետք է կառուցի այնպես, «որպեսզի դարաշրջանի հիմնական բովանդակությունը, որի մասին խոսեցինք, սոցիալիզմի հիմքի կառուցման ու պաշտպանության դարաշրջանի բովանդակությունը դիտվի դեզարվեստական արտահայտության պրակտիկայի միջոցով»:***

Իր այս սկզբունքային եղակետի համաձայն՝ Զելինսկին սովետական գրականության պատմությունը (պետք է նկատի ունե-

---

«Лит. критик», 1935 г., № 12—«Вопросы построения истории советской литературы».

** Նույն տեղում, էջ 25:

*** Նույն տեղում, էջ 26—27:

նաև, որ հոդվածը գրված է 1935 թ. վերջերին, այսինքն Մոսկվայի կոնստիտուցիայի նախագծման շրջանում, նրա հաստատման նախօրյակին) բաժանում է երկու հիմնական ժամանակաշրջանի (պերիոդների):

Առաջին— սկզբից՝ ոսկեմն՝ 1917—1918 թվերից մինչև «մեծ թեկման տարին»՝ 1929 թ.:

Երկրորդ— այդ թվականից մինչև 1935 թ.:

Բացի այս երկու հիմնական շրջաններից (период) Զելինսկին, արդեն խախտելով իր պարբերացման սխեման, գանում է, թե՝

«Մի քանի դեպքերում պնկատվար սկզբունք կարող է ծառայել ընդհանուր պատմական պարբերացումը— ռազմական կոմունիզմի էպոխան (1917—1921 թ. թ.) ՆէՊ (1921—1925 թ. թ.), սոցիալիստական հարձակման նախապատրաստումը (1926—1929 թ. թ.), հնգամյակի գրոհի էպոխան (1929—1933 թ. թ.), անդասակարգ հասարակության հիմքի կառուցումը (1933 թվից սկսած)»*

Հոկտեմբերյան Սոցիալիստական Revolution 20-ամյակի նախօրեին՝ 1937 թ. հոկտեմբեր „Лит. критик“ ժուռնալում հրապարակված «Սովետական գրականություն 20 տարում ժամանակագրության» մեջ („Хроника советской литературы за 20 лет“) նույնպես պարբերացման մի փորձ է արված՝ հերթականությամբ երրորդը: Զգալի չափով տարբեր է պարբերացման այս սխեման. էտապների ժամանակագրական սահմանումներն այլ են՝ քան Պոլյակի ու Տագերի և թե Կ. Զելինսկու սխեմաների համեմատությամբ: „Хроника“-ում սովետական գրականության (փուռտորին միայն ռուսականի) պատմությունը բաժանված է չորս հիմնական էտապների, այն է՝

Առաջին էտապ՝ 1917—1920 թ. թ.
Երկրորդ էտապ՝ 1921—1927 թ. թ.
Երրորդ էտապ՝ 1928—1932 թ. թ.
Չորրորդ էտապ՝ 1933—1937 թ. թ.

Այս սխեման զգալիորեն տարբեր է նախորդ երկուսից, բայց և

---

* „Лит. критик“, 1935 г. № 12—„Вопросы построения истории советской литературы», էջ 27:

չունի պարբերացման մի միասնական ելակետ—սկզբունք և ուրիմն հեռու է մեր պահանջները բավարարելուց, ոտոի և անընդունելի է։

ՍՍՌՄ-ի Գիտ. Ակադեմիայի Մ. Գորկու անվան Համաշխարհային Գրականության Ինստիտուտը՝ ձեռնարկելով սովետական գրականության պատմության գրելուն, 1939 թ. հրատարակեց այդ պատմության «պլան-սխեման», ուր տրված է սովետական գրականության պատմության հետևյալ շրջանաբաժանումը.*

ա) Քաղաքացիական պատերազմի և ինտերվենցիայի տարիներ.

բ) Վերականգնման և սոցիալիստական հարձակման ժամանակաշրջան.

գ) Սոցիալիստական հասարակության կառուցման ավարտման ժամանակաշրջան։

Ինչպես տեսնում ենք, այս շրջանաբաժանումն էլ պայմանն տարբերվում է նախորդ երեք բաժանումներից, բայց ակնհայտ կերպով չի պահպանված սովետական երկրի զարգացման ընթացքի պերիոդիզացիայի այն սկզբունքը, որի մասին խոսել ենք վերևում։ Այդ սխեմայում երկրորդ ժամանակաշրջանի մեջ մեխանիկորեն միացված է մի ամբողջ 15-ամյա ժամանակամիջոց (մոտավորապես 1921—1935 թ. թ.), որն իրականում երեք տարբեր էտապ է ընդգրկում։

Հոկտեմբերյան Ռեվոլուցիայի 25-ամյակի առիթով սովետական գրականության անցած ուղու մասին Միութենական Ակադեմիայի սեսիայում տրված իր զեկուցման մեջ (1942 թ. նոյեմբերի 18) Ալ. Տոլստոյը՝ ճիշտ և ճիշտ կ. Ջելինսկու սխեմայի օրինակով՝ գրականության անցած ուղին բաժանում է երեք հիմնական էտապի, առաջին՝ Հոկտեմբերից մինչև «մեծ բեկման տարին»՝ 1929 թ., երկրորդ՝ այդ տարվանից մինչև Հայրենական Մեծ Պատերազմը, երրորդ՝ Հայրենական Պատերազմի ժամանակաշրջանը։ Այստեղ էլ պատմական երեք տարբեր ժամանակաշրջաններ (1917—1920

---

* «История советской литературы (план-схема). Составлено отделом советской литературы Института Мировой Литературы им. М. Горького, под руководством М. И. Серебрянского, В. В. Ермилова и К. Л. Зелинского, 1939 г.

Բոլշևիկների քաղաքացիական պատերազմի տարիներն ու 1920-ական Բոլշևիկների վերականգնման տարիները և սոցիալիստական վերակառուցման սկիզբը) մեխանիկորեն միացված են՝ խախտելով պատմության պարբերացման սկզբունքը։

Ռուս սովետական գրականագիտության մեջ՝ պարբերացման մեզ ծանոթ ամենալիարժեք փորձն արված է միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի համար պրոֆ. Լ. Տիմոֆեևի հեղինակած դասագրքում („Современная литература"), որը խիստ քննադատվել մամուլում („Правда", „Советская книга" և այլն) նրանում եղած բազմաթիվ այլև այլ սխալների, բայց ոչ պարբերացման համար։

Դասագիրքը լույս է տեսել 1946 թ., հետևաբար նա ընդգրկում է ոչ սովետական գրականության անցած ուղին սկզբից մինչև Հեռատեսության շրջանի սկիզբը։ Լ. Տիմոֆեևի պարբերացման սխեմայի համաձայն սովետական գրականությունն անցել է դարպացման հետևյալ հինգ էտապները.

Ա.— Քաղաքացիական պատերազմի տարիներ (1917—1920 թվականները).

Բ.— Վերականգնման շրջան (1921—1929 թ. թ.).

Գ.— Վերակառուցման շրջան (1930—1937 թ. թ.).

Դ.— Հայրենական Պատերազմի նախերեկույթ շրջանը (1938—1941 թ. թ.).

Ե.— Հայրենական Պատերազմի շրջանը (1941—1945 թ. թ.)։

Ինչպես տեսանում ենք, այս սխեմայում էլ խախտված են պարբերացման սկզբունքները, քանզի և չենք կարող այդ սխեման ընդունելի համարել։

Մեկ-երկու նախադիտող էլ արված է մեզանում՝ սովետահայ գրականության պատմության պերիոդիզացիան որոշելու ուղղությամբ։ Մենք նկատի ունենք ամենից առաջ «Հայ գրականության պատմության» համառոտ դասընթացի (միջնակարգ դպրոցների համար 1941 թվին հրատարակված) Գ. գրքի սովետական բաժնում արված պերիոդիզացիան (դասագրքի այդ բաժնի հեղինակը պրոֆ. Հ. Մելիքյանն է), քան որի սովետահայ գրականության գարգա-

ցումն անցել է երեք հիմնական էտապ՝ մինչև Հայրենական Մեծ Պատերազմի նախօրյակը: Այդ էտապներն են՝ ա) քաղաքական կռիվների շրջանը (էջ՝ 196—199), բ) վերականգնման շրջան (էջ՝ 199—206) և գ) սոցիալիստական վերակառուցման շրջան (էջ՝ 206—213):

Որո՞նք են պարբերացման այս սխեմայի հիմնական թերությունները. նախ այն, որ անորոշ են թողնված, կոնկրետ չեն նշված այդ էտապների սահմանակետերը՝ թվականները: Այդ պատճառով էլ դժվար է որոշել, թե օրինակ՝ ո՞րն է երկրորդ և երրորդ էտապների սահմանագիծը: Իսկ այդ սահմանագիծը պետք է ցույց տրվի Սովետական Միության, նույն և Սովետական Հայաստանի պատմական կյանքի ամեն էտապը սահմանորոշող «առանձնապես նշանավոր և աչքի ընկնող պատմական դեպքերի» (Լենին) հիշատակումով և դրականության դարդացման համար այդ դեպքերի, իրրև էտապային սահմանա-նշանաձողերի, նշանակության բացատրությամբ: Այդ բանը չի արված և դա առաջին հիմնական թերությունն է:

Երկրորդ թերությունն այն է, որ Սովետական Հայաստանի ու սովետական դրականության պատմության համար Հոկտեմբերյան revolutsiայի և Հայաստանում սովետական կարգերի հաստատման տարվա միջև ընկած ժամանակաշրջանն ընդունվել է իրրև մի ինքնուրույն էտապ: Այդպիսով անտեսվել է այն պարբերությունը, որ կա Սովետական Ռուսաստանի և Սովետական Հայաստանի ավյալ ժամանակաշրջանի պատմական կյանքի միջև:

Եվ վերջապես պարբերացման այդ փորձի երրորդ թերությունն այն է, որ սահմանված էտապների բնութագրումն գրալի չափով թերի է, թե այն առումով, որ լրիվ չափով չեն բացահայտված ավյալ էտապին բնորոշ նոր երևույթները, ինչպես երկրի հասարակական-քաղաքական կյանքում, նույնպես և դրականության մեջ:

Պարբերացման, մեր դրականության անցած էտապների որոշման փորձ կա նաև գրքում. Հայկ Գյուլիքեվիյանի՝ սովետահայ դրամատուրգիայի 25-ամյա ուղինեին նվիրված արժեքավոր ու ծավալուն հոդվածում:

«25 տարվա ուղի անցած մեր դրականությունը— դրամատուրգիան,— գրում է բնկ. Գյուլիքեվիյանը,— չորս շրջանի է բաժան-

վում: Առաջին շրջանն սկսվում է 20 թվից և տեվում է մինչև 32 թիվը: Երկրորդ շրջանը սկսվում է 32 թ. ապրիլի 22-ից (պետք է լինի 23)... Համկ(բ) Պ ԿԿ-ի հայտնի որոշման հրապարակումից և տևում է մինչև Հայրենական Պատերազմը: Երրորդ շրջանը ընդգրկում է Հայրենական Պատերազմի տարիները: Չորրորդը հետպատերազմյան շրջանն է»:*

Ի՞նչ թերություններ ունի այս սխեման: Մենք չենք խոսում շրջանների թվի մասին, որը ճիշտ, լրիվ պատկերացում չի տալիս, ինչպես գրականության, նույնպես և նրա մի բաժինը կազմող դրամատուրգիայի զարգացման էտապների մասին: Բայց կարևոր ենք համարում նշել ընկ. Գյուլիբեկիյանի կատարած շրջանաբաժանման ոչ միանշանական՝ փիլիսոփայական տերմինով ասած՝ ոչ մոնիստական ելակետը: Մի դեպքում իբրև գրականության պատմության շրջանաբաժանման-պարբերացման ելակետ վերցված է պատմական կյանքը՝ պատմական-դարաշրջանային իրադարձությունը (առաջին էտապի սկզբի համար՝ սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, իսկ երկրորդ, երրորդ և չորրորդ շրջանների սահմանագծման համար Հայրենական Մեծ Պատերազմը), մի դեպքում էլ՝ գրական-պատմական գործոնները (Համկ(բ)Պ ԿԿ-ի 1932 թվի ապրիլի 23-ի որոշումը «Գրական գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին») ընդունելով իբրև սահմանաբաժանման նշանաձող՝ առաջին և երկրորդ շրջանների համար:

Պատմական կյանքի մեծ իրադարձությունները իբրև սահմանաբաժանման ելակետ ընդունելն անվիճելիորեն ճիշտ է: Իսկ եթե շեղվելով այդ ճիշտ սկզբունքից, դիմում ենք մի այլ սկզբունքի, ելակետ դարձնելով գրական-պատմական գործոնները կամ մի այլ երևույթ և դեպք՝ բուն գրականության պատմության մեջ, ապա, այդ դեպքում ինչո՞ւ նկատի չունենալ նույն բնույթի մի բանի այլ, ոչ պակաս կարևոր գրական-պատմական գործոններ ևս, ինչպես պարտիայի 13-րդ համագումարի (1924 թ. մայիս) բանաձևը մամուլի մասին, որ հատուկ դիրեկտիվներ կան գեղար-

---

* Գրախ. Հ. Գ յ ու լ բ ե կ ի վ ի ա ն, «Սովետական հայ դրամատուրգիայի զարգացման ուղիները 25 տարում» («Սովետական գրակ. և արվեստ», 1945, № 12, էջ 44):

վենական պրականության ու պրական կազմակերպությունների նկատմամբ պարտիայի քաղաքականության վերաբերյալ, այնուհետև Պարտիայի կենտկոմի 1925 թ. հունիսյան հայտնի բանաձևը, վերջապես՝ 1946 թ. օգոստոս-սեպտեմբերյան պատմական որոշումները, որոնցով տրամաբանական կլիներ սահմանազատվել պրոֆ. Գյուլիքևվյանի նշած վերջին երկու շրջաններն իրարից:

Պարբերացման նախագծերի մեթոդական սխալ այս քաղաքականության ինքնին վկայում է այն մասին, որ դրանց հեղինակների համար գոյություն չի ունեցել մի ընդհանուր միասնական գեկավար սկզբունք, գրական-պատմագիտական մի հիմնական եղակետ, որը բխի գրականության, իբրև իդեոլոգիայի՝ զարգացման հիմքի պատմա-մատերիալիստական ըմբռնումից, որը պարտադիր մի նախապայման է գրականության պատմության հարցերը հիշյա լուսաբանելու համար:

Ահա այս գրության էլ անհետաձգելի խնդիրը է դարձնում սովետահայ գրականության պատմության պարբերացման հարցի լուրջ քննությունը, կազմելու գիտականորեն հիմնավոր և բոլորի համար սկզբունքորեն անվիճելի ու ընդունելի պարբերացման մի սխեմա, որի հիման վրա կարելի լինի շարադրել մեր գրականության վերջին քառորդ դարի պատմությունը:

Իսկ այդ կարելի է անել, պարբերացման այդպիսի մի սխեմա կարելի է կազմել, եթե միայն ելակետ ունենանք Սովետական Միության, ուրեմն և նրա մի օրգանական մասը հանդիսացող Սովետական Հայաստանի քաղաքացիական պատմության ստալինյան պարբերացման սխեման, որը կարող է հաստատուն, անխախտելի հիմքը դառնալ ինչպես սովետական գրականության, նույնպես և մյուս արվեստների, և ընդհանրապես սովետական ժողովրդի հոգևոր կուլտուրայի պատմության պարբերացման համար:

7

Ելնելով վերոհիշյալ մեթոդոլոգիական դրույթներից ու մեկնաբանություններից և հիմք ընդունելով «Համկ(բ)Պ պատմության համառոտ դասընթացում» տրված պարբերացման մեզ համար ղեկավար ուղեցույց օրինակը, մենք տալիս ենք սովետահայ գրականության պատմության պարբերացման մի սխեմա, ըստ որի մեր գրականությունն, իբրև ընդհանուր սովետական գրականության մի հատվածը, անցել է պարզացման հինգ էտապ, հաշված այն նոր

688—3

էտապը, որն սկսվել է Հայրենական Մեծ Պատերազմի հաղթական ավարտումից հետո:

Մինչսովետական դարաշրջանի հայ կլասիկ գրականության և սովետական հայ գրականության պատմական սահմանային բնութիծը պետք է ընդունել ոչ թե միայն 1920 թվի նոյեմբերը, այլ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի և Հայաստանում սովետական կարգերի հաստատման մեջ ընկած ժամանակահատվածը (1917—1920 թ. թ.): Հայաստանում սովետական կարգերի հաստատման նոամյա ուշացումը երկրորդական նշանակություն ունի հայ ժողովրդի կյանքի պատմական հեռանկարների մեջ: Այստեղ հիմնականը, պատմականորեն բախտորոշ իրագործությունը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիան է, որը պատմական սահմանագծային կետ է ոչ միայն Ռուսաստանի պատմության ու ոուս գրականության նախքնթաց ու հետագա շրջանների համար: Հոկտեմբերը սահմանագծային նշանակոր է նաև Սովետական Միության մեջ մտնող բոլոր այն ժողովուրդների պատմության ու գրականության համար, որոնք Սովետական իշխանությունն ընդունել ու հաստատել են իրենց երկրում նույն այդ ժամանակաշրջանում (Ուկրաինա, Բելոռուսիա, Ադրբեջան, Վրաստան):

Ընդունելով այս պայմանը, այժմ անցնենք պարբերացման սխեմային, սովետահայ գրականության պատմության սկզբնավորման սահմանագիծը համարելով 1917—1920 թվերը, որ սխեմայում առանձնահատուկ տեղ են գրավում:

Նախ թվարկենք այդ էտապները, Հոկտեմբերյան Ռևոլուցիայի ու քաղաքացիական պատերազմի տարիները (1917—1920 թ. թ.) Հայաստանի համար ընդունելով իբրև անցման մի ժամանակամիջոց:

Առաջին էտապ— *Վերականգնման ժամանակաշրջան (1921—1925 թ. թ.):*

Երկրորդ էտապ— *Սոցիալիստական ինդուստրացման համար մղվող պայքարի և կոլեկտիվացման սկզբի ժամանակաշրջան (1926—1929 թ. թ.):*

Երրորդ էտապ— *Գյուղատնտեսության կոլեկտիվացման համար մղվող պայքարի և սոցիալիստական ծավալուն հարձակման ժամանակաշրջան (1930—1934 թ. թ.):*

Չորրորդ էտապ— *Սոցիալիստական հասարակության կառուց-*

ման և Սոցիալիստական կոնստրուկցիայի իրականացման ժամանակաշրջան (1935—1941 թ. թ.):

Չինգերորդ էտապ.— Հայրենական Մեծ Պատերազմի ժամանակաշրջան (1941—1945 թ. թ.): Սրան հաջորդում է նոր, վեցերորդ էտապը՝ հետպատերազմյան խաղաղ աշխատանքի անցնելու ժամանակաշրջանը, որն սկսվել է 1945 թ. մայիսյան «Հաղթանակի տոնից» հետո: Այս է պարբերացման հիմնական սխեման, որով ներկայացվում է սովետահայ գրականության զարգացման ուղին՝ նրա սկզբնավորումից մինչև մեր օրերը:

Գրականության զարգացման էտապները առայժմ մենք կոչում ենք երկրի պատմական կյանքի էտապների անուններով՝ որոշած լինելով (անշափ դժվար, բայց լուծելի մի խնդիր, որով պետք է զբաղվել այսուհետև) գրականության էտապները բնութագրող համապատասխան անուններ, բանաձևումներ կամ գրական-պատմական այն նշանաձողերը, որոնցով սահմանագծվում են այդ էտապներն իրարից: Բայց այն պայմանով, որ այդ նշանաձողերը զուգադիպեն ընդհանուր պատմական կյանքի նշանաձողերին՝ ըստ զարգացման էտապների:

Առաջարկելով պարբերացման այս սխեման, մենք միաժամանակ նշում ենք, որ յուրաքանչյուր էտապի համար տարբեր սահմանակետերի որոշման հնարավորություններ կան, եթե հաշվի առնենք ընդհանուր պատմական և գրական-պատմական զարգացման առանձնահատկությունները: Որովհետև, եթե ըստ այս շրջանաբաժանման, համեմատելու լինենք սովետական երկրի (ուրեմն և Հայաստանի) պատմական կյանքի զարգացումը գրականության զարգացման ընթացքի հետ, ապա կնկատենք զգալի տարբերություններ, շատ որոշակիորեն բացառելով միայն Հայրենական Մեծ Պատերազմի ժամանակաշրջանը, երբ պատմությունն ու գրականությունը, իրենց զարգացման էտապային սահմանակետերով լիովին համընկնում են: 1941 թ. հունիսի 22-ը այն որոշակի կրակային սահմանագիծն է, որ բաժանում է մինչպատերազմյան ու պատերազմական շրջանների գրականության զարգացման ընթացքը, ինչպես և 1945 թ. մայիսի 9-ի «Հաղթանակի տոնը» նույնպես մի շատ որոշակի, անխախտելի սահմանագիծ է պատերազմական և հետպատերազմյան շրջանների բաժանման համար:

Բայց այդպիսի որոշակի ներքին սահմանագծեր չկան գրակա-

նության նախընթաց էտապներում, սահմանագծեր, որոնք լիովին համընկնեին պատմության սահմանագծերին: Այս առնչությամբ տեղին է հիշել Լենինի մի կարևոր դիտողությունը: Նշելով նոր, ֆրանսիական բուրժուական ռևոլյուցիայով սկսվող ժամանակների «պատմական էտապների բաժանումը»— սահմանագծումը, Լենինն խոսքուն նկատում է. «Հասկանալի է, որ սահմաններն այստեղ, ինչպես և ընդհանրապես բնության ու հասարակության մեջ՝ պայմանական են, բայց ոչ բացարձակ: Եվ մենք միայն մոտավոր հաշվով ենք վերցնում առանձնապես նշանավոր և աչքի ընկնող պատմական դեպքերը, իբրև նշանաձողեր (вехи) պատմական մեծ շարժումների»:*

Սակայն եթե ընդհանուր քաղաքացիական պատմության պարբերացման համար հնարավոր է, թույլատրելի այդպիսի պայմանականություն, առավել ևս այդ հնարավոր ու թույլատրելի է գրականության պատմության պարբերացման խնդրում:

Բայց հարկ է նկատել, որ տվյալ դեպքում ՀամԿ(բ)Պ պատմության ստալինյան պարբերացման սխեման (որը միաժամանակ ՍՍՌՄ-ի պատմության պարբերացման սխեման է), մանավանդ հետհոկտեմբերյան ժամանակաշրջանի համար պայմանականության տեղ չի թողնում, այնքան հաստատուն, որոշակի ու անխախտ են՝ իբրև ժամանակաբաժանման սահմանագծեր ընդունված «պատմական մեծ շարժումների» այն նշանաձողերը, որոնք սահմանագծում են՝ սովետական երկրի զարգացման ընթացքի հիմնական էտապները, իսկ այդ էտապները բոլշևիկյան պարտիայի իմաստուն քաղաքականությամբ կանխանշված սոցիալիզմի կառուցման լենինյան-ստալինյան հանճարեղ պլանի իրագործման էտապներն են:

Հարկ է քննության առնել մի հարց ևս, այն, որ պարբերացման սխեման կազմելուց հետո, այսինքն գրականության պատմության շրջանաբաժանումը կատարելուց, գրականության զարգացման ընթացքը համապատասխան ժամանակահատվածների մեջ բաշխելուց հետո,— թերևս ամենադժվար մասը մնում է ժամանակագրական հաջորդականությամբ առանձին գրողների որոշակի տեղադրումն այս կամ այն էտապում,— հատկապես այն գրողների, որոնք իրենց ստեղծագործական կյանքով ակտիվորեն

* Ленин, Соч. т. XVIII, изд. II, стр. 108.

ուշելցում են սովետահայ պրականության զարգացման ամբողջ ընթացքին, սկզբից մինչև մեր օրերը (օրինակ՝ Ավ. Իսահակյան, Դ. Դեմիրճյան, Ստ. Զորյան, Մ. Արազի, Ն. Զարյան, Մ. Մանվելյան, Ա. Վշտունի, Գ. Սարյան, Հմ. Սիրաս և ուրիշները)։ Պետք է նկատել նաև, որ սովետական հայ գրողներից ոմանք իրենց գրական գործունեությունն սկսել են անցյալ դարի 90-ական (Հ. Հասկուրյան, Ավ. Իսահակյան, Դ. Դեմիրճյան), ոմանք էլ 900—910-ական թվականներից (Մ. Մանվելյան, Արազի, Ստ. Զորյան, Ա. Վշտունի, Ե. Չարենց)։

Կարելի է, ի հարկե, որոշ հաջորդականությամբ առանձին գրողների ստեղծագործական կյանքի նկարագիրն ու բնութագիրը տալ գրականության զարգացման պատմական ընդհանուր ակնարկից հետո։ Բայց դա հարցի շատ հեշտ ու պարզ լուծման ուղին է, որը չէր համապատասխանի գրականության դիտական պատմության պահանջներին։ Ըստ այդ պահանջների, հարկ է, նկատի ունենալով պարբերացման սխեման, որոշել անվանի գրողների ստեղծագործական կյանքի շրջայի հիմնական օղակը, կամ նրանց ստեղծագործության ծաղկության կենտրոնը՝ տեղադրելով յուրաքանչյուրին պարբերացման սխեմայի համապատասխան հատվածում՝ այսինքն որոշելով նրանցից ամեն մեկի հեղնական տեղն ու նշանակությունը գրականության զարգացման պատմական ընթացքի մեջ։

Այս առնչությամբ պետք է քննության առնել այն հարցը թե ինչպե՞ս, կարելի՞ է արդյոք մեկ հատորում՝ կամ XX դարի սկզբի (նախապծված վեցհատորյակի 5-րդ հատորում) և կամ սովետական շրջանի (ուրևմն 6-րդ) հատորում միացնել ողջ գործունեությունն այն գրողների (Ավ. Իսահակյան, Հ. Հակոբյան, Դ. Դեմիրճյան, Արազի, Մ. Մանվելյան), որոնք երկարատև ուղի են անցել մինչսովետական ժամանակաշրջանում։ Նրանցից հատկապես առաջին երկուսը (Ավ. Իսահակյան և Հ. Հակոբյան) յուրաքանչյուրն իր առանձին նշանակությամբ խոշոր մեծություններ են XX դարի սկզբի մեր գրականության պատմության մեջ։

Հակոբյանի մասին XX դարի առաջին 20-ամյակին ընդգրկող 5-րդ հատորում, պետք է առանձին գլուխ տալ իր սկզբնավորած ու զիտավորած պրոլետարական-ռևոլյուցիոն գրական հոսանքով հանդերձ։ Առանց այդ հոսանքի՝ սվյալ էպոխայի հայ գրականության

պատկերը թերի կլինի։ Առանց սոցիալիստ-պրոլետարական հոսանքի, ամբողջական չի լինի այդ պատկերը։ Բայց Հակոբյանը չի սպառվի նախահոկտեմբերյան շրջանի իր գործունեությամբ։ Նա խոշոր դեմք է նաև հետհոկտեմբերյան շրջանի պատմության մեջ, ուր նա մեզ ներկայանում է իբրև սովետահայ գրականության սկզբնավորող, թեև իհարկե, ոչ միակն ընդհանուր առմամբ։ Անկասկած, եթե մենք ճիշտ մեկնաբանենք հարցը, Հ. Հակոբյանից բացի ուրիշ մի այլ՝ թեկուզ ստեղծագործական մտքով ավելի մեծ գրողի՝ չի կարելի համարել այս նոր ժամանակաշրջանի գրականության սկզբնավորող։ Այս նկատառումով, Հակոբյանն առանձին, հատուկ տեղ պետք է գրավի նաև 6-րդ հատորում, հակառակ դեպքում այս ժամանակաշրջանի՝ սոցիալիզմի դարաշրջանի՝ նախընթացից իր պատմական-գաղափարական բովանդակությամբ սկզբունքորեն տարբեր՝ գրականության պատկերը ամբողջական չի լինի։

Ուրեմն Հակոբյանին պետք է, ոչ թե մեկ հատորում տեղավորել (5-րդ կամ 6-րդ) մեկ ընդհանուր մենագրությամբ, այլ պետք է տեղ տալ երկու հատորում էլ՝ ամեն մեկում ներկայացնելով տվյալ ժամանակաշրջանի գործունեությունը, ըստ որում 5-րդ հատորում տրվող գլխի վերջում անհրաժեշտ է ասել, որ սովետական շրջանի գործունեությունը կտրվի հաջորդ հատորում, իսկ այստեղ տրվող գլխի սկզբում հակիրճ վերհիշումներ անել նախընթացի մասին, էտապների հաջորդականության կապը նշելու համար, որից հետո հանգամանորեն պետք է տալ տվյալ շրջանի գործունեության բնութագիրը։ Այս կապակցությամբ առանձին քննության արժանի հարց է նաև Ավ. Իսահակյանի, Հ. Թումանյանից հետո XX դարի հայ բանաստեղծական մտքի խոշորագույն այս ներկայացուցչի տեղն իր դարի հայ գրականության պատմության մեջ որոշելու հարցը։ Պետք է նկատի ունենալ, որ նա նույնպես, ինչպես Հ. Հակոբյանը մի տեղով չի սպառվի։ Նրան նույնպես երկու տեղ է հարկավոր։ Սակայն հարց է ծագում, կարելի՞ է բաժանել, «անդամահատել» գրողի ստեղծագործական կյանքի ընթացքը երկու տարբեր մասերի, դնելով դրանք ժամանակի տարբեր տեղամասերում։ Բայց մե՞նք ենք ուզում բաժանել. մենք այդպիսի միտք ու ցանկություն չէինք ունենա, եթե գրողի ստեղծագործությունն այդպես բաժանված չլիներ ժամանակի մեջ՝ օբյեկտիվ պատմական ընթաց-

քի բերումով, եթե նրա ստեղծագործությունն իր զարգացման ընթացքում չընդգրկեր, չանդրադարձներ այն երկու տարբեր դարաշրջաններին, որոնց երկուսի էլ գրական-գեղարվեստական մտքի լեռնաշղթաներում՝ բարձր երևում է նրա գագաթը՝ լուսավորված իր ժամանակի լույսով, երկու տեղում էլ սակայն, ոչ առանց նկատելի սովերների: Հետևաբար հարկ է նրան տեղ տալ մեր գրականության պատմության թե XX դարի սկզբի երկու տասնամյակներն ընդգրկող հատորում և թե վերջին քառորդ դարի պատմությունն ընդգրկող հատորում:

Առարկելիություն է լինում, թե այդպիսի մասնատումներով գրողի ամբողջական դեմքը չի ստացվի: Բայց մի՞թե ավելի դեպքում պարտադիր ու անհրաժեշտ է գրողի գործունեության երկու տարբեր էպոխաների հետ կապված մասերը միացնել այդ էպոխաներից որևէ մեկի մեջ՝ խախտելով պատմական հաջորդականության սկզբունքը: Ինչ հարկ կա XIX դարի վերջին տասնամյակի և XX դ. առաջին երկու տասնամյակի պատմությունն ընդգրկող հատորում խոսել գրողի այդ էպոխայի հետ ոչնչով չկապված գործունեության մասին, ռոմանտիկան շրջանի երկերի մասին՝ «Սասմա Մհեր»-ից ու «Համբերանքի շիրուխ»-ից սկսած մինչև «Մեծ Ստալինին» բանաստեղծությունը, մինչև Հայրենական Մեծ Պատերազմի «Ռադմանուհին» ու մարտական հակաֆաշիստական պուբլիցիստիկան: Այդպիսի ժամանակախախտման հարկը չկա, և դա չի բխում գրականության պետական պատմության պահանջից: Գրականության պատմությանը նպատակ չունի գրողների ամբողջական պորտրեները տալ, եթե դա չի բխում գրականության զարգացման տվյալ ժամանակաշրջանի ամբողջական նկարագիրը տալու պահանջից: Գրականության պատմության խնդիրն է ամենից առաջ և ամենից ավելի գրականության, իբրև ամբողջական պրոցեսի պատկերը տալ ըստ նրա զարգացման պատմական ընթացքի՝ անշեղորեն հետևելով երկրի քաղաքացիական պատմության ընթացքին՝ նրա հաջորդական էտապներին:

Մեծ գրողի երկու տարբեր էպոխաների մեջ բնականորեն բաժանված գործունեության ամբողջական նկարագի՞րն ենք ուզում:— Ինչո՞ւ չէ, այդ կարելի է և պետք է տալ պատմության հատորից անկախ, առանձին, նրա ողջ գործունեությունն ընդգրկող, հարկա-

վոր չափով ծավալուն մի մենագրության մեջ՝ էտապ առ էտապ ներկայացնելով գրողի կյանքի ու ստեղծագործության ուղին։

Իսկ գրականության պատմությունը որոշ դեպքերում չի կարող այդ անել, եթե նա պետք է (իսկ նա պետք է) հավատարիմ մնա պատմության տրամաբանական ընթացքին կամ գրական պրոցեսի տրամաբանության ընթացքին։

Այսպես ուրեմն, ըստ մեր պարբերացման սխեմայի, մինչհոկտեմբերյան ու հետհոկտեմբերյան շրջաններում նշանակալից ու տևական գործունեություն ունեցող մի քանի գրողներ պետք է տեղ ունենան թե՛ նախընթաց և թե՛ հետագա ժամանակաշրջանները ընդգրկող հատորներում, այն ծավալով ու չափով, որը կպահանջի տվյալ գրողի տվյալ էպոխայում ունեցած գործունեության կշռով ու ծավալով։ Մենք նկատի ունենք հետևյալ գրողներին՝ Հ. Հակոբյան, Ավ. Իսահակյան, Դ. Դեմիրճյան, Արազի, Մ. Մանվելյան և գուցե ուրիշներ էլ, ըստ որում պարտադիր չէ, որ երկու տեղում էլ ամեն մեկին առանձին-առանձին գլուխներ տրվեն։ Այդ պետք է որոշի, նայած գրողի տվյալ ժամանակաշրջանի ստեղծագործության ծավալին ու արժեքին։ Եթե մեծ է նրա ծավալն ու արժեքը, ապա պետք է առանձին գլուխներ հատկացնել տվյալ գրողին թե մեկ և թե մյուս հատորում։ Օրինակ՝ պետք է առանձին գլուխներ տրվեն երկու հատորներում էլ՝ Հ. Հակոբյանին, Ավ. Իսահակյանին, գուցե նաև Դ. Դեմիրճյանին։ Դեմիրճյանի նկատմամբ այս «գուցեն» վերաբերում է նրա գործունեության մինչսովետական շրջանին, որը համեմատաբար փոքր է նրա սովետական շրջանի իր գործունեության համեմատությամբ, ըստ որում սովետական ժամանակաշրջանի հատորում առանձին գլուխ տալու անհրաժեշտությունն ինքնին կասկածից վեր է, որովհետև մեր ժամանակի Դեմիրճյանը՝ սովետահայ գրականության ամենամեծ դեմքերից մեկն է՝ մեր դարաշրջանի կյանքի իր լայն ընդգրկումներով, իր ստեղծագործական մտքի խորքով ու լայնքով, երբեմն խիզախ թռիչքներով։ Իսկ նախասովետական շրջանում նա փոքր է՝ XIX դարի վերջերի ու XX դարի սկզբի գրականության շարքային, բայց ի հարկե նկատելի, ուշադրավ շարքային, նույնիսկ մեծ-մեծերի՝ Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Հ. Հակոբյանի, Դ. Վարուժանի և ուրիշների կողքին։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Այժմ անցնենք սովետական պրակտիկայի զարգացման՝ վերևում նշված էտապների բնութագրմանը:

ԱՆՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ (1917—1920 թ. թ.)

1917 թ. նոյեմբերից մինչև 1920 թ. վերջերը, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխությից մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատման օրերն ընկած այդ կարճատև ժամանակամիջոցը պետք է ընդունել իբրև «անցման» մի կարճատև շրջան, որը զուգադիպում է Հռուսաստանի քաղաքացիական պատերազմի շրջանին և որը պատմական-քաղաքական տեսակետից նշանավորվում է Անդրկովկասի ու Հայաստանի սովետականացման համար մղված պայքարի դրվագներով (1918 թ. Բագվի Կոմունան՝ Ստ. Շահումյանի դիկտատուրայով, 1920 թ. Մայիսյան ապստամբություններ կոնտրռևոլուցիոն դաշնակցական իշխանության դեմ և այլն):

*Բնութագրելով այդ շրջանը Հռուսաստանում, ընկեր Ստալինը գրել է. «Ներքին դրության տեսակետից այդ ժամանակաշրջանը կարելի է բնութագրել, որպես Հռուսաստանում հին կարգերի խորտակման ժամանակաշրջան, որպես հին բուրժուական իշխանության ամբողջ ապարատի խորտակման ժամանակաշրջան»:**

Այս բնութագիրը կարելի է տարածել նաև Անդրկովկասի ու Հայաստանի նկատմամբ, որովհետև, օրինակ՝ դաշնակցական-բուրժուական կարգերի տապալումը Հայաստանում 1920 թ. նոյեմբերին-դեկտեմբերին, նախապատրաստված էր նախընթաց տարիներին՝ Հոկտեմբերյան հեղափոխից հետո, Հռուսաստանում ու Հյուսիսային Կովկասում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի հաղթական ավարտումով: Դաշնակցության, եվրոպական իմպերիալիզմի այդ կոնտրռևոլուցիոն-հեակցիոն բանդայի տիրապետությունը Հայաստանում պետք է դիտել իբրև ժամանակավոր միջադեպ, ճիշտ է՝ մեր ժողովրդի ու երկրի կյանքում շատ ուժասպառ ու ծանր, արյունոտ ու մղձավանջային, բայց այնուամենայնիվ կարճատև մի միջադեպ: Դաշնակցության տիրապետությունը՝ Հոկտեմբերյան Հեղափոխի հաղթական ընթացքով դատա-

---

* И. Сталин—Сочинения. т. IV, стр. 384.

պարտված էր անխուսափելի կործանման։ Իսկ ժողովրդի—երկրի զարգացման ընդհանուր պատմական հեռանկարի մեջ այդ ժամանակամիջոցը շատ աննշան մի մոմենտ է, ճիշտ այնպիսի, ինչպիսին որ է դաշնակների 1921 թ. փետրվարյան ավանտյուրան, որը՝ իմպերիալիզմի այդ ավազակային բանդայի վերջին հուսահատ ու անզոր փորձն էր կանգնեցնելու պատմության անիվը, որի անխուսափան պտույտից, սակայն, նա՝ այդ բանդան ընդմիշտ ջախջախվեց։

Այսպիսով՝ Հոկտեմբերյան Ռևոլյուցիայից մոտ 3 տարի հետո, քաղաքացիական պատերազմի ավարտման էտապում, նախ Ադրբեջանում, ապա Հայաստանում ու մի քանի ամիս անց՝ նաև Վրաստանում սովետական կարգերի հաստատումը փաստորեն՝ քաղաքացիական պատերազմի ավարտման մոմենտներից մեկն է Սովետական Միության այդ ժամանակաշրջանի պատմության մեջ։

Եթե այդ ժամանակամիջոցը աննշան է պատմության ընթացքի մեջ, առավել ևս նա աննշան է գրականության ու արվեստի զարգացման պատմության մեջ։ Այդպիսի մի կարճատև ժամանակամիջոցում հազիվ հնարավոր է լինում մի ծավալուն պոեմ, մի նշանակալից վեպ, կամ մի դրամատիկական խոշոր երկ ստեղծել։

Այս «անցման ժամանակամիջոցի» առնչությամբ պետք է նշել հայ գրականության աննախընթաց անկման փաստը՝ 1914—1918 թվականների իմպերիալիստական պատերազմի ընթացքում և ապա դաշնակցական «անկախության» տարիներին հայ ժողովրդի ապրած մեծագույն աղետի պայմաններում, հայ բուրժուական ու մանրբուրժուական գրողների, հայ ազգային ինտելիգենցիայի պատմական պրոգրեսիվ հեռանկարից զուրկ լինելու հետևանքով։

«Հոկտեմբերը ռուս գրականությունը գտավ՝ ի դեմս մեծ դարի էպիգոնների՝ անկման ու քայքայման մեջ։ Փոքր բացառություններով, Գորկու բացառությամբ՝ նա հեռու էր ժողովրդից և խորթ էր նրան»,— նկատել է Ալ. Տոլստոյը իր նշանավոր զեկուցման մեջ։* Ճիշտ այդպես հայ գրականությունն էլ «անկման ու քայքայման» վիճակումն էր Հայաստանում սովետական կարգերի հաստատման շրջանում։ Ռուս գրականության մասին Տոլստոյը շարունակում է, որ իմպերիալիստական պատերազմի տարիներին՝ «ամենացածր-

---

* Ալ. Տոլստոյ, «Սովետ. գրականության քառորդ դարը», 1943 թ., էջ 15։

բակ խալտուրայով էին լցված թերթերի ու ժուռնալների էջերը: Նովոյ ժողովրդին հասկանալի լինելու համար համաշխարհային առաջին պատերազմի շրջանում գրականությունն իջավ իր աշտարակից և շտապ-շտապ՝ հայրենասերի դրոշ անելով՝ խեղկատակեց, ալալաց, ողբ ու կոծ արեց բոլոր ֆալշ ձայներով: Ժողովուրդը չընդունեց և զայրույթով վանեց իրենից այդ միմոսուհուն...»:*

Այս բնութագիրը կարծես տրված է նաև այն ժամանակաշրջանի հայ գրականության համար: Հայ ազգայնական մամուլի բոլոր օրգանները, բոլոր թերթերն ու թերթուկները «Հայրենիքի փրկության» խլացուցիչ աղաղակներով էին լցված՝ անզոր լինելով ժողովրդի ազատության ճշմարիտ ուղին ցույց տալու իմպերիալիստական սպանդից: Այդ ժամանակաշրջանում Հայաստանում փաստորեն գրականություն չկար, չէր ստեղծվում, այլ կար միայն պարբերական մամուլ՝ դաշնակցական ազգայնական վայնասունով և կամ «Հայրենիքի փրկության» մասին անխելք աղմուկով: Գրողներ կային, բայց գրականություն չկար, չէր ստեղծվում: Անկումն ու քայքայումն ավելի ծավալվեց դաշնակցական վայ «անկախության» շրջանում, երբ հայ ազգայնականության փառաբանված գրողները քաղաքական ավանտյուրայով էին տարված, Հայաստանի անփառունակ «անկախության» տրագի-կոմեդիան էին ներկայացնում պատմության բեմի վրա՝ երկիրն ու ժողովուրդը հասցնելով կործանման անդունդի եզրին: Այդ ծանր մղձավանջային էպոխայի ցայտուն պատկերները կան սովետահայ գրողների ստեղծագործության մեջ:

Ահա պատմական այդ իրադրությունը, հայ ազգային գրականության անկման այդ փաստը պետք է նկատի ունենալ սովետահայ գրականության սկզբնավորումն ու հիմնադրումը նկարագրելիս:

Պետք է նկատի ունենալ, որ 1917—1920 թ. թ. կարճատև ժամանակամիջոցը շատ կարևոր նշանակություն ունի սովետահայ գրականության սկզբնավորման պատմության մեջ, նախ այն առումով, որ մի քանի գրողների գրական ու հասարակական գործունեությունն իր բովանդակությամբ ու բնույթով՝ հետհոկտեմբերյան,

* Նույն տեղում, էջ 15:

միութենական առումով՝ սովետական շրջանի հետ է կապվում, և ոչ թե նախընթացի: Մենք նկատի ունենք Հ. Հակոբյանի, վ. Տերյանի, Ե. Չարենցի, Ա. Վշտունու, Շ. Կուրղինյանի ու թերևս մեկ երկու այլ գրողների այդ տարիների, ճիշտ է, քանակով փոքր, բայց իմաստով ու նշանակությամբ արժեքավոր ստեղծագործությունները, որոնք անդրադարձնում են Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթանակն ու հետագիծը, Ռուսաստանում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմը և Անդրկովկասում ու Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար մղված պայքարը:

Սովետահայ գրականության սկիզբն ու առաջին էտապը նախանշվում է հիշյալ գրողների այդ տարիների ստեղծագործություններով: Հակոբյանի գործունեությունն այդ տարիներին, Ե. Չարենցի մի շարք բանաստեղծություններն ու պոեմները, ինչպես «Սոմա» հեղափոխո-լիրիկական պոեմը՝ գրված 1918 թ., «Ռազմապոեմներից»՝ «Դեպի ապագան», «Բռնվել թևերը կարմիր գալիքի» և «Երգ ժողովրդի մասին» պոեմը՝ գրված 1920 թվին՝ մինչև նոյեմբերը, Ա. Վշտունու մի շարք բանաստեղծությունները՝ «Շոպենական» 1917 թ. նոյեմբեր, «Մայիս-մեկյան» 1918 թ. մայիս, «Արևելքը հուր է հիմա»՝ նույն թվին, «Լաստանավորդներ» 1919 թ., «Մեր աշխարհում» 1920 թ. փետրվար, և այլն: Առանձին կարևորություն ունեն վ. Տերյանի այս շրջանի թե՛ ստեղծագործությունները (թեև քիչ են դրանք քանակով) և թե՛ քաղաքական ու հրապարակախոսական գործունեությունը («Ի՞նչ է ասում Լենինը գյուղացիներին», «Նամակներ հայ գյուղացիներին ու բանվորներին» գրքույկները, Լենինի աշխատություններից կատարած նրա թարգմանությունները «Պետություն և հեղափոխություն»-ը, «Կարլ Մարքս» և այլն):

Վերջապես հարկ է նշել, որ հենց Հայաստանում սովետական կարգերի հաստատման նախօրեին, Հոկտեմբերյան ելույթի, քաղաքացիական պատերազմը Ռուսաստանում, Սովետական Ռուսաստանի հաղթական ելքը իմպերիալիստական բլոկապետից, այս ամենը որոշակի բնույթ տալիս հայ գրական ինտելիգենցիայի լավագույն մասի մեջ: Այն եղել է Հ. Թումանյանը, Հ. Հովհաննիսյանը և ուրիշները իսկույն ողջունեցին Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում, հայ ժողովրդի ազատագրումը դաշնակ-

յական գժտության «անկախության», ապա դա նախապատրաստված էր նախընթաց երկու-երեք տարիների ընթացքում:

Այդ անցման շրջանում կարևոր է նկատել նաև Մոսկվայում, Հյուսիսային Կովկասում ու Անդրկովկասում հրապարակվող մի շարք թերթեր, որոնց գործունեության առթիվ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և Անդրկովկասում ու Հայաստանում բուրժուազիայի տիրապետության տապալման և Սովետական կարգերի հաստատման համար մղված պայքարի դպատիարակ (Մոսկվայում «Կարմիր օրեր», «Կարմիր դրոշակ» և «Կոմունիստ» 1918—1919 թ. թ. վահան Տերյանի ամենագործուն աջակցությամբ, Բիֆլիսում՝ բոլշևիկ «Բանվոր» և «Կոմմունա» թերթերը (1918 թ.) բոլշևիկ բանաստեղծ Հակոբ Կամարովի խմբագրությամբ, մի շարք թերթեր Հյուսիսային Կովկասի քաղաքներում՝ «Կոմունիստ» և «Կարմիր օրեր»՝ Պյատիգորսկում 1918 թ., «Կարմիր բանվոր» Ատրախանում՝ 1919 թ., «Կարմիր աստղ» 1919—20 թ. թ. Ծերուն Բորգմյանի խմբագրությամբ Կրասնոդարում և այլն):

Ի դեպ նկատենք, որ էտապ առ էտապ հարկ է անդրադառնալ պարբերական մամուլին, քանի որ, ինչպես գրել է վ. Բելինսկին, «Պոեզիայի (=գեղարվեստական գրականության, Ա. Ա.) պատմություններ, առանց բնավորիստիկայի և ընդհանրապես մամուլի պատմության հետ ունեցած կապի կլինեն ոչ ամբողջական ու միակողմանի»:*

«Անցման» այս կարճատև ժամանակամիջոցի մասին պետք է խոսվի գրականության պատմության գրքի ընդհանուր ներածության մեջ: Իսկ այնուհետև արվելու է գրականության զարգացման հիմնական էտապների բնութագիրը՝ համաձայն մեր վերոհիշյալ սխեմայի:

Այսպես, հասկանալի է, էտապների բնութագիրը շատ սխեմատիկ, կարճ և ուրվագծային է լինելու:

ԱՌԱՋԻՆ ԷՏԱՊ. 1920 1925 թ. թ.

ա) Ժամանակաշրջանի ընդհանուր բնութագիրը: Հայաստանում սովետական կարգերի հաստատումով նոր գլուխ է սկսվում հայ ժողովրդի պատմական բախտի բազմադարյան տա-

* В. Белинский, Собр. соч., т. 2, 1919 г., стр. 1030.

ֆեդրության մեջ՝ սոցիալիզմի ուղիով ազգային վերածննդի գարագլուխը։

1921 թ. փետրվարյան ավանտյուրայի լիկվիդացումից հետո նորածնունդ Սովետական Հայաստանը մտնում է իր խաղաղ շինարարական կյանքի բնականոն ընթացքի մեջ։ Սկսվում է հայ ժողովրդի ազատ, ինքնուրույն քաղաքական կյանքի կազմակերպումը՝ սովետական ազգային պետականության հաստատումն ու զարգացումը՝ բոլշևիկյան պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության ոգով և ուղիով։ Գաղութային ստրկացումից, Եվրոպական ու ամերիկյան իմպերիալիզմի չարանենգ-գիշական խնամակալությունից, դաշնակցական բռնապետությունից ազատագրված Հայաստանը, Սովետական Ռուսաստանի ազատարար ձեռքի օգնությամբ հաստատորեն կանգնում է ազգային վերածնության ճանապարհին։ Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպումով և ապա նույն՝ 1922 թ. վերջերին Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության կազմակերպումով՝ Սովետական Հայաստանը ներգրավվում է Անդրկովկասի և Միության սովետական ռեսպուբլիկաների եղբայրական ընտանիքում, ապահովվում է նրա ինքնուրույն գոյությունը և քաղաքական անկախ ու ազատ կյանքը ներքին և արտաքին թշնամիների ոտնձգություններից։

Սովետական կարգերի հաստատումով վճռականապես դադարում է հայ ժողովրդի կյանքի ու կուլտուրայի կենտրոնախույս-հայրենախույս հոսանքը և սկսվում է կենտրոնաձիգ-հայրենաձիգ հոսանքը։

Սովետական Հայաստանը պատմական բախտի բերումով դառնում է իր տարագիր հատվածների աշխարհով մեկ սփռած ժողովրդի ազգային կյանքի ու կուլտուրայի միասնական օջախը, դառնալով երազած ազատ հայրենիքը, ուր հետզհետե կենտրոնանում են ժողովրդի տարագիր հատվածները՝ նախ անհատներով և ապա խմբերով։ Դրսից՝ մոտ ու հեռու գաղթավայրերից հայրենաշինության եռանդով լցված վերադառնում են վերածնվող Հայաստան՝ հայ կուլտուրայի, գրականության, արվեստի կենսունակ, իրենց մայր ժողովրդի հետ կապված գործիչները կանգնելով սովետական կարգերի պաշտպանության դիրքերում, զինվորագրվելով ազգային նոր, ինքնուրույն կյանքի ու կուլտուրայի կառուցման գործին։

բ) Սովետական Միության ընդհանուր քաղաքական իրադրու-

թյունը. միջազգային ու ներքին «լարված պայմաններում Պարտիան դժվարին շրջադարձ է կատարում ռազմական կոմունիզմի քաղաքականությունից դեպի տնտեսական նոր քաղաքականություն»:*

գ) Այս ժամանակաշրջանում՝ սովետական ազգային պետականության նախադրյալի պայմաններում ռուս պրոլետարական-սովետական գրականության բարերար ազդեցությամբ սկզբնավորվում ու ձևավորվում է սովետահայ կուլտուրան ու գրականությունը: Սովետահայ գրականության հիմնադրման ու ձևավորման պրոցեսը տեղի էր ունենում ՆԷՊ-ի իրադրության մեջ գրականության բնագավառում բուրժուական գաղափարախոսության աշխուժացման պայմաններում, այդ գաղափարախոսության այլ և այլ արտահայտությունների, առաջին հերթին տրոցկիզմի-վորոնսկիականության դեմ, պրոլետկուլտականության հայկական արտահայտությունների դեմ մղված պայքարում: Այդ պայքարն իր մի կողմով ուղղված էր սովետական պլատֆորմայի վրա կանգնած հին գրական կադրերի՝ «ուղեկիցների» գաղափարական վերափոխման՝ «ուղեկիցներին» պրոլետարիատի գաղափարախոսության ոգով դաստիարակելու գործին:

դ) Սակայն հարկ է նշել, որ սովետահայ գրականության ձևավորման ու զարգացման գործը դժվարանում էր հետևյալ առանձնահատուկ հանգամանքներով: Նախ այն, որ ի տարբերություն ռուս սովետական գրականության, որի հիմնական ստեղծագործական անձնակազմն իր մկրտությունն ստացավ սովետական երկրի առաջին Հայրենական պատերազմում՝ քաղաքացիական կռիվներում (Ֆադեևն Հեռավոր Արևելքում՝ պարտիզանական ջոկատում, Շոլոխովը՝ Դոնում կոնտրռևոլյուցիոն բանդաների դեմ, Ֆուրմանովը՝ Չապաևի լեգենդար դիվիզիայում՝ Կոլչակի դեմ, Բագրիցկին Կարմիր Բանակի շարքերում՝ Ուկրաինայի հարավում, այլ և այլ ճակատներում էին նաև Ն. Օստրովսկին, Ն. Տիխոնովը, Վս. Իվանովը, Կ. Ֆեդինը և ուրիշները, իսկ Մայակովսկին՝ թիկունքում ստեղծագործում էր իբրև քաղաքացիական պատերազմի քաջարի զինվոր՝ գրիչը հավասարեցրած մարտական սվինին), ահա, ուրեմն, ի տարբերություն ռուս սովետական գրականության անձնակազմի,

* «ՀամԿ(բ)Պ պատմության համառոտ դասընթաց», 1944թ., էջ 381:

որի հիմնական կորիզը նոր, սոցիալիստական կուլտուրայի ու գրականության առաջատար բոլշևիկյան ջոկատն էր, սովետահայ գրականության անձնակազմը իր քաղաքական մկրտությունը պետք է ստանար և ստացավ վերականգնման խաղաղ աշխատանքի պայմաններում, սոցիալիզմի ու կապիտալիզմի տնտեսական մրցակցության իրադրության մեջ, երկրի տնտեսական ու կուլտուրական ծայրահեղ հետամնացության պայմաններում, բուրժուական ազգայնական ինտելիգենցիայի աճող ակտիվության, բուրժուական նացիոնալիզմի գաղափարախոսության սուր աշխուժացման պայմաններում: Այս հանգամանքը իր կնիքն էր դնում սովետահայ գրական շարժման, նրա առանձին օղակների ընթացքի ու բնույթի վրա, դժվարացնելով նրա զարգացումը դեպի գրողների գաղափարական ու քաղաքական-բարոյական միասնության՝ սոցիալիզմի համար մղվող պայքարում: Հարկ է նշել նաև մեր գրական ինտելիգենցիայի կազմի բազմատարրությունը, նկատի ունենալով տարբեր գրական կազմակերպությունների առաջացման ու նրանց միջև մղվող պայքարի փաստը: Այդ կազմակերպություններն ու խմբակներն են՝ «Հայկուլտի Մշակների Ընկերություն»-ը Թիֆլիսում՝ 1921—1923 թ., «Հայ Դեղարվեստական Գրականության աշխատավորների Միությունը» Երևանում 1921—1922 թ. թ., Երեքի գրական խմբակը (Ե. Չարենց, Ա. Վշտունի, Գ. Աբով) 1922 թ., «Դարբնոց» գրական խմբակը Թիֆլիսում՝ 1921—23 թ. թ., որից հետո Վրաստանի պրոլետարական գրողների Ասոցիացիայի, իսկ ավելի հետո՝ Վրաստանի Սովետ. Գրողների Միության Հայկական սեկցիան, «Դարբնոց»-ի հետ սերտորեն կապված «Մուրճ»-ի խմբակը Երևանում 1922 թ., որը և դարձավ Հայաստանի Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի կազմակերպման կորիզը. ապա Ասոցիացիայի անջատված և դեռ որևէ կազմակերպության մեջ չմտած մի խումբ գրողների խմբակը Ե. Չարենցի ղեկավարությամբ, որն իրեն կոչում էր Հայաստանի պրոլետարական գրողների «Նոյեմբեր» Միություն և այլն: Բազմազան այդ խմբավորումների առկայությունն ընդգծելով իբրև սովետական գրողների այն ժամանակվա կազմի բազմատարրության արտահայտություն, հարկ է նկատի ունենալ նաև միևնույն գրական խմբավորումների գաղափարական-ստեղծագործական բազմատարրությունը: Դրանով է բացատրվում այն, որ

տարբեր խմբավորումների միջև եղած գրական-գաղափարական պայքարը դուրս էր նաև ներքին պայքարով՝ դրեթե բոլոր խմբավորումներում: Հիշել Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի ու «Նոյեմբեր» կոչված Միության անձնակազմը և նրանց միջմիութենական ու ներմիութենական պայքարի պատմությունը:

ե) Բայց իրոք բարենպաստ մի հանգամանք պետք է հիշել այն, որ սովետահայ գրականության սկզբնավորումը, նրա ձևավորման զարգացման առաջին էտապը դուրս պիտի եկ Սովետական Միության պատմական այն էտապին, երբ արդեն ավարտվում էր քաղաքացիական պատերազմը և Պարտիան՝ Լենինի-Ստալինի առաջնորդությամբ հնարավորություն ,ունենալ ավելի հիմնավոր կերպով ու բազմակողմանիորեն զբաղվելու կուլտուրական շինարարության հարցերով: Բոլշևիկյան Պարտիայի 20-ական թվերի դիսկուսիաներում, Լենինի և Ստալինի նույն տարիների աշխատություններում պարզ ու որոշակի դրված են պրոլետարական-սոցիալիստական կուլտուրայի, արվեստի, գրականության առնչման ու զարգացման այն ուղիները, որոնցով անցավ սովետական գրականությունը՝ իր զարգացման ճանապարհին հաղթահարելով ամեն տեսակ արգելքներ ու խոչընդոտներ, մերկացնելով ու ջախջախելով ամենաբազմազան ձևերի մեջ արտահայտված բուրժուական ռեակցիոն, հակահեղափոխական հոսանքներն ու «թևթիանները»:

զ) Սովետական գրականության առնչադարձական մեթոդի որոնման ու որոշման ճանապարհին, ինչպես այս առաջին, այնպես և հետագա էտապներում Պարտիան շեշտը դնում էր կյանքի ժամանցության լավագույն արտիլիանները յուրացնելու և սովետական էպոխայի պատկերման գործում այդ արտիլիանները զարգացնելու վրա՝ սոցիալիստական-կոմունիստական գաղափարախոսության հիմքով: Ըստ որում պարտիան խրախուսում էր ռեվոլյուցիոն ռոմանտիզմի ու ակտիվ ռեալիզմի սկզբունքի ներդաշնակ միացումը սովետական իրականության ճշմարտացի պատկերման ձգտումով, մի գիծ, որը սոցիալիզմի կառուցման հաղթական ընթացքում սովետական գրականության հետագա զարգացման հարուստ փորձով՝ հանգեց սոցիալիստական ռեալիզմի մեթոդին, որը և դարձավ սովետական գրականության հիմնական մեթոդը:

Ինչպես ընդհանուր սովետական գրականության, նույնպես և սովետահայ գրականության հետագա ընթացքի ողջ պատմության

688—4

ցան էության պայքար է նոր ստեղծագործական մեթոդի համար, սոցիալիզմի դարաշրջանի կյանքն ու պայքարը ճշմարտացի արտացոլող մեթոդի՝ սոցիալիստական ռեալիզմի համար, Ին այդ անունը դրվեց հետո, 30-ական թ. թ. սկզբին, սովետական պրակտիկայի տատանհնդամյա փորձի հիման վրա:

Է) Այս առաջին էտապի գրականության ինամսվի շարժումը և հիմնական մասխինների բնութագրը երևան են բերում այն էական գծերը, որոնցով հատկանշվում է նոր, սովետական ժամանակաշրջանի, պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանի, գրականությունը: Իր խնեական ու պատմական բովանդակությամբ միանգամայն նոր մի՛ւսի գրականություն է սա՝ նախընթաց դարաշրջանի համեմատությամբ: Գրողների ստեղծագործության ինամսվի ու մասխինների մեջ միաժամանակ անընդոշ կերպով արտահայտվում է ժողովրդի պատմական ճակատագրի առանձնահատկությունը, երկրի՝ տնտեսական ու կուլտուրական ծայրահեղորեն հետամնաց լինելը, նրա ճնշված ու անապատ կյանքը նախ իբրև ցարական իմպերիալիզմի խեղճ մի գաղութ և ապա հաղթությունից— ռեակցիոն դաշնակցության ավազակային պետության ճնշման տակ, կործանման եղրին կանգնած երկիր: Հենց այդ էտապի գրականությունը ցույց տվեց իշխանության հաղթանակը հայ ժողովրդի մեծ բանակում և ապատարերի այն խնամսվի մասին, որ «Հայաստանն իր վրիպությունը գտավ այն բանի մեջ, որ իրեն հայտարարեց սովետական երկիր» և որ «միայն սովետական իշխանության գաղափարը Հայաստանին բերեց իսպառ ազգային վերածննդի հնարավորություն» (Ստալին):

Սովետահայ գրականությունն իր սկզբնավորման այս էտապում իսկ պատկերում է երկրի ու ժողովրդի ռևոլյուցիոն անցումը դարիզմի և ապա ռեակցիոն դաշնակցության տիրապետությունից՝ բաղաքացիական պատերազմի միջով դեպի սովետական կարգերի հաստատումը, խաղաղ շինարարական աշխատանքը, երկրի վերականգնման ու վերակառուցման մեծ գործը՝ մեծ գալիքի հաստատման համար: Այս էտապի համար իբրև բնորոշ կարելի է ընդունել Ե. Չարենցի 1921 թ. գրած «Կարմիր սոնետ» բանաստեղծության առաջին քառյակը, որը մարմնավորում է նորածին սովետահայ գրականության հաղթական լավատեսությունը մեծ

պալիքի նկատմամբ, արտահայտում ժամանակաշրջանի տիրական տրամադրությունը, գրականության պատմական բովանդակությունը.

«Որպես դաշույն՝ օրերի հնամենի պատյանից
Ելնում է, կարծր ու բոսոր, ու վառվում է ապագան.
Եվ չի մանի նա հնի փոշոտ պատյանը նորից,
Ու չի Բաղմի օրերում, որ վառվեցին ու չկան»։*

Բանաստեղծական այս խոր, իմաստալից պատկերի մեջ խտացած է ժամանակի գրականության հիմնական պաթոսը, ռևոլյուցիայի ու սովետական կարգերի հաստիանակի հեռանկարի պաթոսը։

ը) Նշենք այս տարիների հիմնական թեմատիկան.

Երկրի տնտեսական-կուլտուրական վերածննդի, տնտեսական շինարարության սկզբնավորման խանդավառ պատկերումը, մասնավորապես պոեզիայում (Հ. Հակոբյանի՝ «Աստվածները խոսեցին», «Բոլշևիկ է Շիրականալը», Ն. Զարյանի «Ջրանցքի կապույտ երկրում» ժողովածուն, Գ. Սարյանի «Շիրակի հարսանիքը» պոեմը, Սարմենի՝ «Դաշտերը ժպտում են» լիրիկական բանաստեղծությունների շարքը)։ Հայաստանի հետ միասին՝ ողջ սովետական երկրի տնտեսական վերաշինության հերոսիկայի պատկերման ձգտումը (Հ. Հակոբյանի «Վոլխովստրոյը» պոեմը և այլն)։

Գրականության մեջ տիրական է նաև ռևոլյուցիայի թեման, Թուրաստանի ու Հայաստանի քաղաքացիական պատերազմի հերոսական դրվագների պատկերումը և քաղաքացիական պատերազմից խաղաղ սովետական շինարար կյանքին անցնելը (Ե. Զարենց, «Ամենապոեմ», «Մահկալ Սաքոյի պատմությունը», Գ. Աբովի «Ռևեմ պարզ»-ը, «Առաջին կոմունար»-ը, Ն. Զարյան—«Հրանուշ», Ստ. Զորյան—«Գրապարանի աղջիկը», «Հեղկոմի նախագահը», Են. Վարդանյան—«Բանդիտներ» և այլն)։ Ցարիզմի տիրապետության ժամանակների և ամենից ավելի իմպերիալիստական պատերազմի արհավիրքների ու ապեների ծանր վերհուշը (Դ. Դեմիրճյան, «Պատերազմի դաշտում», Ստ. Զորյան, «Պատերազմ» ժողով., Մկր. Մանվելյան, «Այրող հուշեր», «Մղձավանջ», «Կանվոյ» և այլն)։

* Ե. Զարենց, «Երկեր», 1932 թ., էջ 140։

գաշնակների տիրապետության մղձավանջային տարիների պատկերումը, այդ տիրապետության կոնտրռևոլյուցիոն-հակաժողովրդական էության ու բնույթի մերկացումը (Դ. Դեմիրճյան, «Քաջ Նազար», «Համառոտ անմահներ»)։ Նշանակալից տեղ է գրավում նաև Հոկտեմբերյան ռևոլյուցիայի արձագանքը գաղութային արևելքում, ճնշված ժողովուրդների ռևոլյուցիոն զարթոնքը և ընդվզումը եվրոպական (ամենից ավելի սուր՝ անգլիական) իմպերիալիզմի դեմ (Սեյիդ-էլ-Նուրի՝ Ազատ Վշտունու բանաստեղծությունները)։

Անցյալում ճնշված վիճակից աշխատավոր մարդու բարձրացումը (Արազի «Ընկեր Մուկուչը»)։ Գյուղի քաղաքական ու կուլտուրական զարթոնքը, երիտասարդության՝ կոմսոմոլի ու պիոներիայի աշխատանքն ու պայքարը նոր կյանքի ճանապարհին, անցյալի խավարից ու բազմատեսակ ճնշումից, կրոնական նախապաշարմունքներից ու հին բարոյական հարաբերություններից ստրկացնող վիճակից աշխատավոր կնոջ ազատագրման պատկերումը, նոր կենցաղի ու բարոյականության հարցերը, կրոնի-եկեղեցու — հոգևորականության ազդեցության դեմ պայքարը և այլն, — ահա թեմաներ, հարցեր, որոնք գրված, շոշափված են սովետահայ գրողների այդ տարիների երկերում։

Կարևոր է հատկապես նշել՝ ռևոլյուցիայի հանճարեղ առաջնորդի՝ Լենինի կերպարը պոեզիայում՝ նախ Հ. Հակոբյանի և ապա ավելի լայն ու խոր անդրադարձումներով Ե. Չարենցի ստեղծագործության մեջ, թե Լենինի կենդանության օրով և թե մանավանդ մահվան շրջանում ու հետագայում («Բալլադ Վլ. Իլյիչի, մուժիկի և մի զույգ կոշիկի մասին», «Լենին քեռին», «Լենին», «Լենինն ու Ալին», «Ես և Իլյիչը», և այլն)։

Սկզբնավորվում է նաև սովետահայ դրամատուրգիան, որի առաջնեկներն են՝ Ե. Չարենցի «Կապկազ թամաշան», Դ. Դեմիրճյանի նշանավոր «Քաջ Նազարը», Եկ. Բահաթուրի «Արտավազդը», Ան. Վարդանյանի «Պարտիզանները», Լ. Սաղաթելյանի «Մի կտոր հողի համար»-ը։

Նշանակալից տեղ են գրավում երգիծական-սատիրական ժանրերը գրական բոլոր տեսակների գծով՝ արձակում, դրամատուրգիայում, նաև պոեզիայում. Ե. Չարենցի՝ «Երկիր Նաիրի» սատիրավեպը և «Կապկազ թամաշա»-ն, Դ. Դեմիրճյանի «Քաջ-Նազար»

կոմեդիան, «Համառոտ անմահներ» վեպը և «Խորհ. Հայաստան» թերթում տպված նրա ֆելիետոնների շարքը, Էդ. Խաժիկի և մի քանի այլ գրողների հակակրոնական և այլ բնույթի ֆելիետոնները, և ապա հաջորդաբար լույս տեսած մի քանի երգիծական ժուռնալները («Կարմիր աքլոր», «Շեշտ», «Զուռնա» և այլն)։ Այս կապակցությամբ փոխաբերելով Մարքսի արտահայտությունը, նշենք, որ՝ ռևոլյուցիայի հաղթական ընթացքում «պատմությունը գործում էր հիմնավորապես, գերեզման դնելով կյանքի հնացած ձևը»։ Սատիրայի-կոմեդիայի շեշտված առկայությունն այդ շրջանում վկայում է այն մասին, որ մեր ժողովուրդն էլ «ծիծաղելով էր բաժանվում» իր ծանր ու մռայլ, իր դաժան անցյալից։

թ) Այս ժամանակաշրջանի հիմնական դրական դեմքերն են՝ Հ. Հակոբյան, Ե. Չարենց, Ա. Վշտունի, Արազի, Դ. Դեմիրճյան, Ստ. Զորյան, Գ. Աբով, Խնկո-Ապեր— սովետահայ գյուղի զարթոնքի երգիչը և սովետահայ մանկական գրականության սկզբնավորողը։

Երիտասարդներից աչքի են ընկնում Ն. Զարյան, Միրաս, Արաքս, Սարմեն, Գեղամ Սարյան, Ս. Մելիքսեթյան։

ժ) Պետք է առանձնապես նշել, որ այս էտապի կարևորագույն փաստերից մեկը՝ դա նոր, սովետական ֆոլկլորի, սովետական ժողովրդական բանահյուսության, նոր էպոսի առաջացումն է, երևույթ, որը շատ ցայտուն կերպով բացահայտում է մռայլ անցյալի դարավոր կոշմարից ազատագրված ժողովրդի հոգեկան-մտավոր աշխարհի ռևոլյուցիոն վերափոխման սկիզբը, ժողովրդի ինքնագիտակցության զարթոնքը՝ ինքնուրույն, ազատ կյանքի ճանապարհին։ Սովետական կարգերի, Սովետների իշխանության փրկարար ուժի, Կարմիր Բանակի ու նրա զորավարների փառաբանությանը նվիրված էպիկական ու լիրիկական երգերը, նոր կյանքն ու կենցաղը պատկերող խաղերն ու խաղիկները և ամենից ավելի ռևոլյուցիայի անմահ առաջնորդի՝ Լենինի դյուցազնական կերպարը պատկերող երգերն ու նշանավոր «Լենին փաշա» վիպերգը՝ հորինված են այդ տարիներին՝ թեև գրի են առնված միայն հետագայում։

Հարկ է նկատել, որ այս սկզբնական շրջանում ստեղծված ժողովրդական բանահյուսության արտադրանքները, զգալի չափով

թույլ են իրենց արվեստով, գեղարվեստական պատկերավորման, արտահայտչական միջոցներով ու ձևերով:

Եվ դա հասկանալի է ու հեշտ բացատրելի: «Չպետք է կարծել, թե որևէ ժողովուրդ իր հերոսական շրջանում արդեն տիրապետում է ինքն իրեն էպիքորեն արտահայտելու արվեստին»,— ասում է Հեգելը և ապա շարունակում՝ «այլ բան է իր իրական գոյությամբ բանաստեղծական ազգությունը, այլ բան է՝ պոեզիան, որպես բանաստեղծական նյութը պատկերացնող գիտակցություն և... աշխարհի գեղարվեստական պատկերում:

Պատկերացման մեջ մարմնավորվելու պահանջը, այսինքն գեղարվեստի ծնունդը, տեղի է ունենում հետագայում, երբ ազատ ոգին՝ կյանքի հանդեպ իր բանաստեղծական անմիջական գոյության մեջ իրեն տանն է զգում: Հոմերոսն ու նրա անվան հետ կապված ստեղծագործությունները Տրոյական պատերազմից հարյուրավոր տարիներ հետո են եղել: Նույն ձևով էլ Օսիանին վերաբերվող ժողովրդական վիպերգության մեջ գեղարվեստական արտահայտություն է գտել մի այնպիսի հերոսական անցյալ, որի հեռավոր փայլը պահանջ է առաջ բերում այն վերհիշելու և գեղարվեստորեն կերպարանելու»:*

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայի, քաղաքացիական պատերազմի, սովետական կարգերի հիմնադրման ու ամրացման համար մղված պայքարի ժամանակաշրջանը սովետական ժողովրդի, այդ թվում և հայ ժողովրդի պատմության, իրոք «հերոսական շրջան» է. նույնպիսի մի հերոսական շրջան է նաև 1941—1945 թ. թ. Հայրենական Մեծ Պատերազմի ժամանակամիջոցը: Շատ բան է գրված այդ հերոսական շրջանների մասին, բայց այդ ամենը դեռ իրավունք չի տալիս ասելու, որ մեր ժողովուրդն իր այդ հերոսական շրջաններում լիովին տիրապետած է եղել «ինքն իրեն էպիքորեն արտահայտելու արվեստին»: «Լենին փաշան» և մեր բանաստեղծների պատմառևոլյուցիոն պոեմներն ու վեպերը հետագայում ստեղծվելիք մեծ երկերի համեմատությամբ՝ նախափորձեր են միայն:

Սակայն կարևորն ու նշանակալիցն այն է, որ հենց այդ նախափորձերն ստեղծված են մեր ժողովրդի այս նոր հերոսական

---

* Հեգել. «Բանաստեղծական արտահայտություն» («Խորհրդ. գր.» 1939, № 5—6, էջ 227).

շրջանում, հանգամանք, որ վկայում է թե ժողովուրդը, հիմնովին ծանոթանալով Հեգելի թեորիան, իր այդ հերոսական շրջանում էլ՝ նաև այդ շրջանը «գերարվեստական պատկերացման մեջ մարմնորոշելու պահանջ է» զգացել և նշանակալից չափով «տիրապետել է ինքն իրեն էպիքորեն արտահայտելու արվեստին»:

Կապիտալիզմի լծից ազատագրված ժողովուրդը չպատեց «հարյուրավոր տարիներ» (ըստ Հեգելի պետք է պատեր), որպեսզի հետո անդրադառնար իր «հերոսական անցյալին», դյուցազներգելու այն: Ժողովուրդը վարվեց ոչ ըստ Հեգելի, այլ ըստ Մ. Գորկու:

«Ֆոլկլորն ամենահին ժամանակներից անբաժան ու յուրահատուկ կերպով ուղեկցում է պատմությանը»,— գրում է Գորկին, «նույն այդ ֆոլկլորը մեր օրերում վլադիմիր Լենինին բարձրացրեց Նոյեմյան ապստամբական հերոսի բարձրությանը և հավատաց Պրոմեթեոսին»:*

Սովետահայ գրականության սկզբնավորման առաջին էտապն էլ հաստատում է Գորկու միտքը. հայ բանաստեղծ-վիպերգու ժողովուրդը՝ կապիտալիզմի լծից իր ազատագրվելու պահից սկսած հարթում է երգեր, վեպ-վիպերգություն, որոնք պատկերում են ավյալ հերոսական էպոխան՝ էպոխայի մեծագույն մարդու դյուցազնական կերպարով:

ժա) Այս ժամանակաշրջանում կուլտուրայի ու գրականության մարզում բոլշևիկյան պարտիայի վարած քաղաքականության մեջ, պարտիայի մղած պայքարում կարևոր է նշել հետևյալ մոմենտները.—

1. Նոր, իր բնույթով ու խնդիրներով անցյալի կուլտուրայից ու գրականությունից տարբեր՝ պրոլետարական-սոցիալիստական կուլտուրայի ու գրականության ստեղծման հնարավորության հաստատումը՝ ի հակադրություն կոնտրռևոլուցիոն տրոցկիզմի և վրանովիականության, որը ելնելով մի երկրում, մեր երկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության ժխտման բուրժուական «թեորիայից», ժխտում էր նաև նոր, պրոլետարական-սոցիալիստական կուլտուրայի ստեղծման հնարավորությունը պրոլետարիատի դիկտատուրայի պարագայում:

---

* М. Горький, „О литературе", 1935 г., стр. 376.

2. Նոր, պրոլետարական-սոցիալիստական կուլտուրայի ու արվեստի և անցյալի կուլտուրական-գրական ժառանգության կապի ու փոխհարաբերության հարցի լուծումը՝ ժառանգության քննադատական յուրացման և օգտագործման լենինյան սկզբունքով ի հակադրություն Պրոլետկուլտի, որը ժխտում էր ժառանգության օգտագործման անհրաժեշտությունն ու կարևորությունը:

3. Գրականության և քաղաքականության կապի ու փոխհարաբերության հարցի լուծումը՝ գրականությունը պրոլետարիատի դասակարգային պայքարի շահերին ծառայեցնելու, ժողովրդին սոցիալիզմի-կոմունիզմի ոգով դաստիարակելու գործին ի սպաս դնելու, գրականության բարձր գաղափարականության իմաստով. և այդ առումով էլ գրականության պարտիականության սկզբունքի զարգացումը, «Լենինի կարևորագույն ավանդը գրականագիտության մեջ» ի հակադրություն Պրոլետկուլտի, որը ձգտում էր գրականությունն անկախ դարձնել պրոլետարիատի քաղաքականությունից և հակադրել այդ քաղաքականությանը, ի հակադրություն արվեստի «չեզոքության», ապաքաղաքականության ու ապագաղափարայնության կեղծ, բուրժուական թեորիաների, ի հակադրություն սիմվոլիստական-դեկադենտական «արվեստն արվեստի համար» ռեակցիոն սկզբունքի, որը նպատակ ուներ գրականության զարգացումը հարմարեցնել բուրժուազիայի ու քաղքենիության ճաշակին և ապաքաղաքականության ու «գաղափարազրկության դիմակի տակ թաքնվելով՝ խորթ գաղափարներ հրամցնելու սովետական ժողովրդին» (Ա. Ժդանով):

4. Պարտիայի պայքարը հակապրոլետարական գրական հոսանքների ու խմբավորումների դեմ, ըստ որում պրոլետարական գրողների և «ուղեկիցների» փոխհարաբերության կարգավորումը՝ ուղեկիցներին պարտիայի քաղաքականության ոգով վերադաստիարակելու, սոցիալիզմի շինարարության գործի մեջ նրանց ներգրավելու իմաստով, ի հակադրություն՝ պրոլետարական գրողների միջավայրում տարածված այն «թեթևսոլիկ ու արհամարհական վերաբերմունքի», որ ցուցաբերվում էր «գեղարվեստական խոսքի մասնագետների» նկատմամբ, ինչպես այդ նշված է պարտիայի 1925 թ. հունիսյան բանաձևում:

5. Պարտիայի իմաստուն քաղաքականության շնորհիվ հերքվեց հին գրական ինտելիգենցիայի կենսունակության նկատմամբ

նրա Հովհաս Հայրապը, որ իսր Հասկապես այս ժամանակաշրջանում, երբ ընդհանրապես հին ինտելիգենցիայի մի զգալի մասը հենց սկզբից կանգնեց ռևոլյուցիայի թշնամիների բանակում:

Ըստ այդ Հովհաս կարծելի, նա՝ հին զրական ինտելիգենցիան, ինչպես զրում էր նույն այդ ինտելիգենցիայի ակտիվ ներկայացուցիչներից մեկը, մեև կգա ու «կլծվի մեր... շինարար աշխատանքին», «բայց նորն առեղծելու մեջ անզոր է նա և անպետք»: Ըստ այդ Հայտարի, հին զրական ինտելիգենցիան այժմ Հանդես է գալիս «որպես իր դասակարգի մեռնող շառավիղ», «և շինարար տենդով բռնված երկրում անտեղատ է նրա ճանապարհը և սիրտ՝ զիշեր»: Եվ ուրեմն, այդ «ինտելիգենցիան այլևս նոր խոսք ասելու և նոր զրի կատարելու ընդունակ չէ»,— կարուկ կերպով Հայտարարում էր նույն Հեղինակը, որն Հակառակ իր իսկ «Քնորհալի», Հենց այդ տարիներին ակտիվորեն մասնակցում էր «նորի ստեղծման» ուղիների քննությանը և Հետագայում իր որոշ տեղը գրավեց մեր նոր, սովետական դեզարվեստական կուլտուրայի ստեղծման ու զարգացման գործում: Մենք նկատի ունենք սկզբում դեկտեմբեր բանաստեղծ, Հետագայում սովետական գրամատուրգ, գրականագետ, քարգմանիչ, այժմ արվեստի վաստակավոր գործիչ Տիգրան Հախումյանին: Որպես Հերքումն այդ Հոռետես «Քնորհալի», մեր հին գրական ինտելիգենցիայի «կենսունակ ներկայացուցիչները» ոչ միայն կանգնեցին սովետական կարգերի պլատֆորմայի վրա, այլև խանդավառ ակտիվություն Հանդես բերեցին նոր, սովետական ազգային կուլտուրայի զարգացման գործում, մեե նրա հիմնադրման-սկզբնավորման շրջանում և մեե մանավանդ Հետագա էտապներում, երբ սոցիալիզմի անկասկածելի Հաղթությունն այդ ինտելիգենցիային Հասասատորեն միացրեց սոցիալիզմի բանակին: Բավական է Համեմատել մեր մի շարք գրողների՝ մասնավորապես Դ. Դեմիրճյանի, Սա. Զորյանի, Միք. Մանվելյանի մինչսովետական շրջանի ստեղծագործությունները վերջին քառորդ դարի և Հենց 20-ական թ. թ. սկզբի տարիների ստեղծագործության Հետ, որպեսզի անմրաժ կերպով երևա ռևոլյուցիայի փրկարար նշանակությունը Հենց նույն այդ գրողների Համար: Սոցիալիստական*

---

* «Խորհրդային Հայաստան», 1922 թ. № 212:

ռեոլուցիայի հաղթանակը, բոլշևիկյան պարտիայի իմաստուն քա-ղաքականությունը նրանց դուրս բերեց ստեղծագործական կյանքի լայն ճանապարհը, որի հաստատուն ուղիղը մենք տեսնում ենք նրանց հենց այս էտապի կյանքի ու գործունեության մեջ:

ժբ) Պարտիայի քաղաքականությունը այն հիմնական մագիս-տրալն է, որով անցնում է սովետական կուլտուրայի ու գրականու-թյան զարգացումը: 1920—1925 թ. թ. պարտիայի քաղաքականու-թյունը և պայքարը կուլտուրայի ու գրականության մարզում նշա-նավորված են մի շարք կարևորագույն դոկումենտներով: Այդ դո-կումենտները վկայում են, խոսում այն բացառիկ մեծ ուշադրու-թյան ու հոգատարության մասին, որ ցուցաբերում էր պարտիան, որ ցուցաբերում էին նրա առաջնորդները Լենինն ու Ստալինը նոր կուլտուրայի ստեղծման գործի նկատմամբ, վերջինիս զարգացման ճիշտ ուղիները որոշելու խնդրի նկատմամբ: Այստեղ կարող ենք միայն թվարկել կուլտուրայի մարզում պարտիայի քաղաքակա-նությունն արտահայտող հիշյալ դոկումենտներն ու կարևորագույն ձեռնարկումները: Դրանք են՝ 1. Լենինի գրած բանաձևի նախա-գիծը Պրոլետկուլտի մասին վերջինիս համառուսական համագու-մարում Լունաչարսկու ունեցած ելույթի առթիվ (1920 թ. 8/X) և Լենինի ճառը Կոմսոմոլի 3-րդ համագումարում:

2. ՀամԿ(բ)Պ ԿԿ-ի՝ 1920 թ. դեկտեմբերի 1-ի ցիրկուլյար-նա-մակը Պրոլետկուլտի մասին:

3. Պարտիայի նույն ժամանակաշրջանում կայացած XI, XII, XIII և XIV համագումարների (առանձնապես 13-րդի) որոշումնե-րը մամուլի, պրոպագանդի և կուլտուրական շինարարության խնդիրների մասին:

4. ՀամԿ(բ)Պ ԿԿ-ի 1925 թ. հունիսյան բանաձևը «Պարտիայի քաղաքականության մասին գեղարվեստական գրականության մար-զում»:

5. Ընկեր Ստալինի հոդվածներն ու ելույթները Պարտիայի ազգային քաղաքականության մասին, մասնավորապես 1925 թ. մայիսի 18-ին Արևելքի ժողովուրդների համալսարանում արտա-սանած ճառը:

Այդ դոկումենտներն ու ձեռնարկումները ճիշտ կողմնորոշում են տալիս սովետական գրականության զարգացման բնույթին՝ որոշելով նրա տեղն ու դերը սոցիալիզմի կառուցման համար մղ-

վող պայքարում, իբրև կարևորագույն իդեոլոգիական զենքի, ուսեմն և որոշելով նրա սերտ օրգանական կապը պարտիայի ու սովետական պետության քաղաքականության հետ, գրականության պարտիականության սկզբունքը հակադրելով ապաքաղաքականության և «արվեստը արվեստի համար» ռեակցիոն սկզբունքներին։ Լենինի կազմած վերոհիշյալ «Բանաձևի նախագծի» («Պրոլետարական կուլտուրայի մասին») առաջին կետը հենց այդ մասին է. «Սովետական բանվորա-գյուղացիական ռեսպուբլիկայում լուսավորության գործի ամբողջ դրվածքը, ինչպես քաղաքական-լուսավորական ասպարեզում — առհասարակ, նույն և հատկապես արվեստի ասպարեզում, պետք է ներթափանցված լինի պրոլետարիատի դասակարգային պայքարի ոգով. հանուն նրա դիկտատուրայի նպատակների հաջող իրականացման, այսինքն՝ հանուն բուրժուազիայի տապալման, հանուն դասակարգերի ոչնչացման, հանուն մարդու նկատմամբ մարդու կողմից տեղի ունեցող ամեն տեսակի շահագործման վերացման»։*

Վերջապես այդ դոկումենտներն ու ձեռնարկումները պարզ ու մեկին որոշում են սովետական գրականության բնույթի առանձնահատկությունը, իբրև բովանդակությամբ սոցիալիստական ու ձևով ազգային գրականություն, որը զարգանում է տվյալ ժողովրդի լեզվով, և ազգային-պատմական ու գրական տրադիցիաների, նրա կենցաղի ու հոգեբանության առանձնահատկությունները հաշվի առնելով։

ժգ) «Ժողովրդական տնտեսության վերականգնումը մոտենում էր իր վախճանին... Բայց այստեղ ամբողջ ուժով ծառանում էր մեր զարգացման, մեր շինարարության հեռանկարների, բնույթի հարցը»,**— ասված է Պարտիայի պատմության «Համառոտ դասընթաց»-ում, այդ ժամանակաշրջանի՝ 20-ական թ. թ. կեսերի վերաբերյալ։

«Մենք չենք կարող առաջ շարժվել, առանց իմանալու, թե ուր պետք է շարժվել, առանց իմանալու շարժվելու նպատակը։ Մենք չենք կարող կառուցել առանց հեռանկարների, առանց այն համոզման, որ սկսելով սոցիալիստական տնտեսության կառուցել, կա-

* «ՀամԿ(բ)Պ պատմության համառոտ դասընթաց», 1941 թ., էջ 372։
** «Լենինը և արվեստը», 1933թ. էջ 20։

րող ենք ավարտել այդ կառուցումը, առանց պարզ հեռանկարների, առանց պարզ նպատակների պարտիան չի կարող շինարարությունը ղեկավարել*,— ասում է ընկեր Ստալինը «Օպոզիցիայի և ներպարտիական դրության մասին» XV պարտ. կոնֆերենցիայում տված իր զեկուցման մեջ:

Բայց ոչ միայն էկոնոմիկայի, նույնպիսի սրությամբ նաև կուլտուրայի, արվեստի, գրականության մարզում «ամբողջ ուժով ծառանում էր մեր զարգացման, մեր շինարարության հեռանկարների, բնույթի հարցը»: Վերևում հիշատակված դոկումենտներում, Պարտիայի 1921—1925 թվերին կայացած համագումարների ու Կենտկոմի որոշումներում ու բանաձևերում, Լենինի ու Ստալինի նույն տարիների աշխատություններում ու ելույթներում հստակորեն ու որոշակի գծված են «մեր զարգացման, մեր շինարարության հեռանկարների, բնույթի հարցերը» նաև կուլտուրայի, արվեստի, գրականության մարզում: Այդ տեսակետից կարևորագույն նշանակություն ունեն ընկեր Ստալինի՝ 1920—1925 թ. թ. մի շարք հոդվածներն ու ելույթները, որոնց մեջ հանճարեղ պարզությամբ դրված ու վճռված են սովետական բազմազգ պետության կուլտուրայի զարգացման հեռանկարների և բնույթի հարցերը:

Բավական չէր ընդունել պրոլետարական սոցիալիստական կուլտուրայի ստեղծման հնարավորությունը և անհրաժեշտությունը: Էլ ավելի կարևոր էր որոշել նաև այդ կուլտուրայի զարգացման կոնկրետ ձևը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ խոսքը նոր հաստատված պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում բազմազգ սովետական պետության երկրում ստեղծվող նոր տիպի կուլտուրայի մասին է: Ահա այդ հարցի հանճարեղ լուծումը տալիս է ընկեր Ստալինը 1925 թ. մայիսի 18-ին Արևելքի ժողովուրդների Կոմունիստական Համալսարանի ուսանողների ժողովում արտասանած իր նշանավոր պատմական ճառում: Ընկեր Ստալինն ասում է, որ մենք ի տարբերություն և ի հակադրություն բուրժուական կուլտուրայի կառուցում ենք նոր, պրոլետարական-սոցիալիստական կուլտուրա: «Սա միանգամայն ճիշտ է: Բայց ճիշտ է նաև այն, որ իր բովանդակությամբ սոցիալիստական հանդիսացող պրոլետարական կուլտուրան, նայած լեզվի, կենցաղի և այլնի տարբե-

* Ի. Ստալին, «Օպոզիցիայի և ներպարտիական դրության մասին», 1926 թ. էջ 41:

բուքյանը, ընդունում է արտահայտման զանազան ձևեր ու եղանակներ՝ սոցիալիստական շինարարության ասպարեզ ներգրավված զանազան ժողովուրդների մոտ: Իր բովանդակությամբ պրոլետարական, ձևով ազգային,— այս է այն համամարդկային կուլտուրան, գեպի որն ընթանում է սոցիալիզմը: Պրոլետարական կուլտուրան չի վերացնում ազգային կուլտուրան, այլ բովանդակություն է տալիս նրան: Եվ ընդհակառակը, ազգային կուլտուրան ոչ թե վերացնում է պրոլետարական կուլտուրան, այլ ձև է տալիս նրան: Ազգային կուլտուրայի լոզունգը բուրժուական լոզունգ էր, բանի գեռ իշխանության գլուխ բուրժուազիան էր կանգնած, իսկ ազգերի կոնսոլիդացումը կատարվում էր բուրժուական կարգերի հաստատ տակ: Ազգային կուլտուրայի լոզունգը պրոլետարական լոզունգ դարձավ, երբ իշխանության գլուխ կանգնեց պրոլետարիատը, իսկ ազգերի կոնսոլիդացիան սկսեց ընթանալ սովետական իշխանության հաստատ տակ»,— ասում է ընկեր Ստալինը և ապա՝ բնութագրելով ու ցույց տալով Կ. Կաուցկու և նրա նման սոցիալիստների «միասնական համամարդկային լեզվի» բնորոշման հակագիտական բնույթը՝ ընկեր Ստալինն, այնուհետև նորից շեշտում է, որ սոցիալիզմի կառուցման ու հաստատման գործընթացում «պրոլետարական համամարդկային կուլտուրան չի բացառում, այլ ենթադրում և անում է ազգային կուլտուրան այնպես, ինչպես որ ազգային կուլտուրան ոչ թե վերացնում, այլ լրացնում ու հարստացնում է համամարդկային պրոլետարական կուլտուրան» (փակագծում նշենք, որ ինչպես Լենինին, նույնը և ընկեր Ստալինի մոտ «պրոլետարական կուլտուրա» հասկացողությունը լիովին ու անվերապահորեն համընկնում է, նույնական է «սոցիալիստական կուլտուրա» հասկացողությանը):*

Ահա ստալինյան այս հանճարեղ բանաձևումները դարձան սովետական ժողովուրդների կուլտուրայի ու գրականության զարգացման ճշմարիտ ուղեցույցը, որով ընթացավ նաև սովետահայ կուլտուրան ու գրականությունը հետագայում:

ժդ) Ընկեր Ստալինի այդ ճառից հետո սովետական գրականության զարգացման ուղիները որոշող կարևորագույն ծրագրային

---

* Ի. Ստալին, «Մարքսիզմը և ազգային-գաղութային հարցը», 1935 թ., էջ 214—215:

ին պոկոմիսն ի Համկ(բ)Պ Կենտկոմի 1925 թ. հունիսի 18-ի բանաձևը (հրատարակված «Պրավդա»-ի նույն տարվա հուլիսի 1-ի N-ում և ապա այլ թերթերում) «Պատմության բաղաքականության մասին դեպարտեմենտական պրոկանության մարդում»։ Այդ բանաձևում հանդրագումարի են բերված նախընթաց տարիներին՝ սովետական պրոկանության տնտեսման համար մղված պայքարի փորձի արդյունքները և նշված է այն հիմնական ուղին, որով պետք է ընթանար և ընթացավ պրոկանության զարգացումը Միության մեջ 20-ական թվականներին սովետական պրոկանության վիճակի ու հետագա զարգացման ուղիների ու քննության բոլոր էական հարցերը դրված ու լուծված են այդ նշանավոր պրոկան-պատմական փոկումենտում, որ բոլշևիկյան պատմության բաղաքական թեորիական իմաստության մի վկայաթուղթ է դեպարտեմենտական պրոկանության բնագավառի վերաբերյալ։

Պատմության՝ պրոկանության ու կուլտուրայի մարդում վարած բաղաքականության վերոհիշյալ պոտմական փոկումենտները ահա հանդրագումարի են բերում սովետական կուլտուրայի ու պրոկանության զարգացման այդ էտապի փորձը և դնում արշավի ուղիներ ու հնտանկարներ հետագա էտապի համար։

ԵՐԿՐՈՐԴ ԷՏԱՊ. 1926—1929 թ. թ.

ա) *Ժամանակաշրջանի ընդհանուր բնութագիրը.*— Պատմության XIV համագումարը (1925 թ. դեկտեմբեր), որով թե ավարտվում է նախընթաց էտապը, հանդրագումարի է թերվում պայքարի ու շինարարության արդյունքները, և թե միաժամանակ սկսվում է այս նոր էտապը, որի զարգացման հետանկարային ծրագիրը հաստատեց Համագումարը։

Երկրի սոցիալիստական ինդուստրացման ստալինյան պլանը։ Ըստ այդ պլանի պատմության պայքարում էր «մեր երկիրն ագրարային երկրից դարձնել ինդուստրիալ երկիր, որն ընդունակ լինի իր սեփական ուժերով արտադրել անհրաժեշտ սարքավորումը,— ահա թե ինչն է մեր գլխավոր գծի էությունը»* (Ստալին)։ Պատմության

* «Համկ(բ)Պ պատմության համառոտ դասընթաց», 1946թ., էջ 379։

պայքարը «նոր օպոզիցիայի» դեմ, նրա՝ տրոցկիստական-մենշևիկյան էության մերկացումն ու ջախջախումը:

14-րդ համագումարը ի հակադրություն «նոր օպոզիցիայի» թերահավատությանն ու «նվնվոցին,— գրում է ընկեր Ստալինը՝ 1926 թ. հունվարին, «պարզ ու հստակ կերպով ուրվագծեց սոցիալիզմի համար մղվելիք հետագա պայքարի ուղին, պարտիային տվեց հաղթության հեռանկար և դրանով իսկ, պրոլետարիատին զինեց սոցիալիստական շինարարության հաղթանակի անխորտակելի հավատով»:*

Նույն այս ժամանակաշրջանում տեղի ունեցած՝ պարտիայի XV համագումարը (1927 թ. դեկտեմբեր), ելնելով երկրի սոցիալիստական ինդուստրացման հաջողություններից, «որոշում ընդունեց գյուղատնտեսության կոլեկտիվացումն ամեն կերպ ծավալելու մասին», ինչպես և դիրեկտիվ տվեց՝ «էլ ավելի զարգացնել հարձակումը կուլակության վրա», սահմանափակել կապիտալիզմի զարգացումը գյուղում և գյուղացիական տնտեսությունը վարել սոցիալիզմի ուղղությամբ»:**

Վերջապես նույն այս «համագումարը... դիրեկտիվ տվեց ժողովրդական տնտեսության առաջին հնգամյա պլանը կազմելու մասին»:***

Այս ժամանակաշրջանում արդեն՝ պարտիայի XIV և XV համագումարների դիրեկտիվների հետևողական կատարմամբ՝ «պարտիայի և բանվոր դասակարգի ջանքերով հաղթանակեց երկրի սոցիալիստական ինդուստրացման քաղաքականությունը»: «Ամբողջ ժողովրդական տնտեսությունը վերազինելու ընդունակ ծանր ինդուստրիայի հիմքը դրվեց»:**** Առաջին հնգամյակի կատարման համար երկրում ծավալվեց* միլիոնավոր աշխատավորների սոցիալիստական մրցումը, աշխատանքի նկատմամբ սոցիալիստական վերաբերմունքի ցայտուն արտահայտությունը, երբ՝ «աշխատանքը անարգ և տաժանակիր պարհակից, ինչպիսին էր կապիտալիզմի ժամանակ, սկսեց դառնալ «պատվի գործ, փառքի գործ, արիության և հերոսության գործ»:***** «Այդ շրջանը վերջանում է մեծ բեկ-

* Ի. Ստալին, «Լենինիզմի հարցերը», 1940 թ. էջ 196:

** «ՀամԿ(բ)Պ պատմության համառոտ դասընթաց», էջ 394:

*** Նույն տեղ, էջ 395:

**** Նույն տեղ, էջ 409:

***** Նույն տեղ, էջ 406:

Ճան տարով, որ նշանակում էր սոցիալիզմի խաչքարային հաղթություններ արդյունաբերության մեջ, առաջին տարի հաղթություններ գյուղատնտեսության մեջ, միջակի շրջադարձ դեպի կոլխոզները, մասսայական կոլխոզային շարժման սկիզբը»։*

բ) «Սոցիալիզմի ուղիով կատարվող այդ աշխատանքի ընթացակից էր երկրի ներսում դասակարգային պայքարի սրվելը և ներպարտիական պայքարի սրվելը»։ Բոլշևիկյան պարտիայի կոմիտեից խեղոդխտած չանաջանված, բոլորովին կորցնելով իրենց ազդեցությունը զանգվածների մեջ, տրոցկիստները դարձան քաղաքական հասանք լինելուց և դարձան բացարձակ արհեստականների մի անակզբունք կարևորագույն կլիկ, բացարձակ երկրանտինների բանդա»։

Երկրում մղվող դասակարգային պայքարի և ներպարտիական պայքարի «կարևորագույն արդյունք է՝ կոլեկտիվության զանգվածային ճնշումը, տրոցկիստական-բուխարինական բլոկի՝ որպես հակահեղափոխական բլոկի մերկացումը, տրոցկիստների վճռական պարտությունը, տրոցկիստների և աջ օպորտունիստների հայտնքների անհամատեղելի ճանաչվելը Համ(բ)Պ-ին պատկանելու հետ»։**

Երկրում ծավալված դասակարգային պայքարի և ներպարտիական սրված պայքարի անդրադարձումը գրականության բնագավառում։— Կոնտրռևոլուցիոն տրոցկիզմի ագենտուրան ՌԱՊՊ-ի ղեկավարության մեջ՝ Հանձին Ավերբախի ու նրա կոնտրռևոլուցիոն դործակիցների խմբակի, որը զանազան լոզունգներով բռնարկում էր իր տրոցկիստական էության՝ ձգտելով ներդափնել պարտիայի գրական բաղաքականությունը տրոցկիստական բաղաքականությամբ։ Երկրում տեղի ունեցող դասակարգային պայքարի անդրադարձումը նաև Սովետական Հայաստանի գրական կյանքում։ Պարտիայի գրական բաղաքականության խեղաթյուրումները Հայաստանի Պրոլետ. Գրողների Ասոցիացիայի գործունեության մեջ և պայքարն այդ խեղաթյուրումների և ավերքախական տրոցկիստական տարրերի դեմ։

---

* «Համ(բ)Պ պատմության համառոտ դասընթաց», էջ 409։
** Նույն տեղը, էջ 409։

գ) Գաղափարական-քաղաքական շերտավորման պրոցեսի խո-
րացումը հայ գրական ինտելիգենցիայի ներսում։ Գրական նոր
կազմակերպությունները՝ «Հայ Գրական Ընկերությունը» (1926 թ.
մայիս) և «Հայ Աշխատավորական գրողների Միությունը» (1927 թ.
օգոստոս) որպես այդ շերտավորման ընթացքի արտահայտություն,
բատ որում՝ առաջինն իր գործունեության հիմնական ուղղությամբ
ու տենդենցներով՝ իբրև հայկական սմենովեխականության արտա-
հայտություն, երկրորդն իբրև սոցիալիստական շինարարությանն
ու սովետական գաղափարախոսությանն ավելի մոտեցող ուղեկից-
ների (Դ. Դեմիրճյան, Ստ. Զորյան, Մ. Մանվելյան և ուրիշներ)
խմբավորում։ Կազմակերպություններում ընդգրկված մտավորա-
կանների հետագա շերտավորումը, որն արտահայտվեց առաջինի
(«Հայ Գր. Ընկ.») քայքայումով, իսկ երկրորդի կազմից Պրոլետա-
րական Գրողների Ասոցիացիայի հետ համագործակցության հաս-
տատումով՝ Հայաստանի Սովետական Գրողների Ֆեդերացիայի
կազմակերպումով (1929 թ.)։

դ) Այս էտապի սկիզբը նշանավորվում է՝ սովետական օրիեն-
տացիայի ամրապնդումով արտասահմանի հայության դեմոկրատա-
կան խավերի և գրականության պրոգրեսիվ հատվածի միջև։ Այդ
պրոցեսի մի ցայտուն արտահայտությունն էր տարագրությունից
Ավ. Իսահակյանի և Ալ. Շիրվանզադեի վերադարձը Սովետական
հայրենիք և ապա նրանց ակտիվ մասնակցությունը սովետահայ
կուլտուրական գրական կյանքին։ Իսահակյանի ու Շիրվանզադեի
և նրանց հետևից մյուս գրողների (Հ. Հովհաննիսյան, Նար-Դոս, Վ.
Միրաքյան, Արշ. Շահնազարյան) ստեղծագործական աշխատանքն
այդ տարիներին (Շիրվանզադե —«Մորգանի խնամին», «Մարդը
անապատի մեջ», «Կյանքի բովից», Ավ. Իսահակյան— «Համբերան-
քի չիբուխը», «Լիլիթ» ժողովածուները, «Երվանդ Միրաքյան» պատ-
մվածքը, բանաստեղծությունները և այլն)։

ե) Գրականության հիմնական թեմատիկան ու մոտիվները.—
Ինչպես նախընթաց, նույնպես և այս տարիներին Հոկտեմբերյան
Ռևոլյուցիայի, քաղաքացիական պատերազմի հերոիկայի պատկե-
րումը զգալի տեղ է գրավում պոեզիայում ու պրոզայում միացած
ռևոլյուցիոն պայքարի վերհուշին (Հ. Հակոբյան.— «Լենինգրադյան
պոեմից» ֆրագմենտները և «Ագիտատորի հուշերից» ժողովածուն,
Ե. Չարենց— «Հոկտեմբերի 25—26, 1917», «Բալլադ 26-ի մասին»,

«Իմ ընկեր Լիպոն», «Բալլատ գնդապետ Տոմասին, կոմերիա ոչխ և պրիմադոնի մասին», Ն. Զարյան — «Տրիբունը», «Տաքսի ժայռից», «Անպատասխանություն», Ծ. Բորոմյան — «Հորձանքում», Ստ. Զորյան — «Գելի ճուտը» և այլն):

Գրականության հիմնական պահանջն այս ստրիներին՝ գյուղում և քաղաքում ծավալվող սոցիալիստական շինարարության պատկերումն է. Սովետական երկրի մեծ առօրյայի բազմակողմանի պատկերման ձգտումը, որը միացնում է ստրերը գրական խմբագիրքներում եղած լավագույն պրոզներին (օրինակ՝ Ն. Զարենցի «Մեծ առօրյան», «Զուգանի մարդը», Ն. Զարյանի «Կառույցները», «Հնոցի մոտ», «Բագու», նաև Գ. Դեմիրճյանի, Ստ. Զորյանի, Արա-պռ. մի շարք պատմվածքները, նաև Գ. Սարյանի, Ս. Տարոնցու, Աբսքախ, Հ. Մելիքյանի և մյուսների առանձնագրություններ):

Սոցիալիստական շինարարության մեջ իրենց տեղը չգտած դպրոցների ինտելիգենտների կամ այլ ստրերի՝ ավելորդ ու խորթ մարդկանց, ինչպես և շահագործող դասակարգերի մնացորդների բնորոշման դեմքի պատկերումը (Արազի — «Պատվավոր բացակային», «Տեսիլը», «Զատաբատիկը», Ն. Զարյան — «Վարդան Վարդանյանը», Գ. Սարյան — «Ծտար մարդը», և այլն):

Գյուղում կուլակության կատաղի դիմադրության, դասակարգային պայքարի անդրադարձումը և նոր, սովետական գյուղացու, կուլակային սոցիալիստից ազատագրված նախկին բատրակի ու չքավոր գյուղացու կերպարը (Գ. Դեմիրճյանի՝ «Ծաշիկը», Արազու «Աչքը վախեցած Հաննան», Ստ. Զորյանի «Վարպաճառի կոմունը» վիպակում «Կոմունի հիմնադիր Բենոն» և այլն). Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման պատկերման առաջին քայլը (Ստ. Զորյանի՝ «Վարպաճառի կոմունը»):

ղ) Ռևոլյուցիոն ռոմանտիզմը՝ սոցիալիստական ռեալիզմին ստրերով, ռևոլյուցիոն քննադատական ռեալիզմն անցյալի նկատմամբ ու սովետական իրականության մեջ նրա մնացորդների նկատմամբ, և միաժամանակ դեռ չդիտակցված սոցիալիստական ռեալիզմի ստրերի աճումը՝ միացած ռևոլյուցիոն-սոցիալիստական հեռանկարների պատկերմանը նվիրված երկերում,— ահա՝ սովետական գրականության հիմնական գծերը մինչև էտապում՝ առնձնագրական մեթոդի առաջին:

ա) ժամանակաշրջանի ընդհանուր բնութագիրը.— «Մեծ բեկման տարվանն» հաջորդող (ավելի ճիշտ նրանով սկսվող) այս ժամանակաշրջանը, որը նշանավորված է Պարտիայի XVI (1930 թ. հունվար) և XVII (1934 թ. հունվար) համագումարներով—ՍՍՌՄ-ի ներքին կյանքի տեսակետից, բնութագրվում է, իբրև «սոցիալիզմի ամբողջ ճակատով ծավալուն հարձակման, կուլակությունը որպես դասակարգ լիկվիդացնելու և համատարած կոլեկտիվացումն իրականացնելու» ժամանակաշրջան, երբ «ՍՍՌՄ-ն արմատականորեն վերափոխվեց դեն նետելով հետամնացության միջնադարի իր կերպարանքը: Ագրարային երկրից նա դարձավ ինդուստրիալ երկիր: Մանր անհատական գյուղատնտեսական երկրից նա դարձավ մեքենայացված խոշոր-կոլեկտիվ գյուղատնտեսության երկիր»***

*Այդպիսով «1930—1934 թ.. բ. բոլշևիկների պարտիան լուծեց իշխանությունը նվաճելուց հետո պրոլետարական revolutionի համար ամենադժվարին պատմական խնդիրը— միլիոնավոր մանր անհատատիրական գյուղացիական տնտեսությունների փոխարկումը կոլտնտեսային տնտեսությունների ուղու վրա, սոցիալիզմի ուղու վրա»:****

*Նոր տնտեսական քաղաքականությունը (ՆԷՊ) մտցնելիս երկրում գոյություն ունեցող հասարակական-տնտեսական հինգ ձևերից (УКЛАДЫ) առաջին (նահապետական տնտեսությունը), երրորդ (մանրավոր-տնտեսատիրական կապիտալիզմը) և չորրորդ (պետական կապիտալիզմ) տնտեսաձևերն արդեն գոյություն չունեն, երկրորդը (մանր ապրանքային արտադրությունը) հետ է մղված երկրորդական դիրքերը, իսկ «հինգերորդ հասարակական տնտեսաձևը՝ սոցիալիստական տնտեսաձևն անքաժան կերպով տիրապետող և միակ իշխող ուժն է ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ»:*****

*Սովետական երկրի նեղքին այս իրադրության հետ միաժա-

---

* «Համկ(բ)Պ Պատմություն համառոտ դասընթաց», 1944 թ., էջ 423—4:

** Նույն տեղ, էջ 437:

*** Նույն տեղ, էջ 449:

**** Ի. Ստալին—«Լենինիզմի հարցերը», 1940 թ., էջ 538:

մանակ՝ «կապիտալիստական շրջապատման ինդամական պրո-նեռվյունն ընդեմ ՍՍՌՄ-ի առանձնապես ուժեղանում է այն ժա-մանակվանից, երբ Գերմանիայում, Ճապոնիայում իշխանության գլուխ են անցնում ֆաշիստները»:

*«Կապիտալիստական շրջապատումը ձգտելով ՍՍՌՄ-ի հզորու-թյունը թուլացնել և ջլատել, ուժեղացնում է ՍՍՌՄ-ի ներսում մարդասպանների, վնասարարների, լրտեսների բանդաներ կազմա-կերպելու իր «աշխատանքը»՝ ձգտում ՍՍՌՄ-ի պարտության:— Հանուն կապիտալիզմի վերականգնման»:**

Իմպերիալիզմի-ֆաշիզմի գործակալների՝ տրոցկիստական-բու-խարինական բանդաների մերկացումն ու ոչնչացումը:

բ) Պատմական այս իրադրության մեջ Պարտիայի պայքարն իդեոլոգիական ճակատում մարքսիզմ-լենինիզմին ինդամի դեմ ար-փարատական արտահայտությունների դեմ.— մենշևիզացող ի-դեալիզմի և մեխանիցիզմի վերլուծության մեջ, ուսումնասի-րության մեջ, այս բնագավառում նաև «համատարած ըն-դունության», «ինքնահոսի» ու մանր-բուրժուական անտեսու-թյունների «վայրենության» թեորիաները, Ակադեմիկոս «շկոլան» պատմա-գիտության մեջ, մանկավարժության (педология) և պլոդի մահացման «թեորիան» մանկամարժության բնագավառում, սերի-մերգիականությունը և մուլտար ագիտպրոպիզմը պրակտիկայում-թյան մեջ, «ֆիզիոնոմի» «թեորիան» ու պրակտիկան դեղարվեստա-կան գրականության մեջ և այլն:

Պարտիայի պայքարը լենինյան-ստալինյան ազգային քաղա-քականության մարզում՝ վերիկոռուսական ու տեղական նացիոնա-լիզմի դեմ: Ընդեր Ստալինը պարտիայի XVI և XVII համագում-մարներում աված իր զեկույցումներում ազգային հարցում եզած թեքումների մասին, իրեն մարքսիզմ-լենինիզմի դեմ կատա-ղած մնացորդների առավել կենսունակության արտահայտու-թյուն քաղաքական-գաղափարախոսական ճակատում: «Պետք է նշել, որ կապիտալիզմի մնացուկները մարդկանց գիտակցության մեջ շատ ավելի կենսունակ են ազգային հարցի բնագավառում, քան թե որևէ բնագավառում, նրանք ավելի կենսունակ են, որով-

---

* «Համկ(բ)Պ Պատմություն. Համառոտ դասընթաց», էջ 450.

հետևի հնարավորության տալն իրենց ազգային դիրքը պահպանելու»։*

Պարտիայի պայքարը սովետական կուլտուրայի ու գրականության հետագա զարգացման, նրա հետագա ծաղկման համար, Ստալինի կողմից կանխատեսված ուղիով՝ «ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական» ուղիով։

գ) Մարքսիզմ-լենինիզմին խորթ, բնականական գաղափարախոսությունների արտահայտությունները Հայաստանում՝ կուլտուրայի ու գրականության մարզում և պայքարը նրանց դեմ։ «Ազգային հատկանիշների խոտացման» ռեակցիոն նացիոնալիստական տենդենցների արտահայտությունը և դրանց մերկացումը մասնավորապես գրականության մարզում։ Նշել, որ «ազգային հատկանիշների խոտացման» նացիոնալիստական «թեորիան» յուրահատուկ կերպով զուգակցվում էր՝ հայ ազգային անցյալի նկատմամբ նեհիլիստական հայացքի հետ (Ե. Չարենց. «Պատմության քաոսների մեջ»), նացիոնալիզմի դեմ մղված պայքարը հանգեցնելով անցյալի սխեմների ու սրտրեցիանների բացարձակ ժխտման։

դ) Պարտիայի ստալինյան քաղաքականության շնորհիվ, ինչպես ողջ Միության մեջ, նույնպես և Հայաստանում սովետական դրողների գործունեությունը, սովետական գրականության զարգացումն բնութագրում է դեպի միասնություն թե կազմակերպչորեն (ՌԱՊՊ-ի ու մյուս գրական կազմակերպությունների լիկվիդացիան և միասնական Սովետական Գրողների Միության կազմակերպումը) և թե գաղափարական ու ստեղծագործական մեթոդի առումով։

Բայց դա տեղի էր ունենում գրականության մեջ քաղաքական ու բացահայտ ռեակցիոն-նացիոնալիստական տարրերի դեմ մղված պայքարով։

և) Այս ժամանակաշրջանում սովետահայ գրականության համար բնութագրականը՝ երկրի սոցիալիստական վերակառուցման համար մղվող պայքարի պատկերումն է, ինդուստրիալ-գործարանային աշխատանքի ու կյանքի և գյուղի համատարած կոլեկտիվացման, ինչպես և դասակարգային պայքարի, շահագործող դասակարգերի մնացորդների, ժողովրդի թշնամիների վնասարարա-

* Ի. Ստալին, «Լենինիզմի հարցերը», 1940 թ., էջ 579։

կան գործունեության դեմ մղված պայքարի պատկերումը։ Ալ. Տոլստոյի արտահայտությամբ ասած՝ «գրականությունը հաճությամբ դառնում է երկրի տնտեսական հեղաշրջման գեղարվեստական տարեգրությունը»։*

Աչքի է ընկնում հասարակականորեն ակտուալ ժամանակակից թեմատիկայի բացարձակ գերակշռությունը այլ թեմաների համեմատությամբ։

Ձգտելով գեղարվեստական խոսքի կուլտուրայի բարձրացման՝ գրողների ստեղծագործական ոգեշնչության հիմնական աղբյուրը սովետական իրականությունն է՝ «մեծ առօրյան», իր՝ էլ ավելի մեծ հեռանկարների մեջ։ Ընկ. Ժդանովի բառերով ասած՝ «գրականությունը ձգտում է ակտիվորեն ներխուժել սովետական իրականության բոլոր կողմերի մեջ», «ներթափանցել մեր զարգացման պրոցեսների էության մեջ»՝ դեռ, սակայն բավարար ուժ չունենալով դարաշրջանին վայել մեծարվեստ գործեր տալու։ Բայց նշանակալից է գրականության և արդիականության, գրականության և քաղաքականության սերտ օրգանական կապի զարգացման ձգտումը, որ տիրական է բոլոր գրողների մոտ։ Գրականության տիպական հերոսներն են սոցիալիզմի կառուցման առաջամարտիկները արդյունաբերության մեջ՝ գործարանում, հանքում (Արազի.— «Լույսերը», «Ճամբին», «Գործարանում», Ն. Զարյան— «26 կոմիսարները» և այլն), գյուղի համատարած կոլեկտիվացման ճակատում, կոլխոզային աշխատանքում, մահամերձի կատաղությամբ բռնված կուլակության իբրև դասակարգի վերացման պայքարում (Սարո Մելքոնյանը՝ Ն. Զարյանի նույնանուն պոեմում, Ալեքսանը և կոլխոզի մյուս առաջամարտիկները «Ռուշանի քարափ»-ում, Արազու «Հազար գլխանի» Բենոն), քաղաքի սոցիալիստական վերակառուցման գործում (Դ. Դեմիրճյան— «Նոր մոնումենտալ», Ստ. Զորյան— «Սպիտակ քաղաք» և այլն)։

Մի շարք գրողների ստեղծագործության մեջ ժամանակակից հիմնական թեմաներին զուգահեռ շարունակում է կարևոր տեղ գրավել նաև անցյալի պատկերման թեման՝ ռևոլյուցիոն ազատագրական պայքարի դրվագների վերհուշը, բայց գերազանցապես

---

* Ալ. Տոլստոյ, «Սովետական գրականության քառորդ դարը», 1943 թ., էջ 28—29։

անցյալի— հին և ներկայի— նորի հակադրության տեսանկյունով, ներկայի հաստատման ոգով և մեծ գալիքի պատմական հեռանկարով:

Գրականության զարգացման ստեղծագործական ուժերի և սովետական գրականության, սոցիալիզմի կառուցման վիթխարաքայլ առաջընթացի մեջ եղած անհամապատասխանության փաստի գիտակցումը, գրականության հետ մնալն այդ առաջընթացից՝ գրականության խոր ու բազմակողմանի պատկերման գեղարվեստական ուժի տեսակետից: «Պոեզիայի կրիզիսի», «սխեմատիզմի» և այլ բանավեճերը այդ փաստի գիտակցման արտահայտություն են: Դրանից էր բխում և այն, որ սովետական կուլտուրայի (գրականության և արվեստների) աճի պրոբլեմը, նրա զարգացման ուղիների, նրա սոցիալիստական բնույթի կոնկրետացման պրոբլեմը դառնում է ամենահուզող պրոբլեմներից մեկը ոչ միայն թեորիայում (արվեստագիտության ու գրականագիտության մեջ), այլև գրողների ստեղծագործական պրակտիկայում (Դ. Դեմիրճյանի— «Տարիներ»-ի վերջին հատվածը՝ «Ո՞րն է սովետական աճը» «Նոր մանումենտալ» վեպը, Ե. Չարենց— «Էպիքական լուսաբաց»-ում մի շարք խոհական բանաստեղծությունները՝ «Թղթերը» «գրված Երևանից», «գրված Լենինգրադից» և այլն, Ն. Զարյան— «Ցիրցուսի»): Դարաշրջանին վայել և իր համապատասխան աճով մեծ արվեստի ստեղծման պրոբլեմը դրվում էր սոցիալիզմի դարաշրջանը պատկերելու պահանջով:

Դարին վայել մեծ արվեստի ստեղծման պրոբլեմը նախընթաց էտապների համեմատությամբ անհրաժեշտաբար առաջադրում էր նոր մասեյում անցյալի կլասիկ ժառանգության օգտագործման խնդրում, որն և արտահայտվում է անցյալի մեծ կլասիկներին նվիրված բազմաթիվ խոհական ու բնութագրական ներբողներով, բանաստեղծություններով (Ն. Զարյան— «Ցիրցուսի», «Երկու հանճարեղ գլուխ», «Ա. Ս. Պուշկինին», և այլն):

դ) Այս ժամանակաշրջանում իրենց ստեղծագործական ակտիվությամբ առանձնապես աչքի են ընկնում Դ. Դեմիրճյան, Ե. Չարենց, Ն. Զարյան, Ստ. Զորյան, Արազի, Ա. Վշտունի, Մ. Մանվելյան, Հմ. Սիրաս, Գ. Սարյան, Ծ. Թոփուզյան, Խնկո-Ապեր, Ս. Տարոնցի, Սարմեն, Արաքս, Վեսպեր, Հռ. Պողոսյան:

Նախընթաց էտապի վերջում իբրև սկսնակներ հանդես եկած-

ներից այս տարիներին նկատելի ստեղծագործական աճ են ցույց տալիս երիտասարդ գրողներ՝ Հր. Քոչարը, Աղավնին, Ս. Վահունին, Վ. Գրիգորյանը, Գ. Բեսը, Վ. Անանյանը, Մ. Դավթյանը, Ս. Պայազատը, Թ. Հուրյանը, Հ. Շիրազը, Գ. Կամանին և ուրիշներ:

է) Սովետական գրականության զարգացման այս էտապը նշանավորվում է ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի 1932 թ. ապրիլի 23-ի որոշումով՝ «Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին»: Որոշման մեջ տրված է գրականության ու արվեստի մարզում պարտիայի քաղաքականության նախընթաց էտապների արդյունքների հանրագումարը և պարզորոշ գծված սովետական գրականության ու արվեստի հետագա զարգացման ուղին գաղափարական ու կազմակերպչական միասնության հիմքի վրա: Սովետական գեղարվեստական ինտելիգենցիայի համախմբումը՝ պարտիայի դրոշի տակ՝ սոցիալիզմի հաղթանակի համար, սոցիալիստական կուլտուրայի ու արվեստի զարգացման համար մղվող պայքարում:

Պարտիայի Կենտկոմի այդ որոշումը որպես սովետական գրականության զարգացման նոր էտապի ուղենիշ ծրագիր:

Սոցիալիստական ռեալիզմի, իբրև սովետական գրականության հիմնական մեթոդի բնորոշումը ընկեր Ստալինի կողմից այդ շրջանում, իբրև սովետական գրականության անցած տարիների ստեղծագործական փորձի հանճարեղ ընդհանրացում: Նախընթաց էտապի համեմատությամբ սոցիալիստական ռեալիզմի էլ ավելի աճող տարրերը սովետահայ գրողների այս շրջանի երկերում:

Սովետական գրողների I Համամիութենական համագումարը (1934 թվի օգոստոս), որն ընթացավ սոցիալիստական ռեալիզմի զարգացման նշանաբանով: Ընկ. Ժդանովի ճառը և Մ. Գորկու զեկուցումը համագումարում՝ իբրև Սովետական Միության բազմալեզու, իր գաղափարական-քաղաքական հիմքում միասնական գրականության հետագա զարգացման իդեական-ստեղծագործական ծրագիր:

Սովետահայ գրականությունն իր ժանրային պրոֆիլով. Նախընթաց էտապների համեմատությամբ այս էտապում աչքի է ընկնում լրագրական ու գեղարվեստական ակնարկի աննախընթաց աճը, իբրև սոցիալիստական շինարարության բուռն ընթացքն ըստ հնարավորին շուտ պատկերելու և այդ ընթացքի վրա ներգործելու ձգման արտահայտություն: Բայց ի տարբերություն նախընթաց

էտապների, որ տիրապետող էին փոքր ծավալի ժանրերը, այս էտապում գրողների տիրական ձգտումը դեպի ծավալուն ժանրերը: Արձակում՝ վիպակ ու վեպ (Ստ. Զորյանի «Սպիտակ քաղաքը» «Մի կյանքի պատմություն» և «Քսանմեկ թիվը», Ն. Զարյանի «Հացավանը», Դ. Դեմիրճյանի «Նոր մոնումենտալը», «Նիգյարը», «Ռաշիդը», «Գիրք ծաղկանց», Արազի՝ «Ջրվեժի ցոլքում»; Հմ. Սիրաս «Հարցրեք նրանց», «Կյանքի կարոտը», «Զգված օրենքը» (հետագայում՝ «Անահիտ»), Միք. Մանվելյան — «Անապատը կծաղկի», Ծերուն Թորգոմյանի «Հորձանքում», «Կապույտ ջրերի մոտ», Մարոյի «Դեպի բարձրացող ալիքը»):

Պոեզիայում՝ էպիքական ու լիրիկական պոեմները (Ն. Զարյան «Ռուշանի քարափը», «Սարո Միկինյան», «Ֆիրդուսի» և այլն, Ե. Չարենց — «Սասունցի Դավիթ», «Մահվան տեսիլ», Ա. Վշտունի — «Խոսում է Ասլի-Ալմիրը», «Զրահավոր մայիս», (հետո՝ «Լուսաբացին», Գ. Սարյան — «Երեք երգ», «Իրանի», Ս. Տարոնցի — «Սիմոնյանը և Խաչեգանը»):

ՉՈՐՐՈՐԴ ԷՏԱՊ. 1935—1941 թ. թ.

ա) Ժամանակաշրջանի ընդհանուր բնութագիրը. Սովետական երկիրը սոցիալիստական հասարակության կառուցումն ավարտելու և նոր, Ստալինյան Կոնստիտուցիայի նախագծման ու իրականացման տարիներին, երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբի միջազգային իրադրության մեջ։

Սովետների VIII Համամիութենական համագումարում ընկեր Ստալինի զեկուցումը ՍՍՌՄ-ի նոր Կոնստիտուցիայի նախագծի մասին (1936 թ. նոյեմբեր), հավաստումն այն փաստի՝ որ Սովետական երկիրն ապրում է «կապիտալիզմի լիակատար վերացման ժամանակաշրջանը, սոցիալիստական սիստեմի լիակատար հաղթությունը ժողովրդական անտեսության բոլոր սֆերաներում»:*

«ՍՍՌՄ-ի էկոնոմիկայի բնագավառում տեղի ունեցած այդ փոփոխությունների համապատասխան՝ փոխվեց նաև մեր հասարակության դասակարգային կառուցվածքը»: «Բոլոր շահագործող դասակարգերը վերացվեցին։

Մնաց բանվոր դասակարգը.

* Ի. Ստալին, «Լենինիզմի հարցերը», 1940 թ., էջ 620—21:

Մնաց գյուղացիների դաստակերպը։
*Մնաց ինտելիգենցիան»։**

*Ինչպես տասնի երկու դաստակերպերի, նույնպես և ինտելիգենցիայի, որի մի նշանավոր մասն են կազմում գրողներն ու արվեստագետները, տարած հիմնական փոփոխություններ նախորդ ժամանակաշրջանում։ «Այդ միանգամայն նոր ինտելիգենցիա է, որը բոլոր արմատներով կապված է բանվոր դասակարգի ու գյուղացիության հետ։ Փոխվել է, նախ, ինտելիգենցիայի կազմը։ Փոխվել է, վերջապես, ինտելիգենցիայի գործունեության նպատակն իսկ բուն։ ...Այժմ նա իրավահավասար անդամ է սովետական հասարակության, ուր նա բանվորների ու գյուղացիների հետ մեկտեղ, նրանց հետ միասին՝ կատարում է նոր, անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցումը»։***

Նշել նաև ինտելիգենցիայի ու մյուս դասակարգերի միջև եղած ամրամանգծերի, ինչպես և տնտեսական ու քաղաքական հարաբերությունների վերացման-ընթացքը սովետական հասարակության զարգացման այս ժամանակաշրջանում։

Ոչ պակաս կարևոր է նշել և այն հիմնական փոփոխությունները, որ կատարվել են՝ «ազգային փոխհարաբերությունների բնագավառում ՍՍՌՄ-ում», նկատի ունենալով, որ «ՍՍՌՄ-ի ժողովուրդների փոխհարաբերությունների հարցը չի կարող առաջնակարգ նշանակություն չունենալ մեզ համար»*** (Ստալին)։ Ինչպես ընդհանուր քաղաքական կյանքում, նույնպես և սովետական կուլտուրայի ու գրականության, արվեստների զարգացման գործում։

ՍՍՌՄ-ի նոր, Ստալինյան Կոնստիտուցիայի ընդունումն ու կիրառումը նշանավորում են բոլշևիկյան պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության նոր էտապը։— Սովետական Հայաստանը, Վրաստանի ու Ադրբեջանի հետ միասին, միութենական ռեսպուբլիկա։ Ռեսպուբլիկայի քաղաքական, տնտեսական ու կուլտուրական բարգավաճման նոր էտապը՝ աննախընթաց մեծ հեռանկարներով։

«ՍՍՌՄ-ի ժողովուրդների ազգային կուլտուրայի ծաղկումը՝

---

* Ի. Ստալին, «Լենինիզմի հարցերը», 1940 թ., էջ 622։
** Նույն տեղ, էջ 624-5։
*** Նույն տեղ, էջ 625։

ազգային ըստ ձևի և սոցիալիստական ըստ բովանդակության,— այս և սրա նման գործոնները հասցրին այն բանին, որ արմատապես փոխվեց ՍՍՌՄ ժողովուրդների կերպարանքը, անհետացավ նրանց միջից փոխադարձ անվստահության զգացումները, զարգացավ նրանց մեջ փոխադարձ բարեկամության զգացմունքը, և այսպիսով կարգավորվեց ժողովուրդների իսկական եղբայրական համագործակցությունը միասնական միութենական պետության սիստեմում»:*

բ) Սովետահայ գրականության նոր, աննախընթաց վերելքն այս ժամանակաշրջանում, իբրև հայ ժողովրդի սոցիալիստական ազգային վերածննդի հաղթանակի արտահայտություն:

Սովետահայ գրականության ու արվեստների միութենական նշանակությունը, որը նշվեց գրականության ու արվեստի Մոսկովյան տասնօրյակներով (դեկադա) 1939 թ. դեկտեմբերին և 1941 թ. մայիսին պատերազմի նախօրյակին:

Սովետահայ գրականությունը Միության բազմազգի գրականության հետ միասին զարգանում է պարտիայի 1932 թ. ապրիլյան պատմական որոշմամբ նշած ուղիով՝ սոցիալիզմի հիմքի վրա հաստատված՝ գաղափարական և ստեղծագործական մեթոդի միասնության ուղիով:

Սոցիալիստական ռեալիզմի, իբրև սովետական գրականության հիմնական ստեղծագործական մեթոդի գիտակցական կիրառումը գրողների երկերում:

Մեր գրականությունն իր լավագույն ներկայացուցիչներով հաստատորեն առաջ է գնում սովետական կլասիկայի զարգացման ճանապարհին:

գ) Վուլգար սոցիոլոգիզմի հաղթահարումը գրականության ու գրականագիտության մեջ: Հայ ժողովրդի պատմական բախտի թեման և անցյալի հայրենասիրական հերոսական տրադիցիաների վերհանման ձգտումը տիրական մոտիվներից մեկն է դառնում: Դրանով իսկ հաղթահարվում է նաև նախընթաց էտապներում արտահայտված նացիոնալ-նիհիլիզմը հայ պատմական անցյալի նկատմամբ, ինչպես և պրոլետկուլտական հայացքը անցյալի կուլտուրական-գրական ժառանգության նկատմամբ: Նախընթաց էտապների համեմատությամբ կատարված այդ էական փոփոխու-

* Նույն տեղը, եջ 626:

Իյուններըը, կարելի է իրավամբ անվանել «մեծ բեկում» սովետահայ կուլտուրայի ու գրականության զարգացման վերջնվաց հանգաւարհին: Իսկ այդ «մեծ բեկումն» սկսվում է այս ժամանակաշրջանի հենց սկզբից, Սովետական Հայաստանի 15-ամյակի առիթով Կրեմլում՝ Հայաստանի աշխատավորության պատվիրակության ընդունելության հանդեսից հետո (Տես «Պրավդա»-ի առաջնորդող հոդվածը նվիրված Սովետական Հայաստանի 15-ամյակին և ընկ. Վ. Մ. Մոլոտովի հետ Կրեմլում Հայաստանի պատվիրակության ընդունելությանը):

Հիշյալ «մեծ բեկման» սկիզբը նշանավորվեց Ն. Զարյանի «Սաալին» հոչակավոր բանաստեղծությամբ, որ հենց իրենով, իբրև բանաստեղծական խիտակ Բոիչը, պարարտում է սովետահայ պրակտ-գեղարվեստական մտքի հատունության մասին, նրա պատմական ու գաղափարական բովանդակության հարստացման մասին՝ արտահայտված կատարելության հասնող ձևերով:

Հատկապես այս էտապում է խորապես փոփոխվում սովետական կուլտուրայի ու գրականության առաջնության հանճարեղ բանաձևումով արված ազգային ձևի ու սոցիալիստական բովանդակության ներդաշնակ միասնության կենսունակությունը: Մեր գրականության իր գրական ցուցանիշներով՝ ազգային ձևի և սոցիալիստական բովանդակության օրգանական միասնությունը ներկայացնում է այլևս իբրև ապառ, բնականոն զարգացման արտահայտության, երբ նոր, սոցիալիստական բովանդակությունը աճել ու տիրական է դարձել և չի վախենում հին ինքնատ ձևից, ազգային ձևից, և երբ իր հերթին ազգային ձևը դադում է լցվել նոր բովանդակությամբ, հագեցնական սոցիալիստական հարաբերության տարածման, կարդի պատմական բովանդակությամբ, իր զարգացման հնարավորությամբ հանդերձ: Ըստ որում ազգային ձևը, որն առերևույթ միայն նոր չէ, նորոգվում է, նոր փայլ է առնում, նոր իմաստավորում՝ շնորհիվ իր նոր բովանդակության, որն այլ կերպ չի կարող արտահայտվել քան ազգային ձևավորման մեջ, ազգային լեզվով ու ոճով, ազգային կյանքի ավյալներով, ազգային պատմական ու գրական արտիլյանների օգտագործումով բովանդականացած ձևի մեջ:

Նկատենք, որ ժողովրդի ազգային պատմական կյանքի պատկերումը սովետական գրականության մեջ պետք է դիտել իբրև

ստեղծագործության ազգային ձևի մոմենտ անցյալի նկատմամբ սոցիալիստական գաղափարականության արտահայտման ու հաստատման համար, թեև ի հարկե ինքնին, առանձին վերցրած, ազգային պատմական կյանքը բովանդակություն է: Բայց դա միայն այն դեպքում, երբ գրականության մեջ բացառվում է սոցիալիստական գաղափարականությունը, այսինքն՝ երբ ժողովրդի անցյալ պատմական կյանքը չի լուսավորվում սոցիալիզմի աշխարհայացքով, մարքս-լենինյան պատմահայեցողության թեորիայով, այսինքն, այլ կերպ ասած, երբ անցյալը չի պատկերվում սոցիալիստական ռեալիզմի քննադատական սկզբունքով, այլ իդեալականացվում է նացիոնալ-ռոմանտիզմի ոգով և կամ նիհիլիստորեն ժխտվում:

Այս տարիներին ազգային պատմական թեմատիկան զուգակցվում է ռևոլյուցիոն պատմական և արդիական թեմատիկային: Այդ նշանակում է, որ ժողովրդի ազգային անցյալը, նրա պատմական բախտի ուղին դիտվում է Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակով, սովետական կարգերի հաղթանակով նվաճված ազատության բարձունքներից, ժողովրդի սոցիալիստական վերածննդի պատմական հեռանկարի մեջ: Այդ նշանակում է, որ սովետական Հայաստանը դիտվում է իբրև բազմադարյան պատմական Հայաստանի արմատական շարունակությունը, երբ ժողովուրդը հասել է իր դարավոր երազանքին, ազգային անկախ ու ազատ վիճակին՝ «կոմունիզմի աշխարհահերթ բանակի շարքերում» (Ե. Չարենց) ու հենց դրանով իսկ փրկել իրեն անխուսափելի կործանումից: Եվ այդ ոչ միայն ֆիզիկապես, այլ իր բազմադարյան կյանքի ընթացքում կուտակված կուլտուրական հարստությամբ, որը փրկվեց Հոկտեմբերի շնորհիվ և նոր կյանք ու նոր նշանակություն ստացավ անցյալի կուլտուրական ժառանգության գնահատման լենինյան թեորիայի լույսի տակ:

Նացիոնալ-նիհիլիզմի և վուլգար սոցիոլոգիզմի հաղթահարմամբ գրականության մեջ աննախընթաց բարձր շեշտով հնչում է այն մոտիվը, որն այնքան արտահայտիչ կերպով կատարված է Դ. Դեմիրճյանի «Գիրք ծաղկանց»-ում և ամփոփված ու խտացված այդ հայրենաշունչ երկի վերջերգում (վերջերգ և ոչ վերջաբան, որովհետև այն հնչում է իբրև ոգեշունչ բանաստեղծություն, թեև արձակ, բայց ռիթմիկ ընթացքով).

«Սև դարերի խորքից գալիս է մի գիրք։ Խավարի միջին թափառող լույսի է նման՝ դողդողում է, բայց գալիս է... Մոխրացել են հազար ձեռքեր, անհաշվելի աչքեր, բայց մնացել է այս չքնաղ գիրքը...»։

«Մի կարմիր հազմ փոթորկալի թերթում է ոսկեզօծ թերթերը գրքի, որ ընկած է մի մեծ ճանապարհի վրա, նայում է նրան մտերմաբար։ Նա փրկված է իրեն միշտ փրկող ժողովրդի հետ։

Երկաթե գրադարաններում լռում են դարերը։ Մի ալեհեր գլուխ հակված է պատմության անդունդը և խոր հուզմամբ տեսնում է ծաղիկներ, ծաղիկներ, ծաղիկներ...»։*

«Ծաղկանց գիրքը» սիմվոլացնում է հայ բազմադարյան գրական-կուլտուրական ժառանգությունը, որն իբրև իր օրինական առաջնեկը անցյալից վերցրել և խնամքով պահպանում է հայ ժողովուրդը՝ իր սովետական պետականության հզորացող ձեռքով։ Բայց պահպանում է չսահմանափակվելով նրանով, այլ նրա բազմերանգ ծաղիկների օգտագործմամբ ստեղծում ու զարգացնում նորը՝ սոցիալիստականը՝ հարազատ ազգային ձևով։ Այս է 1935—1941 թվերի ժամանակաշրջանի մեր գրականության լեյտմոտիվը՝ վերցրած այն իր բոլոր արտահայտություններով։

Հենց այդ լեյտմոտիվի հետ օրգանապես կապվում է այս ժամանակաշրջանի մեր կուլտուրայի, թերևս ամենանշանակալից իրադարձությունը՝ հայ ժողովրդական էպոսի՝ «Սասունցի Դավթի» 1000-ամյա հոբելյանը, որը պետք է գիտել ու գնահատել իբրև սովետահայ կուլտուրայի առաջընթացի մի մեծ հանդես՝ կատարված համամիութենական մասշտաբով։ Դրանով իսկ հայ անցյալի կուլտուրան, ժողովրդի հոգու «Ծաղկանց գիրքը» ազատորեն բացվեց Միության ժողովուրդների համար։ Վերակենդանացավ այդ կուլտուրան և սկսվեց նրա վերածնունդը՝ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական հայ գրականության մեջ։

«Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսը միայն այդ մեծ հոբելյանի շնորհիվ իսկապես բացահայտվեց իր համազգային-համաժողովրդական նշանակությամբ ու իմաստով, նոր միայն երևան եկավ իբրև իրոք ազգային-ժողովրդական էպոս, իր պատմական իմաստի համազգային-համաժողովրդական գիտակցումով ու բացահայտումով։

* Դ. Դեմիրճյան, «Երկեր», հատ. 1-ին, 1946 թ., էջ 306։

Այս առնչությամբ պետք է նկատի ունենալ և արժեքավորել մեր էպոսի գիտական մշակման այն մի շարք փորձերը (Ե. Չարենց, Վ. Վահագյան, Ս. Տարոնցի, Սարմեն և այլն), որոնք էպոսի համազգային համաժողովրդական մասշտաբի կուլտուրական-գիտական նշանակության գիտակցման բուռն արտահայտություններն են մեր գրականության մեջ: Ամենևին պատահական չէ, որ հենց այս տարիներին է, որ մեր մեծանուն բանաստեղծ Ավ. Իսահակյանը վերամշակում է «Սասնա Մհերի» տողին՝ 1919—22 թ. թ. վարիանտը՝ լրացնելով այն իր նշանավոր «Վերջերք»-ով: Այսպիսով հետհոկտեմբերյան շրջանի հայ գրականության, սովետահայ գրականության այս խոշոր կլասիկական երկը փաստորեն ավարտվում է, ամբողջանում հենց այս էտապում՝ էպոսի 1000-ամյակի նախօրեին:

Անդրհետ իրեն այս ժամանակաշրջանի մեր գրականության զարգացման կարևորագույն արտահայտության պետք է նշել, հանրամանքն շարադրել, մեկնաբանել անտրոպիայի առաջնորդների՝ Լենինի և Ստալինի կերպարների պատկերումը, որն ավելի խորն ու ծավալուն բնույթ է ստանում Հատկապես Ստալինյան Կոնստիտուցիայի ընդունման և իրականացման տարիներից (1936—1937 թվականի համաժողովրդական քվեարկության սկսած՝ Լենինի և Ստալինի կերպարները գեղարվեստորեն մարմնավորվում են մեծ հայ ժողովրդի պատմական բախտի տեսանկյունով, բայց միաժամանակ հայ ժողովրդի պատմական բախտի տեսանկյունը, սովետական օրգանապես կապված սոցիալիզմի հաղթանակի, սովետական դեմոկրատիզմի, ինտերնացիոնալիզմի, սոցիալիստական հայրենասիրության հետ:

Իրականում Հատկապես հայ ժողովրդի պատմական բախտը միասին՝ Ստալինին և Ստալինյան Կոնստիտուցիային նվիրված արժեքավոր երկերում՝ պատում է սոցիալիստական հայրենասիրության, Սովետական մեծ հայրենիքի փառքի ու հզորության, նրա պաշտպանության չեմպիոնի մի մանկնտր միտյն և իմաստավորվում այդ չեմպիոնի մեջ:

Այդ ավելի հասկանալի կլինի, երբ հիշենք, որ այս ժամանակաշրջանում Սովետական երկրի առաջընթաց զարգացումը տեղի էր ունենում պատերազմի նախ՝ ահող սպառնալիքի, ապա և հենց պատերազմի երկու մեծ օջախների բռնկման իրադրության մեջ,

որը զարգանում էր դեպի սոցիալիզմի երկրի ու ֆաշիստական առանցքի երկրների անխուսափելի, ահեղ բախումը։

Սովետահայ գրականությունն իր պատմական բովանդակությամբ զարգանում էր սոցիալիստական մարտնչող հայրենասիրության ոգով, սոցիալիզմի հայրենիքի, իբրև ժողովուրդների ազատ ու երջանիկ կյանքի հիմնական նախադրյալի և այդ հայրենիքը զենքով պաշտպանելու գաղափարական լիցքով։

Այս էտապի համար շատ նշանակալից է դրամատուրգիայի ծավալումը, ավելի մեծ թափով քան նախընթաց որևէ էտապում։

Այս տարիներին է Դ. Դեմիրճյանը գրել իր նշանավոր «Երկիր հայրենի»-ն (1939 թ.) նաև «Կապուտան»-ը (1938 թ.), Վաղարշ Վաղարշյանն իր «Սասունցի Դավիթ»-ը (1938 թ.), Ա. Վարդանյանն իր «Արարատի ափին» պիեսը (1940)։ Այս թվականներին մեր դրամատուրգիան հարստանում է մի շարք նոր անուններով։ Իբրև դրամատուրգներ հանդես են գալիս՝ Ա. Գուլակյանը՝ գրելով իր երկու նշանավոր գործերը՝ «Արշալույսին» (1937) և «Մեծ բարեկամություն»-ը (1939), Ալ. Արաքսմանը («Էմմանուել», «Անեղություն», «Այծեմնիկ», «Գասպար բեկ» և այլն), Է. Միքայելյանն իր «Գոշ» և «Արտավազդ» պատմական պիեսներով։ Քնարերգու բանաստեղծ Գ. Սարյանն էլ փորձում է իր ուժերն այս մարզում, գրելով «Երեք երգ» դրամատիկական պոեմը (1935 թ.)։ Այս տարիներին են հանդես եկել նաև Վաչե Հարությունյանը («Ջալիլ» պիեսը 1936 թ.), Մելիք Քոչարյանը («Կույր երաժիշտ»...), Հայրագործյանն ու Խուդավերդյանը («Թող բացվեն վարդերը» կոմեդիան՝ 1939 թ.) և ուրիշները։

Իրենց ստեղծագործությամբ աչքի ընկնող գրողներն այս տարիներին. Ավ. Իսահակյան, Դ. Դեմիրճյան, Ն. Զարյան, Ստ. Զորյան, Արազի, Ս. Վշտունի, Հմ. Սիրաս, Մ. Մանվելյան, Գ. Սարյան, Ս. Տարոնցի, Ծ. Թորգոմյան, Սարմեն, Վեսպեր, Հր. Գուլույան, Արաքս։

Երիտասարդ սերնդից իրենց ստեղծագործական աճով աչքի են ընկնում Հրաչյա Քոչար («Օգսեն Վասպուրի ճանապարհորդությունը» երգիծական վիպակը և «Ժամանակներ» ժողովածուն), Ս. Վահունի («Ռազմի երգեր»), Հ. Շիրազ («Արևի երկիր», «Երգ Հայաստանի», «Մեր երջանկությունը», «Սիամանթոն և Խաջեզարեն»), Գ. Բորյան («Արևի համբույրը», «Ճանապարհ դեպի ծով»), Աշ-

Դրաշի («Ժողովրդի հետ», «Քնարական»), Աղավնի («Կարավանսարա», «Բանաստեղծություններ»), Քր. Թափալցյան («Վիկտորիա», «Կյանքի արշալույսը»), Ս. Գրիգորյան, Թ. Հովյան, Վ. Գրիգորյան, Ս. Փայազատ, Վ. Անանյան, Մ. Դավթյան, Լ. Բարգյուղ, Գ. Հովնան, Ար. Տաշեն և ուրիշներ։

Պոեզիայի և պրոզայի ճարդում հանդես են գալիս բազմաթիվ նոր անուններ (Ան. Սահինյան, Գ. Սևունց, Մ. Կորյուն, Ս. Կապուտիկյան, Մ. Մարգարյան, Դ. Էմին, Զ. Դարյան, Բ. Ստաֆֆի, Անդր. Հովսեփյան և այլն), որոնցից շատերն իրենց ստեղծագործական հնարավորությունները դրսևորում են հետագայում՝ Հայրենական Մեծ Պատերազմի տարիներին։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇՐՋԱՆ. 1941—1945 թ. թ.

ա) Այս ժամանակաշրջանի ընդհանուր բնութագիրը շատ ավելի սուր է, քան նախընթաց շրջաններից որևէ մեկինը։ Ֆաշիստական Գերմանիայի ուխտադրժ հարձակումով սկսվում է Սովետական Միության Հայրենական ազատագրական Մեծ Պատերազմը, որն ավարտվում է Սովետական Միության համաշխարհային-պատմական հաղթանակով, սոցիալիստական երկրին մշտապես սպառնացող պատերազմի երկու մեծ օջախների՝ ֆաշիստական Գերմանիայի և միլիտարիստական-ֆաշիստական Ճապոնիայի լիկվիդացումով։

Գրականության մարզը դառնում է Հայրենական Մեծ Պատերազմի մարտական ճակատամաս, ուր գրողները, խոսքի արվեստագետները կոչված էին նույն նպատակին ծառայելու, ինչ որ զինվորը և գեներալը ռազմաճակատում՝ կենաց և մահու մարտ մղելու ուխտադրժորեն Հայրենիքի վրա հարձակված թշնամու դեմ, Հայրենիքի ազատության ու անկախության պաշտպանությունը բոլոր հնարավոր զենքերով, ուրեմն և գրչով, ժողովրդի միտքն ու հոգին, նրա կամքն ու գիտակցությունը սպառազինող ու մարտի հանող զենքով։

Այդ առնչությամբ, իբրև ժամանակաշրջանի գրական կյանքի մի կարևորագույն մոմենտ, պետք է նշվի ինչպես ողջ Սովետական Միության մեջ, նույնպես և մեզանում՝ գրողների ու քննադատների մի նշանակալից մասի անմիջական մարտական մասնակցությունը Հայրենական Մեծ Պատերազմին Սովետական Բանակի շարքերում։ Դա մեր՝ սովետական գրական երիտասարդ-

դաշխատեն է գերազանցապես: Տեղին է թվել բոլորի անունները անկախ նրանց մեր պրակտիկայի մեջ անցած տեղից ու նշանակությունից: Իսկ այդ տեղն ու նշանակությունը շատերի համար կարդալի ապագայում, բանի որ խոսքը գրական երիտասարդության մասին է:

Նրանց թվումն են՝ արձակագրներից ու պոետներից՝ Հր. Քոչար, Թ. Հարյան, Գ. Բորյան, Ահ. Միրաս, Հ. Միրաքյան, Քր. Քաֆադարյան, վ. Անանյան, Գ. Բեև, Հր. Հովհաննիսյան, Արշ. Դարբինի, Գ: Սևունց, Դ. Կամսարի, Ահ. Նարբանդյան, Համո Սահյան, Գ. Հովհան, Գր. Արտսարի, Մ. Կորյան, Ս. Հրաչյան, Մկր. Ալամդյան, Գ. Հայրյան, Բ. Կարապետյան, վ. Արամոնի, Գր. Գարունց, Արտեն Հովհաննիսյան, Մեսր. Մեսրոժան, Հնար. Բուռնազյան, Սուրիկյան, Սրմ. Բամպյան, Նար-Դոս, Արշ. Սարոյան, Զահեն Մարգարյան, Գուրգեն Հակոբյան, Մ. Քյարամյան, Աս. Շահո, Պ. Զոհրյան, Ավ. Սենոլ, Ս. Հարությունյան և ուրիշներ:

Գրական քննադատներից՝ Գր. Կոլոզյան, Էդ. Բուխյան, Սոլ. Սոլոմոնյան, Հ. Մելիքյան, Արտ. Ոսկերչյան, Ա. Ինճիկյան, Վարդ. Դաշնչյան, Գառնիկ Ոսկանյան, Ան. Մահարյան, Մուշեղ Բալասանյան: Գրողներից ու քննադատներից Թ. Հարյանը, Գ. Գարունցը, Գր. Կոլոզյանը, Գր. Արտունին, Արտ. Հովհաննիսյանը, Զահեն Մարգարյանը, Գառնիկ Ոսկանյանը, Մ. Բալասանյանը, Գուրգեն Հակոբյանը, Մեսրոպ Մեսրոժանը, Թևան Խաչյանը պահվել են ռազմաճակատում, փառքով պսակելով իրենց անունը:

Պետք է նշել նաև Բիկտաշում մնացած գրողների մի զգալի մասի ռազմաճակատի հետ ունեցած անմիջական կենդանի կապը, որն արտահայտվում էր գրողների առնչվածության-մասնակցության դրվագներով դեպի ռազմաճակատ: Գրողների այդ խմբի մեջ են Ն. Զարյանը, Ա. Վշտունին, Գ. Աբովը, Սարմենը, Ս. Տարոնցին, Գ. Սարյանը, Տ. Հախումյանը, վ. Գրիգորյանը և ուրիշները:

դ) Սովետահայ գրականության զարգացման այս էտապի բովանդակությունը որոշվում է հայ ժողովրդի, իբրև Միության բազմազգ սովետական ժողովրդի մի հատվածի մարտական մասնակցությամբ Հայրենական Մեծ Պատերազմին:

Այս առնչությամբ հարկ է այստեղ լուսաբանել պատերազմի և գրականության կապի պրոբլեմն իր կոնկրետ պատմական արտահայտության մեջ: Դրա համար անհրաժեշտ է պատմական հետադարձ հայացքով պարզել առաջին համաշխարհային պատե-

րազմի ժամանակաշրջանի հայ գրականության վիճակն ու բնույթը՝ սերտ կապված հայ ժողովրդի ու նրա հայրենիքի ապրած վիճակի հետ։ Պատմական հետադարձ այդ համեմատությամբ ավելի ցայտուն կերևա Հայրենական Մեծ Պատերազմի շրջանի սովետահայ գրականության նշանակությունն ու տեղը՝ թե մեր վերջին քառորդ դարի և թե ընդհանրապես հայ գրականության պատմական զարգացման մեծ շղթայի մեջ։

Այս առնչությամբ տեղին է հիշել Վ. Բելինսկու հետևյալ միտքը գրականության համար համաժողովրդական պատերազմի ունեցած նշանակության մասին։ Բելինսկին ասում է, որ «ժողովրդի սուբստանցիալ կյանքը պետք է արտահայտվի որևէ նշանակալից իրադարձության մեջ, որպեսզի բովանդակություն տա էպոպեային»։ Այդպիսի նշանակալից իրադարձություն է «համաժողովրդական պատերազմը, որն արթնացնում է, երևան է բերում և լարում ժողովրդի բոլոր ներքին ուժերը և որն իրենով դարաշրջան է ներկայացնում նրա պատմության մեջ և ունենում է ազդեցություն նրա ամբողջ հետագա կյանքի վրա.— հենց այդպիսի պատերազմն ահա, գերազանցապես էպիքական իրադարձություն է, որն և հարուստ նյութ է տալիս էպոպեայի համար։ Առասպելական տրոյական պատերազմը հույների համար հենց այդպիսի իրադարձություն էր, որն և բովանդակություն տվեց «Իլիական»-ին ու «Ոդիսական»-ին, իսկ այդ պոեմներն էլ բովանդակություն տվին Սոֆոկլեսի, Էվրիպիդեսի ողբերգությունների մեծ մասի համար»։*

Նույն այս միտքը կոնկրետ իլյուստրացիաներով կա նաև Պուշկինի մոտ։ Պուշկինը նշում է, որ՝ «Լոմոնոսովի քնարը Պոլտավայի թնդանոթների արձագանքն է»։** Ինչպես հայտնի է, նույն այդ թնդանոթների հետագա ուժգին արձագանքը կա նաև հենց իր՝ Պուշկինի պոեզիայում, Հիշենք «Պոլտավա» պատմական պոեմը։

Այդպես է եղել նաև մեր ժողովրդի պատմության ու նրա գրականության պատմության մեջ։ Հայ ժողովրդի «սուբստանցիալ կյանքը» դրսևորվել է նրա գոյության տարբեր շրջաններում մղած ազատագրական կռիվների մեջ, կռիվներ, որոնք բովանդակություն են տվել մեր ժողովրդի հերոսապատումներին Հայկի ու Բելի, Արտաշի

* В. Белинский, Собр. соч., т, 2, стр. 38, 1919 г.

** „Русские писатели о литературе“ т. I, стр. 194.

ու Շամիրամի առասպելներից սկսած մինչև Սասնա դյուցազունների մասին մեզ հասած հանճարեղ վիպերգությունը։ Այդ կռիվներն ու պատերազմները բովանդակություն են տվել նաև հայ գրականության մի շարք կոթողներին՝ Բյուզանդի ու Եղիշեի էպոսներից սկսած մինչև Աբովյանի «Վերքը», Րաֆֆու «Սամվելն» ու «Դավիթ Բեկը», Մուրացանի «Գևորգ Մարզպետունին», Թումանյանի «Թմկաբերդի առումը», «Սասունցի Դավիթը» և այլն։ Սակայն իբրև շատ բնորոշ մի երևույթ, պետք է նկատել, որ 1914—1918 թվերի համաշխարհային պատերազմը, որն այնքան ողբալի, ճակատագրական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար, «բովանդակություն» չտվեց նշանակալից երկերի՝ նույն ժամանակաշրջանի հայ գրականության մեջ։

Հայ ժողովրդի գոյության կենսական շահերը շոշափող ոչ մի պատերազմ այնքան թույլ արձագանք չի գտել հայ գրականության մեջ, որքան 1914—1918 թ. թ. այդ պատերազմը, եթե մանավանդ նկատի ունենանք նույն տարիների հայ գրականությունը։ Առաջին համաշխարհային պատերազմի մասին շատ ավելի է գրվել հենց միայն Հայրենական Մեծ Պատերազմի տարիներին (Գ. Ստեփանյան «Մղձավանջային օրեր» և այլն), քան այն տարիներին՝ 1914—1920 թ. թ.։ Այդ համեմատությամբ ինչպիսի՜ մեծ հարստություն է ներկայացնում այն գրականությունը, որ ստեղծել են սովետահայ գրողները Հայրենական Պատերազմի շրջանում և դեռ կստեղծեն հետագայում՝ նյութ ունենալով այս պատերազմի տված պատմական բովանդակությունը։ Պատճառն ակներև է։ Մի դեպքում (1914—1918 թ. թ.) թեև նույնպես հայ ժողովուրդը «ակտիվ» մասնակից է պատերազմին, բայց մասնակցում է իբրև զոհ, իբրև սոսկ թնդանոթի միս մի օտար, խորթ, բառ էության նույնիսկ թշնամական մի բանակի կողմից,— պատերազմում բնաջնջվում է ժողովուրդը, ավերվում է երկիրը՝ առանց իրական պատմական հեռանկարի, այդ պատերազմը չի բացահայտում, չի խթանում ժողովրդի հերոսական ոգին, որը խեղդված է իմպերիալիզմի արյունոտ մագիլներում, խորտակված ազատագրության հեռանկարի բացակայությամբ։ Այդ պատերազմը հայ ժողովրդի համար չէր կարող դառնալ, Բելինսկու բառերով ասած՝ այնպիսի «նշանակալից իրադարձություն», որի մեջ արտահայտվեր «ժողովրդի սուբստանցիալ կյանքը», որ «արթնացներ, երևան բերեր, լարեր ժողովրդի բոլոր ներքին ուժերը», նրա կենսունակության պոտենցիա-

լր, որպեսզի այդպիսով «հարուստ նյութ ու բովանդակություն տար» սեփական ազգային գրականության խոշոր երկերի ստեղծման համար: Այդ ահեղ պատերազմը հայ ժողովրդի պատմության մեջ մեծագույն ճգնաժամն էր, ժողովրդի ողջ գոյությանն սպառնացող մի ճգնաժամ, որի ընթացքում, Լենինի բառերով ասած, «սարսափելի տպավորությունների ու տանջալից հետևանքների ճնշման տակ» ընկնելով՝ ճնշվեց, խեղդվեց հայ գրական ստեղծագործական միտքը, ճնշվեց հայ գրողների՝ «արտաքին աշխարհի կյանքն ու երևույթները վերլուծելու և պատկերելու կարողությունը»:* Այդ պատերազմում պատմության «կույր ուժերն» էին իշխում ժողովրդի կյանքի ու հոգու վրա՝ խանգարելով նրա ազատ գործունեությունը՝ անզոր և անօգնական դարձնելով իր պատմական բախտի տնօրինության գործում:

Այլ է Սովետական Միության Հայրենական Մեծ Պատերազմի ժամանակաշրջանը, երբ հայ ժողովուրդը հանդես է գալիս իր «սուբստանցիալ կյանքի» անկաշկանդ դրսևորումով, բանաստեղծի բառերով ասենք, ունենալով իր «Թիկունքին կոմունիզմի ամրոցն, անսասան», «Հզոր, անպարտելի իր զենքով, ստալինյան եղբայրության երկաթագիր օրենքով» (Ն. Զարյան — «Վերածնունդ»): Նա հանդես է գալիս իբրև պետականորեն կազմակերպված ժողովուրդ, որն իր բազկում զգում է 200 միլիոնի ուժն ու կենսունակությունը և 200 միլիոնի էլ կենսատոկունությամբ հերոսականություն է հանդես բերում, խորապես համոզված, որ պատերազմի մեջ Սովետական Միության հաղթանակն իր հաղթանակն է այն բոլոր ուժերի դեմ, որոնք անցյալում սպառնացել են իր գոյությանը և ապագայում էլ կարող էին սպառնալ, թե պատերազմում հաղթանակ չնվաճվեր:

Ահա պատմական այս իրողությամբ է պայմանավորված ու իմաստավորված Հայրենական Պատերազմի ժամանակաշրջանի սովետահայ գրականությունը, որն իր գաղափարական-քաղաքական ուղղվածությամբ, իր էական մոտիվներով միասնական է Միության ժողովուրդների և առաջին հերթին սովետական ռուս գրականության հետ:

գ) Արդ, որո՞նք են այս տարիների մեր գրականությունը բնութագրող հիմնական առանձնահատկությունները:

---

* Ленин, Сочинения, т. XXX, стр. 237.

Նախ իր ամբողջությամբ վերցրած դա Հայրենական Մեծ Պատերազմի ռազմաշունչ մի տարեգրություն է, պատերազմին հայ ժողովրդի ունեցած մարտական մասնակցության գեղարվեստական տարեգրությունը, ուր բացահայտված է հայ ժողովրդի քաղաքական-բարոյական միասնությունը Սովետական Միության հետ՝ ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ, նրա նվիրվածությունը սովետական կարգերին՝ իր ազատության ու անկախության հանգրվանին, նվիրվածությունը բոլշևիկյան պարտիային, ժողովուրդների հանճարեղ առաջնորդ Ստալինին, հայ ժողովրդի ազատարարին, մեծագույն բարեկամին:

Այդպիսով, պատմական այս մեծ իրադարձության պատկերման մեջ մի կարևորագույն մոմենտ է հայ ժողովրդի պատմական բախտի թեման, պատերազմի նշանակությունը այդ տեսակետից իմաստավորելու մի տիպական ձգտում, որն արտահայտված է մեր գրեթե բոլոր գրողների ստեղծագործությունների մեջ:

Երկրորդ՝ գրականության կենտրոնական թեման ու գաղափարը Հայրենիքն է, Սոցիալիստական Հայրենիքն իր անցած ուղիով մինչև պատերազմը, մինչպատերազմյան տարիների սոցիալիստական շինարարության հաղթանակների, ժողովրդի խաղաղ ու երջանիկ կյանքի վերհուշով, պատերազմում հաղթության հասնելու անսասան հավատով և գալիքի պայծառ հեռանկարներով:

Երրորդ՝ Հայրենիքի և հայրենասիրության թեմայի մշակումն ամենաբազմազան արտահայտություններով ու ձևերով, բառ որում առանձին ուժգնությամբ է դրսևորվում հայ ժողովրդի անցյալի հայրենասիրական-ազատասիրական տրադիցիաների պատկերման ձգտումը: Այդ ձգտման արտահայտությունն է ազգային-պատմական թեմատիկայի նշանակալից տեղը գրական բոլոր տեսակների մեջ և գրեթե բոլոր գրողների մոտ: Այդ ձգտմանը սակայն, ուղեկցում են գաղափարական խորթ տենդենցներ ազգային-պատմական թեմատիկայի մշակման գծով. անցյալի իդեալականացման և մոդեռնացման տենդենցների որոշակի արտահայտություններ մի շարք գրողների՝ թե՛ ավագ և թե՛ երիտասարդ ու կրտսեր սերնդի ստեղծագործությունների մեջ:

Չորրորդ՝ գրականության զարգացումը պատերազմի ընթացքում՝ առաջին օրերի ու առաջին տարվա ռազմականչային-կոչային բանաստեղծություններից և ռազմակնարկային գրեթե միակ ժանրից անցումը դեպի ժանրային բազմազանություն, դեպի պատե-

բազմի շրջանի իրականության՝ ազգամաճակատի ու Միության հեռանկարների պատկերումը, գրական առնչադրության ամենօրյա մտահոգության ձևերով:

Իր ժանրային պրոֆիլով Հայրենական Պատերազմի շրջանի մեր գրականության ըստ ամենայնի ամբողջական է ու հարուստ, թերևս ավելի հարուստ՝ քան նախորդինը սրնե է ստացում:

Ժանրային բազմազանության ու հարստության այս շրջանի գրականության ամենաբնորոշ գծերից մեկն է՝ ևս այդ ոչ թե բնորոշ սոսկ. հաճախ ամեն մի գրողի առնչադրության առանձին վերցրած նույնպես բազմազան է ու հարուստ իր ժանրային պրոֆիլով: Կարծեք թե պատերազմի ազգամաճակատային ու Միության գների ու միջոցների բազմատեսակության նիշտ համապատասխան՝ կային բազմատեսակ գների ու միջոցների դիմեցին նաև գրողները՝ պատերազմի գրական ազգամաճակատի զինվորներն ու գեներալները:

Պոեզիայում լիրիկական բառյակից և սիմֆոնիակից սկսած մինչև մեծաշունչ ու ծավալուն պոեմները, բոլոր տրամ՝ լիրիկական ու խոհական բանաստեղծության, ազդակոչ-մարտակոչ, մարտի երգ, տերցիններ, սոնետներ՝ լիրիկական ու պատմական, բալլադներ՝ նույնպես լիրիկական ու պատմական, էլեգիա, ոդեր, նեբուդ, երգիծական սատիրական ժանրից՝ սատիրական, երգիծական ռոմանսեր, սատիրական դրամա (Ն. Զարյանի «Ամենապատվանը»), վերջապես լիրիկական և էպիկական պոեմներ՝ «Զայն Հայրենական»-ի և այլ տիպի:

Ժանրային բազմազանության (թեև ոչ այս չափի ու ծավալի) այնուամենայնիվ կար նաև մինչպատերազմյան պոեզիայում, բայց այս էտապում նշանակալից, թեև ոչ անվերապահորեն դրական՝ երևույթ էր լիրիկայի, մասնավորապես ինտիմ «անձնական» լիրիկայի արտակարգ ծավալումը:

Առաջ գաղափարային ելքով օժտված մարտական-օպտիմիստական հոսանքի (Ավ. Իսահակյան, Ն. Զարյան, Գ. Բոյան, Ա. Վշտունի, Ս. Վահանի, Բ. Հասյան, Սարմեն և այլն) հետ մեկտեղ ու նրան զուգահեռ, գոյություն ունեցավ նաև ապոլիտիզիզմի, գաղափարազրկության, ազգությունների առկայության, ընդհանրապես՝ ամենամարդկայնի առկայության գաղափարական ուղղությամբ ամենամակերեսային ըմբռնումով լիրիկայի հոսանքը մի քանի վերապահություններով (բայց ոչ միայն

Երիտասարդ պոետների (Ս. Կապուտիկյան, Գ. Էմին, Մ. Մնացականյան, Աշ. Գրաշի, Հ. Շիրազ և այլն) ստեղծագործության մեջ։ Բայց դրա հետ միասին նշենք այս տարիների մեր պոեզիայի զարգացման մեջ մի շատ նշանավոր պատմական մոմենտ ևս, այն, որ պոեզիան տվեց Հայկական ՍՍՌ Պետական Հիմնի անբաստը, որի հեղինակը լինելու պատիվը վիճակվեց բանաստեղծ Սարմենին։ Այդպիսով սովետահայ պոեզիան և սովետահայ երաժշտությունը, հանձին մեծանուն կոմպոզիտոր Ա. Խաչատրյանի, որին պատկանում է մեր Պետական Հիմնի ձայնագրությունը, բարձրացան հայ ժողովրդի սովետական պետականության պատմական նոր բարձրության։

Եվ ոչ միայն պոեզիան, այլև ընդհանուր առմամբ մեր սովետահայ դրականությունը այս տարիներին աննախընթաց չափով բարձրացավ սովետական պետականության ստեղծման մեծ գործին, պետական ժողովրդի քաղաքական ինքնության գիտակցմանը ստեղծագործական մասնակցության ու դերին, որ ունեցավ հայ ժողովուրդը ՍՍՌՄ Հայրենական Մեծ Պատերազմի համաշխարհային պատմական հաղթանակի մեջ։

Պոեզիայից հետո նշենք նաև պրոզայի զարգացման առանձնահատուկ մոմենտները Հայրենական Պատերազմի շրջանում։

Պրոզայում նույնպես նկատելի է ժանրային բազմազանություն՝ գրական այս տեսակի համեմատաբար սահմանափակ հնարավորությունների սահմաններում, մանրապատումներից ու դրվագներից բոլոր ձևերի մոտ պահանջ դարձած լրագրականությունից վեպային ակնարկից սկսած, մինչև մեծածավալ վեպը, ժամանակակից ու պատմական թեմայով ու համապատասխան ժանրերով։ Դեմիրճյանն օրինակ՝ նրա ժանրային բազմազանությունը՝ 7 տարվա ընթացքում «Մեր հերոսները» վերնագրով մանրապատումից, (որը կարելի է մեջ բերել հոդվածում իբրև իր ծավալով դժվարին, աննկատելի ցուցադրում) հասավ ստվարածավալ երկհատորյա «Վիշտը անանց»-ին, մի խոշոր ձեռքբերում՝ իր ստեղծագործության, և թե՛ մեր պրոզայի մեջ։ Ասա որում ինչպես պոեզիայում, նույնպես և պրոզայում աշխատված ժանրային նորույթներ կան. դեղատեխնիկական ակնարկի անննախընթաց ծավալում՝ 1930—1932 թվերից Հետո կրկնորդ անգամ, բայց ավելի մեծ չափերով։ Ամբողջ ցայտուն այդ ժամ-

վալային նորույթից, հիմնականը և հատկապես այս ժամանակաշրջանի նվաճումը՝ ռազմաճակատային լրագրական ու գեղարվեստական ակնարկի ժանրի առեղծումն ու զարգացումն էր: Իսկ այս՝ առաջին հերթին ու գլխավորապես շնորհիվ սովետահայ գրականության ճակատային գինվոր Հրաչյա Քոչարի, որի երեք ժողովածուներում («Հերոսների ծնունդը» 1942, «Նախօրյակին» 1944, «Արբազան ուխտ» 1946) այդ ժանրը՝ պատմվածքի-նովելի ժանրին զուգահեռ՝ հասել է նշանակալի կատարելության. Քոչարի գեղարվեստական ակնարկն աչքի է ընկնում էմոցիոնալ և ինտելեկտուալ հագեցվածությամբ, այնպես որ էմոցիան դրսևորվում է զգայական-քաղաքական լույսով, կամ, այլ կերպ ասած, ակնարկի մեջ իրական նյութը վերակենդանացնող գաղափարական-հրապարակախոսական միտումը տոդորված է ուժգնաթափ էմոցիայով: Առաջին անգամ Քոչարի «Հերոսների ծնունդը» ակնարկների ու պատմվածքների շարքով Հայրենական Մեծ Պատերազմի բազմազգի (հայ, ռուս, վրացի, ուզբեկ, ուկրաինացի, լատիշ և այլն) հերոսները ծնվեցին ու լիաշունչ ապրեցին մեր գրականության մեջ և իրենց հերոսական կյանքով կրկին անգամ հաստատեցին ակնարկի լիակատար իրավունքը գրականության մեջ իբրև գեղարվեստական ժանրի:

Լրագրական ու գեղարվեստական ակնարկի ժանրի զարգացման ուշագրավ դեմքեր են նաև Հ. Մկրտչյանը, վ. Անանյանը, Բ. Ստաֆֆին: Սրանցից առաջին երկուսը ռազմաճակատային մարտական դրվագների պատկերման հետ միասին անդրադարձնում են նաև թիկունքի կյանքը, որին նվիրված են Բ. Ստաֆֆու ակնարկները մեծ մասամբ:

Այս ժանրի գծով հանդես են եկել նաև մեր գրողներից շատերը՝ Ն. Զարյանը, Գ. Բարյանը, Գ. Աբովը (որի ակնարկների դրքում կա նաև հաջողված «Սուզակ» պատմվածքը), Արաքսը և ուրիշները:

Նշանակալից նորույթ էր պատմավեպը, որի տեղը բաց էր մինչպատերազմյան ժամանակաշրջանի գրականության մեջ՝ պատմական դրամայի ու պատմա-էպիկական ժանրի բանաստեղծության կողքին:

Հանձինս «Վարդանանք»-ի, «Պատ Քաղաւոր»-ի, նաև Արագու՝ Բարայել Օրու կյանքին նվիրված և Ստաֆֆու՝ Շահումյանին նվիր-

ված աշխատությունների (կան և ուրիշներ էլ՝ Ալ. Արաքսմանյանի «Ճանապարհ դեպի Կամիշլի», Անդր. Հովսեփյանի «Սիրտ» և այլն), մենք ունեցանք պատմական վեպի ժանրի զարգացման սկիզբը: Գեղարվեստական ու պատմական ճշմարտության տեսակետից՝ լուրջ թերություններով ու սխալներով է հատկանշվում այդ սկիզբը, թերություններ ու սխալներ, որոնք էլ ավելի լրջորեն պետք է քննության առնվեն, որպեսզի կանխվի նրանց կրկնությունը հետագայում և ապահովվի պատմական վեպի և ընդհանրապես պատմական թեմատիկայի անաղարտ զարգացումը սոցիալիստական ռեալիզմի ուղիով:

Պոեզիայի ու պրոզայի համեմատությամբ ընդհանուր առմամբ թույլ զարգացավ դրամատուրգիան, բայց նորը մեր դրականության այս բաժնում այն էր, որ հանձին Ն. Զարյանի «Արա Գեղեցիկի» սկզբնավորվեց ողբերգության ժանրը և այն էլ չափածոյով գրված ողբերգության, և ապա հանձին Ն. Զարյանի «Ամենագաղտնի» դրամատիկական երկի՝ մենք ունեցանք քաղաքական սատիրայի ժանրի սկիզբը, իբրև հատու մի ձև թշնամու ռեակցիոն էությունը մերկացնելու համար:

Հինգերորդ՝ Սովետահայ գրողների պատերազմական շրջանի գործունեության մեջ մի շատ նշանակալից մոմենտ է, նախընթաց էտապների համեմատությամբ միանգամայն նորույթ, հրապարակախոսական ժանրի՝ պուբլիցիստիկայի զարգացումը, որի մեջ առանձնակի տեղ է գրավում մեր պոեզիայի մեծ վարպետը՝ Ավ. Իսահակյանը: Բանաստեղծական մտքի իր նոր թռիչքի հետ միասին («Ռազմակոչ», «Զարյանի հիշատակին», «Հայկական ճարտարապետությանը» և այլն) մեր բազմավաստակ բանաստեղծը փայլուն վարպետություն հանդես բերեց նաև այս ժանրի մեջ, որը տվյալ ժամանակաշրջանում այնքան ակտուալ-ներգործուն նշանակություն ուներ իբրև հատու մի զենք՝ ուղղված ռեակցիոն պրուսականության ամենավայրագ արտահայտության՝ հիտլերյան ֆաշիզմի դեմ, ի պաշտպանություն կուլտուրայի ու պրոգրեսի, ի պաշտպանություն կոմունիզմի:

1941—45 թ. թ. Իսահակյանի գրած հրապարակախոսական հոդվածների* իրենց նշանակությամբ պետք է դրվեն Ալ. Տոլստո-

* Իսահակյանի այդ հոդվածները հրատարակվել են առանձին գրքույկով «Հանուն կուլտուրայի ու պրոգրեսի» վերնագրով:

յի, իլ. էրենբուրգի, Լեոնիդ Լեոնովի նույն շրջանի՝ մարքս քարձրկոլատուրայի ու բարդրական պաշտոնի արատաստուբյուն Հանդիսացող ոգեշունչ հոդվածների կողքին:

Վերջապես՝ առեղծագործական մեթոդի ու ոճի տեսակետից այս տարիների մեր պրակտուբյանն անշուշտ ավելի հատատուն է ընթանում սոցիալիստական ռեալիզմի ուղով, թեև նրան ուղեկցում են դեկադենտականության, նաև հետագա նորմիոնալատանման ռեալիզմի՝ զգալի տարրեր: Սակայն միևնույն սոցիալիստական ռեալիզմն է՝ սովետական գարաշրջանի այս առնել իրագործության ճշմարտության պատկերումով, այդ առնել իրականության պատկերման Լեոնիդի մեջ, որ ասում էր ու տալիս է իր գործերով՝ Հիտլերյան Գերմանիայի խորտակման ու կործք մարմնավորող այնպիսի խոշոր գործեր, ինչպես Ֆադեևի «Երիտասարդ գվարդիան», Շոլոխովի «Նրանք մարտնչում են հայրենիքի համար», Պանֆերովի «Պայքար հանուն խաղաղության», Ս. Տխարդովսկու «Վասիլի Տյորկին»-ի, Կ. Սիմոնովի ու մյուս նշանավոր ոուս գրողների մեծանշանակ երկերը, բայց գրականության պատմական ուղղության և ժամանակաշրջանի պատկերման դաղափարական նպատակասլացության տեսակետից սովետահայ գրականությունը հասատատորեն կանգնած էր նույն ստաջավոր կրակյին գծին, որտեղից նա ձակատում էր մահոգու Պետերբուրգի շրջանի սովետահայ գրականության պատկերման Հայրենիքի Հաղթանակի Հարված, տոդրված է սոցիալիստական ռեալիզմի երկրի Համաշխարհային պատմական Հոդվածներին:

Ինչ է, սովետահայ գրականությունը չտվեց պատերազմի էպոխան պատկերող, սովետական ժողովրդի դյուցապնական պին ու կռիվը մարմնավորող այնպիսի խոշոր գործեր, ինչպես Ֆադեևի «Երիտասարդ գվարդիան», Շոլոխովի «Նրանք մարտնչում են հայրենիքի համար», Պանֆերովի «Պայքար հանուն խաղաղության», Ս. Տխարդովսկու «Վասիլի Տյորկին»-ի, Կ. Սիմոնովի ու մյուս նշանավոր ոուս գրողների մեծանշանակ երկերը, բայց գրականության պատմական ուղղության և ժամանակաշրջանի պատկերման դաղափարական նպատակասլացության տեսակետից սովետահայ գրականությունը հասատատորեն կանգնած էր նույն ստաջավոր կրակյին գծին, որտեղից նա ձակատում էր մահոգու Պետերբուրգի շրջանի սովետահայ գրականության պատկերման Հայրենիքի Հաղթանակի Հարված, տոդրված է սոցիալիստական ռեալիզմի երկրի Համաշխարհային պատմական Հոդվածներին:

Ինչ է, սովետահայ գրականությունը չտվեց պատերազմի էպոխան պատկերող, սովետական ժողովրդի դյուցապնական պին ու կռիվը մարմնավորող այնպիսի խոշոր գործեր, ինչպես Ֆադեևի «Երիտասարդ գվարդիան», Շոլոխովի «Նրանք մարտնչում են հայրենիքի համար», Պանֆերովի «Պայքար հանուն խաղաղության», Ս. Տխարդովսկու «Վասիլի Տյորկին»-ի, Կ. Սիմոնովի ու մյուս նշանավոր ոուս գրողների մեծանշանակ երկերը, բայց գրականության պատմական ուղղության և ժամանակաշրջանի պատկերման դաղափարական նպատակասլացության տեսակետից սովետահայ գրականությունը հասատատորեն կանգնած էր նույն ստաջավոր կրակյին գծին, որտեղից նա ձակատում էր մահոգու Պետերբուրգի շրջանի սովետահայ գրականության պատկերման Հայրենիքի Հաղթանակի Հարված, տոդրված է սոցիալիստական ռեալիզմի երկրի Համաշխարհային պատմական Հոդվածներին:

Ինչ է, սովետահայ գրականությունը չտվեց պատերազմի էպոխան պատկերող, սովետական ժողովրդի դյուցապնական պին ու կռիվը մարմնավորող այնպիսի խոշոր գործեր, ինչպես Ֆադեևի «Երիտասարդ գվարդիան», Շոլոխովի «Նրանք մարտնչում են հայրենիքի համար», Պանֆերովի «Պայքար հանուն խաղաղության», Ս. Տխարդովսկու «Վասիլի Տյորկին»-ի, Կ. Սիմոնովի ու մյուս նշանավոր ոուս գրողների մեծանշանակ երկերը, բայց գրականության պատմական ուղղության և ժամանակաշրջանի պատկերման դաղափարական նպատակասլացության տեսակետից սովետահայ գրականությունը հասատատորեն կանգնած էր նույն ստաջավոր կրակյին գծին, որտեղից նա ձակատում էր մահոգու Պետերբուրգի շրջանի սովետահայ գրականության պատկերման Հայրենիքի Հաղթանակի Հարված, տոդրված է սոցիալիստական ռեալիզմի երկրի Համաշխարհային պատմական Հոդվածներին:

Ինչ է, սովետահայ գրականությունը չտվեց պատերազմի էպոխան պատկերող, սովետական ժողովրդի դյուցապնական պին ու կռիվը մարմնավորող այնպիսի խոշոր գործեր, ինչպես Ֆադեևի «Երիտասարդ գվարդիան», Շոլոխովի «Նրանք մարտնչում են հայրենիքի համար», Պանֆերովի «Պայքար հանուն խաղաղության», Ս. Տխարդովսկու «Վասիլի Տյորկին»-ի, Կ. Սիմոնովի ու մյուս նշանավոր ոուս գրողների մեծանշանակ երկերը, բայց գրականության պատմական ուղղության և ժամանակաշրջանի պատկերման դաղափարական նպատակասլացության տեսակետից սովետահայ գրականությունը հասատատորեն կանգնած էր նույն ստաջավոր կրակյին գծին, որտեղից նա ձակատում էր մահոգու Պետերբուրգի շրջանի սովետահայ գրականության պատկերման Հայրենիքի Հաղթանակի Հարված, տոդրված է սոցիալիստական ռեալիզմի երկրի Համաշխարհային պատմական Հոդվածներին:

«Ես տեսնում եմ պարզ. աշխարհասասան այս թոհ ու բոհում
Հիտլերի գարշ երկաթե հորդան պիտի ջախջախվի»:*

Մեր նշանավոր բանաստեղծի այս երկու տողը, որով սկսվում է նրա՝ «Նա պիտի կախվի» բանաստեղծությունը (գրված 1941 թ. հուլիսի սկզբին ու կարդացված Երևանի ինտելիգենցիայի միտինգին) վառ կերպով բացահայտում է սովետահայ պոեզիայի ու ողջ գրականության հիմնական օպտիմիստական պաթոսը:

Մեր գրողների ստեղծագործության մեջ այդ ահեղ, բայց և հերոսական-դյուցազնական ժամանակաշրջանի պատկերման հիմքում ընկած է մեր հաղթանակի կայուն ու «մշտական գործոնների» գիտակցումը, ֆաշիստական ռեակցիոն ռեժիմի սոցիալական պատմական հիմքերի անկայունության, և դրան հակադիր սովետական հասարակարգի պատմական կենսունակության աճող ուժի գիտակցումը,— այսինքն պատմական կյանքի առաջընթացի դիալեկտիկական-մատերիալիստական ըմբռնումը, որը սոցիալիստական ռեալիզմի մեթոդի աշխարհաճանաչողական հիմքն է:

Այս ժամանակաշրջանի մեր գրականությունը սոցիալիստական ռեալիզմի գրականություն է, ոչ պակաս չափով, քան նախընթաց շրջաններինը: Նրա արտահայտչական հիմնական գիծը հերոսականությունն է, սովետական երկրի, նրա դյուցազնական բանակի հերոսականության պատկերման ձգտումը: Սոցիալիստական ռեալիզմի իրականացումը զարգացման տարբեր էտապներում զգալիորեն տարբեր արտահայտություն է ստանում, բայց իր էությամբ նույնն է մնում: Հայրենական պատերազմի գրականությունը անշուշտ իր արտահայտչական ձևերով ու հնարներով ակնհայտորեն տարբերվում է նախընթաց՝ մինչպատերազմյան շրջանի գրականությունից: Բայց անկասկած՝ Ն. Զարյանի «Շիկացած հոգով» ժողովածուն իր էությամբ նույնպես ռեալիստական է, ռեալիստական՝ պատերազմի հերոսականության պաթետիկայով շնչավորված՝ ինչպես որ ռեալիստական է «Թուշանի Բարափը», «Սաքո Միկինյան»-ը, «Հացավան»-ը, «Ամրոց» և «Հավերժական դագաթներ» ժողովածուներում ամփոփված՝ սովետական ժամանակաշրջանի կյանքն ու պայքարը պատկերող երկերը:

Դ. Դեմիրճյանի մոտ «Խոշտանգվածի ավանդը», «Անխուսափե-

---

* Ն. Զարյան, «Շիկացած հոգով», էջ 33:

լին», «Նամը», «Ալեքսագարձը», «Ծնողները» ոչ պակաս չափով ռեալիստական են, քան մինչպատերազմյան ժամանակաշրջանի երկերից «Ընկերները», «Մերկեն», «Սաթոն», «Նիգյարը», «Թաշիգը», «Նոր մոնումենտալը»։

Սոցիալիստական ռեալիզմի ստեղծագործություններ են նաև Ստ. Զորյանի այս տարիների երկերից «Որդին», «Աղավնիները», «Վաղ Կարոն» և այլն։

Հր. Քոչարի «Հերոսների ծնունդը», «Նախօրյակին», «Սրբազան ուխտը» ժողովածուների պատմվածքներն ու գեղարվեստական ակնարկները ոչ պակաս, ավելի ճիշտ՝ առավել չափով ռեալիստական են, քան նույն Քոչարի «Ժամանակներ» ժողովածուի պատմվածքներն ու նովելները։

Տարբերությունն այստեղ ոչ թե իրականության պատկերման ստեղծագործական մեթոդի մեջ է, այլ մինչպատերազմյան և պատերազմյան շրջանի իրականության տարբերության մեջ է, այն տարբերության, որ կա սոցիալիզմի կառուցման աշխատանքային հերոսության և սոցիալիզմի երկրի պաշտպանության ռազմական հերոսության, Հայրենական Պատերազմի հերոսականության միջև։

Ռեալիստական է մեր գրականությունը ոչ միայն սովետական մարդու՝ ռազմաճակատային ու թիկունքային հերոսականությունը, սովետական բանակի ու ժողովրդի հայրենասիրական ոգու տոկունությունը, անպարտելիության ուժը պատկերելիս, նա ռեալիստական է նաև թշնամուն պատկերելիս՝ բացահայտելով նրա ամենագազանային էությունը։

Յոթերորդ՝ վերջապես պետք է նշել այս շրջանի մեր գրականության թեմատիկ ու գաղափարային ընդգրկման և հերոսների անձնակազմի առավել հարստությունը նախընթաց էտապների համեմատությամբ։

Մեր գրողների ստեղծագործական մտքի ընդգրկման պատմական շրջագիծը միացնում է հայ ժողովրդի ծագման ժամանակն իր միֆական հերոսներով ու նրա պետականության զարգացման ժամանակն իր պատմական գործիչներով Հայրենական Պատերազմի ժամանակաշրջանին՝ առասպելական Հայկից ու Արայից և ապա Տիգրան 2-րդից ու Վարդան Մամիկոնյանից մինչև սովետական բանակի մեծահռչակ հայ գեներալը։

Բայց նեղ ազգային չէ մեր գրականությունը. նրա հերոսները միայն հայերը չեն, նրա հերոսների անձնակազմը հարուստ է Սո-

վետական Միության ժողովուրդների զավակների՝ ազնիվ կերպարներով (ռուս, ուկրաինացի, վրացի, ադրբեջանցի, ուզբեկ, լատիշ), որոնք միանում են իբրև մի միասնական սովետական ժողովրդի զավակներ: Նախընթաց ոչ մի շրջանում մեր գրականությունը չի ունեցել հերոսների ըստ ազգային անձնակազմի այնքան հարստություն, ինչքան այս շրջանում: Այդ տեսակետից Հայրենական Պատերազմի շրջանի մեր գրականությունը ժողովուրդների եղբայրության մի կենդանի պատկերահանդես է:

Հայ ժողովրդի զավակները՝ հայ զինվորը, հրամանատարը, գեներալը, հայ բժիշկն ու արվեստագետը, հայ բանվորն ու կոլխոզնիկը մարմնավորում են իրենց մայր ժողովրդի այն նոր գծերը, որոնք զարգացել են սոցիալիստական վերածննդի ստալինյան էպոխայում:

Ինչպես նախընթաց էտապի, նույնը և առավելապես Հայրենական Պատերազմի ժամանակաշրջանի մեր գրականության հերոսների անձնակազմը վառ կերպով ցույց է տալիս, որ ընկ. Ժդանովի բառերը փոխադրելով ասենք «մենք այն չենք, ինչ էինք երեկ», որ մենք արդեն այն հայերը չենք, «ինչպիսին մենք էինք մինչև սովետական կարգերի հաստատումը, և որ... մենք փոխվել ենք և աճել այն մեծագույն վերափոխությունների հետ միասին, որոնք արմատապես փոխեցին մեր երկրի դեմքը», ցարական պետության երբեմնի գաղութի և ստրկացած, ճնշված ժողովրդի դեմքը:

Ճիշտ է, չի կարելի գոհանալ գեղարվեստական ընդգրկման ու պատկերման այն որակով, որն ունի մեր այս շրջանի գրականությունը, բայց ամեն դեպքում պատմական հեռանկարների մեջ կարևորն այն է, որ այնուամենայնիվ մեր գրողների ստեղծագործության մեջ երևում է մեր ժողովուրդն իր վերածննդի քառորդ դարի արդյունքով, իբրև սոցիալիզմի կառուցման հերոսական աշխատանքում ու պայքարում և սովետական հայրենիքի պաշտպանության ճակատամարտերում վերածնված մի ժողովուրդ, որ հասել է իր ազգային ինքնաճանաչողության բարձրակետին, հաստատուն տեղ նվաճելով Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության մեջ՝ մարդկության առաջընթացի ավանգարդում:

Ուրեմն Հայրենական Պատերազմի ժամանակաշրջանի մեր գրականությունը պետք է դիտել ու գնահատել իբրև մեր ժողովրդի

ազգային վերածնության բարձրագույն էտապի գեղարվեստական տարեգրություն:

Գրողների ստեղծագործության մեջ պետք է տեսնել և ցույց տալ մեր երկրի ու ժողովրդի սոցիալիստական վերածնունդը մարմնավորող պատկերները, ժողովրդի ամբողջական կերպարն իր կոնկրետ արտահայտությունների մեջ:

դ) Այս շրջանում իրենց ստեղծագործական ակտիվությամբ աչքի ընկնող գրողներն են՝ Ավ. Իսահակյան, Ն. Զարյան, Դ. Դեմիրճյան, Ստ. Զորյան, Հր. Քոչար, Գ. Բորյան, Արազի, Ա. Վշտունի, Գ. Սարյան, Թ. Հուրյան, Ս. Տարոնցի, Հ. Շիրազ, Սարմեն, Ս. Վահունի, Ա. Գրաշի, Ազավնի, Հ. Մկրտչյան, Վ. Անանյան, Արաքս, Բ. Սաաֆֆի, Վ. Գրիգորյան, Գ. Բես և ուրիշները:

ՆՈՐ ԷՏԱՊ. 1945—1947 թ. թ.

Ինչպես նկատեցինք իր տեղում՝ այս նոր՝ հերթականությամբ վեցերորդ էտապն սկսվել է 1945 թ. մայիսի սկզբից՝ Սովետական Միության Հայրենական Մեծ Պատերազմի հաղթական ավարտման պատմական մոմենտից: Սովետական գրականության (ուրեմն և նրա հայկական ազգային հատվածի)՝ իր խնդիրներով ու հեռանկարներով բարձրագույն այս էտապի ժամանակաշրջանը նշանավորված է հետևյալ փաստերով, որոնք և որոշում են գրականության խնդիրներն ու նրա հետագա զարգացման ուղին: Սովետական երկրի անցումը խաղաղ շինարարական աշխատանքին. ՍՍՌՄ-ի ժողովրդական տնտեսության վերականգնման և հետագա զարգացման հնգամյա պլանը՝ ստալինյան 4-րդ հնգամյակը, որի նշանակությունն ու խնդիրները լուսաբանված են ընկեր Ստալինի՝ 1946 թ. փետրվարի 9-ի նախընտրական ծրագրային ճառում: Սովետական Միության ներքին քաղաքական կյանքի մեծ իրադարձությունն այս էտապի սկզբում՝ 1946 և 1947 թվերին՝ միութենական ու ռեսպուբլիկական Գերագույն Սովետների ընտրություններն են, Սովետական դեմոկրատիայի նոր փայլուն հաղթանակը, որը գրավական է սոցիալիստական պետականության հետագա ամրացման ու հզորության համար: Իսկ արտաքին, միջազգային քաղաքական կյանքում այս էտապը նշանավորվում է Սովետական Միության եռանդուն պայքարով հանուն երկարատև խաղաղության հաստատ-

ման Միավորված Ազգերի կազմակերպության միջոցով։ Այդ պայքարը ցուցադրում է, Սովետական Միության հզոր ուժն իբրև մեծագույն գործոն՝ միջազգային քաղաքական կյանքում իմպերիալիստական ռեակցիոն ուժերի դեմ մղվող պայքարում, միջազգային դեմոկրատիայի պրոգրեսիվ ուժերի համախմբման ու ամրացման գործում։ Այդպիսով Սովետական երկրի հետպատերազմյան խաղաղ շինարարական աշխատանքին, ստալինյան 4-րդ հնգամյակի կատարման ընթացքին ուղեկցում է միջազգային քաղաքական կյանքի սուր լարվածությունը՝ ռեակցիայի և պրոգրեսի դիվանագիտական, գաղափարախոսական պատերազմը։

Այս իրադրության մեջ սովետական գրականության նոր էտապի սկիզբը նշանավորվում է ՀամԿ(բ)Պ ԿԿ-ի 1946 թ. օգոստոս-սեպտեմբերյան որոշումներով և ընկ. Ժդանովի զեկուցումով գրականության ու արվեստի և ընդհանրապես ողջ գաղափարախոսական ճակատի դրության և հետագա զարգացման խնդիրների մասին։

Սովետական գրականությունն ու արվեստները՝ երկրի զարգացման այս նոր ժամանակաշրջանում կոչված են բարձրանալու Պարտիայի ու պետության գաղափարախոսական աշխատանքի պահանջների բարձր մակարդակին՝ սոցիալիզմից կոմունիզմին անցնելու պատմական մեծ խնդրի գաղափարախոսական մակարդակին, տոգորվելու բոլշևիկյան պարտիականության ոգով և՝ ավելի խոր կերպով «ապրելու ժողովրդի շահերով, հայրենիքի շահերով» (Ա. Ժդանով), օգնելու պետությանը, պարտիային՝ կոմունիզմի համար մղվող պայքարում։

Այս նշանաբանով ընթացավ Հայաստանի Սովետական Գրողների 2-րդ համագումարը (1946 թ. սեպտեմբեր), որը նշանակալից մոմենտ է այս էտապի մեր գրական կյանքում, նշանակալից, ի դեպ, և նրանով, որ համագումարին մասնակցում էին արտասահմանի ժամանակակից հայ գրականության պրոգրեսիվ հատվածի մի շարք անվանի ներկայացուցիչները՝ ցուցադրելով այդ հատվածի քաղաքական-բարոյական միասնությունը սովետական գրականության հետ։

Սովետահայ գրականության զարգացման այս նոր՝ հետպատերազմյան էտապի սկիզբը նշանավորվում է մի շարք արժեքավոր երկերով, որոնցից կարելի է հիշել՝ Ն. Զարյանի «Հացավան» վեպը,

ավարտումը և ամբողջական հրատարակությունը, Հմ. Սիրասի «Հայր և որդի» վիպակը, Հր. Քոչարի «Սրբազան ուխտը» ժողովածուն, Բ. Ստաֆֆու «Ստեփան Տահումյան» վեպը, Գ. Բեսի, Ս. Պայազատի, Սրաքսի և մյուս արձակագիրների մի քանի արժեքավոր պատմվածքները, Մելիք Քոչարյանի «Հարազատ մարդիկ» պիեսը և այլն:

Պոէզիան համեմատաբար ետ է մնում ու դեռ չի նշանավորվել նոր էտապը բնութագրող արժեքավոր ստեղծագործություններով:

Բայց ելնելով նախընթաց էտապների փորձից, ելնելով զարգացման այն մեծ հնարավորություններից, որ կան այս էտապում, հնարավորություններ, որոնք բոլշևիկյան պարտիայի՝ գրականության ու արվեստի նկատմամբ ցուցաբերվող անսահման հոգատարության արդյունք են,— պետք է համոզմունք հայտնել, որ այս էտապում մեր գրականությունը, ղեկավարվելով սոցիալիստական ռեալիզմի մեթոդով՝ ստեղծագործական մեծ թռիչքներ կանի և կհասնի սովետական ռուս գրականության գաղափարական ստեղծագործական բարձր մակարդակին, Շոլոխովի, Ֆադեևի, Կ. Սիմոնովի երկերով որոշվող մակարդակին: Սովետահայ գրականությունը, որն օրինական ժառանգն է հայ բազմադարյան գրականության, նրա լավագույն տրադիցիաների մարմնավորողն ու զարգացնողը՝ սոցիալիստական գաղափարականության հիմքի վրա, պետք է կանգնի և կկարողանա կանգնել Միության գրականության գեղարվեստական մակարդակին: Դա է պահանջում Հայրենական Մեծ Պատերազմից հաղթանակի վաստքով դուրս եկած հայ ժողովուրդը, որը լցված է ազգային հպարտության ազնիվ զգացմունքով, Միության ժողովուրդների շարքում, նրանց հետ համաքայլ ընթանալու իր ուժի ու կամքի գիտակցությամբ՝ կոմունիզմի համար մղվող պայքարում:

688—7

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԷԴ. ԹՈՓՉՅԱՆ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵԱԼԻԶՄԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Սովետական կյանքի ամեն մի նոր տարին նշանավորվել է պատմության բախտը վճռող ժողովրդի աշխատանքային անօրինակ գործունեությամբ, անկրկնելի հմայքով օժտված նյութական և հոգեվոր արժեքների ստեղծումով: Օբեկտիվորեն գեղեցիկ սոցիալիստական իրականությունը, ժողովրդի արտասովոր խիզախությունը, նրա իսկական պատմական դերը բանաստեղծական նկատագրության նյութ դարձավ առաջին անգամ սովետական գրականության մեջ: Սովետական գրականության մեծ արժանիքը այն է, որ, հենված կոմունիստական աշխարհայացքի վրա, նա գեղարվեստական աննախընթաց կերպարներով վերարտադրել է սոցիալիստական առաջին պետության ծնունդը և հաղթական զարգացումը:

Մեր իրականության, մեր կյանքի այդ մեծ բովանդակության գեղարվեստական հայտնագործումով սովետական գրականությունը դարձավ մարդկության գեղարվեստական զարգացման ամենաբարձր աստիճանը: Ինչպես XX դարի ողջ պատմությունը Սոցիալիստական Մեծ Հեղափոխությից հետո տեղի է ունենում սովետական դեմոկրատիզմի և սովետական հեղափոխության ազդեցությամբ, այնպես էլ համաշխարհային պրոգրեսիվ գրականության զարգացումը, ի հակադրություն ռեակցիայի և անկման, ընթանում է սովետական գրականության նշած ուղիներով: Բոլշևիկյան իդեականության ոգով տոգորված սովետական գրականությունը իսկական ժողովրդային գրականություն է. նա չունի և չի կարող ունենալ այլ շահեր, քան ժողովրդի շահերը:

«Մեր գրականությունը հանդիսանում է բոլոր ժողովուրդների և երկրների. բոլոր գրականություններից ամենաերիտասարդը: Միաժամանակ նա հանդիսանում է ամենագաղափարական, ամենառաջավոր և ամենահեղափոխական գրականությունը: Սովետական

*գրականությունից բացի չկա և երբեք չի եղել այնպիսի գրականություն, որն աշխատավորներին և ճնշվածներին կազմակերպեր պայքարի համար՝ վերջնականապես ոչնչացնելու ամեն մի և ամեն տեսակ շահագործում և վարձու ստրկության լուծ: Չկա և երբեք չի եղել այնպիսի գրականություն, որն իր երկերի թեմատիկայի հիմքում դներ բանվոր դասակարգի ու գյուղացիության կյանքը և պայքարը հանուն սոցիալիզմի»:**

Գեղարվեստական գրականության նման որակը անմատչելի էր հոգևոր կուլտուրայի զարգացման նախորդ դարաշրջաններում: Ելնելով դասակարգային անձուկ շահերից, բուրժուական ուսուցիանները ստեղծում էին իրականության միայն սահմանափակ կամ պատրանքային ճանաչում:

«Նախկին ուսուցիանները համաշխարհային պատմական հետադարձ հիշողությունների կարիքն ունեին, որպեսզի խլացնեին մխքն իրենց սեփական բուվանդակության մասին» (Մարքս): Այդ պատճառով էրազմ Ռոտերդամցին ապավինում էր աստվածաշնչին, Միլտոնը «Դրախտ կորուսյալում» դիմում էր բիբլիական այլաբանության, իսկ ֆրանսիական ուսուցիայի շրջանում, ֆեոդալիզմի դեմ գրոհողների հայացքները արտահայտվում էին հին հույների կերպարների միջոցով:

Նախորդ ուսուցիանների բուրժուական սահմանափակ բովանդակությունը արգելակում էր ռեալիստական գրականության զարգացումը: Ահա թե ինչու անհրաժեշտ էին մի քանի տասնամյակներ, որպեսզի գրվեին այնպիսի գործեր, ինչպես Ստենդալի «Կարմիր և սևը», Բալզակի «Խորտակված երազները», Դիկկենսի «Ծանր ժամանակները»: Միայն բուրժուական հասարակության հաստատվելուց հետո ստեղծվեց բուրժուական կլասիկ ռեալիզմը և նրա ստեղծողները եղել են ոչ թե բուրժուական հասարակության ուղղահավատ անդամները, այլ «բուրժուազիայի մոլորյալ որդիները», ինչպես նրանց անվանել է Մ. Գորկին:

Նկարագրելով մարդկային անհատին ճնշված տնտեսական և հոգևոր կապանքների, ընտանեկան տրադիցիաների, իրավական նորմերի ծանրությունից, մերկացնելով բուրժուական հասարակության արատները, քննադատական ռեալիզմը հանգում էր պես-

---

* А. Жданов, Советская литература—самая идейная, самая передовая литература в мире. 1934, էջ 7-8.

միստական եղրակացությունների. նա չէր կարողանում ցույց տալ այդ սոցիալիզմից ազատվելու ելքը: Սակայն «մոլորյալ որդիների» ռեալիզմը տոգորված էր քննադատական վերաբերմունքով բուրժուական կարգերի նկատմամբ: Դա բուրժուական կլասիկ ռեալիզմի կարևոր արժանիքն է:

Սոցիալիստական ռևոլուցիան իր բնույթով և հեռանկարով սկզբունքորեն տարբերվում էր բուրժուական ռևոլուցիաներից, «որովհետև նա մարդկության համաշխարհային պատմության մեջ արմատական շրջադարձ է նշանակում հին կապիտալիստական աշխարհից դեպի նոր սոցիալիստական աշխարհը» (Ստալին):

Ոչնչացնել մարդու կողմից մարդու շահագործումը, հաստատել բոլոր ճնշված դասակարգերից ամենառևոլուցիոն դասակարգի իշխանությունը, կազմակերպել անդասակարգ սոցիալիստական հասարակություն, ահա՛ սոցիալիստական ռևոլուցիայի վեհ նպատակները: Այդ ռևոլուցիան կարիք չուներ հետադարձ հիշողություններին, նա կարիք չուներ իր բովանդակությունը քողարկելու հնադույն ժամանակներից վերս առնված պատրանքներով և կրքերով: Ընդհակառակը, որքան ավելի է բացահայտվում սոցիալիստական ռևոլուցիայի վեհ նպատակները, նա այնքան ավելի շատ զանգվածներ է համակում:

Ակնհայտ է, որ սովետական ռևոլուցիան ստեղծում էր մարդկային կյանքի մեծ հեղաշրջումն արտացոլող իսկական ռեալիստական արվեստի բոլոր նախադրյալները: Բայց դա միայն օբեկտիվ հնարավորություն էր, որը կենսագործվեց բոլշևիկյան պարտիայի քաղաքականության և գեղարվեստական գրականության բնագավառում:

Սոցիալիստական կուլտուրայի զարգացման առաջին իսկ քայլերից, քաղաքացիական կռիվների պատմական օրերին, Լենինը և պարտիան պարզ կերպով նշեցին այն ուղին, որով պիտի ընթանար նորաստեղծ սովետական գրականությունը: Նրա ստեղծման կարևոր նախապայմանը համարվում էր նախորդ կուլտուրայի արժեքավոր նվաճումների քննադատական յուրացումը: Նրա ըստեղծումը ենթադրում էր անողոք պայքար բուրժուական ռեակցիոն գաղափարախոսության ամեն մի արտահայտության դեմ, հանուն ռեալիստական արվեստի: Նրա ստեղծումը հնարավոր էր համարվում միայն անմիջական, ամենասերտ կապով ռևոլուցիոն իրա-

կանության հետ: Իսկ իր նպատակասլացությամբ սովետական գրականությունը պետք է տոգորված լիներ «պրոլետարիատի դասակարգային պայքարի ոգով, հանուն նրա դիկտատուրայի նպատակների հաջող կատարման, այլ խոսքով՝ բուրժուազիայի տապալման համար, մարդը մարդու կողմից ամեն տեսակ շահագործման վերացման համար» (Լենին, Երկեր, հ. 25, էջ՝ 409): Ահա այն խնդիրները, որ առաջադրել են Լենինը և բոլշևիկյան պարտիան սովետական գրականությանը, նրա ստեղծման առաջին տարիներին:

Սովետական գրականության ամեն մի իսկական նվաճում ոգեշնչվել է բոլշևիկյան պարտիայի տիտանային գործունեությամբ: Մերկացնելով բուրժուական գաղափարախոսության արտահայտությունները, բոլշևիկների պարտիան, սովետական հասարակարգի պատմական զարգացման տարբեր շրջաններում ստեղծել է մեր գրականության նոր վերելքի բոլոր նախադրյալները, գրականությունը տարել սովետական ժողովրդին և սովետական պետությանը ծառայելու ուղիով:

Դեռևս 1905 թվին «Պարտիական կազմակերպություն և պարտիական գրականություն» հոդվածում Լենինը ցույց տվեց, որ ժամանակակից հասարակության մեջ չի կարող լինել պայքարող դասակարգերից վեր կանգնած գրականություն, անպարտիական գրականություն: Արվեստագետի «ազատության» բուրժուական թեորիանները Լենինը համարում է ամբողջական կեղծավորություն: Լենինը սպառիչ կերպով լուսաբանում է բուրժուական գրականության, հատկապես սիմվոլիստական «տեսությունների» ռեակցիոն քնույթը: Սիմվոլիստների պարագլուխ վ. Բրյուսովը իր պատասխան հոդվածում ճգնում էր ապացուցել, որ իրենք հեռու են բուրժուական հարաբերություններից, հետու՝ դրամի տիրապետությունից: Բայց դրանք սոսկ ֆրազներ էին: Բրյուսովի հոդվածում արտահայտվում էր սիմվոլիստների խոր թշնամանքը ռևոլուցիոն պրոլետարիատի գաղափարախոսության նկատմամբ:

Պատմությունը հաստատեց Լենինի մարգարեական կանխատեսումը: «Գրականությունը պետք է պարտիական դառնա»,— հաստատում էր Լենինը: «Ի հակակշիռ բուրժուական բարքերի, ի հակակշիռ բուրժուական ձեռնարկատիրական, շարչիական մամոնի, ի հակակշիռ բուրժուական գրական կարերիզմի ու ինդիվիդուալիզ-

ՄԻ, «աղայական անարխիզմի» և շահի հետևից ընկնելուն՝ սոցիալիստական պրոլետարիատը պետք է առաջ քաշի պարտիական գրականության սկզբունքը, զարգացնի այդ սկզբունքը և կենսագործի որքան հնարավոր է լայն և ամբողջական ձևով։

Ի՞նչ է գրականության պարտիականության սկզբունքը։ Ոչ միայն այն, որ սոցիալիստական պրոլետարիատի համար գրական գործը չի կարող անձանց կամ խմբակների շահի զենք լինել, նա առհասարակ չի կարող լինել անհատական գործ՝ պրոլետարական ընդհանուր գործից անկախ։ Կորչեն անպարտիական գրականագետները։ Կորչեն գերմարդ գրականագետները։ Գրական գործը պետք է դառնա համապրոլետարական գործի մի մասը...» (Լենին, Երկեր, հ. 8, էջ՝ 387)։

Սովետական գրականության զարգացման ընթացքում կենսագործվել է Լենինի ավանդը։ Գրականությունը դարձել է «համապրոլետարական գործի մի մասը»։ Մեր գրականությունը որքան ավելի է առգորվել բոլշևիկյան պարտիականությամբ, այնքան ավելի մեծ է եղել նրա ստեղծած գեղարվեստական արժեքների համաշխարհային նշանակությունը։ Դրա լավագույն ապացույցը Գորկու ստեղծագործությունն է։ Մեծ արվեստագետի ստեղծագործական հախուռն խիզախումների ակունքը եղել է լենինիզմը։ Լենինից և Ստալինից Գորկին սովորեց դրսևորել մարդկային անհատին որպես պատմություն ստեղծողի։ «Իմ ամբողջ կյանքում,— գրում է Գորկին,— ես դիտել եմ որպես իսկական հերոսներ միայն այն մարդկանց, որոնք սիրում և կարողանում են աշխատել, մարդիկ, որոնք նպատակ ունեն ազատել մարդու բոլոր ուժերը ստեղծագործության համար, մեր երկիրը գեղեցկացնելու համար, երկրի վրա մարդուն արժանի կյանք կազմակերպելու համար»։

Սակայն բավական էր, որ Գորկին շեղվեր լենինիզմից, ինչպես այդ տեղի ունեցավ ռեակցիայի տարիներին, որպեսզի նրա գործերում խաթարվեր գորկիական հանճարը, արտահայտվեր ռեալիզմը։ Միայն Լենինի, Ստալինի հզոր իդեաների գեղարվեստական կենսագործումով Գորկին մի քայլ առաջ մղեց մարդկության գեղարվեստական զարգացումը և այն պահին, երբ բուրժուական կլասիկ ռեալիզմը ապրում էր քայքայում, Գորկին հայտնագործեց սոցիալիստական ռեալիզմի դարաշրջանը գրականության մեջ։

* * *

Սոցիալիստական պրոլետարիատի ստեղծման կարևոր նախապայմաններից մեկը Լենինը համարում էր անցյալի դրական ժառանգության քննադատական յուրացումը։ Բնութագրելով անցյալի կուլտուրան, Լենինն ասում է. «յուրաքանչյուր ազգային կուլտուրայի մեջ կան թեկուզ և չզարգացած վիճակում՝ դեմոկրատական, սոցիալիստական կուլտուրայի տարրեր, որովհետև յուրաքանչյուր ազգության մեջ կա աշխատավոր և շահագործվող մասսա, որի կյանքի պայմաններն անխուսափելիորեն դեմոկրատական և սոցիալիստական իդեոլոգիա են առաջացնում։ Բայց յուրաքանչյուր ազգության մեջ կա նաև բուրժուական (իսկ մեծ մասամբ նաև սև հարյուրյակային և կղերական) կուլտուրա, ընդորում ոչ թե սոսկ «տարրերի» ձևով, այլ իբրև տիրապետող կուլտուրա» (Լենին, Երկեր, հ. 17, էջ՝ 137)։

Մենք այժմ չենք քննում երկու կուլտուրաների փոխհարաբերության հարցը ամեն մի ազգային կուլտուրայի մեջ, սակայն պարզ է, որ կուլտուրայի այն տարրերը, որոնք արտահայտում են դեմոկրատական և սոցիալիստական իդեոլոգիա, կազմում են ամեն մի ազգային կուլտուրայի հիմնական կորիզը և հարստությունը։ Եվ երբ Լենինը խոսում է վելիկոռուսների ազգային հպարտության մասին, նա հենվում է ռուսական կուլտուրայի այնպիսի երևույթների վրա, որոնք նշանավորվում են Բելինսկու, Չերնիշևսկու և Պլեխանովի անուններով։

Չարգացնելով և խորացնելով Լենինի ուսմունքը երկու կուլտուրայի մասին, ընկեր Ստալինը գրում է. «Լինում են հասարակական տարբեր իդեաներ ու թեորիաներ։ Կան հին իդեաներ ու թեորիաներ, որոնք իրենց դարն ապրել են և ծառայում են հասարակության մահացող ուժերի շահերին։ Նրանց նշանակությունն այն է, որ նրանք արդելակում են հասարակության զարգացումը, նրա առաջ գնալը։ Լինում են նոր, առաջավոր իդեաներ ու թեորիաներ, որոնք ծառայում են հասարակության առաջավոր ուժերի շահերին։ Նրանց նշանակությունն այն է, որ նրանք հեշտացնում են հասարակության զարգացումը, նրա առաջ գնալը, ըստ որում նրանք այնքան ավելի մեծ նշանակություն են ձեռք բերում, որ-

քան ավելի ճշգրիտ են արտացոլում հասարակության նյութական կյանքի զարգացման պահանջները»։*

Ընկեր Ստալինի ուսմունքը հասարակական իդեաների և թեորիաների մասին, հնարավորություն է ընձեռնում մեկնաբանելու ժողովրդի ինքնուրույն դերը անցյալի առաջավոր իդեաների ընտանեծման գործում, հասկանալու, որ բոլոր մեծագույն երևույթներն արվեստի մեջ հենված են առաջավոր իդեաների վրա և տվյալ պատմական ժամանակաշրջանում արտահայտում են ժողովրդի հայացքներն ու ձգտումները։ Սակայն առաջավոր իդեաները պատմականորեն զարգացել են բարդ և հակասական պայմաններում, ինչպես բարդ և հակասական է եղել ժողովրդի պատմական կեցությունը սեփականատիրական հասարակարգում։ Պրոլետարիվ դեմոկրատական հայացքները հանդես են եկել տարբեր ձևերով ու երանգներով, որոնք կարելի է հասկանալ՝ պատմության նկատմամբ գործադրելով մարքսիստական ուսմունքը դասակարգերի մասին։

Ստալինի ուսմունքից բխում է, որ նկարագրության ճշմարտացիությունը՝ ռեալիզմը և հասարակական պատմական ճշմարտությունը գեղարվեստական ստեղծագործության մեջ անբաժանելի են։ Այդպես է ընթացել քննադատական ռեալիզմի զարգացումը սեփականատիրական հասարակության պայմաններում։ Խոսելով սոցիալիստական ռեալիզմի նախադրյալների մասին, մենք առաջին հերթին նկատի ունենք անցյալի գրականության իսկական ռեալիստական ժառանգությունը, քննադատական ռեալիզմը, հատկապես ռուս մեծ ժողովրդի առաջավոր իդեաներով տոգորված գրականությունը։ Ընկեր Ժդանովն ասում է. «... Սովետական գրականության լավագույն տրադիցիան հանդիսանում է 19-րդ դարի ռուսական գրականության լավագույն տրադիցիաների, մեր մեծ ռևոլուցիոն դեմոկրատներ Բելինսկու, Դոբրոլյուբովի, Չերնիշևսկու, Սալտիկով-Շչեդրինի ստեղծած, Պլեխանովի կողմից շարունակված և Լենինի ու Ստալինի կողմից գիտականորեն մշակված ու հիմնավորված տրադիցիաների շարունակությունը»։**

Նշենք ռեալիստական ուղղության, մասնավորապես քննադատական ռեալիզմի մի քանի առանձնահատկությունները։ ռեալիզմը

---

* Համ կ(բ)Պ Պատմություն Համառոտ դասընթաց, էջ 156։

** Ա. Ա. Ժդանով. «Զվեզդա և «Լենինգրադ» ամսագրերի մասին, 1946, էջ 24։

ջայն առումով դրսևորվում է պատմական տվյալ ժամանակաշրջանի առաջավոր իդեաներով օժտված ամեն մի ստեղծագործության մեջ, այն չափով, որքան նրա մեջ յուրացված է իրականությունը: Հետևաբար ռեալիզմի տարրեր կարելի է նկատել տարբեր դարաշրջանների և տարբեր ազգությունների հոգևոր կուլտուրայի մեջ: Այդ ճշմարտության չափը անշուշտ պայմանավորված է պատմական կանոնով և ստեղծագործողի աշխարհայացքի դասակարգային բնույթով:

Կասկածից վեր է, որ միջնադարի վերջը և նոր կապիտալիստական դարաշրջանի սկիզբը «Աստվածային կատակերգության» մեջ գտել է իսոր և ճշմարտացի վերարտադրություն: Բայց դրանից չի հետևում, որ Դանթեի հանճարեղ պոեմը հանդիսանում է ռեալիստական արվեստի օրինակ: Նույնը կարելի է ասել և Նարեկացու «Մատյան ողբերգության» մասին: Սակայն այդ երկերի ուժն այն է, որ չնայած միստիկական ձևին, դրանք այս կամ այն չափով արտահայտում են պատմական ճշմարտությունը, հետևաբար բովանդակում են ռեալիզմի տարրեր:

Ռեալիզմի ելակետը արտաքին իրականության ճշմարտացի վերարտադրությունն է. անշուշտ կարևոր նշանակություն ունի նաև բանաստեղծական ձևը, այն բովանդակացած ձևը, որ խտացած կերպով դրսևորում է պատմական իրականության ռեալ բովանդակությունը:

Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ռեալիստական մեթոդին, ռեալիստական ուղղությանը, որը եվրոպական գրականության մեջ ձևավորվում է վերածնության դարաշրջանում:

Վերածնության շրջանի գրականությունն իր ողջ բազմազանությամբ վերարտադրում էր մի թեմա— հումանիստական անհատի պրոբլեմը, որն իր սաղմնավորման շրջանում իսկ կրում էր իր մեջ բուրժուական անհատապաշտության տարրերը: Նորմալ և գեղեցիկ կյանքը, վերածնության արվեստագետների պատկերացումով, դա ազատ ինքնագործունեությունն էր: XVI դարի ռեալիզմի համար այդ թեման այնպիսի դեր է կատարում, ինչպես երազանքի և իրականության, պոեզիայի և ճշմարտության անհաշտելիության թեման XIX դարի ռոմանտիզմի մեջ, ինչպես մարդկային հարաբերությունների վրա բուրժուական հասարակության ազդեցության թեման XIX—XX դարերի քննադատական ռեալիզմի մեջ:

Վերածնության հիմնական թեման ծավալուն կերպով արտահայտվել է Ռաբլեի վեպում, որ հիմնականում ելնում է ժողովրդական մտածողության սկզբունքներից և պարզորոշ ցույց տալիս հումանիստական շարժման դեմոկրատական արմատները: Ռաբլեն նկարագրում է, որ բուրժուական հարաբերությունները ազատագրելով մարդկային անհատին ֆեոդալական կապանքներից, միաժամանակ ստեղծում են նրա համապարփակ սահմանափակության դաժան աղբյուրները:

«Ազատությունից» ծնվեց ոչ ազատությունը, կապիտալիզմի ստրկությունը: Վերածնության կուլտուրայի առաջավոր արվեստագետները ցույց տվին անտագոնիստական հակասությունների մեջ խճճված բուրժուական հասարակության պայմաններում անհատի ազատության իդեալի պատրանքային բնույթը: Վերածնության դարաշրջանը «կարիք ուներ տիտանների և որը ծնեց մտքի, կրքոտության և բնավորության ուժով, բազմակողմանիությամբ և գիտակցությամբ օժտված տիտաններ» (Էնգելս): Ռաբլեի, Շեքսպիրի և Սերվանտեսի ստեղծած կերպարներում արտահայտվել է ազատ անհատականության հնարավորությունների ֆանտաստիկ իդեալականացումը, որը գաղափարական նախադրյալ դարձավ բուրժուական հետագա ազատագրական շարժումների համար:

Շեքսպիրի ստեղծագործության մեջ արտացոլվում է վերածնության իդեական մթնոլորտը, որը դեռևս չի սահմանափակվել բուրժուական հասարակության նորմերով, ուր դեռևս Շեքսպիրի ծննդից կես դար առաջ կարող էր ստեղծվել Թոմաս Մորի «Ուտոպիան», որը տեսության բնագավառում XVI դարի հակակապիտալիստական տենդենցների ամենաարմատական արտահայտությունն էր, ինչպես նույն ժամանակաշրջանի պրակտիկայում ամենաուժեղ լուցիոն իրադարձությունը Թոմաս Մյունցերի գլխավորած շարժումն էր:

Շեքսպիրի ստեղծագործության ուժը պայմանավորված է իր դարաշրջանով, ուր պրոգրեսիվ սոցիալական իդեանները հանդես էին գալիս սոցիալական և կրոնական ճնշումից ազատ մարդկայնության իդեալի կերպարանքով: Շեքսպիրի թեման, ինչպես և հումանիզմի ողջ մտածողությունը, կրում է անտրոպոլոգիական բնույթ: Շեքսպիրը ելնում է ազատ անհատից, որը ռենեսանսի ոգով

իդեալականացված է մինչև հերոսի անտիճանը, իսկ երբեմն ֆանտաստիկ չափերով։

Շեքսպիրի համեմատությամբ Սերվանտեսը մի քայլ առաջ է գնում վերածնության գլխավոր թեմայի զարգացման ուղղությամբ։ Ի տարբերություն Շեքսպիրի, աղատության ուտոպիստական իդեալականացումը նրա մեծ ժամանակակցի ստեղծագործության մեջ հանդես է գալիս կոմիկական կողմերով։ Սերվանտեսը ընդգծում է ցնորամիտ ասպետի հումանիստական իդեանների և բուրժուական պրակտիկայի հակասությունը։

Գեղարվեստական կերպարներում սոցիալական հարցերի մեկնաբանման ուղղությամբ, Շեքսպիրից հետո բուրժուական ռեալիզմը հսկայական ճանապարհ անցավ։ Այդ պատճառով էնգելսը տարբերում է շեքսպիրյան կենդանությունը և գործողության հարստությունը պատմական դիտակցական բովանդակությունից, որը հետագա ժամանակաշրջանի գեղարվեստական մտածողության արդյունք էր։

Վերածնության ռեալիզմը կերպարների ստեղծման իր սկզբունքներով հանդիսանում էր անցում մինչ-բուրժուական նախնական ռեալիզմից բուրժուական հասարակության գրականությանը, ավելի ճիշտ XVII դարի գրականությանը, ուր արվեստական հերոսականությունը և կենցաղային ռեալիզմը հակադրվում են որպես միմյանց հակադիր և միաժամանակ որպես միմյանց լրացնող նախասկիզբ։ Ռաբլեի, Շեքսպիրի, Սերվանտեսի ստեղծագործություններում արտացոլվում է անցումն դեպի քաղաքացիական հասարակությունը; ուր նյութական շահերի աշխարհը մասնավոր մարդկանց հակադիր շահերի ձև ընդունեց։

Իրենց նյութական առավելության վրա հենված, էքսպլուատորեն գործող այդ անհատների «... վոխադարձ բախումն ստեղծում էր նրանց համար իրենցից վեր կանգնած խորթ հասարակական ուժ, նրանց վոխգործունեությունը հանդես էր գալիս որպես իրենցից անկախ պրոցես և իշխանություն»։*

Հասարակական մարդու ստրկացման այդ պրոցեսը, նրա ահավոր դեգրադացիան բազմակողմանիորեն արտացոլվել է քննադատական ռեալիզմի ստեղծագործական զարգացման մեջ։ Բուր-

---

* Архив Маркса и Энгельса, հ. IV, էջ 171։

ժուական դրականության ամենաբնորոշ ժանրը վեպն էր, որը մարդկային հարաբերությունների լայն ընդգրկումով դարձավ բուրժուական հասարակության էպոսը: Սակայն բուրժուական վեպը զուրկ էր էպոսի օրգանական հատկությունից, իսկական հերոսներից և հերոսականությունից:

Դասակարգային անտագոնիստական հասարակության մեջ, նյութական հարաբերությունների աշխարհում, ուր մարդը կորցրել էր պիտակցական իշխանությունը և իրերն էին իշխում որպես արտաքին ուժ, որպես ճակատագիր, ուր խեղդվում էր մարդու ստեղծագործական կամքը, ուր արվեստը զրկվում էր իր բնական հողից, չէր կարող ստեղծվել իսկական էպոս:

Միայն սոցիալիստական իրականության մեջ մարդկային անհատը բարձր աստիճանի վրա վերաստեղծում է իր իսկական էությունը, դրսևորում մարդկային բնության ողջ հարստությունը: Սովետական մարդը մեր իրականությունն ընկալում է որպես իր արիության արտացոլում, որպես կեցության բարձրագույն ձև, որը աշխարհի նկատմամբ, նոր էպիքական վերաբերմունքի և գիտական երազանքի անսահման հնարավորություններ է ստեղծում:

Հակառակ հնագույն էպոսի, որ վաղեմի ժամանակներում ստեղծվել է նախնական պրիմիտիվ կոլեկտիվիզմի և դիցաբանական մտածողության հիման վրա, սովետական գրականության մեջ ձևավորվող նոր էպոսը հենվում է սոցիալիստական աշխատանքի, սովետական հայրենասիրության, աննախընթաց հարուստ զգացմունքների և բարձր ինտելեկտի վրա: Գորկին ճշտորեն դիտել է, որ «աշխատավոր մասսաների գեղարվեստական ստեղծագործությունը չի անհետացել, չի սպառվել դարավոր բռնի, տաժանակիր աշխատանքում՝ ամենակարող անհատի համար, որը հնարել էր միստիկական աստծուն իր կեցության արդարացման համար. մենք պետք է ընդունենք, որ աշխատավոր մասսաների պատկերավոր խոսքի կարողությունը ստեղծվում է և պետք է ստեղծվի, որովհետև ուսուցիան մարդուն ազատագրում է ոչ միայն սոցիալապես, ֆիզիկապես, այլ զգացմունքներով, մտածողությամբ»:*

Անհրաժեշտ է նշել քննադատական ռեալիզմի մի կարևոր առանձնահատկությունը ևս. բուրժուական իրականության մեջ ռեա-

---

* М. Горький. О литературе, изд. 3-е, էջ 73:

լիզմի զարդացումը հանգում էր գեղեցկության էսթետիկայի ժխտման։ Դա միանգամայն օրինաչափական էր։ Ռեալիստական խորաթափանց միտքը դրսևորում էր բուրժուական կյանքի անհաշտելի հակասությունները, բուրժուական քաղաքակրթության ողջ այլանդակությունը, մարդկային անհատի բարոյալքումը և կործանումը։ Պատահական չէ, որ մեծ ռեալիստների մոտ գեղեցկության ձգտումը երբեմն հանդես է գալիս որպես անիրագործելի երազանք բուրժուական կարգերում, երբեմն էլ մարմնավորվում որպես իդեալական կերպար։ Գորկին առաջին արվեստագետն է, որ գեղարվեստորեն բացահայտեց մարդու իսկական գեղեցկությունը, որի «աշխատանքը և երևակայությունը ստեղծել են այն ամենը, ինչ երկրի վրա մեծ է և գեղեցիկ» (Գորկի)։ Սովետական դրականության լավագույն կերպարները՝ Դ. Ֆուրմանովի Չապաևը, Ա. Ֆադեևի Լևինսոնը, Ա. Տոլստոյի Իվան Գորան, Ն. Օստրովսկու Կորչագինը, Մ. Շոլոխովի Դավիդովը, մասնավորապես Հայրենական Պատերազմի տարիների գրականության դյուցազնական կերպարները, որոնք ընթերցողի մեջ հարուցում են զարմանք, ուրախություն, հպարտություն սովետական մարդու անսահման վեհ կարողությունների հանդեպ, պերճախոս կերպով հաստատում են, որ սովետական գրականության մեջ ռեալիզմը օրգանապես ձուլվել է գեղեցկության և հերոսության էսթետիկայի հետ։

Գնահատելով Բալզակի ռեալիզմը, Ինգելսը ասում է. «Միակ մարդիկ, որոնց մասին նա խոսում է անկեղծ հիացմունքով՝ դրանք նրա ամենակատաղի հակառակորդներն են cloître saint Merri-*ի հանրապետական հերոսները, մարդիկ, որ այդ ժամանակ (1830—1836) իրոք ժողովրդական մասսաների ներկայացուցիչներն էին։ Այն, որ Բալզակը հարկադրված էր դեմ գնալու իր սեփական դասակարգային համակրություններին և քաղաքական նախապաշարումներին, ա՛յն, որ նա տեսավ իր սիրած արիստոկրատների անկման անխուսափելիությունը և նկարագրեց նրանց որպես մարդկանց, որոնք արժանի չեն ավելի լավ վիճակի, և այն, որ նա ապագայի իսկական մարդկանց տեսավ այնտեղ, ուր միայն կարելի էր գտնել նրանց այդ ժամանակ,— այդ ես համարում եմ ռեալիզմի մեծագույն հաղթանակներից մեկը, ծերունի Բալզակի մեծագույն առանձնահատկություններից մեկը»։**

** Մարքսը և Ինգելսը արվեստի մասին, էջ 261։

Բալզակի ստեղծագործությունը քննադատական ռեալիզմի խոշորագույն հաղթանակներից մեկն է: Մերձենալով կապիտալիզմին հակադրվող կենդանի ուժերին, Բալզակը կարողացավ հաղթահարել իր աշխարհայացքի դասակարգային սահմանափակությունը և հիացմունքով նկարագրել իր կատաղի հակառակորդներին՝ ապագայի իսկական մարդկանց: Ապագայի երազանքը և կանխազգացումը, քննադատական ռեալիզմի այս կարևոր հատկությունը, առավել մեծ ուժով արտահայտվել է ռուս գրականության մեջ: Պուշկինը, Լերմոնտովը, Գոգոլը, Չերնիշևսկին, Տոլստոյը, Չեխովը իրենց ժամանակի մեջ որոնում էին ուժեր, որոնք իրենց հայացքը հառել են ապագային: Այս հատկությունը անցյալի մեծ ռեալիստներին կապում է սոցիալիստական ռեալիզմի հետ: Սակայն եթե ապագայի կանխատեսումը միայն մի մոմենտ էր քննադատական ռեալիզմի մեջ, արտահայտված գերազանցապես տարերայնորեն, ապա սոցիալիստական ռեալիզմի մեջ ապագայի կանխատեսումը հիմնական հատկություն է, նրա գոյության ձևերից մեկը:

Բուրժուական իդեոլոգիայի, մասնավորապես գրականության բախտի համար մեծ նշանակություն է ունեցել 1848 թվի ռևոլուցիան և պրոլետարիատի առաջին ինքնուրույն ապստամբությունը: 19-րդ դարի երկրորդ կեսից, երբ արդեն Եվրոպայում շրջում էր կոմունիզմի ուրվականը, գրականության և կուլտուրայի բնագավառում սկսվում է ռեալիստական ոճի քայքայումը, ավելի ու ավելի ծավալվում է բուրժուական կարգերի ջատագովությունը:

Իմպերիալիզմի դարաշրջանում բուրժուական գեղարվեստական կուլտուրան ապրում է իր ճգնաժամի և վերասերման պրոցեսը. ռեալիզմը քայքայվում, վերածվում է հակառեալիստական միստիկական ուղղությունների, ուր տիրում են «կորած սերնդի» կերպարները: Քննադատական ռեալիզմի որոշ տրադիցիաները շարունակող արվեստագետները (Անատոլ Ֆրանս, Ռոմեն Ռոլան) այդ ճգնաժամից կարողացան ազատվել միայն ռուսական ռևոլուցիոն ջարժման կենարար ազդեցության շնորհիվ:

Բուրժուական գրականության ռեակցիոն բովանդակությունն իր ողջ ծիրկությամբ դրսևորվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: «Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով ամրապնդվեցին սոցիալիզմի դիրքերը, սոցիալիզմի հարցը օրակարգում է դրված Եվրոպայի շատ երկրներում: Դա դուր չի

գալիս ամեն գույնի իմպերիալիստներին, նրանք վախենում են սոցիալիզմից, վախենում են մեր սոցիալիստական երկրից, որը օրինակ է հանդիսանում ամբողջ առաջավոր մարդկության համար» (Ժդանով)։ Այժմ, Արևմտյան Եվրոպայում Բալզակի, Ստենդալի և Դիկկենսի լեզվով միջազգային ռեակցիայի սպասավորները փորձում են ժողովրդական մասսաներին վախ ներշնչել քարոզելով պեսիմիզմի, սիմվոլիզմի և խավարամտության ամենատարբեր իդեաներ։

Ատոմային դիվանագիտության շանտաժի մեթոդները փոխադրելով կուլտուրայի բնագավառը, արևմտաեվրոպական պեսիմիստները ձգտում են ժողովրդական մասսաներին համակել տագնապով և անվստահությամբ ապագայի հանդեպ։ «Այս պայմաններում սովետական գրականության խնդիրն է՝ ոչ միայն հարվածին պատասխանել հարվածով ընդդեմ այդ ամբողջ նողկալի զըրպարտության ու հարձակումներին մեր սովետական կուլտուրայի, սոցիալիզմի վրա, այլև համարձակորեն խարազանել և հարձակում գործել հյուծախտի և նեխման վիճակում գտնվող բուրժուական կուլտուրայի վրա» (Ժդանով)։

* * *

Սովետական գրականության ստեղծագործական մեթոդը՝ սոցիալիստական ռեալիզմը ընկեր Ստալինը սահմանել է 1932 թ., ՀամԿ(բ)Պ Կենտկոմի ապրիլյան պատմական որոշումից հետո։ Սոցիալիստական ռեալիզմի մեթոդի բնորոշման մեջ խորացվել և կենսագործվել են Մարքս-Լենինյան էսթետիկայի հիմնական սկզբունքները գեղարվեստական գրականության ռեալիզմի, պարտիականության և ժողովրդային բնույթի մասին։ Սոցիալիստական ռեալիզմի մեթոդի սահմանումով ընկեր Ստալինը հանճարեղ կերպով ընդհանրացրեց սովետական իրականության մեջ տեղի ունեցող մարդկային կյանքի մեծագույն առաջընթաց շարժումը սոցիալիզմից դեպի կոմունիզմ և դրա հիման վրա ստեղծվող իրականության գեղարվեստական արտացոլման նոր սկզբունքը։ Ինչպես սովետական հասարակությունը արմատապես տարբերվում է մարդկային պատմության նախորդ դարաշրջաններից, այնպես էլ սովետական գրականությունը և իրականության գեղարվեստական արտացոլման նրա մեթոդը արմատապես տարբերվում է կլասիկ ռեալիզմի ստեղծագործական մեթոդից։

Սովետական գրականության և քննադատության ստեղծագործական մեթոդը հենում է ընկեր Ստալինի սահմանած մատերիալիստական դիալեկտիկայի այն սկզբունքից, որի համաձայն իրականության երևույթները պետք է դիտել ոչ թե առանձին վիճակում, այլ ևոլուցիոն փոփոխման մեջ և կարողանալ այսօրվա մեջ կանխատեսել գալիքը: «Եթե աշխարհը գտնվում է անընդհատ շարժման ու զարգացման մեջ,— գրում է ընկեր Ստալինը,— եթե հնի մահացումը և նորի աճումը զարգացման օրենք է, ապա պարզ է, որ այլևս չկան «անխախտ» հասարակական կարգեր, մասնավոր սեփականության և շահագործման «հավերժական սկզբունքներ», դյուզացիներին կալվածատերերին ենթարկելու, բանվորներին կապիտալիստներին ենթարկելու «հավերժական իդեաներ»:

Նշանակում է, կապիտալիստական հասարակարգը կարելի է փոխարինել սոցիալիստական հասարակարգով, այնպես, ինչպես որ կապիտալիստական հասարակարգն իր ժամանակ փոխարինեց ֆեոդալական հասարակարգին:

Նշանակում է, պետք է կողմնորոշվել ոչ թե դեպի հասարակության այն խավերը, որոնք այլևս չեն զարգանում, թեպետ և ներկա մոմենտին գերակշռող ուժ են հանդիսանում, այլ դեպի այն խավերը, որոնք զարգանում են, ապագա ունեն, թեպետ և ներկա մոմենտին գերակշռող ուժ չեն հանդիսանում»:*

Սոցիալիստական ռեալիզմի մեթոդի փիլիսոփայական հիմքը աշխարհի դիալեկտիկական-մատերիալիստական ըմբռնումն է, որն սկզբունքորեն տարբերվում է բուրժուական ռեալիզմի մեթոդի փիլիսոփայական հիմքը հանդիսացող՝ արտաքին աշխարհի գլխավորապես մետաֆիզիկական ըմբռնումից:

Սոցիալիստական ռեալիզմի էությունն ամբողջությամբ հասկանալի է դառնում, երբ այն դիտում ենք մեր իրականության մեջ տեղի ունեցած իրադարձությունների և սոցիալիստական կուլտուրայի ստալինյան մեկնաբանության լույսի տակ:

Դեռևս 1925 թ. ընկեր Ստալինը սովետական կուլտուրան բնորոշեց որպես ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրա. 1937 թ. ամերիկյան բանվորական առաջին պատվիրակության հետ ունեցած զրույցի ժամանակ ընկեր Ստալինը նշեց նաև կոմունիզմի էական հատկություններից մեկը՝ արվեստի բացառիկ զարգացման բոլոր նախադրյալների առկա-

* Համ կ (բ) Պ Պատմություն. Համառոտ դասընթաց, էջ 147:

688—8

յությունը: Կոմունիզմը կլինի մի հասարակություն, «որտեղ պետությունը և արվեստը լիակատար ծաղկման հասնելու համար բավականաչափ բարենպաստ պայմաններ կվայելեն»:*

Արվեստի լիակատար ծաղկումը, աշխատավոր մասսաների իսկական էսթետիկական աճումը հնարավոր է միայն մեր երկրում, որտեղ ստեղծված է դեմոկրատիայի ռևալ հիմքը, ուր արվեստը դեմոկրատական է իր էությամբ: Սոցիալիզմը ստեղծում է մարդկության գեղարվեստական զարգացման բոլոր հնարավորություններն: Սոցիալիզմը և սովետական դեմոկրատիայի պարպայումը մարդկային ստեղծագործ մտքի վերածնության սկիզբն է:

Ընկեր Ստալինը տահմանել է սովետական գրողի դերը սոցիալիստական հասարակարգում, որպես «մարդկային հոգու ճարտարապետ». այսպիսով առաջին պլանի վրա է մղված գրողի և նրա աշխատանքի գործնական ստեղծողական դերը: Արվեստագետը ոչ միայն դրսևորում է մարդուն, այլև ձևավորում է նրա մտքերն ու զգացմունքները: Սովետական գրողը մեր կյանքի կողմնակի դիտողը չէ, նա չի կարող առանձնանալ «փղոսկրե ամրոցում», նա ակտիվ կերպով մասնակցում է ժողովրդի ստեղծագործ աշխատանքին ու պայքարին, սովորեցնում է ժողովրդին և սովորում ժողովրդից: Սովետական գրողը արվեստագետի նոր տիպար է, օրգանապես ձուլված ժողովրդի հետ: Գրողի այս նոր տիպը ստեղծեց միայն մեր իրականությունը:

Այնուհետև, սովետական արվեստի զարգացման տարբեր էտապներում ընկեր Ստալինը տվել է մի շարք բնորոշումներ և դրույթներ, որոնց նշանակությունը մինչև այժմ դեռևս ամբողջությամբ չի գիտակցվել: Հիշենք Մայակովսկու ստալինյան գնահատականը, Գորկու «Աղջիկը և մահը» պոեմի էջերից մեկի վրա կատարված մակագրությունը «այս գործն ավելի ուժեղ է, քան Գյոթեի Faustը (սերը հաղթում է մահին)», սովետական կինեմատոգրաֆիային առաջադրած խնդիրները, որ ամբողջությամբ վերաբերվում է նաև գրականությանը և վերջապես «Խաղաղ Դոն» օպերայի ստեղծագործական կոլեկտիվին ընկեր Ստալինի տված ցուցումը՝ սովետական կլասիկայի ստեղծման մասին:

Սոցիալիստական աշխատանքի բուռն պրոցեսում ստեղծվեց սովետական նոր մարդը, որն իր ստեղծագործ աշխատանքով վըճ-

---

* Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, 1937, էջ 292:

ում էր պատմության բախտը: «Ժողովուրդների և պետությունների բախտը հիմա վճռում են ոչ միայն առաջնորդները,— ասում է ընկեր Ստալինը,— այլ ամենից առաջ և պլխավորապես՝ աշխատավորների միլիոնավոր մասսաները: Բանվորներն ու գյուղացիները, որոնք առանց ազմուկի և ճարճատյունի կառուցում են գործարաններ ու ֆաբրիկաններ, հանքահորեր ու երկաթուղիներ, կոլտնտեսություններ ու խորհտնտեսություններ, ստեղծում են կյանքի բոլոր բարիքները, կերակրում ու հագցնում են ամբողջ աշխարհին,— ահա թե ովքեր են նոր կյանքի իսկական հերոսներն ու ստեղծողները»: Սոցիալիստական հասարակության մարդու համար աշխատանքը դարձել է պատվի, փառքի և հերոսության գործ, սովետական մարդը աշխարհը ընկալում է որպես իր ստեղծագործության, որպես իր արիության մարմնացում:

Միանգամայն տարբեր էր հին դրականության հերոսի բախտը: Նախորդ ֆորմացիաներում հասարակական հարաբերությունները հանդես էին գալիս մարդուց անկախ, որպես ճակատագիր, որպես կարծր աշխարհ, ուր մարդու ստեղծած իրերն ու առարկաները ներկայանում էին իշխողի դերով, մարդկային անհատը խեղաթյուրվում էր ֆետիշային գիտակցության տիրապետությունից: Մասնավոր սեփականության հերոսները՝ Հայր Գորիոն, Ռաստինյակը, Ժուլյեն Սորելը, Չիչիկովը, Կարամազովը, Կարենինը, Անդրեաս Էլիզբարովը, Սմբատ Ալիմյանը,— կապիտալիստական մրցման իսկական հերոսներն էին: Որքան էլ տարբեր լինեն այդ մարդիկ, բայց նրանցից ամեն մեկի մեջ արտացոլված է «խեղաթյուրված աշխարհը, հեռացումը և նենգափոխումը մարդկային բոլոր բնական հատկությունների» (Մարքս): Միայն այդպիսին կարող էր լինել կապիտալիստական մրցության հաղթող հերոսը: Նա չէր վիճակի չէր ըմբռնելու իր ահավոր խեղաթյուրումը: Չճաշակելով ոչ մի իսկական զգացում, Սմբատ Ալիմյանը հանգում է հուսահատական եզրակացության. «ի՞նչ ասել է եղբայրական սեր, եթե ոչ մի հին նախապաշարում: Նույնն է և որդիական սերը: Բոլորը դատարկ, անիմաստ զգացումներ են, որ մարդիկ արվեստականորեն զարգացրել են իրենց մեջ դեռ վայրենության դարերում: Այո, կեղծ են բոլոր արյունակցական զգացմունքները, ինչպես կեղծ է առհասարակ մարդկային զգացումների իննսուն տոկոսը: Միայն մի զգացում է արմատական, անկեղծ և անջնջելի— եսասիրությունը»

(Շիրվանզադե, «Քաոս»)։ Ահա կապիտալիստական կոնկուրենցիայի հերոսի «փիլիսոփայությունը», անցած, բայց չապրած կյանքի, տեղի չունեցած կյանքի ընդհանրացումը։

Այս ողբերգությունն է արտահայտել Գորկին իր «Եգոր Բուլըչևը և ուրիշները» հիանալի պիեսում։ Եգոր Բուլըչևը հին աշխարհի վերջին հերոսն է։ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայի նախօրեին նա ամփոփում է իր բոլոր նախորդների փորձը, դրսևորում է նրանց իսկական բախտը՝ խեղաթյուրված, աղքատացած, ինքնակործանարար, չնայած առերևույթ հաղթական բնույթին։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիան և սոցիալիստական շինարարությունը ազատագրեցին մարդուն իրերի խեղաթյուրումից, բոլոր կեղծ, ոչ իսկական, ոչ մարդկային զգացումներից և ձգտումներից։ Մարդու բնությունը օժտվեց իր իսկական գեղեցկությամբ և դրսևորեց իր անսպառ ստեղծագործական ուժերը, իր անսահմանափակ զարգացման կարողությունը։ Ազնիվ և ամբողջական զգացումներ, ճշմարիտ և խոր մտքեր, մարդու ստեղծագործ ոգու ազատություն — ահա՛ ինչի համար է մարտնչել սովետական ժողովուրդը բոլշևիկյան պարտիայի գլխավորությամբ։

Մեր գրականությունը դեռևս երիտասարդ է։ Նոր դարաշրջանի արվեստի համար երեսուն տարին մեծ ժամանակաշրջան չէ, երեսուն տարի, որի ընթացքում տեղի է ունեցել «ամենավճռական անջատումը անցյալից ժառանգած իդեաներից» (Մարքս)։ Մեր ժամանակի հերոսը գրականության մեջ դեռևս չի արտացոլված իր ողջ բազմակողմանիությամբ։ Սակայն այն, ինչ ստեղծել է մեր գրականությունը, մեր իրականության հերոսի այն առանձնահատկությունը, որ դրսևորել է նա, բոլոր հիմքերը տալիս են խոսելու գրականության նոր հերոսի մասին, որի կյանքը նրան չի վերածում իր հակադրության, այլ ստեղծում է նրա անհատական հատկությունների զարգացման բոլոր նախադրյալները։

Սովետական մարդու կերպարը ցայտուն կերպով արտահայտվել է այն ստեղծագործությունների մեջ, ուր ճշտորեն կենսագործվել են սոցիալիստական ռեալիզմի սկզբունքները. ինչպես Մայակովսկու պոեզիան, Ա. Սերաֆիմովիչի «Երկաթե հեղեղը», Դ. Ֆուրմանովի «Չապաևը», Մ. Շոլոխովի «Խաղաղ Դոնը» և «Հերկած խո-

պանը», Ա. Տոլստոյի «Պետրոս Առաջինը», Ն. Օստրովսկու «Ինչպես էր կուվում պողպատը», Ա. Ֆադեևի «Ջախջախումը» և «Երիտասարդ գվարդիան», Կ. Սիմոնովի «Ռուսական հարցը», Չիրսկովի «Հաղթողները», Բ. Պոլեվոյի «Իսկական մարդը» և այլն:

Սոցիալիստական ռեալիզմի մեթոդի կենսագործումով նշանակալից հաջողություններ է ունեցել սովետահայ գրականությունը: Սոցիալիստական ռեալիզմի նախակարապետը մեր գրականության մեջ Հ. Հակոբյանն է: Դեռևս նախահեղափոխական շրջանում սերտորեն կապվելով Անդրկովկասի ռևոլուցիոն շարժման հետ, բոլշևիկների պարտիայի հետ, Հ. Հակոբյանն ի վիճակի եղավ գեղարվեստորեն վերարտադրելու պրոլետարիատի, որպես պատմության ստեղծողի, ապագան: Սոցիալիստական ռևոլուցիայից հետո, իր ստեղծագործական պրակտիկայում միաձուլելով ռևոլուցիոն ռոմանտիկան ռեալիզմին, Հակոբյանը ստեղծեց մի քանի նշանակալից երկեր, ինչպես «Բոլշևիկ է Շիրկանալը», «Վոլխովստրոյ» և այլն, որոնց մեջ հանդես եկող սովետական իրական մարդը բանաստեղծի երազած իդեալական հերոսն էր:

Հաղթահարելով հոգեբանական անհեռանկար ռեալիզմը, Դեմիրճյանը և Զորյանը սովետական իշխանության գոյության առաջին իսկ տարիներին ստեղծեցին մեր կյանքի մի շարք տիպական առանձնահատկությունները ընդգրկող երկեր. հիշենք Դեմիրճյանի «Սաթոն», «Ընկերները», «Մերկեն», «Ֆոսֆորային շողը», «Կապուտանը», Ստ. Զորյանի «Հեղկոմի նախագահը», «Գրադարանի աղջիկը», «Սպիտակ քաղաքը»: Նախահեղափոխական շրջանում Արազին ստեղծել է ռևոլուցիոն բովանդակությամբ տոգորված փոքրիկ պատմվածքներ, սակայն կյանքի իսկական հերոսներին Արազին գտավ մեր իրականության պայմաններում, ստեղծելով «Ընկեր Մուկուչը», «Լուսանի շողերով», «Քրվեժի ցոլքում» պատմվածքները: Քոչարի, Սիրասի, վ. Անանյանի, Ստաֆֆու, Գ. Սեվունցի, Գ. Բեհբուդի և ուրիշների գրական վաստակի մեջ նշանակալից տեղ են գրավում սոցիալիստական ռեալիզմի իդեաններով տոգորված երկերը:

Ավելի ցայտուն են սովետահայ պոեզիայի նվաճումները սոցիալիստական ռեալիզմի կենսագործման բնագավառում: Հիշենք Ն. Զարյանի բոլշևիկյան պարտիականությամբ տոգորված ստեղծագործությունը, Գ. Սարյանի լիրիկական պոեզիայի նշանակալից մասը, որն արտացոլում է մեր ժամանակի առաջավոր մարդկանց

դու մտքերի ու զգացմունքների աշխարհը. ապագա հասարակությունը պատկերող Սարմենի «Թռիչք» ժողովածուն, Ս. Վահունու ռոմանտիկական բալլադները, Տարոնցու, Բորյանի, Շիրազի մի շարք ստեղծագործությունները: Սովետահայ գրականությունը ստեղծել է մեր ժամանակի առաջավոր գաղափարներով տոգորված բազմաթիվ երկեր, բայց մեր ժողովրդի էսթետիկական բարձր պահանջները բավարարելու համար կատարածը դեռևս անբավարար է: Սովետահայ գրականության հետագա էլ ավելի բուռն զարգացումը պայմանավորված է այն խնդիրների կենսագործումով, որ սովետական գրականությանը առաջադրել է բոլշևիկյան պարտիան իր նշանավոր որոշումների մեջ:

* * *

Անգնահատելի է Գորկու դերը սոցիալիստական ռեալիզմի մեթոդի գեղարվեստական կենսագործման և տեսական մեկնաբանության մեջ:

Ռևոլյուցիոն վերելքի ժամանակաշրջանը, սոցիալիստական ռևոլյուցիայի նախապատրաստումը և իրագործումը Գորկու երկերում արտացոլվել են արվեստի չգերազանցված ուժով: Իր ստեղծագործություններով Գորկին հավաստում էր կոմունիզմի իդեաների ամենահաղթ ուժը:

Ռևոլյուցիոն վերելքը, բոլշևիկների պարտիայի գործունեությունը, մարքսիզմի զարգացումը Լենինի աշխատություններում, ահա՛ թե ինչն էր ձևավորում Գորկուն որպես հրապարակախոս և արվեստագետ: Լենինը առաջադրեց գրականության պարտիականության սկզբունքը, որը Մարքսից և Էնգելսից հետո նոր աստիճանի էր բարձրացնում մարքսիզմի գրական տեսությունը: Լենինի ուսմունքը Գորկուն հասցրեց այն եզրակացության, որ ռևոլյուցիոն պայքարի վեհությունը գեղարվեստորեն արտահայտելու համար՝ անհրաժեշտ է միացնել ռեալիզմը և ռևոլյուցիոն ռոմանտիկան:

Գորկին առաջին արվեստագետն էր, որ ժողովրդին նկարագրեց ոչ թե որպես պատմության պասսիվ, տառապող օբյեկտ, այլ որպես պատմության գործոն սուբյեկտ, որը ընթանում է սեփականատիրական կյանքի այլանդակությունները հաղթահարելու ուղիով:

Իրականությունը անսպառ պաշար էր տալիս Գորկուն վերարտադրելու մարդկային անհատի խեղաթյուրումը։ Կոնովալով, Գրիգորի Օրլով, Եմելյան Պիլյայ, Միխայիլ Վլասով, հատակի մարդիկ, մարդիկ, որոնց թողել է իրականությունը, հեռու շպրտել իսկական կյանքից։ Օկուրովյան իրականության թանձր կեղտը ներծծել է մարդկային լավագույն հատկությունները։

Սակայն Գորկու ստեղծագործության իմաստը չի սպառվում սեփականատիրական կյանքի այլանդակությունների նկարագրությամբ։ Այդ պատճառով Գորկու մոտ չկա կարեկցանք առաջացնելու ձգտում։ Գորկուն խորթ է կեղծ հումանիզմը։ Ժողովրդական կյանքի և բնավորությունների գորկիական նկարագրության առանձնահատկությունն այն է, որ մարդկանց ռեալ կեցության խեղաթյուրման նկարագրով Գորկին ձգտում էր բարձրացնել ժողովրդի գործունեության կամքը, մարդկայնության ծարավը։

«Ընթացողի նոթերում» Գորկին ասում է. «Վատ կյանքը այդպես էլ կշարունակվի մինչև այն պահը, քանի մարդը չի հասկացել, որ նրա հիմնական հատկությունը պետք է լինի հիանալ ինքն իրենով»։ Այդ հիացումը մարդկային անհատով, նրա հզորության գիտակցումը հնարավորություն ընձեռնեց Գորկուն բացահայտել մարդկային իսկական զգացմունքների ակունքը։ Գորկու երկերի մեջ հոծ խմբերով ապրում են իրենց հատկություններով ու բնավորություններով տարբեր մարդիկ, նրանցից ամեն մեկը հետաքրքիր է յուրովի, ամեն մեկը մարմնավորում է մարդկային երջանկության և ազատության վաղեմի ծարավը։ Կյանքի հատակում հնչում է Սատինի ջերմ խոսքերը մարդու վեհ նշանակության մասին։ «Աղջիկը և մահը» հեքիաթում սիրո ուժի և կյանքի ձգտման հանդեպ խույս է տալիս մահը։ Քաղքենիական կյանքի անձուկ և բիրտ պայմաններում խեղաթյուրված Գրիգորի Օրլովը երազում է արիության մասին։

Գորկու տիպերի և բնավորությունների բազմազանությունը, արվեստի աննկրկնելի ուժով դրսևորում է ժողովրդի ռևոլյուցիոն ակտիվության արթնացումը և սեփականատիրական հարաբերությունների անխուսափելի կործանման նախազգացումը։

Արվեստագետի քննախույզ հայացքով Գորկին կարողանում էր նկատել վերահաս ռևոլյուցիոն հասունության բոլոր հատկանիշ-

ներ: Պարտիական դրականագետի և հրապարակախոսի կրքով նա մերկացնում էր բուրժուական սնիկականատիրական կյանքի նողկալի բովանդակությունը:

Մարդկային իսկական ձգտումները կարող են ստեղծվել և զարգանալ միայն հեղափոխական ակտիվության մեջ: «Մայրը» վիպակի կերպարներում, Նիլովնայի կյանքի նկարագրի մեջ, Գորկին ցույց է տվել, որ սոցիալիզմի համար մղած պայքարում ծնվում է ժողովրդի մարտական անմահ ոգին, ազատագրվում է բիրտ հարաբերությունների նախապաշարումներից: Նրա ժողովրդական դանդվածները մասնակցելով կյանքի վերափոխմանը ազատագրվում են կապիտալիզմի արատներից, ապա սնիկականատիրական դասակարգերը ծավալվող հեղափոխության վերելքի պայմաններում հասնում են բարոյական ուժասպառման և մարդկայնության կորուստի: Կապիտալիզմի վերջին բևեռներին Գորկին նշանավակել է իր գեղարվեստական երկերում և հրապարակախոսական հոդվածներում: Յակով Արտամոնովի, Բերդնիկովի և Դաստիգաևի կերպարներում, իր ուղերձների մեջ «մեխանիկական քաղաքացիներին» և «կուլտուրայի վարպետներին» Գորկին ցույց տվեց կապիտալիզմի պաշտպանների ցինիզմը և անանկությունը:

Հեղափոխության Թշնամիների ցասկոտ մերկացումները անցնում են Գորկու ողջ ստեղծագործության մեջ: Գորկին մերկացնում է Բարդիննների («Թշնամիներ») քաղցրավուն լիբերալիզմի արժեքը այն պահին, երբ Լենինը, հակառակ լիբերալ բուրժուազիային մերձենալու մենշևիկյան դիմումների, սնիկականորեն հիմնավորեց բանվոր դասակարգի առաքելության ինքնուրույնությունը հեղափոխության մեջ: Կլիմ Սամգինի կերպարով Գորկին ցույց տվեց հեղափոխության դավաճանի արդահատելի կերպարանքը: Սամգինը հավաքական կերպարն է կապիտալիստական հասարակության այն տականքների, որոնք ամբողջապես թունավորված էին անհատապաշտությամբ և օգտագործվում էին կապիտալիստների կողմից դիվերսիոն և վնասարարական ակտերի համար:

«Կլիմ Սամգինի կյանքը» Ռուսաստանի 40 տարվա իրադարձությունների էպոպեան է: Գորկու մտահղացումով, վեպը պիտի ավարտվեր Լենինի Պետերբուրգ հասնելու նկարագրությամբ և Սամգինի մահվամբ: Լենինի կերպարը անցնում է ամբողջ վեպի

մեջ, բոլշևիկ Կոստուղովի խոսքերում տրված են պայքարի լենինյան և ստալինյան ձևակերպումները:

Գորկու ստեղծագործությունը ոգեշնչվում էր սոցիալիզմի կառուցման պաֆոսով, Գորկին «կոմունիզմի գործի համար մղվող պայքարի մեծ ոգեշնչողն էր» (Մոլոտով):

Սոցիալիստական ռեալիզմի մեթոդի սահմանումով ընկեր Ստալինը բացահայտեց սովետական գրականության զարգացման հեռանկարը: Հենվելով սովետական գրականության մեթոդի ստալինյան բնորոշման վրա, Մ. Գորկին հանդամանորեն զբաղվեց սովետական գրականության ստեղծագործական մեթոդի տեսական մեկնաբանության հարցերով, որոնք անմիջորեն բխում էին սովետական գրականության առաջ ծառացած մեծ խնդիրների լուծման անհրաժեշտությունից: Համկ(բ)Պ Կենտկոմի 1932 թ. ապրիլյան որոշումը մեր երկրում տեղի ունեցած հասարակական ու ստեղծագործական մեծ իրադարձությունների կազմակերպչական եղրակացությունն էր, որ նոր ուղիներ նշեց սովետական գրականության զարգացման համար:

Ընկեր Ստալինը գրում է. «1930—1934 թվականներին բոլշևիկների պարտիան լուծեց Պրոլետարական Revolուցիայի պատմական խնդիրը, որն իշխանությունը նվաճելուց հետո ամենադժվարինն էր,— միլիոնավոր մանր սեփականատիրական գյուղատնտեսական անտեսությունների վերադրումը կոլտնտեսությունների ուղու վրա, սոցիալիզմի ուղու վրա:...

Որպես առաջին հնգամյա պլանի կատարման արդյունք, մեր երկրում կառուցված է սոցիալիստական էկոնոմիկայի անսասան հիմքը, ստեղծված է առաջնակարգ սոցիալիստական ծանր ինդուստրիա և մեքենայացված կոլեկտիվ հողագործություն, ոչնչացված է գործազրկությունը, ոչնչացված է մարդու շահագործումը մարդու կողմից, ստեղծված են պայմաններ մեր հայրենիքի աշխատավորության նյութական և կուլտուրական դրության ընդհանուր բարելավման համար:

Այս վիթխարի հաջողությունները մեր երկրի բանվոր դասակարգը, կոլտնտեսականները և բոլոր աշխատավորները ձեռք են բերել շնորհիվ պարտիայի ու կառավարության համարձակ, ուղեղին և իմաստուն քաղաքականության»:*

* Համ կ(բ)Պ Պատմություն. Համառոտ դասընթաց, էջ 442—443.

Մեր երկրում սոցիալիզմի մեծագույն հաղթանակներից հետո էլ ավելի պարզ դարձավ, որ հին ռեալիզմի և ռոմանտիզմի արտահայտչական միջոցներով անհնարին է գեղարվեստորեն դրսևորել մեր կյանքի սոցիալիստական մեծ բովանդակությունը, նրա հերոսական պաթոսը: Գորկին ճշտորեն նկատել է, որ «հին ռեալիզմը ապագա չուներ»: Հին ռեալիզմի հիմնական թուլությունն այն էր, որ նա ի վիճակի չէր ընդհանրացման ուժով տոգորելու իրականության առաջավոր հոսանքներ կրող դրական հերոսին: Նույնիսկ Բալզակի նման հզոր ռեալիստի մոտ դեմոկրատական զանգվածների ներկայացուցիչ Միշել Կրետենը էպիզոդիկ կերպով է հանդես գալիս:

Քննադատական ռեալիզմից սոցիալիստական ռեալիզմը տարբերվում է իրականության պարզացման առաջավոր տենդենցի հետևակ և ճշմարտացի ըմբռնումով: Մարդկության նախապատմության ժամանակաշրջանում, դասակարգային պայքարի ընթացքը պայմանավորում էր իրականության գեղարվեստական վերարտադրման հակադիր սկզբունքների հնարավորությունը, ռեալիզմը որպես քննադատական նախասկիզբ, ռոմանտիզմը որպես իրականությանն անհարիր ձգտումը հաստատող նախասկիզբ հակադրությունը: Սոցիալիզմի պայմաններում վերանում են իրականության գեղարվեստական հակադիր յուրացման հիմքերը, վերանում է ստեղծագործողի սուբեկտիվ ձգտումների և ռեալ իրականության հակադրությունը: Համաշխարհային գրականության ողջ պատմության ընթացքում առաջին անգամ սովետական գրականության մեջ է հանդես գալիս ամենաառաջավոր գաղափարներ մարմնավորող հերոսը, որը կոմունիստական հասարակության իրական ստեղծողն է: Սոցիալիստական ռեալիզմի հիմնական խնդիրն է դառնում հաստատել սոցիալիստական իրականությունն իր ուղղագիծ զարգացման մեջ, այսօրվա մեջ կանխատեսել գալիքը, հաստատել կեցությունը որպես հրաշագործություն. դրա հետևանքով փոխվում է ոչ միայն ռեալիզմի և ռոմանտիզմի ներքին բովանդակությունը, այլև միմյանց հակադիր այդ սկզբունքների հարաբերությունը: Սովետական գրականության ստեղծագործական պրակտիկայի մեջ տեղի է ունենում ռեալիզմի և ռոմանտիզմի սկզբունքների նույնացում. ռոմանտիկան դառնում է սոցիալիստական ռեալիզմի որակական հատկությունը, նրա արտահայտման ձևերից մեկը:

Գորկին ասում է. «ռևոլյուցիոն ռոմանտիզմը,— դա ըստ էության սոցիալիստական ռեալիզմի պահվրոնիմն է, որի նշանակությունն է ոչ միայն քննադատորեն նկարագրել անցյալը ներկայում, այլև, գլխավորապես,— օժանդակել հասատատելու ռևոլյուցիոներին նվաճածը ներկայում և լուսավորելու սոցիալիստական ապագայի վեհ նպատակները»։*

Իր մի շարք հոդվածներում Գորկին ընդգծում է այն հանգամանքը, որ սոցիալիստական ռեալիզմը կարող է հենվել միայն ռևոլյուցիոն, սոցիալիստական աշխատանքի փորձի վրա։ «Մեզ մոտ սիրով ու տատորեն գրում են սոցիալիստական ռեալիզմի մասին, և վերջերս հեղինակներից մեկը Գոգոլի մասին հոդվածում հրապարակեց հետաքրքիր մի դյուտ. Գոգոլը եղել է սոցիալիստական ռեալիստ։ Այս դյուտը հետաքրքրական է այն պատճառով, որ ցույց է տալիս, թե ինչպիսի անմտության կարող է հասնել գրական քննադատական ճշմարտությունների տնայնագործական արտադրությունը, և ցույց է տալիս, թե որքան քիչ պատասխանատվություն է զգում գրողը ընթերցողի առաջ իր խոսքերի համար։

Գրական ռեալիզմը գործ ունի մարդկային կենսական գործունեության ռեալ փաստերի հետ։ «Ռեալիզորի» և «Մեռած հոգիների» դարաշրջանում, որքան հայտնի է, Ռուսաստանում ոչ մեկը և ոչ մի տեղ չի դիտել սոցիալիստական բնավորության փաստեր։ Հենց այս ոչ անկարևոր պատճառով գրող Նիկոլայ Գոգոլը չէր կարող արտահայտել այդպիսի փաստեր Խլեստակովի, Ջիչիկովի, Սոբակևիչի, Նոզդրևի, Պլյուշկինի և իր այլ տիպերի սոցիալական կենսագործունեության մեջ»։**

Կոչ անելով նկարագրել սոցիալիզմի դարաշրջանի հերոսին, որը «բարձր է և վիթխարի բոլոր դարերի և բոլոր ժողովուրդների հերոսներից», հերոսներ, որոնք փոխում, վերակառուցում են աշխարհը, Գորկին գտնում է, որ իր այդ ըմբռնումը հենց սոցիալիստական ռեալիզմն է, սոցիալիստական փորձի վրա հենված ռեալիստական պատկերավոր մտածողություն։ Սոցիալիստական ռեալիզմը ստեղծվեց այն ժամանակ, երբ ստեղծվեց «սոցիալիստական փորձը», նախ, պրոլետարիատի ռևոլյուցիոն մասսայական պայքա-

---

* „О бойкости“, сб. О советской литературе, 1934, էջ 69։

** М. Горький, О литературе, 1937, էջ 317—318։

րի փորձը, հետո աշխարհի առաջին սոցիալիստական պետության շինարարական աշխատանքի անօրինակ հարուստ փորձը:

Սակայն միայն այն ժամանակ, երբ վերջնականապես հաղթանակում է սոցիալիստական տնտեսաձևը, երբ նէպական Ռուսաստանը դարձավ սոցիալիստական Ռուսաստան, միայն դրանից հետո ստեղծվեց ռեալ հիմք գեղարվեստական ստեղծագործության մեջ միաձուլելու ռեալիզմը և ռևոլյուցիոն ռոմանտիկան, միայն այդ ժամանակվանից սոցիալիստական ռեալիզմը առաջադրվեց որպես մեր գրականության և արվեստի ստեղծագործական մեթոդ:

Սոցիալիստական ռեալիզմը հին ռեալիզմից տարբերվում է այն բանով, որ հատակորեն տեսնում է իրականության առաջատար տենդենցը և նույնքան ուժեղ է նորը հաստատելու պաթոսի, որքան հնի արատների մերկացման մեջ: Սոցիալիստական ռեալիզմի օրգանական հատկությունն է ռևոլյուցիոն ռոմանտիկան, որը ելնելով սովետական ժողովրդի պլանավորված ստեղծագործ աշխատանքից, կանխատեսում է ապագայի հեռանկարը:

Սոցիալիստական կուլտուրայի լենինյան-ստալինյան ուսմունքի հիման վրա Ա. Ա. Ժդանովը սպառիչ կերպով մեկնաբանել է սովետական գրականության հիմնական առանձնահատկությունները և զարգացման հեռանկարները, մասնավորապես մեր գրականության մեթոդի՝ սոցիալիստական ռեալիզմի էությունը:

Սովետական գրողների Համամիութենական առաջին համագումարին արտասանած իր ճառում ընկեր Ժդանովը մեկնաբանում է, որ մեր գրականության թեմատիկայի հիմքում ընկած է բանվոր դասակարգի և գյուղացիության կյանքը, նրանց պայքարը սոցիալիզմի համար: Այդ պատճառով սովետական գրականությունը ժխտում է ամեն տեսակ խավարամոլություն և միստիկա, որ անկում և քայքայում ապրող բուրժուական ռեակցիոն գրականության հիմնական հատկանիշներն են:

Մեր գրականությունը տոգորված է օպտիմիզմով և հերոսականությամբ, որովհետև նա ծառայում է սոցիալիստական շինարարության գործին:

«Ընկեր Ստալինը մեր գրողներին անվանել է մարդկային

հոդու ճարտարապետներ: Ի՞նչ է նշանակում այդ: Ի՞նչ պարտականություններ է դնում ձեզ վրա այդ կոչումը:

Այդ նշանակում է, նախ և առաջ՝ ճանաչել կյանքը, որպեսզի կարողանալ այն ճշմարտացի պատկերել գեղարվեստական երկերում, պատկերել ոչ սխոլաստիկաբար, ոչ մեռած, ոչ որպես «օբեկտիվ ռեալականություն», այլ պատկերել իրականությունն իր հեղափոխական զարգացման մեջ: Միաժամանակ գեղարվեստական պատկերման ճշմարտությունը և պատմական կոնկրետությունը պետք է զուգորդվի աշխատավոր մարդկանց սոցիալիզմի ոգով իդեապես վերափոխելու և դաստիարակելու խնդրին: Գեղարվեստական գրականության և քննադատության այսպիսի մեթոդն այն է, որը մենք անվանում ենք սոցիալիստական ռեալիզմի մեթոդ»:

Այնուհետև ընկեր Ժդանովն ասում է, որ սովետական գրականությունը տենդենցիոզ է, որ սովետական գրողներից յուրաքանչյուրը կարող է ասել որևէ բթամիտ բուրժուայի, որևէ Ֆիլիստերի, թե մենք հպարտանում ենք սովետական գրականության տենդենցիոզությամբ, որովհետև մեր տենդենցն է ազատել աշխատավորությանը, ողջ մարդկությանը կապիտալիստական ստրկատիրության լծից:

«Լինել մարդկային հոգու ճարտարապետ— այդ նշանակում է դույզ ոտքով կանգնել ռեալ կյանքի հողի վրա: Իսկ դա իր հերթին նշանակում է խզումն հին տիպի ռոմանտիզմից, այն ռոմանտիզմից, որը պատկերում էր գոյություն չունեցող կյանք և գոյություն չունեցող հերոսներ, կյանքի հակասություններից և ճշնշամից ընթերցողներին տանելով անիրական աշխարհը, ուտոպիաների աշխարհը: Մեր գրականության համար, որը դույզ ոտքով կանգնած է մատերիալիստական ամուր հիմքի վրա, խորթ չի կարող լինել ռոմանտիկան, բայց նոր տիպի ռոմանտիկան, ռևոլուցիոն ռոմանտիկան: Մենք ասում ենք, որ սոցիալիստական ռեալիզմը հանդիսանում է սովետական գեղարվեստական գրականության և գրական քննադատության հիմնական՝ մեթոդը, իսկ դա նշանակում է, որ ռևոլուցիոն ռոմանտիզմը պետք է մտնի գրական ստեղծագործության մեջ, որպես բաղկացուցիչ մաս, որովհետև մեր պարտիայի ողջ կյանքը, բանվոր դասակարգի ողջ կյանքն ու պայքարն արտահայտվում է ամենադաժան, ամենազգոն պրակտիկ

աշխատանքների միահյուսումով մեծագույն հերոսության և հսկայական հեռանկարների հետ»:

Մեծ նշանակություն տալով գրական գործի տեխնիկային, ընկեր Ժդանովն ասում է, որ սովետական գրականությունը լայն հնարավորություններ ունի լիովին օգտագործելու գրական գենքի բոլոր տեսակները՝ ժանրեր, ոճեր, գրական ստեղծագործական ձևեր ու պրոմներ, ընտրելով լավագույնը, ինչ ստեղծել են նախորդ դարաշրջանները այդ բնագավառում:

Համաշխարհային գրականության լավագույն արժանիքների օրինավոր ժառանգը սովետական ժողովուրդն է: Բուրժուազիան քանդել է, խաճել գրական ժառանգությունը, մենք պարտավոր ենք այն ուշադիր հավաքել, ուսումնասիրել և քննադատորեն յուրացնելով առաջ շարժվել: Գրական ժառանգության քննադատական յուրացումը ընկեր Ժդանովը համարում է մարդկային հոգու ճարտարապետ դառնալու կարևոր նախապայմանը:

«Լինել մարդկային հոգու ճարտարապետ— այդ նշանակում է ակտիվորեն պայքարել հանուն լեզվի կուլտուրայի, հանուն երկի որակի: Մեր գրականությունը դեռ չի համապատասխանում մեր էպոխայի պահանջներին: Մեր գրականության թուլություններն արտացոլում են դիտակցության ետ մնալը էկոնոմիկայից, որից, հասկանալի է, որ ազատ չեն նաև մեր գրողները: Ահա թե ինչու անխոնջ աշխատանքը իր վրա և իրեն սոցիալիզմի ոգով դաստիարակելու վրա, հանդիսանում է այն անվիճելի պայմանը, առանց որի սովետական գրողները չեն կարողանա վերափոխել իրենց ընթերցողների դիտակցությունը և այդպիսով դառնալ մարդկային հոգու ճարտարապետներ»:

Սովետական գրականության և արվեստի զարգացման, հետպատերազմյան ժամանակաշրջանի հիմնական խնդիրները, պարզորոշ կերպով ցույց են տրված Համկ(բ)Պ կենտկոմի որոշումների մեջ գրականության և արվեստի մասին: Սովետական գաղափարախոսության նոր շրջանը նշանավորող պատմական այդ խոշորագույն փաստաթղթերից հետո, մեր գրականության համար հրատապ կայական նշանակություն ունեցավ Ա. Ա. Ժդանովի զեկուցումը «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին, ուր հատակ կերպով զարադրված է կոմունիզմի համար մղվող գաղափարախոսական պայքարի մարտական ծրագիրը:

Համկ(բ)Պ Կենտկոմի 1946 թ. օգոստոսի 14-ի որոշման մեջ ասված է. «Սովետական գրականության՝ աշխարհի ամենաառաջավոր գրականության ուժն այն է, որ նա հանդիսանում է մի գրականություն, որը չունի և չի կարող ունենալ այլ շահեր, քան ժողովրդի շահերը, պետության շահերը»:

Սովետական գրականությունը կոչված է իմաստավորելու և ընդհանրացնելու այն վիթխարի փորձը, որ մեր ժողովուրդը ձեռք է բերել Հայրենական Մեծ Պատերազմում, պետականության վերաստեղծելու երկրի տնտեսական վերականգնման համար տարվող աստանային հերոսական աշխատանքը: Գրականությունը կոչված է ժողովրդին հարստացնելու նոր գաղափարներով, առաջ տանելու նրան, օժանդակելու շինարարական մեծ պլանների կենսագործմանը: Ժողովրդի և պետության շահերին ծառայելու վեհ պարտավորություն կատարելու համար, սովետական գրականությունը պետք է առաջնորդվի այն քաղաքականությամբ, որը հանդիսանում է սովետական կարգի կենսական հիմքը:

«Մենք փոխվել և աճել ենք մեծադույն վերափոխությունների հետ միասին, որոնք արմատապես փոխեցին մեր երկրի դեմքը:

Ցույց տալ սովետական մարդկանց այս նոր բարձր հատկությունները, ցույց տալ մեր ժողովրդին ոչ միայն նրա այսօրվա վիճակում, այլև տեսնել նրա վաղվա օրը, օգնել լուսարձակով լուսաւորելու առաջընթաց ուղին,— այս է յուրաքանչյուր բարեխիղճ գրողի խնդիրը: Գրողը չի կարող իրադարձությունների պոչից քաշ գալ, նա պարտավոր է ընթանալ ժողովրդի առաջավոր շարքերում, ժողովրդին ցույց տալով նրա զարգացման ուղին: Ղեկավարվելով սոցիալիստական ռեալիզմի մեթոդով, բարեխղճորեն և ուշադիր ուսումնասիրելով մեր իրականությունը, աշխատելով ավելի խոր ներթափանցել մեր զարգացման պրոցեսների էության մեջ, գրողը պետք է դաստիարակի ժողովրդին, գաղափարապես զինի նրան: Ընտրելով սովետական մարդու լավագույն զգացմունքները և հատկությունները, նրա առաջ բաց անելով նրա վաղվան օրը, մենք պետք է միևնույն ժամանակ մեր մարդկանց ցույց տանք թե նրանք ինչպիսին չպետք է լինեն, պետք է խարազանենք երեկվա մնացուկները, որոնք սովետական մարդկանց խանգարում են առաջ ընթանալ: Սովետական գրողները պետք է օգնեն ժողովրդին, պե-

*տուքյանը, պարտիային՝ դաստիարակելու մեր երիտասարդությանը, դարձնելով նրան առույգ, իր ուժերին հավատացող, ոչ մի դժվարությունից չվախեցող»։**

Ընկ. Ժդանովի այս խոսքերի մեջ ամփոփված է սովետական դրականության առանձնահատկությունների, նրա զարգացման հեռանկարների սպառիչ բնութագիրը։ Անցյալի նախապաշարումներից ազատագրված սովետական արվեստագետի հայացքի առաջ բացվում է ոչ միայն մեր իրականության ճշմարտությունը, այլև դալիքը։ Իսկական արվեստի ճանաչողական նշանակությունն այն է, որ նա բացում է նոր հորիզոններ, կանխատեսում է կյանքի զարգացման ընթացքը։ Այն, ինչ կյանքի մեջ հանդես է գալիս սաղմնային վիճակում, այն, ինչ հազիվ նկատելի է իրականության մեջ, իր կենսական ամբողջ ուժով, պատկերների միջոցով դրսևորվում է գեղարվեստական դրականության մեջ։ Սովետական դրականությանն ամբողջապես վերաբերվում է Լենինի հիանալի նշումը, որ մարդու գիտակցությունը ոչ միայն արտացոլում է օբեկտիվ աշխարհը, այլև ստեղծում է այն։ Դա սոցիալիստական ռեալիզմի կարևոր հատկությունն է, որ պետք է դառնա մեր գրողների ստեղծագործական աշխատանքի հիմքը։ Մեր ժամանակի իրական մարդու գործունեության և բնավորության մեջ որոշակիորեն զարգացած վիճակում հանդես են գալիս կոմունիզմի մարդու հիմնական հատկությունները։ Սովետական դրականության կենսական խնդիրն է՝ գեղարվեստորեն դրսևորել այդ հատկությունները իրենց զարգացման և հեռանկարի մեջ։ «Կուլտուրա և ժիզն» թերթի «Սովետական դրականության բոլշևիկյան պարտիականության մասին» խմբագրական հոդվածում ասված է. «Արվեստի մեջ ճշմարտացի լինելը՝ նշանակում է կարողանալ իրականությունը պատկերել իր պատմական կոնկրետության և անընդհատ նորացման ու ծաղող զարգացման պրոցեսում. նշանակում է կարողանալ էականը տարբերել երկրորդականից, կարևորը՝ աննշանից, հանրանշանակալին՝ նեղ անհատականից. նշանակում է կարողանալ իմաստավորել յուրաքանչյուր մանանակի երևույթը պատմական զարգացման ընդհանուր օրենքների և տենդենցների լույսի տակ. նշանակում է կարողանալ տարբերել նորը հնից և ցույց տալ նորի

* Ա. Ա. Ժդանով, «Զվեզդա և Լենինգրադ» ամսագրերի մասին, Երևան

այլքարը հնի դեմ, նորի հաղթանակը հնի նկատմամբ. նշանակում է կարողանալ առաջին պլան քաշել «ոչ թե այն, ինչ տվյալ մոմենտին հաստատուն է թվում, բայց արդեն սկսվում է մահանալ, այլ այն, ինչ ծնվում է ու զարգանում...» (Ստալին, «Լենինիզմի հարցերը», 11-րդ հրատ., էջ՝ 537)։ Լենինի ցուցումը տիպական գնահատականները տիպական հանգամանքներում պատկերելու անհրաժեշտության մասին՝ պետք է լրացվի հետևյալ դրույթով՝ անհրաժեշտ է պատկերել այն նորը, աճողը, որը դեռ տիպական չէ այսօրվա համար, սակայն անպայման այդպիսին կդառնա վաղը»։

Սոցիալիստական ռեալիզմը պահանջում է իրականությունն արտացոլել իր ռևոլյուցիոն զարգացման մեջ, իր անընդհատ նորացման ընթացքում, բացահայտել իրականության պրոցեսների իմաստը, մերկացնել բուրժուական իդեոլոգիայի քայքայիչ ազդեցությունները և հին աշխարհի մնացուկները մարդկանց գիտակցության մեջ։

Սոցիալիստական ռեալիզմը պահանջում է մարքս-լենինյան տեսության, մեր պարտիայի պատմության, սոցիալիստական շինարարության ամբողջ փորձի խոր յուրացում և անքակտելի կապ կոմունիզմի լիակատար հաղթանակի համար մղվող պայքարի հետ։

* * *

Սովետական երկրում այլևս չկան «երկու ազգություններ»։ Սոցիալիստական հասարակությունը, այդ միասնական և հզոր սովետական ժողովուրդն է, բանվոր դասակարգը, գյուղացիությունը, ինտելիգենցիան։ Լենինի-Ստալինի մեծ պարտիան,— «մեր դարաշրջանի միտքը, պատիվը և խիղճը», կազմակերպեց և ոդեշնչեց սոցիալիզմի կառուցման և սովետական հայրենիքի պաշտպանության անօրինակ հերոսական գործը։ Սոցիալիզմի հաղթանակի հետ իրենց ամբողջ հզորությամբ ծավալվեցին սովետական հասարակության շարժիչ ուժերը՝ ժողովուրդների բարեկամությունը, սովետական հայրենասիրությունը, սովետական հասարակության բարոյական և քաղաքական միասնությունը։ Մեր ժողովուրդն իր նոր կյանքի պատմության ընթացքում, երկրորդ անգամ է գտնվում հետպատերազմյան պայմաններում։ Առաջին համաշխարհային պատերազմից և քաղաքացիական կռիվներից հետո մեր ժողովուրդը

688—9

վճռեց տնտեսության վերականգնման բարդ խնդիրները և սոցիալիստական հասարակության կառուցումը։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընկեր Ստալինը մեր ժողովրդին դինեց նոր հնգամյակի մեծասքանչ ծրագրով, բացահայտեց լայն հեռանկարներ սոցիալիստական արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման համար։

Սովետական գրականությունն այժմ կանգնած է այդ մեծ խնդիրների առաջ, որոնց գեղարվեստական կենսագործման ուղիները պարզ և սպառիչ կերպով նշված են Համկ(բ)Պ կենտկոմի որոշումների մեջ գրականության և արվեստի մասին։

Ընկ. Ժդանովն ասում է.— «Սովետական գրողները և մեր բոլոր իդեոլոգիական աշխատողներն այժմ կանգնած են կրակի առաջավոր գծում, որովհետև խաղաղ զարգացման պայմաններում չեն վերանում, այլ ընդհակառակն, աճում են իդեոլոգիական ֆրոնտի խնդիրները և առաջին հերթին գրականության խնդիրները։ Ժողովուրդը, պետությունը, պարտիան ուզում են, որ գրականությունը ոչ թե հետանա արդիականությունից, այլ որ գրականությունն ակտիվորեն ներթափանցի սովետական կեցության բոլոր կողմերի մեջ։ Բոլշևիկները բարձր են գնահատում գրականությունը, պարզորոշ տեսնում են նրա պատմական մեծ միսիան ու դերը ժողովրդի քարոյական և քաղաքական միասնության ամրապնդման գործում, ժողովրդի համախմբման և դաստիարակման գործում։ Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն ցանկանում է, որ մեզ մոտ լինի հոգևոր կուլտուրայի առաւտություն, որովհետև կուլտուրայի այդ հարստության մեջ նա տեսնում է սոցիալիզմի գլխավոր խնդիրներից մեկը»։

25.III.47

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՈՒՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԴՐԱԿԱՆ ՀԵՐՈՍԻ ԿԵՐՊԱՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1.

Սովետական գրականության և արվեստի կենտրոնական հարցը դրական հերոսի կերպարը բարձր իդեականությամբ և խորը արվեստով կերտելու հարցն է: Սովետական մարդու— դրական հերոսի կերպարի մեկնաբանության վանդիրն էլ, դրա հետևանքով, դառնում է սոցիալիստական ռեալիզմի էսթետիկայի հիմնական խնդիրներից մեկը:

Ինչո՞ւ դրական հերոսի կերպարի կերտումը սովետական գրականության (և արվեստի) կենտրոնական հարցն է:

Արտացոլելով մեր իրականությունը, գրականությունը և արվեստն արտացոլում են այդ իրականության մեջ ապրող և գործող մարդուն: Իսկ դա— սովետական մարդն է: Պատկերելով իրականության զարգացման առաջատար տենդենցներն ու պրոցեսները, գրականությունը և արվեստը դրանք բացահայտում են մարդու միջոցով: Իսկ դա— դարձյալ սովետական մարդն է, պատմության դրական հերոսը: Առաջադրելով իրեն՝ իրականությունը բարձր իդեականության պատկերելու պահանջը, սովետական գրականությունը և արվեստը բարձր իդեականության մարմնացումը և կրումը պետք է տեսնեն նոր մարդու մեջ— դա կրկին և կրկին սովետական մարդն է: Միջազգային ռեակցիայի դեմ պայքարելու խնդիրը, արդեգրած սովետական գրականությունը (և արվեստը) այդ խնդրի իրականացումը և կենսագործումը տեսնում են սովետական մարդու կողմից և նրա ջանքերով:

Այս է պատճառը և բացատրությունը, թե ինչո՞ւ սովետական գրականության (և արվեստի) կենտրոնական հարցը դրական հերոսի— սովետական մարդու կերպարը կերտելու հարցն է: Եվ ա-

ռաջին առանձնահատկությունը, որով այդ հարցն այժմ ներկայանում է մեզ, այն է, որ դրական հերոսի կերպարը դիտում ենք իբրև ամբողջության հասած մարդու կերպար— աղատագրված անցյալում դասակարգային հասարակությունների հակասություններից և մարդուն տառապանք պատճառող վերքերից: Եթե դասակարգերի բաժանված անցյալ հասարակությունների մեջ ժողովուրդը և առաջավոր մարդն ապրել են գոյություն ունեցող իրականության և իրենց իդեալների աններդաշնակություն, իրականի և իդեալականի պառակտում, ապա սոցիալիստական պայքարի և սոցիալիստական մեծ ռևոլուցիայի մեջ մեր մարդը տեսել է իր իդեալների կենսագործումը: Սրանից էլ առաջացել է նոր մարդու, սովետական, դրական հերոսի իրական և իդեալական հատկանիշների միասնությունը և մարդու լավագույն իդեալների նյութականացման հնարավորությունը: Այդ է պատճառը, որ մեր գրականության և արվեստի մեջ սովետական մարդու կերպարն իրենից ներկայացնում է իրական, դրական և իդեալական հատկանիշներ մարմնավորող մարդու կերպար: Եթե ֆեոդալիզմի և բուրժուազիայի տիրապետության շրջանում առաջավոր իդեալներն իրականություն չէին կարող դառնալ և նրանք (իդեալները) խեղդվում էին, ապա սոցիալիզմի տիրապետության շրջանում իրականությունը հանդիսանում է նորանոր և կենսական մեծ ուժ պարունակող իդեալների ստեղծագործման հզոր աղբյուր: Դրանից է, որ մեր մարդը, դրական մարդը, ոգևորված իր իդեալներով, մշտապես կատարելագործում է իր կեցությունը:

Կլասիկ գրականության մեջ, ամենից առաջ և գերազանցապես ռուս կլասիկ գրականության մեջ (քիչ հետո մենք այդ կտեսնենք ավելի մանրամասն) դրական մարդու կերպարը կերտելու տրագիկա գոյություն է ունեցել: Դա հենց ցույց է տալիս, որ Հոբուսատիրության, ցարիզմի և կապիտալիզմի դեմ պայքարի դուրս եկած ռուս լավագույն արվեստագետները, հենվելով հասարակության առաջավոր տարրերի վրա, ձգտել են դրական հերոսներին: Դա մի ծանր գոտեմարտ է եղել, որ մղվել է դասակարգային և պետական այլանդակ տիրապետության և պրոգրեսիվ իդեալների միջև:

Պրոլետարիատի սոցիալիստական իդեալի մասին խոսելով, 1904 թ. ընկեր Ստալինը գրել է.

... «Բարձրացնենք պրոլետարիատին մինչև իսկական դասա-

կարգային շահերի գիտակցությունը, մինչև սոցիալիստական իդեալի գիտակցությունը, այլ ոչ թե այդ իդեալը վերածենք մանրուքների կամ հարմարեցնենք տարերային շարժմանը»։ (Ի. Ստալին, «Երկեր», հատ. 1, էջ՝ 65, Հայպետհրատ, 1946 թ.)։

Պրոլետարիատի սոցիալիստական իդեալը կրող դրական մարդու կերպարն է կերտված դեռևս ռևոլուցիայից առաջ՝ սոցիալիստական ռեալիզմի նախահայր հանդիսացող Գորկու ստեղծագործության մեջ։

Դրական մարդու, իրականը և իդեալականը միասնացնող մարդու հարցն է առաջ քաշել ընկ. Ժդանովը, «Ընկ. Ա. Ա. Ժդանովի զեկուցումը և մեր մոտակա խնդիրները» զեկուցման մեջ, հիշեցնելով մեզ հետևյալը.

«Ռուս դրականությունը նրանով է պանծալի, որ լի է դրական հերոսներով։

«Այս տարվա (խոսքը 1946 թ. մասին է, Ս. Հ.) գորկիական օրերին լույս տեսան սոցիալիստական ռեալիզմի պրոբլեմների հետ կապված մի քանի հոդվածներ։ Դրանցից ես ուզում եմ նշել Ա. Բյալիկի հոդվածը, «Լիտերատուրնայա գազետա»-ում՝ «Դարաշրջանի ստեղծագործական լոզունգը» և Տ. Մոտիլյովայի հոդվածը Գորկու մասին «Կոմսոմոլսկայա Պրավդա»-յում։ Մոտիլյովան գրում է իրականի և «իդեալականի» միջև եղած խզման մասին 19-րդ դարի արևմտա-եվրոպական գրականության մեջ։ Ռեալիստներ Ֆլոբերի և Զոլայի մոտ կա չարի ճշմարտացի պատկերումը և վանմի կորուստ. մյուսների՝ այսինքն արևմտաեվրոպական գրականության ռեակցիոն ռոմանտիկների մոտ իդեալը հեռանում է իրականությունից դեպի ֆանտաստիկա, միստիկա, սիմվոլ։ Հարկ է լինում անպատճառ ընտրել կամ «տգեղ իրականությունը» կամ «անիրական գեղեցկությունը»։

«Նա (ռուս դրականությունը),— շարունակում է ընկ. Ժդանովը,— արդասավորվել է ժողովրդական զանգվածների ազատագրական շարժումով, արդարության նրա որոնումներով։ Ռուս դրականության առանձնահատկությունն է՝ տեսնել ու գտնել գեղեցկության տարրերը բուն իրականության մեջ։ Սրանից էլ առաջ են եկել ռուս դրականության հրապուրիչ, պայծառ, ուժեղ դրական կերպարները։ Սակայն նրա դրական կերպարների թուլության գաղտ

Նիքն այն չէ, որ մեծ մասամբ մեր կլասիկները չէին տեսնում այն դրական հերոսին, որը պատմության մեջ եղել է առաջատար, դրական, վերափոխող նախասկիզբը:

Առաջին անգամ Գորկու մոտ դրական հերոսը իրոք պատմության դրական հերոս էր, հասարակական զարգացման առաջավոր նախասկզբի ջահակիր» («Գրական թերթ», 1946 թ., № 30, տես՝ Ա. Ժդանովի վերոհիշյալ զեկուցումը):

*Խոսելով սովետական մարդու— դրական հերոսի— արդեն իսկական մարդու (Բ. Պոլեվոյի տերմինն է) մասին և դնելով, որ այդ մարդն իրական լինելով, կրում է իր մեջ իդեալական հատկանիշներ, մենք աբստրակցիա չենք հանդուրժում: Այդ իդեալները կապված են եղել պրոլետարիատի սոցիալիստական պայքարի հետ, կապված են եղել սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի հետ, սոցիալիզմի շինարարության հետ և այժմ կապվում են մեր ատեճանական անցումին դեպի կոմունիզմ: Բոլոր այս էտապներում սովետական մարդը կենսագործել է իր իդեալները և անցել նոր իդեալների: Սա անընդհատ պրոցես է: Գեղարվեստական պրակտիկայի մեջ իդեալները մարմնավորվում են սովետական, դրական մարդու կերպարի մեջ: Դրական մարդու կերպարն, ահա, ինչու մարդու իրական և իդեալական հատկանիշների միասնության արտահայտության մեկ բնագավառն է: Սովետական, դրական մարդու միջավայրը մեր կյանքն է՝ լայն առումով վերցրած մեր իրականությունը: Սրա հետևանքով սովետական դրական հերոսի կերպարը կրում է իր մեջ և պետք է կրի մեր իրական և իդեալական հատկանիշները, ինքը դառնա միաժամանակ իրական և իդեալական մարդ: Այս պատճառով, խոսելով դրական հերոսի կերպարի մասին, թույլ ենք տալիս մեզ ընդգծելու մեր իրականության արտացոլումը հանդիսացող սովետական մարդու և իրական, ուրիմն և դրական, ուրիմն և իդեալական հատկանիշները, որոնք զարգացում են և շարունակ կատարելագործվում: Ասելով թե սովետական դրականության մեջ ո՛ր դրվածքում և ո՛ր կերպարն է օժտված իրական— դրական և իդեալական հատկանիշներով և կամ ո՛րն այդպիսի հատկանիշներ չունի, կամ դրանք թույլ են արտահայտված, մենք հաշիվ ենք տալիս մեզ այն բանում, որ հաջողած ամեն մի կերպար լոկ մի քայլ է մեր իրականության գեղարվեստական

յուրացման ճանապարհին և որ մեր իրականությունն անսպառ հնարավորություններ է տալիս կերտելու նորանոր դրական կերպարներ: Դրանով է, որ մեր գրականությունը կմոտենա մեր զարգացող կյանքի արտացոլման բարձր աստիճաններին:

2.

Ահա ա՛յս հարցը, սովետական գրականության մեջ դրական հերոսի կերպարը կերտելու հարցը, այժմ առանձնահատուկ և հենասական նշանակություն է ստանում: Պարտիայի կենտրոնական Կոմիտեի որոշումները գրականության և արվեստի մասին և ընկեր Ժդանովի զեկուցումը «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի վերաբերյալ ցույց են տալիս, որ վերջին շրջանում, գրականության և արվեստի մեջ թուլացել էր դրական հերոսի կերպարի կերտումը: Խոսքը սովետական գրականությանը խորթ և Շոշչենկոյի և Ախմատովայի և նրանց նմանների մասին չէ: Սոցիալիստական էսթետիկայի հետ նրանք ոչ մի կերպ չեն առնչվում: Խոսքը սովետական այն արվեստագետների մասին է, որոնց ստեղծագործության մեջ սովետական մարդու նկարագիրը հրապարակ է եկել աղքատ և աղճատված նկարագրով: Նախկություն կլիներ մտածել, թե դա մարդկանց թույլ հիշողության արդյունք է: Ճիշտն այն է, որ իրական մարդու կերպարի աղճատումն ու աղքատացումը մեկնաբանվի որպես և՛ կյանքի վատ ճանաչողության արդյունք, և՛ գրողի աշխարհայացքի թուլության ու աղքատության հետևանք, և՛ գեղարվեստական ստեղծագործության նշանակության անգիտության: Եվ որովհետև գրականության պրակտիկայում այս խնդիրներն այսօր խիստ այժմեական են, մեր գրականության առաջ կանգնած է, ի թիվս այլ հարցերի, նաև դրական հերոսի կերպարի կերտման տեսական ու գործնական ամբողջ կարևորությունն ընդգծելու, այդ կարևորությունն առաջին պլանի վրա դնելու հարցը, իսկ սա արդեն նշանակում է ազդել սովետական գրականության զարգացման վրա, կազմակերպել այդ զարգացման ընթացքը:

Ընդգծելով քաղաքականության— սովետական պետական և հասարակական կարգի հենասական հիմքի— վճռական նշանակությունը հասարակական մտածողության բոլոր մյուս ձևերի նկատմամբ, մենք պարտիան գրականությունը դիտում է որպես քաղաքական իդեոլոգիայի պրոպագանդի հզոր մի միջոց, որպես քաղաք-

Կանոնքյունը և իդեոլոգիան մարմնավորող ձև և քաղաքական իդեաները միլիոններին մատչելի դարձնող հնարավորություն: Ձևն ինքնին մեծապես կարևորվում է բովանդակության կարևորության հետևանքով: Երբեք աչքաթող չանելով գրականության և գիտության կապը, այլ և որոշակիորեն շեշտելով ա՛յն, որ սոցիալիստական ռեալիզմի մեթոդի գրականությունն արդեն գիտական հիմքեր ունեցող գրականություն է, վերջինիս խնդիրն է դարձել՝ զարգացնել սովետական հայրենասիրությունը, բարձրացնել ժողովրդի գիտակցությունը, վերցնել իր վրա աշխատավորներին կոմունիզմի ոգով լուսավորելու միսիան:

«Եթե ֆեոդալական իրավակարգը,— ասել է ընկ. Ժդանովը,— իսկ այնուհետև բուրժուազիան իրենց ծաղկման ժամանակաշրջանում կարող էին ստեղծել նոր հասարակակարգի լինելիությունը հաստատող և նրա ծաղկումը գովերգող արվեստ և գրականություն, ապա մեր նոր, սոցիալիստական հասարակակարգին, որը մարմնավորումն է այն ամենի, ինչ որ լավագույնն է մարդկային քաղաքակրթության և կուլտուրայի պատմության մեջ,— առավել ևս հնարավոր է ստեղծել աշխարհի ամենաառաջավոր գրականություն, որը շատ ետ կթողնի հին ժամանակների ստեղծագործության ամենալավագույն նմուշները»:

Ահա ինչու դրական հերոսի խոշոր կերպարի ստեղծագործումն ինքն ըստ ինքյան կապված է ապագա սովետական մեծ գրականության ստեղծման հետ: Պարտիայի կենտրոնական Կոմիտեի որոշումներն այդ ապագայի տեսական հիմքերն են տալիս, նկատելով, որ սովետական ժամանակաշրջանում իրական մարդն արդեն դրական մարդն է և դրականի արտացոլումը նախադրյալներ է տալիս իդեալականն այժմ արդեն հաստատելու համար: Ո՛չ մի էսթետիկայում և ո՛չ մի ժամանակ այս հարցադրումը մենք չենք տեսնի: Դիմենք Հեգելին: Նրա էսթետիկայում նույնպես արտահայտվել է մեթոդի և սիստեմի հակասությունը: Նրա դիալեկտիկան իդեալիստական է, ինչպես իդեալիստական է նրա սիստեմը: Վերջին հաշվով, Հեգելի սահմանափակ և հայեցողական սիստեմը կուլ է տալիս նրա մեթոդը: Իր էսթետիկայի առաջին մասը Հեգելը նվիրել է «գեղեցկի իդեային արվեստի մեջ կամ իդեալին». այստեղ նա քննարկում է «գեղեցիկը արվեստում կամ իդեալը»՝ մեծ թվով հարցերի կապակցությամբ: Զբաղվելով

գեղեցկի հասկացության քննության մեջ, Հեգելը զբաղված է նաև գեղեցկով բնության մեջ: Եվ որովհետև նրա կարծիքով բնության գեղեցիկն ունի թերություններ, դրանից էլ ծագում է արվեստի մեջ գեղեցկի, որպես իդեալի, անհրաժեշտությունը: Հետո նա քննարկում է իդեալի մարմնավորումը գեղարվեստական ստեղծագործության մեջ: Հեգելը հենց գեղեցիկն է համարում գեղեցկի իդեան, իսկ իդեալը իդեայի մի որոշ ձև: Հեգելը ելնում է և այն դրույթից, որ արվեստի մեջ մարդու պատկերումը բերում է մարդու սրտի, ներքնաշխարհի, նրա կրքերի ու հույզերի, նրա շահերի, կոնկրետ կյանքի պատկերմանը, որը կազմում է արվեստի կենդանի նյութը և իդեալը դառնում է այդ նյութի պատկերում և արտահայտություն: Հեգելի էսթետիկայի մեջ նկատի առնված է և երկրային ու մարդկայինը, մարդու կենդանի գործունեությունը: Նա համաձայնում է այն մտքին, որ իսկական մարդու կրքերից են ստեղծված անտիկ աշխարհի աստվածները: Հեգելը չի ժխտում և այն, որ մարդու իրական գոյությունը ենթադրում է նրան շրջապատող աշխարհի և միջավայրի առկայությունը: Այս մոմենտներում Հեգելի էսթետիկան պետք է կարդալ և հաղթահարել մատերիալիստորեն: Բայց Հեգելի սիստեմը, իսկապես, դալիս, կուլ է տալիս նրա դիտական կռահումները և էսթետիկայի մեջ ևս մենք տեսնում ենք, որ Հեգելը, վերջին հաշվով, արվեստի պատկերումների կենտրոնը համարում է աստվածայինը և գտնում, որ իդեալական գեղարվեստական դեմքը երանելի աստվածն է: Արիստոկրատական ռեակցիայից ելակետ ունեցող այս տեսաբանությունը Հեգելից հասնում է մինչև դեկադենտներ, սիմվոլիստներ և բոլոր մյուս ռեակցիոն հոսանքները գրականության ու արվեստի մեջ: Ինչպես որ ռեակցիոն պրուսականության մեջ Հեգելը տեսավ իր բացարձակ իդեայի մարմնավորումն, այնպես էլ իր շրջանի և անցյալ արվեստի մեջ նա գտավ արվեստի զարգացման վերջին աստիճանը, որից հետո արվեստն այլևս կանգ է առնում՝ իր իդեալին հասած: Մարքսը, ընդհակառակը, ժխտելով Հեգելի իդեալիզմը և նրա ռեակցիոն եզրակացությունները, գտնում է, որ «19-րդ դարի սոցիալական revolution իր պոեզիան անցյալից քաղել չի կարող, նա այն պետք է քաղի ապագայից: Նա (այդ պոեզիան, Ս. Հ.) չի կարող ինքնակա լինել, չհրաժարվելով հնության առաջ ամեն կերպ նախապաշարված ձևով խոնարհվելուց: Սեփա-

կան բուրժուազիայի մխրճն իրենց մեջ խեղդելու համար նախորդ ռևոլյուցիաներին անհրաժեշտ էին համաշխարհային պատմական հիշողություններ անցյալի մասին։ Իր սեփական բուրժուազիայի իրեն պարզելու համար 19-րդ դարի ռևոլյուցիան պետք է մեռելներին թողնի թաղելու իրենց մեռելները» (Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, «Երկեր», ռուս. հրատ., հ. 8, էջ՝ 325)։

Հեգելյան տեսության քննադատությունը կատարել է նաև Չերնիշևսկին, որի էսթետիկան անվերապահորեն ուղղված է դերմանական իդեալիստական ոտմունքների դեմ։ Նա ժխտեց Հեգելի այն դրույթը, թե գեղեցկի իդեան գեղեցկի մեջ է և առաջադրեց մատերիալիստական հայացքներ։ «Գեղեցիկը— կյանքն է» ասելով, Չերնիշևսկին հարցը լուծեց կյանքի կատարելության անհրաժեշտաբար հասնելու ռևոլյուցիոն տեսակետով։ Նրա համար օրենքավոր իրականության մեջ գեղեցիկը բոլորովին գեղեցիկ է. իրականության գեղեցիկը կատարելապես բավարարում է մարդուն։ Չերնիշևսկին լայն նշանակություն տվեց էսթետիկային, համակացնելով նրան արվեստի, որպես կյանքի երևույթները մեկնաբանողի և նրանց նկատմամբ դատավճիռ արձակողի խնդիրները։ Չերնիշևսկու մոտ գրական հերոսի տեսությունը մոտենում էր ռեալիստական ըմբռնմանը։ Սրանով նա գերազանցում և իր հետևում էր թողնում նույնիսկ Ֆոյերբախի մատերիալիզմը, կանգ առնելով պասիվ-կոնտեմպլյատիվական մատերիալիզմի առաջ։

Ռևոլյուցիոն մոտածողությունը պահանջում էր բանականը իրական դարձնել և այն նորը, որ ծնվում է, ընդունել որպես իրական և բանական։

Հեգելյան իդեալիզմին հակառակ, ընկեր Ստալինը «Անարխի՞զմ, թե սոցիալիզմ» աշխատության մեջ հարցը լուծել է ճիշտ այսպես.

«Այստեղից էլ ծագել է,— գրում է ընկեր Ստալինը,— դիալեկտիկական հայտնի դրույթը՝ այն ամենը, ինչ իրապես գոյություն ունի, այսինքն՝ այն ամենը, ինչ օրից օր աճում է,— բանական է, իսկ այն ամենը, ինչ օրից օր քայքայվում է,— անբանական է և, հետևապես, չի խուսափելու պարտությունից» (Ի. Վ. Ստալին, «Երկեր», Հայպետհրատ, 1946 թ., հատ. I, էջ 336)։

Այսպիսով, պրոլետարական-ռևոլյուցիոն գրականության մեջ իդեալականը դառնում էր հնարավորը, նորը և գրականը։ Պար-

տիայի Կենտրոնական Կոմիտեի որոշումների մեջ արտացոլված են ընկեր Ստալինի փիլիսոփայական-էսթետիկական այն ամենաթարը դիտական սկզբունքները, որոնց համաձայն սովետական դրականության և արվեստի հիմնական դեմքը լինելու է սովետական մարդը, դրական մարդը, ըստ որում ռեալիզմի համար բարձրագույն նվաճում հանդիսացող ժողովրդական շարքային մարդը՝ առաքինի հատկություններով օժտված: Այս խնդիրը բուրժուական հասարակությունը լուծել չէր կարող: Դրական, նոր մարդու բնավորությունը ստեղծում է հեղափոխան և սովետական իրականությունը: Այս մարդու պատկերման խնդիրը լուծում են սովետական գրականությունը և արվեստը:

Այժմ տեսնենք, ի՞նչ է պրակտիկան և ի՞նչ են մեր դրականության անելիքները դրական հերոսի պատկերման տեսակետից:

Ջուգահեռ, կաշխատենք օրինակներ բերել և կլասիկ դրականությունից, նպատակ ունենալով ցույց տալ թե դրական մարդու պատկերման մեջ ի՞նչ է կլասիկ դրականության փորձը, ի՞նչ է այն նմանությունը և մանավանդ սկզբունքային տարբերությունը, որ ունի սովետական դրականությունն անցյալի դրականություններից՝ այդ տեսակետից:

3.

Գրական ստեղծագործական պրակտիկայում դրական հերոսի կերպարի արտացոլումները տարբեր են եղել: Նախ տեսնենք, թե ի՛նչպես են արտացոլվել այդ հերոսի հատկանիշները, երբ դրականության մեջ նկարագրության նյութ են դարձել պատմական իրական անձնավորությունները: Նշանակալից է արդեն այն փաստը, որ հաղթահարելով իր սկզբնավորման շրջանի աբստրակտ պատկերումները, մի քիչ ավելի ուշ, սովետական գրականությունը շրջադարձ է կատարում դեպի կոնկրետ մարդը, նույնիսկ պատմականորեն իրական մարդը: Վերհիշենք Չապաևին: Նա շատ կոնկրետ էր գրող Ֆուրմանովի համար. Չապաևը ճշգրիտ նկարագրություն ուներ: Ֆուրմանովը նրան տեսել և ուսումնասիրել է ամենաուշադիր, առօրեական պարապմունքներում՝ նրա մարդկային բնավորության բոլոր արտահայտություններով: Այդ արտահայտություններից նա հյուսեց Չապաևի խարակտերի հատկանիշները: Դրանով Ֆուրմանովը կատարեց էսթետիկայի մեկ պահանջը,— տալ իրական մաս-

նավորը, տվյալ դեպքում ճշգրիտը: Բայց Չապաևի հմայքը ոչ միայն դրա մեջ է: Նրա հմայքը ռևոլուցիային անվերապահորեն, բոլոր նյարդերով ու ամբողջ վարքագծով ծառայելու մեջ է: Չապաևը ռևոլուցիոն զինվորի մարմնացումն է և շատ կոնկրետ բնավորություն: Չի կարելի իդեալականացնել նրա բնավորության մի քանի կողմեր: Բայց Չապաևի տիպը մեզ հետաքրքրող հարցի տեսակետից ունի այն կարևորությունը, որ պատմականորեն ճշգրիտը Ֆուրմանովի գրվածքում արտացոլվել է որպես իրականի դեղարվեստական ընդհանրացում: Այդ իրականը բոլորովին իրական է: Թվում է, թե պատմական ճշգրիտ Չապաևի հետ իդեալներ կապել չի կարելի, որ ճշգրիտը և իդեալականը միմյանց չեն սազում: Բայց Ֆուրմանովին, որպես ստեղծագործողի, դերը եղել է հենց այն, որ արտացոլելով իրականն իր ռեալ վիճակով, իր հերոսի մեջ դրանով իսկ իդեալական գծեր է տեսել, այսինքն իդեալականը տեսել է սովետական մարդու մեջ: Չապաևն այն օրինակն է, որի մեջ ճշգրիտն ընդհանրացվում է որպես իրական և այնքան ճիշտ իրական, որ հենց դրա մեջ էր նրա իդեալական հատկանիշը: Իրականը դրսից չի բերված և չի փաթաթված Չապաևի բնավորությանը: Չապաևի նվիրվածությունը ռևոլուցիային ու հայրենիքին նրան դարձրել են իրական և միաժամանակ իդեալական, որքանով որ նվիրվածությունը ռևոլուցիային ու հայրենիքին մեր մարդկանց հարատև և մշտնջենական հատկանիշն է: Չապաևի կերպարը մեզ հետ շարունակում է ապրել իր նվիրվածությամբ հանդեպ հայրենիքը և դա է նրա իդեալական հատկանիշը:

Պատմականորեն իրականը և կոնկրետն ընդհանրացնելը և իրականը որպես իդեալական հատկանիշ մատուցելը հատուկ է եղել նաև կլասիկ գրականությանը: Վերհիշենք Նեկրասովի ռուս կանանց՝ դեկաբրիստուհիներ, իշխանուհիներ Տրուբեցկայային և Վոլկոնսկայային: Ռուս գրականության պայծառ կերպարների մեջ նրանք իրենց յուրահատուկ տեղն ունեն: Նեկրասովի ռուս կանանց ոգևորել է թե՛ իրենց ընտանեկան բարձր բարոյականությանը հավատարիմ մնալու դաղափարը և թե՛ հասարակական ընդհանուր շահը գիտակցելը: Նեկրասովի մոտ ևս ներդաշնակում են պատմականորեն կոնկրետը և իդեալականը: Այդ ամենը միաձուլված է բարձր դաղափարականությամբ և ակնհայտ է այն տրադիցիան, որ գալիս է Նեկրասովից դեպի մեր օրերի գրականու-

թյունը։ Սակայն ակնհայտ է և տարբերությունը։ Ջալալի դեպքում գործում է սոցիալիստական ռևոլյուցիայի և սովետական ռեսպուբլիկայի պաշտպանության սկզբունքը։ Վալկոնսկայան այդ սկզբունքից շատ հեռու է. նրան կապում է իր հետ պրոգրեսիվ, բայց ազնվական շարժումը։

Դիմենք Վարդանին, Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» վեպի հերոսին։ Սա ևս պատմականորեն իրական, գոյություն ունեցող անձնավորություն է եղել։

Վարդանի կերպարը հասակ է առնում V դարի իրականության մեջ, երբ պարսկական աշխարհակալությունը Հայաստանը բռնի վերածում էր մարզպանական երկրի, խլում և ոչնչացնում նրա պետական անկախությունը, զրկում նրան նրա գաղափարական ինքնատիպությունից։ Վարդանը լավ է ըմբռնում այն, թե ո՞րն է իր երկրի գոյության պրոգրեսիվ ուղղությունը և գլխավորում է այդ ուղղությունը։ Ահա այս, այսինքն պրոգրեսիվն ըմբռնելը, Վարդանի կերպարի մեջ միասնացնում է իրական և գրական հատկանիշները։ Գրականը Դեմիրճյանն ընդգծում է մեծ չափով, այսինքն գիտակցաբար վեր է հանում Վարդանի պատմական վարքագծի գաղափարական և բարոյական պրոգրեսիվ էությունը և դրանով իսկ լայնացնում է ընթերցողի պատկերացումը խոր անցյալի մասին։ Դասակարգային առումով Վարդանը մարմնավորում է հայ ֆեոդալական նախարարության այն թևի շահերը, որոնք նպաստում էին Հայաստանի անկախության գործին։ Եվ որովհետև կռիվն արտաքին թշնամու՝ նվաճողի դեմ էր, ապա այդ շահերն ընդհանուր նշանակություն էին ստանում։ Մյուս կողմից, Վարդանի ուժերն ավելի նվազ էին, քան պարսիկների ուժերը։ Դրա համար էլ Վարդանի և Վարդանանց մեջ հող է գտնում նահատակության հոգեբանությունը, որը կարող էր չլինել, եթե ուժերը հավասար լինեին։ Սրանից բխում է այն, որ Վարդանի դեպքում գրականը և նահատակության հոգեբանությունը միահյուսված են։ Այս, այսինքն նահատակության շեշտումը, ինչպես նաև կրոնական մոմենտի ընդգծումը, իհարկե, նվազեցնում են Վարդանի գլխավորած ազատագրական շարժման պատկերման արժեքը։ Սակայն անկախ դրանից մենք պետք է շեշտենք, որ Վարդանի կերպարը կրում է իր մեջ Հայաստանի անցյալում արտահայտված ռազմական փառքի տրադիցիան, հարկավ դարձյալ պայմանավորված ֆեոդալական իրականության սոցիալական առանձնահատկությամբ։

Հիշատակենք ևս երկու կերպար՝ իրական պատմական կոնկրետ անձնավորությունների՝ Բաֆֆու Սամվելին և Շերենցի Խութեցի Հովնանին: Սամվելը տանում է մեզ դեպի IV դար, Հովնանը՝ X դար: Կասկածի տեղիք չի տալիս այս խարակտերների առաջացման պատմական հողը՝ այսինքն իրականը: Թե՛ Սամվելը և թե՛ Հովնանը հայրենասերներ են և դավաճանական ուժերի թշնամիներ: Երկուսն էլ արտաքին նվաճողական ուժերի հակառակ բանակն են կազմում: Այս հատկանիշներն ունենալով, նրանք կերտված են որպես դրական կերպարներ՝ խիստ ակտուալ թե՛ Բաֆֆու և թե՛ Շերենցի ապրած օրերի համար: Բայց նկատենք և տարբերությունները. Բաֆֆին, չնայած իր ցանկությանը, ժողովրդին տեսնել չի կարողանում, կամ ճիշտ է ասել՝ ժողովրդի ինքնագիտակցությանը շատ քիչ է տեղ տալիս: Շերենցը Հովնանին ուղղակի «ժողովրդյան մարդ» է համարում, դյուցազնական պանդվածների պարագլուխ: Հովնանը մեր դրականության մեջ XIX դարում, այն բացառիկ դյուտերից մեկն էր, երբ դյուցազնական պանդվածների գլուխ անցած մարդն իր ուրույն սոցիալական կնիքն էր դնում պատմական պրոցեսի վրա: Հովնանի դեպքում ազնվական ճակատը ճեղքված է ժողովրդական մարդու կողմից, քան որում պետք է բարձր գնահատել հենց այն, որ Հովնանը հայրենիքի գաղափարը և հայրենասիրությունը կապակցում է հայրենիքի նկատմամբ դյուցազնական պանդվածների ցույց տված սոցիալական դրական վերաբերմունքի հետ: Սամվելի դեպքում նրա իդեալական հատկանիշը, այսինքն հայրենասիրությունը, հասնում է մինչև հայրենիքի շահերի գիտակցությունը, դեռևս չկարողանալով նույնացնել հայրենիքի շահը ժողովրդի շահերի բացարձակ պաշտպանության հետ: Հովնանի դեպքում հայրենասեր լինել, նշանակում էր հայրենասիրությանն ըմբռնել որպես ժողովրդի շահերի գիտակցություն: Մենք չենք գնում այն հարցը, թե բացարձակ իմաստով ո՞վ է ավելի մեծ դրող՝ Բաֆֆին թե՞ Շերենցը: Սակայն Շերենցն ունի այն առավելությունը, որ Հովնանի մեջ իդեալականը՝ հայրենասիրությունը նա հիմնավորում է սոցիալական, ժողովրդական շահերով: Անհրաժեշտ ենք համարում ավելացնել, որ Հովնանի իդեալական հատկանիշներն, ի հարկե, անսահման իդեալական չեն: Նա ևս անհետևողական է և կրոնական մտածելակերպով օժտված: Նա կրում է իր էպոխայի սահմանափակությունների կնիքը: Ավելին,

այդ սահմանափակություններն ընդծվում են, որովհետև սահմանափակություններ ունի Մերենցի աշխարհայացքը:

Առավել ևս դժվար խնդիր էր դառնում Հովնանի կերպարի պատկերումը սովետական գրականության մեջ: Այդ գործը կատարել է Արման Կոչինյանը 1946 թվին հրատարակած «Խումբեցի Հովնան» վիպերգում: Չենք խոսում վիպերգի արվեստի մասին: Մեզ հետաքրքրող հարցի տեսակետից կուզենք ասել, որ վիպերգի մեջ ընդհանուր. ձևով կա նյութի սոցիալական մեկնաբանություն: Սակայն վիպերգում հերոսը կորցնում է իրականության դպացողությունը, երբ Հովնանը, դիմելով ժողովրդին, ասում է, թե «թևուզ հաղար Ամիրա, թևուզ հարյուր հազար Յուսուֆ զորքեր թափեն մեզ վրա՝ անկարող են խլել մի թիզ մեր սուրբ հողից հարատ պատ»... (100): Նկատենք, որ մի քանի հարյուր կտրիճները պետք է կռվեին «թևուզ հարյուր հազարի դեմ»: Դրականի արժեքը չքանում է, երբ այն չի խարսխված իրականի վրա: Այդպես էլ այս դեպքում:

Մենք սկսեցինք Չապանի կերպարի բնութագրությամբ: Պատմական կոնկրետ անձնավորության իրական-իդեալական դառնալն ամենից բնորոշ և խորունկ ձևով ցույց է տրված սովետական գրականության մեջ: Սովետական գրականության մեջ է միայն, որ դրական հերոսի հատկանիշները հանդես են գալիս միասնությամբ: Այդ միասնությունից զուրկ են եղել բոլոր գրականությունները բոլոր ժամանակներում: Սովետական գրականության մեջ այդ միասնությունը բխում է սոցիալիստական ռևոլյուցիոն իրականությունից, մեր ռևոլյուցիայի վիթխարի խնդիրներից ու հեռանկարներից: 4-րդ, 5-րդ, 9-րդ դարերի և կամ ավելի ուշ ժամանակի պատմական կոնկրետ մարդը, եթե նա սոցիալիստական ռևոլյուցիայի հետ չի կապված, չնայած իր բոլոր առավելություններին և հոգևոր գեղեցկություններին, մնում է պատմական և դասակարգային սահմանափակ միջավայրում: Այդ սահմանափակությունը սովետական գրականության մեջ այլևս չկա, որովհետև մեր իրականությունը սոցիալիզմի տիրապետության իրականություն է:

Բերենք մի օրինակ ևս, Ֆադեևի «Երիտասարդ գվարդիա»-ի հերոսներին: Մենք գիտենք Կրասնոդոն քաղաքը, գիտենք, որ Օլեգ Կոշևոյը ծնվել է այդ քաղաքում, սովորել այնտեղի դպրոցում,

որ վեպի մյուս հերոսները նույնպես շատ կոնկրետ, իրական անձնավորություններ են եղել: Ֆադեևի այս վեպը փաստացի-դոկումենտալ ուսումնասիրության արդյունք է: Ինքը, ընկ. Ֆադեևն ասում է, որ իրեն զանգահարել են և հայտնել, որ այսպիսի նյութ կա, չի՞ ցանկա արդյոք պատվեր ընդունել և եղած նյութերի հիման վրա գեղարվեստական երկ գրել: Նա ծանոթացել է նյութերին, ոգևորվել, մեկնել նաև Կրասնոդոն, որտեղ շատ դեպքեր լրացրել են այն ամենը, ինչ նրան հարկավոր էր վեպ ստեղծելու համար («Театр» 1946 թ., № 9): Մենք բացարձակապես հավատում ենք այն բանին, որ «Երիտասարդ գվարդիա» վեպի հերոսները շատ են իրական և ավելի իրական, քան իդեալական: Սակայն սովետական գրականության մեջ հաջողված երկն ունի այն առանձնահատկությունը, որ ինչ ընդհանրացնում է սովետական-իրականը, այն կրում է իր մեջ իդեալականի հատկանիշներ: Ֆադեևի հերոսներն ամուր, օրգանապես կապված են սովետական մայր հողին: Ֆադեևն ունի իրականի կոնկրետ զգացողություն: Հենված այդ զգացողության վրա, նա իր հերոսներին ամենաանկեղծ և անմիջական վերաբերմունքն է ցույց տալիս. սիրում է նրանց և սիրվում է նրանցից: Քաղաքական բարձր մտածողությունը, բոլշևիկյան պարտիական աշխարհայացքը ներծծվել է վեպի բոլոր մասերը և ստեղծել է գրականության մեջ նոր երևույթ, սովետական օրինակելի գեղարվեստական մի երկ, որ գաղափարապես զինում է մեր ժողովրդին և ներարկում նրա մեջ էսթետիկական բարձր ճաշակ: Ֆադեևի հերոսները ճշգրիտ իրականի և բարձր իդեալականի մարմնացումն են: Սա ցույց է տալիս, որ մեր մարդու իդեալական գծերը կոփվել են իրական պայքարներում և ոչ թե ջերմոցային եղանակով, ինչպես այդ մասին սխալ կերպով երազել են ուտոպիաները:

Պատմական իրական անձնավորության պատկերումը կազմում է սովետական գրականության նշանավոր առանձնահատկությունը: Ա՛յս ամենից լավ ենք տեսնում ռևոլուցիայի առաջնորդների՝ Լենինի և Ստալինի կերպարների կերտման օրինակի վրա՝ սովետական գրականության և բոլոր արվեստների մեջ: Վ. Մայակովսկու «Վլադիմիր Իլիչ Լենին» էպիքական ստեղծագործությունից, սկսած մինչև մեր օրերի՝ Ն. Զարյանի՝ Ստալինին նվիրված ստեղ-

ձագործությունները, սովետական բոլոր ժողովուրդների գրականության և արվեստի մեջ՝ պոեզիա, պրոզա, դրամատուրգիա, թատրոն, երաժշտություն, յուղանկարչություն, գրաֆիկա, քանդակագործություն, կինեմատոգրաֆիա,— մեծապես առաջադիմել են, ներշնչվելով Լենինի և Ստալինի գործով, նրանց կենսագրությամբ, նրանց գաղափարներով:

Սովետական գրականության և արվեստների մեջ դրական մարդու պատկերման լավագույն հիմքը Լենինի և Ստալինի գործունեության և նրանց կերպարների պատկերումն է եղել, սովետական մարդու պատկերն է եղել, որը և իր կնիքն է դրել սովետական ամբողջ գրականության և բոլոր արվեստների վրա, հաղորդելով նրանց բարձր գաղափարականություն և ներշնչված արվեստ:

4.

Այժմ դիմենք դրական հերոսի կերպարի քննությանը ոչ թե իրական պատմական անձնավորության օրինակներով, այլ իրականության գեղարվեստական ընդհանրացման արդյունք հանդիսացող օրինակներով: Սրանով չենք ուզում ասել, որ իրական կոնկրետ նյութից ընդհանրացումներ չեն ստացվում: Հենց հակառակը: Զապաևը, վարդանը, Տրուբեցկոյան, Սամվելը, Կոշևոյը, Տյուլենինը, Ուլյանան իրենց տարբերիչ սոցիալական գծերը և էությունը պահպանելով հանդերձ, ընդհանրացումներ են: Սակայն մենք նկատի ենք ունենում ընդհանրացման հասնելու տարբեր ուղիները,— մի դեպքում՝ որոշակի կոնկրետ նյութի հիման վրա, իրական կոնկրետ անձնավորությունների միջոցով, մյուս դեպքում՝ առանց հասցեի, բայց դարձյալ իրականի ընդհանրացման հասնելու և իրականի ուսումնասիրության հիման վրա:

Հենվելով սովետական գրականության լավագույն օրինակների վրա, մենք կարողանում ենք այնպիսի եզրակացությունների հանգել, որոնք սովետական մարդուն պատմության մեջ հատկացնում են, հիրավի, առանձնահատուկ մի տեղ, բնութագրում նրան որպես նոր, սոցիալիստական ֆորմացիայի գաղափարակիր և դրոշակակիր: Ամենից առաջ սովետական գրական լավագույն երկերն են ապացուցում, որ նոր մարդը պատմական պրոցեսի գիտակից ստեղծողն է, այդ պրոցեսի դեկավարը:

Արդեն ռևոլյուցիայից առաջ, Հ. Հակոբյանի սոցիալիստական պոեզիայի լիրիկական հերոսը տարերային չէ. նա ունի առաջադիր գաղափարներ ու նպատակներ և ռևոլյուցիոն շարժման մեջ է տեսնում դրանց հաղթանակը: Առավել ևս ռևոլյուցիայից հետո թե՛ Մայակովսկու լիրիկական հերոսը, և թե՛ Ֆադեևի Լևինսոնը ոչ այնպիսի մարդիկ են, որ մարտեր են ընդունում (сражаемые) այլ այնպիսի մարդիկ, որ մարտեր են տալիս(сражающиеся). Առիթից օգտվենք ասելու, որ մարտունակությունը և մարտերի մեջ նախաձեռնելը սովետական մարդու մշտական հատկանիշներից մեկն է, որ Չապաևից ու Լևինսոնից մինչև Վասիլի Գրոսմանի «Ժողովուրդն անմահ է» գրվածքի հերոսներ ռուս Բաղարյովը և հայ Բաբաջանյանը— Հայրենական Մեծ Պատերազմի հերոսները— ընդհանուր հատկանիշ է դարձել: Դրանում է արտահայտվում մեր հայրենիքի ռազմական փառքի տրադիցիան: Բայց մեր խոսքը միայն պատերազմական մարտեր մղելու մասին չէ: Խոսքը վերաբերում է մարդկային ոգու արիությանը, ոգու մարտունակությանը: Խարակտերի այդպիսի մարտունակությամբ է օժտված Լևինսոնը, որը, չնայած պատերազմական աննպաստ պայմաններին, հաղթանակը տանում է հենց հոգեկանի ուժգնությամբ: Ֆադեևը կարծես թե կենսագործել է Բելինսկու պահանջն այն մասին, որ արվեստի գործի մեջ հաղթանակը միշտ էլ պետք է մնա ոգու կողմը՝ այսինքն չնայած ֆիզիկական տառապանքին, որին կարող է ենթարկվել մարդը, հաղթելու է տառապող մարդու բնավորության արիությունը, որը միաժամանակ կլինի իդեայի և զգացմունքի հաղթանակը ֆիզիկականի նկատմամբ: Նույն այդ սկզբունքը Ֆադեևը մեծ չափերով կենսագործել է նաև «Երիտասարդ գվարդիա» վեպում: Նկատենք նույնպես, որ սովետական մարդու մեջ, երբ նա հանդիպում է տրագիկական պայմանների, դրանց հաղթահարումը առաջացնում է օպտիմիստական հոգեբանություն, տրագիկականի հաղթահարումը սովետական մարդու օպտիմիստական բնավորության հատկանիշն է: Դրամատուրգիայի մեջ դա հաջող ձևով Վիշնևսկին կոչել է օպտիմիստական տրագեդիա:

Ի՞նչ է սրանից բխում: Դրական հերոսի հատկանիշներն ուսումնասիրելիս մենք տեսնում ենք, որ սովետական դրականությունը խորթ է պատմական պրոցեսի տարերային ըմբռնումը և պատկերումը, որ տարերայինը զսպված է և նրա տեղ ցույց է

արված հշմարիտ օրինաչափությանը: Սրա լավագույն օրինակներից է Սերաֆիմովիչի «Երկաթե հեղեղի» կոժուխը՝ հերոսի հոգեկան ամեհի ուժի տեր մարդու տիպը, որ դժվարագույն պայմաններում իր ընդհանուր ելույթների նպատակներին է ենթարկում մարդկային զանգվածներին և բանական կերպով հեղեղի մեջ ներմուծում մեր շարժման երկարյա տրամաբանությունը: Այդ հատկանիշը, տարերայինը, օրինաչափական հունի մեջ դնելը և շարժմանը բարձր գիտակցականության հաղորդելը, մտնում է սովետական մարդու խարակտերի մեջ և պարտադիր է այդ խարակտերը պատկերելիս: Հատ որում սովետական մարդու խարակտերի գիտակցականությանը ժողովրդին և հայրենիքին ծառայելու գաղափարն է և դա է, որ ստեղծագործական հսկայական ոգեր է խաղում: Այսպիսով, սովետական գրականության մեջ մարդու դրական հատկանիշը մշտապես կապված է նոր մարդու իդեական և հոգեկան ուժերի դրսևորման աֆերայի հետ, իրականության վրա ազդելու հետ: Եվ որովհետև սովետական մարդը ամենագաղափարական մարդն է, ուստի նրա դրական էությունը դառնում է պատմական հերոսյի, ընդունում պատմական կոնկրետ բովանդակություն:

Այստեղից բխում է և այն եզրակացությունը, որ իրականության, ինչպես նաև իդեանների և զգացմունքների նկատմամբ ստեղծագործական դեմք լինելով, սովետական մարդը սուբեկտիվիստական կերպար չի դառնում. նա չի ներանձնավորվում իր մեջ. ընդհակառակը, բանականությունը և հարուստ զգացմունքները սովետական մարդու կերպարի ճանաչողական օբեկտիվ նշանակությունն են ընդգծում:

Հեղափոխության նախապատրաստման և հեղափոխության շրջանի, ինչպես նաև սովետական տարինների մարդու հետաքրքրները եղել են անսահմանափակ: Ոչի՛նչ և ո՛չ մի ուժ չի կարողացել սահմանափակել Մ. Գորկու «Մայր» վեպի հերոսուհուն, ոչի՛նչ և ո՛չ մի ուժ չի կարողացել սահմանափակել Օստրովսկու Պավել Կորչագինին՝ դրսևորելու հեղափոխության նկատմամբ ունեցած իրենց նվիրվածությունը: Կորչագինը հենց այն օրինակն է, որ մշտապես իրական և իդեալական մարդու տիպն է ներկայացնում: Սրանից բխում է նաև այն կարևոր հետևությունը, որի մասին խոսվեց քիչ վեր. սովետական գրականության մեջ որքան խորն է իրական մեր մարդու կերպարի ընդհանրացումը, այնքան իդեալական է այդ մարդը

և այնքան իդեալական է նրա կերպարը: Գնալով սովետական մարդու հատկանիշները տիպավորելու ստեղծագործական ճանապարհով, ընդգծելով սովետական մարդու վսեմությունը, գրողը մեզանում կտա իրական մարդու խարտիաները, որը և որքան թանձրացյալ իրական լինի, նույնքան թանձրացյալ իդեալական կլինի: Այդպես է վարվել Օստրովսկին: Նա ստեղծագործական վերածնել է Կորչագինի կենդանի իրական բնավորությունը և հենց դրանով շեշտել իրականի վճռական նշանակությունն իդեալականի նկատմամբ: Կորչագինը միշտ մեզ հետ է: Մենք միշտ էլ դիմում ենք նրա օգնությանը և մեր պայքարում մենք նրան տեսնում ենք մեր շարքերում, թեև անցել են նրա ժամանակները, անցել են նրան շրջապատող պարագաները: Առավել ևս հետաքրքրական է, որ Կորչագինն այսօր վերածնված է Ֆադեևի «Երիտասարդ գվարդիա»-ում Օլեգի, Տյուլենինի կերպարներում. սա Կորչագինի նոր ծնունդն է՝ կատարված իրական և իդեալական հատկանիշների միասնության հողի վրա՝ նոր պայմաններում:

Սովետական գրականության լավագույն երկերն այսպես են ցույց տալիս մեր մարդուն՝ գրական հերոս, իրականությունը վերափոխող, պատմական պրոցեսը գիտակցող, արդիականը օպտիմիզմի վերածող և անսահմանափակ հեռանկարներով օժտված, որոնք և կենսագործվում են այդ մարդու կողմից կոմունիստական, լավագույն ապագային հասնելու վեհ ձգտումներով լեցված:

Ի՞նչ է ցույց տալիս անցյալի կլասիկ գրականությունը: Արվեստի պատմության մեջ մեծագույն կերպարը— էսքիլոսի Պրոմեթևսը— ծագել է մարդկության բարիք գործելու ձգտումից: Առասպելի նյութն օգտագործելով, էսքիլոսը Պրոմեթևսին ներկայացնում է որպես բոլոր աստվածների թշնամի: Արենքի ստրկացնում է որպես բոլոր աստվածների թշնամի: Արենքի ստրկատիրական դեմոկրատիայի պայմաններում ընթացող քաղաքական և սոցիալական պայքարը Պրոմեթևսի վրա իր դրոշը կնիքն է դրել, ըստ որում շատ որոշ է այն, որ Պրոմեթևսը մարդկության հասկացողության տակ հասկանում է ժողովուրդ, որին և ծառայել է ինքը՝ բռնակալությանը հակառակ: Այս իրական հիմքի վրա է բարձրանում Պրոմեթևսի դեմքը, որը հետագա դարերում պրոգրեսիվ հոսանքների կողմից ըմբռնվել է որպես ամեն տեսակի բռնակալությունների և անազատությունների դեմ մաքառող տիտանմարդու սիմվոլ: Հասկանալի է, թե ինչու է Մարքսը Պրոմեթևսին

համարում «ամենաազնիվ սուրբը և նահատակը փիլիսոփայական օրացույցում»,— փիլիսոփայական տարագրության մեջ:

Պարզ է այն, որ Պրոմեթևսի կերպարի կոնցեպցիան չէր հաշտվում նույնիսկ բուրժուական ռևոլյուցիայի հետ, որը հաստատեց մի նոր իրականություն, մի նոր բռնակալություն՝ ուղղված պրոլետարիատի դեմ, աշխատավորական բոլոր խավերի դեմ: Մյուս կողմից, այժմ շատ են պարզունակ թվում այն գլուխները, որ արել է Պրոմեթևսը: Մարդն այժմ գործում է ամենամեծ բարիքը, կառուցում է բոլոր բռնակալություններից ու հակասություններից ազատագրված մի նոր հասարակակարգ— կոմունիզմ, այս մասշտաբը և տարածությունն են, որ իրական հող են ստեղծում նոր Պրոմեթևսի կերպարը գտնելու համար:

Սակայն եթե մենք ենք ժառանգում Պրոմեթևսին, բուրժուական կուլտուրան, վերածնունդը ներառյալ, Պրոմեթևսի կերպարի ամբողջականությունը պահպանել չուզեց: Արևմտի պատմության մեջ մյուս մեծագույն կերպարը— Շեքսպիրի Համլետը— արդեն չունի միաձույլ բնավորություն, նրա էությունը համլետականության մեջ է, մտքի մեջ խորը անալիտիկ, սակայն գործի մեջ տատանվող և թուլակամ: Բայց, Համլետը հումանիստ է, ազնիվ մարդ, փիլիսոփա, այնքան հումանիստ է, որ և Դանիան և աշխարհը նրա աչքում բանտ են թվացել և նա ևս բռնակալության հետ չի կարողանում հաշտվել:

Իր էվոլյուցիայի մեջ, մանավանդ XIX դարի երկրորդ կեսում, եվրոպական բուրժուական կուլտուրան հրաժարվում է վերածնունդի շրջանի նվաճումներից և եթե դեռ ևս շոշափում և արտացոլում է իրականը, ապա շատ թույլ է արտահայտում իդեալականը, իսկ հետո նույնիսկ իրական-բացասականը հաստատում, որպես դրական և մշտնջենական: Սա ֆալսիֆիկացիա է, որին դիմել է բուրժուական գրականությունը:

Միայն պրոգրեսիվ միտքը կարող էր հրահրել իդեալականի հատկանիշը ստեղծելու տենդենցը: Եվ, ահա, մենք տեսնում ենք, որ նույն XIX դարում նախաձեռնությունն անցնում է ռուս գրականությանը: Ցարիզմի և ճորտատիրության, ինչպես նաև կապիտալիզմի դեմ ուղղված պայքարը ռուս գրականությունը վարեց հանուն նոր իդեալների: XIX դարի ռուս գրականության պատմությունն իրականի ժխտման և բարձր իդեալականի հաստատալյանդակ

ման պատմությունն է: Չացկի, Տատյանա, Պուշկինի և Լերմոնտովի լիրիկան, Տուրգենևի Ելենան, Օստրովսկու Կատերինան, Նեկրասովի ստեղծագործությունը, Չերնիշևսկու Վերա Պավլովնան, Լոպուխովը, Կիրսանովը, վերջապես Ռախմետովը — մեծագույն գրական մարդը, որի կերպարը դաստիարակչական հսկայական նշանակություն է ունեցել ռևոլյուցիոն մի քանի սերունդի կյանքում,— ապա նաև Լև Տոլստոյի Աննա Կարենինան — իր հոգեկանով հերոսատիպ այդ կինը, որ ձեռք է բարձրացրել տիրող հասարակության կեղծ մորալի և սառնախոհի հանված ընտանեկան բռնատիրության վրա,— Բոլկոնսկի, Կուտուզով, մինչ Չեխով, մինչ Գորկի, որի ստեղծագործությունն արդեն ռուսական բանվոր դասակարգի պայքարի գեղարվեստական պատմագրությունն է — սա՞ չէ միթե այն անընդհատ աճող և տիրապետող իդեալական գրականը, որը պետք է մի նոր իրականություն դառնար՝ բանական և մարդկային՝ սովետական պայմաններում: Միայն ռուս գրականության մեջ է, որ մարդու գրական հատկանիշները հետևողական կերպով հասնում են իրենց տրամաբանական զարգացմանը, այսինքն կոմունիստական իդեոլոգիայի և նոր իրականության հաստատմանը և դա շնորհիվ այն վճռական երևույթի, որ պրոլետարական ռևոլյուցիան հաղթանակեց բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ:

Ռուս մեծ գրականության կողմից հայ գրականության վրա թողած ազդեցությունը կարող է ստուգվել և վերոհիշյալ հարցի տեսանկյունով: Բայց դա հատուկ հետազոտության խնդիր է: Այժմ կուզենայինք ասել, որ հայ գրականության մեջ գրական հերոսի կերպարը ներշնչման երկու աղբյուր է ունեցել՝ պայքար ազգային ճնշման դեմ և պայքար սոցիալական ճնշման դեմ: Երկու այդ աղբյուրները միանում են, որովհետև ազգային ազատագրությունը կարող էր գալ սոցիալական ազատագրության հետևանքով և դրա համար էլ Սերվյանի Աղասին, իբրև ցանկալի մի կերպար, կցակի չի մնում և առաջ է գալիս Սունդուկյանի Պեպոն:

Շիրվանզադեի ստեղծագործության մեջ (ճիշտ է, նրա համար տարբերայնորեն) արդեն երևում են Անդրկովկասի բանվորության ներկայացուցիչները: Գրական հերոսի հատկանիշների կուտակումը Թումանյանի և Իսահակյանի միջոցով ընդհուպ հասցնում է մեզ Դավթի և Մհերի կերպարներին: Հակոբ Հակոբյանի մոտ գրականն

արդեն նոր իրականն է՝ նորի աճը, որը և բանական էր և նրան էր վերապահված հաղթանակն ապագայում։

5.

Այժմ քննենք իրական դրական հերոսի կերպարի ստեղծագործման հարցը սոցիալիստական ռեալիզմի և սովետական գրականության աճի տեսակետից։

Ընկ. Ֆադեևն այս մասին գրել է հետևյալը՝

«Այս հանգամանքը, այսինքն գրականության էջերում նոր, դրական հերոսի երևան գալը՝ նրա անսահման զարգացման, բարոյական կատարելագործման հնարավորությամբ, առաջին անգամ համաշխարհային գրականության պատմության մեջ հասցրեց ռեալիստական և ռոմանտիկական սկզբունքների օրգանական միաձուլմանը սովետական գրականության մեթոդի մեջ։ Դրանով իսկ սովետական գրականությունը մարդկության գեղարվեստական զարգացման մեջ հանդես եկավ որպես համաշխարհային նշանակություն ունեցող գրական նոր շրջան, սոցիալիստական ռեալիզմի շրջան» («Կուլտուրա ի ժիզն», 1946 թ., № 18)։ Ընկ. Ֆադեևին մենք այնպես չենք հասկանում, թե սովետական գրականության մեթոդի մեջ ռոմանտիկական սկզբունքը հավասար նշանակություն ունի ռեալիստական սկզբունքի հետ։ Մեր կարծիքով, մեր ռեալիզմի բնույթից է բխում նրա ռոմանտիկան, որպես նրա հատկանիշ, բայց ոչ որպես սկզբունք՝ ռեալիզմին հավասար։ Սոցիալիստական ռեալիզմը ենթադրում է մարդու իրական և իդեալական հատկանիշների միասնություն, որպես հասուն ռեալիզմի և ռոմանտիկայի (բայց ոչ ռոմանտիզմի) միասնություն։ Ակնհայտ է նաև ռոմանտիկայի և ռոմանտիզմի սկզբունքային տարբերությունը։ Ռոմանտիկան հատկանիշ է, ռոմանտիզմը՝ ուղղություն։ Ռոմանտիկայի հարցը մեր ռեալիզմը լուծում է որպես իր հատկանիշներից մեկի հարցը, որ բխում է նրա էությունից, մեր ռեալիզմի խարակտերից։ Ռոմանտիկան սերտորեն առնչվում է իդեալականի հետ, իսկ սովետական գրականության մեջ իդեալականը էության երևույթն է և շատ կարևոր երևույթ։

Այս հարցը ակտուալ է դառնում ոչ միայն այն պատճառով, որ ռեալիզմի և ռոմանտիկայի հարցերը կապված են սովետական մարդու— դրական հերոսի պատկերման հետ. այս հարցն այժմ

պատմական ակտուալություն է ձեռք բերում շնորհիվ այն բանի, որ Գորկու բառերով ասած, սովետական գրականությունը երեք իրականություն է արտացոլում՝ անցյալ, ներկա և ապագա: Ներկայ իրականության՝ այսինքն ապագայի մեջ թափանցելու հարցն այժմ խիստ էական է, որովհետև դա մեր ժողովրդի գործնական կյանքում նշանակում է անցումն ամենաբարձր սոցիալիզմից կոմունիզմին: Ռոմանտիզմը զուրկ է ներկայի նկատմամբ. մինչդեռ մեր ռոմանտիկան, որպես սոցիալիստական ռեալիզմի հատկանիշ, հնարավորություն ունի հենվելու այսօրվա պրոզրեսիվ տարրերի վրա, արտացոլելու այն նախադրյալները, որոնք վաղը պետք է իրագործվեն կատարելապես: Սա նշանակում է, որ իդեալականը մեր գրականության մեջ— իրական մարդն է, օժտված ապագան կանխատեսելու կարողությամբ: Սովետական գրականությունն ապագայի մեջ էլ արմատ և գոնում է իրականացվող պատմականը և վաղվա հնարավոր ձեռքբերումները:

Մենք չենք կարող չասել, որ մեր արվեստի, մեր գրականության մեջ ռոմանտիկան պարունակում է թռիչքների, դեղեցկությունների, հոգևոր մաքրության, մեր մարդկանց իղեաների և զգացմունքների իդեալական արտահայտության հնարավորություններ: Ահա ինչու մեր ռոմանտիկան, նույնիսկ որպես հատկանիշ, ավելի լայն է, բովանդակալի ու հիմնավորված, քան անցյալի պրոդրեսիվ ռոմանտիզմը, այլևս բոլորովին չխոսելով հետպատմական ռոմանտիզմի մասին: Մեր ռոմանտիկան ունիվերսալ հատկանիշ է, որովհետև գոնվում է իրականացման բազմահարուստ պրոցեսի մեջ:

Սոցիալիզմից ստուդանաբար կոմունիզմին անցնելը մեր գրականության և արվեստի նոր իդեալն է դառնում: Ահա իդեալականի ու ռոմանտիկայի գործունեության ու ծավալման շատ լայն ասպարեզ: Այս նոր իրականությունն անհամեմատ մեծ է և անհամեմատ բովանդակալի, քան Կորչագինի և Շոլոխովի Դավիդովի իրականությունը: Ոչ մի ռոմանտիզմ այսպիսի իդեալներ չի ունեցել, բայց մեր ռոմանտիկան այս իդեալներն ունի, որովհետև հենվում է պատմական և իրական ամենապրոգրեսիվ զարգացման տենդենցների վրա:

Սրանից բխում է այն, որ մեր զարգացող իրականությունը—

ծնում է մեր ռոմանտիկան, որ այն ունի օբյեկտիվ բովանդակություն։

Այժմ դժվար չէ բացատրել, թե ինչո՞ւ Չապաեը, Լեվինսոնը, Կոժուխը, Կորչագինը, Դավիդովը գրական մարդիկ են և սովետական գրականության կողմից ստեղծված նոր տրադիցիաների արտահայտություններ։ Ե՛վ սովետական հայ գրականության մեջ, և՛ ռուս գրականության մեջ մասսայական մարդը գրական մարդն է դառնում։ Ահա՛ այն հեղաշրջման արդյունքը, որին հասնում է սովետական գրականությունը մարդու պատկերման արվեստում։

«Ընկեր Ստալինը մեզ սովորեցնում է նայել ոչ թե դեպի հետ, այլ առաջ։ Ապագային նայելու հենց այս ձգտումը և ներկան ապագայի լույսով լուսավորելն ընկնում է ռևոլյուցիոն ռոմանտիկայի հիմքում, որը հանդիսանում է սոցիալիստական ռեալիզմի անհրաժեշտ հատկությունը։ Այն ժամանակ, երբ Արևմուտքում բուրժուական գրականությունը երես է թեքում իրեն վախեցնող· վաղվա օրվանից, ավետում է աշխարհի վախճանը և պեսիմիզմ ու անկումայնություն է քարոզում, մեր գրականությունը պաշտպանում է ռևոլյուցիոն ռոմանտիզմի տրադիցիաները և հանդիսանում է խորապես և հետևողականորեն օպտիմիստական»։ („Культура и жизнь", *1947 թ., (26) մարտի,*— „О большевисгской партийности Советской литературы" *խմբագրական հոդվածից)։*

«Կուլտուրա ի ժիզն» թերթի խմբագրական հոդվածում շատ որոշ է շարադրված այն, որ ռևոլյուցիոն ռոմանտիկան սոցիալիստական ռեալիզմի անհրաժեշտ հատկությունն է և հենց դրա մեջ է մեր գրականության առաջին շրջանի համար բնութագրական ռևոլյուցիոն ռոմանտիզմի տրադիցիաների պաշտպանությունն այսօր։

6

Այժմ մի քանի դիտողություն այն մասին, թե գրական հերոսի հատկանիշներն ինչպես են արտահայտվել սովետահայ գրականության մեջ։ Հարկավ մենք միայն դիտողություններ կանենք, երբեք չվերցնելով մեզ վրա հարցի ամբողջական շարադրության ծանրությունը։ Դա հետագայի գործ է։

Դեռևս Ստ. Զորյանի «Գրադարանի աղջիկը» պատմվածքի հերոսուհին կրել է իր մեջ գրականի հատկանիշ։ Այդ հատկանիշով է այդ կերպարն ապրում մինչև մեր օրերը։ Սակայն նույնը չենք

կարող ասել նույն հեղինակի «Մեղքը» պատմվածքի մասին: 1920 թվին Զորյանն այլ կերպ է մտածել, քան թե երբ գրել է «Գրադարանի աղջիկը»: Բայց ինչ որ նա գրել է 1920 թ., չի առնչվում նաև հայ կլասիկ գրականության տրադիցիաների հետ, որոնց համաձայն, օրինակ՝ կհիմնավորվեր թե ինչո՞ւ «Մեղք» պատմվածքի հերոսուհի Հռիփսիմեն ինքնասպանության պիտի գործի,— արդյոք այն միա՞կ պատճառով, որ իր բարեհամբույր և սիրելի ամուսինը, որը նրան բարեկեցիկ կյանք է տվել, հասակով ավելի մեծ է, քան ինքը, թե՞ կան նաև այլ պատճառներ, (օրինակ՝ կնոջ անհատականության ոտնահարումը քաղքենիական-բուրժուական հասարակության մեջ և այլ պատճառներ), որոնց մասին Զորյանը չի խոսում: Հռիփսիմեի ինքնասպանության պատճառը պատմվածքում հեղինակը համարում է ամուսինների հասակների տարբերությունը և այն, որ ամուսնու բարեկամ երիտասարդ Ռուբենը, չկամենալով հորեղբոր պատվին կպչել, Հռիփսիմեի հետ չի կապվում: Ըստ պատմվածքի, հերոսուհին կյանքից շատ հեշտ է հրաժարվում, այն էլ չափազանց լավ կյանքից: Զորյանը կնոջ տրագեդիայի արմատները խոր ցույց չի տալիս: Ի հարկե սա գրական հերոսի օրինակը չէ, որին նա հասել է «Գրադարանի աղջիկը» պատմվածքում:

«Ավելորդը» պատմվածքում Դ. Դեմիրճյանն իրական կյանքն արտացոլում է ցնցող նկարագրությամբ, բայց այդ երկը իդեալական ոչինչ չունի իր մեջ, նրա նյութից իդեալականը չի բխում: Չկա ոչ մի հեռանկար: Հեղինակը պատմվածքում այն պարագաներում հեռանկարներ չի գրել: Այժմ Դեմիրճյանը նույն ողբերգությունն, իհարկե, կնկարագրի պատմական մեծ հեռանկարներով, պարզ տեսնելով փրկության այն ուղին, որ տվել է հայ ժողովրդին սովետական իշխանությունը: Մենք հակված ենք կարծելու, որ մարդու իդեալական հատկանիշների ներդաշնակումը կատարվում է միմիայն հեռանկարային և առաջավոր մեծ գաղափարի առկայության դեպքում: Հիշենք դարձյալ Դ. Դեմիրճյանի Նիգյարին: Շարունակելով նույն այս միտքը զարգացնել, Շոլոխովի «Խաղաղ Դոնը» էպոպեում, հանձին նրա հերոս Գրիգորի Մելեխովի մենք նկատում ենք, որ այո՛, Գրիգորի Մելեխովը մի շատ խոշոր ընդհանրացում է և իրական ընդհանրացում, բայց չենք տեսնում նրա իդեալական հատկանիշը: Էպոպեում նա այդպիսի հատկանիշով օժտված չէ, որովհետև իր սոցիալիստական երկվությամբ ռևոլյուցիայի և քա-

պաքսյիական կռիվների տարիներին խիստ տարուբերվել է հակադիր բանակների միջև, հակասական է, նույնիսկ արատավորված: Մենք չենք խոսում ամբողջ վեպի մասին, բայց առանձին վերցրած Միլեխովը պատմականորեն իրական է, սակայն ոչ իդեալական մարդ: Բայց Բե՛ Դևմիրճյանը և Բե՛ Շոլոխովը ավել են և դրական կերպարներ, որոնց մեջ իրականն արդեն իդեալականի հետ ներդաշնակ է: Օրինակ, Շոլոխովի Դավիդովը: Բերած օրինակները հաստատում են մեր այն եզրակացությունը, որ սովետական դրականության մեջ դրական հերոսի կերպարը զարգանում է այնտեղ, որտեղ նա ոչ միայն ներդաշնակ է իրականության հետ, այլև անվում է հեռանկարային մեծ և առաջավոր գաղափարով, որպիսին կոմունիզմի լիակատար հաղթանակի գաղափարն է մեր երկրում:

Կա և կարևորագույն մի հարց— մարդկանց պատմական կեցության և նրանց կենցաղային առօրյայի պատկերման հարցը: Մարդկանց պատմական կեցությունը կտրված չէ նրանց կենցաղից, փոխվում է նրանց սոցիալական կեցությունը, փոխվում է և կենցաղը. պրոլետարական կեցությունը ստեղծում է պրոլետարական կենցաղ: Բայց կենցաղը հետևում է մարդկանց կեցությանը և առօրյա կենցաղային շահերով չի կարելի լուսաբանել մարդկանց պատմական կեցությունը: Դրականի պատկերումը նվազում է բոլոր այն դեպքերում, երբ առօրյա կենցաղն իր կամքն է թելադրում և աղճատում ու աղքատացնում է մարդու իրական կերպարը: Այս դեպքում մեր դրականության խնդիրն է՝ ազատագրվել էմպիրիզմից:

Կյանքը լայնորեն ընդգրկելու ցանկության ծնունդ է վիպասան Սիրասի «Անահիտ» մեծածավալ երկը: Վեպի այժմեն մենք չենք պատմի, բայց նրա այժմեական հիմնական դրույթունները խոսում են առօրյա կենցաղի դերակշռության մասին: Հերոսուհին դժգոհ է իր ամուսին Հաննայից, որովհետև սա կնոջ ինքնորոշման կողմնակից չէ, իսկ ինքը ապիկար մարդ է: Անահիտի տատանումների պահին նրան որսում է կավատ կին Նատաշան, որը և նպաստում է Անահիտի և քողարկված թշնամի Ռաֆայելի մերձեցմանը: Ռաֆայելը դաշնակների պատվերով անցյալում սպանել է կարմիր հրամանատար Միքայելին, որի եղբոր դյուղացի Ավագին այժմ հանդիպելով, որոշում է նրան մեջտեղից վերացնել: Այս որոշման

հետևանքով վեպի մեջ են մտնում խորթ և թշնամի այլ տարրեր ու նկարագրվում է նրանց կոնսերվատիվ հոգեբանությունը (Շարո և այլն)։ Էլ չենք խոսում այն մասին, որ հանցանքի հետքերը ծածկելու համար Ռաֆայելն իր կողմից վարձած մարդասպան Շարոյին զցում է իր նախկին կնոջ՝ Քիբարի գիրկը։

Անահիտն իր հերթին պատճառ է դառնում, որ իր երկու երեխաները տրագիկ դրության մեջ ընկնեն։ Ճիշտ կլինի եթե ասենք, որ վեպում բուրժուական տիրապետությունից մեր հասարակության մեջ խցկված մարդիկ հենվում են վեպի էջերում առատորեն ցույց տրված հին կենցաղի մարդկանց վրա։ Պատմական նոր կեցության արտահայտիչը Անահիտի եղբայր բանվոր Մուշեղն է՝ ջրանցքի բացման տեսարանի նկարագրությամբ։ Բայց Մուշեղը և այդ տեսարանները պատմական նոր կեցության լիարժեք պատկերը չեն տալիս։ Հին կենցաղը դուրս է մղել նոր կենցաղը, որի ընդարձակ նկարագրությունը սրա հետևանքով վեպում չենք տեսնում։ Սիրասը խոշորացրել է չարիքը, չարիք, որ հարկ է ասել, նրա կողմից դատապարտվում է, բայց չի խոշորացրել բարիքը, որն արդեն աճում և տիրապետող էր դառնում։

«Անահիտ» վեպը հրատարակված է 1940 թ. և մենք նրան մոտեցանք նոր պահանջներով։ Բնականաբար, Սիրասն այժմ կանգնած է այն դիրքերի վրա, երբ ցույց է տալիս, թե ինչպես է հաղթանակում նորը։

Մենք նկատի ունենք նրա «Հայր և որդի» ընդարձակ պատմվածքը, որի նյութն առնված է Հայրենական Պատերազմի առաջին շրջանի օրերից։

Պատմվածքի հերոս բանակային Սուրենի կերպարը Սիրասը ներկայացրել է բազմազան կապակցություններով; տալով Սուրենի և ռուս զինվորականի՝ Սմիրնովի հոգեհարազատության նկարագիրը, Սուրենի և գնդի հրամանատարի՝ Կոլոսովի դեպի հայ ժողովրդի պատմական ճակատագրին ունեցած կապակցության մեջ, Սուրենի և բարոյական բարձր հատկություններով օժտված ռուս աղջիկ Վերայի փոխադարձ համակրությամբ և վերջապես՝ Սուրենի հոգեհարազատ ընկեր, բայց արդեն սպանված և ընտանիքը կորցրած Սմիրնովի փոքրիկ Միշայի, իր և Վերայի ապագա նոր ընտանիքի գաղափարը հղանալու շեշտումով։ Շատ կարևոր է Սիրասի այն միանգամայն ճիշտ հայացքը մեր հասարակության վրա, որ սովե-

տական բոլոր մարդիկ միասնացած են մեծ հայրենիքի նկատմամբ անձնազոհ լինելու իրական հոգեբանությամբ և աշխարհայացքով։ Այս պատմվածքն այն օրինակն է, երբ նորի հասունության շնորհիվ մեր մարդը տրվում է դրական հատկանիշներով։ Որովհետև նորը, դրա համար էլ դրական — Սիրասի «Հայր և որդի» պատմվածքն այս է ապացուցում։

1946 թ. հրատարակված «Պատերազմ» վեպում (Թափալցյանի) գերակշռում է նոր կենցաղի և նոր մարդկանց նկարագիրը։ Բայց «Պատերազմ» վեպում հինը մտել է նորի մեջ և դրանով իսկ արժեքազրկել նորի պատկերումն այս վեպում։ Ի՞նչ նոր էություն ունեն այս վեպի հերոսները՝ Հայկազը, Արամը, Ծովինարը և մյուսները։ Նրանք ապրում են սոցիալիստական հասարակության մեջ և պետք է որ կոմունիստական վարքագիծ ունենային, լինեին պրոգրեսիվ մտածողներ և ռևոլյուցիոն իրականության մեջ ապրելով, լինեին սովետական դրական մարդիկ։ Բայց նրանք այդպիսին չեն։ Համեմատեցեք նրանց 1862—63 թ. թ. Չերնիշևսկու գրած «Ի՞նչ անել» վեպի հերոսների հետ, որոնց հեղինակը, ի դեպ ասած, սովորական մարդ է համարում։ 1946 թ. հրատարակված գրքում սովետական դրական մարդիկ (և ոչ թե բացասական տիպեր) խանդի հողի վրա միմյանց ախոյան են հռչակում, դառնում թշնամիներ և էգոիստներ և կամ իրարու զիջում հենց իրենց սիրո առարկան։ Չերնիշևսկու հերոսը՝ Ռախմետովը խանդի մասին մինչև այսպես է դատում՝ «Զարգացած մարդը այն (խանդը) իր մեջ չպետք է ունենա։ Դա եղծանված զգացմունք է, կեղծ զգացմունք է, զզվելի զգացմունք է, դա այն կարգի երևույթ է, երբ ես իմ սպիտակեղենը ոչ ոքի չեմ տալիս, չեմ տալիս իմ մունդշտուկը՝ նրանից ծխելու. դա մարդու նկատմամբ ունեցած այն հայացքի հետևանք է, որի համաձայն մարդն ինձ է պատկանում, ինչպես ինձ է պատկանում իմ իրը»։ Լոպուխովի էթիկան այն է, որ երբ ես բախտավոր եմ և երջանիկ, ուզում եմ որ բոլոր մարդիկ բախտավոր լինեն և երջանիկ։ Այս էթիկայից Թափալցյանի հերոսները մի կաթիլ անգամ չունեն։ «Պատերազմ» վեպում իրականն աղքատ է տրված, դրա համար էլ իր մեջ դրական ոչինչ չի կրում։

Ճիշտ նույն միտքն է ապացուցում Հր. Քոչարի «Սրբազան ուխտ» գիրքը, միայն կատարելապես դրական արդյունքով,— այ-

սինքն թե, երբ իրականը պղծացված է և մեծ հավատ կա նրա նը-կատմամբ, իդեալականը բխում է իրականից, դառնում իրականը զարդարող հատկանիշ: Քոչարը և՛ իրական հողն է տեսնում, և՛ հողի վրա քայլող մարդու հոգեկան գեղեցկությունները: Հիշենք նրա «Բարեկամություն», «Մի կնոջ պատմածից», «Որդու վերադարձը», «Կյանքի հաղթանակը», «Գեներալի քույրը», «Սրբազան ուխտ», «Պատմության մեծ օրը» պատմվածքները և ակնարկները: Դրանց միացնող կենտրոնական և հիմնական դեմքը— սովետական մարդն է, մասսայական գրական մարդը, որի իրական նկարագիրը գալիս է և ձնում նրա գրական մարդու կերպարը:

Մեր դրամատուրգիայի մեջ ևս մենք կգտնենք օրինակներ, որոնք կրում են իրենց մեջ իրականը— գրականը: Դա Վ. Վաղարշյանի Ասլան Ամին է, «Օղակում»-ից և «Վանքածոր»-ից, Լուսիկը,— դարձյալ «Վանքածոր»-ից, Գուլակյանի մայր Աննան, «Արշալույսին» պիեսից: Սրանց բնութագրող հատկանիշը՝ հայրենիքին նվիրված լինելն է, գաղափարականությունը, բարոյականությունը, անհատական և հասարակական ուղղամիտ վարքագիծը:

Թանգիայում գրական հերոսի հատկանիշները կրողն ինքը ստեղծագործողն է, կամ լավ է ասել՝ նրա լիրիկական հերոսը: Եվ որովհետև այդ լիրիկական հերոսը արտացոլված զարգացող և ծավալվող սոցիալիստական անհատն է, նա էլ ամենից ավելի անմիջական է իրականն արտահայտելու տեսակետից:

Մեր նյութին չի վերաբերում սովետահայ պոեզիայի վիճակի քննարկումը և գնահատականը: Այսօր դա չէ հարցը:

Նկատի ունենալով սովետահայ պոեզիայի լավագույն մասը և նրա նվաճումները, մենք պետք է ասենք, որ այն իր լիրիկական հերոսով՝ այսինքն իր անմիջական վերաբերմունքով դեպի կյանքը, օժտված է պաթետիկ շնչով, պայծառամիտ է և լավատեսական: Իբրև օրինակ կարող ենք հիշատակել Նաիրի Զարյանի և Գեղամ Սարյանի քնարերգությունը, ստեղծագործական տարբեր կերպերով և արտահայտչական տարբեր միջոցներով մեր օրերի հետ կապված մարդուն ներկայացնող և փառաբանող քնարերգությունը: Քաղաքական մտքի պաթետիկ դրսևորում, վեհացնող ռոմանտիկա, խոհական քնարերգականություն, և՛ մաքառումն, և՛ քնքշանք, և՛ սեր, և՛ ատելություն, բայց միշտ պայքարող և հաղթանակի ձգտ-

ողը— սրանք են Զարյանի և Սարյանի դրական հերոսի հատկանիշները, որ բարձր են և գնահատելի:

Մեր կարծիքով սովետահայ գրականության մեջ տեղի է ունենում դրական հերոսի կերպարի հատկանիշների կուտակման պրոցես: Բայց, մեզ այնպես է թվում, որ այդ պրոցեսը դեռ դանդաղ է ընթանում և գրականության կենսական շահն է՝ արագացնել այն:

Որտե՞ղ է մեր մարդու խարտիների զարգացման հզոր աղբյուրը և ուժը:

Սովետական մարդու կերպարի կերտման անսպառ հնարավորությունները տրված են մարքսիության պատմության մեծագույն առաջնորդների՝ Լենինի և Ստալինի կյանքի ու գործունեության մեջ, նրանց ղեկավարած պարտիայի և ժողովրդի մեջ: Ահա՛ իրականը և միակ իդեալականը: Նոր մարդը— և՛ իրական, և՛ իդեալական— առնչվել, պահպանել ու զարգացնում է առաջին սոցիալիստական պետությունը, կոմունիզմի առաջին հայրենիքը, ժխտել է մարդը-մարդու համար դարձ բարոյականությունը, հիմնադրել և խորացնում է կոլեկտիվիզմի բարոյականությունը, միաձուլել է պետականությունը և պրակտիկան, ստեղծագործում է քաղաքականության հզոր ալիքի վրա ամուր կանգնած, սիրում է եղբայրական ժողովուրդներին, ունի վեհ նպատակներ՝ կոմունիզմի կառուցման նպատակը, ձեռքբերում է բնության և հասարակության մինչ ունայն ուժերը և ներգործում է հանճարեղորեն կարգավորված արտադրության և բնության վրա:

Նոր մարդը օպտիմիստ է, իդեալներ ու ղեկավարներով հարուստ, ամենից առաջ արմատավորված, որ իդեալները շուտ իրականություն դառնան:

Նոր մարդու այդ իդեալները խոր արմատներ ունեն նրա մեջ և նայում են ապագային:

Այսպես պատկերել նոր մարդուն, այսպես ներդաշնակել նրա իրական և իդեալական հատկանիշները— հիրավի, նշանակում է մեր դրականությանը տալ ճշմարիտ հեռանկարներ: Այս ներդաշնակությամբ սովետական դրականության առավելությունն է և բուռն ներկայությունից: Իդեալականը մեր իրական հատկանիշն է և

գրականությանը հեռանկարայնություն, վեհություն և գաղափարական նպատակասլացություն է տալիս։

Բուրժուական ռեակցիոն փիլիսոփայությունն այժմ ասում է՝ «Հասել է մարդու վախճանը»։ Մենք ասում ենք՝ «Մարդը՝ այդ հըպարտ է հնչում»։ Սովետական մարդուն ճիշտ պատկերել, նշանակում է տեսնել նրան կյանքը զարգացնելու և կատարելագործելու պրոցեսի մեջ։

Չկտրվել իրականությունից և միաժամանակ հարստացնել իրականությունը, ա՛յս է մեր մարդու խնդիրը։

Սովետական մարդն առավել մեծ ապագա ունի։ Գրականությունը պետք է առաջնորդի դեպի այդ ապագան։ Գիտակցել և իրագործել այդ խնդիրը՝ մեր գրականության շահն է։ Վաղը նրան նոր վերելք է սպասում։ Ստեղծել իդեապես և արվեստով բարձր գրականություն, կնշանակի կատարել պարտիայի և ժողովրդի պահանջը, որ սպառիչ կերպով տեղ է գտել Կենտրոնական Կոմիտեի որոշումների մեջ։

10. 4. 47.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Շ. ԳՅՈՒԼԻ-ՔԵՎԽՅԱՆ

ԿԼԱՍԻԿ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.

Կլասիկ գրականության օգտագործման հարցերի բազմակողմանի լուսաբանությունը սովետական ռուս գրականության, քննադատության կարևոր անելիքներից մեկն է եղել և այդպիսին էլ մնում է այսօր: Թեորիայի գծով և սովետական գրողների ստեղծագործության քննարկման ուղղությամբ առաջ տարած այդ լուսաբանությունը հետին տեղը չի գրավել սովետական ռուս գրականության ձեռք բերած հաջողությունների էական նախապայմանների մեջ: Բավական է միայն հաշվի առնել այն հսկայական բարերար ներգործությունը, որ ունեցել է և ունի Մաքսիմ Գորկին սովետական ամբողջ գրականության, մասնավորապես ռուս գրականության վրա, ոչ միայն իր հանճարեղ ստեղծագործությամբ, այլ նաև անցյալի գրականությանը և ժողովրդական բանահյուսությանը նվիրած իր հանրածանոթ հոդվածներով, որոնց մեջ սոցիալիստական գրականության մեծ վարպետը պատմականության լույսի տակ՝ խորաթափանց կերպով և նրբորեն պարզաբանում է նաև սովետական գրականության՝ կլասիկայի հանդեպ ունենալիք վերաբերմունքի խնդիրները:

Ցավոք, նույն վիճակը չենք կարող նշել մեզ մոտ: Աչքի առաջ ունենալով մեր գրականագիտական և քննադատական կադրերի օրական ու քանակը, մենք դարձյալ չենք կարող հաստատել, որ բավարար կերպով ենք կատարել մեր պարտավորությունները այդ բնագավառում: Կլասիկ ժառանգության օգտագործման հարցերը սովետահայ գրականության, քննադատության մեջ փոքր ի շատե լայն ծավալով, սիստեմատիկորեն, թեորիական բարձր մակարդակի վրա

չեն շոշափվել։ Մենք կսկտուր դատողություններով, մասնակի դիտողություններով ենք բավարարվել, երբ հարկավոր է եղել պատասխանելու թե ի՞նչ չափով, ի՞նչ սահմաններում են սովետահայ գրողները օգտագործում կլասիկ գրականությունը, թե ի՞նչ հիմունքներով, ի՞նչ ուղղությամբ, ի՞նչ որակով է տեղի ունեցել այդ օգտագործումը։ Ներկա հոդվածում մենք ոչ մի հավակնություն չունենք նույնիսկ ընդհանուր գծերով պարզաբանելու այս հարցը։ Այդ անելու համար կպահանջվեր մի ծավալուն ուսումնասիրություն։ Մենք բավարարվում ենք անհամեմատ նեղ շրջանակներով, բացի հարցին վերաբերող մի քանի մեթոդոլոգիական. բնույթի դրույթներ շոշափելուց և գրական-պատմական որոշ դիտողություններ անելուց, մենք առաջ ենք քաշում սովետահայ պոեզիայի՝ մեր կլասիկ ժառանգության հետ ունեցած և ունենալիք կապին վերաբերող մի քանի սկզբունքային խնդիրներ՝ ուշադրություն հրավիրելով նրանց լուծման որակի վրա։

Սովետահայ գրականությունն իր սկզբնավորման շրջանից զարգացել է օգտագործելով հայ կլասիկ ժառանգությունը, ռուս կլասիկան, համաշխարհային մի քանի խոշոր գրողների ստեղծագործությունը, իսկ վերջին էտապներում— նաև իր նախընթաց տարիների նվաճումները և մասնավորապես ռուս սովետական գրականության հարուստ փորձը։ Մենք այս հոդվածում քննության ենք առնելու միայն հայ կլասիկ գրականության և սովետահայ գրականության փոխհարաբերության հարցը։

Սովետահայ գրականության ստացած կլասիկ ժառանգությունը հարուստ է։ Մեր անցյալի սոցիալական կյանքը, մեր ազգային առաջադեմ տրադիցիաները ճանաչելու տեսակետից նա մի անգնահատելի գանձ է։ Այդ ժառանգության մեջ, թեպետ և ոչ համապատասխան լրիվությամբ, արտացոլվել է մեր հասարակական իրականության օրինաչափական ընթացքը, մեր պատմության կենտրոնական խնդիրները, մեր սոցիալ-քաղաքական կյանքի հիմնական հակասությունները, դասակարգերի պայքարը, մեր ժողովրդի հերոսական և դժվարին պայքարը զանազան տիպի կեղեքիչների, ճնշողների դեմ։

Կլասիկ ժառանգության տրադիցիաներից առաջինը ջերմ հայրենասիրությունն է։ Մեր ժողովրդի պատմական բախտի թելադրմամբ նրա հայրենասիրությունը գունավորված է եղել վշտով.

ախրությամբ, ափսոսանքով, դառնությամբ, երբեմն էլ ցասումի, պայրույթի, վրեժի զգացմունքներով, բայց ոչ երբեք հուսահատությամբ, մռայլ հոռետեսությամբ, անկումայնությամբ: Հայրենասիրությունը մեր կլասիկ ժառանգության մեջ սերտորեն զուգորդված է մեր ժողովրդի մի այլ տրադիցիայի— ազատասիրության հետ: Սրիճյուղված է եղել, բայց մի աղբյուրից է հորդել այդ ազատասիրությունը: Ազատասիրական զգացմունքները, որոնք համակել են մեր ժողովրդին, մի կողմից արտահայտել են "օտար բռնակալների լուծը թոթափելու, ազգային անկախության ձեռք բերելու նրա իղձն ու բաղձանքը, ձգտումներն ու տենչանքը, մյուս կողմից— սոցիալական ճնշիչ ուժերի շղթաները ջարդելու նրա ձգտումներն ու փորձերը, սոցիալական անարդարության դեմ ոտքի կանգնելու պատրաստակամությունը: Հայրենասիրությանը և ազատասիրությանը միահյուսված է մեր ժողովրդի մի այլ տրադիցիան— պայքարասիրությունը: Լավատեսական ոգի է ունեցել մեր ժողովուրդը. նա հրապել է իր ազատարար ապագան և ներշնչված է եղել իր խնդալից օրերի գալստյան հավատով: Դաժան ու անողոք է չարը, հյուծող ու արտամաշ է անարդարությունը, բայց վերջ կունենան երկանք. մարդկայինը, բարին, արդարացին կհաղթանակեն— այս մտածին է հարատև հնչել մեր ժողովրդի ոգում, նրա գրականության մեջ:

Այդ տրադիցիաներն են, որ ժառանգել է մեր սովետահայ ժողովուրդը և արտահայտել ու արտահայտում է արմատապես վերաձևված կերպով: Այդ տրադիցիաներն են, որ սոցիալական բովորովին նոր լիցքով շարունակել է և է՛լ ավելի ցայտունորեն շարունակելու է սովետահայ գրականությունը: Պատմական մեծագույն փոփոխման է ենթարկվել մեր ժողովուրդը՝ սոցիալիստական ազատարար մեծ ռևոլուցիայի հետևանքով, նոր բնույթ է ընդունել նրա հայրենասիրությունը: Իր նախնիքների նախկին անձուկ հայրենիքի փոխարեն նրան ոգևորում է անհունորեն ընդարձակ սահմաններ ունեցող իր սովետական մեծ հայրենիքը, նրա հզորությունն ու ստեղծարար ուժը է՛լ ավելի մեծացնելու սոցիալիստական աշխատանքը, իր մեծ հայրենիքի եղբայրական ժողովուրդների ստալինյան բարեկամությունը:

Հիմնավորապես այլ երանգավորում է ստացել նաև մեր ժողովրդի՝ իր նախնիներից ավանդություն մնացած ազատասիրական ոգին: Նրանք իրենց հինավուրց երկրում պայքարում էին ազգային ճնշումներից, սոցիալական կաշկանդումներից ազատագրվելու նպատակով: Այժմ այդ ճնշումներն ու կաշկանդումները իսպառ վերացված են, սովետահայ ժողովուրդն ազգային և սոցիալական լիակատար ազատություն է վայելում իր անծայրածիր երկրի բոլոր ժողովուրդների հետ: Նա — սովետական ժողովուրդների մեծ ընտանիքի իրավահավասար անդամը — հանուն իր հայրենիքի ազատության, ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ, եղբայրական մյուս ժողովուրդների հետ միասին, հերոսաբար զինաբախվեց տմարդի և վայրագ թշնամու հետ, մասնակցեց թշնամուն հասցրած ջախջախիչ հարվածներին, նրա դեմ տարած փառավոր հաղթանակին և նույն վճռականությամբ, նույն վստահությամբ տոգորված՝ պատրաստ է իր մեծ հայրենիքի ազատությունը պաշտպանելու բոլոր այն մութ ուժերից, որոնք ոտնձգություններ են անում մեր երկրի դեմ: Այժմ էլ մեր ժողովուրդը պահպանում է իր պապերից ժառանգած պայծառատեսությունը, աննկուն լավատեսական ոգին, բայց նա իր պապերի պես, իրականությունից երեսը թեքած, ետ մղված վիճակում չէ գալիք պայծառ օրեր ակնկալում, այլ միշտ դեպի բարձր ու առաջ ձգտող իր անսպառ ստեղծարար ուժերին ապավինած: Նա ոչ միայն հավատում է, որ չարը պիտի պարտվի, այլ գիտե, որ պայքարով է միայն հնարավոր նրա պարտությունը արագացնել, նա ոչ թե թուլացած վիճակում է մի լավ ապագա սպասում, այլ ստեղծում է այն իր մեծ հայրենիքի անպարտելի ուժի, սովետական ստեղծագործական աշխատանքի ծավալման մեծագույն հնարավորությունների, կոմունիզմի հաղթանակի միջոցով:

Խոսելով սովետահայ ժողովրդի՝ իր նախնիքներից ժառանգած տրադիցիաների մասին, մենք ի հարկե չենք ցանկանում նշել, որ միայն մեր ժողովուրդն է իր մտայնությունն արտահայտել սերունդից սերունդ փոխանցված այդ տրադիցիաների մեջ: Հայրենասիրությունը, ազատասիրությունը իրենց նախնիքներից ժառանգել են և նոր որակով շարունակում են զարգացնել նաև սովե-

տական բոլոր ժողովուրդները։ Միակարգ լինելով հանդերձ իրենց ընդհանուր բնույթով, այդ տրադիցիաներն ամեն մի ժողովրդի պատմական բախտի յուրահատկությունների հետևանքով ստացել են առանձին գունավորում, առանձին կոնկրետ նյութականացում և որպես պատմական պրոցեսի արտահայտիչներ՝ դրանցով տարբերվել իրարից։ Սովետական բոլոր ժողովուրդների կողմից ժառանգած, գրականության կամ բանահյուսության մեջ իրենց գեղարվեստական արտահայտությունը գտած այդ տրադիցիաները մեծ նշանակություն ունեն ոչ միայն իրենց սոցիալական բովանդակությամբ, այլ նաև նրանով, որ դրանց գեղարվեստական կոնկրետացումը անքակտելիորեն կապված է ազգային ձևի հետ։

Ժառանգելով այդ տրադիցիաները և սոցիալական նոր նյութականացությամբ շարունակելով բարձրացնել դրանց իդեական բովանդակությունը, սովետահայ գրականությունը միաժամանակ ժառանգել է այդ բովանդակությանը գրականության և բանահյուսության մեջ գեղարվեստական մարմնավորում տվող ազգային ձևը։

Սովետահայ գրականության և մեր կլասիկ ժառանգության կապի հարցերի բազմակողմանի ուսումնասիրությունը մեր գրականության պատմության, մեր գրականագիտության կարևոր խնդիրներից մեկն է։ Այդ լուսաբանությունը հնարավորություն կտա մեր անցյալ գրականության սոցիալական գեղարվեստական արժեքը խորացրած կերպով դրսևորելու, ինչպես և սովետահայ գրականության պատմությունն ավելի բարձր գիտական որակով ուսումնասիրելու։

Ինքնին հասկանալի է, որ կապի բազմատեսակ արտահայտությունների ամբողջությունը պետք է պարզի այն, թե ինչպես է մեր կլասիկ ժառանգությունն անդրադարձել սովետահայ գրականության վրա,— մի խնդիր, որի հետևողական լուծումն առաջադրում է իրար հետ սերտորեն շաղկապված, իրար լրացնող մի շարք հարցերի լուսաբանությունը։ Մենք ձևակերպում ենք այդ հարցերից ամենակարևորները. ինչպե՞ս և ի՞նչ ուղղությամբ է օգտագործվել և օգտագործվում մեր կլասիկան սովետահայ գրականության հիմնական դեմքերի ստեղծագործության մեջ, ո՞ր կլասիկների վրա են ամենից ավելի շատ ուշադրություն դարձրել և դարձնում սովետահայ գրողները, կլասիկ ժառանգության ո՞ր գծերը, ո՞ր կող-

մերն են առանձնապես օգտագործվում, ինչպե՞ս է այդ օգտագործումը կոնկրետանում սովետահայ լիրիկայի, էպիկայի ու դրամատուրգիայի մեջ, և ժամանակի ընթացքում ավելացե՞լ, թե՞ պակասել է հայ կլասիկների օգտագործման չափը սովետահայ գրականության մեջ։

2.

Որքան էլ մեր գրողներին որոշ դեպքերում անցյալ հասարակությունների գրականության այս կամ այն կլասիկը ստեղծագործական ոգեորությամբ համակի, գեղարվեստական վարպետությամբ հափշտակի, բայց և այնպես այդ հիմք չի կարող ծառայել այն եզրակացության հանգելու, որ այդ կլասիկը սովետական գրողի համար կարող է ստեղծագործական ղեկավար սկզբունքների անմիջական աղբյուր հանդիսանալ, նրա ուղեցույցը դառնալ։ Եթե այդպես լիներ, մեր գրողը տուրք կտար մի այնպիսի գեղարվեստական մեթոդի, որի կիրառումը չէր պայմանավորի մեր իրականության ճշմարտացի արտացոլումը։ Մեր գրականության հիմնական մեթոդը սոցիալիստական ռեալիզմն է և այդ մեթոդի հետևողական օգտագործումը միայն կարող է սովետական գրողին անսայթաք ստեղծագործական աշխատանք ապահովել։ Մեթոդով ղեկավարվելը ոչ ճաշակի խնդիր է, ոչ էլ տրամադրության հրամայական։ Սովետական կուլտուրայի բարձր աստիճանի վրա կանգնած գրողը միայն հնարավորություն կունենա սոցիալիստական ռեալիզմի մեթոդի գերազանցությունը արդարացնել։ Իր մասին արած հայտարարությունները և ներքին համոզվածությունը ոչ մի դեպքում արգումենտ չեն կարող դառնալ սովետական գրողի համար ապացուցելու, որ նա սովետական գեղարվեստական մեթոդի հետևորդ է։ Իր ստեղծագործական պրակտիկայով նա պետք է համոզի, որ ինքը սոցիալիստական ռեալիզմի ներկայացուցիչն է, որ հիմնավորապես ըմբռնել է նրա էությունը։

Սոցիալիստական ռեալիզմի մեթոդը չպետք է այն նեղ իմաստով ըմբռնել, որ իբր թե նրա տարածման սահմանները միայն սոցիալիստական հասարակությունն է ընդգրկում։ Սովետական գրողը իր ստեղծագործական դեմքը արտահայտում է և՛ այն պարագաներում, երբ պատկերում է պատմական անցյալի սոցիալական կյանքը, և՛ մեր հայրենիքի սահմաններից դուրս գտնվող եր-

կերների հասարակական երևույթները։ Նույնիսկ այն դեպքերում, երբ նա գործ ունի բուրժուական դասակարգի այլանդակ կյանքի հետ, երբ գեղարվեստական կերպարներ ստեղծելով քննադատության է ենթարկում մեր թշնամիների քաղաքական վարքագիծը, նրանց շահատակություններն ու խժդժությունները, նա դարձյալ չի որդեգրում քննադատական ռեալիզմի մեթոդը, որովհետև ավելի խորն է թափանցում իրերի վիճակը, ավելի ճիշտ ըմբռնում կապիտալիստական հասարակության հակասությունները, սոցիալիստական պարտիականությամբ արտահայտում իր իդեական վերաբերմունքը։

Չի կարող լինել որևէ սովետական գրող, որ իր ստեղծագործական աշխատանքի մեջ իրեն կապակցված չզգա անցյալ գրականության ժառանգած առաջավոր տրադիցիաների հետ, որ այս ու այն չափով չօգտագործի անցյալի կլասիկների գեղարվեստական նվաճումները։ Այստեղ ևս անձնական համոզվածությունը ճիշտ վարված լինելու արգումենտ չի կարող դառնալ գրողի համար, դարձյալ իր ստեղծագործական պրակտիկան անհերքելի ապացույցներ պիտի ներկայացնի, որ նա այդ օգտագործման մեջ չի աղճատել իր ստեղծագործական դեմքը, այլ մնացել է սովետական գրողի բարձր դիրքավորման վրա։ Այդպիսին լինելու համար նա լիակատար հնարավորություններ ունի, պետք է միայն ստեղծի դրանք։ Իսկական օգտագործման պատասխանատու և դժվարին աշխատանքը հաջողությամբ առաջ տանելու համար նա առաջին հերթին պետք է անհրաժեշտ սկզբունքային նախադրյալներ ունենա, պետք է խորապես ըմբռնի և իր գործողության ձեռնարկ դարձնի դեռևս հիմնական թեորիական դրույթները, որ ձևակերպել են մեծ Լենինը և մեծ Ստալինը։

Տակավին Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի սկզբնական տարիներին, երբ պրոլետարական-սոցիալիստական գրականությունը դեռևս նոր էր մասսաների մեջ թափանցում, երբ անհրաժեշտ էր հողմացրիվ անել սոցիալիստական կուլտուրայի առաջընթացը արգելակող, զանազան տիպի, ըստ էության հակառևոլյուցիոն մտայնությունները, կոնցեպցիաները՝ հանդես եկավ Վ. Ի. Լենինը իր պատմական արժեք ներկայացնող այն դրույթով, ըստ որի պրոլետարական սոցիալիստական կուլտուրան հնարավոր է կառուցել անցյալ հասարակակարգերի կուլտուրական արժեքնե-

ը քննադատորեն վերամշակելով: Մարքսիզմ-լենինիզմի էությունից բխող այս դրույթը որոշիչ նշանակություն ունեցավ սովետական գրականության հետագա զարգացման համար: Նույնպիսի որոշիչ դեր խաղաց սովետական դրողների ստեղծագործությանը ճիշտ կողմնորոշում տալու տեսանկյունից ընկեր Ստալինի հանրահռչակ դրույթը— սովետական ժողովուրդների բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային կուլտուրայի մասին: Ազգային ձևը մեկ ընդմիշտ տրված, անփոփոխ մեծություն չէ, նա ևս պատմական կատեգորիա է: Անցյալի ազգային ձևը, որը նույնպես բովանդականացած է ինչպես ամեն մի ձև, չի կարելի մեխանիկորեն վերարտադրել սովետական ժողովուրդների գրականության, արվեստի մեջ, նա պետք է պահպանվի, նույնպես քննադատորեն վերամշակվելով: Մնալով ազգային իր ֆունկցիայի բացահայտման մեջ այդ ձևը պետք է փոփոխվի պահպանվելով, պահպանվի փոփոխվելով և ադեկվատորեն արտահայտի իր հաղթարշավի մեջ գտնվող սոցիալիստական կուլտուրայի բովանդակությունը: Լենինի և ընկեր Ստալինի դրույթների նշանաբանի տակ իր զարգացման լայն հունի մեջ մտավ, խոշոր նվաճումներ կատարեց իր վերելքի մեջ գտնվող սովետական գրականությունը, աշխարհի ամենակուլտուրական և ամենաառաջադեմ գրականությունը:

Բայց սովետական բոլոր գրողները չեն, որ իրենց կոչման բարձրության վրա են գտնվում, Լենինի-Ստալինի վերաբերյալ դրույթներով հետևողականորեն զեկավարվելու մեջ: Բացառություն չեն կազմում, իհարկե, և սովետահայ գրողները: Կլասիկ ժառանգության օգտագործման մեջ նրանցից ոմանք թույլ են տալիս զգալի շեղումներ, սրտնեղիչ վրիպումներ, անհանդուրժելի սայթաքումներ, թերություններ, որոնք հիմնականում երկու իրար հետ սերտորեն շաղկապված պատճառների հետևանք են: Մեկը այն, որ մեր գրողներից ոմանք համապատասխան կուլտուրական մակարդակի վրա կանգնած չլինելով, ճիշտ չեն ըմբռնում կլասիկների ստեղծագործությունը քննադատորեն վերամշակելու խնդրի էությունը, և մյուսը, որ աշխատանքի լծվելով խուսափում են դժվարություններից և ամենահեշտ ուղիով ընթանում:

Դժբախտաբար մեզ մոտ, ըստ երևույթին, դեռ բոլոր գրողները չեն, որ ճիշտ են հասկանում անցյալի կոպտուրակեն, գրական արժեքները քննադատորեն օգտագործելու նշանակությունը, այն, որ սո-

վետական դրոշի ստեղծագործության մեջ կլասիկների նվաճումները պետք է ի հայտ գան ոչ թե իրենց նախնական որակով, իրենց սկզբնական ֆունկցիաներով, այլ վերաոած նոր որակի մեջ, միաժամանակ և՛ պահպանված, և՛ հաղթահարված եղանակով: Այն, որ սովետական դրոշը պետք է այդ արժեքների կոմպոնենտները օրգանապես ձուլի ավելի բարձրորակ կուլտուրայի օղակ կազմող իր ստեղծագործության մեջ, և ոչ թե դրանց՝ որպես կրկնելու, նմանելու արժանի օրինակների, որպես ընդօրինակման նմուշների մոտենա:

Կլասիկ ժառանգությունը քննադատորեն օգտագործելու, ազդային ձևի իմաստը խորապես ըմբռնելու համար սովետական դրոշը պետք է համապատասխան գիտելիքներ ունենա, գիտելիքներ, որոնք մշտական գործադրության մեջ պետք է լինեն և շարունակաբար խորացվեն:

Առաջին հերթին նա պետք է զինված լինի մարքսիզմ-լենինիզմի թեորիական հիմունքներով— դիալեկտիկական և պատմական մատերիալիզմով: Շատ է գրվել ու խոսվել դրանց յուրացման անհրաժեշտության մասին, կարծես թե կրկնելը ավելորդ է, բայց մենք պետք է շարունակաբար հիշեցնենք մեր գրողներին, որ այդ բնագավառում առավել ևս մակերեսային ծանոթությունը օգտակար լինել չի կարող, որ հարկավոր է դիմել լուրջ ուսումնասիրության և ստեղծագործորեն ապացուցել, որ այդ ուսումնասիրությունը իսկապես լուրջ է:

Մեր գրողները պետք է խորապես գիտակցեն մարքսիզ-լենինիզմի յուրացման անհրաժեշտությունը, գիտակցեն, որ անցյալի կլասիկների գեղարվեստական նվաճումները քննադատորեն օգտագործելու համար, որ անցյալն ու ներկան սոցիալիստական պարտիականությամբ— իդեականությամբ արտացոլելու համար նրանք պետք է ավելի քան լավ իմանան այն, ինչ «մարքս-լենինյան գիտությունն է հասարակության մասին, հասարակության զարգացման օրենքների մասին, պրոլետարական revolucիայի զարգացման օրենքների մասին, սոցիալիստական շինարարության զարգացման օրենքների մասին, կոմունիզմի հաղթանակի մասին» (Ստալին, Լենինիզմի հարցերը, 11 հրատարակություն, էջ 589):

Սովետական դրոշը պետք է զինված լինի անցյալի և ներկայի

պատմական կյանքին վերաբերող դիտելիքներով։ Որևէ կլասիկի իդեական, գեղարվեստական ժառանգությունը նրան վիճակված կլինի արդյունավետ կերպով օգտագործել, երբ պատմական մատերիալիզմի լույսի տակ գիտակցորեն կձանաչի այդ կլասիկի գործունեության սոցիալ-քաղաքական միջավայրը, նրա ստեղծագործության մեջ արտացոլված իրականության հակասությունները և այդ կապակցությամբ կարժեքավորի նրա հարուցած խնդիրների բնույթը, իդեական նպատակադրությունները, նրա մասնակցությունն իր երկրի դասակարդային պայքարի մեջ, ներդրումը իր ժողովրդի ազատագրական շարժման մեջ։ Անշուշտ գրականության պատմաբաններն են, որ պետք է օժանդակեն մեր գրողներին այս խնդիրները պարզաբանելու, բայց է՛լ ավելի էֆեկտավոր կլինի գրողի աշխատանքը, եթե նա այդ բոլորին իրազեկ լինի ոչ թե միայն գրականության պատմությունից, այլ նաև իր անձնական ուսումնասիրությամբ։

Կլասիկ ժառանգությունը որոշ քանակության արժեքների մի գումար չէ, որը օգտագործելու համար կարելի լիներ ըստ առաջին ծանոթության և սուբեկտիվ նախասիրության վերցնել այս կամ այն գումարելին։ Այդ արժեքները պատմականորեն են առաջացել և զարգացել։ Նրանք օգտագործելու չափն ու սահմանները որոշելու համար պետք է իմանալ նրանց միջև գոյություն ունեցող անհրաժեշտական կապը և հաջորդականությունը, նրանց ամբողջականության տարբեր հատվածների որակը, այդ հատվածների մեկը մյուսին փոխանցվելու պատմական պայմանները, նրանց դերը գրականության ընդհանուր պրոցեսի մեջ՝ ըստ բովանդակության և ըստ ձևի։ Այդ աշխատանքը հաջողությամբ առաջ տանելու ամենահիմնական նախապայմանն այն է, որ մեր գրողը խորապես պարզի իրեն անցյալի և մեր հասարակարգի միջև գոյություն ունեցող հակայական որակական տարբերությունը և ըմբռնի իմաստը պատմական այն ուղենիշի, որ տարբերում է միացնելով, միացնում է տարբերելով մեր նախասովետական և սովետական գրականությունը։

Անցյալի կլասիկների ճիշտ օգտագործման համար սովետական գրողը պետք է իր գիտելիքների մեջ ընդգրկի մարքս-լենինյան էսթետիկայի հիմունքները, մասնավորապես իր ուշադրությունը բևեռի գեղարվեստական ոճի, գրական ուղղության, գրա-

կան հոսանքի պրոբլեմների վրա։ Դրա անհրաժեշտությունն էլ ավելի է զգացվում, քանի որ քննարկելով մեր բանաստեղծների ստեղծագործական պրակտիկան, կարելի է հանգել այն տխուր հետևության, որ նրանցից ոմանք գեղարվեստական ոճը ըմբռնում են որոշ ֆորմալիստական թեքումով։ Նրանք ոճը ըմբռնում են ոչ թե որպես որևէ գրական հոսանքի կամ անհատական ստեղծագործության բովանդակության և արտաքին ու ներքին ձևի անհրաժեշտորեն առաջացած և իր զարգացման պրոցեսի մեջ գտնված մի օրգանական միասնություն, այլ որպես ձևական կոմպոնենտների մի սոսկական հանրագումար։ Գարզ է, որ այսպիսի մոտեցումնեորով մեր գրողը զրկում է իրեն քննադատական մոտեցում կիրառելու հնարավորությունից։

Այս թերությունը վերացնելու մեջ ևս մեր գրականության պատմությունը, մեր քննադատությունը կոչված են օժանդակելու մեր գրողներին։ Ճիշտ է, թեպետ և մեզ մոտ որոշ աշխատանք կատարվել է այդ ուղղությամբ, բայց աչքի առաջ ունենալով հարցի լրջությունը, այդ բավարար չի կարելի համարել։

Կլասիկ ժառանգությունը քննադատորեն օգտագործելու մեջ նվազ դեր չի կատարում նաև գրականության մեջ ազգային ձևի հիմքը կազմող լեզվի կատարած և կատարելիք ֆունկցիայի նշանակության ճիշտ ըմբռնումը։ Ակներև է, որ այն սովետական գրողը ավելի հաջողակ կլինի կլասիկների լեզվական հարստությունը քննադատորեն յուրացնելու մեջ, ով քաջ տիրապետում է իր մայրենի լեզվի նրբություններին, նրա երանգներին, ով ծանոթ է այդ լեզվի պատմությանը, նրա ներկա վիճակին, ով հասկանում է թե այդ լեզվի ո՛ր տարրերն են հնացել, թե որոնք են իրենց կենսունակությունը պահպանել, թե որոնք են նրա զարգացման տենդենցները և ի՞նչ ուղղությամբ է առաջ տարվում նրա շինարարությունը։ Իմանալ, շատ իմանալ, սովետական կուլտուրայի բարձունքներին հասնել,— ահա՛ կլասիկների ժառանգության անսայթաք օգտագործման անհրաժեշտ նախադրյալը։

Համապատասխան կուլտուրայի պակասը ստեղծագործության բոլոր պարագաներումն էլ բացասաբար ի հայտ կգա։ Մեծ հոտառություն չի հարկավոր ունենալ հասկանալու համար, որ մակերեսային, թերի գիտելիքներով իր աշխատանքին դիմող ամեն մի սովետական գրող, որքան էլ նա տոգորված լինի իր գործին լուրջ մո-

տենալու բարի ցանկություններով, բայց և այնպես հաջողությամբ չի իրագործի իր անելիքը։ Եթե այդ գրողը իր ստեղծագործության մեջ սոցիալական կյանքն ըմբռնելու, այդ կյանքի առաջավորը, էականը, զարգացման տենդենցները ճշմարտացիորեն արտացոլելու մեջ նկատելի թերություններ է ցուցաբերում, եթե նա իր ներքնաշխարհի դրսևորումով ապացույցներ չի տալիս, որ հասկանում է մեր սովետական ժողովրդի հրամայական մեծ պահանջները և մանրունքների ետևից է ընկած, ապա հենց դրանով նա վկայական է տալիս իր մասին, որ իր կոչման բարձրության վրա չի կանգնած նաև կլասիկների ժառանգությունը օգտագործելու մեջ։

Այդ օգտագործումը նրա մոտ հիմնականում ոչ թե քննադատական, այլ կրավորական բնույթ կունենա, նա ոչ թե կընդգրկի կլասիկի ստեղծած արժեքների ամբողջականությունը, ոչ թե այդ ամբողջականության դրականի, առաջադիմականի, արժեքավորի իմաստը ըմբռնելով կօգտագործի նրա առանձին մասերն ու կոմպոնենտները, այլ այդ ամբողջականությունից մեխանիկորեն կհանի, կզատի այս կամ այն կտորը, մասնիկը, հատվածը. գործողությունը, տեսարանը, բախումը, ապրումը և մի քիչ գույնը փոխելով կներմուծի իր երկը։ Նա ոչ թե նոր որակի մեջ կբարձրացնի կլասիկի մոտեցումներն ու հնարքները, այլ էմպիրիկորեն կընդօրինակի դրանք։ Այսպիսի գրողի ստեղծագործությունը ցայտունորեն չի բացահայտի պատմական հաջորդականությունը գրականության մեջ, չի արտահայտի այդ հաջորդականության իրական ընթացքը։

Մենք դիտավորյալ ներկով գույները մի քիչ խտացրինք և այդ ենթադրական գրողի՝ կլասիկներին օգտագործելու մեջ ցուցաբերած թերությունները պայմանական եղանակով բնութագրեցինք, քանի որ իրականության մեջ այդ տիպի սովետական գրող գոյություն չունի և չի էլ կարող լինել։ Բայց չպետք է աչքերը փակել այն պարագայի վրա, որ մեր գրողներից մի քանիսի մոտ մեր ենթադրական գրողի գծերը այս ու այն չափով ի հայտ են գալիս։ Այդ գրողները ինքնաքննադատորեն պիտի վերանայեն իրենց դիրքավորումը։ Նրանք պետք է մտահոգված լինեն իրենց գրական և գիտական կուլտուրան բարձրացնելու գործով, պետք է ըմբռնեն իրենց սխալ մոտեցումների իմաստը և շտկեն իրենց գիծը։ Սովետական գրողը

կլասիկներին պետք է միայն քննադատորեն օգտագործի։ անքննադատ վերաբերմունքը դեպի կլասիկը դիմազրկության կամ կապածելի «դեմք» ունենալու նշան է։

3.

Սովետական գրողի աշխարհայացքը, գեղարվեստական մեթոդը անհամեմատ ավելի բարձրորակ են քան ամենաապրոգրեսիվ կլասիկի սոցիալ-քաղաքական հայացքները, ստեղծագործության դեկավար սկզբունքները։ Սովետական գրողների աշխարհայացքային դրույթների և ստեղծագործության օբեկտիվ բովանդակության մեջ ոչ մի հակասություն չկա, իսկ կլասիկներից շատերի մոտ այդ հակասությունն ակնբախ է։ Սովետական գրողը սոցիալիստական պարտիական գրականության ներկայացուցիչ է, նա դիտակցված, ուղղակի նպատակասլացությամբ է մասնակցում սոցիալիստական կուլտուրայի ծավալման, խորացման, հաղթանակի աշխատանքին։ Սոցիալիստական գրողի կոչումն է— արտացոլել իր ստեղծագործության մեջ մեր մեծ երկրի՝ մարդկային պատմության մեջ նոր էպոխա կազմող կյանքի էականը, նրա հերոսական պայքարը, աշխարհացունց հաղթանակը, նրա մեծ ապագան և դրանով իսկ աջակցել սովետական ժողովրդին՝ իր նոր բարձունքներին հասնելու հաղթարշավի մեջ։ Անցյալի կլասիկը մասնակից է եղել շահագործողական հասարակակարգերի կնիքը կրող սահմանափակ կուլտուրայի ստեղծմանը, նա գործունեության այնպիսի լայն ասպարեզ չի ունեցել, ինչպես սովետական գրողը։ Անցյալի կլասիկներից ամեն մեկի տեսադաշտը սոցիալական գոյավիճակի հետևանքով եղել է անձուկ, միտքը՝ կաշկանդված ժամանակի շրջանակներով, ենթարկված հասարակական նախապաշարումներին։

Սոցիալիստական գրականությունը պատմական կարճ ժամանակահատվածում անգնահատելի գործ է կատարել մեր երկրի պայքարը, շինարարությունը, հաղթանակը ապահովելու մեջ. նա տվել է և ավելի մեծ հաջողությամբ է տալիս մեր բազմաբովանդակ կյանքի ճշմարտացի պատկերը, նա մեր իրականության ճանաչման ամենահորդառատ աղբյուրներից մեկն է։

Բայց սովետական գրողը դասինների վրա հանդչելու ոչ մի ցանկություն չունի։ Նա ձգտում է Գորկու արժանավոր հաջորդը լինելու։ Նա գիտակցում է, որ սոցիալիստական մեր մեծ հայրե-

նիքը, Լենինի-Ստալինի պարտիան պահանջում են նրանից մեծաշունչ, բարձրորակ գրականություն:

Այդ գրականությունը դեռ իր հաստատման պրոցեսի մեջ է: Մեր գրականության զարգացման անսահման հնարավորությունները երաշխիք են հանդիսանում նախատեսելու, որ հաղթահարելով ամեն տեսակի դժվարություններ սովետական գրողները այդ պրոցեսն ավելի արագ տեմպերով առաջ կտանեն:

Սոցիալիստական-կոմունիստական հասարակարգը իր որակով անհամեմատ ավելի բարձր է անցյալ հասարակական ֆորմացիաներից, մեր գրականությունը, արվեստը նույնքան բարձր կլինի անցյալի արվեստից, մենք կունենանք մեր Շեքսպիրներն ու Տոլստոյները: «Եթե ֆեոդալական իրավակարգը, իսկ այնուհետև բուրժուական իրենց ծաղկման ժամանակաշրջանում կարող էին ստեղծել նոր հասարակակարգի լինելիությունը հաստատող և նրա ծաղկումը դյուրդող արվեստ և գրականություն, ապա մեր նոր, սոցիալիստական հասարակակարգին, որը մարմնավորում է այն ամենը, ինչ լավագույնն է մարդկային քաղաքակրթության և կուլտուրայի մեջ,— առավել ևս հնարավոր է ստեղծել աշխարհի ամենառաջավոր գրականություն, որը շատ ևս կբողնի հին ժամանակների ամենալավագույն նմուշները» (Ժդանով):

4.

Ամեն մի կլասիկ ժառանգության մեջ գրական երեք տեսակը— էպիկան, լիրիկան և դրամատուրգիան նույն արժեքը չեն ներկայացնում: Այդ տեսակները տարբերվում են՝ ժամանակակից հասարակության և հետագա սերունդների վրա թողած իրենց ազդեցության չափով, իրականության բազմակողմանի և խոր արտացոլման աստիճանով և գեղարվեստական բարձրաստիճան երկեր պարունակելու քանակով: Տեսակների այդ տարբերությունն է մասամբ պայմանավորում մեկյալ կլասիկ ժառանգության օգտագործման չափն ու շրջանակները, մի հանգամանք, որ այս ու այն կերպ անդրադառնում է սովետական ժողովուրդների գրականության տեսակների զարգացման ընթացքի վրա:

Այդ տեսակետից առանձին կարևորություն ունի կլասիկ ժառանգության գրական տեսակների զարգացման և հարաբերակցության վնդրի հատուկ ուսումնասիրությունը, որն ընդգրկում է իր մեջ գրականության պատմության ենթակա հետևյալ հարցերը.

անցյալի ավյալ կլասիկ դրականության մեջ տեսակները հարաբերականորեն համաչա՞փ են զարգացել, թե՞ այդ դրականության նվաճումները տեղի են ունեցել այս կամ այն տեսակի նշանի տակ, եթե որևէ տեսակ գերակշռել է, ապա ի՞նչ սոցիալ-քաղաքական սիստեմի մեջ է զարգացել նա և նրա ո՞ր ժանրը կամ ժանրերն են տիրապետող եղել և ի՞նչ տիպի, ի՞նչ որակի մոտիվներ են նշել այդ ժանրերի մեջ, այդ տեսակը և տեսակները դրական ո՞ր ուղղության, ո՞ր հոսանքի գծով են զարգացել և ի՞նչ կոնկրետ պայմանների մեջ է տվյալ ուղղությունը կամ հոսանքը հաղթահարվել մի այլ ուղղության կողմից: Մենք հնարավորություն չունենք այս հոդվածում թեպետ և ընդհանուր գծերով պատասխանել մեր առաջադրած հարցերին հայ կլասիկ դրականության կապակցությամբ: Անհրաժեշտ ենք համարում միայն մի երկու հանգամանքի վրա կանգ առնել, ոչ թե բացատրելու, այլ հավաստելու նպատակով:

Համեմատելով երեք տեսակի հարաբերակցությունը մեր անցյալ դրականության մեջ՝ անմիջապես աչքի է ընկնում այն երևույթը, որ մեր դրամատուրգիայի գրական տրադիցիաները ավելի քիչ են արմատներ ձգել, որ նրա հասարակական-գեղարվեստական կշիռը ավելի թեթև է, քան թե մեր լիրիկայինը և էպիկայինը: Այս իրողությանն է մասամբ հարկավոր վերագրել այն փաստը, որ մեր կլասիկ դրամատուրգիան գրական բոլոր տեսակների մեջ ամենից քիչ է օգտագործվել և օգտագործվում մեր սովետահայ գրականության մեջ, որ այդ դրամատուրգիան չափազանց քիչ է առնչվում մեր սովետահայ դրամատուրգիայի հետ: Միջանկյալ դիտենք, որ մեր դրամատուրգների մեծամասնությունը բավականին անհոդ է ոչ թե հայ, այլև ուրիշ ավելի հարուստ դրամատուրգիաների նվաճումները քննադատորեն վերամշակելու խնդրում:

Լիրիկան ու էպիկան են գերիշխող դեր կատարել մեր կլասիկ գրականության մեջ, հիմնականում որոշել նրա դեմքը: Ընդ որում վաղ միջնադարում տիրապետում էր պատմիչների լիրիկական և դրամատիկական տարրեր պարունակող էպիկական կտավները, իր զարգացման համար անբարենպաստ պայմաններ ունեցած մեր վաղ վերածնության շրջանում — լիրիկան, իսկ XIX դարի մեր գրականության մեջ այդ տեսակները զարգացել են ընդհանուր առմամբ համաչափորեն: Է՛լ ավելի կարևոր է դառնում այդ տեսակների կատարած դերը, երբ մեր կլասիկ ժառանգության կցում ենք ոչ

ըստ արժանվույն օգտագործվող ժողովրդական բանահյուսությունը:

Էպիկական տեսակը, ավելի շուտ արձակը, որն Աբովյանից սկսած մինչև 90-ական թվականների վերջերը ցարական դրաքննության դաժան պայմանների մեջ զարգանում էր համեմատաբար աշխույժ թափով և որոշ բացերով հանդերձ, հիմնականում ընդգրկում էր մեր սոցիալական կյանքի կարևոր երևույթները, արդեն զարթոնքի սկզբից— մեր հասարակական փոխհարաբերությունները, մեր ժողովրդի վիճակը, մեր իրականության մեջ գործող քաղաքական հոսանքների կատարածը լայն ծավալով, խորացրած կերպով պատկերելու մեջ ցուցաբերում էր չափազանց զգալի բացեր:

Հանդես չի գալիս ստեղծագործական նկատելի կարողություն ունեցող մի արձակագիր, որը խոր ճշմարտացիությամբ, գեղարվեստական վառ կերպարների մեջ, լայն կտավի վրա բացահայտեր հայ գյուղում և քաղաքում զգալի չափերով ծավալվող արտևտրացման պրոցեսը, հայ պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցության զարգացումը: Հանդես չի գալիս ստեղծագործական մեծ ունակություն ունեցող մի արձակագիր, որը գեղարվեստական բարձրարժեք տրակով մերկացներ հայ նացիոնալիստական պարտիանների քաղաքական վարքագիծը, նրանց կիրառած տակտիկան: Մենք չենք հանդիպում նույնպես խոշոր գեղարվեստական արժեքներ ստեղծող մի արձակագրի, որը կարողանար տալ արևմտահայ ժողովրդի սոցիալ-քաղաքական անտանելի ծանր դրության ճշմարտացի պատկերը, որը նացիոնալիզմին հակադրվելով նկարագրեր մեր ժողովրդի այդ հատվածի ոգորումները սովետական Թուրքիայի դեմ, նրա բնաջնջման և աշխարհի չորս կողմը սփռվելու պատմական տրագեդիան: Մեր ժողովրդի սոցիալական կյանքի մեջ տեղի ունեցած այդ խոշոր իրադարձությունները, այդ կյանքի վրա անմիջապես անդրադարձած կարևորագույն դեպքերը, իրենց համապատասխան գեղարվեստական արտահայտությունը չգտան մեր նախասովետական արձակի մեջ, և այդ այս ու այն չափով անդրադարձ կատարեց սովետահայ արձակի արագ տեմպերով զարգանալու մեջ:

Մեր լիրիկան, լայն առումով պոեզիան, որ արևելահայ գրականության մեջ իր տեսակարար կշռով մինչև 90-ական թվականները ընդհանուր առմամբ գերջում էր պրոզային, այդ տարիներից սկսած անցնում է իր զարգացման մի նոր աստիճանին: Թեմա-

տիկայի կազմից նրա մեջ ևս զգալի բացեր են նկատվում, բայց նա ավելի լրիվ էր ընդգրկում մեր սոցիալական կյանքի էական երևույթները, ավելի բազմակողմանի անդրադառնում նրա հարուցած սուր խնդիրներին, հուզող հարցերին: Այդ պոեմիայի հիմնական գեմքերի կապը աշխատավորության հետ ավելի անմիջական էր, ժողովրդի կյանքում տեղի ունեցող փոփոխությունները նրանց ստեղծագործության մեջ ավելի կոնկրետ գույներով, հարազատ շեշտով և ջերմ ներթափանցությամբ էին արտացոլվում: Նախընթաց շրջանի պոեմների տարբերությամբ անձնական ապրումները նրանց ստեղծագործության մեջ ավելի ուժեղ դրսևորում են գտնում:

Նախաասլեատական մեր պոեզիայի այդ վերջին շրջանի ոչ բոլոր ներկայացուցիչների ստեղծագործության ամբողջությունն է ժողովրդականությամբ բնորոշվում: Բացի Հակոբյանից, նրանց սոցիալ-քաղաքական հայացքների, կենսահայեցողության, ներքնաշխարհի որոշ կարգի մոտիվները խորթ էին ժողովրդին, ապրքատի չէին կոշտամ հանուն լավ ապագայի, այլ կամքն ու միտքը թուլացնում էին իրենց հոռետեսությամբ ու կրավորականությամբ, անհնազանդության մեջ տեղի ունեցող փոփոխությունները նրանց ստեղծագործության մեջ ավելի կոնկրետ գույներով, հարազատ շեշտով և ջերմ ներթափանցությամբ էին արտացոլվում: Նախընթաց շրջանի պոեմների տարբերությամբ անձնական ապրումները նրանց ստեղծագործության մեջ ավելի ուժեղ դրսևորում են գտնում:

Բազմազան է այդ շրջանի պոեմների օգտագործման գրական աղբյուրները: Բացի մեր պոեզիայի նախորդ էտապների ներկայացուցիչներից, նրանցից ոմանք իրենց ստեղծագործությամբ ազդվում էին ռուսական և եվրոպական կլասիկ հեղինակներին, մյուսները առավելապես եվրոպական և ռուսական ռեկադենտական, սիմվոլիստական և նեոռոմանտիկական բանաստեղծներին: Մերժելով հակաժողովրդական գրականության պղտոր ու թունավոր ակունքները, այդ պոեմներից ոմանք իրենց ստեղծագործությունը սերտորեն կապակցում էին ժողովրդական պոեզիայի հետ, նրա մեջ էին գտնում իրենց ոգևորության գլխավոր աղբյուրներից մեկը, նրա պարզության ու խորության հասնելուն ձգտում:

Այդ պոեմներից մի քանիսի, մասնավորապես ժողովրդական բանահյուսության օգտագործողները, ունել են գեղարվեստական բարձր արտադրանք: Նրանց պոեզիայի մեջ չենք գտնում ինտելեգենտական որոշ շրջաններին միայն հասկանալի արխայիկ բառերի

գործածության, մշուշով և անորոշությամբ պատրաստած կերպարներ, գեղարվեստական արտահայտչական միջոցների միտումնավոր նրբընտրություն, կամ հակաէսթետիկական կուտակումներ։ Նրանց պոեզիան սակավարժեքության, վերացականության տարրեր չի պարունակում, ապակենտրոն իմպրեսիոնիզմով չի տառապում, ռոբեննյան տիպի գույների խտացումից չի տուժում, դրքայնության ազդեցություն չի դրսևորում։ Այդ պոեզիայի հատկանիշը անբռնազբոս բանականությունն է, նա կենսական նյութերով է սնված, պարզությամբ, հստակությամբ օժտված։ Նրա գեղարվեստական ձևը օրգանապես է ձուլված բովանդակությանը, այդ ձևը նրբագեղ է, նա զերծ է «պերճության» հաղորդող պաճուճանքներից։ Այդ պոետներին տրված էր գեղարվեստական ընդհանրացումներ կատարելու մեծ շնորհ, նրանց պոետական պատկերները արտահայտիչ են, կենսական ճշմարտացիությամբ, կոնկրետությամբ հագեցված, վարակիչ հուզականությամբ համակված, արտահայտչական միջոցները դիպուկ են և նպատակասլաց։

Սովետահայ պոեզիան անմիջապես կապակցված է մեր նախասովետական պոեզիայի խոշոր դեմքերի ստեղծագործության հետ։ Նույնիսկ մի թեթև ակնարկ ձգելով սովետահայ բանաստեղծների գրական արտադրանքի վրա, նրանց օգտագործման աղբյուրները որոնելու ուղղությամբ, վստահորեն կարելի է հաստատել, որ Հովհաննես Թումանյանի, Ալեքսիք Խահակյանի, Հակոբ Հակոբյանի, Վահան Տերյանի, Դանիել Վարուժանի, մասամբ Միսաք Մեծարենցի, ավելացրած դրանց վրա նաև սովետական շրջանում հանդես եկած պոետական մեծ տաղանդով օժտված Եղիշե Չարենցի գրական ժառանգությունն է, որ ամենից շատ է մեր բանաստեղծների ուշադրությունը գրավել, ու ամենից շեշտված կերպով և լայն մասշտաբով է օգտագործվել սովետահայ պոեզիայի մեջ։

5.

Սովետահայ գրականությունը մինչև վերջին ժամանակները պարզանում էր պոեզիայի նշանի տակ։ Անկասկած այս երևույթն ունի իր օբեկտիվ պատճառները։ Միայն մարքսիզմից դաղափար չունեցող, գործին իսպառ անտեղյակ մարդիկ կարող են պոեզիային նախապատվություն տալը գրողների սուբեկտիվ մոտիվներով, նրանց առաջ կանգնած խնդիրների դժվար կամ հեշտ լուծելու ջանքամանքով բացատրել։ Որքան էլ կարևոր և հետաքրքրական

Մինի սովետահայ գրականության մեջ պոեզիայի գերակշռության ունենալու հարցի լուսաբանությունը, մենք այս հոդվածում դրան չենք անդրադառնա։ Մեզ անմիջապես զբաղեցնող հարցի կապակցությամբ անհրաժեշտ ենք գտնում միայն մեր պոեզիայի զարգացման ուղու որվագծերը նշելու։

Քսան թվականների սկզբներին իրենց ուժերը գրականության մեջ փորձել ցանկացողների մեծ մասը հետաքրքրություն էր ցույց տալիս դեպի չափածոն, մասնավորապես դեպի լիրիկան և իր ստեղծագործական ունակությունները այդ ձևով էր ստուգման ենթարկում։ Ժամանակի ընթացքում այդպիսի փորձեր կատարողների մեծամասնությունը՝ ստեղծագործական ձիրքից զուրկ լինելու, գրական կուլտուրա չունենալու և այլ պատճառների հետևանքով հարկադրված եղավ հեռանալու ասպարեզից։ Հրապարակի վրա մնացին նրանք, ովքեր կարողացան ժամանակի քննությանը դիմանալ, կատարելագործվել, դժվարությունները հաղթահարել, և հասարակության իրավասությանն ու օժանդակությանն արժանանալ։ Նրանք էին, որ հետզհետե ծավալեցին իրենց պոետական հնարավորությունները, պարզեցին իրենց ստեղծագործական դեմքը։

Այդպիսով կազմավորվեցին մեր պոեզիայի բնագավառում աշխատող սկզբնական կադրերը, որոնց վրա հետագա տարիներին ավելացան նոր սկանակ ուժեր։

Շուրջ 27 տարվա ընթացքում մեր պոեզիան էապես էապես է անցել և իր հետագա զարգացման նախադրյալները կուտել։ Անշուշտ նրա անցած ուղին մեխանիկորեն չի համընկնում մեր սովետական արտադրողական ուժերի, մեր հասարակության զարգացման ուղուն։ Մեր գրականությունը, մեր պոեզիան ևս ընդհանուր առմամբ ետ էր մնում և հիմա էլ ետ է մնում մեր սոցիալ-քաղաքական կյանքից։ Ետ էր մնում թե իր թեմատիկայի ընդգրկման, թե իր գեղարվեստական աճի մեջ։ Նա պոետական խոսքի միջոցներով մեծ մասամբ արձագանքում էր իրականության մեջ տեղի ունեցածին և համեմատաբար քիչ արտացոլում այն, ինչ որ նոր էր և իր պրոցեսի մեջ էր գտնվում։

Պետք է աչքի առաջ ունենալ և այն, որ մեր պոեզիայի սկզբնական շրջանում հանդես եկած բոլոր պոետները սկսնակներ չեն և զարգացման նույն հիմնական ուղին չեն անցել։ Սովետահայ պոեզիայի մի քանի դեմքեր— Հակոբ Հակոբյանը, Ազատ Վշտունին, Ղևոնդ Աբովը— արդեն նախասովետական շըր-

ջանում էին գրական ասպարեզ իջնել, գրական կուլտուրա ձեռք բերած էին սովետահայ պոեզիայի մեջ մտել։ Հակոբյանը արդեն կազմավորված պոետ էր, նա գրական մեծ անցյալ ուներ, նա փոփոխման ենթարկեց միայն և իր թեմատիկան և որոշ չափով իր պոետական տեխնիկան և արտահայտչական միջոցները։ Եղիշե Չարենցը, որի ստեղծագործական ուժերը չէին գտել իրենց հունը, որը տարբեր գրական հոսանքների հետ էր առնչվում՝ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո ոչ միայն պետք է նոր թեմատիկա շոշափեր, այլ նաև բավականին զգալի չափով վերանայեր իր իդեական դրույթները։

Ազատ Վշտունին, որ Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայից առաջ տուրք էր տալիս դեկադենտության և անկումային մոտիվներ երգում, 18 թվից վերանայում է իր գեղարվեստական մոտեցումները, անցնում է նոր թեմատիկայի և իդեապես վերակառուցվում է։ 20-ական թվականներից նա վերջնականապես պարզում է իր ստեղծագործական դեմքը և ձևավորվում որպես հիմնականում ռևոլյուցիայի պաթոսը և ստեղծարար ոգին ռոմանտիկ գույներով և էմոցիոնալ շեշտով արտահայտող մի պոետ։

Գևորգ Աբովը սովետահայ պոեզիայի մեջ մտավ նույնպես ոչ որպես ռևոլյուցիոն կողմնորոշում ունեցած մի բանաստեղծ. նա պետք է հրաժեշտ տար իր անհատապաշտական, էրոտիկ մոտիվներին, շրջադարձ կատարեր և հիմնովին վերակառուցեր իր ստեղծագործական պրակտիկան։ Պարզ է, որ այս պոետները սովետական շրջանում միևնույն էվոլյուցիան չէին կարող կատարել, անկախ իրենց գրական անցյալից, յուրաքանչյուրը տարբեր ստեղծագործական նպատակներ էր հետապնդում, տարբեր ոճային սկզբունքներով ղեկավարվում, տարբեր գրական նախասիրություն ուներ, տարբեր գրական աղբյուրներ էր օգտագործում։

Այդ պոետներից ամեն մեկը, ընդգրկվելով սովետական գրականության զարգացման ընդհանուր հոսանքի մեջ, միաժամանակ իր անհատական ստեղծագործական ուղին էր անցնում, տարբեր դեր խաղում գրական կյանքի մեջ։ Նրանք ավելի ցայտուն կերպով էին բացահայտում այն, ինչ որ այս ու այն չափով կարող է տեղի ունենալ սովետական ամեն մի արվեստագետի հետ։

Սովետական գրականությունը հետզհետե հասունացավ, վերից վեր բարձրացավ, գեղարվեստական մեծ նվաճումներ ունեցավ։

ժամանակի ընթացքում նրա սոցիալական ֆունկցիան ավելի և ավելի ընդարձակվից, նրա պատասխանատվությունը ժողովրդի, պարտիայի առաջ ավելի մեծացավ։ Սովետական ամեն մի գրող ներգրավվից և ներգրավվում է գրական այդ ընդհանուր պրոցեսի մեջ, բայց որպես առանձին ստեղծագործական դեմքի, նրան անպայման չի վերապահված զարգացման նույն ուղին անցնել, որը անցնում է գրականությունը։ Առանձին գրողներ կարող են իրենց ստեղծագործական բարձունքին հասնել նաև գրականության զարգացման ցածր աստիճանի վրա և ապա վերից վար իջնել կամ իսպառ հեռանալ գրականությունից, որպես ստեղծագործող։ Տարբեր է նաև սովետական գրականության առանձին դեմքերի գրական ժառանգության հանդեպ ունեցած վերաբերմունքը կամ այդ ժառանգության օգտագործման եղանակը։ Ճիշտ չէր լինի, եթե ենթադրեինք, որ օրինակ՝ սովետահայ պոեզիայի բնագավառում աշխատողները նրա զարգացման որևէ էտապում առանց խորության օգտագործել են անցյալի գրականության միայն այս կամ այն շրջանի հեղինակներին, կամ առավել ևս միայն մի երկու կլասիկ գրողի պեղարվեստական նվաճումները։ Գրական աղբյուրների օգտագործման օբեկտիվ հիմունքները աներկբայելի է, այդ օգտագործումը պատահական դրդապատճառներով չի պայմանավորվում, նա սուբեկտիվ քմահաճույքի հետևանք չէ, ոչ էլ մոդայի պահանջներով է թելադրվում։ Մեր պոետներից ամեն մեկը՝ իր շոշափած կոնկրետ թեմատիկայի դրդմամբ, իր ստեղծագործական ոճի առանձնահատկությունների բնույթով, իր գրական կուլտուրայի աստիճանի հետևանքով նախընտրել է իր օգտագործման գրական աղբյուրը որոնել հայ, ռուս և այլ կլասիկայի այս կամ այն ներկայացուցիչների մոտ, սովետական ռուս կամ հայ գրականության որոշ դեմքերի ստեղծագործության մեջ։

Բայց մենք հակատրամաբանորեն վարված կլինեինք, եթե այս բոլորի հիման վրա բացասեինք գրական աղբյուրների օգտագործմանը առնչվող երևույթները որոշ կարգի, ընդհանուր հայտարարների բերելու հնարավորությունը։ Մեր պոետներն իրենց ստեղծագործության բովանդակությունը ազգային ձևի մեջ արտահայտելու կապակցությամբ՝ անցյալի կլասիկ ժառանգության օգտագործումը ամենաանհրաժեշտ նախադրյալը պիտի համարեին։ Անկասկած Նրանցից յուրաքանչյուրը ըստ իր կարողությունների և հնարավո-

թուքյունների է օգտագործել այդ հարաստությունը, բայց դժվար չէ ապացուցել, որ այդ օգտագործումն իր անմիջական արտահայտությամբ անհատական լինելով հանդերձ՝ էապես որոշ ընդհանուր հատկանիշներով է բնութագրվում: Մենք նշել ենք, որ սովետահայ պոեզիայի օգտագործման հիմնական աղբյուրը մեր նախասովետական պոեզիայի վերջին շրջանի խոշոր գեմքերի ստեղծագործությունն է հանդիսացել և շարունակում է այդպիսին մնալ: Այստեղ ևս պետք է անհատականի մեջ բացահայտել այն միացնող գծերը, որոնք տանում են դեպի ընդհանուրը:

Այս դիտողությունների վրա հարկավոր է ավելացնել և այն, որ կլասիկ ժառանգության օգտագործումը մեր պոեզիայի զարգացման տարբեր շրջաններում դունավորվել է ուրույն վերաբերմունքով, դրսևորվել՝ տարբեր եղանակներով:

Սկզբնական տարիներում կլասիկների ստեղծագործությունը ըստ էության արժեքավորելու մեջ ժխտողական տարրը գերակշռում էր, իսկ քննադատորեն վերամշակելու ջիղը՝ թույլ էր: Հետագայում այդ ուղղությամբ ևս դրությունը փոխվեց: Թեպետ այժմ էլ անքննադատ օգտագործման օրինակները քիչ չեն, բայց ընդհանուր առմամբ մեր պոետները ավելի ակտիվորեն են արժեքավորում կլասիկ ժառանգությունը, ավելի ճիշտ կողմնորոշվում կլասիկների ստեղծագործության օգտագործման նկատմամբ:

Իր զարգացման սկզբնական շրջանում սովետահայ պոեզիայի վրա կոնկրետությամբ չհագեցված ընդհանուրի տավերն էր ընկած: Նրա իդեական բովանդակությունը ցայտուն դրսևորման շակիությունն ունենալով հանդերձ, տառապում էր վերացականությամբ, նրա մոտիվները ամուր չէին կապված ռեալ իրականության հետ, անմիջապես քիչ էին անունդ առնում նրա հյութերից: Պոետներին ոգևորությամբ համակող երևույթները, նրանց բացատրման ենթակա ամեն տեսակի թշնամիների գործողությունների ու ձգտումների հակառևոլուցիոն բնույթը համապատասխան գեղարվեստական մարմնավորում չէին ստանում: Վերամբարձ լինելու հետևանքով նրանց ստեղծագործությունը տոգորող ռևոլուցիոն պաֆոսը քիչ էր չերմացնում, համահնչյուն ուժեղ տրամադրություններ չէր առաջացնում: Ոչ այնքան իրենց ուշադրությունը բևեռելով իրական կյանքի երևույթների վրա, որքան ավելի շուտ փոխադրվելով դեպի համապարփակ ընդհանուրի ոլորտները՝ մեր պոետները

Մեծամասնությունը նկատելի շերտավորման չէր ենթարկվում թեմատիկային կոնկրետություն հաղորդելու գծով: Այդ թեմատիկան մշակելիս նրանք քիչ էին ուշադրություն նվիրում իրենց ներքնաշխարհը պատկերածի հետ անմիջապես միայնելու վրա, նրանց արժեքավորումները, իդեական վերաբերմունքը մեծ մասամբ զուրկ էին լինում սուբեկտիվ գունավորումից, նրանք մեծ մասամբ պատկերման ենթակա երևույթների արտաքինն էին դիտում և սոսկական նկարագրության մեջ ընկնում, իսկ էությունը ընդհանուր եզրակացություններով ձևակերպում:

Չնայած տարբեր տեսակի արդելակներին, մանկական շրջան ապրող մեր պոեզիան հաղթականորեն հաստատեց իր գոյության իրավունքը և իր հետագա զարգացման նախադրյալներն ստեղծեց: Ինքն իր մեջ ուժեր կուտակելով, նա անհրաժեշտաբար անցում կատարեց դեպի մի նոր, իր նվաճումներով ավելի բովանդակալից շրջան: Սկզբնական տարիներում նրա հասուն չինելու իրողությունը վավերացնող հատկանիշները հետզհետե հաղթահարման պրոցեսի մեջ մտան, ավելի և ավելի նվազ արտահայտություն գտան մեր բանաստեղծների ստեղծագործական աշխատանքի մեջ:

Մանկության շրջանին հետևող տարիների ընթացքում հետզհետե ավելի շերտավորվեց մեր պոեզիայի թեմատիկան, ավելի լայնացավ նրա ընդգրկման դիապազոնը: Բացի հանճարեղ առաջնորդներ Լենինի և Ստալինի ոգևորիչ և աղնվացնող կերպարներից, մեր պարտիայի հերոսական դեմքերից, մեր բազմահարուստ կյանքի քաղաքական, սոցիալական, կուլտուրական երևույթներից սովետահայ բանաստեղծներն իրենց հայացքն ուղղեցին նաև դեպի մեր մոտիկ անցյալն ու պատմության խորքերը, դեպի մեր հայրենիքի սահմաններից դուրս տեղի ունեցող դասակարգային պայքարը, օտար երկրների կենցաղի և սովորությունների մեջ առաջացող բախումները: Վերամշակման նյութ դարձան հայ և այլ ժողովուրդների լեգենդները, զրույցները, առասպելները: Մի շարք պոեմների տեսադաշտում տեղ գրավեցին անցյալի պատմական դեմքերն ու դեպքերը, անցյալի կուլտուրայի ներկայացուցիչները, կուլտուրական արժեքները: Սկսեցին փորձեր կատարել պոեզիայի ընձեռած միջոցներով ձևակերպել մարքս-լենինյան դիալեկտիկայի օրենքներն ու սկզբունքները: Այդ տարիների ընթացքում աոաջին շրջանի չափազանց ընդհատական տիպի կերպարները հետզհետե

տեղի տվին ավելի զգալի կոնկրետությամբ հագեցված կերպարների առաջ, մեր բանաստեղծների ստեղծագործական մոտիվները գնալով ավելի կոնկրետորեն կապակցվեցին մեր պայքարի, մեր շինարարության, մեր կուլտուրայի հաղթանակների հետ։ Առաջին շրջանի ստեղծագործության մեծ մասամբ վերամբարձ շնչով բորբոքվող պաթոսը հետզհետե փոխարինվեց ավելի բնական ապրումներից բխող հուզականությամբ տոգորված ոգևորությամբ։ Մեր պոետները հետզհետե ավելի շեշտվածորեն դրսևորեցին իրենց պատկերած կերպարների ներքին ապրումները, խորամուխ եղան ավելի համոզիչ կերպով ներքինը արտաքինի հետ զուգորդելու։ Նրանք ավելի մեծ եռանդով ձգտեցին արտահայտել իրենց անհատական դեմքը, ավելի նրբին ու բարդ կապակցություններով բացահայտել իրենց տրամադրությունը, վերաբերմունքն ու արժեքավորումը։ Նրանցից ոմանք պահանջ զգացին կյանքի երևույթների էությունը բանաստեղծական արվեստի միջոցներով դրսևորելու և խոհական տարր մտցրին իրենց ստեղծագործության մեջ։

Ժամանակի ընթացքում անցնելով իր զարգացման ավելի բարձր աստիճաններին, մեր պոեզիան զգալի փոփոխություններ կրեց նաև լեզվի բնագավառում։ Այդ լեզուն գնալով ազատվեց իր միակերպությունից, դարձավ ավելի հարուստ իր բառապաշարով, ավելի երանգավոր իր արտահայտություններով, նա ճկունացավ և մաքրվեց ավելորդ ու խորթ տարրերից։ Կլասիկների լեզվական գանձի օգտագործումը հետզհետե ավելի ակտիվ բնույթ ընդունեց, ավելի նպատակասլաց կերպով հարմարեցվեց մեր պոեզիայի բովանդակության պահանջներին։ Անդրադարձնելով իր վրա մեր լեզվաշինարարության նվաճումները, նա ինքն իր հերթին դարձավ այդ շինարարության գործիքներից մեկը։

Մեր պոեզիայի արտահայտչական միջոցներն սկզբնական շրջանում սուղ ու միապաղաղ էին, սահմանափակ իրենց գործադրման սահմանների մեջ։ Ընդհանուր առմամբ նրանք նկատելի դեր չէին կատարում որպես առանձին պոետների ոճի բնորոշող հատկանիշ։ Այդ միջոցները ևս հետզհետե փոխեցին իրենց նախկին գունավորումը, դարձան ավելի բազմազան, ընդունեցին նոր երանգներ, ավելի շեշտակի, ավելի օրգանապես միանացան բովանդակության հետ, առաջավոր բանաստեղծների անհատական ոճի ցայտուն որոշիչներից մեկը կազմեցին։

Առաջին տարիների մեր պոեզիան նկատելի թերություններ ուներ նաև տաղաչափության, հանգավորման և երաժշտականության կողմից: Հատկապես դրական անցյալ չունեցող բանաստեղծները մեծ դժվարություններ ունեին հաղթահարելու այդ ուղղությամբ:

Այդ թերությունները հետզհետե զգալի չափով շտկվեցին: Տաղաչափական ձևերի և հանգերի գործադրման մեջ նկատվող միակերպությունը և որոշ ֆորմալիստական ենդենցները հետզհետե բավականին վերացվեցին: Տաղաչափական ձևերը դարձան ավելի բազմազան, նրանք ավելի օրգանապես ենթարկվեցին կառուցվածքի ընդհանուր բնույթին, ավելի միաձուլվեցին արտաքին ձևի և կոմպոնենտների հետ, ավելի մեծ արվեստով կիրառվեցին բովանդակությունը համապատասխան ձևավորմամբ արտահայտելու մեջ:

Հանգավորումը, որ հաճախ տեղի էր ունենում բնաղբոսիկորեն, ի հաշիվ բովանդակության իմաստի և քերականական կանոնների, հետզհետե կանոնավոր հունի մեջ մտավ, նա զգալի չափով ազատագրվեց շաբլոնացած հնարներից, ձանձրացուցիչ, անարվեստ կրկնումներից և ենթարկվեց բովանդակության պահանջներին:

Պակասավոր էր նույնպես ոտանավորի երաժշտականությունը: Մեր լեզվի երաժշտական հնարավորությունները քիչ էին օգտագործվում, այդ գծով համապատասխան տպավորություններ առաջ բերելու փորձերը բավականին արհեստական լինելու հետևանքով մեծ մասամբ հաջողությամբ չէին պսակվում: Հետագա շրջաններում մեր բանաստեղծներին որոշ չափով հաջողվեց հաղթահարել ոտանավորի երաժշտականության բնագավառում ի հայտ եկող թերություններ, ավելի մեծ էֆեկտիվությամբ գործադրել մեր լեզվի ընձեռած հնչյունական հնարավորությունները:

Տարիների ընթացքում մեր պոեզիայի մեջ տեղի ունեցած բոլոր այս փոփոխությունները նկատելի չափերով կատարվել են մեր կլասիկ դրականության և ժողովրդական բանահյուսության առաջադեմ տրադիցիաների և մոտիվների օգտագործման միջոցով, մեր կլասիկ գրողների պոետական արվեստի նվաճումների վերամշակման հիմքի վրա:

Հայրենական Մեծ Պատերազմը բերեց սովետա-

կան պրակտիկայի և պոեզիայի մեջ: Մեր պոետները ևս մոբիլիզացրին իրենց ստեղծագործական ուժերը սովետական մյուս ժողովուրդների գրողների պես, և ավազակապետներից մինչև սկանակը՝ համակված իրենց պոետական կարողությունները մեր մեծ հայրենիքի հաղթանակին ի սպաս բերելու վեհ գաղափարով՝ ջանացին գովերգել սովետական առաքինիների մարտական ոգին, նրանց հերոսական սխրագործությունները, ջանացին վեր հանել սովետական քաղաքացու բարձր արժանիքները— սոցիալիստական հայրենասիրությունը, արտակարգ տոկունությունն ու հոգու արիությունը, իր արյունքան պատասխանատվությունները կատարելու խոր գիտակցությունը: Մեր յուրաքանչյուր պոետ մեծ խանդով գիմեց պոետական արվեստի միջոցներով ձևակերպելու այն աղնիվ մարդկերն ու զգացմունքները, որ վոթորկում էին սովետական մարդկանց միտքն ու զգացմունքը և անգադրում պայքարի պատրաստակամության ամրապնդում, անդուլ ստեղծարար աշխատանքի կոչում: Մեր յուրաքանչյուր պոետը ձգտում էր իր ստեղծագործությունը հերոսականության պաֆոսով տոգորել, պոեզիայի ներգործական ուժով հանճարեղ առաջնորդ և զորավար Մեծ Ստալինի հերոսական կերպարը պատկերել, սովետական ժողովրդին հաղթանակի վստահությամբ ոգևորել: Մեր յուրաքանչյուր պոետը խնդիր էր առաջադրում իրեն հանուն սոցիալիստական հասանիքների՝ վրեժի, ատելության զգացմունքներ բորբոքել վայրագ թշնամու դեմ: Հայրենական պատերազմի սկզբից, երբ հիտլերյան բանդիտները ձգտում էին իրականացնել սովետական ժողովուրդներին ոչնչացնելու, ստրկացնելու, սովետական ժողովուրդների ժառանգած կուլտուրան և սովետական մարդու ստեղծած արժեքները անհետացնելու հրեշավոր ծրագիրը, երբ ամենամեծ կուլտուրական ուժի— բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ մեր ժողովուրդները մի մարդու պես ոտքի կանգնեցին իրենց սրբազան իրավունքները պաշտպանելու— մեր պոեզիայում նոր ուժով հնչեց մեր կլասիկ ժառանգության պայծառ տրադիցիաների— հայրենասիրության, ազատասիրության, պայծառատեսության ձայնը: Մեր պրոզները, պոետները աշխատեցին ուժեղ թափով նշել անցյալի և ներկայի կապը, դարերի խորքից դուրս բերել մեր ժողովրդին, օտար կեղեքիչների լծից ազատագրելու համար պայքար մղած հե-

րոսական դեմքերին և նրանց օրինակով ոգևորել մեր սովետական մարտիկներին:

Դժբախտաբար մեր պոեզիայի գծով Հայրենական Մեծ Պատերազմի տարիներին մնայուն գեղարվեստական արժեք ունեցող շատ բան չստեղծվեց: Այդ տարիների պոետական ոգևորության արդասիքի մեծ մասը չի բավարարում իր կուլտուրական հաղթարշավի մեջ գտնվող մեր ժողովրդի պահանջները: Մեր պոետներին չհաջողվեց պահանջված որակով և համապատասխան լրիվությամբ գեղարվեստորեն մարմնավորել սովետական ժողովրդի հերոսական դործի հսկայական պատմական նշանակությունը, պատկերել սոցիալիստական մեր հասարակության մարդու հոյակապ հատկությունները, ուժեղ թափով, շեշտված նպատակադրությամբ, նորությունով հնչեցնելու մեր կլասիկ ժառանգության ոգեշնչող մոտիվները: Հիտլերյան Գերմանիայի և նրա արբանյակների դեմ տարած փառավոր հաղթանակից հետո անցել է երկու տարի: Սովետական ժողովուրդը մեծ խանդավառությամբ դիմել է իր վերքերը բուժելու, ատալինյան նոր հնգամյա պլանի իրականացման աշխատանքին: Պարտիան, կառավարությունը մեծ խնդիր են դրել սովետական մեր արվեստի, գրականության առաջ: Այդ խնդիրները հասարակ չափով վերաբերում են նաև մեր սովետահայ պոեզիային:

Որպես սովետական գրականության մի հատված, նա ևս կոչված է գեղարվեստական բարձր որակով արտացոլել մեր սովետական իրականության էականը, առաջատարը, մեր ժողովրդի աշխատանքային էնտուզիազմը, կուլտուրական նվաճումները, սոցիալիստական մարդու բարոյական պայծառ դեմքը, նրա կենցաղը, պայքարը բարքերի հնացած տարրերի դեմ, նրա հոգեկան գեղեցկությունը: Մեր պոեզիայի առաջ ևս դրված է Հայրենական Պատերազմի հերոսական նշանակությունը խորացրած կերպով բացահայտելու, մեր անմահ հերոսների սխրագործությունները, սովետական ճակատի և թիկունքի մարդկանց քաղաքացիական արիությունները մոնումենտալ ստեղծագործական երկերի մեջ վերհանելու խնդիրը:

Իհարկե երկու տարվա համեմատաբար կարճ ժամանակահատվածում լույս տեսած բանաստեղծական պրոդուկցիան լիակատար չափով հիմք չի կարող հանդիսանալ որոշակի հետևություններ հանգելու մեր պոեզիայի վիճակի, իր պարտականությունները կա-

տարելու կապակցությամբ, բայց հնարավորություն է տալիս մի քանի դիտողություններ անելու։

Մեր պոեզիայի վերջին երկու տարվա արդյունքը այնքան էլ բավարար չի կարելի համարել։ Նա ունեցել է մի շարք թերություններ, բացեր, որոնց վերացման, լրացման ուղղությամբ մեր պոետները պահանջված ձեռներեցություն և եռանդ չեն ցուցաբերել։ Նրանց առաջ հրամայաբար դրված է իրենց ստեղծագործական վերելքի, աշխատանքների վերակառուցման չափազանց պատասխանատու խնդիրը, իսկ առայժմ զգալի նշաններ չեն երևում այդ խնդրի լուծման մեջ տեղաշարժ կատարելու ուղղությամբ։

Մեր պոետներն իրենց աշխատանքը խորացնելու օբյեկտիվ և սուբյեկտիվ բոլոր հնարավորությունները ինտենսիվորեն չեն իրականացնում, իրենց ստեղծագործության մաքսիմալ պահանջկոտությամբ չեն վերաբերվում, իրենց առաջ դրված խնդիրների բնույթը խորը չեն ըմբռնում։ Իրենց պատվավոր կոչումը լիակատար չափով արդարացնելու համար նրանց դեռ պակասում է բազմակողմանի շփում մեր սոցիալական կյանքի հետ, ավելի լայն մտահորիզոն, սոցիալիստական բարձր կուլտուրա, մասնավորապես գրական կուլտուրա։ Բայց արդյո՞ք մեր բոլոր պոետներն են այնպիսի տվյալներով զինված, այնպիսի ունակություններով օժտված, որ կարողանան հաջողությամբ վերակառուցել իրենց ստեղծագործական աշխատանքը, արդարացնել իրենց վրա դրված հույսերը, կատարել իրենց դժվարին, բայց պատվավոր պարտականությունները։ Դժվար չէ նախատեսել, որ նոր խնդիրների իմաստն իրենց ամբողջ ծավալով, հետևողականորեն չըմբռնողները, իրենց չմշակված պրոդուկցիան հապշտապ լույս ընծայելու մարմաջով բռնվածները, հասարակական կարծիքը արհամարհողները եթե չվերանայեն իրենց վարքագիծը, մեծ սպասելիքներ իրականացնելու տվյալներ քիչ կունենան, նրանք կանգնած տեղում վազք կկատարեն և ռեալ իրականությունից ետ կմնան։

Բայց բնավ էլ չի հարկավոր կասկածել, որ բոլոր այն պոետները, որոնք սիրում և հարգում են իրենց աշխատանքը, անհրաժեշտ տվյալներ կստեղծեն վերարժեքավորելու իրենց կատարածը, ըմբռնելու իրենց թերությունները. նրանք կլարեն իրենց ուժերը և մի նոր աստիճանով կբարձրացնեն իրենց ստեղծագործության գեղարվեստական որակը։

Որո՞նք են կազմում մեր հիմնական կարծրը պոեզիայի մեջ, իրենց ստեղծագործական ունակությունների փիլիսան շրջանում գտնվող, հետագա զարգացման ուղյալներ ունեցող մեր բանաստեղծները: Նաիրի Զարյանը մեծ շունչ ունեցող մի պոետ է, որը հայկական լեզվին հաղորդում է նոր թափ ու կորով և նոր որակով շարունակում մեր կլասիկ գրականության գրական տրադիցիանները: Նրա թեմատիկ ընդգրկումը բավականին լայն է, պատմական հետաքրքրությունը՝ սուր, թեև նույն այդ պատմական թեմատիկայի վերարտադրման մեջ նա հայտաբերել է անցյալի որոշ իդեալականացում: Ուժեղ տենդենց ունի իրական գեմքերն ու դեպքերը ռոմանտիկական ասպեկտով պատկերելու. իր պոետական խառնվածքով նա զուտ լիրիկ չէ, ոչ էլ էպիկ, գերակշռող իր էպիկականի մեջ նա ներմուծում է լիրիկայի ուժեղ տարրեր: Նրա պոեզիային հատուկ է որոշ խոհական շեշտ: Զարյանը քիչ է ընթանում մարդու ներքնաշխարհի բացահայտման գծով, նրա ստեղծագործության մեջ քաղաքացիական մոտիվների տակայությունն է միշտ շոշափելի: Նրա բանաստեղծական արտահայտչական միջոցներն աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ և ընդհանրապես օգտագործվում են նկատելի հաջողությամբ, նա կարողանում է հաճախ ստեղծել տպավորիչ, վառ պատկերներ, առաջ բերել համապատասխան հուզական տրամադրություններ: Զարյանին երբեմն չի հաջողվում իր պոեզիայի քաղաքացիական պաֆոսը արտահայտել համապատասխան պատկերներով, գույները պակասում են և գործը համակվում է անցանկալի չորությամբ: Զարյանի կոմպոզիցիան ընդհանուր առմամբ կուռ է ու էներգիկ, երբեմն տառապում է ձգձգվածություններից և անէֆեկտավոր կրկնություններից: Զարյանի անձնական լիրիկայի մեջ, մեռաֆորիկ արտահայտված, երբեմն պլուխն ու սիրտը հաշտ չեն լինում իրար հետ:

Գեղամ Սարյանն ամենից ցայտուն լիրիկական դեմքն է տվեր տահայ պոեզիայի մեջ, նրա կապը մեր կլասիկների հետ ակնրահ է: Սարյանի գույները չեն շլացնում արտաքին փայլով, չեն բնորոշվում ուժեղ արտահայտչականությամբ: Մեղմ, նրբին, հաճախ ե

Նրա ստեղծագործության դոմինանտը, հուզականությունն է նրա պոետական հյուսվածքը, տոգորողը, նրա պատկերավորման որոշիչ ցեղը: Սարյանի պոետական խառնվածքին ընդհանրապես անհարիր են շռինդն ու շառաչը, ներքնաշխարհի ուժեղ պոռթկումները, արագ թափով զարգացող դրամատիզմը, կատաստրոֆի հասցնող գործողությունը: Նրա թեմատիկան զգալի դիապազոն ունի, նա ընդգրկում է և անձնական ապրումների մոմենտներ, դրսաշխարհի տարբեր նշանակություն ու արժեք ներկայացնող բազմազան երևույթներ և պատմական անցյալի դեմքեր ու դեպքեր: Նրա պոեզիային խորթ չէ և խոհականությունը, կյանքի մեծախորհուրդ պրոբլեմներն առաջ քաշելու և լուծելու ձգտումը: Այդ պրոբլեմներին նա մոտենում է հիմնականում ոչ թե սոցիալական, այլ անմիջական հոգեբանական ասպեկտով, սրանով է մասամբ պայմանավորվում նրա թերությունները: Սարյանին ընդհանրապես չի հաջողվում լայն կտավներ ծավալելը, այդ դեպքում հաճախ նա կորցնում է իր առանց այն էլ ոչ ուժեղ արտաքին դինամիկայի թափը, առաջ է բերում ձգձգվածություն և փխրուն դարձնում իր կոմպոզիցիան: Նրա քնարը երբեմն ոչ ճիշտ հնչյուններ է արձակում, երբ նա աշխատում է ռոմանտիկորեն իդեալականացնել անցյալի այնպիսի հերոսների, որոնց վարքագիծն ու ապրումները չեն կարող արժանանալ սովետական մարդու հավանությանը:

Սողոմոն Տարոնցին խորհրդածության տիրապետող շեշտով ստեղծագործող պոետ է, նրա կապը ևս մեր անցյալի գրականության հետ շատ ուժեղ է: Նրան հնարավորություններ են տրված երբեմն հասնելու բանաստեղծական որոշակի հաջողությունների: Որոշ դեպքերում նա կարողանում է գրավել ընթերցողների ուշադրությունը, տանել նրանց իր մտքերի հետևից և համակել իր խոհերի ճշմարտության զգացումով: Գովելի է Տարոնցու կյանքի դիալեկտիկան պոետական միջոցներով բացահայտելու եռանդը, սակայն այդ նրան նկատելի հաջողությամբ ի կատար ածելու համար պակասում են կենսական խտացած փորձը և խոշոր ընդհանրացումներ կատարելու կարողությունը: Նրա խոհերը երբեմն ամպամած են ու գորշ, այդ դեպքերում նա ցայտունորեն չի դրսևորում սովետական մարդու պայծառատեսությունը, նրա հեռանկարների մաժոր տոնը, հաղթանակի վստահությունը: Ցանկալի կլիներ Տարոնցու մտքերը ավելի ջերմ հուզականությամբ ներթափանցած

գտնել, նրա խոհերի մեջ իր սրտի ավելի ուժեղ տրոփյունը լսել։ Որոշ դեպքերում նրա պատմական թեմատիկայի մշակման մեջ ի հայտ են գալիս զգալի թերություններ— անհամոզիչ մեծարում, իդեալականացում և չափազանց ժլատ, էպիգրամատիկ բնութագրում։ Տարոնցու ներկատախտակի վրա գույները համեմատաբար հարուստ են, բայց պատահում է, որ նա պահանջված չափի բազմազանությամբ չի գործածում դրանք, երբեմն նրան պակասում են երանգներով պատկերավորելու ուժը։ Տարոնցու կոմպոզիցիան ընդհանրապես կենտրոնացված է, բայց լայնաշունչ կտավներ ստեղծելիս նա ոչ այնքան անհրաժեշտ մանրամասներին տուրք տալով, ծանրաբեռնում է կառուցվածքը և խախտում նրա ներդաշնակությունն ու համաչափությունը։

Սարմենը հավասարակշռված ստեղծագործական կարողություններ ունեցող բանաստեղծ է, նրա կապը մեր կլասիկ ժառանգության հետ ակնբախ է։ Նրա պոեզիայի բնորոշ հատկությունը օպտիմիզմն է, հիմնական լայտմոտիվը՝ սովետական մարդու պարտականությունների կատարման դրվատումը։ Նրան երբեմն հաջողվում է մեր պայքարի, շինարարության, կենցաղի որոշ մոմենտներն իր դիտողականության տակ առնել, իր պոետական համեստ միջոցներով վերարտադրել և ջերմություն հաղորդելով իր զգացմունքներին այս ու այն չափով իր տրամադրություններով համակել ընթերցողին։

Սարմենը զուրկ չէ անցյալը և սովետականը համոզչորեն իրար հետ համեմատելու և հակադրելու շնորհքից, խտացված գույներով և դիպուկ փոխհարաբերություններով դրանց երևույթները այս ու այն չափով ընդհանրացնելու ունակությունից։ Սարմենի արժանիքների թվին է պատկանում և այն, որ նա քիչ է անձնատուր լինում իր անձնականին, այլ հնչեցնում է անմիջական հասարակական բնույթ կրող մոտիվներ։ Սակայն նրա պոեզիան այնքան էլ հարուստ չէ ներքին բովանդակությամբ. նա խոր չի ակոսում, նրա հարուցած տրամադրությունները ուժեղ հետքեր չեն թողնում, նրա ստեղծագործական ֆանտազիան վառ չէ, պատկերները հաճախ զուրկ են արտահայտչականությունից։ Նրա թեմատիկայի մոտիվները բազմազան չեն։ Նա պետք է աշխատի հաղթահարել իր պոեզիայի որոշ գավառականությունը, ավելի մեծ տեսադաշտ ընդգրկի և ըստ էության էպիկական գերակշռող տարրը թարմությամբ և աշխուժությամբ տոգորի։

Սուրեն Վահունին մի բանաստեղծ է, որ օժտված է հետպա պարպայման ավյալներով, նրա ստեղծագործության վրա նկատելի է ուրիշ դրականությունների ուժեղ արտահայտությունը: Նրա պոետական ձայնը այնքան դիլ չէ, բայց անկեղծ ու անբռնազբոսիկ է հնչում: Նրա բանաստեղծական արտահայտչական միջոցները հարուստ չեն, բայց նրան հաջողվում է նպատակահարմար գործադրել դրանք և երբեմն որոշակի ստեղծագործական էֆեկտի հասնել: Իր պոետական խառնվածքով նա ավելի շատ հակում ունի էպիկական մարզում ստեղծագործելու, նրան միշտ չի հաջողվում իր կտավներին հաղորդել ներքին ջերմություն, այդ կտավները ուշադրություն են դրավում իրենց մտահղացմամբ ու լրջությամբ: Յավոք, քիչ դեպքերում է, որ պոետին տրվում է միտքն ու հայեցողը, նկարագրական ու հորդուն զգացմունքը իրար հետ զուգորդելու կարողությունը: Վահունին չի խորանում ներքնաշխարհի դրսևորման մեջ, նրա նախընտրածը արտաքինն է, որի պատկերմամբ նա որոշ դեպքերում առաջ է բերում ընթերցողի մոտ համապատասխան մտապատկերներ: Վահունու պոեզիան դինամիկան չի արտահայտում, շարժումը նրա մոտ մեծ մասամբ վեր է ածվում իրար անմիջապես հաջորդող տեսարանների, դեպքերի, երևույթների իրար կցելուն կամ միևնույն դրությունը վարիանտներով կրկնելուն: Վահունին պետք է իր պոետական երկը անմիջապես առաջ քաշի և այն առանց միջնորդավորումների արտահայտի, դրանով նա կուժեղացնի իր արտահայտչականությունը և ավելի ներշնչական կդարձնի իր ստեղծագործությունը:

Հովհաննես Շիրազը ստեղծագործական մեծ պոտենցիանալով օժտված բանաստեղծ է: Նրա պոետական ֆանտազիան ուժեղ է, բայց նա պետք է որոշ դեպքերում սանձահարի այդ և ավելի նորմալ գործառնություններին մեջ դնի, մասնավորապես փիլիսոփայական տիպի լայն կտավներ ծավալելիս, որի համար նա առայժմ համապատասխան ավյալներ չունի: Շիրազի արտահայտչական միջոցներն առատ են, նրա պատկերները մեծ մասամբ գունեղ են, հյութալից, ինքնատիպ, բայց նա պետք է խորացնի, ընդարձակի իր կենսափորձը նաև այդ կապակցությամբ կրկնողությունների մեջ չընկնելու համար: Նրա պոեզիան ընդհանրապես անմիջական է, զգացմունքները մեծ մասամբ հորդում են անբռնազբոսիկորեն:

Շիրազն անհամեմատորեն շատ է զբաղվում իրենով, իր անցյալով, ներկայով։ Թևեիտ նրան, որպես նկատելի պոետական ձիրք ունեցող բանաստեղծի, խորթ չէ ընդհանրացումներ կատարելը, բայց որովհետև իր ներքին բովանդակությունը հարուստ չէ, իր ապրումները հաճախ տիպական չեն, իր զգացմունքներն ու մտորումները որոշ չափով արխայիզմի և դավառականության կնիք են կրում իրենց վրա, դրա համար էլ նրա անձնական մոտիվները մեծ մասամբ համահնչյուն չեն ընթերցողին, համապատասխան տրամադրություններ չեն առաջացնում։ Ընդհանրապես իր սեփական ձայնով երգելով, Շիրազը երբեմն իր երգի մեջ մտցնում է ուրիշից փոխ առած մոտիվների վարիանտներ և աղճատում իր անհատական ոճը։ Նա պետք է անպայման վերանայի իր անցած պոետական ուղին, վերարժեքավորի իր կենսական փորձը, Շիրակի նեղ կածաններից դուրս գա դեպի մեր սոցիալիստական կյանքի լայն պողոտան, թարմացնի իր թեմատիկան և կոլորատուրական ավելի բարձր աստիճանի հասնի։

Գուրգեն Բորյանը մեկն է սովետահայ բանաստեղծներից, որոնք ուրիշներից ավելի լավ են հասկանում թե ի՞նչ խնդիրներ են առաջադրում սովետական գրականությանը մեր պարտիան, մեր ժողովուրդը։ Նա գրական կոլորատուրա ունեցող բանաստեղծ է, կիրթ է ու հավասարակշռված իր արվեստի մեջ։ Բոլոր դեպքերում չէ, որ նրան վիճակված է լինում իր տեսածն ու լսածը, իր մտածածն ու զգացածը ստեղծագործորեն վերամշակել և գունեղ գեղարվեստական պատկերների մեջ արտահայտել։ Բորյանը գեղարվեստական ստեղծագործության ոլորտում երբեմն կարծես թե ինքն իրեն կաշկանդում է, սանձահարում է իր զգացմունքները, չափավորում է նրանց հորդումը, որի հետևանքով հաճախ չէ, որ հասնում է հուզականությամբ տոգորված անմիջականությամբ փայլող պոեզիայի բարձունքներին։ Բորյանը պետք է վերջնականապես դուրս վանի իր պոեզիայից սրիմխտիվության որոշ տարրերը և պոետական արվեստի միջոցներով արտահայտի իր խոհերը։ Չնայած որ իր անձնական ապրումներն ավելի համահնչուն են սովետական ընթերցողին, բայց և այնպես նա այդ ապրումների բանաստեղծական վերարտադրությամբ քիչ է զբաղվում։ Մեր պոետները, սովետական բազմաբովանդակ կյանքի էական երևույթների հանդեպ իրենց վերաբերմունքը պետք է արտահայտեն ոչ թե մնալով մա-

688—13

կերպի վրա, ինչպես այդ լինում է հաճախ, այլ իմաստավորելով, արժեքավորելով դրանք։ Բորյանը տվյալներ ունի իր ոտը հաստատապես այդ հասունության մեջ դնելու, նա պետք է արագացնի դրա իրականացումը։

Սիլվա Կապուտիկյանը ստեղծագործական նկատելի ունակությամբ օժտված բանաստեղծուհի է։ Նրա պոեզիան աչքի է ընկնում իր հուզականությամբ, ներշնչողական ուժով, զգացմունքների անմիջականությամբ։ Նա հիմնականում իր անձնական ապրումներն է վերարտադրում, էպիկական տարր պարունակող գործերի մեջ նրա ստեղծագործական կարողությունները մեծ մասամբ դավաճանում են իրեն։ Կապուտիկյանն ունի իսկական բանաստեղծին հատուկ գեղարվեստական ընդհանրացումներ կատարելու շնորհք։ Նրա բանաստեղծական խառնվածքին բնորոշ չեն փոթորկահույզ տրամադրություններ, լարված հուզվածություն. նրա խառնվածքը նուրբ է, քնքշությամբ տոգորված, ռոմանտիկական թախծի և կարոտի շորշոփի ենթարկված։ Նրա լիրիզմով ներթափանցված խոհը երբեմն չափազանց ընդհանուրի ասպեկտով է մատուցվում։ Կապուտիկյանի մոտիվները երկու իրարամերժ ակունքներից են բխում։ Մեկը սովետական մարդու առողջ, կորովի թարմությամբ բուրող աշխարհազգացման ակունքից, մյուսը սովետական մարդու հոգեբանությանը, ըմբռնումներին բոլորովին անհարիր, անկումայնության պղտոր ակունքից։ Կապուտիկյանի ստեղծագործական զարգացումը հիմք է տալիս մեզ հուսալու, որ նա կհաղթահարի իր պոեզիայի վատառողջ մոտիվները։ Միայն նա պետք է խորացնի իր կենսափորձը և աշխատի իր անձնականը համահնչուն դարձնել մեր սոցիալականին։

Փորձելով մեր սովետահայ պոեզիայի հիմնական դեմքերի ստեղծագործության բնութագրի ուրվագծերը քաշելու, մենք ի հարկե նպատակ չենք հետապնդում պարզելու այդ պոեզիայի բնորոշ հատկությունները։ Այդպիսի մի խնդիր իրագործելու համար անհրաժեշտություն կզգացվեր ընդարձակելու բնութագրումների սահմանները և նրանց մեջ առնելու Ազատ Վշտունուն, Վահան Գրիգորյանին, Հռիփսիմե Պողոսյանին, Աղավնուն, Աշոտ Գրաշուն, Համո Սահյանին, Մարո Մարգարյանին և ուրիշ մի քանիսներին, այլ նաև անհրաժեշտություն կզգացվեր քննարկելու մեր երիտասարդ սկսնակների ստեղծագործական արտադրանքի ընդհանուր վիճակը և համապատասխան եզրակացություններ անելու։

Մենք նպատակահարմար գտանք ուրվագծորեն նշելու ստեղծագործական յուրահատկությունները մեր այն բանաստեղծների, որոնց ամենից շատ ենք պարտական վերջին տարիներին մեր պոեզիայի նվաճումներով, որոնք միաժամանակ իրենց ստեղծագործական թերությունները հաղթահարելու ավելի շատ տվյալներ ունեն:

Մեր սովետահայ պոեզիայի մասնավորապես վերջին տարիների հաջողությունների ու թերությունների պատճառները լուսաբանելիս անհրաժեշտ է ուշադրությամբ քննարկել և այն հարցը, թե մեր պոետները ի՞նչ վերաբերմունք են ցուցաբերել դեպի կլասիկ ժառանգությունը, թե ի՞նչ ուղղությամբ է առաջ տարվել այդ ժառանգության օգտագործումը և ի՞նչ որակի մեջ մարմնավորվել: Ցավոք չենք կարող հաստատել, որ մեր պոետները միշտ են ճիշտ ուղու վրա կանգնած եղել այդ ժառանգությունը յուրացնելու գործում, որ նրանց աշխատանքն այդ ուղղությամբ միշտ է դրական հետևանքներ ունեցել: Դրականին զուգընթաց տեղի է ունեցել և բացասականը: Դրականը այն է, որ սովետահայ պոեզիան մեր կլասիկ գրականության— պոեզիայի օրգանական շարունակությունը լինելով համաձայն մեր ժողովրդի սոցիալական կյանքի բուրբոսվին նոր պայմանների՝ այդ գրականության լավագույն տրադիցիաները մարտական վստահությամբ բարձրացնում է և զարգացնում: Դրական պիտի համարել և այն, որ մեր պոետներից մի քանիսը՝ Նաիրի Զարյանը, Գեղամ Սարյանը, մասամբ Սողոմոն Տարոնցին և ուրիշները հիմնականում ճիշտ են ըմբռնում մեր կլասիկ պոեզիայի օգտագործման խնդիրը. ոչ թե ընդօրինակում կամ հարմարեցնում են կլասիկների ստեղծագործության այս կամ այն առանձնահատկությունները, նրանց արտահայտչական միջոցները և կոմպոզիցիոն հատկանիշները, այլ ամեն մեկն իր կարողության չափ վերամշակում է կլասիկների բովանդակության և ձևի էական կողմերը: Նույնպես դրական պիտի համարել և այն, որ մեր պոետներից ոմանք պիտակցելով իրենց լեզվապաշարը հարուստ դարձնելու կարևորությունը ոչ թե երկրորդ ձեռներից են փոխառություններ կատարում, այլ կլասիկների թողած լեզվական ժառանգությունից:

Հակառակ այդ բոլորի, մեր մի շարք պոետները, որոնց թվում մասամբ և տաղանդավոր Հովհաննես Շիրազի մոտ, կլասիկ ժա-

ռանդության օգտագործումը ոչ այնքան դրական, որքան բացասական հետևանք է ունենում։ Այդ պոետները հիմնականում իրենց հայացքը ուղղում են դեպի Ավետիք Իսահակյանը, Վահան Տերյանը, Եղիշե Չարենցը, մասամբ Հովհաննես Թումանյանը և Դանիել Վարուժանը։ Եվ ահա սովետահայ այդ պոետներին նույնիսկ մակերեսորեն ընթերցելիս դժվար չէ տեսնել, որ նրանցից ամեն մեկը վերոհիշյալ խոշոր դրական դեմքերի ստեղծագործությունը ոչ այնքան օգտագործում է վերամշակելով, որքան մեծ կամ փոքր չափով տուրք է տալիս նրանց ըստ էության կրավորականության ուղին բռնած։

Սովետական մեր այդ բանաստեղծները կլասիկ ժառանգության օգտագործման երբեմն չափազանց պրիմիտիվ ըմբռնում են ցուցաբերում իրենց գործերում։ Որոշ արտաքին ձևափոխման ենթարկելով, նրանք կիսամեխանիկորեն իրենց բանաստեղծության հյուսվածքն են տեղափոխում անվանի պոետներից որևէ մեկի ոճային այս կամ այն բնորոշ առանձնահատուկ մոմենտը, պատկերավոր արտահայտությունը, փոխհարաբերությունների զուգակցությունները և նույնքան կիսամեխանիկորեն կիրառում են նրա կոմպոզիցիոն որևէ հնարքը, մոտեցումը։

Մեր այդ պոետները ի հարկե շահագրգռված են ստեղծագործական ինքնուրույն դեմք ունենալու մեջ, աշխատում են արդարացնել իրենց պատասխանատու կոչումը, բայց կամ հետևողականորեն չեն հասկանում իրենց անելիքը, կամ խուսափելով դժվարություններից՝ շարժվում են դիմադրության նվազագույն գծով։

Անցյալի ժառանգության կրավորական, անքննադատ օգտագործումն է հիմնական պատճառներից մեկն այն բանի, որ մեր բանաստեղծներից մի քանիսի անհատական ոճը հստակ չէ, զուրկ է շեշտված պարզորոշությունից։ Պարզ է, որ այդ ուղղությամբ շարունակելով գործը, կարելի է վտանգի ենթարկել իրեն էկլեկտիկ դառնալու բանաստեղծական ոճի բնագավառում։

Մեր պոեզիայի հաջող զարգացման համար անհրաժեշտ է այս թերությունն արմատապես վերացնել։ Մեր բանաստեղծները պետք է լուրջ վերանայեն իրենց ստեղծագործական մոտեցումներն անցյալի ժառանգության առնչությամբ և համապատասխանորեն վերակառուցեն իրենց աշխատանքները։

Մեր սովետահայ պոեմներից շատերը քիչ են ուսումնասիրում անցյալի մեր պոեզիայի խոշոր դեմքերի ստեղծագործությունը, խորը չեն յուրացնում նրանց նվաճումների բնույթը և նպատակահարմար կերպով օգտագործում դրանք։

Սովետահայ բանաստեղծության մեջ բացառիկ դեպքերում չէ միայն երևան գալիս հուզական լիցքի թուլություն, ներքին ջերմության, արտահայտության պակաս, զգացմունքների հորդուն վիճակի բացակայություն, իսկական ոգևորիչ պաֆոսի դժգույն արտահայտություն։ Նույնպես բացառիկ դեպքերում չէ միայն տեղի ունենում այն, որ մեր պոեմները փոխանակ արտաքին կամ ներքին շարժման դինամիկա պատկերելու, տալիս են այդ դինամիկայի երևույթականությունը. ենթադրական շարժման մեջ ընդգրկված ապրումները, դրությունները, երևույթները, իրերը մեխանիկորեն իրար հարակցելով կամ հաջորդաբար թվարկելով։ Հազվադյուտ չէ նմանապես և այն, որ մեր պոեմներին չի հաջողվում ցույց տալ լարվածության աստիճանական բարձրացումը, հուզականության կամ մտքի զարգացման բարձրակետի նախապատրաստումը, դրամատիկ վիճակի աճումը, գործողության հախուռն թափ կամ նրա առաջ բերած հակագործողության ազդեցությունը։ Մեր բանաստեղծությունների, լիրիքական պոեմների կոմպոզիցիան միայն պատահական դեպքերում չէ, որ սեղմ, կուռ կենտրոնացված չի լինում։ Քիչ են ուշադրություն դարձնում մեր բանաստեղծները ոտանավորի երաժշտականությամբ գեղարվեստական ընկալումներ առաջացնելու վրա։ Մեր պոեզիայում գործածվող փոխաբերությունները չեն վայլում իրենց բազմազանությամբ, գերակշռաբար օգտագործվող համեմատությունները ու զուգահեռականությունները մեծ մասամբ չեն օժանդակում պոետական մտքի ու զգացմունքների, երանգների լրիվ արտահայտմանը։

Այս թերությունները վերացնելու համար ի միջի այլոց պահանջվում է նաև դրական կուլտուրա, մեծ դիտելիքներ գրականության պատմությունից։ Թվում է մեզ, որ մեր սովետահայ պոետները քիչ են ուսումնասիրում և համապատասխանորեն օգտագործում, օրինակ՝ «Ազատ Աստված»-ի արժանիքները՝ նրա մարտական եռանդը, պայքարի կիրքը, դրամատիկ շունչը, շեշտված աննահանջ

նպատակասլացությունը, զգացմունքների դինամիկ շարժումն ու աճը, հախուռն թափը, կուռ ամբողջականությունը: Կամ Պատկանյանի «Հիմի է՞լ լռենք»-ի քաղաքական հագեցվածությունը, հարցադրումների էներգիկ կրկնումը, դրությունների վառ, ազդու հակադրումները, քարոզչական շառաչն ու թափը:

Իսահակյանը շառաի ուշադրության կենտրոնումն է, բայց որքա՞ն քիչ են ուսումնասիրում և իսկապես օգտագործում նրա վարպետության առանձնահատկությունները, նրա պոեզիայի սիրապետող գծերը— զգացմունքների անմիջականությունը, հուզականության ներշնչական ուժը, ապրումների ներքին դինամիկան, պատկերների կենտրոնացվածությունն ու շքեղությունը, ռոմանտիկական հուզվածականությունը, պատմականության շունչը, մտքի խտյանքը: Որքա՞ն քիչ են օգտագործվում Հովհաննես Թումանյանի անբաւ գանձը՝ էպիկականը և լիրիկականը իրար ներթափանցացնելու, արտաքինը և ներքինը միասնացնելու, շարժման դինամիկան արտահայտելու նրա անզուգական վարպետությունը, խոսքի պայծառությունն ու պարզությունը, նկարագրելու մեծ ունակությունը, արտահայտչական միջոցների բազմազանությունը, պատմողական հոյակապ կարողությունը, երևույթների էությունները բացահայտելու, մեծածավալ պրոբլեմներ դնելու նրա արտակարգ ունակությունը: Անիրավացի կերպով քիչ է օգտագործվում Հակոբ Հակոբյանի ստեղծագործության հատկանիշները՝ նրա քաղաքացիական պաֆոսը, բացահայտ և նպատակասլաց պարտիականությունը, ուղղուցիոն շեշտվածականությունը, դիմումների գործունեությունը, զգացմունքների դինամիկան և ուղղուցիոն ռոմանտիկայի ընդվզումները:

Հաճախակի սայթաքումներ են կատարվում մեզ մոտ մեր նահապետական պոեզիան օգտագործելիս նաև մի այլ կապակցությամբ: Անցյալի մեր խոշոր բանաստեղծներից ոմանք իրենց հուզող մտքերն ու զգացմունքները, իրենց հոգեկան ապրումները վառ պոետական պատկերներով արտահայտելու համար դիմել են նաև գրականության մեջ վաղուց ի վեր կիրառվող մի հնարքի: Նրանք հակադրել կամ համեմատել են իրենց ներքին վիճակը հայրենի լեռների և գետերի հետ, կամ իրենց մտքերն ու հույզերը հայրենիքի առընչությամբ դրսևորել են հանդեպ նրան ազած դիմումներով:

մեջ և որոշ մտապատկերներ զարթեցնելու համար հատուկ շեշտվածությամբ հիշեցրել են նրա մասին: Այդ հնարքը մեր նախասովետական պոետները օգտագործել են բանաստեղծական մեծ տակտով, չափի զգացումով և այդպիսով հաճախ հասել են արտահայտչականության բարձր աստիճանի: Գլխավորապես Իսահակյանի և Տերյանի ազդեցությամբ սովետահայ մեր պոետներից շատերը մեծ տուրք են տալիս այդ հնարքին, մեր երկրի լիճը, որոշ լեռները, գետերը իրենց պոետիկայի անհրաժեշտ ախտանշաններից մեկը դարձնելով: Սակայն այդ պոետների մեծամասնությունը դիմելով այդ հնարքի կիրառմանը, խախտում է բանաստեղծական չափի զգացումը, իջեցնում է հնարքի արժեքը և որոշ աստիճանի դարձնում ֆորմալ մի միջոցառում: Արարատը, Սևանը, Արագածը և այլն որպես պոետական ոգևորության աղբյուր հաճախակի և միակողմանի օգտագործումից հետզհետե կկորցնեն իրենց համապատասխան տրամադրության պատճառելու ուժը և շատ դեպքերում կհնչեն որպես սոսկական աշխարհագրական անուններ: Աշխարհագրական անունը չպետք է շտամպ դարձնել, այդ ինքնին դժվար հնարքը պետք է օգտագործել նպատակահարմար կերպով:

Է՛լ ավելի տհաճ տպավորություն է առացլում, երբ բանաստեղծը իր ապրումները, հիշողությունները պոետական միջոցներով վերարտադրելու նպատակով իր տեսադաշտի մեջ է քաշում զանազան դյուղեր, գետեր և սարեր, որոնց մասին ընթերցողների մեծամասնությունը գաղափար անգամ չունի: Բանաստեղծական էգոցենտրիզմը այս դեպքում զուգորդվում է նեղ դավառականության հետ: Քիչ չեն նաև մեզ մոտ տպագրվում այնպիսի ոտանավորներ, որոնց մեջ աշխարհագրական անունները հիշատակվում են պոետի և իր ինտիմ շրջանի հետ տեղի ունեցած դեպքերն ու անցքերը վերհիշելու կապակցությամբ: Այդ տիպի ոտանավորների, արժեքը էլ ավելի ցածր է լինում, երբ վերհուշ կատարող բանաստեղծի ներքնաշխարհը այնքան էլ բովանդակալից չէ: Ժամանակն է, որ մեր պոետները չափավորեն իրենց ոգևորությունը այդ ուղղությամբ, աշխատեն տեղին, դիպուկ, նպատակահարմար կերպով գործածել այդ հնարքը և որպես բանաստեղծի ներքին բովանդակությունը ընդհանրացնելու միջոցներից մեկը այն չվերածեն էժան տպագին աուրոգատի:

Կլասիկ ժառանգության մեջ կարևոր տեղ է գրավում մեր ժո-

ժողովրդական էպոսը, ժողովրդական լիրիկական տիպի բանավոր ստեղծագործությունը: «Ժողովուրդը ոչ միայն բոլոր նյութական արժեքներ ստեղծող ուժն է, նա հոգևոր արժեքների միակ և անսպառ աղբյուրն է, ըստ իր ստեղծագործության գեղեցկության և հանճարեղության պոետն ու փիլիսոփան, որ ստեղծել է աշխարհի բոլոր մեծ պոեմներն ու տրագեդիաները»,— ասում է Գորկին: Մեծ գրողի և հումանիստի այս իմաստալից դիտողությունը ամբողջությամբ վերաբերում է և մեր ժողովրդին: Մեր ժողովրդական բանահյուսության օգտագործման մի անսպառելի գանձ է: Դրժբախտաբար մեր սովետահայ պոետների ստեղծագործության մեջ քիչ են նկատվում այդ օգտագործման ցայտուն հետքերը: Մեր պոետները ճիշտ չեն մոտենում իրենց անելիքին և այդ կապակցությամբ նրանցից շատերն իրենց ստեղծագործության մեջ, մեծ մասամբ սիրային բանաստեղծություններում, աշխատում են ընդօրինակել ժողովրդական ոճի առանձնահատկությունները: Այդ մոտեցումը խրախուսելի չէ. ոչ թե հարկավոր է նմանվել ժողովրդականին, այլ պետք է վերհանել նրա բարձր պոետական արժանիքները ստեղծագործական նոր որակի մեջ: Ժողովրդականը մի ժանր չէ և չի հարկավոր ապացուցել, որ կարողանում ես բանաստեղծել այդ «ժանրի» գծով ևս: Ժողովրդական ստեղծագործությունը մի անսպառ աղբյուր է և բոլոր մեծ պոետները խմել են նրա ակունքից: Թումանյանի և Իսահակյանի պոետական հմայքի հիմնական պատճառներից մեկն այն է, որ նրանք սքանչելիորեն օգտագործել են մեր ժողովրդական բանահյուսությունը: Սովետական մեր բանաստեղծները չպետք է մոռացության տան, այլ պետք է շարունակեն մեր կլասիկ պոետների այդ տրադիցիան: Նրանք պետք է աշխատեն իրենց ստեղծագործությանը հաղորդելու այն չքնաղ պարզությունը, արտահայտության անմիջականությունը, խոր հուզականությունը, կյանքի մեծ շունչը, վեհ լրջությունը, որ այնքան հատուկ է ժողովրդական բանահյուսությանը:

Մենք շոշափեցինք մեր կլասիկ ժառանգության օգտագործման որակն ու վիճակը սահմանափակ շրջանակներում միայն: Սովետական գրականության զարգացման նեղկա էտապում, նրա առաջ դրած հերթական խնդիրների կապակցությամբ՝ ժառանգության օգտագործման հարցի բազմակողմանի պարզաբանման անհրաժեշտությունն ավելի է զգալի: Համկ(բ)Պ կենտրոնական կոմիտեի

պատմական որոշումները դրականության և արվեստի հարցերի մասին, ընկ. Ժդանովի զեկուցումը «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին մեր գրականագիտության ու քննադատության առաջ դնում են բազմաթիվ խնդիրներ, որոնց մեջ կլասիկ ժառանգության օգտագործմանը առնչվող խնդիրները հետին տեղը չեն գրավում: Չպետք է մոռանալ, որ «Ազգային լեզվի, ազգային գրականության, ազգային ինքնագիտակցության զարգացումը մի ժողովրդի, որը կարողանում է արժեքավորել, հարգել, առաջ տանել իր պատմական անցյալի լավագույն traditions-ները և ստեղծել իր նոր, առաջավոր traditions-ները՝ սոցիալիստական պրոգրեսի հզորագույն ֆակտորն է հանդիսանում» («Բոլշևիկ», 1946 թիվ, № 22):

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. ԿԱՐԻՆՅԱՆ

ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Անցյալ դարի վերջավանական թվականներից մեր իրականության մեջ սկսում է կազմավորվել կրթական-նացիոնալիստական հին պատվիրանների դեմ ուղղված գաղափարական նոր արշավը։ Ռուս առաջավոր գրողներն այդ շրջանում դառնում են հայ գործիչների համար գնահատար ուսուցիչներ։ Չեն շեղվում 60—70-ական թվականների հայ գործիչների ուղեգծից նաև հետագա էպոխայի ներկայացուցիչները։

Շատ մեծ թափ են առանում հայ-ռուս կուլտուրական կապերը Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխությից հետո։ Կարճ ժամանակվա ընթացքում, Պետհրատի նախաձեռնությամբ թարգմանվում են Պուշկինի և Լերմոնտովի, Տոլստոյի ու Դոստոևսկու, Տուրգենևի, Գոնչարովի, Լեսկովի, Չեխովի, Մ. Գորկու, Ֆուրմանովի, Շոլոխովի, Ֆադեևի և այլ գրողների գործերը։ Թարգմանելով ռուս արվեստի վարպետներին հայ գրադետները, իհարկե, հանդես են գալիս որպես առաջավոր ռուս կուլտուրայի ջահակիրներ և ակտիվ պրոպագանդիստներ։ Ռուս մեծ գրականության վարպետները դառնում են հայ գրագետների, մասնավորապես սովետահայ գրողների համար և ուսուցիչներ և սիրելի զինակիցներ։

1.

Յարական բռնապետության դաժան կարգերը, ինչպես հայտնի է, ստիպում էին ազատախոհ և ըմբոստ գրագետներին շատ դառը ոճով արտահայտել իրենց վհռերն ու մտորումները։ Քողարկված մտքերն էլ շոշափելի հարված էին հասցնում ցարիզմի սպասավորներին։ Ահա ինչու բռնապետության իդեոլոգները մոլեգնորեն նեռավում էին՝ շատ զգուշավոր լեզվով գրողների դեմ,

դրսևորում էին անգամ մշուշապատ ակնարկների իսկական իմաստը և հաճախ ստեղծում էին հասարակական ուրույն արձագանք։

Այդպես են նետվում նրանք ի միջի այլոց Նովիկովի, Ռադիշչևի, Չաադաևի դեմ։

Նովիկովի ու Ռադիշչևի օրերին լուսավորության տիրակալը Ռուսիայում էնցիկլոպեդիստների «բարեկամ» Եկատերինան էր։ Կայսրուհու համոզմամբ՝ Վոլտերի և Դիդրոյի խոհերը «լուսավորված միապետի» պատմական միսիայի մասին կարող էին ամրացնել ցարական դեսպոտիայի դիրքերը։ Կայսրուհին գրագիտուհի էր, պիեսներ էր գրում և ձգնում էր հանդես գալ լուսավորության խնամակալի դերում։ Նրա դիրքը սակայն էնցիկլոպեդիստների նկատմամբ փոխվում է ֆրանսիական ռևոլյուցիայից հետո։ Եկատերինան մշակում է նոր ուղեգիծ ու նետվում Ռադիշչևի և Նովիկովի դեմ...

Նովիկովը հայտնի էր որպես ղավեշտական-պուբլիցիստական ժուռնալների խմբագիր և եռանդուն հրատարակիչ։ Նա դառնում է անկաշկանդ միտքը ձևավորող ու կազմակերպող գործիչ։ Այդ է ահա, որ զայրացնում է կայսրուհուն։ Հարմար մի պատրվակ էր անհրաժեշտ կուտակվող զայրույթի դրսևորման համար։ Նովիկովը հրատարակում է կայսրուհու հովանավորության ներքո գործող եզվիտների օրդենի պատմությունը։ Ցարական մանկլավիկները հայտնում են կայսրուհուն, որ այդ գիրքը «հայհոյաբանական» մի պատմություն է և առաջարկում է Մոսկվայի արքեպիսկոպոս Պլատոնին ուսումնասիրել Նովիկովի կրոնական հայացքները։ Պլատոնը կատարում է այդ առաջարկը և նշում, որ Նովիկովի բոլոր հրատարակությունների մեջ անհանդուրժելի պիտի համարվեն հատկապես էնցիկլոպեդիստների թարգմանությունները։ Նա հայտնում է, որ Նովիկովը բարեհոգի և նույնիսկ արժանավոր քրիստոնյա է։ Այդօրինակ պատասխան ստանալուց հետո, կայսրուհին ստիպված է լինում հանգիստ թողնել Նովիկովին։ Սակայն այդ դեպքը թելադրում է նրան նոր տեսանկյունից մոտենալ Նովիկովի ամբողջ գործունեության գնահատությանը։ Ակնարկված օրերից սկսած, ինչպես արձանագրում են ռուս գրականության պատմաբանները, Եկատերինան անցնում է «առաջավոր գաղափարներ» ժողովրդականացնող գործիչների մանրակրկիտ ուսումնասիրությանը։

Արդեն հայտնի էր, որ յակոբինյաններըը պատրաստվում են հաստատել նոր կարգեր՝ աբսոլուտիզմի փլատակների վրա։ Տափնապալից այդ օրերին կայսրուհին հրահանգում է բանտարկել կատարելապես անմեղ Նովիկովին։ Կարդադրությունը կատարվում է։ Առանց դատական քննության Նովիկովին նետում են բանտ։ Տասնհինգ տարի ժողովրդի առաջավոր ներկայացուցիչը բանտարկված է մնում Շլիսսելբուրգի համբավավոր ամրոցում— և ազատվում է միայն Պավել թագավորի օրերին, արդեն ծերացած ու կիսահաշմանդամ վիճակում։

Ավելի ողբերգական է լինում միևնույն օրերին Ռադիշչևի վախճանը։

Ռադիշչևը Եվրոպայից վերադառնում է հայրենիք ապատապինված ազատատենչ գաղափարներով։ Նա գառնում է առաջավոր գիտության պրոպագանդիստ և առաջիններից մեկն է լինում, որ քննության է դնում մամուլի էջերում բնության ու մարդկային օրգանիզմի գիտական հետազոտության պրոբլեմները։ Ռադիշչևը դրավում է ցարական բռնապետության գաղափարախոսների մեծ ուշադրությունը։ Նրա «Ճանապարհորդություն Պետերբուրգից Մոսկվա» գիրքը գառնում է ազդու մանիֆեստ։ Մոայլ գույներով նկարագրելով ճորտ գյուղացիների կացությունը և սանձարձակ կառավարիչների բռնությունները, Ռադիշչևը հանդես է գալիս իր գրքի մեջ որպես ազատատենչ և խիզախ մտածող։ «Պուգաչևից էլ վատ է»,— գրում էր կառավարության ապստամբներից մեկի մասին Ռադիշչևի 1790 թ. Պուգաչևը գյուղացիական ապստամբության ղեկավարն էր, որի կողքին հիշատակվող Ռադիշչևը սարսափահար ազնվականության համար պիտի գառնար ավելի ևս անհանդուրժելի։

Գատաստանը լինում է շատ կարուկ։ Ռադիշչևին շղթայակապ պահում են Սիբիր։ Խիզախ մտածողն ավարտում է իր կյանքը ինքնասպանությամբ։

Շնորհիվ սովետական բանասերների պրպտումների մեզ համար այսօր ավելի հասկանալի են թե՛ Եկատերինայի արտասովոր անելության և թե՛ լիբերալ պատմաբանների տենդենցիոզ լուսաբանության իրական դրդապատճառները։ Եկատերինայի համար բանության իրական դրդապատճառները։ Եկատերինայի համար ապահի էր ազատ մտքի ջահակիրը։ Լիբերալների համար անհան-

դուրժելի էր ազատության էնտուզիաստ-իմաստասերը և ռեսպուբլիկական կարգերի երկրպագուն։

Կառավարությունը կռվի էր ելնում ազատ խոսքի երկու ականավոր ներկայացուցիչների դեմ ջանալով սարսափի մատնել նոր գաղափարների հետևորդներին։

Երրորդ խոշոր դեմքը, որի դեմ ուղղված ռեպրեսիան կարելի է հատկանշական համարել— Չաադաևն էր։

Հասարակական առօրյայից կտրված զուսպ գործիչ էր Չաադաևը։ Արտասահմանում նա մեծագույն ուշադրությամբ հետևում էր հայրենիքում կատարվող դեպքերին։ Ճնշված էր դեկաբրիստների ապստամբությունը։ Ջախջախված էին ալեքսանդրյան էպոխայի առաջին շրջանում ստեղծված անուրջներն ու բաղձանքները։ Լռություն և կատարյալ ամայություն էր իշխում հայրենիքում։ Խեղդված էր մամուլը։ Մտրակը, բանտն ու աքսորավայրը ստեղծել էին դաժան պայմաններ։

Չաադաևը արտասահմանից վերադառնում է 1836-ին և առանձնանալով փակվում է իր բնակարանում՝ տարված տխուր խոհերով ու ծանր ապրումներով։ Չորս տարի նա այդպես ապրում է մենության մեջ և ապա մի գեղեցիկ օր հրապարակում իր հայտնի «Փիլիսոփայական նամակները»։

Դա շատ յուրահատուկ հրապարակախոսական աշխատություն էր։

«Փիլիսոփայական նամակներ»-ի մեջ բացի կրոնական դատողություններից նկատելի տեղ էր գրավում հայրենի Ռուսիայի անհրապույր անցյալի և տխուր առօրյայի սուր քննադատությունը։ Այդ էր ահա, որ ուրույն իմաստ էր հաղորդում «Փիլիսոփայական նամակներ»-ին։ Խորունկ զգացումով գրված նամակների մեջ ուժեղ էր հին կարգի դեմ ուղղված ցասումը։ Ահա հենց այդ պատճառով բարձրանում է անասելի իրարանցում և վայնասուն։ «Նամակները» լույս էին տեսել «Տելեսկոպ» ժուռնալի մեջ։ Այդ ժուռնալը փակվում է։ Պատժում են ցենզորին։ Աքսորավայր են նետում խմբագրին։ Չաադաևի նկատմամբ ընդունվում է միանգամայն նոր և արտասովոր որոշում։ Չաադաևը խելագար է հայտարարվում և դառնում է պարզապես ամենօրյա և անլուր հալածանքների ենթակա կալանավոր-խելագար։ Ոստիկանության առաջարկով յուրաքանչյուր օր Չաադաևի մոտ էր անցնում նրա

«առողջության» հետևում ոստիկանական բժիշկը։ «Միշտ հարբած էր լինում այդ բժիշկը և ամեն օր երկարորեն հայհոյում էր ամենաչիրը կերպով»,— գրում է իր եղբորն ուղղված նամակի մեջ Մեծապույն զայրույթով Չաադաևը 1837-ին։

Այդպես մի տարի շարունակ մեկուսացման է ենթարկվում ռուս հասարակական մտքի ցայտուն ներկայացուցիչներից մեկը։ Նրա աշխատասենյակը հիրավի դառնում է «պայքուն՝ մրին գիշերվա պահին» (Գոգոլն)։ Միայնակ է մնում Չաադաևը մինչև իր կյանքի վերջին օրերը։ Մրին գիշերն էր իշխում ամենուրեք։ Ցնցող տպավորություն են թողնում «Փիլիսոփայական նամակներ»-ը։ Բողոքել բացահայտ կերպով անհնարին էր։ Ցասումը, բողոքը, հասարակական անբավականությունը արտահայտվում էր կամ այլաբանական երգի միջոցով, կամ քողարկված ձևով։ Ցարիզմի բազմահմուտ գրաքննիչները կատարելեն նեռվում էին այդօրինակ ոճով գրողների դեմ։ Մեծապույն ուշադրությամբ ուսումնասիրում էին նույնիսկ մշուշապատ տողերի իմաստը։ Գրաքննիչներին ամենօրյա օգնություն էին հասցնում թե՛ հատուկ լրտեսները և թե՛ ռեակցիայի սպասարկող սև դրագետները։ Դրանց մեջ աչքի էր ընկնում հատկապես սխրահռչակ Բուլգարինը։ Հատուկ զեկուցագրի մեջ Բուլգարինը առանց լուրջ փաստարկումների հայտարարում է, որ «Օտեչեստվեննիե Զապիսկի» ամսագրի զեկավարները պաշտպանում են «սոցիալիզմի, կոմունիզմի և պանթեիզմի սկզբունքները»։*

Երբ Պուշկինը և Լերմոնտովը սպանվում են, լիբերալ պատմաբները ճիգ են անում մեղմացնել երկու պոետների երկերի սուր քաղաքացիական շեշտերը։

Այսօր ավելի քան ակներև է, որ այդօրինակ փորձերը ձեռնարկվել են տենդենցիոզ կերպով, սոսկ լիբերալիզմի ուղեգծի արբագործման ու հիմնավորման համար։ Երկու պոետներն էլ կապված էին հարազատ ժողովրդի հետ և անհաշտ պայքար էին մղում ցարական դեսպոտիայի դեմ։ Ցարական ռեպրեսիաները չէին կարող խեղդել ազատ միտքը։ Պարբերաբար կրկնվող գյուղացիական ապստամբությունները, իսկ հետագա էպոխայում նաև բանվորա-

---

* Лемке, Николаевские жандармы—Ժողովածուի մեջ զետեղված ծանոթություն։

կան շարժումները, յուրահատուկ արձագանք էին թողնում առաջավոր մտավորականների շրջանում, առեղծում էին բողոքող և ազատախոհ գործիչների նորանոր շարքեր: Ահա այդ գործիչների գրական-գիտական աշխատանքն էլ յուրահատուկ տոն է հաղորդում ամբողջ ռուս գրականության պատմությանը: Բավական է միայն այստեղ արձանագրել հետևյալ փաստերը:

Նովիկովի ու Ռադիշչևի ժամանակակիցներից մեկը, պոետ Կապնիստը (1757—1824) գրում է ստրկության դեմ ուղղված հատուկ բանաստեղծություն: Մեղմ էլեգիաների երկրպագու Բատյուշկովը (1787—1855), ջանալով կերտել ժողովրդական լեզվին մոտ լեզու, խարազանում է— «մանդարինային ու ստրկական լեզուն»: Քաղաքական խմբակցություններից հոգնած «բեֆչի» ու «զարդիման» Դենիս. Դավիդովը (1784—1830) քննադատում է ազնվական լիբերալներին: Դեկաբրիստական շարժման մասնակցում են ակտիվ կերպով աքսորական Բեստուժև-Մարլինսկին, հետագայում կախաղան հանված Ռիլեևը, Վյազեմսկին, Տիրասպոլյան ամրոցի կալանավոր Ռաևսկին, Կյուխելբեկերը, Կատենինը, Օդոևսկին: Դեկաբրիստներին ձայնակցում են բացի Պուշկինից՝ Գրիբոեդովը, Դելվիգը, Պոլեժաևը, Վենևիտինովը...

Ազնվական մտավորականներին հետևող սերունդը առեղծում է ժողովրդի տենչերին ու բաղձանքներին արձագանքող գործիչների մեծ պլեադա: Ռուս փիլիսոփայության և քննադատության պարծանքը կազմող Գերցենը, Բելինսկին, Դոբրոլյուբովը, Չերնիշևսկին հայտնի են դառնում որպես ցարական բռնապետության ու ստրկատիրական կարգերի դեմ պայքարող ռևոլյուցիոն գործիչներ: Առանձին տեղ են գրավում ռուս գրականության պատմության մեջ վտարանդի գրողները— Գերցենը, Օգարյովը, Պեչորինը... Մեծ էր աքսորական գրագետների թիվը: Բացի դեկաբրիստներից ու պետրաշևսկյաններից, Չերնիշևսկու, Կարոնին-Պետրոպավլովսկու, Միխայլովի, Շևչենկոյի, Կորոլենկոյի, Գորկու անունները մտնում են ռուս գրողների մարտիրոսագրության պատմության մեջ ցայտուն գծերով: Ես կանգ չեմ առնում բազմաթիվ այլ կուլտուրական գործիչների— գրագետների, նկարիչների, գիտնականների վրա, որոնք տիպված են եղել անհավասար պայքար մղել և ծանրագույն օրեր ապրել: Կոլցովի, Սուրիկովի, Նիկիտինի նման ժողովրդական պոետներն ապրում էին միշտ հացի կարոտ: Պոմյալովսկին 33

տարեկան հասակում մահանում է խոնավ նկուղում: Գարշինը և Ռապենակին խելագարվում են: Տաղանդավոր ուս գրագետներից փրկվում են միայն Գոգոլն ու Դոստոևսկին, բայց չափազանց քանկ գնով:

Գոգոլը կխափանվածար կացության մեջ այրում է իր «Մեռած հոգիներ»-ի երկրորդ հատորը, նահանջում ռեալիստական արվեստի դիրքերից, և նետվելով սև ռեակցիայի դիրքը, պրում է կրոնական-միստիքական սենտենցիաներ: Դոստոևսկին ճիգ է անում կերտել նացիոնալիստական-կրոնական պատվանդանի վրա խարխլված իմաստասիրություն: Մինչև իր կյանքի վերջին օրերը նա չի կարողանում ազատագրել իր հոգին ներհակ և հակասական դեպրոմաններից: Լինելով կյանքի նկարիչ, նա հաճախ շեղվում է իր նոր իմաստասիրության դիրքերից և մերկացնում դաժան իրականության իսկական բնույթը:

Իր արվեստով Դոստոևսկին ինքն է խարազանում իրեն: Իր գեղարվեստական վեպերի մեջ նա նկարագրում է անհուն տառապանքով հասարակական ախտերն ու խոցերը, ցուցադրում է իշխող կարգերի իրական բնույթը, խարազանում ու դատափետում տիրող կարգերը: Փորփրելով ռեալիստ վիպագրին հատուկ սուր պրշով մարդկային հոգու զարտուղի ելևէջները, միշտ համակված ծանրագույն ապրումներով, արձագանքելով թուլերի կանչերին, տանջված սրտով նա որոնում էր փրկության նոր ուղիներ:

Փակուղիի հանդեպ կանգնած նա մերկացնում է հասարակական հակասությունները՝ միշտ տարված ժողովրդին օգնելու մարմաջով: Ահա հենց այդ կապը ժողովրդի հետ ստիպում է Դոստոևսկուն արձագանքել նույնիսկ դեմոկրատ-գրագետների քաղաքական որոնումներին:

«Սովրեմեննիկ»-ի ուղղությունը չէին պաշտպանում ո՛չ լիբերալ Տյուրգենևը և ո՛չ էլ ավելի չափավոր դիրքերին կառչած Գոնչարովը, Դոստոևսկին, Տոլստոյը, Լեսկովը: Չնայած դրան, իրենց ստեղծագործական պրակտիկայում այդ գրողները հաճախ հիմնավորում էին 60ական թվականների մոհիկանների տեսական դրույթները:

Ռուս գրականության ռեալիստական դպրոցը կազմավորվում է Դոբրոլյուբովի և Չերնիշևսկու ազդեցության ներքո: Սոցիալական ներհակությունները գրավում են անգամ նկարիչների ուշա-

688—14

դրությունը: Ռեպինը իրականում ներքող է ձոնում բուրլակներին, իսկ Յարոշենկոն բանվոր-կաշեգործի կերպարը դարձնում է սիմվոլիստական պատգամ հուսաբեկ շարքերի համար: Գարշինը ռեակցիայի մռայլ օրերին դատափետում է անպարտ արվեստի տեսաբաններին:

Դոստոևսկու գրությունների մեջ կա նշանակալից մի դիտողություն: Գեղագետի համար,— ասում է նա,— ամենադժվարին գործը դրական հերոսի կառուցման արվեստն է: Ոչ միայն ռուս, այլև եվրոպական գրագետները պարտվում են, երբ անցնում են դրական կերպարների կերտմանը...

Թե որքան իրավացի էր Դոստոևսկին, այդ մասին կարելի է հեղինակն վիճել: Ակներև է սակայն մի փաստ: Փակուղու հանդիպած կաճեցնած վիպագիրը չի կարող կերտել դրական հերոսի կերպար: Տուրգենևը պնեհիմիստ գրող չէր: Բայց նրա հերոսների պատկերասրահի մեջ բավական մեծ տեղ են բռնում «ավելորդ» մարդիկ, իսկ «դրական» կերպարներ գրեթե չկան: Շատ ջերմ գույներով են նկարված տուրգենևյան երկերի մեջ կանայք: Շատ ակտիվ են դերանք և իրենց ակտիվությամբ մերկացնում են ռուսական ֆաուստներին:

Իդեալիստ-հայրերի հետ կապված Տուրգենևը գրեթե զավեշտական գույներով է նկարում «հայրերի» ներկայացուցիչ Կիրսանովի պորտրետը: Զավակների պատգամախոս Բազարովը վիպագրի համար անհարազատ դեմք է: Այնուամենայնիվ Բազարովի կերպարը գծված է շատ ազդու գույներով: Այդ Բազարովը նոր սերունդի համար հատկապես դառնում է դրական հերոս:

Հետաքրքրական է այն, որ ակնհայտ վարանումով մոտենալով Բազարովներին, Տուրգենևը շատ ավելի ջերմ է վերաբերվում ժողովրդի ներկայացուցիչներին: Նրա կերտած «Բիրյուկը», «Երգիչները», «Ձերտոպխանովը» և ապա գեղջուկ հերոսները դրական դեմքեր են: Ահա ինչու այդ հերոսները դառնում են կենդանի կերպարներ երիտասարդ այն սերնդի համար, որը պայքար էր մղում տուրգենևյան լիբերալիզմի դեմ:

Տոլստոյը նույնպես կտրված էր այդ սերնդից:

Վաղեմի անցյալը, ազնվական հերոսների ինքնատիպ միջավայրը, հին պուրակները Տոլստոյի հայտնի պատմական վեպի մեջ շրջապատված են լիրիքական գույներով: Մեծ սիրով և խանդա-

պատանքով է կերտել նա Պիեր Բեզուխովի, Ռոստովների, հայր ու որդի Բալկոնսկիների, անգամ վայրագ Դորոխովի կերպարները, քայց և այնպես վեպի մեջ նոր և իսկական ճշմարտության ջահակիրը ժողովրդի ներկայացուցիչ Կարատաևն է: Խարույկի մոտ համախմբված դեղջուկ զինվորները ժողովրդի իսկական ներկայացուցիչներ են: Ժողովրդի զավակ է սպա Տուշինը: Կուտուզովը աշխատում է ամենից առաջ համակերպվել ժողովրդի «խոսքին» ու քայլերին: Զինված կարատաևյան իմաստասիրությամբ, Տոլստոյը ակնարկում է ժողովրդական կոլեկտիվի մեծ պատմական դերի մասին: Մի շարք վիպակների և «Սևաստոպոլյան պատմվածքների» մեջ իսկական հերոսները ժողովրդի զավակներն են:

Իր «Հարություն» վեպի մեջ Տոլստոյը դատափետում է իշխող կարգերը, պետական ինստիտուտները, հասարակական մորալը և ապա նետվում է ինքն իր դեմ, քննադատում է սեփական իմաստասիրությունը: Նեխլյուդովի զրույցները Կատյուշա Մասլովայի հետ արձանագրված են բնորոշ շարիխաներով: Ազդու են վեպի մեջ աքսորական-ռևոլյուցիոներների կերպարները, նոր այն գործիչների, որոնց հասարակական մտորումները անհասկանալի և օտար էին վիպագրի համար:

Հատուկ տեղ է գրավում Տոլստոյի երկերի և ամբողջ ռուս գրականության հարուստ գանձարանի մեջ «Հաջի Մուրադ» վեպը: Անսահման սիրով, հարգանքով և թափով Տոլստոյը նկարում է այդ գործի մեջ ռուս շարքային զինվորներին և կովկասյան լեռնցիներին: Հայրենասեր և զինվորական է հեղինակը: Լեռնցիների թերությունները նա տեսնում է, բայց և այնպես արդահատանքով է նկարում իր հայրենակիցներին— լեռնցիների դեմ արշավող կովկասյան բանակի զեկավարներին: Բալկոնսկիներ չկան այլևս այդտեղ: Այնքան յուրահատուկ են վիպագրի նկարագրական պրիոմները, որ վեպն էլ մի անկնճռոտ դառնում է կարծես ռազմական արշավի ապրեսիվ բնույթը ցուցադրող գործ: Նիկոլաևյան դաժան կարգերի դեմ է ուղղված այդ գործը:

Տոլստոյը դրվատում է ըմբոստ լեռնցիներին և այդ լեռնցիների հայրենասեր զեկավարներին: «Հաջի Մուրադի» մեջ արտասովոր ուժով է դրսևորվում մեծ վիպագրի հումանիստական հայեցողությունը: Նացիոնալիզմի ամենաչնչին նշույլ անգամ չկա ռազմական դեպքերին նվիրված էջերի մեջ:

Կովկասյան պատերազմների պատմությունը և հատկապես Հաջի Մուրադի կյանքը Տոլստոյը, ինչպես հայտնի է, ուսումնասիրել էր ամենամանրակրկիտ կերպով, հենվելով ոչ միայն հետազոտությունների, այլ նաև արխիվային վավերագրերի վրա։ Հայրենասեր-վիպագրի առանձին ուշադրությունը գրավում է հայրենասիրության բարդ բնույթը։ Տոլստոյը չի դատափետում վայրագ ու ֆանատիկոս մյուրիդներին։ Միշտ աշխատում է հասկանալ ընդհիններին։ Երբ նրան հաղորդում են, որ Հաջի Մուրադը թողել է իր հայրենի լեռները ու որոշել է միանալ ռուսներին, անսպասելի կերպով փոխվում է բանակի օֆիցեր Տոլստոյի վերաբերմունքը։ Հաջի Մուրադը նրա համար դառնում է անհրապույր մի դեմք։

Այդ մասին վիպագիրը նշանակալից տողեր է գրում իր նշանավոր մի նամակի մեջ։ Երբ հետագայում Հաջի Մուրադը նորից դառնում է ապստամբ, Տոլստոյը որոշում է անցնել նոր գործի կատարմանը։

Քրքրիք ողջ արևմտյան գրականությունը և դուք նման մի այլ դեղարվեստական մոնումենտ չեք գտնի։

Աննախընթաց ուժով և պատկերավոր կերպով իր «Հաջի Մուրատ»-ի մեջ Տոլստոյը արտահայտում է ռուս առաջավոր դրագետների հումանիստական բարձր հայեցության ամենահիմնական հատկանիշները։

Լեռնցիներին դրվատող գրողներ եղել են նաև պուշկինյան շրջանում։ Ավելի ուժեղ էին այդ ժամանակ ռոմանտիքական տրամադրություններին հատուկ գույները։ Գեկաբրիստ Բեստուժևի երկերի մեջ այդպիսի գույները շատ ուժեղ են։ Կովկասյան բնանկարը, լեռնային աուլները, ազատասեր լեռնցիները Պուշկինի ու Լերմոնտովի երկերի մեջ նկարագրված են մեծագույն վարպետների պրշով։

Մեծարելով ապստամբ լեռնցիներին, ռուս գրողներն իրականում ընդհարվում էին ոչ միայն կառավարության, այլ նաև ռուս մտավորականության դերազանց մեծամասնության հետ։ Այդ գրողները սիրտ ծառանային աղգայնական տրամադրությունների և իշխող շատ ուժեղ տրադիցիաների դեմ։ Նրանք կատարում են վճռական այդ շրջադարձը։

Լեռնային ռազմական էքսպեդիցիաներին մասնակցող Բեստուժև-Մարլինսկին, Լերմոնտովը, Տոլստոյը դառնում են անչափ

նպատ և ինտիմ դույներ կովկասյան լեռնցիների նկարագրության համար:

Ռուս առաջավոր դրականության հումանիստական բարձր տրադիցիաների հետ էր կապված կորուկ այդ մոտեցումը, այն տրադիցիաների, որոնք տարբերվում էին որոշակի կերպով եվրոպական դրադետների դիտակետից:

Ապատամբ հնդիկներին նկարել և մանավանդ դրվատել չէր վատահանա ոչ մի անգլիական վիպագիր կամ պոետ: Հնդիկներին նկարել է Ռեդիարդ Կիպլինգը, բայց նկարել է միշտ զինված անգլիական «սայիբի»— հրամանատար-տիրակալի ակնոցներով ու մտրակով: Երգել ու մեծարել հնդիկ ապատամբներին այնպես, ինչպես երգում էին Կովկասցիներին Պուշկինը, Տոլստոյը, Գորկին— ի միճակի չէին անգլիական դրագետները:

Առանց վարանումների ու տարված բարձր հումանիստական պաթոսով Տոլստոյը ռուս հայրենասերների կողքին քանդակում է հայրենասեր-լեռնցու կերպարը— Հաջի Մուրադին դարձնելով համամարդկային կերպար:

Միայն աբսոլուտիզմի ու ճորտատիրության դեմ տոկուն պայքար մղող ժողովուրդը կարող էր ստեղծել մարդկայնության այն բարձր գաղափարը, որ հնչում է ռուս առաջավոր դրողների գործերի մեջ:

Դա տրադիցիա էր, հումանիստական բարձր տրադիցիա, որ ստեղծվել էր Նովիկովի, Ռադիշչևի, Պուշկինի օրերից և կազմում էր ռուս դրականության ամենապայծառ ու լուսավոր հատկանիշը: Կառավարական դրեթե պատվարներին կառչած Բուլգարինի, Գրեչի, Կատկովի, Մեշչերսկու, Սուվորինի նման ստորաքարշ հրապարակախոսները ակնհայտնի սարսափով էին խոսում «արմատական» հոլերի արտասովոր ազդեցության մասին: Այնքան ուժեղ էր շեշտված տրադիցիան, որ ծանրագույն կացություն էր ստեղծվում որևէ կերպ հումանիստական ուղեգծից շեղվող անդամ հայտնի ու տաղանդավոր դրագետի համար: Ես կանգ չեմ առնում այստեղ Լեսկովի հայտնի վեպի կամ Դոստոևսկու «Դևեր»-ի բեմադրության հետ կապված պոլեմիկայի վրա:

Դրականությունը առաջավոր ռուս գործչի համար բարձր բեմ էր, հասարակական տրիբունա: Անկաշառ ու խիզախ, ժողովրդի հետ կապված և միշտ առաջ նետվողների նման մտածողներ պիտի

վիճեին գրականության սպասավորները: Նա, ով չէր ցանկանում հասկանալ այդ և ով շեղվում էր գրականության գաղափարական դիրքերից, դատապարտվում էր խստագույն կերպով:

Ահա ինչու ցենզոր Նիկիտենկոն ամեն կերպ աշխատում էր կապվել հասկասիս առաջավոր գրողների հետ և իր մեմուարների մեջ առանձին տոնով էր ակնարկում իր գրական կապերի մասին: Նիկիտենկոն ճիգ է անում նույնիսկ արդարանալ գալիք սերունդների դատաստանի առաջ: Սուվորինը ամեն կերպ աշխատում էր գրավել Չեխովի սիրտը և շատ ընկճվում է, երբ քայքայվում ու քանդվում են վաղեմի հարաբերությունները: Պիսեմսկին ուղևորվում է Լոնդոն Գեորգենին տեսնելու և հուսալքվում է, երբ Գեորգենը հրաժարվում է ընդունել նրան: Ռուս սիմվոլիստները դարձնում են գրականությունը «կյանքի աղմուկից» կտրված էսթետիկական անդորր անդաստան, բայց նորից աշխատում են քողարկել իրենց հակահասարակական տենդենցները և «տեսականորեն հիմնավորել» իրենց ռեակցիոն սկզբունքները:

Ո՞վ էր ստիպում Նիկիտենկոյին, Սուվորինին, Պիսեմսկուն կամ սիմվոլիստ-տեսաբաններին կոմպլիմենտներ նետել իրեական գրականության վարպետների հասցեին:

Առաջավոր գրողների շրջանում ստեղծված ու տիրապետող ամուր տրադիցիան: Ժողովրդի կամքով օրինականացված էր կատեդորիկ մի իմպերատիվ գրողի վարքագծի և քաղաքացիական պարտականությունների մասին՝ сейте доброе, разумное, вечное.

Այդպես էր գրում Նեկրասովը և պարզ այդ խոսքերը դառնում են նվիրական պատգամներ:

Милый друг, я умираю от того, что был честен!

Միամիտ են թվում այժմ այդ տողերը, բայց այդպես էր գրում 60-ական թվականներին լուրջ, մտախոհ և յուրաքանչյուր խոսքի արժեքը կշռադատող Դոբրոլյուբովը:

Հերոսականը մեր կարծիքով հայրենասիրական-հումանիստական այն պայքարն է, որ մղվել է ու պիտի մղվեր ժողովրդական շարքերի կանչերին հետևող գրողների ջանքերով: Հերոսական մոտիվները տարբեր պատմական էպոխաներում արծարծվել են տարբեր գրողների ձեռներեցությամբ: Գրականության կազմավորման, վերելքին և կենդանի բարգավաճմանը նպաստել են հերոսական մոտիվները: Ահա հենց այդ «հերոսականը» նկատի ուներ Չեխովը:

... Այսօրվա մեր գրականությունը,— գրում է Չեխովը,— չի

հարբեցնում: Մեր նորագույն դրաղներից ոչ մեկը չի կարող հարբեցնել մեզ այնպես, ինչպես հարբեցնում էին անցյալի հայտնի, կամ լավ համաստվող հեղինակները: Հին և լավ այդ գրողները, որոնք անհրելի են մեզ համար, ոչ միայն գեղագիտորեն են նկատառում կյանքը: Նրանք միաժամանակ ցույց էին տալիս որոշ ուղի— նպատակ:

Նրանք գիտեին, թե ո՞ւր են գնում և մեզ էլ ցույց էին տալիս պատրաստի նպատակներ: Իսկ ժամանակակից գրողները ցույց չեն տալիս ոչ մի նպատակ: Չի արբեցնում այժմյան գրագետներին ոչ պոլիտիկան և ոչ էլ ռևոլուցիան: Դրանք իհարկե չեն կարող հին գրողների նման հմայել ընթերցողներին...»*

Ինչպես տեսանում ենք, առաջավոր գրագետի նշանակության ու դերի մասին նեռված այդ դիտողություններն ուշագրավ են և կարող են ուսանելի լինել անգամ այսօր: Ակնարկելով «ժամանակակից» գրագետների մասին, Չեխովը նկատի ուներ հատկապես նրբանց, որոնք մեծ ուշադրություն էին հատկացնում արվեստի ձևին և միաժամանակ չէին արձագանքում կյանքի այրող պրոբլեմներին:

Գաղափարական արվեստի այդ թշնամիների շարքերում նկատելի տեղ էին բռնում սիմվոլիստ-դեկադենտները և ինդիվիդուալիստական հոլերով տարված «անկուխ» ապրումների էսթետ բանաստեղծները:

Չեխովի թե՛ նամակների և թե՛ երկերի մեջ դատափետվում է շատ վճռական կերպով «անդուր» արվեստի պաշտպանների հայեցությունը: Շատ կարուկ կերպով քննադատելով տոլստոյական իմաստասիրությունը, նա իր «Պալատ № 6» պատմվածքի մեջ կռվի է ելնում անհրաժ կարգերի ու ստորության դեմ: Երբ հիվանդանոցի բժիշկը խորհուրդ է տալիս խելոք-խելագարին արհամարհել «աշխարհի հիմար ունայնությունը» և հետևել Դիոգենեսին ու ստոիկ-իմաստասերներին, շատ կարուկ պատասխան է ստանում:

«... Ներեցե՛ք,— ասում է Չեխովի պատմվածքի հերոսը,— ես այդ չեմ հասկանում: Ես գիտեմ միայն,— ասաց նա վեր կենալով և բարկացած նայելով բժշկին,— ես գիտեմ, որ ստուգած եղել է ինձ տաք արյունից և նյարդերից, այո—ս: Իսկ կենդա-

---

* Չեխովի նամակը Սուվորինին (1892 դեկեմբերի 25-ին).
Տես А. П. Чехов,—Литературный быт и творчество, сост. Фейер, изд. Academia Л. —1928, էջ 214—216:

Նոյան հյուսվածքը, եթե այն կենսունակ է, պետք է որ արձագանք տա յուրաքանչյուր գրգիռին: Ով ես արձագանք եմ տալիս: Յալին ես պատասխանում եմ ճիչով և արցունքներով, ստրուկյանը՝ գայրույթով, գարշելիությանը՝ զզվանքով: Իմ կարծիքով, հենց այդ էլ, ճիշտն ասած, կոչվում է կյանք: Որչափ ստորին է օրգանիզմը, այնքան նա ավելի քիչ զգայուն է և այնքան թույլ է պատասխանում գրգիռին: Ով որքան բարձր է այն, այնքան ավելի սպասավորվող է և ավելի եռանդագին կերպով է արձագանքում իրականությանը...»

Բժիշկը պարտվում է: Չեխովի պատմվածքի մեջ այդ բժիշկը նույնպես դառնում է բողոքողներին ձայնակցող: Պատմվածքի իմաստը շատ որոշ է: Դաժան առօրյայի, կեղծիքի ու անիրավության դեմ,— նշում է Չեխովը,— պիտի լինի պայքար: «Սախալինյան» ուղևորության հետ կապված հուշերը ուրույն արձագանք են գտնում չեխովյան գործերի մեջ, ուժ տալով կուտակվող նոր հույզերին ու զայրույթին:

... «Իրականում,— գրում էր Չեխովը (Սուվորինին ուղղված նամակի մեջ),— Սախալինը մեզ համար պիտի դառնա Մեկկայի նման մի վայր... Սառնամանիքին մենք աքսորավայր ենք ուղարկել մարդկանց, որոնք բոբիկ և մահանալով հասել են Սախալին՝ տառապելու և մեռնելու համար...»

Այդ տողերը գրում էր Չեխովը ռեակցիայի դաժանագույն տարիներին: Սախալինյան աքսորավայրում մահացող «միլիոնների» մահվան մասին ակնարկելով, նա քննադատում էր արդեն «բարձր» մտավորականության ներկայացուցիչներին: Դաժան հիվանդանոցի մռայլ նկարը ահա հենց այդ շրջանում դառնում է ցարական դաժան իրականության դատափետում:

Չեխովի բարձր արվեստը ստանում է շատ ուրույն բնույթ: Սեղմ տխրության կոլորիտը իշխում էր չեխովյան պատմվածքների և պիեսաների մեջ:

Ռուսական դաշտանկարների ֆոնի վրա գծվում էին ավելի հաճախ մտախոհ, հոգնաբեկ կամ երազող հերոսների տվեքները: Տարօրինակ կերպով այդ հերոսների տխուր խոսքերը Չեխովի ընթերցողները շաղկապում էին դաժան առօրյայի դեմ ըմբոստացող նոր գործիչների օպտիմիստական հույզերի ու պատգամների հետ: Այդպես չի կարելի ապրել,— ասում էր հեղինակը: Կա ու պիտի

լինի նոր կյանք։ Մի մոտիվ շատ որոշ կերպով հնչում էր գրագետի և՛ նամակների և՛ չեխովյան հերոսների խոսքերի մեջ։ Ակնարկելով իր նամակների մեջ գիտության մեծ հեռանկարների մասին, Չեխովը թելադրում էր իր հերոսներին ծառանալ ստության ու կեղծիքի, փարիսեցիության ու անիրավության դեմ։ Դատափետելով հին աշխարհի մարդկանց, հանդես էր գալիս որպես լուսավոր ապագայի համար մարտնչողներին ձայնակցող։

Այդ մոտիվը կապված էր չեխովյան հիմնական գաղափարների հետ և այդ մոտիվը հնչում է մեծ գրագետի անգամ մելամաղձոտ պիեսների մեջ։ Այդ մոտիվն է միացնում Չեխովին Մաքսիմ Գորկու— բանվոր դասակարգի էնտուզիաստ երգչի հետ։

Գորկին նույնպես հենվում է անցյալի կուլտուրական ժառանգության վրա։ Ընդունելով այդ ժառանգությունը, նա հետևում է Դոբրոլյուբովի և Չերնիշևսկու մարտական պատգամներին։ Գորկու համար թանկ էին համաշխարհային կուլտուրայի մոհիկանները, որպես գալիք լուսավոր օրերի համար մարտնչող հումանիստներ։ Ելնելով այդ հիմնակետից, Գորկին գծում էր ռեալիզմի նոր ուղիներ հայրենի գրականության համար։ Նրա Դանկոն դառնում է սիմվոլիքական կերպար և հրահանգ։ Նրա պատմվածքների ու վեպերի հերոսները, քարկոծելով իշխող կարգերը, ակնարկում են արդեն ոտքի ելնող ժողովրդի մասին։ Կոնովալովը, Չելկաշը, Մալվան կյանքի նոր ուղիներ որոնող և ըմբոստ գործիչներ են։ Վարանող ու տատանվող, բողոքող ու մարտնչող հերոսների մեծ պատկերասրահ ենք տեսնում Գորկու երկերի մեջ։ Այդ պատկերասրահի մեջ աչքի են ընկնում երեք հիմնական կերպարներ՝ Արտամոնովները՝ ձևավորվող գիշատիչ բուրժուազիայի ներկայացուցիչները, Կլիմ Սամգինը՝ թուլամորթ ու երկերեսանի ինտելիգենցիայի «հերոսը» և ապա Վլասովները— ամրակուռ բանվոր ժողովրդի պատգամախոսները։

Արտամոնովների և Սամգինների աշխարհը— անցյալն է։ Այդ անցյալի դեմ է ծառանում Պավել Վլասովը— դրական այն հերոսը, որ այս անգամ քայլում է վճռական քայլերով, գիտե իր անելիքը և ցույց է տալիս լուսավոր ուղեգիծ միաձույլ բանվորական շարքերին։ Ժողովրդական մեծ կոլեկտիվի պատմական դերն ու արժեքը ընդգծելու համար Գորկին կերտում է Վլասովի մոր ցայտուն պորտրետը, այն կերպարը, որը Դոլորես Իբառուրիի վկայու-

Թյամբ դառնում է հերոսական կերպար ողջ երկրագնդի բանվոր դասակարգի համար:

Երբ բռնկվում է Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիան, Գորկու կերպարները դառնում են ելակետներ սովետական առաջավոր գրագետների համար: Նա ծանրանում եմ առաջավոր դրագետների վրա, որովհետև Հոկտեմբերյան ռևոլյուցիայի առաջին օրերին քիչ չէր նաև վարանող ու տատանվող, բացարձակ Քշնամի և քողարկված Սամդիննների Քիվը մեր մեծ Հայրենիքի տարբեր վայրերում: Այդ օրերին առանձին դրագետներ ճիգ են անում կառուցել «փղոսկրյա ամրոց»— ճորաձև բետո Քշնամի տարրերի համար: Դրանք աշխատում են դրականությունը դարձնել կյանքի աղմուկից և ժողովրդական զանգվածներից կտրված մի բնավայր դպրափարական արվեստը դատափետող ռեակցիոն մարդարեների համար: Հայտնի պատմաբան Կարսավինը հենց այդ օրերին հրապարակում է էրոտիքական-միստիքական խոհերով լեցուն իր պուբլիցիստական հատորը: Ռոդանովը կոչ է անում սարսափահար քաղքենուն հրաժարվել ռուս կլասիկ կուլտուրայի բոլոր ավանդներից: Չէ՞ որ,— ասում է նա,— հենց այդ ավանդներն են ստեղծել հումանիստական այն գաղափարները, որոնք այսօր ավելի վճռական կերպով կիրառվում են բոլշևիկների նախաձեռնությամբ:

«Ալեքսանդրիական սիրո» վաղեմի «տեսաբան», հայտնի սիմվոլիստ Կուզմինը նորաձև միստիքական հայեցության հիմնավորման համար, հրատարակում է Կալիոստրոյի բնութագրման նվիրված հատուկ ուրվագիծ:

Անդրեյ Բելին ճիգ է անում համախմբել «անաղարտ արվեստի» հետևողներին: Աննա Ախմատովան երգում է պետերբուրգյան պուրակների ու ծառուղիների գեղեցկությունը: Լույս են տեսնում նոր օրերի «կոշտությունը» ընդգծող, մտորումները բնութագրող ժուռնալներ և ժողովածուներ («Երազողների գրույցներ», «Ինտիմ ժուռնալ» և այլն): Շատ և շատ պոետներ աշխատում են էրոտիկայի ու միստիկայի միջոցով սիրուն սարսափահար բուրժուայի սիրտը: Լինում են վերջապես դրագետներ, որոնք տարված «պացիֆիստական» ուրույն տենդենցներով, հանդես են գալիս որպես ռևոլյուցիան «ընդունողներ», բայց միաժամանակ ճիգ են անում շաղկապել անիշխանական-ինտելիգենտական խոհերը և երևակա-

տիրակալների դաղափարախոսությունը ռևոլուցիոն պատգամների հետ...

Ահա հենց այդ օրերին առաջավոր սովետական գրողները, համախմբված Մաքսիմ Գորկու շուրջը, հիմք են դնում այն գրականության, որը արտահայտելով ռևոլուցիոն առաջավոր շարքերի հայացքները, դառնում է սովետական հզոր ժողովրդի կուլտուրական վերելքին օժանդակող մեծագույն ազդակ...

2

Սովետական գրականությունը, խարսխված լինելով անցյալի կուլտուրական ժառանգության նվաճումների վրա, ազատ էր այն հակասություններից, որոնք խոչընդոտում էին կուլտուրայի բարգավաճմանը նախառևոլուցիոն էպոխայում։ Ազատագրված ժողովրդական շարքերը նոր թափ են հաղորդում ժողովրդայնության մոտիվներով լեցուն գրականության զարգացմանը։ Ռուս գրականությունը պատմության հրահանգով դառնում է ռևոլուցիոն և իր առաջավոր գաղափարների շնորհիվ ոչ միայն սովետական եղբայրական ժողովուրդների, այլ նաև ողջ երկրագնդի ճնշված ու շահագործվող մարդկության առաջավոր գրականությունը։

Ռևոլուցիոն դանդվածների ամրակուռ շարժումը մեծ օպտիմիստական ավյուն է մտցնում գրականության մեջ։

Հին աշխարհի դեմ մարտնչող պոզիտիվ շարքերի առաջընթացը ցույց է տալիս գրագետներին ավելի հստակ ուղիներ և ավելի պարզորոշ հեռանկարներ։

Հոկտեմբերյան ռևոլուցիայի հենց առաջին օրերին ակնհայտ է դառնում ժողովրդական դանդվածների, գիտակից և կազմակերպված մասսաների մեծ դերն ու ակտիվությունը։ Ժողովուրդն այլևս տարերք չէր։ Սովետական ժողովուրդը անհաղթ կուռ հայտարարելով հին աշխարհին, հանդես էր գալիս որպես երկրագնդի բոլոր ճնշված ժողովուրդների եղբայրության համար մարտնչող առաջապահ բանակ։ Երկընտրանք չկար այդ բանակի համար ու չէր էլ կարող լինել։

Սովետական հայրենիքի համար պայքարողը դառնում է հին Ռուսիայի ժողովուրդների ազատագրման համար մարտնչող, ժողովուրդների մեծ եղբայրության վեհապանծ շարժման ջահակիր։ Ահա այդ մարտնչողներն էլ կարող էին լինել ու պիտի դառնային դրական հերոսների կենդանի վավերագիր սովետական գրողների հա-

մար։ Այլ խոսքով, դրողները պիտի վերարտադրեին միայնակ հերոսների, հին աշխարհի ու այդ անհատների դեմ կանգնած նոր մարդկանց— ժողովրդի հետ կապված և ժողովրդի իղձերն արտահայտող ժողովրդական հերոսներին։

Ահա այդ էլ անում են քաղաքացիական պատերազմի հերոսական էջերը նկարագրող մի շարք վիպապիրներ. Շոլոխով («Խաղաղ Դոն», «Հերկած խոպան»), Լեոնով («Բարսուկներ»), Ֆուրմանով («Չապաև»), Տոլստոյ («Հայդ»), Գայդար («Դպրոց» և այլն), Վ. Իվանով («Զրահատնձուղը», «Պարտիզանական պատմվածքներ»), Ֆադեև («Ջախջախում», «Վերջին Ուդեհեն»)...Սովետական դրողները այդպիսով կենսագործում էին հերոսի կերտման պրոբլեմը։ Դոստոևսկին չէր կարողանում լուծել այդ պրոբլեմը։ Չէր կարող լուծել, որովհետև չէր տեսնում մարտնչող ժողովրդի ներկայացուցիչներին։ Կարամազովները, Ռասկոլնիկովը, Միշկինը միայնակ մարդիկ էին։

Ռևոլուցիոն նոր էպոխայում հերոսների համար ժողովուրդն է դառնում իրական ամրակուռ պատվանդան։ Չապաևը շատ բան չգիտե, հետևում է կոմիսարի խորհուրդներին, աշխատում է սովորել։ Բայց նա գիտե, թե ուր է գնում։ Գիտե իր անելիքը։ Շատ ուժեղ է և աննկուն։ Զուլված է ժողովրդի հետ և հենց այդ ժողովրդի զավակն է։

Նոր մարդկանց կերպարները մենք տեսնում ենք նաև սոցիալիստական շինարարության պայմաններում։ Պայքարը շարունակվում է հին աշխարհի բեկորների դեմ խաղաղ և միևնույն ժամանակ դժվարին պայմաններում։ Դժվարին, որովհետև անհրաժեշտ էր կառուցել ավերված վայրերում սոցիալիստական տնտեսության մեծ շենքը։ Այդ պայքարը ստեղծում է նոր տիպի հերոսներ։ Այս աճգամ տրադիցիոն դեկավար հերոսների կողքին գծվում են ավելի որոշակի կերպով շարքային և հաճախ «աննշմարելի» այն հերոսները, որոնք իրենց տոկունությամբ բնութագրում են միլիոն ու միլիոն աշխատավորների հերոսական առաջընթացի պաթոսը։

Վերջապես, Հայրենական Մեծ Պատերազմի օրերին նույն այդ հերոսներին և առանձնապես այդ հերոսների զավակներին մենք տեսնում ենք նորից Սովետական Բանակի շարքերում։ Այդ օրերին հանդես են գալիս նոր դրողներ։

Ես շատ ընդհանուր գծերով եմ բնութագրում սովետական պրակտիկայի զարգացման ընթացքը և ուղեգիծը։ Ես կանգ չեմ

տնում ո՛չ գեղարվեստական հրապարակախոսության, ո՛չ պոեզիայի և ո՛չ էլ օչերկային հարուստ գրականության ցայտուն վավերագրերի վրա։ Վերջին վավերագրերը հատկապես մեծ նշանակություն ունեն։ Հյուսիսային վայրերում— սառցապատ տունդրաներում, ամայի Թուրքեստանյան անապատներում, կովկասյան լեռներում և ձորերում հիմնվում են նոր քաղաքներ և ավաններ, կառուցվում են գործարանային մեծ մոնումենտներ, ստեղծվում են Կուզբասի, Դնեպրոգէսի, Ուրալյան մետալուրգիական գործարանների ինդուստրիական խոշոր կենտրոնները…

Սկսվում է և անդուլ պայքար հնօրյա տրադիցիաների և նորմերի դեմ։ Պավլենկոն, Տիխոնովը, Լայինը, Մակարենկոն և շատ ուրիշ հեղինակներ, նկարագրելով այդ ամենը, կերտում են կազմակերպվող նոր մարդկանց կենդանի պորտրեներ իրենց տաղանդավոր երկերի մեջ։

Շատ բնորոշ կերպով է արտահայտված սովետական գրողների երկերի մեջ ռեալիզմի հետ միաձուլված ռոմանտիկական տրամադրությունը։ Ընդգծելով ընդհատակյա ռևոլյուցիոն պայքարի ռոմանտիկական տոնը Ֆադեևն ու Գայդարը ակնարկում են մարտընչողների բարձր մարտական տրամադրության և առույգ հայեցության մասին։ Իրականության ռոմանտիկան հակադրվում է արտաքին էֆեկտների ռոմանտիկային այնքան հմուտ կերպով, որ պայքարի ու շինարարության ռեալիստական նկարները դառնում են խրախույս ներշնչող պատգամներ։ Սովետական գրողները կարողանում են այդօրինակ ռոմանտիկա դրսևորել խաղաղ շինարարության տարիներին անգամ շատ առօրյա իրականության մեջ։ Հետագայում հանքեր որոնողները, Դնեպրոստրոյի կամ Մագնիտոստրոյի կառուցողները, Ֆերգանայի Ստալինի անվան մեծ ջրանցքի աշխատավորները գծագրվում են նույնքան գունագեղ տոնով, ինչպես անապաստան մանուկներին դաստիարակող Մակարենկոյի հերոսները։

Երկու խոսք էլ անհրաժեշտ է ասել սովետական գրողների ոճի մասին։ Ժամանակին, տակավին ութսունական թվականներին Տոլստոյն է շեշտել, որ ռեալիստական պատմվածքների հերոսներից յուրաքանչյուրը պետք է գործածե իրեն հատուկ՝ իր սոցիալական ծագման ու դաստիարակության հատուկ ինքնատիպ լեզուն։

Պրիշվինի երկերի մեջ, օրինակ, պարզ ու ճկուն լեզուն մոտե-

նամ է ժողովրդի ջանքերով ստեղծված հարուստ ոճին: Գորկին օրինակելի էր համարում Պրիշվինի լեզուն, սակայն պարզության տեսակետից Գորկին անգերազանց է: Գորկու ուղեգծին են հետևում Գլադկովը, Շոլոխովը, Կատաևը, գրեթե սովետական բոլոր գրողները: Բացառություն է կազմում միայն ուրալյան բանվոր ժողովրդի տաղանդավոր ներկայացուցիչ Բաժովը, որի գունագեղ և քարձր դաղափարախոսությամբ հագեցված հեքիաթները գրեթե անհնարին է թարգմանել: Բաժովի հերոսները գործածում են ուրալյան բանվոր գյուղացիների պատկերավոր, հողեղեն ու անչափ հարուստ այն լեզուն, որ կենդանի տեղայնության ռեալական գույն է հաղորդում նկարագրված դեպքերին ու դեմքերին:

Իր «Երիտասարդ գվարդիա» վեպի մեջ Ֆադեևը, ջանալով ցուցադրել Դոնբասի բանվորների ոճի որոշ հատկությունները, տեղ-տեղ կարծես հանդես է գալիս, որպես ընդունված տրադիցիաները խախտող դրագետ: Կրասնոդոնի պատրոցականները դիտավորությամբ գործածում են աշակերտների շրջանում իշխող նորամոտ արտահայտություններ, իսկ շախտյորներն էլ խոսում են ածխահան բանվորներին հատուկ արտահայտություններով:

Նման նմուշներ կարելի է գտնել և այլ հեղինակների երկերի մեջ: Մեծ ուշադրությամբ մոտենալով ժողովրդական լեզվին, սովետական գրողները, օժանդակելով իրենց գործերով լեզվի կատարելագործմանը, հաճախ իրենք էլ հանդես են գալիս որպես փոփոխվող լեզվի ուրույն «խմբագիրներ»:

Ինձ մնում է այժմ ծանրանալ սովետական առանձին գրողների գործերի կատարվածքի վրա: Անցյալ տարի լույս է տեսել Վերա Պանովայի «Ուղեկիցներ» պատմվածքը: Շատ բարձր գնահատականի է արժանացել այդ գործը առանձնապես «Պրավդա»-ի էջերում: Բավական մեծ այդ պատմվածքի մեջ հիմնական այուժեն գոսպիտալային գնացքի պատմությունն է: Պատերազմի օրերին գոսպիտալային գնացքը դառնում է ճակատում վիրավորված զինվորներին անմիջական օգնություն հասցնող բուժական շատ կարևոր օրգան: Գնացքն ուներ աշխատակիցների մեծ կազմ: Բացի գլխավոր բժշկից և կոմիսարից կային այսպես վիրաբույժներ, գթության քույրեր, սանիտարներ, հատուկ բանվորներ: Պանովան փոխարեն ծանրանալու հիմնական ու գլխավոր հերոսների վրա, նկարագրում է ամբողջ կոլեկտիվի միասնական աշխատանքը և ապա գծագրում

առանձին հատվածների մեջ առանձին աշխատակիցներից յուրաքանչյուրի պորտրետը: Առաջին նվաճ թվում է, թե ամբողջ պատմվածքը միմյանցից կտրված դրվագների կյանքին նվիրված նովելների ժողովածու է: Շատ մանրամասն Պանովան պատմում է դոսպիտալի աշխատակիցների կյանքի մասին և ապա նորից միացնում այդ դրվագներին դոսպիտալային գնացքում: Ընդհանուր աշխատանքը, պայքարը թշնամու դեմ, ապա գնացքում ստեղծված բարեկամությունը միաձուլում և այլափոխում է տակավին երեկ միմյանց անծանոթ սովետական քաղաքացիներին: Կոլեկտիվ աշխատանքը մեծ փայլ է հաղորդում գնացքի աշխատակիցների ձեռնարկներին: Շարքային աշխատակիցները հանդես են գալիս որպես սովետական հերոսական ժողովրդի ինքնատիպ ներկայացուցիչները:

Միևնույնը տեսնում ենք Ֆադեևի «Երիտասարդ գվարդիա» վեպի մեջ, թեև այդ վեպն ունի հիմնական մի սյուժե: Սյուժեն «Երիտասարդ գվարդիայի» սխրագործությունների պատմությունն է: Հենվելով իրական փաստերի վրա, Ֆադեևը նկարագրում է Ֆաշիզմի դեմ մղած Կրասնոդոնի պատանի հայրենասերների պայքարի ցայտուն դրվագները: Պատանի բոլշևիկների դեկավարը Օլեգ Կոշևոյն է, որի կողքին մենք տեսնում ենք անձնվեր պատանիների միաձույլ մի խմբակ: Դրանց մեջ կան շատ ակտիվ դործիչներ: Սերյոժա Տյուլենինը, Վանյա Զեմնուխովը, Լյուբա Շևցովան, Ոլյա Գրոմովան գծված են այնպես, որ ինքնատիպ լինելով չեն տարբերվում իրենց դեկավարից: Կոշևոյը վեպի մեջ հանդես է գալիս որպես միասնական կոլեկտիվի ներկայացուցիչ: Կենտրոնական հերոս իրականում չկա «Երիտասարդ գվարդիայի» մեջ: Հերոսների մի գունդ ենք տեսնում, որոնց կուռ միությունը հաջող կերպով ցուցադրված է վեպի բոլոր հատվածների մեջ: Պատանի էնտուզիաստների կողքին նշմարում ենք նրանց ծնողներին և հարազատներին: Վեպի մեջ կան բազմաթիվ պորտրետներ, որոնք գրծված են արտահայտիչ գույներով: Կրասնոդոնի շահույթ-բանվորները, ռազմական բժիշկը, ուսուցչուհին, քաղաքացիները, կարմիր բանակայիններն ու պարտիզանները— բոլոր այդ մարդիկ կենդանի կերպարներ են, որոնք կազմում են հյուսիսի մի ֆոն և բնութագրում են բանվորական նորակառույց քաղաքի զսպված ուժի արտաստվոր նշանակությունը: Լավ են կերտված հին բոլշևիկնե-

րի— Պրոցենկոյի, Վալկոյի, Շուլգայի դեմքերը: Բացի 30-ի չափ պատանի հերոսներից կերտված են 30-ից ավելի ուրիշ հերոսների պորտրետներ, որոնց մեջ աչքի են ընկնում Կոշևոյի տատի, բժշկի, մայրի, հրամանատար Կոլոբոկի, հանքափոր Շևցովի և նման այլ գործիչների պորտրետները: Առանձին էպիզոդների նկարագրության ժամանակ Ֆադեևը կանգ է առնում երկրորդական նշանակություն ունեցող պերսոնաժների վրա: Դրանք գծված են թռուցիկ ու շատ թեթև շտրիխներով և չնայած դրան՝ մնում են ընթերցողի հիշողության մեջ: Այդպես են գծված Ստալինգրադից նահանջող ռումինական օֆիցերի, բազարում ձերբակալված մանուկի, Լյուբա Շևցովային արհամարհանքով ընդունող փոքրիկ աղջկա պորտրետները: Երբ հիտլերյան հետախույզները ձերբակալում են Լյուբկային, այդ աղջիկը մանկական անմիջականությամբ հասկանում է, որ ինքը սխալվել է և իսկույն դառնում է հիացմունքով ու արտասովոր զարմանքով համակված երկրպագուհի: Շատ սեղմ, միայն երկու տող նետված շտրիխներով Ֆադեևը կարողանում է ցուցադրել հրաժեշտի ազդու տոնը...

Շատ այդպիսի դրվագներ կան մեծատաղանդ այդ գործի մեջ, որ վեպ լինելով հանդերձ անչափ ուժեղ մի պոեմ է, լեցուն սկզբից մինչև վերջ կենդանի պատկերներով: Կան «Երիտասարդ գվարդիայի» մեջ լիրիկական շնչով կենսավորված բնանկարներ, աշխույժ դիալոգներ, նրբին էջեր, որոնք կերտված են մեծ ուժով: Պատանիների թարմ ապրումներն ու միամիտ ոգևորությունը, անսահման նվիրվածությունը սովետական հայրենիքին, բարձր ընկերականության զգացումով համակված խիզախությունը— այդ ամենի մասին Ֆադեևը պատմում է Տոլստոյի երկերի լավագույն էջերին հատուկ թափով: Առանձին դրվագներին նվիրված տողերի մեջ հնչում են լիրիկական-նվագային երգին հատուկ մոտիվներ: Կա վերջապես ռոմանտիկա— բարձր մարդկային այն տրամադրությունը, որի մասին ակնարկում էր Գորկին, երբ խոսում էր իր սիրտը լուսավոր փարոս դարձնող Դանկոյի մասին: Պատմելով իրական դեպքերի մասին, վիպագիրը մերթ ընդ մերթ ընդհատում է պատմությունը, նետում է մի երկու խոսք, դիմում ընթերցողներին, կսկիծով կամ զայրույթով ակնարկում է իր հույզերի մասին: Իր կսկիծը, զայրույթն ու ցասումը նա արտահայտում է այնպես, որ ընթերցողներին էլ թելադրում է «ձայնակցել իրեն»...

Այսպես է կերտված այդ գործը, որ իր կոմպոզիցիայով անդամ շատ ուրույն տեղ պիտի գրավի համաշխարհային դրականության մեջ:

Լերմոնտովը իր հայտնի բանաստեղծության մեջ կերտելով բորոդինյան վեպերան դինվորներին, երգում էր Բորոդինոյի հերոսների մարտերը մեծագույն ավյունով:

Ֆադեևի վեպի մեջ նկարագրված հերոսները միշտ կմնան սովետական մեծ ժողովրդի հերոսությունը բնութագրող սիմվոլիկական կերպարներ: Պատանի գվարդիականները, Կոշևոյը, Տյուլենինը, դրանց պատանի ընկերները, վիրավոր մայորը, պատվավոր «զաբոյշչիկ» Շևկոովը, բժիշկ Ֆյոդոր Ֆյոդորովիչը, հին բոլշևիկներ Վալկոն և Շուլգան, բոլոր այդ հերոսացած մեր գործիչները դրական հերոսներ են: Ֆադեևի գործի մեծագույն արժեքը նրանում է, որ նա կարողացել է ապացուցել այդ:

3.

Ռուս գրականության ներկայացուցիչները հայտնի դեմքեր են դառնում հայ իրականության մեջ ավելի որոշակի կերպով XIX դ. 30—40-ական թվականներին: Պատկանյանի «Արարատ» ժուռնալի մեջ (Թիֆլիս) կան ուշագրավ թարգմանություններ: Պատկանյանից առաջ ռուս գրագետների առանձին երկերի ֆրագմենտները թարգմանում են Ներսիսյան դպրոցի և ապա Լազարյան ճեմարանի աշակերտները: Ժամանակի ընթացքում հայ-ռուս կուլտուրական կապերի ամրացման հետ միաժամանակ հետզհետե այդօրինակ թարգմանություններն այնքան բազմանում են, որ ուրույն տոն են հաղորդում առանձին հայ գրագետների ստեղծագործական աշխատանքներին: Մեզ համար առաջին հերթին հետաքրքրական են ահա հենց այդ գրագետները, քանի որ դրանք են նոր դիտակետից մոտենում ռուս առաջավոր գրագետներին և յուրացնում ռուս գրականության բարձր ավանդները: Այդօրինակ գրագետների մեջ խաչ. Աբովյանից հետո միանգամայն ուրույն տեղ են գրավում Միք. Նալբանդյանը և Սմբ. Շահազիզը: Միք. Նալբանդյանը ոչ միայն թարգմանում է ռուս պոետների որոշ երկերը, այլ նաև հանդես է գալիս իր ավելի ինքնուրույն բանաստեղծությունների մեջ ռուս գրականության գաղափարական տրադիցիաների պրոպագանդիստի

688—15

դերում: Օգարյովի ազդեցության ներքո է կերտում նա իր հանրահայտ ռևոլուցիոն-հայրենասիրական բանաստեղծությունը: Հիսնական-վաթսունական թվականների «ֆիզիոլոգիական» վեպերի հերոսներին հետևելով գրում է նա իր «Մեռելահարյուկ»-ը, իսկ Բելինսկուն և Դոբրոլյուբովին հետևելով, գրում է «Սուս և վարդիթեր»-ի քննադատությունը:

Սմբատ Շահազիզը «Ամառնային նամակներ»-ի մեջ որոշակի կերպով հայտարարում է, որ իր ժամանակակիցների համար առանձնապես թանկ են եղել «Գոգոլյան դպրոցի» ավանդները: Շահազիզի դիտողությունները ցույց են տալիս, որ նրան ծանոթ էին Չերնիշևսկու հոդվածները: Նշանակալից է այն, որ ո՛չ Շահազիզը և ո՛չ էլ հետագա հայ պոետները չեն շեղվում գաղափարական արվեստի դիրքերից: Դոբրոլյուբովի հայտնի բանաստեղծության ազդեցության ներքո Ս. Շահազիզը կերտում է «Ազնիվ ընկերոջ» նվիրված իր այն երգը, որ մոտացության չի մատնվում նույնիսկ XIX դ. իննսունական թվականներին: Եվ այդ երգը պատգամ էր. այդ պատգամը կապված էր 40-ական թվականների ռուս գրականության բարձր գաղափարական տրադիցիաների հետ:

Ամենից հատկանշականն այն է, որ մեր գրագետները կարծես դիտավորությամբ անուշադրության են մատնում ոչ միայն ռուս ռեակցիոն արվեստագետների, այլ նույնիսկ «անաղարտ» արվեստի երկրպագուների կամ «անկուիվ ապրումների» երգիչների ավանդները: Շիշկովը, Զագոսկինը, Դանիլեվսկին, Կլյուչնիկովը, Սամարինը, Լոմյակովը, անգամ Ապոլլոն Գրիգորևը չեն գտնում որևէ արձագանք հայ գրականության մեջ: Պատահական չպիտի համարել այն, որ պահպանողական «Կռունկ»-ի խմբագիր Մ. Աղաբեկյանը թարգմանում էր Բելինսկուն, իսկ կղերական «Արարատ»-ի գլխավորները՝ Նեկրասովին: Եթե մենք տրաֆարետով մոտենանք հայ հասարակական հոսանքներին, մեզ համար անհասկանալի կմնան այդօրինակ արձագանքներին անուղղակի տվող իրական ազդակները: Ըստ տրաֆարետի, հայ կղերական ժուռնալիստները կարծես թե սիտի տպագրեին ռուս ռեակցիոն գրագետների երկերը: Բայց քանի այն է, որ նացիոնալիզմի ջահակիրներ լինելով հանդերձ հայ պահպանողականները չէին կարող հանդես գալ ասիմիլյացիայի պոլիտիկան հիմնավորող գրագետների պրոպագանդիստների դերում: Դրանումն է ողջ խնդիրը: Ճնշված ազգություննե-

ի պահպանողական ներկայացուցիչների համար անհանդուրժելի էին իհարկե առաջավոր ռուս գրագետների ռևոլյուցիոն և սոցիալիստական հայացքները: Բայց այդ միևնույն գրողների հումանիստական պատգամները և մանավանդ իշխող բռնապետության և դաժան կարգերի քննադատությունը հասկանալի և «ընդունելի» էին: Լեսկովի հայտնի պասկվիլային վեպը կամ Դոստոևսկու «Դևերը» չէին կարող հեղևող դառնալ անգամ հայ ռեակցիոն և ազգայնական պահպանողականների շարքերում: Ես էլ չեմ խոսում Բուլգարինի կամ Գրեչի, Սուվորինի, Մեշչերսկու, Ժելիխովսկայայի, Վելիչկոի նման հեղինակների մասին: Հայ պահպանողականների նման էին մոտենում ռուս առաջավոր գրագետներին նաև լիբերալները, նեոնարոդնիկները:

Գր. Արծրունին իր գրական գործունեության առաջին տարիներին ձայնակցում էր Պիսարևին, թեև շատ յուրահատուկ և պրիմիտիվ ձևով էր մեկնաբանում Պիսարևին: Այդ տարիներին նա ուղեվորվում է Մոսկվայի գերեզմանատուն և առանձին զգացումով է մոտենում ռուս առաջավոր մոհիկանների դամբաններին:* Աբգար Հովհաննիսյանը, թարգմանելով Գվերացցիի վեպը և գրելով հունգարական ռևոլյուցիոն պոեզիայի մասին, միաժամանակ դատափետում է ռուս պահպանողականներին,** թեև ինքն էլ հանդիսանում էր պահպանողական բանակի գաղափարախոս: Անչիսխաթի թաղի բարձր դասի ներկայացուցիչ Սունդուկյանն իր «Պեպո»-ին դարձնում է ռուս դեմոկրատ գրողների պատգամներին ձայնակցող ժողովրդական հերոս: Բաֆֆու մի շարք կերպարներ գծված են ռուս առաջավոր գրագետների երկերի մեջ գծված կերպարների ազդեցության ներքո: Գոգոլի երկերից մեզ մոտ թարգմանում են «Ռևիզորը»-ը, «Ամուսնությունը» և ապա «Տարաս Բուլբան»: «Ռևիզորը» քննարկվում էր որպես հին կարգի դատափետում: Տարաս Բուլբան դառնում էր հայ ազգային-ազատագրական շարժումների գաղափարախոսություն ամրացնող ազդակ: Դոստոևսկուց թարգմանվում են «Մեռած տան մասին գրությունները», այն էլ Գուլամիրյա-

---

* Արծրունու տպագիր հոդվածի կորեկտուրան պահվում է Վրաստանի Պետական Արխիվի գործերի մեջ:

** Աբգ. Հովհաննիսյանի տպագիր այդ հոդվածը նույնպես պահվում է «Հովվկասյան ցենզուրային արխիվի» գործերի մեջ:

նի այն «Արաքս» ժուռնալի մեջ, ուր անձկանքով էին նկարագրվում պատմա-ռոմանտիկական հուշերը, հայ անցյալի հերոսները, կիլիկյան ավերակները, Այասն ու Հռոմկլան, կեռ սրերով զինված խիզախ զեյթունցիները... Հատկանշական փաստեր են բոլոր այդ փաստերը։ Չեխովին տպագրում էր «Բազմավեպ»-ը։ Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» էպոպեան գտնում է ընթերցողներ արևմտահայ իրականության մեջ։ Պոետ-աքսորական Միխայլովի բանաստեղծության և ապա Դեբագորի Մակրիևիչի հուշերի թարգմանությունները լույս են տեսնում Ստամբոլի «Մասիս»-ի մեջ ութսունական թվականներին։ Չիլինկարյանը գերցենյան մեմուարների անմիջական ազդեցության ներքո է կազմում իր «Ուղևորությունը», իսկ Արփիար Արփիարյանը միևնույն Գերցենին դրվատելով հիմնավորում է հայրենասիրական իր ուրույն հայեցողությունը...

Բազմաթիվ այդպիսի նմուշներ կարելի է բերել։

Ի՞նչն էր ստիպում պահպանողական, լիբերալ ազգայնական հայ գրագետներին հետևել ռուս գրագետներին։ Չէ՞ որ առաջավոր ռուս գրագետների սոցիալական պատգամները հայ վիպագրներից շատ շատերը չէին կարող ընդունել և իրականում չէին էլ ընդունում։ Մի պատասխան միայն մենք կարող ենք տալ։

Հանդիսանալով ճնշված ազգության ներկայացուցիչներ, հայ գրագետները զգում և տեսնում էին, որ ռուս առաջավոր գրագետները անհաշտ պայքար են մղում ոչ միայն բոլոր բռնապետությունների և ճնշումների դեմ, այլ նաև ամենից առաջ ճնշըված ազգություններին նվաստացնող գաղափարական տեսությունների դեմ։ Այլ խոսքով, հայ գրագետները նշմարում էին ռուս գրականության գաղափարական բարձր տրադիցիաները և գիտեին, որ առաջադիմական տրադիցիաներ պաշտպանող ռուս գրագետները հայ ժողովրդի անկեղծ բարեկամներն են։ Դելյանովին և Եզովին բացասաբար էին վերաբերվում ոչ միայն Ղազարոս Աղայանի նման գործիչները, այլ նաև «Արձագանք»-ի ու «Նոր դար»-ի շուրջ համախմբված հայ գրագետները։

Անհրաժեշտ է արձանագրել մի ուրիշ փաստ ևս։ Կապիտալիստական դիվանագիտությունը ժամանակին, ինչպես հայտնի է, ուներ հայ իրականության մեջ երկրպագուների բավական ստվար

շարքեր։ Ժողովրդական զանգվածների հետ կապված մեր գործիչները բերահավատությամբ էին մոտենում այդ երկրպագուների դեկլարացիաներին։ Դա նշանակալից պատմական փաստ է։

Հայ ժողովրդի, գյուղացի և բանվոր ժողովրդի կապերը ռուս ժողովրդի հետ հին էին ու շատ ամուր։ Եղբայրական այդ կապերը ստեղծվել էին պատմական հեռու անցյալում, ռուս-իրանական և ռուս-տաճկական պատերազմների օրերին, ռազմական ընդհանուր համաշխատակցության ընթացքում։ Հնօրյա եղբայրության արձանագրությունները հնչում են Աբովյանի, Նալբանդյանի, Շահազիզի, Րաֆֆու նման ականավոր գրագետների երկերի մեջ։ Հնօրյա կապերի ամրացման ու զարգացման մեծագույն թափ և նոր տոն է հաղորդում XIX դարի իննսնական թվականներին հատկապես կովկասյան արդյունաբերական շրջաններում կազմավորվող բանվորական կոլեկտիվի համաշխատակցությունը։

Ռուս ռևոլյուցիոն դեմոկրատների հետ էր կապված մեծ չափով առանձնապես Մելքիսեդեկյանը։ Պաշտպանելով 60-ական թ. թ. ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատ գործիչների պատգամները, Մելքիսեդեկյանը կռվի է ելնում արծրունիական լիբերալիզմի դեմ։ Հայ պարբերական մամուլի քննարկման նվիրված իր մի աշխատության մեջ նա «քաղաքկված» ոճով մերկացնում է ժողովրդից կտրված ժուռնալիստներին։ Մելքիսեդեկյանը հրատարակում է անցյալի հումանիստների գրվատման նվիրված մի ժողովածու և ապա «Նվեր Ֆյասիր գյուղացիներին» հանրամատչելի բրոշյուրը։ Ես կանգ չեմ առնում նման ուրիշ վավերագրերի վրա։*

Ժողովրդի հետ կապված առանձին հայ գործիչների դիրքը ուժեղանում է բանվորական-ռևոլյուցիոն շարժումների օրերին և այդ շարժումների անմիջական ազդեցության ներքո։ Այդ շարժումները կազմավորվում են մեծ թափով Բաքվի, Թիֆլիսի, Բաթումի նման քաղաքներում։ Սփռվելով Բաքվի բանվորական շարժման ինտերնացիոնալ մթնոլորտում, հայ նավթարդյունաբերական պրոլետարները դառնում են կարևորագույն կուլտուրական ազդակներ հայ իրականության մեջ։ Առաջավոր հայ պրոլետարները դառնում են

---

*) Հատկանշական է այն, որ Մելքիսեդեկյանը ձեռք է գրեթե մի քանի գործիչ մեր իրականության մեջ։ Նա մոռացության է մատնվում։ Հայ գրականության պատմության ոլորտից ձեռնարկների մեջ այդ գործչի գործերի մասին չկա ամենաթեթև դիտողություն անգամ։

ռուս-հայ ժողովուրդների եղբայրական կապերի ամրացման օժանդակող ակտիվ պրոպագանդիստներ ոչ միայն կովկասյան քաղաքներում, այլ նաև գյուղական Հայաստանի ամենահեռու վայրերում:

Ստեղծվում է նոր լսարան— բանվորական և ժողովրդական լսարան: Ստեղծվում են ընթերցողների նոր շարքեր: Այդ նոր ընթերցողների համար ավելի հասկանալի և հարազատ էին ռուս առաջավոր գրականության այն ներկայացուցիչները, որոնք այս կամ այն ձևով արձագանքում էին աշխատավոր զանգվածների սոցիալական ձգտումներին: Բանվոր և գյուղացի ընթերցողները թելադրում են հայ գրագետներին կատարել նոր շրջադարձ և ավելի մեծ ուշադրությամբ հետևել ռուս գրականության գաղափարական բարձր տրադիցիաներին և սոցիալական պատգամներին: Թե որքան ուժեղ էր հայ ինտելիգենցիայի շարքերում բռնկված նոր բնիկումը, ցույց են տալիս Նար-Դոսը, Փափազյանը, Շիրվանզադեն...

Իր ռեալիստական գործերի մեջ Նար-Դոսը հետևում է Դոստոևսկու ուղղծին: Տառապանքով է նա ակնարկում աշխատավորների ծանր կյանքի մասին, քարկոծում է իշխող կարգերը, կանչում և բողոքում է, բայց կանգնած փակուղի հանդես չի տեսնում հին աշխարհի «դերեզմանափորի» դիմատսվերը: Հուսահատ մտորումներով համակված նա միայն ողբում է և անիծում՝ միշտ որոնելով սոցիալական վերքերի բուժման օժանդակող դեղատոմսեր:

Շատ ուժեղ են սոցիալական մոտիվները նաև Վ. Փափազյանի երկերի մեջ: Նրա գյուղական հայտնի ակնարկները ռեալիստական ճշգրիտ լուսանկարներ լինելով հանդերձ կերտված են Գլեբ Ուսպենսկու և Կարոնինի դեղարվեստական ակնարկների անմիջական ազդեցության ներքո: Փափազյանի նկարած բանվորը («Մշուշ») կտրված չէ իր գյուղական հայրենիքից: Իր «Տուրիստի հիշողություններ» մեջ այդ վիպագիրը այլաբանական ձևով ակնարկում է սոցիալական ներհակություններ մասին: Դոստոևսկու ազդեցությունից նա ևս չի կարողանում կտրվել, բայց և այնպես ճիգ է անում նոր դիտակետից մոտենալ հայ հասարակական իրականությանը: Բնորոշ է համեմատյն դեպս, որ վերամշակելով Բլասկո Իբանեսի մի ակնարկը, նա իր «Վիշապ»-ի մեջ նկարում է «Վիշապի» դեմ պայքարող հերոսի «կերպարը», իսկ Գորկուն նվիրված հոդվածի մեջ դատափետում է դեկադենտների բանդադուշանքները: Իր

հակասական բոլոր դեգերումներով հանդերձ Վ. Փափազյանը հայ ինտելիգենցիայի առաջավոր շարքերում սկսված նոր բեկման բավական բնորոշ արտահայտիչներից մեկը կարող է համարվել։

Եթե այդ գրագետներից անցնենք Շիրվանզադեին, մենք կտեսնենք միևնույնը։ Շիրվանզադեի ամենաուժեղ գործերը նրա «Նամուս», «Ցավագար» և «Քաոս» վեպերն են։ Օստրովսկու, Պիսեմսկու և մանավանդ Դոստոևսկու գործերն ենք հիշում, երբ անցնում ենք անչափ մեծ թափով կերտված այդ գործերի ուսումնասիրության։ Շիրվանզադեն իսկական նկարչին հատուկ տաղանդով կերտում է նախակապիտալիստական կովկասյան պրովինցիայի, գավառական տխուր իրականության, անհետացող հին աշխարհի տխուր ներկայացուցիչների քանդակներ։ Այդ քանդակ-նկարները իրականում անիծյալ հին աշխարհի դեմ ուղղված անչափ ուժեղ հարված էին՝ լեցուն հումանիստական բարձր տրամադրությամբ։ Իր «Քաոս»-ի մեջ Շիրվանզադեն նկարում է կովկասյան Կլոնդայկի իսկական առօրյան՝ ողջ նավթաշխարհը, հանքային վայրերը, բազմազգի բուրժուազիայի տիպիկական ներկայացուցիչներին։ Մեծածավալ այդ վեպը պատմա-գեղարվեստական կարևոր վավերագիր է, որ կարող է գրավել հատկապես կովկասյան կապիտալիզմի պատմաբանների ուշադրությունը։ Վեպի մեջ ավելի հաջողված են բացասական տիպարների դիմանկարները։ «Դրական հերոսը» Միքայել Ալիմյանը ձգնում է լուծել սոցիալական առեղծվածը. շուլցե-դելիչյան ռեֆորմների միջոցով և ըստ էության դիսոնանս է մտցընում ռեալիստական կտավի ընդհանուր կառուցվածքի մեջ։ Տաղանդավոր վիպագրի մոնումենտալ վեպի ամենաթույլ կողմը մեր կարծիքով արծրունիական լիբերալիզմի ակներև ազդեցության ներքո կերտված այդ Ալիմյանն է։ Ջանալով կերտել «դրական հերոսի» կերպար, Շիրվանզադեն այս անգամ հայ բուրժուազիայի լիբերալ ներկայացուցչին դարձնում է հայրերի «մեղքերը» քավող բարեհոգի և ազգասեր կապիտալիստ։ Սկեպտիկ Սմբատի և ապա «արթնացած» ու «վերածնված» Միքայելի կողքին գծված ասիացի «հայրերի» և մանավանդ նավթաշխարհի «ասպետների» կերպարները շատ ավելի ցայտուն և կենդանի գույներով են նկարված։ Ռեալիստ նկարչի և արվեստագետ-հոգեբանի վրձինի ուժը երևում է ահա հենց այդ տիպարների կերտման նվիրված էջերի մեջ։ Նավթաշխարհի ուրույն տոպոգրաֆիան և քաղաքի բորսայի շուրջ պտտող պա-

քաղիանների ստվերները մնում են ընթերցողի հիշողության մեջ։ Հակիրճ են պրոլետարիատի ներկայացուցիչների բնութագրման նըվիրված տողերը։ Այդ տողերի մեջ մենք նշմարում ենք ռուս գրականության առաջավոր տրադիցիաներով տարված վիպագրի դիմաստվերը։ Հրդեհի և վտանգի ամենասուր մոմենտին նավթային պրոլետարիատի երեք ներկայացուցիչները՝ հայ, ադրբեջանցի, ռուս բանվորները, հանդես են գալիս որպես միաձույլ և ամրակուռ ընտանիքի անդամներ։ Հակառակ հեղինակի ցանկության, Կարապետը, Ռասուլը և Զուպրովն են դառնում վեպի իսկական հերոսներ։ Նացիոնալիստական միտումներով լեցուն բուրժուական միջավայրին կարծես հակադրվում է երեք բանվորների ինտերնացիոնալիզմը և մեծ եղբայրությունը և հակադրվում է այնքան ցայտուն կերպով, որ մեծ տպավորություն է թողնում անգամ բանվորական շարքերից դուրս կտրված դիտողների վրա։ Եվ իհարկե, պատահական չպիտի համարել Շիրվանզադեի ակնարկը վաղեմի անցյալի ապրումների մասին։ Իր «Քաոս»-ը գրելու ժամանակ վիպագիրն անշուշտ գտնվում էր ռուս առաջավոր գրագետների ազդեցության ներքո։ Նրա արվեստի ավելի անկաշկանդ թռիչքին խանգարում են միայն արծրունիական ավանդները, որոնք ուրույն կնիք են թողնում անգամ դրամատուրգիական գործերի վրա։ Ամենևին պատահական չէր այն, որ Շիրվանզադեն «Կործանված» պիեսայի մեջ հանդես է գալիս «հայրերի» պատգամախոսի դերում։ Նա, որ տարիներ առաջ նշմարում էր գոնե մի ակնթարթ Զուպրովի, Ռասուլի, Կարապետի արտասովոր եղբայրության վեհությունը, այս անգամ տարօրինակ չի գտնում անհրաժեշտ գույներ և ճշգրիտ տոն «հայրերի» դեմ ծառացող «զավակների» ներկայացուցչի ռեալիստական վերարտադրության համար։ Բայց և այնպես նույնիսկ այդ տենդենցիոզ պիեսայի մեջ աչքի է ընկնում հեղինակի ավելի ուշադիր վերաբերմունքը դեպի հայրերի իրականության մեջ կատարվող նոր պրոցեսները։ Շիրվանզադեն, քննադատելով հանդերձ «զավակների» ներկայացուցիչներին, ձգտում էր հասկանալ դրանց և յուրահատուկ ուտոպիստի նման կառուցել «հայրերին» ըմբոստ «զավակների» հետ միացնող գաղափարական ինչ-որ օղակ։

Հովհաննես Թումանյանից հետո Շիրվանզադեն առաջիններից է լինում նոր սովետական կարգերին ձայնակցող գրագետներից։ Երկու ականավոր գրագետներն էլ, որպես հումանիզմի ջահակիր-

ներ, մեծապոյն անկեղծությամբ նվիրվում են ազատագրված նոր Հայրենիքի կուլտուրական շինարարության մեծ գործին: Կատարելով վճռական շրջադարձ, Թումանյանը և Շիրվանզադեն արտահայտում են հարազատ ժողովրդի կամքն ու բաղձանքները: Մեզ թվում է, որ այդ շրջադարձը կատարելու ժամանակ երկու մոհիկաննների համար էլ մեծ նշանակություն են ունեցել վաղուց ծանոթ և սիրելի ռուս առաջավոր գրագետների գաղափարական բարձր պատգամները:

4.

Երբ Հայաստանում հաստատվում է սովետական իշխանությունն, հայ ժողովրդի կուլտուրական շարժումը ստանում է նոր, ավելի մեծ և ինտենսիվ թափ: Առաջին այդ օրերին մեր ինտելիգենցիայի շարքերում քիչ չէին վարանողները: Գրականության հին վարպետներից ակտիվ կերպով արձագանքում են ռևոլուցիոն պատգամներին Արազին, Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Միք. Մանվելյանը: Այդ գրողներն անցյալումն էլ հայտնի էին որպես ռուս առաջավոր կուլտուրայի բարեկամներ: Զարմանալի չէ, որ դրանից հետո, սովետական իշխանության առաջին տարիներին, այդ գրողներն են դառնում ռուս գրականության ակտիվ պրոպագանդիստներ:

Արազին հայտնի է մեր նոր գրականության մեջ որպես ռեալիստական վիպակների վարպետ: Նրա ժողովածուների մեջ ամփոփված գործերը կերտված են պարզ և ինքնատիպ լեզվով: Հեռանալով ռուս ռեալիստ վիպագիրներին, Արազին չի շեղվում իր հիմնական ուղեգծից: Ռեակցիայի ծանրագույն տարիներին նա Հակոբյանի հետ միասին կռվի է ելնում անիդեական արվեստի հայկական դաղափարախոսների դեմ:

Այսօր, երբ թերթում ենք Արազու հին գործերը, աչքի է ընկնում որոշ էջերի ուրույն պրիմիտիվիզմը: Մեծ տեղ չեն բռնում վիպադրի ժողովածուների մեջ հրապարակախոսական տոն կրող այդ էջերը, որոնք անցյալի պայմաններում անխուսափելի և անհրաժեշտ էին: Հրատապ պայքարի օրերին պոետը պարտավոր էր կանչել ու բողոքել:

Սուր դրչով և իրոնիայով Արազին պատմում է քողարկված Պշնամինների մասին: Առանձին սիրով ու զգացումով է կերտում աշխատավորների կերպարները: Աշխատանքի մարդկանց աշխարհը

ծանոթ ու սիրելի աշխարհ էր, կապված վաղեմի հուշերի հետ։ Տարված պատանեկական տրամադրությամբ, Արազին մերթ ընդ մերթ նետում է լիրիկական սենաենգիաններ։ Դժվար է համաձայնել այն քննադատների հետ, որոնք հենվելով հատկապես նման տողերի վրա «լիրիկ-պոետ» են համարում ռևալիստ վիպագրին։ Արազու վիպակների հերոսները նկարագրված են սուր վրձինով։ Հերոսներից յուրաքանչյուրն ունի իր հատուկ խոսելաձևը։ Երբ Արազին անաչառ նկարչի նման կերտում է առօրյա մարդկանց կերպարները կամ նույնիսկ հին աշխարհի ներկայացուցիչներին, նրա վիպակների կոլորիտը զառնում է ավելի կենդանի։ Հակառակ էֆֆեկտ է առեղծվում, երբ նա անցնում է դրական հերոսների նկարագրության։ Սովորաբար այդ հերոսները դառնում են անհամոզիչ և սխեմատիկ։ Ավելի հաջող են Արազու դեպրիվեատական ակնարկները։ Դրանք չեմ տրամադրությամբ լեցուն յուրահատուկ լուսանկարներ են, կառուցված զուցե և մի քիչ «անիուղղ» ու միևնույն ժամանակ իր անկեղծությամբ արդեն հմայող ձևով։ Այդպես է կառուցված օրինակ, լեռնային հիդրոկայանի նկարագրության նվիրված ակնարկը։ Հեղինակը այդտեղ պատմում է ավելի շատ իր հույզերի մասին։ Բաքվից եկած բանվորի դիմաստվերը կարծես պատահական մի պատրվակ է՝ սեփական խոհերի արծարծման համար։

... «Գիշերվա այս ժամերին ձորալանջի կածաններով լույսեր են շարժվում, երբեմն խումբ խումբ, երբեմն զատ զատ։ Տոննելի բանվորներն են դրանք, որ վերջացրած իրենց հերթը՝ վերադառնում են մոտակա գյուղերը հանգստանալու»... Ակնարկի առաջին տողերը նույնպես պատմում են լույսերի մասին։ Վերջին տողերը դարձյալ նվիրված են լույսերին։ Կարող են պահանջկոտ էսթետները, «ճիամիա» համարել այդօրինակ կառուցվածքը, բայց նրանք էլ չեն կարող ժխտել, որ հեղինակը կարողանում է թռուցիկ ֆրազմենտի միջոցով գծագրել հետու լեռների այդ լույսերը, տոննելի բանվորներին և նրանց աշխատանքը։

Արազին ունի գործեր նվիրված արդյունաբերության և գյուղատնտեսության էնտուզիաստներին, որոնց մեջ նույնպես դրական հերոսները գծված են սխեմատիկ ներկերով։ Ըստ երևույթին շատ դժվար է կերտել հատկապես այդօրինակ կերպարներ։

Սովետահայ արձակագիրների մեջ եզակի տեղ է գրավում Դե-

միրճյանը, որպես բազմաժանր գործերի տաղանդավոր վարպետ։ Դեմիրճյանը պոետ է, դրամատուրգ, հրապարակախոս, պատմավեպի հմուտ վարպետ և արձակագիր-վիպագիր։

Դեմիրճյանն առանձին սիրով է նկարագրում հոգեկան կոնֆլիկտները և հաճախ գերագնահատում է այդ կոնֆլիկտների նշանակությունը։ Ես չեմ կարող համաձայնել անվանի վիպագրի ուրույն հայեցության հատկապես այդ գիծը քողարկող տեսությունների հետ... Դեմիրճյանը,— կարդում ենք վերջերս հրապարակված այդօրինակ մի տեսության մեջ,— մարդուն դիտում է իբրև հասարակական փաստ (!!) և բոլոր **դեպքերում**, շատ թե քիչ հաջողությամբ աշխատում է կատարվող փոփոխությունները պատ**ճառավորել** օբեկտիվ հանգամանքներով, ցույց տալ, թե ինչպե՞ս կյանքի փոփոխությունն իր անդրադարձումն է ունենում մարդու ներքնաշխարհում».. Միևնույն տեսության մեջ միևնույն այդ հեղինակը ակնարկելով Դեմիրճյանի **օպտիմիզմի** մասին, ի միջի այլոց, գրում է հետևյալ տողերը... «**Ավելորդը**» պատմվածքում Հաջի աղային հակադրված է Սրբուն մամը՝ անդամալույծը, որի հոգին լցված է անհուն սիրով դեպի մարդիկ, որի անհատական երջանկությունը մերձավորներին բարիք անելու մեջ է։ Սրբուն մամը հայ նահապետական կնոջ ազնիվ հոգեբանության մարմնացումն է»...։

Ես դիտավորությամբ կանգ եմ առնում նման լամենտացիաների վրա, որովհետև հատկապես այդօրինակ լամենտացիաներն են սովորաբար անօրինակ շիլափլավ ստեղծում, փոխարեն շատ պարզ խնդիրների պարզորոշ լուսաբանության։ Մի կողմ թողնենք մեր հարգելի բանասերի հայրենաբաղձ այդ դատողությունները նահապետական կանանց և ապա ազնիվ հոգեբանության մասին։

Դեմիրճյանի «Ավելորդը» հայտնի է ընթերցողների լայնագույն շարքերին։ Դա անպայման ուժեղ գործ է։ Բայց ո՞վ կարող է մռայլ այդ պատկերը համարել **օպտիմիստական** գործ կամ այդ տաղանդավոր պատմվածքի հեղինակին դարձնել «**լավատես**», երբ պատմվածքի և՛ իմաստը, և՛ կոլորիտը շատ որոշ են։

Դեմիրճյանը շատ անկեղծ ու ճշմարտախոս գրող է։ Արձագանքելով ռևոլյուցիոն մեծ հորձանքի պատգամներին, նա ձիգ է անում մի շարք երկերի մեջ բնութագրել հին և նոր աշխարհի ներկայացուցիչներին։ Կարելի է իհարկե քննադատել նրա մոտեցման

մեթոդը կամ մեկնաբանությունը: Նախառևոլյուցիոն շրջանում, Դեմիրճյանը կարող էր և սխալվել և միակողմանի կերպով մոտենալ ցնցող և արտասովոր դեպքերին, բայց ընդունելով սովետական իշխանությունը և նվիրելով իր գրիչը ազատագրված ժողովրդին, նա կատարում է բավական վճռական և կտրուկ շրջադարձ:

Դեմիրճյանն «Ընկերները» պատմվածքի մեջ նկարագրում է հայ աշխատավոր զանգվածների ռևոլյուցիոն շարժումը, այդ շարժման ներկայացուցիչներին, պայքարը մաուզերիստ բռնակալների դեմ: Իր մի ուրիշ պատմվածքի մեջ նա կերտում է հին հասարակության տիրակալների ջանքերով վարկաբեկված միայնակ «հերոսի» վերակառուցման պրոցեսը: Շնորհիվ սովետական իշխանության, այդ միայնակ՝ դեռ երեկ խմբի համբավ վայելող անձնավորությունը դառնում է իրապես ազատագրված և նոր մարդ: «Մաշիդ» և «Նիգյար» մեծ պատմվածքների մեջ Դեմիրճյանը, նկարագրելով նոր սերնդի պայքարը հին աշխարհի ներկայացուցիչների և բեկորների դեմ, հանդես է գալիս որպես ժողովրդի հառաջընթացը մեծարող էնտուզիաստ-վիպագիր: Վերջապես Հայրենական Մեծ Պատերազմի տարիներին նա մերկացնում է հիտլերյան բռբենխներին, դատափետում է մեծագույն զայրույթով մարդակեր վանդալներին և ամբողջ ձայնով ձայնակցում մեր հերոսական կարմիր բանակի մարտական շարքերին:

Իր գեղարվեստական-գրական պրիոմներով սակայն Դեմիրճյանը կտրվում է մերթ ընդ մերթ ռեալիզմից: Նա սիրում է քրքրել մարդկային հոգու զարտուղի ելևէջները, ընկնում է ծայրահեղությունների մեջ, նույնիսկ յուրահատուկ տուրք է մատուցում բիոլոգիական պսիխոլոգիական գործոնների դերը գերագնահատող տեսաբանների միակողմանի ուսմունքներին: Վերջին տարիներին նա հրապարակել է մի շարք փոքրիկ ակնարկներ-նովելներ: Դժբախտաբար այդ ակնարկներն էլ մաներային են: Կան ակնարկներ, որոնց մեջ աչքի են ընկնում անհամոզիչ դետալներ և տրյուկային էֆեկտներ ստեղծելու համար նետված աֆորիզմներ: Միանման տրյուկներ նշմարվում են նույնիսկ Դեմիրճյանի «Վարդանանք» մոնումենտալ երկասիրության մեջ: Նման պսիխոլոգիական պըրպըտումները հոգնեցնում են ընթերցողին և հնչում են անգամ ջոկված ֆրագմենտների մեջ անախորժ դիսոնանսների նման:

Ավելի պարզ և ազդու է դառնում Դեմիրճյանը, երբ դեն նե-

տելով «տրյուկները», գրում է հատակ ու դյուրամատչելի լեզվով:

Դեմիրճյանն ակտիվ քաղաքացի է, նա աշխատում է արձագանքել կենդանի իրականության հրատապ պրպտումներին: Նա կանգ է առնում կենցաղային խնդիրների վրա, նկարագրում է հոդևկան կոնֆլիկտները: Շատ հաճախ ձիգ է անում կերտել հին աշխարհի դեմ ծառացող նոր մարդկանց կերպարներ և վճռական շեշտով դատապարտում է նացիոնալիզմի ուղեծը: Իր մի փոքրիկ պեղարվեստական ակնարկի մեջ Դեմիրճյանը, դրվատելով հայ և վրացի ժողովուրդների մեծ եղբայրությունը, շատ որոշակի կերպով ցուցադրում է իր դիրքը:

Իր պեղարվեստական պրիսմներով Դեմիրճյանի կողքին է կանգնած Միք. Մանվելյանը, որի երկերի մեջ նույնպես նշմարվում է «պսիխոլոգիական» պրպտումներով տարված պրագետի դեմքը:

Մանվելյանն ունի բանվորներից, աշխատավորների ու թշվառ մարդկանց կյանքի նկարագրության նվիրված բազմաթիվ պատմվածքներ և նովելներ: Դեմիրճյանի նման սիրով ու համակրանքով է մոտենում աշխատավորներին: Տառապանքով է պատմում Թուլլ մարդկանց տխուր առօրյայի մասին և բողոքի ձայն է բարձրացնում անիրավության դեմ: Դոստոևսկին մեծ ազդեցություն է թողել Մանվելյանի վրա: Հասկանալի և սիրելի մտածողներ էին նրա համար Չեխովն ու Գորկին: Չնայած այդ ամենին, Դոստոևսկն ու Գորկուն Մանվելյանը մոտենում էր դինված Լեոնիդ Անդրեևի անչափ միակողմանի տեսակետով:

Լեոնիդ Անդրեևը, կտրելով անհատներին հասարակական-պատմական շրջապատից, սովորաբար գերագնահատում էր բնածին բիոլոգիական հատկանիշների դերը: Հոգեբանական պրպտումները նա ձևնարկում էր կառչած բիոլոգիական մակերեսային դրույթներին: Նրա նույնիսկ ավելի հաջող ռեալիստական պատմվածքների մեջ (առաջին հատորը, հատկապես «Վասիլի Ֆիվիցու կյանքը») նշմարվում են շատ ուժեղ հոռետեսական շեշտեր: Իր «Միտքը» պատմվածքի մեջ Անդրեևը, ելնելով իդեալիստական դրույթներից, նկարագրում է հասարակական իրականությունից կտրված անհատին, իսկ հետագա երկերի մեջ հանգում է արդեն մոտյատուն պեսիմիզմի և ռեակցիայի ուղեծին: Այդքան կտրուկ

եղրակացության չէր կարող անել Մանվելյանը: Պեսիմիզմից նրան փրկում է սովետական իշխանության, պատմական նոր էպոխայի մեծ առօրյան: Բայց և այնպես վաղեմի օրերին ստեղծված միակողմանի ապրումների լծից նա չի կարողանում վերջնապես ազատագրվել և նոր իրականության մեջ:

Ահա ինչու սովետական իշխանության անկեղծ և էնտուզիաստ բարեկամ լինելով հանդերձ Մանվելյանն իր ստեղծագործական պրակտիկայում մերթ ընդ մերթ արձագանքում էր Անդրեևի նման մտածող դրագետների պատգամներին: Նկարագրում է նա, օրինակ, նոր շինարարության և ժողովրդական մեծ հանդիսը: Անկեղծ և մեծագույն ղպացումով ձայնակցում է ժողովրդական հանդեսին: Այնուամենայնիվ չի կարողանում նա վերջնապես հրաժարվել իր միակողմանի դիտակետից, տարիների ընթացքում մշակված ու կաղապարված մտորումներից: Մանվելյանը մերթ ընդ մերթ արձանագրում է միայն մի դեպք, դուցե և շատ աննշան ու անկարևոր դեպք: Նա հիշատակում է ինչ-որ հանդիսատեսի «իստերիկ» ծիծաղի մասին և բավական սուր դիտոնանս է մտցնում ամբողջ նկարագրության մեջ: Այդօրինակ շարիխաններ կամ դիտոնանսներ մենք նշմարում ենք նրա մի շարք գործերի մեջ: Ի՞նչ են ասում այդ շարիխանները սովետահայ ընթերցողին: Ամենից առաջ դեպքերի ու դեմքերի նկարագրությանը հաղորդում են պեսիմիստական տոն: Ահա այդ մասին են ակնարկում սուր դիտոնանսների նման հնչող տխուր խոհերը, որոնք բավական որոշ տոն են հաղորդում արձակագրի արծարծած թեմաներին:

Տեսնենք այժմ, թե ինչպե՞ս է մոտենում այդ պրոբլեմներին ռեալիստ գրողների շարքերում պատվավոր դիրք գրավող Ստ. Զորյանը: Իմ կարծիքով, մոտենալով այդ պրոբլեմներին նա ևս չի վստահանում վճռական կերպով լուծել հիմնական խնդիրը: Քիչ աշխատանք չի կատարել մեր ականավոր այդ վիպագիրը իր երկարամյա գործունեության ընթացքում: Կերտել է մեծ շնչով լեցուն տաղանդավոր գործեր, որոնք մտնում են կամ պիտի մտնեն մեր կուլտուրայի հարուստ դանձարանի մեջ, որպես կլասիկական արվեստության նորագույն նմուշներ: Զորյանը, հետևելով ռուս առաջավոր կլասիկներին, և դրանց մեջ առաջին հերթին Չեխովին ու Գորկուն, ստեղծել է ավելի պարզ, հստակ ու լակոնական լեզու: Նրա երկերի մեջ նկարագրված բնանկարները ու տիպարները մեզմ

կոլորիտ ունեն և ակամայից հիշեցնում են Կորոլենկոյին: Զորյանի «Մի կյանքի պատմություն»-ը, օրինակ, այդպիսի կոլորիտ ունի, թեև այդտեղ շատ սուր գույներով է նկարագրված անցյալի մռայլ օրերը, ճնշված մարդիկ, հին կարգերի դեմ ըմբոստացողների դեմքերը: Զորյանի պատմվածքների մեջ մենք տեսնում ենք հայ ժողովրդի տիպիկական ներկայացուցիչներին: Անսահման սիրով և ջերմ ղպացումով է խոսում տաղանդավոր վիպագիրը հասկանալու աշխատավորների, գավառացիների, շինականների, սալդաթի շինել հազած երեկվա գեղջուկների մասին: Տխուր էջեր շատ է նկարագրում նա, բայց երբեք չի տարվում պեսիմիստական հուշեր է: Տխուր էջերն ու տխուր դեմքերն ավելի կարոտ կերպով են ընդգծում հեղինակի ցասումը և մեծագույն զայրույթը:

Մ. Գորկու «Մանկության» ընդհանուր ոգուն հատուկ հատկանիշը դերակշռում է Զորյանի երկերի մեջ: Ստ. Զորյանի անգամ նախատևությունն տարիներին կերտված պատմվածքների մեջ հնչում է հին աշխարհի դեմ ծառացող գրագետի ձայնը:

Ավելի որոշակի է դառնում այդ մոտիվը հետագա շրջանում, երբ Զորյանն անցնում է նոր իրականության և նոր դեմքերի նկարագրությանը: «Պատերազմ» ժողովածուի մեջ գինվորի շինելներ պատմվածքները միաձույլ ժողովրդական կոլեկտիվի հետ կապված աշխատավորները միանդամներ են: Հայ, ռուս, վրացի գինվորները հասկանում են միմյանց ու կապված են եղբայրական կապերով միմյանց հետ: Ուշադրությամբ հետևելով իր հերոսների կյանքին, Զորյանը չէր ենթարկվում բիո-պսիխոլոգիական հայացքներով տարված տեսաբանների ազդեցությանը: Անհատը նրա համար հասարակական բանների մի մասնիկն է: Հասարակական միջավայրն բարդ կամարմնի մի մասնիկն է: Հասարակական միջավայրն բարդ կառուցվածքը, ինչպես նաև սոցիալական ներհակ ուժերի հակամարտությունը հայտնի էր նրան: Նա կերտում է նոր հասարակական իրականության, նոր մարդկանց կերպարներն այնքան կենդանի, գույներով, որ այդ դեմքերը՝ «Գրադարանի աղջիկը», «Անապատի պատանին», գյուղի աշխատավորները դառնում են հանրահայտ տիպարներ:

Հայրենական Մեծ Պատերազմի տարիներին Զորյանը երկու տասնյակից ավելի պատմվածքների ու վիպակների մեջ կերտում է թիկունքի աշխատավորների կերպարները: Ցուցադրել առօրյա, շարքային սովետական մարդկանց անսահման նվիրվածությունը

մեծ սոցիալիստական հայրենիքին, նրանց առանցը,— ա՛յդ էր ահա օրվա պահանջը: Շարմային հերոսների կերպարների կերտման միջոցով Զորյանը նորից իրեն հատուկ ոճական արձագանքում է մոմենտի հրատապ պրոբլեմներին: Այդ վիպակները ցույց են տալիս, որ մեծագույն ուշադրությամբ ուսումնասիրելով թիկունքի աշխատավորների կյանքը և առօրյան, վիպագիրը որոնում էր նոր հերոսներին, ճիշդ էր անում ակնարկել դրանց մասին, կերտել աննշմարելի և արտասովոր մարդկանց կերպարները: Իմ կարծիքով, այդ էպիզոդային ակնարկները ուշադրավ լինելով հանդերձ անավարտ գործերի տպավորություններ են թողնում: Որքան հիշում եմ, ժամանակին Զորյանը նման մի ուրիշ փորձ էլ է ձեռնարկել: Չանալով նկարագրել քաղաքացիական պատերազմի առաջին դրվագները. հեղինակը մինչև այժմ հրապարակել է վեպի միայն առաջին գլուխները և չի վստահացել լրիվ գույներով գծագրել նոր հերոսների՝ հայկական Չապաևների կամ Կորչագինների կերպարները:

Ո՛չ Դեմիրճյանն ու Մանվելյանը, ո՛չ էլ Արազին ու Զորյանը մինչև այսօր չեն ստեղծել նոր մարդկանց —դրական հերոսների ցայտուն կերպարներ: Ամենից զարմանալին այն է, որ դրական հերոսին պոկելու համար հենց Հայրենական պատերազմի օրերին Դեմիրճյանը, Զորյանը և նույնիսկ ավելի երիտասարդ Նաիրի Զարյանը ուղևորվել են դեպի դարավոր անցյալի խորքերը: Մեծագույն այդ հոսանքը բռնկվում է Վարդանի, Պապի, Արայի կերպարներին նոր շունչ տալու համար Հայրենական Մեծ Պատերազմի օրերին:

Մեզ մնում է երկու խոսք ասել սովետական գրողների նոր սերնդի ներկայացուցիչների մասին: Մենք ունենք այժմ պոետների և վիպագիրների կուռ շարքեր: Նաիրի Զարյանի կողքին են կանգնած Հր. Քոչարը, Սիրասը, Անանյանը, Թափալյանը, Սահինյանը, Թորգոմյանը, Արաքսը և մի շարք ուրիշ վիպագիրներ: Դա ուժ է: Քիչ աշխատանք չեն կատարել այդ գրողները: Ռուս և հայ գրականության վարպետների բարձր արվեստը քիչ շատ հաջող կերպով յուրացնելով, այդ գրողները մեծագույն մասի են հաղորդել հայ պեղարվեստական գրականության վերելքին:

Հաջող կերպով ձայնակցելով Շոլոխովին, Նաիրի Զարյանը հրատարակել է մեր նորագույն արձակ գրականության լավագույն

երկերից մեկը՝ «Հացավան» վեպը: Այդ ստեղծագործության մեջ նա նկարագրում է գյուղական նոր իրականությունը, հին ու նոր ուժերի բախումները, կոլխոզային շինարարությունը: Հատակ ու պատկերավոր լեզվով, հմուտ նկարչի նման նա կերտում է հայ գյուղական իրականության տիպիկական ներկայացուցիչներին: Հիմնական սյուժետը վեպի մեջ չի ծանրաբեռնված ավելորդ դեպքերով: Բնանկարը գծված է հակիրճ խոսքերով: Պայքարը վնասարարների դեմ, վարանող գյուղացիների ապրումները, գյուղական կենցաղը, անգամ գյուղում աշխատող գործիչների սիլուետները կերտված են վարպետի վրձինով:

Նաիրի Զարյանը մեր գրականության մեջ «օչերկային» ժանրի վարպետների շարքին է պատկանում: Ահա «նկարելու» այդ արտասովոր ընդունակությունը երևում է «Հացավանի» մեջ: Զարյանի «օչերկը» մերկ ռեպորտաժ չէ և ոչ էլ պուբլիցիստական էսսանկար: Նրա «Բրիգադիրի հուշատետրից» անունը կրող օչերկն, օրինակ, այսօր էլ կարելի է կարդալ: Դա գեղարվեստական օչերկ է: Զարյանի մյուս օչերկները ևս կարող են գրավել ընթերցողի ուշադրությունը: Զարյանը սուր աչք ունի: Նա դիտում է ուշադրությամբ և կարողանում է դիպուկ խոսքերով բնութագրել մեր նոր իրականության տիպիկական էջերը: Ես գտնում եմ, որ բանաստեղծ Զարյանին կարող է հաղթել և անշուշտ կհաղթի արձակի վարպետ Զարյանը:

Զարյանից հետո ընթերցողի ուշադրությունը գրավում է Վախթանգ Անանյանը: Մեր գյուղաշխարհի գունագեղ ֆոնի վրա այդ արձակագիրը կերտել է կենդանի տիպարների մի ամբողջ սերիա: Նրա հերոսները գյուղի աշխատավորներն են: Լավ պատմող է Անանյանը և արդեն ունի իրեն հատուկ ինքնատիպ ոճ: Ինքն էլ միշտ գծվում է իր գործերի մեջ: Կարծես չի կարողանում, գուցե չի էլ ցանկանում ազատագրվել Հովհ. Թումանյանի ազդեցությունից: Քաղաքացիական պատերազմի անցյալին նվիրված նրա վեպը հայտնի է: Թե այդ վեպի և թե վերջերս հրապարակված շատ հաջող պատանեկական վեպի ամենալավ հատվածները դարձյալ այն էջերն են, ուր նկարագրվում են գյուղաշխարհի պատկերները:

Հսկայական ազդեցություն են թողել առաջավոր ռուս գրողները Սիրասի և Քոչարի վրա: Երկու այդ արձակագիրների մասին

688—16

ժիշ չի խոսվել մեր մամուլի էջերում։ Սիրասն ու Քոչարը մեծ ուշադրությամբ հետևել են մեր հրատապ իրականության մեջ կատարվող նոր պրոցեսներին ու կերտել են իրական դրվագների ու տիպարների շատ ուշագրավ նկարներ։ Ամենից գրավիչն երկու այդ վիպագիրների անսպառ օպտիմիզմն է և ուշադիր վերաբերմունքը դեպի նոր կյանքը կառուցողների աշխատանքը։ Սիրասն ու Քոչարը ունեն սրտեն ընթերցողների լայնագույն շարքեր։ Ճանաչված ու անվանի դեմքեր են։ Նրանց ստեղծած մի շարք կերպարներ կմնան մեր գրականության մեջ։ Բայց այդ գրողներն էլ դեռևս չեն կատարել մեծ ընդհանրացումներ։ Շատ հաճախ և տաղանդավոր այդ արձակագիրների հիմնական գործերի մեջ ուժեղ է հրապարակախոսական շեշտը։

Վեպի արվեստը շատ ավելի բարդ և դժվարին արվեստ է։ Բավական լավ հաստատում են դա վերջերս հրապարակված երկու ստվարածավալ վեպերի հեղինակներ Թափալցյանը և Անահիտ Սահինյանը։ Երկուսն էլ օժտված են շնորհքով։ Սակայն երկուսն էլ շտապել են հրապարակել տակավին հում նյութեր և պարտվել են։

Թափալցյանի վեպի մասին շատ է խոսվել ու գրվել։ Կրկնություններից խուսափելու համար կուզենայի հետևյալն ասել։

«Պատերազմ» վեպը ձգձգված է։ Շատ կան աննշան մանրուքներ։ Հաճախ վեպի լեզուն ոլորապտույտ նախադասությունների շնորհիվ ծանրանում և տաղտուկ է դառնում։ Զավեշտական տպավորություն են թողնում մտավորական հերոսների պրիմիտիվ զրույցները արվեստի մասին։ Տգեղ և անախորժ են առանձին տիպարների կարծես չարախնդությամբ գծված բնութագրականները։ Միթե Թափալցյանը կարծում է, թե անշուք արտաքինով մարդկանց մեջ չեն կարող լինել ավելի մեծ ուշադրության արժանի տիպարներ։ Սիրում է Թափալցյանը ծանրանալ ծուռ ու մուռ քայլերի, այլանդակ դեպքերի, անախորժ դիտողությունների վրա և մաղձով լեցուն այնքան մռայլ գույներ է նետում կտավի վրա, որ զայրացնում է համբերատար ընթերցողներին։ Եվ ահա հարց է ծագում։ Մի՞թե այդ մարդիկ են ստեղծել նոր կյանքը և մի՞թե դրանք կարող են խրախուսել ներշնչել մեր օրերի երիտասարդներին։ Զոլան նատուրալիստական դպրոցի տեսաբաններից էր։ Բայց նա էլ այդքան հեռուն չէր գնում։ Նրա վեպերի մեջ կան լուսավոր ստվերներ և

նոր շենքերի մասին երազող բժիշկ Պասկալի ու Լալենի նման հերոսներ: Իսկ ո՞վ է Թափալցյանի իսկական հերոսը:

Միևնույն հարցերը կարող ենք տալ Անահիտ Սահինյանին, որի «Խաչուղիներ»-ը տառապում է նույն արատներով: Անհասկանալի է մնում, թե ինչո՞ւ է Սահինյանը այնքան մեծ ուշադրությամբ ուսումնասիրել իր չնչին հերոսների կյանքը և նկարագրել դրանց մանր ինտրիգները, բամբասանքները, սպասումները և ապրումները: Մի՞թե կարելի է այսօր մանավանդ մեծ վեպ գրել սոսկ դեպքերը արձանագրելու և պատահական մարդկանց նկարագրելու համար: Ունի՞ արդյոք վեպը որևէ հիմնական առանցք կամ իդեա: Ի՞նչ է ասում ինքը հեղինակը: Ո՞ւր է նետվում ինքը և ո՞ւր է նետում ընթերցողներին: Նշմարվո՞ւմ է արդյոք լուսավոր ուղեգիծ, թե գերադասում է կանգ առնել «խաչուղիների» հանդեպ — սահմանագծի մոտ: Ո՞վ է, վերջապես, այն հերոսը, որ կարող է իսկապես դրական համարվել և պիտի ոգևորի ընթերցողներին: Մաճկալյա՞նը: Դա հերոս չէ, այլ խրտվիլակ, սխեմա, շաղակրատող բարձրաստիճան «չին»: Այդպիսի պերսոնաժներ են վեպի հերոսները, որոնք կարող են ոգևորել սոսկ չինաերկրպագության մարմաջով բռնված քաղաքացիներին: Կա՞ն արդյոք այդպիսի «հերոսներ» մեր իրականության մեջ: Կան, իհարկե, դժբախտաբար կան: Բայց դրանք չեն մեր իրականության տոն տվող տիպիկական կերպարները: Սահինյանը չի տեսել իսկական սովետական քաղաքացիներին, հերոսներին, որոնք կառուցել ու կառուցում են նոր քաղաքներ ու ավաններ, կարդում են, մտածում, պայքար են մղում և անդուլ մարտեր են մղում աշխատանքի բոլոր ճակատներում:

Ես կանգ չեմ առնում սովետահայ ուրիշ արձակագիրների՝ մասնավորապես Արաքսի, Թարգյուլի, Ստաֆֆու, Գարեգին Բեսի վրա: Այդ գրողների մեջ Արաքսը հայտնի է որպես «Լիպո» հաջող վիպակի հեղինակ և ապա մի շարք ոչ այնքան հաջողված զրույցների ստեղծագործող: Ես ասում եմ անհաջող, որովհետև այդ զրույցների մեջ նկարված կերպարները մտացածին ու սխեմատիկ են մեծ մասամբ, իսկ նկարագրությունը համեմված է հռետորական դատողություններով: Վերջին թերություններն զգալի են նաև Հյուսի Թարգյուլի երկերի մեջ: Այդ անպայման ընդունակ վիպագրուհու «Լուսնի սոնատը» հատկապես լեցուն է մելոդրամատիկական տողերով:

Ոչ մի կասկած չի կարող լինել այն մասին, որ սովետահայ գրագետները հատկապես Հայրենական Պատերազմի օրերին մեծ աշխատանք են կատարել, ձայնակցելով առաջավոր ռուս գրողների հայրենասիրական պատգամներին։ «Սովետական գրականություն» ժուռնալի մի քանի տասնյակ հատորների մեջ զետեղված են վիպակներ և օշերկներ, որոնք ուշագրավ պատմական վավերագրեր են։ Ես կանգ չեմ առնում բազմաթիվ բանաստեղծությունների և դրամատիքական երկասիրությունների վրա։ Վերջապես մեր ուշադրությունը կարող են գրավել Պետհրատի ձեռնարկությամբ հրատարակված առանձին գրքերը։ Այդ գրքերի մեջ աչքի են ընկնում Ան. Սահինյանի («Բարեկամներ»), Դարյանի, Ստաֆֆու, Մկրտչյանի գործերը։

Արձանագրված փաստերը ցույց են տալիս, որ սովետահայ գրողները մեծ ավանդ են մտցրել հայրենի գրականության մեջ, նկատելի աշխատանք են կատարել, ստեղծել ու ստեղծում են նոր բանոր գեղարվեստական երկեր։

Ես արդեն ասացի, որ հայ գրողների համար ռուս առաջավոր գրագետները եղել են հարազատ ուսուցիչներ։

Սովետահայ գրողների համար շատ թանկ են ռուս գրականության մեծ նվաճումները։

Մեր օրերի դրական հերոսը նոր տիպի հերոս է։ Հայ իրականությունն այսօր նեղ ու սահմանափակ իրականություն չէ։ Հայ ժողովուրդը սովետական մեծ ժողովրդի հարազատ և անբաժան հատվածն է։ Նոր կյանքի ու լուսավոր ապագայի համար մարտնչող հայ կառուցողը կապված է այժմ ամրակուռ թելերով ռուս, վրացի, բոլոր հարևան ժողովուրդների առաջավոր զավակների հետ։

Բրանդի կամ Իբսենյան Սոլնեսի նման չեն կարող շարժվել ու խորհել մեր հերոսները։ Չի կարող այսօր առաջավոր գործիչը կարվել ոչ հարազատ ժողովրդից և ոչ էլ հարևան եղբայրական ժողովուրդներից։ Ժողովուրդների ստալինյան բարեկամությունը անսահման ուժ և ամրություն է հաղորդել ազատագրված հայ ժողովրդի վերելքին։

Ինքնին արդեն պարզ է, որ միայն մոտենալով ժողովրդի առաջավոր շարքերին կարող է սովետական գրողը լիովին հասկանալ և կերտել նոր հերոսների կերպարները։

Սովետահայ առաջավոր գրագետները կտրված չեն սոցիալիզմի շենքը աճրացնող էնտուզիաստ-կառուցողների շարքերից։ Այդ շարքերն են հառնդ ներշնչում երաժշտին ու նկարչին, պոետին ու վիպագրին։ Ժողովրդական այդ շարքերումն էլ կգտնի սովետահայ վիպագիրը կենդանի նյութ և վավերագիր դրական հերոսների նոր կերպարների կերտման համար։

II

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(1920—1947)

Կազմեցին

Ա. ՉԱՔԱՐՑԱՆ, Հ. ՂԱԶԱՐՑԱՆ

բնդհանուր դեկավարությամբ

Էդ. ԹՈՓՉՑԱՆԻ

1920

«1920 թվականի վերջին սկսվեց Անդրկովկասի ազատագրումը բուրժուական նացիոնալիստ-մուսավաթականների լծից Ադրբեջանում, նացիոնալ-մենշևիկների լծից Վրաստանում, դաշնակների լծից Հայաստանում: Սովետական իշխանությունը հաղթեց Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում»:

«Համ կ(բ)Պ Պատմություն. Համառոտ դասընթաց»:

Նոյեմբերի 29-ին

Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում:

Քարվանսարայում (Իջևան) Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Հեղկոմը հրապարակում է Հեկլապատցիա ուղղված Հայաստանի աշխատավորությանը.

«Հայաստանի ապստամբ ժողովրդի կամքով ու ցանկությամբ, Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը այսօրվանից Հայաստանը հայտարարում է Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն: Այսօրվանից Խորհրդային Հայաստանի կարմիր Դրոշը պաշտպանելու է նրա աշխատավոր ժողովրդին ճնշողների դարավոր լծից»:

Նոյեմբերի 30-ին

«Պրավդա»-յում հրապարակվում է ընկեր Ի. Վ. Ստալինի գրույցը «Պրավդա»-յի աշխատակցի հետ՝ «Դրությունը Կովկասում»:

Ի. Վ. Ստալինի գրույցից.

«Անտանտի շանսերը Հայաստանում ու Վրաստանում նույնպես զգալիորեն ընկել են վրանգելի ջախջախումից հետո:

Դաշնակցական Հայաստանն անկասկած զոհ գնաց Անտանտի պրովոկացիային, որը նրան դրդեց Տաճկաստանի դեմ և հետո խայտառակ կերպով թողեց նրան Բյուրքերի հաշոտմանը: Հազիվ թե կարելի լինի կասկածել այն բանում, որ Հայաստանին փրկության ոչ մի հնարավորություն չի մնացել՝ բացի մեկից,—Սովետական Ռուսաստանի հետ միանալուց: Այս հանգամանքը, կասկած չկա, որ դաս կծառայի բոլոր այն ժողովուրդների համար և ամենից առաջ Վրաստանի համար, որոնց բուրժուական կառավարությունները չեն դադարում աշխատել Անտանտի առաջ»:

И. Сталин, Сочинения, հ. 4, էջ 410:

Դեկտեմբերի 1-ին

Բաքվի «Կոմունիստ»-ի № 163-ում հրատարակվում է Հայաստանի Հեղկոմի հեռագիրը վ. Ի. Լենինին՝ Դիլիջանում ու Քարվանսարայում սովետական կարգեր հաստատելու առթիվ. խնդրվում է օժանդակ զորքեր Հայաստանը դաշնակցության լծից վերջնականապես ազատագրելու համար:

Հեղկոմի հեռագիրը վ. Ի. Լենինին.

«Հեռագիր վ. Ի. Լենինին

Պատճենը ընկ. Ծերջինսկիձեին և Նարիմանովին.

Թող հայտնի լինի համաշխարհային հեղափոխության առաջնորդին, որ Դիլիջանի և Քարվանսարայի շրջանների գյուղացիները, վրդովված դաշնակցական կառավարության հանցագործ քաղաքականությամբ և երկրում խորացող անարխիայով, ապստամբության դրոշ են բարձրացրել:

Հայաստանի Կոմունիստական Կուսակցությունը այդ առթիվ շարժման գլուխն անցավ և եթե իր ձեռքը վերցնելով, Հայաստանի Ռեվկոմ է կազմել ու Հայաստանը հայտարարել Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն:

Դիլիջանը մեր ձեռքին է:

Ապստամբները առաջ են գնում վերջնականապես խորտակելու Անտանտի տակի գործակալին:

Կատարելով նրանց կամքը և տեղական Ռեվկոմ կազմակերպելով, մենք առաջ ենք շարժվում, համոզված լինելով, որ արևելքի ճնշված ժողովուրդների ազատարար Սոցիալիստական Մեծ

Ռուսաստանի Հերոսական Կարմիր Զորքը մեր այս դժվարին պահ-քարում մեզ օգնության կհասնի։

Հայաստանի բոլոր բանվորների և գյուղացիների կողմից մենք խնդրում ենք Սովնարկոմին այդ օգնությունը ցույց տալ մեզ»։

«Կոմունիստ» (Բաքու), 1 դեկտ., 1920։

Դեկտեմբերի 2-ին

Երևան է մտնում 11-րդ բանակը։ Հայաստանի աշխատավո-րությունը ցնծությամբ դիմավորում է ազատարար բանակի գալուս-տը։

Դեկտեմբերի 2-ին

Վ. Ի. Լենինը Ռևկոմի անունով ողջույնի հեռագիր է հղում Հայաստանի աշխատավորությանը՝ նրա ազատագրման առթիվ։

Վ. Ի. Լենինի հեռագիրը Ռևկոմին.

«Երևան, Ռևոլուցիոն Կոմիտեին

Հանձին Ձեզ՝ ողջունում եմ իմպերիալիզմի լծից ազատված աշխատավորական Սովետական Հայաստանին։ Չեմ կասկածում, որ դուք գործ կդնեք ամեն ջանք՝ եղբայրական համերաշխության հաստատելու Հայաստանի, Թյուրքիայի և Ադրբեջանի աշխատա-վորության միջև»։

Դեկտեմբերի 4-ին

«Պրավդա»-յում հրապարակվում է ընկեր Ի. Վ. Ստալինի հոդվածը՝ «Կեցցե՛ Սովետական Հայաստանը»։

Ի. Վ. Ստալինի հոդվածից.

«Տանջված ու բազմաշարշար, Անտանտի ու դաշնակների ոճրա-մածությամբ սովի, քայքայման ու գաղթի մատնված Հայաստանը, բոլոր «բարեկամների» կողմից խաբված այդ Հայաստանն այժմ իր վերկությունը գտավ այն բանի մեջ, որ իրեն հայտարարեց սովե-տական երկիր։

*Ոչ Անգլիայի՝ հայկական շահերի այդ «դարավոր պաշտպանի» կեղծ հավատիացումները, ոչ Վիլսոնի տխրահռչակ տասնչորս կե-տերը, ոչ էլ Ազգերի Լիգայի մեծադղորդ խոստումները՝ Հայաստա-նի կառավարման նրա «մանդատով» հանդերձ՝ չկարողացան (և

չ՚ին կարող) Հայաստանը փրկել կատորածից ու ֆիզիքական բնաջնջումից։ Միայն սովետական իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն»։...

«Ներկայումս Հայաստանի մայրաքաղաք Երևանը գտնվում է Հայաստանի Սովետական Իշխանության ձեռքին։

Հայաստանի և նրան շրջապատող մուսուլմանների միջև գոյություն ունեցող դարավոր թշնամանքը լուծվեց մի հարվածով՝ Հայաստանի, Թյուրքիայի ու Ադրբեջանի աշխատավորների միջև եղբայրական համերաշխություն հաստատելու միջոցով։

Թող գիտենան բոլորը, ով պետք է գիտենա, որ այսպես կոչված հայկական «պրոբլեմը», որի վրա ապարդյուն կերպով գլուխ էին ջարդում իմպերիալիստական դիպլոմատիայի հին գայլերը, լուծելու կարողություն ունեցավ միայն սովետական իշխանությունը։

Կեցցե՛ Սովետական Հայաստանը»։

И. Сталин, Сочинения, հ. 4, էջ 413, 414։

Դեկտեմբերի 5-ին

Երևանում լույս է տեսնում «Կոմունիստ» օրաթերթի առաջին համարը։

Դեկտեմբերի 6-ին

Խորհրդային Հայաստանի Հեղկոմի № 4 դեկրետով Սովետական Հայաստանում պետական լեզու է հայտարարվում հայոց լեզուն։

Դեկտեմբեր

«Կոմունիստ»-ում տպագրվում են առաջին գեղարվեստական գործերը.

1. Արշալույսի՝ «Հայ աշխատավորության» բանաստեղծությանը («Կոմունիստ» № 4)։

2. «Կարճ առակ», ֆելիետոն դաշնակցության դեմ («Կոմունիստ» № 12)։

Դեկտեմբերի 12-ին

Կոմունիստական Ինտերնացիոնալը ողջունում է Հայաստանի ազատագրումը.

«Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտեն մեծ ուրախությամբ իմացավ Հայաստանում տեղի ունեցած Սովետական հեղափոխության մասին...»

«Կոմունիստական Ինտերնացիոնալը շատ ուրախ կը լինի օգնելու ձեզ՝ իմպերիալիզմի դեմ պայքարելու և վիճելի հարցերին բարեհաջող լուծում տալու գործում»:

Դեկտեմբերի 17-ին

Հեղկոմի դեկրետով պետականացվում են բոլոր կուլտուրական և դպրոցական հաստատությունները:

Դեկտեմբերի 18-ին

Հովհ. Թումանյանի նամակը «Հայաստանի Ռևկոմին»:

Հատված նամակից.

«Դաշնակից պետությունների ագահ ու հավիտյան հանցավոր քաղաքականությունը, հայ ղեկավար շրջանների անկարողությունն ու քաղաքական անհեռատեսությունը և հայ-թուրքական վայրենի ու անզուսպ բշնամությունը Հայաստանը հասցրին օրհասականի դուռը:

Ամենքից լքված ու հուսահատված հայ ժողովուրդը իր հայացքը դարձրեց դարձյալ դեպի Ռուսաստանը: Եվ եկավ նա, նոր Ռուսաստանը:

Այժմ նոր, ազատ Ռուսաստանից է կախված՝ ոչ միայն հայ ժողովրդին ազատել վերահաս վտանգից՝ այլև ապահովել նրա անկախ քաղաքական կյանքը, խաղաղ վերջացնել հայկական արյունոտ հարցերը, հայ ժողովրդին հաշտեցնել մահմեդական հարևանների հետ և արդար աշխատանքի ճանապարհով առաջնորդել դեպի նոր կյանք:

Փոքր ժողովուրդները, հիրավի, զրկված բանվորներ են ագահ ու անխիղճ իմպերիալիստական հզոր պետությունների ճանապարհների վրա:

Նոր Ռուսաստանը, որ գալիս է նրանց հանի էդ տրիական

վիճակից՝ նոր դարաշրջան է բաց անում մարդկության պատմության մեջ...»:

Գետ. Դրական թանգարան, Հովհ. Թումանյանի արխիվ, № 365:

Դեկտեմբերի 28-ին

Լուժողկոմի հրամանը համալսարանի բացման մասին:

Դեկտեմբերի 31-ին

Դեկրետով արգելվում է կրոնական առարկաների դասավանդումը պետրոցներում:

Դեկտեմբեր

«Կոմունիստ»-ի №№ 16, 17, 18 հրատարակվում է ընկեր Ի. Վ. Ստալինի՝ «Սովետական իշխանության քաղաքականությունը Ռուսաստանում ազգային հարցի վերաբերմամբ» հոդվածը:

Ի. Վ. Ստալինի հոդվածից.

«Սովետական Ռուսաստանը աշխարհում դեռ չտեսնված փորձ է անում՝ փոխադարձ վստահության հիմունքներով, կամավոր, եղբայրական համաձայնության հիմունքներով կազմակերպել մի ամբողջ շարք ազգությունների ու ցեղերի միատեղ համակեցությունը միասնական պրոլետարական պետության շրջանակներում: Ռեվոլուցիայի երեք տարին ցույց տվեց, որ այդ փորձն ունի հաջողության բոլոր շանսերը: Բայց նա, այդ փորձը, կարող է լիակատար հաջողության հույս ունենալ միայն այն դեպքում, եթե ազգային հարցի վերաբերյալ մեր պրակտիկ քաղաքականությունը տեղերում չտարաձայնվի ազգարարված սովետական ավտոնոմիայի հետ, վերցված նրա բազմազան ձևերով ու առանձնահատկություններով, եթե մեր յուրաքանչյուր գործնական քայլը տեղերում նպաստի այն բանին, որ ծայրամասերի ժողովրդական մասսաները հաղորդակից լինեն պրոլետարական հոգևոր ու նյութական բարձր կուլտուրային այն ձևերով, որոնք համապատասխանեն այդ մասսաների կենցաղին ու ազգային կերպարանքին»:

Ի. Ստալին, Մարքսիզմը և ազգային-գաղութային հարցը, Պետհրատ, 1938, էջ 104:

«Էսերների, մենշևիկների, անարխիստների, նացիոնալիստների ռևոլուցիայի կողմից ջախջախված պարտիաներն ինտերվին-

ցիայի ժամանակաշրջանում օգնություն են ցույց տալիս սպիտակգվարդիական դեներալներին ու ինտերվենտներին, կոնտրռևոլուցիոն դավադրություններ են սարքում Սովետական ռեսպուբլիկայի դեմ, տեռոր են կազմակերպում սովետական գործիչների դեմ։ Այդ պարտիաները, որոնք մինչև Հոկտեմբերյան ռևոլուցիան որոշ ազդեցություն ունեին բանվոր դասակարգի մեջ, քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում բոլորովին մերկացնում են իրենց ժողովրդական մասսաների աչքում՝ որպես կոնտրռևոլուցիոն պարտիաներ։

Քաղաքացիական պատերազմի և ինտերվենցիայի ժամանակաշրջանն այդ պարտիաների քաղաքական կործանման և Սովետական երկրում կոմունիստական պարտիայի վերջնական հաղթանակի ժամանակաշրջանը եղավ»։

«Համ կ(բ)Պ Պատմություն։ Համառոտ դասընթաց»։

1921

«Պատերազմին վերջ տալով՝ Սովետական երկիրն սկսեց անցնել տնտեսական խաղաղ շինարարության ռելսերի վրա։ Անհրաժեշտ էր բուժել պատերազմի հասցրած վերքերը։ Անհրաժեշտ էր վերականգնել քայքայված ժողովրդական տնտեսությունը, կարգի բերել արդյունաբերությունը, տրանսպորտը, գյուղատնտեսությունը։

Բայց խաղաղ շինարարության անցնելը հարկ եղավ կատարել չափազանց դժվարին պայմաններում։ Քաղաքացիական պատերազմում հաղթություններ հեշտ ձեռք չբերվեց։ Ջորսամյա իմպերիալիստական պատերազմը և հետո պատերազմը ինտերվենցիայի դեմ՝ քայքայել էին երկիրը»։...

«Պարտիայի առաջ ծառացավ երկրի տնտեսական կյանքի բոլոր հարցերի նկատմամբ պարտիայի նոր դիրքավորում՝ նոր կացությանը համապատասխանող դիրքավորում մշակելու հարցը։

Եվ պարտիան ձեռնամուխ եղավ տնտեսական շինարարության հարցերի վերաբերմամբ նոր դիրքավորում մշակելուն»։

«Համ կ(բ)Պ Պատմություն։ Համառոտ դասընթաց»։

Հունվարի 7-ին

Երևանի Աշխատանքի Պալատում տեղի է ունենում գրական-երաժշտական երեկո նվիրված Վ. Տերյանի մահվան տարելիցին։

Հունվարի 19-ին

«Պրավդա»-յում հրապարակվում է ընկեր Ի. Վ. Ստալինի «Մեր տարաձայնությունները» հոդվածը։

Հունվարի 23-ին

Բացվում է Հայաստանի ժողովրդական Համալսարանը։

Փետրվարի 6-ին

Երևանի տղաների գիմնազիայում Մ. Աբեղյանը զեկուցում է հայոց լեզվի ուղղագրության փոփոխման մասին։

Փետրվարի 9-ին

«Պրավդա»-յում հրապարակվում է Վ. Ի. Լենինի հոդվածը «Լուսժողկոմատի աշխատանքի մասին»։

Վ. Ի. Լենինի հոդվածից.

«Կապիտալիզմը լրագրերը վերածեց կապիտալիստական ձեռնարկություններին, շահույթի գործիք հարուստների համար, նրանց ինֆորմացիայի և զվարճության համար, գործիք աշխատավորական մասսային խաբելու և թմրեցնելու համար։ Մենք ջարդեցինք շահույթի և խաբեության գործիքը։ Մենք սկսեցինք լրագրերը դարձնել գործիք մասսաներին լուսավորելու և սովորեցնելու նրանց ապրել, իր տնտեսությունը կառուցել առանց կալվածատերերի և առանց կապիտալիստների։ Բայց մենք դեռ նոր ենք սկսել այդ անել։ Երեք տարուց քիչ ավելի ժամանակում շատ բան չենք արել։ Իսկ հարկավոր է դեռ շատ բան անել, անցնել շատ մեծ ճանապարհ։ Ավելի քիչ՝ քաղաքական ճոճողոցներ, ավելի քիչ՝ ընդհանուր դատողություններ և վերացական լոզունգներ, որոնցից հաճույք են զգում անփորձ և իրենց խնդիրները չհասկացող կոմունիստները. ավելի շատ՝ արտադրական պրոպագանդա, իսկ ամենից շատ՝ գործնական, կարող, մասսաների զար-

գացման մակարդակին համապատասխանեցված պրակտիկ փորձի հաշվառում:

Լրագրերի բաշխման մեջ (գրքերի մասին տվյալներ չունեմ. հավանաբար գործն այնտեղ ավելի վատ է) մենք վերացրինք բաժանորդագրությունը: Դա մի քայլ է առաջ՝ կապիտալիզմից դեպի կոմունիզմ»:

Ленин, Сочинения, հ. XXVI, էջ 165—166:

Փետրվարի 18-ից—ապրիլի 2-ը

Կարմիր Բանակի զորամասերի և պարտիզանական ջոկատների միջոցով վերացվում է դաշնակների փետրվարյան ավանտյուրան Հայաստանում:

Փետրվարի 23-ին

Սովետական կարգերի հաստատումը Վրաստանում:

Մարտի 8-ին

ՌԿ(բ)Պ X համագումարի բացումը:

Ապրիլի 3-ին

Հրապարակվում է Հայաստանի Հեղկոմի հրամանը՝ դաշնակցական ավանտյուրիստական «Հայրենիքի Փրկության Կոմիտեի» տապալման և երկրում սովետական իշխանության վերականգնման մասին:

Ապրիլի 14-ին

Վ. Ի. Լենինի նամակը՝ «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի ու լեռնական Ռեսպուբլիկայի ընկեր կոմունիստներին»:

Վ. Ի. Լենինի նամակից.

«Ջերմ ողջունելով Կովկասի Սովետական Ռեսպուբլիկաներին, ես թույլ եմ տալիս ինձ հույս հայտնելու, որ նրանց սերտ միությունը կստեղծի ազգային համերաշխության մի այնպիսի օրինակ, որ անհնարին էր բուրժուազիայի օրոք, և անտեսանելի բուրժուական հասարակարգում:

Սակայն որքան էլ կարևոր լինի ազգային հաշտությունը կովկասյան ազգերի բանվորների ու գյուղացիների միջև, բայց անհամեմատ կարևոր է պահպանել և զարգացնել Սովետական իշխանությունը, որպես անցում դեպի սոցիալիզմ: *Խնդիրը դժվարին է, բայց միանգամայն իրագործելի: Նրա հաջող լուծման համար ամենից կարևորը այն է, որ Անդրկովկասի կոմունիստները հասկանային* իրենց դրության ուրույնությունը, իրենց ռեսպուբլիկաների դրությունը՝ ի տարբերություն Ռ. Ս. Ֆ. Ս. Ռ.-ի դրության և պայմանների, հասկանային անհրաժեշտությունը՝ ոչ թե բնօրինակել մեր տակտիկան, այլ մտածված կերպով ձևափոխել այն կոնկրետ պայմանների տարբերության համեմատ:

Սովետական ռեսպուբլիկան Ռուսաստանում քաղաքական և ռազմական դրությից չի ունեցել ոչ մի. տեղ: Ընդհակառակը նա տարիներ ու տարիներ մաքառել է ընդդեմ Անտանտի ռազմական արշավանքների և նրա բլոկադայի:

Կովկասի սովետական ռեսպուբլիկաները քաղաքական և ոչ մեծ չափով ռազմական օգնություն են ստացել Ռ. Ս. Ֆ. Ս. Ռ.-ից: Ահա է արմատական տարբերությունը:

Երկրորդ. ներկայումս այլևս վախ չպիտի լինի, որ Անտանտը ռազմական արշավանք կձեռնարկի և դինված օժանդակություն ցույց կտա վրաց, հայոց, ադրբեջանյան, Դաղստանի և լեռնականների սպիտակ գվարդիականներին:

Անտանտը «պատվից» Ռուսաստանում և այդ հանգամանքը նրան կհարկադրի համանորեն որոշ ժամանակ ավելի զգույշ լինել:

Երրորդ. Կովկասի ռեսպուբլիկաները էլ առավել գյուղացիական երկրներ են, քան Ռուսաստանը:

Չորրորդ. Ռուսաստանը տնտեսապես կտրված էր և զգալի չափով մնում է կտրված կապիտալիստական առաջավոր երկրներից. Կովկասը դյուրին և արագ կերպով կարող է ստեղծել «համաձեցություն» և ապրանքների փոխանակում կապիտալիստական Արևմուտքի հետ»...

«Չրնդօրինակել մեր տակտիկան, այլ ինքնուրույն կշռադատել ձեռ ուրույնության պատճառները, ձեռ պայմանները և արդյունքները. կիրառել ձեզ մոտ՝ ոչ թե տառը, այլ ոգին, իմաստը. 1917—1921 թ. թ. փորձի դասերը: *Տնտեսապես միանգամից հեն-*

վել տարանքների փոխանակության վրա կապիտալիստական արտադրանքի հետ, ժլատ չլինել. Թող տասնյակ միլիոն Թանկարժեք լեռնային մթերքներ անցնեն նրանց:

Անմիջապես ջանալ լավացնելու գյուղացիների դրությունը և սկսել էլեկտրիֆիկացիայի, ոռոգման խոշոր աշխատանքներ: *Ոռոգման գործն ամենից կարևորն է, նա ամենից շուտ կվերստեղծի երկիրը, կվերածնի նրան, անդարձ կթաղի անցյալը, կամրացնի անցումն դեպի սոցիալիզմ»:*

Ленин, Сочинения, հ. XXVI, էջ 191, 192:

Ապրիլի 28-ին

Սովետական Ռուսաստանի ժողկոմսովետից ստացվում է մեկ ու կես միլիոն ոսկի ռուբլի, որպես օգնություն Հայաստանի նորաստեղծ բանվորա-գյուղացիական կառավարության:

Մայիսի 8-ին

Հրապարակվում է ընկեր Ի. Վ. Ստալինի «Ազգային հարցի դրման շուրջը» հոդվածը:

Ի. Վ. Ստալինի հոդվածից.

«Ազգային հարցի այն դրումը, որ տվել են կոմունիստները, էապես տարբերվում է նրա այն դրումից, որին հետևում են II *ու* II½ *Ինտերնացիոնալի գործիչները, բոլոր և ամեն տեսակի «սոցիալիստական», «սոցիալ-դեմոկրատական», մենշևիկյան, էսէռական ու նման այլ պարտիաները:*

Առանձնապես կարևոր է նշել չորս հիմնական մոմենտներ, որպես ազգային հարցի նոր դրման ամենաբնորոշ տարբերիչ հատկանիշներ, որոնք սահման են դնում ազգային հարցի հին ու նոր ըմբռնման միջև:

Առաջին մոմենտը՝ *դա —ազգային հարցի՝ որպես մասի՝ ձուլումն է գաղութների ազատագրման ընդհանուր հարցի՝ որպես ամբողջի՝ հետ»:...*

«Երկրորդ մոմենտը՝ *դա՝ ազգերի ինքնորոշման իրավունքի ձապաղ լոզունգն է ազգերի ու գաղութների պետական անջատման, ինքնուրույն պետություն կազմելու իրավունքի ռևոլյուցիոն պարզ լոզունգով փոխարինելն է»:...*

«Երրորդ մոմենտը՝ ազգային-պաղուքային հարցի ու կապիտալի իշխանության հարցի, կապիտալիզմը տապալելու, պրոլետարիատի դիկտատուրայի հարցի միջև եղած կապը, օրգանական կապը հայտաբերելն է»։...

«Չորրորդ մոմենտը՝ դա— ազգային հարցի մեջ նոր տարր, ազգությունների փաստական (և ոչ թե միայն իրավական) հավասարեցման տարր մտցնելն է (օգնություն, աջակցություն հետամնաց ազգություններին՝ նրանցից առաջ անցած ազգությունների կուլտուրական ու տնտեսական մակարդակին հասնելու համար), որպես տարբեր ազգությունների աշխատավորական մասսաների միջև եղբայրական համագործակցության հաստատելու պայմաններից մեկը»։

Ի. Ստալին, Մարքսիզմը և ազգային պաղուքային հարցը, Պետհրատ, 1938, էջ 132, 133, 135, 136։

Մայիսի 21–ին

Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Ռազմահեղափոխական Կոմիտեն հայտարարում է ՀԽՍՀ բանվորա-գյուղացիական կառավարության կազմը։

Մայիսի 27–ին

«Կոմունիստ» թերթը վերանվանվում է «Խորհրդային Հայաստան»։

Մայիս

Մոսկվայում տեղի է ունենում Գյուղացիական գրողների համառուսական կոնֆերենցիա։

Հունիսի 10–ին

ՀԽՍՀ Ժողկոմխորհի որոշմամբ հիմնվում է Պետական Հրատարակչություն (Պետհրատ)։

Հուլիսի 15–ին

Ջանգեզուրը մաքրվում է հակահեղափոխական դաշնակ ավանտյուրիստներից։

Հուլիսի 20-ին

Հրապարակվում է դեկրետ Խորհրդային Հայաստանի վարչական բաժանման մասին։

Հուլիս

Ընկեր Ի. Վ. Ստալինի ելույթը Թիֆլիսի պարտկազմակերպության ժողովում՝ «Կոմունիզմի հերթական խնդիրների մասին Վրաստանում և Անդրկովկասում»։

Օգոստոսի 7-ին

Վախճանվեց Ալեքսանդր Ալեքսանդրովիչ Բլոկը։

Սեպտեմբերի 21-ին

ՀՍԽՀ ԺողկոմխորհԸ հրապարակում է դեկրետ՝ «Խորհրդային Հայաստանում անգրագիտության վերացման մասին»։

Սեպտեմբեր

Ղարսի խաղաղության կոնֆերանսը Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Տաճկաստանի միջև։

Սեպտեմբերի 28-ին

ՀՍԽՀ ԺողկոմխորհԸ դեկրետով թույլատրում է հիմնել Հայաստանի Օգնության Կոմիտե (ՀՕԿ)։

ՀՕԿ-ի հիմնադիրներ՝ Հ. Թումանյանի, Լեոյի, Դ. Դեմիրճյանի, Մ. Սարյանի, Հ. Հովհաննիսյանի, Նար-Դոսի, Ստ. Մալխասյանի, Ա. Կարինյանի, Ա. Տերտերյանի և ուրիշների ստորագրությամբ կոչ է հրապարակվում՝ ուղղված ամբողջ աշխարհի հայ աշխատավորությանը՝ Սովետական Հայաստանին օգնելու մասին։

Հոկտեմբերի 17—22-ը

Գումարվում է Համառուսական բաղխուս. աշխատողների համագումարը։ Համագումարում ելույթ է ունենում Վ. Ի. Լենինը։

Վ. Ի. Լենինի ելույթից.

«Աշխարհում մեծագույն քաղաքական հեղաշրջման խնդիրը լուծելուց հետո, մեր առաջ ծառացան այլ խնդիրներ —կուլտուրական խնդիրներ, որոնք կարելի է անվանել «փոքրիկ գործեր»։ Հարկավոր է մարսել այդ քաղաքական հեղաշրջումը, այն մատչելի

դարձնել բնակչության մասսաներին, ձգտել, որպեսզի այդ քաղաքական հեղաշրջումը մնա ոչ միայն իբրև դեկլարացիա»:...

«Իմ կարծիքով կան երեք գլխավոր թշնամիներ, որոնք այժմ կանգնած են մարդու առաջ, անկախ նրա գերատեսչական դերից, խնդիրներ, որոնք կանգնած են քաղլուսաշխատողի առաջ, եթե այդ մարդը կոմունիստ է, իսկ այդպիսիները շատերն են: Երեք գլխավոր թշնամիները, որոնք կանգնած են նրանց առջև հետևյալներն են. առաջին թշնամին կոմունիստական ամբարտավանությունն է, երկրորդը— անգրագիտությունը և երրորդը— կաշառակերությունը»:...

«Երկրորդ թշնամու— անգրագիտության վերաբերյալ ես կարող եմ ասել, որ քանի դեռ մեր երկրում կա այնպիսի մի երևույթ, ինչպես անգրագիտությունը, քաղաքական լուսավորության մասին չափազանց դժվար է խոսել: Այդ քաղաքական խնդիր չէ, այդ մի պայման է, առանց որի չի կարելի խոսել քաղաքականության մասին: Անգրագետ մարդը քաղաքականությունից դուրս է, նրան սկզբից պետք է սովորեցնել այբուբենը: Առանց դրան քաղաքականություն չի կարող լինել, առանց դրան կան միայն լուրեր, բամբասանքներ, հեքիաթներ, նախապաշարմունքներ, բայց ո՛չ քաղաքականություն»:...

«Կուլտուրական խնդիրը չի կարող այնպես արագ լուծվել, ինչպես քաղաքական և ռազմական խնդիրները: Պետք է հասկանալ, որ առաջշարժման պայմանները հիմա այն չեն: Ճգնաժամի սրման էպոխայում քաղաքականապես կարելի է հաղթել մի քանի շաբաթում: Պատերազմում կարելի է հաղթել մի քանի ամսում, իսկ կուլտուրապես հաղթել այդպիսի ժամկետում անկարելի է, ըստ գործի բուն էության այստեղ ավելի երկար ժամկետ է հարկավոր, և պետք է հարմարվել այդ ավելի երկար ժամկետին, հաշվարկելով յուր աշխատանքը, ցուցաբերելով առավելագույն համառություն, հաստատակամություն և սիստեմայնություն: Առանց այս հատկությունների քաղաքական լուսավորությանը ձեռնամուխ լինել անգամ չի կարելի: Իսկ քաղաքական լուսավորության արդյունքները կարելի է չափել միայն տնտեսության բարելավումով»:

Ленин, Сочинения, հ. XXVII, էջ 47, 50, 51, 51—52:

Հոկտեմբերի 18—21-ը

Մոսկվայի Մամուլի տանը գումարվում է Պրոլետարական Գրողների առաջին Համառուսական համագումարը։

Հոկտեմբերի 19-ին

Հիմնվում է Հայաստանի Հնությունների և Գեղարվեստի Պահպանման Կոմիտե։

Հոկտեմբերի 20-ին

Հրապարակվում է ՍՍԽՄ Ժողկոմսովետի որոշումը Լազարյան ճեմարանը «Սովետական Հայաստանի Կուլտուրայի Տուն» վերանվանելու և այն իր կուլտուրական արժեքներով Սովետական Հայաստանի կառավարությանը հանձնելու մասին։

Հոկտեմբերի 26-ին

«Խորհրդային Հայաստան» թերթում հրապարակվում է դեկրետ «Գրական գեղարվեստական աշխատողների ապահովության մասին»։

Դեկրետից.

«Գնահատելով ժողովրդական մասսաների լուսավորության գործում մայրենի գրականության և արվեստի բարձր նշանակությունը և կամենալով խրախուսել մասսաների ազատագրման գործին սպասարկող գրական-գեղարվեստական ընթացիկ աշխատանքը, ՀՍԽՀ Ժողկոմների Խորհուրդը որոշում է՝

1. Հիմնել Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատին կից գրական-գեղարվեստական ֆոնդ։

2. Մինչև առաջիկա հունվարի 1-ը հատկացնել այդ նպատակին մեկ միլիարդ ռուբլի (խորհրդային դրամ)։

3. Տալ ընդհանուր խորհրդային պարեն— հարվածային փայ և ամսական 500.000 ռուբլի թոշակ Հայաստանում ապրող գրական-գեղարվեստական վաստակավոր գործիչներին, տարածելով հատկացրած թոշակի վրա առաջիկայում ընդունվելիք բոլոր ընդհանուր հավելումների չափերը»։

«Խորհ. Հայաստան», 26 հոկտ., 1921։

Նոյեմբերի 6—7-ին

«Պրավդա»-յում հրապարակվում է ընկեր Ի. Վ. Ստալինի հոդվածը՝ «Հոկտեմբերյան ռևոլյուցիան և ռուսական կոմունիստների ազգային քաղաքականությունը»։

Ի. Վ. Ստալինի հոդվածից.

«Խաղաղություն, ազգարարային հեղաշրջում և ազգությունների ազատություն— սրանք են այն երեք հիմնական մոմենտները, որոնք ռուսական պրոլետարիատի կարմիր դրոշի շուրջը հավաքեցին անծայրածիր Ռուսաստանի ավելի քան քսան ազգությունների ժողովուրդներին։

Այստեղ առաջին երկու մոմենտի մասին խոսելու անհրաժեշտություն չկա— դրանց մասին գրականության մեջ արդեն բավականաչափ խոսվել է, դե՛հ նրանք, ասենք, իրենք են իրենց մասին խոսում։ Ինչ վերաբերում է երրորդ մոմենտին—ռուսական կոմունիստների ազգային քաղաքականությանը,— ապա նրա կարևորությունը, հավանորեն, դեռ լիովին չի գիտակցված։ Ուստի, ավելորդ չի լինի նրա մասին մի քանի խոսք ասել։

Սկսենք նրանից, որ ՌՍՖՍՌ 140 միլիոն բնակչությունից (դուրս եկած Ֆինլանդիան, Էստոնիան, Լատվիան, Լիտվան, Լեհաստանը) վելիկոռուսները կազմում են 75 միլիոնից ոչ ավելի, իսկ մնացած 65 միլիոնը ներկայացնում են ոչ-վելիկոռուսական ազգությունները։

Այնուհետև, այս ազգությունները բնակվում են գլխավորապես ծայրամասերում, այն կետերում, որոնք ռազմական տեսակետից ամենից ավելի են կարևոր, ըստ որում՝ այս ծայրամասերը հարուստ են հումքով, վառելիքով, պարենային մթերքներով։

Վերջապես, այս ծայրամասերն արդյունաբերական ու ռազմական տեսակետից ավելի քիչ են զարգացած (կամ բնավ զարգացած չեն), քան կենտրոնական Ռուսաստանը, որի հետևանքով առանց կենտրոնական Ռուսաստանի ռազմա-տնտեսական օգնության նրանք անզոր են պաշտպանել իրենց ինքնուրույն գոյությունը, այնպես, ինչպես որ կենտրոնական Ռուսաստանն էլ վիճակի չէ պահպանելու իր ռազմա-տնտեսական հզորությունն առանց ծայրամասերի վառելիքա-հումքային ու պարենային օգնության։

Այս հանգամանքները, պլյուս կոմունիզմի ազգային ծրագրի

Տայտնի դրույթները, որոշել են ռուսական կոմունիստների ազգային քաղաքականության բնույթը»:

Ի. Ստալին, Մարքսիզմը և ազգային-գաղութային հարցը, Պետհրատ, 1938, էջ 139—140:

Նոյեմբերի 13-ին

Էսպերանտոյում տեղի է ունենում Հայաստանի Արվեստների Տան հիմնադրումը:

Նոյեմբերի 20-ին

Կազմակերպվում է Արվեստների Տան հանդիսավոր բացումը: Բացման երեկոն նվիրվում է վ. Տերյանին:

Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանի հեռագրի համաձայն Մոսկվայից բերված վ. Տերյանի դրագարանը հաստատվում է Արվեստի Տանը:

Ալ. Մյասնիկյանի հեռագիրը.

«Տերյանի ձեռագրերը պահվում են նրա կնոջ՝ Սուսաննա Տերյանի մոտ, որը դրանք հանձնում է Հայկական ՍՍՌ կառավարությանը, որովհետև դրանք կարող են և պետք է լինեն ոչ թե առանձին անհատների՝ այլ պետության սեփականությունը»:

Որոշվում է Տերյանի մահվան տարեդարձի առթիվ (1922 թ. հունվարի 7) հրատարակել նրա երկերի առաջին հատորը:

Նոյեմբերի 16-ին

Հրապարակվում է ՀՍԽՀ ժողկոմխորհի դեկրետը՝ նոյեմբերի 29-ը, Հայաստանում Սովետական կարգերի հաստատման օրը, տոնական օր հայտարարելու մասին:

Նոյեմբերի 22-ին

«Պրավդա»-յում հրապարակվում է վ. Ի. Լենինի հոդվածը՝ «Տղայանդավոր գրքույկ», Արկադի Ավերչենկոյի գրքի մասին:

Դեկտեմբեր

Բաժում է հասնում Միջապետքի հայ գաղթականների առաջին խումբը:

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ.

Չափածո

1. Հ. Հակոբյան.— *Կարմիր ալիքներ, հրատ. «Պրոլետ-կուլտ», Թիֆլիս:*

1922

Հունվարի 26-ին

ՀԿ(բ)Պ I համագումարի բացումը:

Հունվարի 27-ին

Բացվում է Սովետական Հայաստանի առաջին Պետական Թատրոնը:

Բեմադրվում է Գ. Սունդուկյանի «Պեպո»-ն:

Հունվարի 30-ին

ՀՍՍՌ Սովետների առաջին համագումարի բացումը:

Բացման խոսք է ասում ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը:

Մարտի 4-ին

ՀՍԽՀ ժողկոմխորհը ընդունում է դեկրետ նոր ուղղագրության մասին:

Մարտի 5-ին

«Իզվեստիա»-յում տպագրվում է Վլ. Մայակովսկու «Ժողովամոլները» բանաստեղծությունը:

Մարտի 6-ին

Վ. Ի. Լենինը զեկուցում է «Սովետական Ռեսպուբլիկայի միջազգային և ներքին դրության մասին» Մետալիստների Կոմունիստական ֆրակցիայի համառուսական համագումարի նիստում:

Զեկուցման մեջ խոսվում է Վլ. Մայակովսկու «Ժողովամոլները» բանաստեղծության մասին.

«Երեկ ես պատահաբար կարդացի «Իզվեստիա»-յում Մայակովսկու բանաստեղծությունը քաղաքական թեմայով: Ես չեմ

պատկանում նրա բանաստեղծական տաղանդի երկրպագուների թվին, թեև լիապես ընդունում եմ իմ անտեղյակությունն այդ բնագավառում։ Բայց վաղուց ես չէի ստացել այդպիսի բավականություն՝ քաղաքական և ադմինիստրատիվ տեսակետից։ Իր բանաստեղծության մեջ նա անխնա ծաղրում է ժողովները և ծիծաղում կոմունիստների վրա, որ նրանք շարունակ ժողով են անում, հա՛ ժողով են անում։ Զգիտեմ ինչպես է պոեզիայի տեսակետից, բայց քաղաքականության տեսակետից երաշխավորում եմ, որ դա միանգամայն հիշա է»։

Ленин, Сочинения, հ. XXVII, էջ 177.

Մարտի 12-ին

Անդրկովկասյան Հանրապետությունների կենտգործկոմների միասին կոնֆերենցիան կազմում է ԱՍԽՀ Ֆեդերացիա։

Մարտի 18-ին

Վ. Ի. Լենինը գրում է Ի. Ի. Ստեպանովի „Электрификация Р.С.Ф.С.Р. в связи с переходной фазой мирного хозяйства“ *գրքի առաջաբանը։*

Առաջաբանից.

«Հեղինակին հաջողվել է տալ դժվարագույն և կարևորագույն հարցերի հիանալիորեն հաջող շարադրանք։ Հեղինակը շատ լավ է արել, որ վճռել է գիրքը գրել ոչ թե ինտելիգենտների համար (ինչպես մեզ մոտ ընդունված է գրել գրքերը՝ ընդօրինակելով բուրժուական գրողների վատագույն մաներաները), այլ աշխատավոր մասսայի համար, շարքային բանվորների և գյուղացիների համար»...

«... Եթե մեր բոլոր պրակտիկ-մարքսիստները բոլորին ձանձրացրած լրագրային և ժուռնալային քաղաքական ճռճռոցների վրա իրենց ուժերը ծախսելու փոխարեն նաեն այդպիսի ձեռնարկներ կամ դասագրքեր գրելու՝ առանց բացառության՝ հասարակական բոլոր հարցերի մասին, ապա մենք չէինք ունենա այնպիսի խայտառակություն, որ պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանությունը նվաճելուց համարյա հինգ տարի անց, ևրա՝ պրոլետարիատի պետական դպրոցներում և համալսարաններում

բուրժուական հին գիտնականները երիտասարդությանը սովորեցնում են (ավելի ճիշտ՝ այլասերում են) բուրժուական հին հնոտին»։

Ленин, Сочинения, հ. XXVII, էջ 195։

Մարտի 27-ին

ՌԿ(բ)Պ XI համագումարի բացումը։

Համագումարում Վ. Ի. Լենինը հանդես է գալիս քաղաքական հաշվետվությամբ։ Հաշվետվության մեջ հիշատակվում է ՆԷՊ-ի հետ կապված մի քանի բանաստեղծների խուճապային տրամադրության մասին։

«... Նահանջի ժամանակ ամենավտանգավոր բանը— դա խուճապն է։ Եթե ամբողջ բանակը (այստեղ ես խոսում եմ փոխաբերական իմաստով) նահանջում է, այստեղ չի կարող լինել այնպիսի տրամադրություն, երբ բոլորն առաջ են գնում։ Այստեղ արդեն ամեն մի քայլափոխում դուք կհանդիպեք որոշ չափով ճնշված տրամադրության։ Մեզ մոտ նույնիսկ պոետներ են եղել, որոնք գրել են, թե իբր՝ Մոսկվայում և՛ սով է, և ցուրտ, մինչդեռ առաջ մաքուր էր, գեղեցիկ, հիմա առևտուր է, սպեկուլյացիա»։ Մեզ մոտ մի ամբողջ շարք այդպիսի բանաստեղծական երկեր կան...»։

Ленин, Сочинения, հ. XXVII, էջ 239։

Ապրիլի 22-ին

ՍՍՌՄ Կենտգործկոմի Նախագահությունը Դեմյան Բեդնուն պարգևատրում է Կարմիր Դրոշի շքանշանով։

Այդ առթիվ Մ. Ի. Կալինինը Դեմյան Բեդնուն գրում է.

«Մեծ է նրանց ծառայությունը, ովքեր Կարմիր Բանակի մարտիկներին զինել են ռևոլյուցիոն գիտակցության զենքով, ովքեր նրանց ոգևորել են դժվարին և փառավոր սխրագործությունների։ Ձեր առանձնապես հատուկ և բացառիկ ծառայությունները՝ որպես մեծ ռևոլյուցիայի բանաստեղծի, ըստ արժանվույն գնահատվել են ռեսպուբլիկայի բանվորա-գյուղացիական մասսաների և հատկապես քաղաքացիական կռիվների մասնակիցների կողմից։ Ձեր երկերը, պարզ և հասկանալի են յուրաքանչյուրին, ուստի և, արտա-

սովոր ուժել են, ռևոլուցիոն կրակով վառել են աշխատավորների սրտերը և հոգու արիություն են ամրացրել պայքարի ամենադժվարին րոպեներին։

Ասպատամբված պրոլետարիատի տանջանքները, պայքարը, սխրագործությունները ու նվաճումները Ձեր մեջ գտել են իրենց արժանավոր բանաստեղծին։ Հանձին Ձեզ, պոեզիան, գուցե առաջին անգամ պատմության մեջ, այդքան վառ կերպով իր ճակատագիրը կապել է իր ազատագրության համար պայքարող մարդկության ճակատագրի հետ և փոքրաթիվ ընտրյալների պոեզիայից պարձել է ստեղծագործություն մասսաների համար։

Ձեր ստեղծագործությունը արիացել և ամրացել է ռևոլուցիոն պրոլետարիատի աճման և նրա կամքի կուռման հետ միասին։

Նշելով Ձեր բացառիկ գեղարվեստական-գրական ծառայությունները՝ ինչպես պրոլետարական ուժերի կուտակման ծանր ժամանակաշրջանում՝ մինչև հաղթական Հոկտեմբերյան Ռևոլուցիան, այնպես և ռուսական և համաշխարհային կոնտրռևոլուցիայի դեմ պայքարի անհավատալիորեն ծանր հնգամյակում, Համ. կենտգործկոմի Նախագահությունը հույս ունի, որ ռևոլուցիոն պայքարի ապագա անխուսափելի փորձությունները ևս, Ձեզ կգտնեն ռևոլուցիայի բանաստեղծի փառավոր մարտական դիրքի վրա, ժողովրդին նվիրված ստեղծագործության լիակատար ծաղկման մեջ»։

„Известия", 22 ապրիլի, 1922»

Մայիսի 28–ին

Թիֆլիսում տեղի է ունենում Վ. Պ. Գ. Ա. Հայկական սեկցիայի հիմնադրման ժողովը Հ. Հակոբյանի նախագահությամբ։

Հունիսի 1–ին

Թիֆլիսի Գեղարվեստի Տանը Հ. Հակոբյանի նախագահությամբ տեղի է ունենում Պրոլետ Գրողների Հայկական սեկցիայի առաջին նիստը։ Ընտրվում է վարչություն Հ. Հակոբյանի նախագահությամբ։

Հաստատվում է Սեկցիայի ծրագիրը և կանոնադրությունը։

Որոշվում է հրատարակել «Դարբնոց» ամսագիրը։

Հունիսի 9-ին

Երևանում բացվում է Հեղափոխական մոքի և գրչի ցուցահանդեսը:

Հունիսի 14-ին

Հրապարակվում է «Երեքը» պրական խմբակի՝ բանաստեղծներ Ե. Չարենցի, Ա. Վշտունու և Գ. Աբովի «Դեկլարացիան»:

Հուլիս

Թիֆլիսում Հ. Հակոբյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Դարբնոց» պրական-գեղարվեստական քննական ամսագրի առաջին համարը՝ օրգան Վրաստանի Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի Հայկական սեկցիայի:

Խմբագրականից.

«Այսօր մենք հրապարակ ենք գալիս կուռ ու կազմակերպված դեռ պրոլետարական գրողների օրգան «Դարբնոց»-ով, որի շուրջը ժողովված են թե հին և թե նոր պրոլետարական գեղարվեստական գրողներ և որոնք նոր խոսք ունեն ասելու մեր մասսաներին:

Ի՞նչ է մեր նպատակը. «Դարբնոց»-ի միջոցով դարբնել հայ պրոլետարիատի ամբողջական կյանքը, արտացոլել նրա կռվական ապրումները, նրա հոգեբանական իմպուլսները»:

«Դարբնոց»-ին աշխատակցում են Հ. Հակոբյանը («Մեր քննադատների քննադատությունը», «Գրական մոտիվներ», «Աստվածները խոսեցին»), Սրապին («Գարնան ծիլեր», «Փոքրանքը»), Հ. Ա. դաբաբը, Ծ. Թորգոմյանը («Ո՞վ է մեղավոր»):

«Դարբնոց»-ը դադարում է 1923 թվին, երեք համարից հետո:

Սեպտեմբեր-հոկտեմբեր

«Պրավդա»-յում դիսկուսիա է ծավալվում «Պրոլետարական կուլտուրայի» և Պրոլետկուլտի մասին: Դիսկուսիան սկսվում է Պրոլետկուլտի ղեկավար Վ. Պլետնևի «Իդեոլոգիական ֆրոնտում» հոդվածով: Նրա հետ բանավեճի է բռնվում Ն. Կրուպսկայան իր «Պրոլետարական իդեոլոգիան և Պրոլետկուլտը» հոդվածով:

Պլեհանովը իր պատասխան հոդվածում ընդունելով Պրոլետկուլտի սխալները, փորձում է պաշտպանել իր դիրքերը: Դիսկուսիան ավարտվում է Յա. Յակովլևի «Պրոլետարական կուլտուրայի մասին» հոդվածով, որի մեջ ծանրանում քննադատության են ենթարկվում Պրոլետկուլտի սխալները:

Վ. Ի. Լենինը անդրադառնալով Վ. Պլեհանովի և Յա. Յակովլևի հոդվածներին՝ Պրոլետկուլտը համարում է պրոլետարական կուլտուրայի ոգուն խորթ ուղղություն:

Հոկտեմբերի 29-ին

Կապա գյուղում սկսվում են Շիրակի ջրանցքի կառուցման աշխատանքները:

Նոյեմբերի 7-ին

Հոկտեմբերյան revolutsiայի 5-րդ տարեդարձի օրը Երևանում տեղի է ունենում Հանրային Մատենադարանի հանդիսավոր բացումը:

Նոյեմբերի 24-ին

Մոսկվայի Մամոնի տանը վ. Բրյուսովը զեկուցում է «Ռուսական պոեզիայի երեկը, այսօրը և վաղը» (սիմվոլիզմ, ֆուտուրիզմ, պրոլետարական պոեզիա) նյութի մասին:

Նոյեմբերի 29-ին

Հայաստանում առվետական կարգերի հաստատման 2-րդ տարեդարձի օրը հանդիսավոր կերպով բացվում է Էջմիածնի ջրանցքը:

Նոյեմբեր

Երևանում լույս է տեսնում «Մուրճ» պրական-գեղարվեստական, քննադատական պարբերականի առաջին համարը:

Պատ. խմբագիր Ա. Վշտունի:

Խմբագրականից.

«Մուրճ»-ը հրատարակվում է ոչ թե սիրացու էսթետների հոգեկան բավարարման համար, այլ կռելու, կոփելու աշխատավո-

րովթյան գեղարվեստական գիտակցությունը, դուրս քաշելու անառողջությունից և լքումից այն բոլոր աշխատավոր շնորհունակ գրողներին, բանաստեղծներին, որոնք մինչև այժմ հնարավորության չեն ունեցել դուրս գալու հրապարակ, մարզվելու, կրթվելու և ուսումնասիրելով գրական անցյալ և ներկա շարժումները գիմ գնելու իրենց շահերի և տիրապետության օտար գրական դպրոցների»:

«Մուրճ»-ին աշխատակցում են՝ Ա. Վշտունին («1917—Հոկտեմբեր»), Ն. Զարյանը «Շիրակի դաշտերում», «Ով է հիշում»), Սիրասը («Ծռացող կաթսայից» հատված վեպից):

«Մուրճ»-ը դադարում է 1923 թվին, 5 համարից հետո:

Դեկտեմբերի 10-ին

Բաքվում բացվում է Սովետների Անդրկովկասյան առաջին համագումարը: Համագումարը ընդունում է ԱՍՖՍՌ կոնստիտուցիան:

Դեկտեմբերի 24-ին

Երևանում հիմնադրվում է Հայաստանի Պրոլետարական Գրողների Միությունը:

Հաստատվում է Միության կանոնադրությունը:

Միության նախագահ է ընտրվում Ազատ Վշտունին:

ՀՊԳԱ Գործադիր մարմինը Ազատ Վշտունու հրատարակած «Մուրճ» պարբերականը դարձնում է իր օրգանը:

Դեկտեմբերի 30-ին

ՍՍՌՄ Սովետների Առաջին համագումարը որոշում է ընդունում Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության— ՍՍՌՄ կազմելու մասին:

Դեկտեմբեր

Լույս է տեսնում «Նորք» գրական, գիտական և քննադատական հանդեսի առաջին գիրքը:

Խմբագրականից.

««Նորք»-ը պիտի հանդես բերի մեր անելիքները քաղաքական,

անտեսական ու կուլտուրական բնագավառներում և լուսաբանի մեր անցյալը մարքսիստորեն...:

Մեր հին գրականությունը հանգչելու վրա է, և նոր գրական դեմքեր են վառվում: Բնականաբար մեր համակրանքը լինելու է նրանց կողմը, որոնք նոր աչքով կնայեն աշխարհի և կյանքի վրա, որոնց համար զուր չեն անցել վերջին տարիների արյունոտ վայրիվերումները, որոնք տեսնում են գալիքը և նշմարում նրա տարերը նոր հաստատվող կենցաղի մեջ»:

«Նորք»-ին աշխատակցել են՝ Լեոն («Կոմունիզմը հայոց պատմության մեջ», «Հիշողություններ Հ. Թումանյանի մասին»), Ն. Մառը («Հաբեթականները»), Դ. Դեմիրճյանը («Քաջ Նազար»), Մ. Աբեղյանը («Տաղաչափության զարգացումը նորագույն բանաստեղծությունների մեջ»), Հ. Հակոբյանը («Մանկության և պատանեկության»), Ա. Տեր-Գրիգորյանը («Վ. Տերյան»): «Նորք»-ը դադարում է 1928 թվին:

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Չափածո

1. Հ. Հակոբյան.— «Հեղափոխական բեմ», Պետհրատ, Թիֆլիս:
2. Ե. Չարենց.— «Երկերի ժողովածու», 1-ին հատոր, Մոսկվա:
3. Ե. Չարենց.— «Երկերի ժողովածու», 2-րդ հատոր, Մոսկվա:
4. Ա. Տեր-Հովնանյան.— «Կարոտի երգեր»:
5. Ա. Տեր-Հովնանյան.— «Դեպի ապագան»:
6. Արշ. Արշարունի.— «Ճերմակ վալս», Մոսկվա:
7. Արշ. Արշարունի.— Sophie (Լիրիկա), Մոսկվա:
8. Արշարունի.— «Հրուտ արփի» (պոեմներ), Մոսկվա:
9. «3»— գրական բյուլետեն «Երեքի» (Չարենց, Վշտունի, Աբով), Երևան:

Պարբերական մամուլ

1. «Բանբեր», Հայաստանի Գիտական Ինստիտուտի, գիրք Ա և Բ, Էջմիածին:

1923

Հունվարի 2-ին

«Պրավդա»-յում հրապարակվում է Վ. Ի. Լենինի «Էջ օրագրից» հոդվածը։

Վ. Ի. Լենինի հոդվածից.

«Այն ժամանակ, երբ մենք շատախոսում էինք պրոլետարական կուլտուրայի մասին և բուրժուական կուլտուրայի հետ նրա ունեցած հարաբերության մասին, փաստերը մեզ հրամցնում են այնպիսի թվեր, որոնք ցույց են տալիս, որ նույնիսկ բուրժուական կուլտուրայի հարցում մեզ մոտ դործերը շատ թույլ են։ Պարզվեց, որ ինչպես և կարելի էր սպասել, ընդհանուր պատմությունից մենք դեռ շատ ենք եղ մնացել և նույնիսկ մեր առաջադիմությունը, ցարական ժամանակների (1897 թ.) հետ համեմատած, դուրս եկավ շատ դանդաղ։ Դա սպառնալի նախադասություն է և նախատինք է հանդիսանում նրանց հասցեին, ովքեր սովոնել և սովորում են «պրոլետարական կուլտուրայի» էմպիրյաններում»...

«... Ոչ մի տեղ ժողովրդական մասսաներն այնպես շահագրգռված չեն իսկական կուլտուրայով, որքան մեզ մոտ. ոչ մի տեղ այդ կուլտուրայի հարցերը չեն դրվում այնքան խորը և այնքան հեռևողականորեն, որքան մեզ մոտ, ոչ մի տեղ, ոչ մի երկրում պետական իշխանությունը չի գտնվում բանվոր դասակարգի ձեռքում, որն իր մասսայով հիանալի հասկանում է իր, ևս չէի ասի՝ կուլտուրականության, այլ կասեի դրագիտության թերությունները, ոչ մի տեղ նա պատրաստ չէ բերելու և չի բերում այնպիսի զոհեր՝ լավացնելու իր դրությունն այդ տեսակետից, որքան մեզ մոտ»։

Ленин, Сочинения, т. XXVII, էջ 387, 388։

Փետրվարի 3-ին

Հայաստանի Սովետների առաջին համագումարն ընդունում է ՀՍԽՀ հիմնական օրենքը՝ Սահմանադրությունը։

Փետրվարի 4-ին

Պետթատրոնում Հայաստանի Պրոլետարական Գրողների Աս-

ցիացիայի կազմակերպման առթիվ տեղի է ունենում հանդիսավոր նիստ։

Փետրվարի 6—10-ը

Տեղի է ունենում մամուլի աշխատողների Համառուսական IV Համագումարը։

Փետրվարի 25-ին

Թիֆլիսում լույս է տեսնում «Մարտակոչ» թերթի 1-ին համարը։

Մարտի 2-ին

«Պրավդա»-յում հրապարակվում է Վ. Ի. Լենինի հոդվածը «Լավ է քիչ, բայց լավ»։

Վ. Ի. Լենինի հոդվածից.

*«Մեր պետապարատի բարելավման հարցում Բանգյուղտեսչու-
թյունն, իմ կարծիքով, չպետք է քանակի ետևից ընկնի և շըտապի։
Մենք այնքան քիչ ենք կարողացել մինչև այժմ մտածել ու հոգալ
մեր պետապարատի որակի մասին, որ օրինական կլինի մտահո-
գությունը նրա առանձնապես լուրջ նախապատրաստման մասին,
բանգյուղտեսչության մեջ իրոք ժամանակակից որակի մարդկային
մատերիալ կենտրոնացնելու մասին, այսինքն՝ արևմտա-եվրոպա-
կան լավագույն նմուշներից ետ չմնացող։ Իհարկե, սոցիալիստա-
կան ռեսպուբլիկայի համար այդ պայմանը շատ համեստ է։ Բայց
առաջին հինգ տարին մեր գլուխը բավական լցրել է թերահավա-
տությամբ և սկեպտիցիզմով։ Մենք ակամա հակված ենք տոգոր-
վելու այդ նրանց նկատմամբ, ովքեր չափազանց շատ և չափա-
ղանց հեշտ են ճամարտակում, օրինակ՝ «պրոլետարական» կուլ-
տուրայի մասին. մեզ համար սկզբում թերևս բավական է բուր-
ժուական իսկական կուլտուրան, մեզ համար սկզբում լավ կլինի
առանց մինչբուրժուական կարգի կուլտուրաների առանձնապես
թունդ տիպերի, այսինքն չինովնիկական կամ ճորտատիրական
կուլտուրաների և այլն։ Կուլտուրայի հարցերում շտապողականու-
թյունն ու շփերթությունն ամենից վտանգավորն են։ Պետք է, որ մեր*

երիտասարդ գրականագետներից և կոմունիստներից շատերն այս լավ պահեին իրենց մտքում»:

Ленин, Сочинения, հ. XXVII, էջ 406:

Մարտի 3-ին և 19-ին

Թիֆլիսի Հայարտանը Դ. Դեմիրճյանը զեկուցում է երաժշտության և «Հայ թատրոնի ներկա մոմենտի մի քանի հրատապ խնդիրների» մասին:

Մարտի 13-ին

ՀԿ(բ)Պ II համագումարի բացումը:

Մարտի 22-ին

Հայ-պրոգրամի դահլիճում կազմակերպվում է գրողների առաջին ասուլիսի երեկոն:

Մարտի 23-ին

Թիֆլիսի Հայարտանը զեկուցում է տրվում «Վրաց նորագույն բանաստեղծության» նյութի մասին:

Մարտի 23-ին

Վախճանվեց Հովհաննես Թումանյանը:

Մարտի 30-ին

Մ. Սարյանի, Մ. Մանվելյանի, Ե. Չարենցի, Կ. Հալաբյանի, Տ. Հախումյանի և ուրիշների նախաձեռնությամբ Երևանում հիմնվում է «Գրականության և արվեստի դիսկուսիոն ակումբ», որը կազմակերպում է մի քանի դասախոսություններ. նույն տարին էլ դադարում է:

Մարտ

Մոսկվայում լույս է տեսնում «Քուրա» գրական-գեղարվեստական, սատիրական հանդես՝ «Օրգան պրոլետարական ստեղծագործության»:

Խմբագրականից.

«Ով ունի պրոլետարական թափանցող միտք, ում կրծքում բաբախում է անկեղծ ու զգայուն սիրտ, ով վառվում է ստեղծագործական պայքարի համար,— թող գա ասպարեզ:

Թերահավատները, քամելիոններն ու երերվողները՝ հեռու մեդանից:

«Քուրան» աներեր ու հավատով լի պետք է ընթանա պրոլետարական ստեղծագործության պայքարի տենչերով՝ քաղքենի ըմբռնումներով հարուստ հայ իրականության մեջ, այն խոր համոզումներով.— որ ապագան մերն է»:

«Քուրա» № 1, 1923:

Մայիսի 7-ին

Թիֆլիսի Հայարտանը կազմակերպվում է Լ. Սաղաթելյանի «Մի կտոր հողի համար» պիեսի գրական դատը:

Ապրիլի 10-ին

Երևանում «Ռուսական արդի պոեզիան» նյութի մասին դասախոսություն է կարդում Ե. Չարենցը:

Ապրիլի 17-ին

ՌԿ(բ)Պ XII համագումարի բացումը:

Ապրիլ

Լույս է տեսնում Դմ. Ֆուրմանովի «Չապաևը»:

Հուլիսի 6—7-ին

ՍՍՌՄ Կենտգործկոմի II սեսիան ընդունում է ՍՍՌ Միության Կոնստիտուցիան:

Նոյեմբերի 2-ին

Թիֆլիսի Հայարտանը կազմակերպվում է Աղ. Վշտունու „Neo-Orientalia" *և «Հուզանք ու Զանգ» բանաստեղծությունների ժողովածուների գրական դատը:*

Դեկտեմբերի 17-ին

Մոսկվայի Մեծ Թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր նիստ նվիրված Վ. Յա. Բրյուսովի ծննդյան 50-ամյակին:

Հոկտեմբերի 21-ին

Սկսվում են Երևանի առաջին հիդրոկայանի կառուցման աշխատանքները:

Հոկտեմբերի 30-ին

Երևանի Բանվորական Ակումբում կազմակերպվում է գրական դիսպուտ՝ «Նորագույն պոեզիայի պահանջները» նյութի շուրջը:

Զեկուցում է Գ. Աբովը.

Նոյեմբերի 3-ին

Թիֆլիսի Հայարտանը կազմակերպվում է Գ. Աբովի «Դանակը բկին» գրքի գրական դատը:

Նոյեմբերի 5-ին

Երևանի Բանվորական Ակումբում բացվում է գեղարվեստի աշխատողների Համահայաստանյան համագումարը:

Նոյեմբերի 10-ին

Թիֆլիսի Հայարտանը կազմակերպվում է աուդիսի երեկո՝ Արագու «Պատմվածքներ»-ի շուրջը:

Նոյեմբերի 21-ին

Երևանում հիմնադրվում է Պեալուսակինո (Հետագայում՝ Հայկինո, Հայֆիլմ):

Դեկտեմբերի 2-ին

Թիֆլիսի Պետական Օպերային թատրոնում տեղի է ունենում Հ. Հակոբյանի գրական գործունեության 30-ամյակին նվիրված հանդիսավոր երեկո: Տրվում են զեկուցումներ Հայերեն, ռուսերեն, վրացերեն և ադրբեջաներեն լեզուներով:

Ա. Վ. Լունաչարսկու ողջույնը Հ. Հակոբյանին.

«Ընկեր Հակոբյանին,

Շատ ուշ իմացա Ձեր հոբելյանի մասին: Ներողություն եմ Ձեր ձեռքը: Ողջունում եմ և ցանկանում Ձեր պոետական ու քաղաքացիական գործունեության շարունակությունը»:

Դեկտեմբերի 30-ին

Երևանի Պետթատրոնում նշվում է Հ. Հակոբյանի գրական գործունեության 30-ամյակը: Վրաստանի և Հայաստանի կառավարությունների կողմից Հոբելյարին շնորհվում է ժողովրդական բանաստեղծի կոչում:

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Գափաձո

1. Հ. Հակոբյան.— Երկու պոեմ, Թիֆլիս:
2. Ե. Չարենց.— Բոլորին, բոլորին, բոլորին— երեք ռապֆո պոեմ, Երևան:
3. Ե. Չարենց.— Պանդոզուանա, Երևան:
4. Ֆ. Չարենց.— Պոեմներ, Երևան:
5. Ա. Վշտունի.— Հուզանք ու Ջանգ, Ալեք-Պոլ:
6. Ա. Վշտունի.—Neo orientalia.
7. Գ. Աբով.— Դանակը բակին, Մոսկվա:
8. Տ. Հախումյան.— I. (բանաստեղծությունների ժողովածու), Երևան:

Արձակ

1. Ստ. Զորյան.— Յանկապատ, հատ. 2-րդ, Վաղարշապատ:
2. Արապի.— Պատմվածքներ, Թիֆլիս:
3. Եփրեմ Տեր-Մարտիրոսյան.— Քաղցի օրերին:
4. Ա. Տեր-Հովհաննյան.— Նախօրյակին:

Իրականության պատմություն, տեսություն և ինձնադատություն

1. Ալ. Մարտունի.— Միքայել Նալբանդյան:
2. Ալ. Մարտունի.— Հովհաննես Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքը, Թիֆլիս:
3. Մ. Աբեղյան.— Համառոտություն հայ ժողովրդական վեպի և հին գրականության պատմության, Երևան:

Թարգմանություններ

1. Մ. Գորկի.— Մայրը, Մոսկվա:
2. Օսկար Ուայլդ.— Սալոմե:

Հունվարի 19-ին

Սովետների Համառուսական XI համագումարի բացումը։

Հունվարի 21-ին

Վախճանվեց Վլադիմիր Իլյիչ Լենինը։

Հունվարի 26-ին

ՍՍՌՄ Սովետների II համագումարի բացումը։

Համագումարի առաջին նիստում ընկեր Ի. Վ. Ստալինը պարտիայի անունից մեծ երդում է տալիս.

«Մենք, կոմունիստներս, հատուկ խառնվածքի մարդիկ ենք։ Մենք հատուկ նյութից ենք ձևված։ Մենք նրանք ենք, որ պրոլետարական մեծ ստրատեգի բանակը, ընկեր Լենինի բանակն ենք կազմում։ Չկա ավելի բարձր բան, քան այդ բանակին պատկանելու պատիվը։ Չկա ավելի բարձր բան, քան այն պարտիայի անդամի կոչումը, որի հիմնադիրն ու ղեկավարն ընկեր Լենինն է...

Հեռանալով մեզանից՝ ընկեր Լենինը մեզ ավանդ թողեց բարձր պահել և մաքուր պահպանել պարտիայի անդամի մեծ կոչումը։ Երդվում ենք քեզ, ընկե՛ր Լենին, որ մենք պատվով կկատարենք քո այդ պատվիրանը...

Հեռանալով մեզանից՝ ընկեր Լենինը մեզ ավանդ թողեց աչքի լույսի պես պահպանել մեր պարտիայի միասնությունը։ Երդվում ենք քեզ, ընկե՛ր Լենին, որ մենք պատվով կկատարենք քո այդ պատվիրանը ևս...

Հեռանալով մեզանից՝ ընկեր Լենինը մեզ ավանդ թողեց պահպանել ու ամրապնդել պրոլետարիատի դիկտատուրան։ Երդվում ենք քեզ, ընկե՛ր Լենին, որ մենք չենք խնայի մեր ուժերը, որպեսզի պատվով կատարենք քո այդ պատվիրանը ևս...

Հեռանալով մեզանից՝ ընկեր Լենինը մեզ ավանդ թողեց բոլոր ուժերով ամրապնդել բանվորների և գյուղացիների դաշինքը։ Երդվում ենք քեզ, ընկե՛ր Լենին, որ մենք պատվով կկատարենք քո այդ պատվիրանը ևս...

Ընկեր Լենինը մեզ անդադար ասում էր, որ անհրաժեշտ է

մեր երկրի ժողովուրդների կամավոր դաշինքը, անհրաժեշտ է նրանց եղբայրական համագործակցությունը Ռեսպուբլիկաների Միության շրջանակներում:

Հեռանալով մեզանից՝ ընկեր Լենինը մեզ ավանդ թողեց ամրապնդել ու ընդլայնել ռեսպուբլիկաների միությունը: Երդվում ենք քեզ, ընկե՛ր Լենին, որ մենք պատվով կկատարենք քո այդ պատվիրանը ևս...

Լենինը մեզ շատ անգամ է մատնանշել, որ Կարմիր Բանակի ամրացումը և նրա զորության բարելավումը մեր պարտիայի կարևորագույն խնդիրներից մեկն է... Ուրեմն երդվենք, ընկերնե՛ր, որ մենք ուժերս չենք խնայի, որպեսզի ամրացնենք մեր Կարմիր Բանակը, մեր Կարմիր Նավատորմը...

Հեռանալով մեզանից՝ ընկեր Լենինը մեզ ավանդ թողեց հավատարիմ մնալ Կոմունիստական Ինտերնացիոնալի սկզբունքներին: Երդվում ենք քեզ, ընկե՛ր Լենին, որ մենք մեր կյանքը չենք խնայի, որպեսզի ամրապնդենք ու ընդլայնենք ամբողջ աշխարհի աշխատավորների միությունը՝ Կոմունիստական Ինտերնացիոնալը»:

«Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալին Համառոտ կենսագրություն», էջ 100—102:

Մարտի 27-ին

«Գիրք» Հրատարակչական Ընկերությունը կազմակերպում է դասախոսություններ. Ա. Տերտերյանը դասախոսում է Վ. Տերյանի և Գ. Զոհրապի մասին, Դ. Դեմիրճյանը՝ «Հայ գրականության ներկան և ապագան» նյութի մասին:

Մարտի 27-ին

Պետթատրոնում տոնվում է դերասան-ռեժիսոր Մ. Մանվելյանի բեմական գործունեության 30-ամյակը:

Ապրիլ

Ընկեր Ի. Վ. Ստալինի դասախոսությունները Սվերդլովյան Համալսարանում «Լենինիզմի հիմունքների մասին»:

Մայիսի 5-ին

ՀԿ(բ)Պ III Համագումարի բացումը:

Մայիսի 9-ին

ՌԿ(բ)Պ կենտկոմի մամուլի բաժնին կից գումարվում է խորհրդակցություն նվիրված պարտիայի քաղաքականությանը գեղարվեստական գրականության մարզում:

Խորհրդակցությունն ընդունում է բանաձև:

Մայիսի 23—31-ը

ՌԿ(բ)Պ XIII համագումարի բացումը:

Համագումարի «Մամուլի մասին» ընդունած որոշումից.

«19. գեղարվեստական գրականության բնագավառում պարտիայի հիմնական աշխատանքը պետք է կոլմնորոշվի դեպի ա՛յն բանվորների ու գյուղացիների ստեղծագործությունը, որոնք բանվորական և գյուղացիական գրողներ են դառնում Սովետական Միության ժողովրդական լայն մասսաների կուլտուրական վերելքի պրոցեսում: Բանթղթակիցներն ու գյուղթղթակիցները պետք է դիտվեն որպես ռեզերվներ, որտեղից պետք է առաջ բաշվեն բանվորական և գյուղացիական նոր գրողներ:

Պետք է լսա ամենայնի ուժեղացվի այն պրոլետարական և գյուղացիական գրողների առաջքաշումը և նրանց ցույց տրվող նյութական օգնությունը, որոնք մեր գրականության մեջ են մտել մասամբ գազգյահից և արտից, մասամբ էլ այն ինտելիգենտական միջնաշերտից, որը հոկտեմբերյան օրերին և Ռազմական Կոմունիզմի ժամանակաշրջանում մտել է ՌԿՊ-ի և կոմերիտմիության շարքերը:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել կոմերիտմիության միջավայրի գրողներին և պոետներին, որոնք ակտիվորեն գործում են բանվոր երիտասարդության շարքերում:

Բանվորա-գյուղացիական գրողների աճման հիմնական պայմանն է հանդիսանում իրենց վրա կատարելիք ավելի լուրջ գեղարվեստական և քաղաքական աշխատանքը և նեղ խմբակայնությունից ազատվելը՝ պարտիայի, մասնավորապես պարտիական գրական քննադատության ըստ ամենայնի աջակցությամբ հանդերձ:

Դրա հետ միասին անհրաժեշտ է շարունակել ցույց տրվող սիստեմատիկ օժանդակությունը այսպես կոչված՝ ուղեկիցներից

առավելապես շնորհալիններին, որոնք դաստիարակվում են շկոլայով, կոմունիստների հետ համատեղ ընկերական աշխատանքում: Անհրաժեշտ է առաջադրել պարտիական լրջախոհ քննադատություն, որը, առանձնացնելով և օժանդակելով տաղանդավոր սովետական գրողներին, միաժամանակ ֆատնացույց աներ նրանց սխալները, որոնք բխում են այդ գրողների կողմից սովետական կարգերը ո՛չ բավականաչափ հասկանալուց, և նրանց մղեր դեպի բուրժուական նախապաշարմունքների հաղթահարումը:

Գտնելով, որ ոչ մի գրական ուղղություն, շկոլա կամ խումբ չեն կարող և չպետք է հանդես գան պարտիայի անունից, համագումարն ընդգծում է գրական քննադատության և սովետական— պարտիական մամուլի էջերում գեղարվեստական գրականության նմուշների առավելապես հնարավոր լիակատար պարտիական լուսաբանության հարցի կանոնավորման անհրաժեշտությունը:

Համագումարը հատուկ ուշադրություն է հրավիրում բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների համար մասսայական գեղարվեստական գրականություն ստեղծելու անհրաժեշտության վրա»:

„ВКП(б) в резолюциях...", 1 մաս, էջ 602:

Մայիս

Մոսկվայում լույս է տեսնում «Ջարկ» ամսագիրը (մեկ համար):

Մայիս

Մոսկվայում ձեռագրի իրավունքով լույս է տեսնում «Standard» գրականության և արվեստի ամսագիրը (մեկ համար):

Հունիս

Երևանում լույս է տեսնում «Նոր Ակոս» գրական-գեղարվեստական և հասարակական պատկերազարդ շաբաթաթերթը: Աշխատակցում են՝ Ալ. Շիրվանզադեն, Ն. Մառը, Դ. Դեմիրճյանը, Ստ. Ջորյանը, Ն. Զարյանը, Հ. Սիրասը, Վեսպերը, Ա. Կարինյանը, Գ. Աբովը, Տ. Հախումյանը և ուրիշները:

Դադարում է 1925 թվին, 16 համարից հետո:

Հուլիսի 20-ին

Հիմնադրվում է Լենինականի տեքստիլ գործարանը։

Հուլիսի 27-ից—օգոստոսի 3-ը

Երևանում կազմակերպվում է իմպերիալիստական պատերազմի տասնամյակին նվիրված հակապատերազմական շաբաթ։ Լույս է տեսնում «Կորչի պատերազմը» գրական-գեղարվեստական ժողովածուն։

Օգոստոսի 7-ին

Հայաստան է գալիս Ա. Վ. Լունաչարսկին։ Լենինականի կայարանում տեղի է ունենում թռուցիկ միտինգ։

Քաղսովետի նիստում Ա. Վ. Լունաչարսկին զեկուցում է «Սովետական իշխանության քաղաքականությունը ազգային հարցում» նյութի մասին։

Օգոստոսի 8-ին

Երևանում կազմակերպվում է Ա. Վ. Լունաչարսկուն նվիրված հանդիսավոր երեկո։

Սեպտեմբեր

Լույս է տեսնում Ի. Վ. Ստալինի «Լենինիզմի հիմունքների մասին» աշխատությունը։

Սեպտեմբեր

Թիֆլիսում լույս է տեսնում «Դիրքերում» երկշաբաթաթերթը (5 համար)։

Հոկտեմբերի 9-ին

Վախճանվեց Վալերի Յակովլևիչ Բրյուսովը։

Հոկտեմբերի 11-ին

Թիֆլիսի Հայարտունը տեղի է ունենում Անդրկովկասի Երկրային Կոմիտեի մամուլի բյուրոյի խորհրդակցություն։ «Գեղարվեստը և պրոլետարիատը» նյութի մասին ներածական խոսք է անում Ա. Կարինյանը։

Հոկտեմբերի 21–ին

Մոսկվայի պարտիական ակտիվի հավաքում վ. Մայակովսկին կարդում է «Վլադիմիր Իլիչ Լենին» պոեմը:

Հոկտեմբերի 26–ին

Լույս է տեսնում «Խորհրդային Հայաստան» թերթի 1000-րդ համարը:

Հոկտեմբերի 27–ին

Կազմակերպվում են Թուրքմենական և Ուզբեկական ՍՍՌ-ները:

Նոյեմբերի 2–ին

Երևանում կազմակերպվում է Ա. Վշտունու «Սալամնամի» և «Ջինական պոեմ» գործերի գրական դատը:

Նոյեմբերի 13–ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի ճառը ՀԱՄԿԿ-ի Ֆրակցիայի «պլենումում» «Տրոցկիզմի թե՛ Լենինիզմ» հարցի մասին:

Ի. Վ. Ստալինի ճառից.

«Տվյալ պահին, Հոկտեմբերի հաղթանակից հետո, նեպի ժամանակաշրջանում ամենից ավելի վտանգավոր պետք է համարել տրոցկիզմը, որովհետև նա ձգտում է պատվաստել անվստահության դեպի մեր ռևոլյուցիայի ուժերը, անվստահության դեպի բանվորների և գյուղացիների դաշինքի գործը, անվստահության նեպական Ռուսաստանը սոցիալիստական Ռուսաստանի փոխարկելու գործի նկատմամբ»:

«Խոսքի վիճաբանական Ստալին: Համառոտ կենսագրություն», էջ 104:

Նոյեմբերի 29–ին

«Խորհրդային Հայաստան»-ի № 273-ում լույս է տեսնում Հ. Հակոբյանի «Բոլշևիկ է Շիրականը» պոեմից հատվածներ:

Դեկտեմբերի 17–ին

Լույս է տեսնում Ի. Վ. Ստալինի «Հոկտեմբերյան ռևոլյուցիան և ռուսական կոմունիստների տակտիկան» աշխատությունը:

Դեկտեմբերի 17-ին

Երևանում տոնվում է գյուղատնտես, գրող-երգիծաբան Կոստանդին Մելիք-Շահնազարյանի (Տմբլաչի Խաչան) գրական 50-ամյա և գյուղատնտեսական 40-ամյա գործունեության հոբելյանը:

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Ջափածո

1. *Ե. Չարենց.— Մաճկալ Սաքոյի պատմությունը, Պետհրատ, Երևան:*
2. *Ա. Վշտունի.— Չինական պոեմ, Թիֆլիս:*
3. *Ա. Վշտունի. —Սալամնամե:*
4. *Գ. Աբով.— Եղինի ֆրոնտ, Մոսկվա:*

Արձակ

1. *Ա. Խոնդկարյան.— Բանթղթակից Յասարի վերելքը, Պետհրատ, Երևան:*

Դրամատուրգիա

1. *Դ. Դեմիրճյան.— Քաջ Նազար, Պետհրատ, Երևան:*
2. *Ան. Վարդանյան.— Բանդիտներ, Ղարաքիլիսա:*
3. *Ան. Վարդանյան.— Գործադուլ կամ ոգիտության զոհեր, Պետհրատ, Երևան:*
4. *Լ. Սաղաթելյան.— Մի կաթ հողի համար, Թիֆլիս:*

Ժողովածուներ

1. *«Կորչի պատերազմը» գրական-հասարակական և երգիծական հանրամատչելի ժողովածու, Երևան:*

1925

Հունվարի 6-ին

Մոսկվայում հրավիրվում է Պրոլետարական Գրողների 1-ին Համամիութենական խորհրդակցությունը:

«Պրոլետարական գրականության մասին» ելույթ է ունենում Դ. Բեդնին։

Մտքերի փոխանակությանը մասնակցում են՝ Ա. Լունաչարսկին, Մ. Օլմինսկին, Պ. Կերժենցևը, Վ. Լեբեդև-Պոլյանսկին և ուրիշները։

Հունվարի 20-ին

ՀՍԽՀ ժողկոմխորհը հաստատում և հրապարակում է Գիտության և Արվեստի Ինստիտուտի կանոնադրությունը։

Հունվարի 21-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի նամակը «Ռաբոչայա գազետա»-ի խմբագրությանը։

Ի. Վ. Ստալինի նամակից.

«Հիշեցեք, սիրեցեք, ուսումնասիրեցեք Իլյիչին, մեր ուսուցչին, մեր առաջնորդին։

Պայքարեցեք և հաղթեցեք ներքին և արտաքին թշնամիներին,— Իլյիչի պես։

Կառուցեք նոր կյանքը, նոր կենցաղը, նոր կուլտուրան,— Իլյիչի պես։

Աշխատանքի մեջ երբեք մի հրաժարվեք փոքրից, որովհետև փոքրից է կառուցվում մեծը,— այս է Իլյիչի կարևոր պատգամներից մեկը»։

«Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալին։ Համառոտ կենսագրություն», էջ 102—103։

Փետրվարի 6-ին

Բաքվում «Կոմունիստ» թերթի խմբագրատանը տեղի է ունենում Բաքվի հայ պրոլետարական գրողների առաջին կազմակերպչական ժողովը, ստեղծվում է Ասոցիացիա։

Փետրվար

ՌԿ(բ)Պ Կենտկոմի մամուլի բաժնին կից կազմակերպվում է բիբլիոգրաֆիական բյուրո, որի նպատակն էր օժանդակել պարբերական մամուլի քննադատության և գրախոսության բաժինների՝ ռեցենզիաների և տեսությունների որակի բարձրացմանը։

Մարտի 12-ին

Երևանում ցուցադրվում է Պետֆոտո-կինոյի առաջին նկարը՝ «Խորհրդային Հայաստան», նվիրված երկրի սոցիալիստական շինարարությանը:

Մարտի 22-ին

Օդանավային ապետի հետևանքով վախճանվեց Ալեքսանդր Ֆեոդորովիչ Մյասնիկյանը:

Մարտ

Ե. Չարենցի նամակը Բևլինից՝ ուղղված «Վիշկայի» խմբագրությանը:

Նամակից.— *«Բաքվի հայ պրոլետարիատին այն մեծագույն վստահության համար, որ նա շնորհել է իմ երկերին, խնդրում եմ հայտնեք, որ իրենց այդ ջերմ վերաբերմունքը դեպի իմ երկերը ինձ համար նոր և նոր ոգևորության անսպառ աղբյուր պիտի պատնա և պիտի սովորեցնի ինձ լարել բոլոր մկաններս, բոլոր նյարդերս և կարողությունները միմիայն այն ուղղությամբ, որպեսզի ապագայում ևս կարողանամ վայելել պրոլետարական այդ ջերմ վերաբերմունքի կենարար շնորհները: Խնդրում եմ հայտնեք վերջապես, որ բանվոր մասսաների նման վերաբերմունքը դեպի մի գրող ամենամեծ գնահատականը և բախտն է, որ կարող է վիճակվել որևէ գրողի»:*

«Վիշկա» № 1, 1925թ.

Մարտի 23-ին

Բաքվի Հայարտան գրական սեկցիան գումարում է իր առաջին ընդհանուր ժողովը. մշակվում է ծրագիր:

Ապրիլի 22-ին

Ադրբեջանի ՍՍՌ կոնժողկոմատը հաստատում է Բաքվի Հայարտան կանոնադրությունը:

Կանոնադրության առաջին կետը.

«Բաքվում հիմնվում է հայ Արվեստագետների Տուն, կրճատ՝ Հայարտուն, որը նպատակ ունի համախմբել Խորհրդային Ադրբե-

ջանի մայրաքաղաքի այն բոլոր հայ արվեստագետներին, որոնք անվերապահորեն կանգնած լինելով Հոկտեմբերյան հեղափոխության պլատֆորմի վրա՝ փոխադարձ գործակցությամբ ու համերաշխ աշխատակցությամբ ցանկանում են նպաստած լինել կուլտուրական-գեղարվեստական հարցերի լուծումին՝ համաձայն կյանքի նոր պահանջների»։

Ապրիլի 25-ին

Երևանում տեղի է ունենում մամուլի աշխատողների Համահայաստանյան առաջին համագումարը։

Մայիսի 10-ին

Երևանում բացվում է Խորհրդային Հայաստանի մամուլի առաջին ցուցահանդեսը՝ նվիրված մամուլի հինգ տարվա նվաճումներին։

Մայիսի 17-ին

Բաքվում Կոմունալնիկների ակումբում կազմակերպվում է Հ. Հակոբյանի ստեղծագործությանը նվիրված դասախոսություն։

Մայիսին

Երևանում լույս է տեսնում «Պրոլետ գրող» գրական թերթի առաջին համարը (մեկ համար)։ Աշխատակցում են՝ Ն. Զարյանը, Ն. Դաբաղյանը և ուրիշները։

Մայիս

Բաքվում լույս է տեսնում «Վիշկա» Գրական-գեղարվեստական հանդեսը։

Խմբագրականից.— «Վիշկան» հայ իրականության մեջ առանձնակի, կամ ավելի ճիշտ՝ մազութի մեջ կորած բանվորի առաջին գրական-պարբերական փորձն է։ Համեստ է նրա սկիզբը, բայց մեծ ապագան, որովհետև նա ունի իր թիկունքում նավթաշխարհի մեծ պրոլետարիատի ստեղծագործ աշխատանքի անհատնում պահեստը։

«Վիշկա»-ի հեղինակը, ընթերցողը, դատավորը, խրախուսողը — Բաքվի գիտակից բանվորն է»։

«Վիշկա» № 1, 1925.

Մայիսի 18-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի ճառը՝ «Արևելքի ժողովուրդների համալսարանի քաղաքական խնդիրների մասին», Արևելքի Աշխատավորների Կոմունիստական Համալսարանի ուսանողների ժողովում:

Ի. Վ. Ստալինի ճառից.

«Ես խոսեցի, այնուհետև, աղգային կուլտուրան Արևելքի սոցիալիստական ռեսպուբլիկաներում բարձրացնելու մասին: Բայց ի՞նչ է աղգային կուլտուրան: Ի՞նչպես այն համատեղել պրոլետարական կուլտուրայի հետ: Լենինը մի՞թե չի ասել դեռևս մինչև պատերազմը, որ մեզ մոտ երկու կուլտուրա կա— բուրժուական ու սոցիալիստական, որ աղգային կուլտուրայի լոզունգը բուրժուազիայի ոեակցիոն լոզունգն է, բուրժուազիայի, որը ջանում է աշխատավորության գիտակցությունը թունավորել նացիոնալիզմի թույնով: Ի՞նչպես համատեղել աղգային կուլտուրայի կերտումը, մայրենի լեզվով գործող դպրոցների ու դասընթացների զարգացումն ու տեղացիներից կադրեր պատրաստելը սոցիալիզմի կառուցման հետ, պրոլետարական կուլտուրայի կերտման հետ: Արդյոք այստեղ չկա՞ անհամատեղելի հակասություն: Իհա՛րկե, կա: Մենք պրոլետարական կուլտուրա ենք կերտում: Սա միանդամայն ճիշտ է: Բայց ճիշտ է նաև այն, որ իր բովանդակությամբ սոցիալիստական, պրոլետարական կուլտուրան, նայած լեզվի, կենցաղի և այլնի տարբերությանը, ընդունում է արտահայտման զանազան ձևեր ու եղանակներ՝ սոցիալիստական շինարարության աստիճանորեն ներքաշված զանազան ժողովուրդների մոտ: Իր բովանդակությամբ պրոլետարական, ձևով աղգային,— այսպես է այն համամարդկային կուլտուրան, դեպի որն ընթանում է սոցիալիզմը: Պրոլետարական կուլտուրան չի վերացնում աղգային կուլտուրան, այլ բովանդակություն է տալիս նրան: Եվ ընդհակառակը, աղգային կուլտուրան չի վերացնում պրոլետարական կուլտուրան, այլ ձև է տալիս նրան: Աղգային կուլտուրայի լոզունգը բուրժուական լոզունգ էր, քանի դեռ իշխանության գլուխ բուրժուազիան էր կանգնած, իսկ աղգերի կոնսոլիդացումը կատարվում էր բուրժուական կարգերի հովանու տակ: Աղգային կուլտուրայի լոզունգը պրոլետարական լոզունգ դարձավ, երբ իշխանության գլուխ կանգնեց պրոլետարիատը, իսկ աղգերի կոնսոլիդացիան սկսեց ընթանալ

Սովետական իշխանության հովանու տակ։ Ով չի՛ հասկացել երկու զանազան իրադրությունների այս սկզբունքային տարբերությունը, նա երբեք չի հասկանա ո՛չ լենինիզմը, ո՛չ էլ ազգային հարցի էությունը՝ լենինիզմի տեսակետից»։

Ի. Ստալին, Մարքսիզմը և ազգային-գաղութային հարցը, Պետհրատ, 1938 թ., էջ 247—248։

Հունիսի 12-ին

Բաքվում «Կոմունիստ»-ի խմբագրատանը տեղի է ունենում Բաքվի Հայարտան և Պրոլետասոցիացիայի կազմակերպած գրական-երաժշտական երեկույթը՝ նվիրված Գ. Սունդուկյանի ծննդյան 100-ամյակին։

Հունիսի 18-ին

ՌԿ(բ)Պ Կենտկոմը ընդունում է բանաձև՝ «Պարտիայի քաղաքականությունը գեղարվեստական գրականության մարզում»։

Բանաձևից.

«1. Վերջին ժամանակներս մասսաների նյութական բարեկեցության վերելքը, մտքերում ռևոլյուցիայի կատարած հեղաշրջման, մասսայական ակտիվության ուժեղացման, մտահորիզոնի վիթխարի ընդարձակման կապակցությամբ և այլն՝ կուլտուրական պահանջների ու կարիքների հսկայական աճ է ստեղծում։ Այսպիսով, մենք թևակոխել ենք կուլտուրական ռևոլյուցիայի այն շրջանը, որը կազմում է դեպի կոմունիստական հասարակությունը հետագա շարժման նախադրյալը։

2. Այդ մասսայական կուլտուրական աճման մի մասն է հանդիսանում նոր—առաջին հերթին պրոլետարական և գյուղացիական գրականության աճը, սկսած նրա սաղմային, բայց միևնույն ժամանակ իրենց ընդգրկմամբ չտեսնված կերպով լայն ձևերից (բանթղթակիցներ, գյուղթղթակիցներ, պատի թերթեր և այլն) և վերջացրած իդեոլոգիապես գիտակցված գրական-գեղարվեստական արտադրանքով։

3. Մյուս կողմից տնտեսական պրոցեսի բարդությունը, հակասական և նույնիսկ միմյանց ուղղակի թշնամի տնտեսական ձևերի միաժամանակ աճը, այդ զարգացմամբ առաջացող՝ նոր բուրժուազիայի ծնման և ամրապնդման պրոցեսը, հին և նոր ինտելիգենցիայի մի մասի անխուսափելի, թեպետ և սկզբներում ո՛չ

միշտ փաստակցված ձգտումը դեպի նա, այդ բուրժուազիայի նոր բանող իդեոլոգիական գործակալների քիմիական արտազատումը հասարակական խորքերից — այս ամենը պետք է անխուսափելիորեն արտահայտվի հասարակական կյանքի նաև գրական մակերեսի վրա։

4. Այսպիսով մեզ մոտ, ինչպես որ չի դադարում առհասարակ դասակարգային պայքարը, ճիշտ այդպես էլ այն չի դադարում նաև գրական ֆրոնտում։ Դասակարգային հասարակության մեջ չկա և չի կարող լինել չեզոք արվեստ, թեև ընդհանրապես արվեստի և մասնավորապես գրականության դասակարգային բնույթը արտահայտվում է անսահմանորեն ավելի բազմազան ձևերում, քան թե, օրինակ, քաղաքականության մեջ։

8. ... Վերևում ասվածով էլ պետք է որոշվի պրոլետարիատի ղեկավար պարտիայի քաղաքականությունը գեղարվեստական գրականության բնագավառում։ Առաջին հերթին սրան վերաբերում են հետևյալ հարցերը. փոխ-հարաբերությունը պրոլետարական գրողների, գյուղացիական գրողների և այսպես կոչված՝ «ուղեկիցների» և ուրիշների միջև, պարտիայի քաղաքականությունը հենց պրոլետարական գրողների նկատմամբ, քննադատության հարցերը, գեղարվեստական երկերի ոճի ու ձևի և գեղարվեստական նոր ձևերի մշակման մեթոդների հարցերը, վերջապես, կազմակերպական բնույթի հարցերը։

9. Գրողների տարբեր խմբավորումների միջև փոխհարաբերությունը ըստ դրանց սոցիալ-դասակարգային կամ սոցիալ-խմբային բովանդակության՝ որոշվում է մեր ընդհանուր քաղաքականությամբ։ Սակայն, այստեղ պետք է նկատի ունենալ, որ գրականության բնագավառում ղեկավարությունը պատկանում է ամբողջ բանվոր դասակարգին, նրա բոլոր նյութական և իդեոլոգիական ռեսուրսներով։ Պրոլետարական գրողների հեգեմոնիա դեռ չկա, և պարտիան պետք է օգնի այդ գրողներին՝ իրենց համար վաստակելու այդ հեգեմոնիայի պատմական իրավունքը։ Գյուղացիական գրողները պետք է բարեկամական ընդունելության գտնեն և օգտվեն մեր անվերապահ օժանդակությամբ։ Խնդիրն այն է, որ նրանց աճող կադրերը փոխադրվեն պրոլետարական իդեոլոգիայի ռելսերի վրա, սակայն նրանց ստեղծագործությունից բնա՛վ դուրս չմղելով գյուղացիական գրական-գեղարվեստական կերպարները, ո-

րոնք և հանդիսանում են անհրաժեշտ նախադրյալ՝ գյուղացիության վրա ազդեցություն ունենալու համար:

10. «Ուղեկիցների» նկատմամբ անհրաժեշտ է նկատի ունենալ՝ 1. Նրանց շերտավորվածությունը, 2. նրանցից շատերի նշանակությունը որպես գրական տեխնիկայի որակյալ «մասնագետների», 3. տատանումների առկայությունը գրողների այդ խավի մեջ: Այստեղ ընդհանուր դիրեկտիվ պետք է լինի նրանց նկատմամբ, խոհեմ և հոգատար վերաբերմունքի դիրեկտիվը, այսինքն այնպիսի մոտեցում, որն ապահովեր բոլոր պայմանները, որպեսզի նրանք որքան հնարավոր է արագ անցնեն կոմունիստական իդեոլոգիայի կողմը: Դուրս մղելով հակապրոլետարական և հակառևոլյուցիոն տարրերը (որոնք հիմա չափազանց աննշան են), պայքարելով նոր բուրժուազիայի ձևավորվող իդեոլոգիայի դեմ սմենովեխովյան բնույթի «ուղեկիցների» մի մասի մեջ, պարտիան պետք է համբերատարությամբ վերաբերվի միջանկյալ իդեոլոգիական ձևերին, համբերատարությամբ օգնելով այդ անխուսափելիորեն բազմաթիվ ձևերի վերացմանը՝ կոմունիզմի կուլտուրական ուժերի հետ ավելի և ավելի սերտ ընկերական համագործակցության պրոցեսում:

11. Պրոլետարական գրողների նկատմամբ պարտիան պետք է այսպիսի դիրք բռնի. ամեն կերպ օգնելով նրանց աճմանը և ըստ ամենայնի օժանդակելով նրանց և իրենց կազմակերպություններ, պարտիան պետք է բոլոր միջոցներով կանխի նրանց մեջ կոմունապարծության արտահայտությունը, որպես ամենակործանարար երևույթի: Հենց նրա համար, որ պարտիան նրանց մեջ տեսնում է սովետական գրականության ապագա գաղափարական ղեկավարներին, նա պետք է ամեն կերպ պայքարի հին կուլտուրական ժառանգության, ինչպես և գեղարվեստական խոսքի մասնագետների նկատմամբ թեթևամիտ և արհամարհական վերաբերմունքի դեմ: Ճիշտ նույնպես դատապարտման է արժանի այն դիրքը, որը թերագնահատում է պրոլետարական գրողների գաղափարական հեգեմոնիայի համար մղվող պայքարի բուն իսկ կարևորությունը: Մի կողմից կապիտուլյանտության դեմ, և մյուս կողմից կոմունապարծության դեմ— այսպիսին պետք է լինի պարտիայի լոզունգը: Պարտիան պետք է նաև պայքարի զուտ ջերմոցային «պրոլետարական» գրականության փորձերի դեմ. երևույթների լայն ընդ-

դրկում նրանց ամբողջ բարդությամբ: Չպարփակվել մեկ գործարանի շրջանակներում, լինել ոչ թե ցեխի, այլ պայքարող, իր հետևից միլիոնավոր գյուղացիներին տանող մեծ դասակարգի դրականության,— այսպիսին պետք է լինեն պրոլետարական դրականության բովանդակության շրջանակները:

12. Վերևում ասվածով ընդհանրապես և ամբողջովին որոշվում են ճննադատության խնդիրները, որը դասախարակչական գլխավոր զենքերից մեկն է պարտիայի ձեռքում: Ոչ մի րոպե չհանձնելով կոմունիզմի դիրքերը, մաղաչափ անդամ չնահանջելով պրոլետարական իդեոլոգիայից, դրսևորելով դրական այլ և այլ երկերի օբեկտիվ դասակարգային իմաստը, կոմունիստական քննադատությունը պետք է անողոքաբար պայքարի դրականության մեջ կոնտրռևոլուցիոն արտահայտությունների դեմ, բացահայտի ամենանովեխության լիբերալիզմը և այլն, և միևնույն ժամանակ մեծագույն տակտ, զգուշություն, համբերատարություն դրսևորի այն բոլոր դրական միջնախավերի նկատմամբ, որոնք կարող են գնալ պրոլետարիատի հետ և կգնան նրա հետ: Կոմունիստական քննադատությունը պետք է իր առօրյայից արտաքսի դրական հրամանները: Նա, այդ քննադատությունը, միայն այն ժամանակ կունենա դասախարակչական խորը նշանակություն, երբ նա կհենվի իր գաղափարական գերակշռության վրա: Մարքսիստական քննադատությունը պետք է իր միջավայրից վճռականապես արտաքսի ամեն տեսակ հավակնոտ, կիսադրագետ և ինքնագոհ կոմանապարծությունը: Մարքսիստական քննադատությունը պետք է իր առաջ լոզունգ դնի՝ սովորել, և պետք է հակահարված տա իր իսկ միջավայրում ամեն տեսակ մակուլատուրային և ինքնահնարանքին:

14. ... Պարտիան պետք է արտահայտվի հօգուտ այլ և այլ խմբավորումների ու հոսանքների ազատ մրցության՝ տվյալ քննադավառում (գրականության— խմբ.): Հարցի ամեն մի այլ լուծում կլիներ կազմակերպի-բյուրոկրատական կեղծ որոշում: Ճիշտ նույնպես անթույլատրելի է դեկրետով կամ պարտիական որոշմամբ օրինաձևակապացված մենաշնորհը, որևէ խմբի կամ գրական կազմակերպության գրական-հրատարակչական գործի նկատմամբ: Նյութապես և բարոյապես օժանդակելով պրոլետարական և պրոլետարական-գյուղացիական գրականությանը, օգնելով «ուղեկիցներին» և

այլն, պարտիան չի կարող մենաշնորհ տալ խմբերից որևէ մեկին, նույնիսկ իր իդեական բովանդակությամբ ամենապրոլետարականին. այդ կնշանակեր ամենից առաջ կործանել պրոլետարական դրականությունը:

15. Պարտիան պետք է ամեն կերպ արմատախիլ անի դրական գործերի նկատմամբ ինքնարուր և անձեռնհաս վարչական միջամտության փորձերը. պարտիան պետք է մտահոգվի անձնամոբուլյունների մանրակրկիտ, ընտրությամբ այն հիմնարկություններում, որոնք վարում են մամուլի գործերը,— որպեսզի ապահովի մեր դրականության իսկապես ճիշտ, օգտակար և խոհեմ ղեկավարությունը:

16. Պարտիան պետք է գեղարվեստական դրականության բոլոր աշխատողներին մատնացույց անի, որ անհրաժեշտ է ճշտորեն սահմանագծել ֆունկցիաները քննադատների և գրող-գեղագետների միջև: Վերջիններիս համար անհրաժեշտ է իրենց աշխատանքի ծանրության կենտրոնը փոխադրել գրական պրոդուկցիայի մեջ՝ այդ բառի հատուկ իմաստով, ընդ որում օգտագործելով արդիականության հակայական նյութը: Անհրաժեշտ է ուժեղ ուշադրություն դարձնել նաև մեր Միության բազմաթիվ ռեսպուբլիկաներում և մարզերում ազգային դրականության զարգացման վրա:

Պարտիան պետք է ընդգծի իսկապես մասսայական ընթերցողի, բանվորի և գյուղացու համար գեղարվեստական դրականության ստեղծելու անհրաժեշտությունը. հարկավոր է ավելի հաճախակորեն և վճռականորեն խզել կապը գրականության մեջ եղած աղայության նախապաշարմունքների հետ և օգտագործելով հին վարպետության տեխնիկական բոլոր նվաճումները, մշակել համապատասխան, միլիոնների հասկանալի ձև:

Սովետական գրականությունը և նրա ապագա պրոլետարական ավանգարդը միայն այն ժամանակ կկարողանան կատարել իրենց կուլտուր-պատմական միսիան, երբ նրանք կլուծեն այդ մեծ խնդիրները»:

„Правда“, *1 հուլիսի, 1925:*

Հունիսի 21-ին

Տեղի է ունենում Շիրակի՝ Լենինի անվան ջրանցքի հանդիսավոր բացումը:

Հունիս

Բաքվում լույս է տեսնում «Հայաստան» տարեգիրը։

Խմբագրականից.

«Հայ արվեստագետների տան գլխավոր նպատակն է՝ համախմբել մեր աշխատավոր ինտելիգենցիան, հնարավորություն տալ մի կողմից՝ շեշտելու իր ինքնատործունեությունը, մյուս կողմից՝ ծառայեցնելու մասսաներին իր ամբարած կուլտուրական պաշարն ու փորձը»։

«Հայաստան» № 1, 1925։

Հուլիսի 14–ին

Սովետական գրողների Ֆեդերացիայի կազմակերպումը. «Իզվեստիա»-յում հրապարակվում է Ֆեդերացիայի դեկլարացիան։

Հուլիս

Լենինգրադում խ. Հ. Պ. Գ. Միությունը կազմակերպում է պեկտացում-դիսպուտ՝ «Հայ նորագույն գրականությունը» նյութի շուրջը։

Դիսպուտին մասնակցում են «Բանվոր և գյուղացի» գրողների միության անդամները։

Սեպտեմբերի 13–ին

Գրողներ Ե. Չարենցի, Գ.Սարյանի, Ան. Վարդանյանի, Ս. Տարոնցու, Հ. Մելիքյանի և ուրիշների ստորագրությամբ «Խորհրդային Հայաստան» թերթում հրապարակվում է գրական դեկլարացիա և պլատֆորմ, որով հիմնադրվում է Հայաստանի պրոլետարական գրողների «Նոյեմբեր» միությունը։

Հոկտեմբերի 4–ին

Վախճանվեց Գևորգ Բաշինջաղյանը։

Հոկտեմբերի 31–ին

Վախճանվեց Միխայիլ Վասիլևիչ Ֆրունզեն։

Նոյեմբերի 4–ին

Կուլտուրայի տանը բացվում է Հայաստանի Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի առաջին համագումարը։

Բացման խոսք է ասում Հ. Հակոբյանը:

Ողջունում են՝ ՀԿ(բ)Պ Կենտկոմի, Պրոլետարական և Ռևոլյուցիոն Գրողների Միջազգային Բյուրոյի, Համառուսական Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի և այլ կազմակերպությունների, բանվորների և Կարմիր Բանակի ներկայացուցիչները:

Ընթերցվում է՝ Ա. Վ. Լունաչարսկու, Դ. Բեդնու, Սեն Կատայամայի և տարբեր կազմակերպությունների ողջույնի հեռագրերը:

Համագումարում քննության է առնվում քաղաքական մոմենտը, Ասոցիացիայի վարչության զեկուցումը, գրական-ստեղծագործական և կազմակերպչական հարցեր:

Համագումարն ընդունում և հրապարակում է կոչ՝ ուղղված արտասահմանի պրոլետարական և ռևոլյուցիոն հայ գրողներին:

Համագումարի նախօրյակին Երևանի բոլոր ակումբներում և դործարաններում կազմակերպվում են զեկուցումներ և գրական երեկոներ՝ նվիրված պրոլետարական գրականության նվաճումներին և խնդիրներին:

Համագումարն ընտրում է Ասոցիացիայի քարտուղարության հետևյալ կազմով՝ Ա. Վշտունի, Գ. Աբով և Ն. Զարյան (քարտուղարության թեկնածու):

Նոյեմբերի 15-ին

Պետթատրոնում նշվում է Գ. Սունդուկյանի ծննդյան 100-ամյակը: Բեմադրվում է «Պեպո»-ն:

Նոյեմբերի 30-ին

ՀԿ(բ)Պ IV Համագումարի բացումը:

Դեկտեմբերի 18-ին

ՀամԿ(բ)Պ XIV Համագումարի բացումը:

«Ժողովրդական տնտեսության վերականգնման խաղաղ աշխատանքին անցնելու տարիները բոլշևիկյան պարտիայի պատմության ամենապատասխանատու շրջաններից մեկն են: Լարված պայմաններում պարտիան կարողացավ դժվարին շրջադարձ կատարել ռազմական կոմունիզմի քաղաքականությունից դեպի տնտեսական նոր քաղաքականություն: Պարտիան ամրապնդեց բանվորների ու գյուղացիների դաշինքը նոր տնտեսական հիմքի վրա: Ստեղծվեց Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը:

Նոր տնտեսական քաղաքականության ուղիների վրա վճռական հաջողություններ ձեռք բերվեցին ժողովրդական տնտեսության վերականգնման գործում: Սովետների երկիրը հաջողությամբ անցավ ժողովրդական տնտեսության զարգացման վերականգնման շրջանը և սկսեց անցնել նոր շրջանի, երկրի ինդուստրացման շրջանին»:

«ՀամԿ(բ)Պ Պատմության համառոտ դասընթաց»

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Չափածո

1. Ե. Չարենց.— Մյուս դե ֆեդերե, Պետհրատ, Երևան:
2. Ե. Չարենց.— Լենինն ու Ալին, Պետհրատ, Երևան:
3. Ն. Զարյան.— Հրանուշը, Պետհրատ, Երևան:
4. Գ. Սարյան.— Շիրակի հարսանիքը, Լենինական:
5. Վեսպեր.— Կայարաններ, Թիֆլիս:
6. Սարմեն.— Դաշտերը ժպտում են, Լենինական:
7. Գ. Գրիգ.— Երկաթե երգը, Թիֆլիս:
8. Պահարե.— Գյուղերի կանչը: Թիֆլիս:

Արձակ

1. Ստ. Զորյան.— Պատերազմը, Պետհրատ, Երևան:
2. Ստ. Զորյան.— Ծովանը, Մոսկվա:
3. Ստ. Զորյան.— Հազարան բլբուլ, Պետհրատ, Երևան:
4. Ստ. Զորյան.— Երկաթուղին, Մոսկվա:
5. Մ. Պետրոսյան.— Նոր դարբնոց, Թիֆլիս:
6. Ա. Տեր-Հովհաննյան.— Հորձանք, Երևան:
7. Ս. Մելիքսեթյան.— Քիթ Մաթո, Երևան:

Թարգմանություններ

1. Ալ. Բլոկ.— Տասներկուսը, Թիֆլիս:
2. Գ. Պլեխանով.— 18-րդ դարի ֆրանսիական թատերագրությունն ու նկարչությունը սոցիոլոգիայի տեսակետից, Պետհրատ, Մոսկվա:

Պարբերական մամուլ

1. «Պետական Համալսարանի գիտական տեղեկագիր» № 1, Երևան:

«XIV. Համագումարից հետո պարտիան պայքար ծավալեց երկրի սոցիալիստական ինդուստրացման վերաբերյալ Սովետական իշխանության դխաավոր դիրքավորումը կենսագործելու համար։

Վերականգնման ժամանակաշրջանում խնդիրը, նախ և առաջ, գյուղատնտեսությունն աշխուժացնելն էր, գյուղատնտեսությունից հումք, պարենամթերք ստանալը և արդյունաբերությունը շարժման մեջ դնելը— վերականգնելը, գոյություն ունեցող գործարաններն ու ֆաբրիկաները վերականգնելը»։

«Համ Կ(բ)Պ Պատմություն, Համառոտ դասընթաց»։

Հունվար

Լույս է տեսնում Ի. Վ. Ստալինի «Լենինիզմի հարցերի շուրջը» աշխատությունը։

Հունվարի 2-ին

Թիֆլիսի Հայարտանը կազմակերպվում է Գ. Սունդուկյանի հիշատակին նվիրված երեկո։

Հունվարի 4-ին

Թիֆլիսի Հայարտանը Հ. Հակոբյանի նախագահությամբ տեղի է ունենում Հայաստանի Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի գրական երեկո։

«Պրոլետարական գրականության մասին» զեկուցում են՝ Ա. Վշտունին և Գ. Աբովը։ Իրենց ստեղծագործություններով հանդես են գալիս՝ Ն. Զարյանը, Ա. Վշտունին, Գ. Աբովը։

Հունվարի 13-ին

Թիֆլիսի Ռուսթավելու թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Գ. Սունդուկյանի հիշատակին։

Բեմադրվում է «Պեպո»-ն։

Հունվարի 25-ին

Երևանում գումարվում է ԱՍՖՍՌ կենտրոնական Գործադիր Կոմիտեի 3-րդ գումարման 2-րդ սեսիան։

Մարտի 6-ին

Արտաստհմանից վերադարձած Ալ. Շիրվանզադեի պատվին Թիֆլիսի Հայարտանը կազմակերպվում է հանդիսավոր երեկո։

Մարտի 15-ին

Վախճանվեց Դմիտրի Անդրեևիչ Ֆուրմանովը։

Ապրիլի 4-ին

Երևան է ժամանում Ալ. Շիրվանզադեն։

Մայիսի 7-ին

Թիֆլիսի Հայարտանը. Ե. Չարենցը դասախոսություն է կարդում «Պրոլետարական գրականության ուղիները» նյութի մասին։

Մայիս

Թիֆլիսում լույս է տեսնում «Զարթոնք» գրական-գեղարվեստական ժողովածուն։

Խմբագրականից.— *«Պ. Հ. Հ. Մ. Գործադիր Բյուրոն որոշել է հրատարակել մի ժողովածու, որն իր մեջ ամփոփի պարսկահայ կյանքին և ընդհանրապես Արևելքին նվիրված գեղարվեստական երկեր ու գիտական ուսումնասիրություններ»։*

«Զարթոնք», 1926։

Նյութեր ունեն՝ Վ. Եսայեյը, Գ. Գրիգը, Ս. Ավչյանը, Գ. Մելոյանը, Վ. Թերզիբաշյանը և ուրիշները։

Հունիսի 6-ին

ԿԳԿ III գումարման 4-րդ սեսիան ընդունում և հրապարակում է ՀԱՍԽՀ Սահմանադրության նոր տեքստը, որը հետագայում ներկայացվում է Խորհուրդների V համագումարին հաստատելու։

Հունիսի 20-ին

Վախճանվեց Ֆելիքս Էդմունդովիչ Ձերժինսկին։

Հունիսի 21-ին

Լույս է տեսնում «Մարտակոչ» օրաթերթի 1000-րդ համարը։

Հուլիս

Լույս է տեսնում «Ժողովրդական լուսավորություն» ամսագրի առաջին համարը։

Սեպտեմբերի 25-ին

Ս. Սպանդարյանի մահվան 10-ամյակի կապակցությամբ Կուլտուրայի Տան առջև դրվում է Ս. Սպանդարյանի կիսանդրին (գործ՝ Ա. Սարգսյանի)։

Սեպտեմբեր

Երևանում հայ գրականագետների, քննադատների և մամուլի աշխատողների կողմից կազմվում է «Հայ գրական ընկերություն»։

Հոկտեմբերի 4-ին

Տոնվում է Ալ. Սպենդիարովի երաժշտական գործունեության 25-ամյակը։

ՀՍԽՀ ԿԳԿ-ն Ալեքսանդր Սպենդիարովին շնորհում է Հանրապետության ժողովրդական արտիստի կոչում։

Հոկտեմբերի 9-ին

Արտասահմանից հայրենիք է վերադառնում Ավ. Իսահակյանը։

Հոկտեմբերի 26-ին

Համկ(բ)Պ XV կոնֆերենցիայի բացումը։

Նոյեմբերի 29-ին

Հայաստանում սովետական կարգերի հաստատման VI տարեդարձը։

Մամուլում հոդվածներով հանդես են գալիս արտասահմանից վերադարձած Ալ. Շիրվանզադեն և Ավ. Իսահակյանը։

Ալ. Շիրվանզադեի հոդվածը.

«Երբ կանգնած ես հոյակապ արձանի պատվանդանի տակ, չես կարող տեսնել նրա մեծությունն իր ամբողջությամբ։

Վեց տարին պատմության համար մի ակնթարթ է։

Ժամանակներ պիտի անցնեն, սերունդներ պիտի փոխվեն,

որպեսզի հայ ժողովրդին պարգևված Նոյեմբերի քսան և ինը նույն ժողովրդին երևա իր լիակատար հսկայությամբ։

Մենք, ժամանակակիցներս, շատ մոտիկ ենք նրան, մեր աչքերից տակավին չի հեռացել խառնաշփոթ ու տխուր անցյալի մռայլ մշուշը։ Ահա ինչու մեր ուժերից վեր է ըստ արժանվույն գնահատել հայ պատմության մեջ չեղած մեծ օրն ազատության։

Ապագա սերունդներին է պատկանում այդ գնահատման չափերը, և նրանք են, որ հիացմամբ պիտի կանգ առնեն վեհադույն վայրկյանի առջև և հրճվեն իրենց հոգու ամբողջ ղորությամբ։

Նոյեմբերի քսան և ինը Հոկտեմբերյան Հեղափոխության ծնունդն է։ Սակայն մի ծնունդ, որ ըստ ինքյան մարդկային պատմության դմայլելի էջերից մեկն է։

Մի անգամ ևս թերթենք մեր երկհազարամյա անցյալի ժամանակագրությունները և մի անգամ ևս համոզվենք, որ հայ ժողովուրդը երբեք չի ունեցել այն ազատությունը, որ ունի այժմ։ Նվ թող մեր նոր սերունդն այս գիտակցությամբ տոգորված և իրեն պարգևված լի ու լի հնարավորությամբ ոգևորված կրկնապատկի իր եռանդը հայրենիքի վերաշինության համար»։

«Խորհրդային Հայաստան», 29 Նոյեմբերի, 1926։

Ավ. Իսահակյանի հոդվածից.

«Տեսնում եմ՝ ավերի և մոխիրների միջից, խաղաղությամբ զրահավորված, կանգնում է աշխատավորական, Խորհրդային Հայաստանը համամարդկային գաղափարներով, համաշխարհային բոլշևիկությամբ և ազգային ոճով ու դեմքով։

Մեր փոքրիկ ածուն, համապար և համահավասար համամիութենական հսկային, որ իր տիտանյան ուսն է դրել մարդկությունը վերստեղծող ավելի արդար, բացարձակ արդար կյանքի առարկայացման գործի տակ։

Ցարական կրունկի ներքո դիմակազրկված զանգվածներն ոտքում են իրենց ողնաշարը, անձնավորվում են ու մարդանում։

Մեր հինավուրց մշակույթից վերապրած արժեքների վրա բարձրանում են նոր արժեքներ։

Տեսնում եմ այդ գործին լծված բոլոր ստեղծագործ ուժերը,

տեսնում եմ ավելի հեռուն, ուռճացած մեր մշակույթը հորդում է և ծափվում ափերից դուրս լույսի ալիքներով»:

«Խորհրդային Հայաստան», 29 նոյեմբերի, 1926

Նոյեմբեր

Ընկեր Ի. Վ. Ստալինի զեկուցումը «Սոցիալ-դեմոկրատական ծնքման մասին մեր պարտիայի մեջ» պարտիայի XV կոնֆերենցիայում:

Դեկտեմբերի 21-ին

Տեղի է ունենում ՀԽԳ Ասոցիացիայի և «Նոյեմբեր» միության միացյալ կոնֆերենցիան:

Դեկտեմբերի 24-ին

«Կարմիր Մոծակ»-ի խմբագրության նախաձեռնությամբ Հ. Պարոնյանի մահվան 25-ամյակի կապակցությամբ կազմակերպվում է դրական երեկո:

Դեկտեմբեր

Ընկեր Ի. Վ. Ստալինի զեկուցումը՝ «Դարձյալ սոցիալ-դեմոկրատական ծնքման մասին մեր պարտիայի մեջ» Կոմինտեռնի Գործկոմի 7-րդ ընդլայնած պլենումում:

«Ձախջախելով և դեն շպրտելով կապիտուլյանտներին ու կապիտալիզմի պաշտպաններին, բոլշևիկները շարունակեցին մեր երկրի սոցիալիստական ինդուստրիալիզացիայի գործը:

Ինդուստրիալիզացիայի ոչ մի բնագավառ, ոչ մի հարց չէր վրիպում Ստալինի տեսադաշտից: Ստալինը արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծման, նախկինում հետամնաց ճյուղերի զարգացման ու վերակառուցման նախաձեռնողն է: Ստալինը մեր երկրում ածխա-մետալուրգիական երկրորդ բազայի ստեղծման, Կուզբասի շինարարության ոգեշնչողն է: Ստալինը սոցիալիստական շինարարությունների կազմակերպիչն ու ղեկավարն է»:

«Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալին: Համառոտ կենսագրություն»:

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Չափածո

1. Հ. Հակոբյան.— Բանաստեղծություններ, 1-ին հատ., Պետհրատ, Թիֆլիս:
2. Ն. Զարյան.— Նոյեմբերյան օրերին, Մոսկվա-Թիֆլիս-Երևան:
3. Ն. Զարյան.— Չրանցքի կապույտ երկրում, Պետհրատ, Երևան:
4. Ն. Զարյան.— Չին աղջիկը, Երևան:
5. Գ. Սարյան.— Յունկերսի խորտակումը, Լենինական:
6. Վ. Աղասյան.— Բանաստեղծություններ, Թիֆլիս:
7. Պահարե.— Կոմերիա վաղոն, Թիֆլիս:
8. Ս. Տարոնցի.— Անապատաններ, Պետհրատ, Լենինական:
9. Ա. Խնկոյան.— Կենդանի գրույց Պետապի մասին, Երևան:

Արձակ

1. Ե. Չարենց.— Երկիր Նայիրի, Պետհրատ, Երևան:
2. Ստ. Զորյան.— Հեղկոմի նախագահը, Երևան:
3. Ստ. Զորյան.— Գրադարանի աղջիկը, Երևան:
4. Արապի.— Պատմվածքներ, Երևան:
5. Արապի.— Տրակտորը, Երևան:
6. Մ. Մանվելյան.— Հարյուր ճիպոտ, Դարաքիլիսա:
7. Ծ. Թորգոմյան.— Երկերի ժողովածու, Թիֆլիս:
8. Արաքս.— Պատմվածքներ, Պետհրատ, Երևան:
9. Մ. Պետրոսյան.— Պատմվածքներ, Թիֆլիս:

Դրամատուրգիա

1. Ան. Վարդանյան.— Դանել աղա, Պետհրատ, Երևան:
2. Ան. Վարդանյան.— Ժողովը, Պետհրատ, Երևան:
3. Ան. Վարդանյան.— Նախօրյակին, Պետհրատ, Երևան:
4. Մ. Մելիքսեթյան.— Ապահովագրվենք, Երևան:
5. Էդ. Խոճիկ.— Պապի կճուճը, Երևան:

Գրականության պատմության, տեսության և ճեճադատության

1. Խ. Սարգսյան.— Վահան Տերյան, Պետհրատ, Երևան:
3. Ա. Կարինյան.— Դաշնակցությունը փաստերի դեմ, Ջակ-կնիգա, Թիֆլիս:
4. Ա. Կարինյան.— Հայ ազգայնականների ուղին, Մոսկվա:
5. Վ. Թերզիբաշյան.— Գիր ու արվեստ, Լենինական:

Թարգմանություններ

1. Է. Զոլա.— Ժերմինալ, Պետհրատ, Երևան:
2. Մ. Գորկի.— Քսան վեց և մեկ, Մոսկվա:
3. Մ. Գորկի.— Երիտասարդ դրուզը—մարդը, Մոսկվա:
4. Պ. Կոգան.— Ուրվագծեր արևմտաեվրոպական գրականության պատմության:

1927

Հունվարի 17-ին

Երևանում հիմնվում է Ռուսաստանի Ռևոլյուցիոն Նկարիչների Ասոցիացիայի Հայաստանի մասնաճյուղ:

Մարտի 30-ին

Երևանում դամարվում է ՀՍԽՀ խորհուրդների V համագումարը: Քննության են առնվում— ՀՍԽՀ կառավարության հաշվետվությունը, Հողժողկոմատի գործունեությունը, ՀՍԽՀ սահմանադրության մի քանի կետերի փոփոխումը. կատարվում են ընտրություններ:

Ապրիլի 20-ին

Թիֆլիսում առնվում է արտիստ Վ. Փափազյանի բեմական գործունեության 25-ամյա հոբելյանը:

Ապրիլ

Սկսում է գործել Երևանի կարքիդի գործարանը:

Հունիսի 29-ին

Լենինական է ժամանում Մ. Ի. Կալինինը։

Հուլիսի 24-ին

Տեղի է ունենում Զորագէսի հանդիսավոր հիմնադրումը։

Օգոստոսի 25-ին

Բաթում է հասնում Սովետական Հայաստան ներգաղթող հայերի առաջին կարավանը։

Օգոստոս

Երևանում կազմակերպվում է Հայաստանի աշխատավորական Գրողների Միության (Հայաշխ)։ Ժամանակավոր նախագահ է ընտրվում Դ. Դեմիրճյանը, ժամանակավոր քարտուղար՝ Ստ. Զորյանը։

Միության անդամներն են՝ Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Միք. Մանվելյանը, Յ. Խանզադյանը, Ա. Տերտերյանը, Տ. Հախումյանը, Ա. Խոնդկարյանը և ուրիշները։

Օգոստոս

Լույս է տեսնում «Գրական Դիրքեր» տեսական-քննադատական, գրական-գեղարվեստական պատկերազարդ ամսագրի առաջին համարը. օրգան Խորհրդային Հայաստանի Պրոլետարական Գրողների Միության։

Պատասխանատու խմբագիր՝ Ն. Դարբաղյան։

Խմբագրականից.— «Չնայած, որ հինգ տարվա պատմություն ունի պրոլետարական գրական շարժումը Հայաստանում, բայց այսօր միայն, իր գոյության 5-րդ տարում, նա հնարավորություն ունեցավ հրատարակելու իր օրգանը։

Գաղափարական պայքար տանելով ամեն տեսակի հակամոնիստական թեքումների և հոսանքների դեմ, մեր վերջին և հիմնական խնդիրն է զարկ տալ պրոլետարական գրականության զարգացմանը և նրա հեգեմոնիայի պատմական զարգացման դրծին։ Ռուսաստանում արդեն վաղուց է անցել, մեզ մոտ էլ անցած պետք է համարել այն շրջանը, երբ պրոլետարական գրականությունը դեռ նոր էր ծնվում, դեռ իր առաջին քայլերն էր անում, երբ մենք ասում էինք— «թեկուզ թուլ, բայց թող պրոլետարա-

կան լինի»։ Պրոլետարական դրականությունը քանակապես աճել է, այդ քանակը այսօր պետք է փոխվի որակի։ Այսօր պրոլետարական գրականությունը ոչ միայն բավանդակությամբ, այլ և ձևով պետք է բարձր լինի. այսօր մենք մեր դրոշի վրա գրում ենք.— «Մերը, բայց՝ լավը»։

Մի կողմից պրոլետարական սկսնակին առաջ քաշել, նրան դաստիարակել և գեղարվեստորեն դիմել, մյուս կողմից՝ որոշ նվաճումների հասած ընկերներին օգնել ավելի խորանալու և լայնանալու, հրանց թերությունների դեմ կռվել, նրանց նվաճումները մասսայականացնել և՝ առհասարակ՝ պրոլետարական գրականության ղարգացման, ագիտացիայի և պրոպագանդայի գործը կապել մակերպված հիմքերի վրա դնել— ահա մեր խնդիրների խնդիրը»։

«Դրական դիրքերում» № 1, 1927։

Սեպտեմբերի 9–ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի զրույցը Ամերիկյան առաջին բանվորական պատվիրակության հետ։

Ի. Վ. Ստալինի զրույցից.

«1–ին ՀԱՐՑ։ Լենինը և կոմպարտիան գործնականապես ի՞նչ նոր, սկզբունքներ են ավելացրել մարքսիզմին։ Ճի՞շտ կլիներ արդյոք ասել, թե Լենինը հավատում էր «ստեղծագործական ուժության», մինչդեռ Մարքսն ավելի հակամետ էր սպասելու տնտեսական ուժերի գագաթնակետային զարգացմանը։

Պատասխան։ *Ես կարծում եմ, որ Լենինը ոչ մի «նոր սկզբունք» չի «ավելացրել» մարքսիզմին, ինչպես որ Լենինը չի վերացրել մարքսիզմի «հին» սկզբունքներից ոչ մեկը։ Լենինը եղել է և մնում է Մարքսի ու Էնգելսի ամենահավատարիմ ու հետևողական աշակերտը, որն ամբողջապես ու լիովին հենվում է մարքսիզմի սկզբունքների վրա։ Բայց Լենինը Մարքս-Էնգելսի ուսմունքի միմիայն կատարողը չէր։ Նա դրա հետ մեկտեղ Մարքսի ու Էնգելսի ուսմունքի շարունակողն էր։ Ի՞նչ է նշանակում այս։ Այս նշանակում է, որ նա ավելի զարգացրեց Մարքս-Էնգելսի ուսմունքը՝ զարգացման նոր պայմաններին համապատասխան, կապիտալիզմի նոր փուլին համապատասխան, իմպերիալիզմին համապատասխան կերպով։ Այս նշանակում է, որ դասակարգային կռվի*

նոր պայմաններում ավելի պարզացնելով Մարքսի ուսմունքը՝ Լենինը մարքսիզմի ընդհանուր դանձարանը մտցրեց ինչ-որ նոր բան՝ համեմատած այն բանի հետ, ինչ որ Մարքսն ու Էնգելսն էին տվել, համեմատած այն բանի հետ, ինչ կարող էր տրվել մինչիմպերիալիստական կապիտալիզմի ժամանակաշրջանում, ընդ որում այդ նորը, որ Լենինը մտցրել է մարքսիզմի դանձարանը, ամբողջապես ու լիովին խարսխված է Մարքսի ու Էնգելսի տված սկզբունքների վրա։ Հենց այս իմաստով է, որ մեզանում խոսվում է լենինիզմի՝ որպես իմպերիալիզմի ու պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանի մարքսիզմի՝ մասին։ Ահա մի քանի հարցեր, որոնց բնագավառում Լենինը նոր բան է տվել՝ ավելի պարզացնելով Մարքսի ուսմունքը։

Նախ՝ մոնոպոլիստական կապիտալիզմի հարցը, իմպերիալիզմի՝ որպես կապիտալիզմի նոր փուլի՝ հարցը։ Մարքսն ու Էնգելսը «Կապիտալ»-ում տվել են կապիտալիզմի հիմունքների վերլուծությունը։ Բայց Մարքսն ու Էնգելսն ապրում էին մինչմոնոպոլիստական կապիտալիզմի տիրապետության ժամանակաշրջանում, կապիտալիզմի ևահուն էվոլուցիա կատարելու և ամբողջ երկրագնդի վրա նրա «խաղաղ» տարածման ժամանակաշրջանում։ Այդ հին փուլն ավարտվեց XIX դարի վերջին և XX-ի սկզբին, երբ Մարքսն ու Էնգելսն արդեն կենդանի չէին։ Հասկանալի է, որ Մարքսն ու Էնգելսը կարող էին լոկ կռահել կապիտալիզմի զարգացման այն նոր պայմանների մասին, որոնք վրա հասան կապիտալիզմի հին փուլին հաջորդելու եկած նոր փուլի կապակցությամբ, զարգացման իմպերիալիստական, մոնոպոլիստական փուլի կապակցությամբ, երբ կապիտալիզմի ևահուն էվոլուցիա կատարելուն փոխարինեց կապիտալիզմի թռիչքաձև, կատաստրոֆիկ զարգացումը, երբ զարգացման անհավասարաչափությունն ու կապիտալիզմի հակասությունները հանգես եկան առանձին ուժգնությամբ, երբ վաճառահանման շուկաների ու կապիտալի արտահանման համար մղվող պայքարը զարգացման ծայրահեղ անհավասարաչափության պայմաններում անխուսափելի դարձրեց իմպերիալիստական պարբերական պատերազմներն աշխարհի ու ազդեցության ոլորտների պարբերական վերաբաժանումների համար։ Լենինի մատուցած ծառայությունը և, հետևապես Լենինի մոտ նորն այստեղ այն է, որ նա, հենվելով «Կապիտալի» հիմնական

դրույթների վրա, տվեց իմպերիալիզմի՝ որպես կապիտալիզմի վերջին փուլի՝ հիմնավորված մարքսիստական վերլուծությունը, բաց անելով նրա խոցերն ու նրա անխուսափելի կործանման պայմանները։ Այս վերլուծության բազայի վրա ծագեց Լենինի հայտնի դրույթն այն մասին, որ իմպերիալիզմի պայմաններում հնարավոր է սոցիալիզմի հաղթությունն առանձին, ջոկ վերցրած կապիտալիստական երկրներում։

Երկրորդ, պրոլետարիատի դիկտատուրայի հարցը։ Պրոլետարիատի դիկտատուրայի՝ որպես պրոլետարիատի քաղաքական տիրապետության և որպես կապիտալի իշխանությունը բռնության միջոցով տապալելու մեթոդի՝ հիմնական գաղափարը տվել են Մարքսն ու Էնգելսը։ Լենինի մոտ նորն այս բնագավառում այն է, որ ա) նա հայտնագործեց Սովետական իշխանությունը որպես պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձև՝ դրա համար օգտագործելով Փարիզի Կոմունայի և ռուսական ռևոլյուցիայի փորձը. բ) պրոլետարիատի դիկտատուրայի դաշնակիցների պրոբլեմի տեսանկյունով նա բացեց պրոլետարիատի դիկտատուրայի ֆորմուլայի փակագծերը, պրոլետարիատի դիկտատուրան բնորոշելով որպես ղեկավար հանդիսացող պրոլետարիատի դասակարգային դաշինքի հատուկ ձև ոչ-պրոլետարական դասակարգերի (գյուղացիության և այլ) շահագործվող մասսաների հետ, որոնք ղեկավարվող են հանդիսանում. գ) նա առանձին ուժով ընդգծեց այն փաստը, որ դասակարգային հասարակության պայմաններում պրոլետարիատի դիկտատուրան դեմոկրատիայի ամենաբարձր տիպն է, պրոլետարական դեմոկրատիայի ձևը, որն արտահայտում է մեծամասնության (շահագործվողների) շահերը,— ի հակակշիռ կապիտալիստական դեմոկրատիայի, որն արտահայտում է փոքրամասնության (շահագործողների) շահերը։

Երրորդ, սոցիալիզմի հաջող կառուցման ձևերի ու եղանակների հարցը պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանում, կապիտալիզմից դեպի սոցիալիզմ ձգվող անցողիկ ժամանակաշրջանում, մի երկրում, որ շրջապատված է կապիտալիստական պետություններով։ Մարքսն ու Էնգելսը դիտում էին պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանը որպես ավելի կամ պակաս երկարատև մի ժամանակաշրջան, որը լի է ռևոլյուցիոն գոտեմարտերով ու քաղաքացիական պատերազմներով, որի տևո-

դության ընթացքում պրոլետարիատը, իշխանության գլուխ կանգնած լինելով, ձեռք է առնում տնտեսական, քաղաքական, կուլտուրական ու կազմակերպական բնույթի միջոցներ, որոնք անհրաժեշտ են հին կապիտալիստական հասարակության փոխարեն նոր սոցիալիստական հասարակություն, առանց դասակարգերի հասարակություն, առանց պետության հասարակություն ստեղծելու համար։ Լենինն ամբողջապես ու լիովին կանգնած էր Մարքսի ու Էնգելսի այս հիմնական դրույթների հողի վրա։ Լենինի մոտ այս բնագավառում նորն այն է, որ ա) նա հիմնավորեց լիակատար սոցիալիստական հասարակության կառուցման հնարավորությունն իմպերիալիստական պետությունների շրջապատված՝ պրոլետարիատի դիկտատուրայի երկրում, պայմանով, որ այդ երկիրը չխեղդվի շրջապատող կապիտալիստական պետությունների ռազմական ինտերվենցիայի կողմից. բ) նա ուրվագծեց տնտեսական բազաբանականության կոնկրետ ուղիները («նոր տնտեսական քաղաքականություն»), որոնց օգնությամբ պրոլետարիատը, իր ձեռքին ունենալով տնտեսական իշխող բարձունքները (արդյունաբերությունը, հողը, տրանսպորտը, բանկերը և այլն)՝ սոցիալիզացիայի ենթարկած ինդուստրիան զոդում է գյուղատնտեսության հետ («ինդուստրիայի զոդումը գյուղացիական տնտեսության հետ») և այդպիսով ամբողջ ժողովրդական տնտեսությունը տանում է դեպի սոցիալիզմ. գ) նա ուրվագծեց գյուղացիության հիմնական մասաներին կոոպերացիայի միջոցով աստիճանաբար մոտեցնելու և սոցիալիստական շինարարության հոսանի մեջ ներգրավելու կոնկրետ ուղիները, կոոպերացիայի միջոցով, որը ներկայացնում է գյուղացիական մանր տնտեսության վերակերտման ու գյուղացիության հիմնական մասսաներին սոցիալիզմի ոգով վերադաստիարակելու մեծագույն մի միջոց պրոլետարիատի դիկտատուրայի ձեռքին։

Չորրորդ, պրոլետարիատի հեգեմոնիայի հարցը՝ ռևոլուցիայի, ամեն մի ժողովրդական ռևոլուցիայի մեջ, ինչպես ցարիզմի դեմ ուղղված ռևոլուցիայի, այնպես էլ կապիտալիզմի դեմ ուղղված ռևոլուցիայի մեջ։ Մարքսն ու Էնգելսը տվել են պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարի հիմնական ուրվագծերը։ Լենինի մոտ այստեղ նորն այն է, որ նա ավելի զարգացրեց ու ծավալեց այդ ուրվագծերը՝ դրանք վերածելով պրոլետարիատի հեգեմոնիայի

բարեկերտ մի սիստեմի, քաղաքի ու գյուղի աշխատավոր մասսաներին ո՛չ միայն ցարիզմի ու կապիտալիզմի տապալման գործում, այլև պրոլետարիատի դիկտատուրայի օրով սոցիալիստական շինարարության գործում պրոլետարիատի կողմից ղեկավարելու բարեկերտ սիստեմի։ Հայտնի է, որ պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարը լենինի ու նրա պարտիայի շնորհիվ վարպետացին կիրառում գտավ Ռուսաստանում։ Ի միջի այլոց սրանով է բացատրվում այն փաստը, որ ռևոլուցիան Ռուսաստանում հանգեցրեց պրոլետարիատի իշխանությանը։ Առաջներում սովորաբար բանն այնպես էր տեղի ունենում, որ ռևոլուցիայի ժամանակ բարիկադների վրա կռվում էին բանվորները, նրանք արյուն էին թափում, նրանք տապալում էին հինը, իսկ իշխանությունն ընկնում էր բուրժուաների ձեռքը, որոնք հետո ճնշում ու շահագործում էին բանվորներին։ Բանն այսպես է եղել Անգլիայում ու Ֆրանսիայում։ Բանն այսպես է եղել Գերմանիայում։ Մեզանում, Ռուսաստանում, բանն ուրիշ ընթացք ստացավ։ Մեզանում բանվորները ռևոլուցիայի հարվածային ուժը չէին միայն։ Լինելով ռևոլուցիայի հարվածային ուժը՝ ռուսական պրոլետարիատը դրա հետ մեկտեղ չանում էր լինել քաղաքի ու գյուղի բոլոր շահագործվող մասսաների հեգեմոնը, քաղաքական ղեկավարը՝ նրանց իր շուրջը հավաքելով, նրանց բուրժուազիայից պոկելով, քաղաքականապես մեկուսացնելով բուրժուազիային։ Իսկ շահագործվող մասսաների հեգեմոնը լինելով՝ ռուսական պրոլետարիատն ամբողջ ժամանակ պայքարում էր հանուն այն բանի, որ իշխանությունն իր ձեռքը պցի և այն օգտագործի իր սեփական շահերի համար՝ բուրժուազիայի դեմ, կապիտալիզմի դեմ։ Իսկապես սրանով էլ բացատրվում է այն, որ ռևոլուցիայի յուրաքանչյուր հուժկու ելույթը Ռուսաստանում, ինչպես 1905 թվականի հոկտեմբերին, այնպես էլ 1917 թվականի փետրվարին ստեղծել էր մղում բանվորական պատգամավորների սովետները, որպես իշխանության նոր ապարատի տարրեր,— ապարատ, որը կոչված է ճնշելու բուրժուազիային,— ի հակակշիռ բուրժուական պառլամենտի, որպես իշխանության հին ապարատի, որը կոչված է ճնշելու պրոլետարիատին։ Բուրժուազիան մեզանում երկու անգամ փորձել է վերականգնել բուրժուական պառլամենտը և վերջ դնել սովետներին— 1917 թ. օգոստոսին, «նախապառլամենտի» ժամանակ, մինչև բոլշևիկների

կողմից իշխանությունը վերցնելը, և 1918 թ. հունվարին, «Սահմանադիր ժողովի» ժամանակ, իշխանությունը պրոլետարիատի կողմից վերցվելուց հետո,— ու ամեն անգամ պարտություն է կրել: Ինչո՞ւ: Որովհետև բուրժուազիան արդեն քաղաքականապես մեկուսացված էր, աշխատավորների միլիոնավոր մասսաները պրոլետարիատին էին համարում ռևոլյուցիայի միակ առաջնորդը, իսկ մասսաներն արդեն ատելով ու փոքձել էին սովետները, որպես իրենց բանվորական իշխանությունը, որին բուրժուական պառլամենտի հետ փոխելը պրոլետարիատի համար ինքնասպանություն կլիներ: Ասած պարտականի չէ, որ բուրժուական պառլամենտարիզմը մեզ մոտ չպատվաստվեց: Ահա թե ինչու ռևոլյուցիան Ռուսաստանում հասցրեց պրոլետարիատի իշխանությանը: Սրանք են ռևոլյուցիայի մեջ պրոլետարիատի հեգեմոնիայի լենինյան սխեմը կենսագործելու արդյունքները:

Հինգերորդ, ազգային-գաղութային հարցը: Մարքսն ու Ենգելսը, իր ժամանակին վերլուծելով Իռլանդիայում, Հնդկաստանում, Չինաստանում, կենտրոնական Եվրոպայի երկրներում, Լեհաստանում, Հունգարիայում տեղի ունեցող անցքերը,— ամին ազգային-գաղութային հարցի հիմնական, մեկնակետային դաղափարները: Լենինն իր աշխատություններում հիմնվում էր այդ դաղափարների վրա: Լենինի մոտ այս բնագավառում նորն այն է, որ ա) նա ի մի հավաքեց այդ գաղափարները և իմպերիալիզմի դարաշրջանի ազգային-գաղութային ռևոլյուցիաների վերաբերյալ հայացքների բարեկերտ սիստեմի վերածեց. բ) ազգային-գաղութային հարցը կապեց իմպերիալիզմի տապալման հարցի հետ. գ) ազգային-գաղութային հարցը միջազգային պրոլետարական ռևոլյուցիայի ընդհանուր հարցի բաղկացուցիչ մասը հայտարարեց:

Վերջապես, պրոլետարիատի պարտիայի վերաբերյալ հարցը: Մարքսն ու Ենգելսը ամեն են հիմնական ուրվագծեր պարտիայի՝ որպես պրոլետարիատի առաջավոր ջոկատի՝ մասին, առանց որի (առանց պարտիայի) պրոլետարիատը չի կարող ձեռք բերել իր ուղղությունը ո՛չ իշխանությունը վերցնելու իմաստով, ո՛չ էլ կապիտալիստական հասարակությունը վերակառուցելու իմաստով: Լենինի մոտ այս բնագավառում նորն այն է, որ նա ամեն զարգացրեց այդ ուրվագծերը՝ համապատասխան պրոլետարիատի պայքարի նոր պայմաններին իմպերիալիզմի ժամանակաշրջանում,

ցույց տալով, որ ա) պարտիան պրոլետարիատի դասակարգային կազմակերպության բարձրագույն ձևն է՝ համեմատած պրոլետարիատի կազմակերպության այլ ձևերի հետ (արհմիություններ, կոոպերացիա, սեռական կազմակերպություն), որոնց աշխատանքը նա կոչված է ընդհանրացնելու և նրան ուղղություն տալու. բ) պրոլետարիատի դիկտատուրան կարող է իրականացվել միայն պարտիայի՝ որպես նրան ուղղություն տվող ուժի՝ միջոցով. գ) պրոլետարիատի դիկտատուրան լիակատար կարող է լինել միայն այն դեպքում, եթե նրան դեկավարում է մի պարտիա, կոմունիստների պարտիան, որը դեկավարության չի բաժանում և չպետք է բաժանի այլ պարտիաների հետ. դ) առանց պարտիայի մեջ երկաթե կարգապահության ոչնչացնելու չեն կարող իրականացվել պրոլետարիատի դիկտատուրայի խնդիրները շահագործողներին հնազանդեցնելու և դասակարգային հասարակության սոցիալիստական հասարակության վերակառուցելու վերաբերյալ:

Ահա հիմնականում այն նորը, ինչ ավել է Լենինն իր աշխատություններում՝ կոնկրետացնելով ու ավելի զարգացնելով Մարքսի ուսմունքը՝ համապատասխան պրոլետարիատի պայքարի նոր պայմաններին իմպերիալիզմի ժամանակաշրջանում:

Հենց այս պատճառով է, որ մեզանում ասում են, թե լենինիզմն իմպերիալիզմի ու պրոլետարական ռևոլյուցիաների դարաշրջանի մարքսիզմն է:

Սրանից երևում է, որ լենինիզմը չի կարելի ո՛չ բաժանել մարքսիզմից, ո՛չ էլ առավել ևս հակադրել մարքսիզմին»:...

«12-ՐԴ ՀԱՄ: Դուք կարո՞ղ եք արդյոք համառոտակի ասել մեզ ապագա այն հասարակության բնութագիրը, որը փորձում է ստեղծել կոմունիզմը:

Պատասխան: *Կոմունիստական հասարակության ընդհանուր բնաբնագիրը տրված է Մարքսի, Էնգելսի ու Լենինի աշխատություններում: Եթե համառոտակի ասենք կոմունիստական հասարակության անատոմիան, ապա դա կլինի այնպիսի հասարակություն, ա) որտեղ արտադրության գործիքների ու միջոցների մասնավոր սեփականության չի լինի, այլ կլինի հասարակական, կոլեկտիվ սեփականություն. բ) որտեղ չեն լինի դասակարգեր ու պետական իշխանություն, այլ կլինեն ինդուստրիայի ու գյուղատնտեսության աշխատավորներ, որոնք տնտեսապես կկառավարվեն որպես աջ-*

իստավորների ազատ ասոցիացիա. գ) որտեղ պլանով կազմակերպված ժողովրդական տնտեսությունը կխարսխվի բարձրագույն տեխնիկայի վրա՝ ինչպես ինդուստրիայի բնագավառում, այնպես էլ գյուղատնտեսության բնագավառում. դ) որտեղ քաղաքի ու գյուղի միջև, ինդուստրիայի ու գյուղատնտեսության միջև հակադրություն չի լինի. ե) որտեղ մթերքները կբաշխվեն ֆրանսիական հին կոմունիստների սկզբունքով՝ «յուրաքանչյուրից ըստ իր ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ իր պահանջմունքների». զ) որտեղ գիտությունն ու արվեստը լիակատար ծաղկման հասնելու համար բավականաչափ բարենպաստ պայմաններ կվայելեն. է) որտեղ անհատը ազատ լինելով մի կտոր հացի հոգսերից ու «աշխարհի ուժեղներին» հարմարվելու անհրաժեշտությունից՝ իսկապես ազատ կլինի: Եվ այլն և այլն: Պարզ է, որ մենք դեռ հեռու ենք այսպիսի հասարակությունից»:

Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, Կուսհրատ, 1937, էջ 255—261, 291—292:

Սեպտեմբերի 25-ին

Երևանում հրավիրվում է իդեոլոգիական ֆրոնտի աշխատողների հանրապետական խորհրդակցություն:

Հոկտեմբերի 16-ին

«Մարտակոչ» թերթը վերանվանվում է «Պրոլետար»:

Հոկտեմբերի 21-ին

Երևան է ժամանում Հ. Բարբյուսը:

Հ. Բարբյուսի պատվին հանդիսավոր նիստեր են կազմակերպվում՝ Պետհամալսարանում և Գուլտուրայի Տանը:

Վերադարձին Կիրովականում արտասանած իր ճառում Հ. Բարբյուսն ասում է. «Այս րոպեիս կուզեի ունենալ այնպիսի երկար ձեռքեր, որ կարողանայի ամբողջ հայ աշխատավորությանը սեղմել իմ կրծքին և նրան ասել,— երջանիկ եք, որ ձեզ վիճակված է սոցիալիզմ կառուցել:

Ժամանակավորապես հեռանալով ձեզանից, չեմ ասում մնաք բարով, այլ ասում եմ տեսություն»:

Նոյեմբերի 13–ին

ՀԿ(բ)Պ V Համագումարի բացումը:

Նոյեմբերի 15–ին

Մոսկվայում Ա. Վ. Լունաչարսկու նախագահությամբ տեղի է ունենում պրոլետարական և ուղղության պրոցների միջազգային կոնֆերենցիա:

Կոնֆերենցիան ընդունում է բանաձև:

Կոնֆերենցիայի բանաձևից.

«Համայն աշխարհի պրոլետարական արվեստի ներկայացուցիչների համար՝ ՍՍՌՄ-ի դրական զարգացման կարևոր հատկությունը հանդիսանում է ՍՍՌՄ-ի պրոլետարական գրողների կազմակերպությունը (Պրոլետարական Գրողների Համամիութենական Ասոցիացիա— ՎԱՊՊ)»:...

«Կազմակերպված կոլեկտիվ աշխատանքի շնորհիվ պրոլետարական գրականությունը արագությամբ զարգանում է նաև ՍՍՌՄ-ի մյուս ժողովուրդների մեջ, մասնավորապես նշանակալից չափերով աճել են ուկրաինական, բելոռուսական, վրացական, հայկական գրականությունները, որոնք մինչև Հոկտեմբերյան ռևոլուցիան խեղդված էին»:

Նոյեմբերի 21–ին

Մոսկվայի Ռևոլուցիոն Թատրոնում տեղի է ունենում Սովետական Գրողների Միությունների Ֆեդերացիայի հանդիսավոր բացումը: Նախագահում է Ա. Սերաֆիմովիչը:

Նոյեմբերի 24–ին

Վախճանվեց Շոշանիկ Կուպռինյանը:

Նոյեմբերի 25–ին

Բաքվի Կուլտուրայի Տանը Ս. Զարենցը դասախոսում է «Հեռահոկտեմբերյան հայ գրականության ներկան և հեռանկարները» նյութի մասին:

Դեկտեմբերի 2–ին

Համկ(բ)Պ XV Համագումարի բացումը:

Դեկտեմբերի 24-ին

Կուլտուրայի Տանը տոնվում է Հայաստանի Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի 5-րդ տարեդարձը. բացվում է Ասոցիացիայի II համագումարը:

Տեղի է ունենում ինտերնացիոնալ գրական երեկո. իրենց ստեղծագործություններով հանդես են գալիս վրացի, ադրբեջանցի, ռուս և հայ պրոլետարական գրողները:

Համագումարը քննության է առնում.

Ասոցիացիայի հաշվետու զեկուցումը, ստեղծագործական խնդիրներ և Հայաստանի Խորհրդային Գրողների Ֆեդերացիա կազմելու հարցը:

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ.

Չափածո

1. Ե. Չարենց.— Ռուբայաթ, Չակկնիպա, Թիֆլիս:
2. Ա. Վշտունի.— Արևելքը հուր է հիմա, հրատ. Հյուս. Կոմկ. Երկրային բաժնի, Ռոստով:
3. Աթ. Խնկոյան.— Մեծն Հոկտեմբեր, Պետհրատ, Երևան:

Արձակ

1. Ավ. Իսահակյան.— Լիլիթ, Չակկնիպա, Թիֆլիս:
2. Հ. Հակոբյան.— Ագիտատորի հուշերից, Չակկնիպա, Թիֆլիս:
3. Դ. Դեմիրճյան.— Ծանոթներ, հրատ. «Հերմես», Երևան:
4. Ստ. Զորյան.— Կրակ, Պետհրատ, Երևան:
5. Մ. Մանվելյան.— Սև քաղաք, Պետհրատ, Երևան:
6. Մ. Մանվելյան.— Ժամանակակից մելոդրամ, հրատ. «Հերմես», Երևան:
7. Մ. Մանվելյան.— Գործադուլ, հրատ. «Հերմես», Երևան:
8. Գ. Աբով.— Առաջին կոմունարը, Պետհրատ, Երևան:
9. Սիրաս.— Մարդի դղումը, Պետհրատ, Երևան:
10. Հ. Մալխասյան.— Հորոտ, մորոտ, պատկերներ, IV գիրք:

Դրամատուրգիա

1. Վ. Միրաքյան.— Նոր գյուղի շեմքին, Պետհրատ, Երևան:
2. Վ. Միրաքյան.— Մանուշի հարսանիքը, Պետհրատ, Երևան:
3. Ան. Վարդանյան.— Բանդիտներ, Պետհրատ, Երևան:

Գրականության պատմության, տեսության և ընդհանրությունների

1. Ա. Տերտերյան.— Նկատողություններ մեր գյուղապիրների մասին, Պետհամալսարանի հրատ., Երևան:
2. Գ. Լևոնյան.— Բաղդասար դպիր, Պետհրատ, Երևան:
3. Ե. Շահազիզ.— Գաբրիել Սունդուկյանց, կենսագրական նյութեր, Պետհրատ, Երևան:

Թարգմանություններ

1. Լև Տոլստոյ.— Կոզակներ, Պետհրատ, Երևան:
2. Ա. Սերաֆիմովիչ.— Երկաթե հեղեղ, Պետհրատ, Երևան:

1928

Հունվարի 8-ին

Թիֆլիսում լույս է տեսնում «Պրոլետար» թերթի «Արվեստ, գրականություն, վեպություն» շաբաթական հավելվածի առաջին համարը:

Հունվարի 8-ին

Թիֆլիսի Հայպետտառը սեղմ է ունենում վրաստանի Պրոլետ. Գրողների Ասոցիացիայի հայկական սեկցիայի ընդհանուր ժողովը:

Հունվարի 13-ին

Թիֆլիսում հրավիրվում է վրաստանի Պրոլետարական Գրողների առաջին համագումարը:

Հունվարի 19-ին

ՎԱՊՊ-ի քարտուղարությունն ընդունում է բանաձև «Անդրկովկասյան հայ պրոլետարական գրողների միջև ծագած տարաձայնությունների վերացման մասին»:

Բանաձևի 1-ին և 5-րդ կետերը.

«1. Ինչպես ամբողջ Խորհրդային Միության, այնպես էլ հայ պրոլետարական գրականությունը զարգացել է և զարգանում է, բարդ ու հակասական պայմաններում։ Վարոնսկիականությունը, իբրև իդեոլոգիական մի հոսանք, որ թերագնահատում է, կամ պարզապես բացասում պրոլետարական գրականության զարգացման հնարավորությունը՝ տեղ է գտել և հայ գրականության մեջ, թե առաջ և թե այժմ, դրսևորվելով ամենատարբեր ձևերով։ Վարոնսկիականության դեմ մղած պայքարում թե առաջ և թե այժմ ծնունդ են առել խմբակային բնույթ կրող առանձին տենդենցներ, որոնք ոչ միայն անխուսափելիորեն չափազանցությունների բնույթ են կրել, այլև առանձին ընկերների կողմից վերածվել վարդինական թեքումների։ Մենք բոլորս լիակատար համերաշխությամբ արձանագրում ենք, որ ինչպես վարդինիզմը, այնպես էլ վարոնսկիականությունը խոշորագույն խոչընդոտներ են հանդիսանում պրոլետարականության զարգացման ճամփին»...

«5. Պրոլետարական գրականության անունը բոլորից պահանջում է լիակատար համերաշխություն և միասնություն սկզբունքային պարզ պլատֆորմայի հիման վրա։ *Այդ պլատֆորմը մեզ տրված է ինչպես Կ. Կ. բանաձևով, մեր պատկանելությամբ ՀՄՊԳՄ-ին (ВАПП-ին) այնպես և մեր մղած պայքարով վարոնսկիականության, «ձախ» թեքումների (վարդինիզմ, կոմունիստական սնապարծություն և այլն) դեմ։* Մեր առջև կանգնած է մեր արտաքին թշնամիների վրա ծավալված հարձակում գործելու խնդիրը։ Մեզ հարկավոր է ուժեղացնել մեր պայքարը նացիոնալիզմի, մեշչանական և բուրժուական իդեոլոգիայի դեմ և այլն։ *Այդպիսի խնդիրների հանդեպ միանգամայն անթույլատրելի է խափանել մեր ընդհանուր աշխատանքը։ Մենք համոզված ենք, որ այս բանաձևի հրապարակումը կվերացնի բոլոր անցյալ վեճերի և ընդհարումների մնացորդները։* Եվ ամեն մեկը, ով կփորձի մեզ ետ տանել դեպի արդեն լուծված պրոբլեմները և վերջացրած հարցերը, ով որևէ չափով կխանգարի մեզ մեր անհաշտ իդեոլոգիական պայքարում,— նա կհանդիպի մեր բոլոր պրոլետգրողների միասնական ճակատին»։

«Խորհրդային Հայաստան», 28 հունվարի, 1928.

Հունվարի 20-ին

Թիֆլիսի Գեղարվեստի պալատում բացվում է Պրոլետարական Գրողների Անդրկովկասյան առաջին համագումարը։

Համագումարում «Պրոլետ. գրականության ստեղծագործության ուղիները» նյութի մասին զեկուցում է վ. Երմիլովը։

Ընտրվում է ՋԱՊՊ-ի (Պրոլետարական Գրողների Անդրկովկասյան Ասոցիացիա) կենտրոնական վարչության։

Մարտի 12-ին

Բաքվի «Կոմունիստ» թերթի խմբագրատանը տեղի է ունենում Ադրբեջանի ՊԳԱ Հայկական սեկցիայի ընդհանուր ժողովը։

Քննության է առնվում Անդրկովկասյան Պրոլետարական Գրողների առաջին համագումարի որոշումները։

Մարտի 19-ին

Լուսաշխի տանը տեղի է ունենում Հայաստանի Աշխատավորական Գրողների Միության առաջին հրապարակային ելույթը։

Նախագահ Դ. Դեմիրճյանը բացման խոսքում ասում է. «Մենք պրոլետարական հեղափոխության, Հոկտեմբերյան հեղափոխության ուղեկիցներն ենք և աշխատում ենք իրականացնել Հոկտեմբերյան հեղափոխության լոզունգները գեղեցիկ գրականության մեջ»։

Տրվում է զեկուցում «Մեր գրականության ուղիները» նյութի մասին։

Մարտի 23-ին

Հ. Թումանյանի մահվան 5-րդ տարեդարձի առթիվ Կուլտուրայի Տանը կազմակերպվում է երեկո։

Մարտի 29-ին և 30-ին

Պետթատրոնում նշվում է Մ. Գորկու ծննդյան 60-ամյակը։

Պետհրատը լույս է ընծայում Գորկու պատմվածքները։

Երևանի դպրոցներից մեկը կոչվում է Մ. Գորկու անունով։

Ապրիլի 4-ին

Երևանի Խորհրդարանի սրահում կազմակերպվում է դիսկու-

սխա Դ. Դեմիրճյանի «Հայկական սիրտ երգը» պիեսի շուրջը:

Ապրիլի 4-ին

Պրոլետարական Գրողների Միության նախաձեռնությամբ Կուլտուրայի Տանը տեղի է ունենում դիսպուտ՝ «Մեր արվեստի ու գրականության հիմնական տենդենցները և ոչ վտանգը» նյութի շուրջը:

Զեկուցում է Ն. Դաբաղյանը:

Ելույթներ են ունենում՝ Դ. Դեմիրճյանը, Մ. Մանվելյանը, Ա. Ահրպայանը, Օ. Տեր-Գրիգորյանը, Հենրին, Ն. Զարյանը, Ա. Վրշտունին, Հ. Գյուլիբեկյանը և ուրիշները:

Ապրիլի 13-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի զեկուցումը «Կենտկոմի և ԿՎՀ-ի Ապրիլյան միացյալ պլենումի աշխատանքների մասին» Համկ(բ)Կ Մոսկվայի կազմակերպության ակտիվի ժողովում:

Ի. Վ. Ստալինի զեկուցումից.

«Մինչև այժմ գոյություն ունեցած բոլոր տիրապետող դասակարգերի ձեռքում բանվոր դասակարգը, որպես տիրապետող դասակարգ, պատմության մեջ գրավում է մի փոքր առանձնահատուկ և ոչ լիովին բարենպաստ դրություն: Մինչև այժմ տիրապետած բոլոր դասակարգերը — ստրկատերերը, կալվածատերերը, կապիտալիստները — միևնույն ժամանակ եղել են հարուստ դասակարգեր: Նրանք հնարավորություն են ունեցել իրենց գալակներին սովորեցնել կառավարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և ունակություններ: Բանվոր դասակարգը նրանցից տարբերվում է, ի միջի այլոց, նրանով, որ նա չունևոր դասակարգ է, նա առաջ հնարավորություն չի ունեցել իր գալակներին կառավարման գիտելիքներ ու ունակություններ սովորեցնելու և նա այդպիսի հնարավորություն է ստացել միայն այժմ, իշխանության գլուխ անցնելուց հետո: Դրանումն էլ հենց, ի միջի այլոց, կայանում է կուլտուրական ռևոլուցիայի հարցի արմատը մեզ մոտ»:

«Иосиф Виссарионович Сталин. Краткая биография», էջ 159 – 160,

Ապրիլի 20-ին

«Իզվեստիա»-յում տպագրվում է Մ. Գորկու «Գրագիտության օգուտի մասին» հոդվածը։

Մ. Գորկու հոդվածից.

«Վերաբերմունքը երիտասարդ սկսնակ գրողների նկատմամբ շրջահայաց չէ, անբավարար է հոգատարությունը և ուշադրությունը. քննադատությունը նրանց սովորեցնում է քաղգրագիտություն, այն դեպքում, երբ պետք է սովորեցնի գրական տեխնիկա։ Քաղգրագիտության ուսուցման համար կան ավելի իրազեկ ու տաղանդավոր մարդիկ, քան քննադատներն ու ռեցենզենտները։ «Լեֆը» համոզում է երիտասարդությանը չսովորել կլասիկներից, այդ միանգամայն անհիմն է։ Գրական տեխնիկան և լեզուն հարկավոր է սովորել Տոլստոյից, Գոգոլից, Լեսկովից, Տուրգենևից, նրանց ևս կավելացնեի Բունինին, Չեխովին, Պրիշվինին։

Վախենալ իդեոլոգիական վարակից, նշանակում է չհավատալ պատակարգային ինքնագիտակցության ուժին»։

М. Горький, О литературе, հրատ. „Советский писатель“, 1937, էջ 12։

Ապրիլ

Լույս է տեսնում Անդրկովկասյան Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի օրգան „На рубеже Востока“ ամսագրի 1-ին համարը։

Մայիսի 7-ին

Վախճանվեց Ալեքսանդր Սպենդիարովը։

Մայիսի 9-ին

Ավարտվում է Պրոլետարական Գրողների Համամիութենական առաջին համագումարը։

Մայիսի 11-ին

«Պրավդա»-յում տպագրվում է Մ. Գորկու հոդվածը՝ «Սպիտակ էմիգրանտական գրականության մասին»։

Մ. Գորկու հոդվածից.

«Կյանքն իր մերկապարանոց ցինիզմով դառնում է շարունակ ավելի զզվելի։ Սովություն, չարություն, ոխակալություն մթնոլորտում մարդը չի կարողանում շնչել։ Մթնոլորտը շարունակ ավելի խտանալով, սպառնում է ճայթել իր վերջին մրրիկը, որը կխորտակի և կսրբի մարդկության բոլոր կուլտուրական նվաճումները. այդ հնարավորության դեմ աշխատում է միայն Ռուսաստանը։ Սոցիալիստական Սովետների Միությունն իդեոլոգիապես կազմակերպում է ողջ աշխարհի աշխատավորությանը։

Դասակարգերի, պարտիաների, խմբավորումների այլանդակ փոխհարաբերությունների կառչուն ոստայնի միջից չի կարելի դուրս գալ այլ կերպ, քան ամբողջ ոստայնը միանգամից պատռելով։

Հենց Ռուսաստանում է սկսված «մեր դարի ամենակարևոր գործը», փորձ է արվում կյանքը երեք կետաձկների վրայից՝ հիմարության, նախանձի, ագահության՝ փոխադրել գիտության, արդարամտության, գեղեցկության հիմունքների վրա։ Այդ աշխատանքն արթնացնում է աշխարհի բոլոր ազնիվ մարդկանց անկեղծ ուշադրությունն ու համակրանքը, արթնացնում է միլիոնավոր մարդկանց միտքը»։

М. Горький, Публицистические статьи, Огиз—Ленгихл, *1933, էջ 62—63։*

Մայիս—հունիս

Տեղի է ունենում համամիութենական խորհրդակցություն նվիրված ագիտացիայի, պրոպագանդայի և կուլտուրական շինարարության հարցերին։

Խորհրդակցության՝ գրականությանը վերաբերող նյութերից.

«VII. Գրականության և արվեստի հարցեր։

1. Պարտիայի պարտիական գիծը գրականության բնագավառում, որ նշված է Կենտկոմի որոշման մեջ՝ գեղարվեստական գրականության մասին (1925 թ.) պահպանում է իր ողջ նշանակությունը ներկա ժամանակաշրջանի համար *և պետք է որոշի ղեկավար գիծ նաև թատրոնի, կինոյի և կերպարվեստի բնագավառում։ Ելնելով այդ հիմնական դիրքերից և նրա զարգացումից և ՀամԿ*

(բ)Պ Կենտկոմի ագիտպրոպ բաժնին կից թատրոնական և կինոխորհրդակցություններին որոշումների մեջ, անհրաժեշտ է.

Ա. Գրականության բնագավառում— վարել ավելի ակտիվ քաղաքականություն. պրոլետարիատին մոտեցնել ձախ «ուղեկիցների» խմբավորումները, նրանց սխալները ենթարկել մշտական, ընկերական հեղինակավոր քննադատության և ցույց տալ ընկերական օգնություն: Միաժամանակ անհրաժեշտ է չթուլացող պայքար մղել և մերկացնել աջ ռեակցիոն գրողների ամեն տեսակ փորձերը՝ վերականգնելու բուրժուական դաղափարախոսությունը գրականության մեջ:

«Բոհեմայի» տրամադրություններն ու կենցաղը, մանր-բուրժուական ազդեցությունները, որոնք երբեմն ներթափանցում են նաև պրոլետարական գրողների շարքերը,— այդ ամենը պետք է սիստեմատիկ հակահարվածի հանդիպի գրական կազմակերպությունների պարտիական ղեկավարության կողմից»:...

«2. Պարտիայի հիմնական խնդիրներն արվեստի և գրականության բնագավառում կարող են կենսագործվել միայն պարտիայի ազդեցության ուժեղացման պայմանով, գրողների և արվեստագեների կազմակերպություններում և մարքսիստական կոմունիստական գեղագիտության ուժեղացման պայմանով:

ա. Անհրաժեշտ է ուժեղացնել գրողների և արվեստագեների կազմակերպությունների պրոլետարական ղեկավարությունը, վերացնել նրանց ղեկավարման մեջ եղած հրահանգման տարրերը, ամրացնել գրական կազմակերպության կապը բանթղթակիցների ու գյուղթղթակիցների կազմակերպությունների հետ և աջակցել վերջիններիս միջից նոր գրողների առաջ քաշման:

բ. Պայքարը հանուն մարքսիստական հստակ, բավականաչափ հեղինակավոր և որակյալ կոմունիստական քննադատության՝ հանդիսանում է քննադատության բնագավառի հիմնական խնդիրը: Դասակարգային պրոլետարական դիրքերից ցած սողալուն, էկլեկտիզմին և բարեհոդի վերաբերմունքին դեպի խորթ գաղափարախոսությանը, անակրոնիզմին դեղարվեստական ճաշակների հոսանքի մեջ, կոմանապարծությանը, խմբակայնությանը և դեհիացմանը, որոնք հաճախ իրենց ներկայացնում են որպես մարքսիզմ, քննադատության բնագավառում պետք է վճռական պայքար հայտարարվի. միաժամանակ անհրաժեշտ է ուժեղացնել մարքսիստական քննադատների նոր կադրեր պատրաստելը կարճիր

պրոֆեսուրայի ինստիտուտի գրական բաժնի ՈՒԱՆԻՕՆ-ի Գրականության և Լեզվի Ինստիտուտի միջոցով։

Կոմունիստական ակադեմիան (գրականության և արվեստի սեկցիան) պետք է նշանակելիորեն ուժեղացնի իր ազդեցությունը արվեստի բնագավառի սովետական օրգանների և գրողների ու արվեստագետների կազմակերպությունների աշխատանքի վրա։

3. Կուլտուրական պահանջների չթուլացող աճի և պրոլետարական արվեստի նոր երկերի ստեղծման պայմաններում, անհրաժեշտ է ուժեղացնել սոցիալապես և գեղարվեստորեն արժեքավոր երկերի մուտքն աշխատավորության լայն մասսաների մեջ։ Գրականությունը, թատրոնը, կինոն, նկարչությունը, երաժշտությունը, ռադիոն, էստրադան—այս ամենը պետք է մուտք գործի բնակչության ամենալայն խավերի մեջ և օգտագործվի կուլտուրական նոր սովորույթների, նոր կենցաղի համար մղվող պայքարում, ընդդեմ քուրժուական և մանր-բուրժուական գաղափարախոսության, ընդդեմ օղու, քաղքենիության և օբիվատելականության։ Այդ խնդիրն իրագործելիս անհրաժեշտ է վճռական պայքար ընդդեմ՝ խալտուրայի, նոր պիտակների տակ քաղքենիական գաղափարախոսության հարությանը, բուրժուական կուլտուրականությունն ստրկորեն ընդօրինակելուն»։

„Справочник партийного работника", вып. VII, ч. I, էջ 421—422։

Հունիսի 3-ին

Հայաստանի Պրոլետարական Գրողների Երևանի կազմակերպության ժողովը քննության է առնում Պրոլետարական Գրողների Համամիութենական առաջին համագումարի արդյունքները։

Ընդհանուր ժողովը միաձայն բանաձև է ընդունում, որով նա անվերապահորեն միանում է համագումարի բոլոր որոշումներին և դատապարտում «Նապոստովյան վոքրամասնության» պառակտիչ և ֆրակցիոն աշխատանքները։

Հուլիսի 19-ին

Հրապարակվում է Համկ(բ)Պ Անդրերկրոմի բանաձևի նախագիծը՝

«Գեղարվեստական գրականության բնագավառում կատարվող աշխատանքի մասին»։

Հուլիսի 25-ին

Երևան է ժամանում Մ. Գորկին։

Կիրովականում, Դիլիջանում և այլ վայրերում Մ. Գորկուն դիմավորում են աշխատավոր մասսաները. տեղի են ունենում Թոուցիկ միտինգներ։

Երևանի Կոմայգում կազմակերպվում է մեծ միտինգ։

Գորկին շրջում է Երևանի գործարանները, կուլտուրական հաստատությունները, զրույց է ունենում գրողների հետ։

Հուլիսի 26-ին

Մ. Գորկին մեկնում է Երևանից։

Մ. Գորկին Հայաստանի մասին.

«Այո՛, ամենուր, Սովետների Միության երկրի բոլոր կետերում խիզախ ու մեծիմաստ փորձեր են կատարում, նոր կյանք են կառուցում։ Այդ շինարարությունն առաջին բանն է, որ աչքի է ընկնում, երբ մոտենում ես Երևանին։

Կարմրավուն ամպերի գլխարկ դրած արծաթագլուխ Արարատի խոժոռ զանգվածի ֆոնի վրա մոխրագույն քարաշեն քաղաքը հեռվից մեջս հարուցեց կառուցողական լաստակների վանդակի մեջ բանտարկվածի տպավորություն։ Բանվորների մրջյունի ֆիգուրները կարծես թե անմիջապես բիբլիական լեռան քարե զանգվածից նոր շենքեր են դուրս բերում։ Այդ տպավորությունը նրանից էր, որ շինարարությունը քաղաքի ծայրամասերում է կատարվում և տեսանելի է լաստակների միջից»։

«... արդեն իսկ Երևանը զարդարված է շատ լավ հիդրոշենով, որի ուժով աշխատում են բամբակազտիչ, յուղի, սապոնի գործարանները և լուսավորում քաղաքը։ Նոանդուն առաջ է մղվում բանվորների համար բնակարան կառուցելու գործը։ Երկու խոշոր տուն արդեն բնակված են։ Ամենուր զգացվում է տիրոջ խիզախ ու խելոք ձեռքը և շարժումը քաղաքում՝ մեծ տոնի նախօրյակի շարժման բնույթ է կրում։

Շատ լավ թանգարան կա կազմակերպված։ Ծրագրված են բազմաթիվ գործեր, որոնք պիտի արագորեն կերպարանափոխեն քաղաքը։ Երկրաբանական հետազոտություններ են կատարվում բովանդակ երկրում։ Արդեն իսկ գյուտ է արված, որ անկասկած

հայերին խոշոր միջոցներ կտա երկրի արդյունագործական և կուլտուրական զարգացման համար»։...

«— Մեր ժամանակաշրջանը քանի՜-քանի՜ տաղանդ է կյանքի կոչել, ինչքան գեղեցկություն է հարուցել ռևոլուցիայի կենարար փոթորիկը,— մտածում էի ես ճամփին Երևանից ետ դառնալիս։

«Նոր ուղի» № 4, 1929։

Օգոստոս—սեպտեմբեր

Մոսկվայում Կոմունիստական Ակադեմիայի գրական սեկցիայի նախագահության և վ. Ֆրիչեի նախաձեռնությամբ ու գեկավարությամբ կազմակերպվում է Հ. Հակոբյանի ստեղծագործություններին նվիրված երեկո։

Պատվո երեկո են կազմակերպում նաև Մոսկվայի ԳԵՊԵՈՒ-ի աշխատակիցները։

Ռուսպետհրատը լույս է ընծայում Հ. Հակոբյանի «Նոր Աստվոտ» բանաստեղծությունների ժողովածուն, Ա. վ. Լունաչարսկու առաջաբանով։

Ա. վ. Լունաչարսկու առաջաբանից.

«Տառապանքի երգերից, բողոքի երգերից, գայրույթի երգերից, մարտի երգերի միջով դեպի շինարարության ընդարձակ պռոմները, դեպի «Բոլշևիկ է Շիրվանալը», դեպի ներդաշնակ ակորդներ՝ ի փառս Վոլխովստրոյի, որը սիմվոլացնում է ինդուստրիալիզացիան, որպես ճանապարհ դեպի հաղթանակող սոցիալիզմը»։

Հ. Հակոբյանի բանաստեղծությունների թարգմանություններն տպագրվում են՝ «Պրավդա»-յում, «Լենինգրադսկայա Պրավդա»-յում, «Իզվեստիա»-յում, «Կրասնայա Նիվա»-յում, «Օկտյաբր»-ում, «Օգոնյոկ»-ում և «Էկրան»-ում։

Սեպտեմբերի 11-ին

Մոսկվայի Մեծ Թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր նիստ նվիրված Լ. Տոլստոյի ծննդյան 100-ամյակին։

Ներկա են լինում՝ Ա. վ. Լունաչարսկին, Պ. Ս. Կոպանը, Ալ. Տոլստոյը, Ստեֆան Ցվեյգը և ուրիշները։

Հոկտեմբերի 7-ին

«Պրավդա»-յում և «Իզվեստիա»-յում հրատարակվում է Մ. Գորկու «ՍՍՌՄ-ի մեխանիկական քաղաքացիներին» հոդվածը։

Մ. Գորկու հոդվածից.

«Իսկական ռևոլուցիոնականությունը ես զգացի բոլշևիկների մեջ, Լենինի հոդվածներում, նրանց հետևից գնացող ինտելիգենտների ճառերում և աշխատանքի մեջ։ Հենց նրանցից էլ ես «կպա» դեռևս 1903 թվին։ Պարտիայի մեջ՝ չմտա, մնացի «սպարտիզան», անկեղծորեն և ընդմիշտ նվիրված բանվոր դասակարգի մեծ գործին, և «հին աշխարհի» հանդեպ նրա վերջնական հաղթանակին՝ եմ չեմ կասկածում...»։

«... Ես տեսել եմ և տեսնում եմ խիստ շատ գարշելիություններ, բայց շատ էլ չեմ սիրում խոսել դրանց մասին։ Դրանք չեն, որ հետաքրքրում են ինձ և, իմ կարծիքով, դրանք չեն բնորոշը մարդկանց համար։ Երիտասարդ ժամանակ իմ հոգին տանջում էր հետևյալ հարցը. այդ ի՞նչպես է պատահել, ի՞նչպես է եղել, որ մեր գարշելի կյանքն ստեղծել է լավ մարդկանց։ Հեշտությամբ, միայն գրքույկներով չէ, որ ես ուսումնասիրել եմ այն։

Ես հաստատ գիտեմ, որ մարդու հիմնական որակը՝ ձգտումն է դեպի լավը։ Այդ որակն ունեն նաև այլ կենդանիներ, բայց մարդը պա պարգացրել է՝ իր հիմնական ուժը, իր գիտակցական ուժը դարձնելու աստիճան։ Այդ նա է ստեղծել և ստեղծում կուլտուրան։ Կարողանալ գտնել, համեմատել, ուսումնասիրել իրենից դուրս և իր մեջ եղած օգտակարն ու վնասակարը, գեղեցիկն ու այլանդակը,— ահա մարդու հիմնական ուժը։ Դա նրան դրդել է ստեղծել բոլոր պայմանները՝ իր ընդունակությունների հետագա զարգացման համար, և այդ ուժը կհաղթի այն ամենը, ինչ խանգարում է մարդու աճմանը. և կհաղթի»։...

«Մարդկանց հարկավոր է այլ իրականություն,— ոչ այն, որի մեջ նրանք վարժվել են ապրել։ Ես տեսնում եմ, որ նոր իրականության ստեղծելու պրոցեսը մեզ մոտ՝ Սովետների Միության մեջ, զարգանում է զարմանալի արագությամբ, տեսնում եմ, թե որքան լավ, ստեղծագործորեն կյանքի մեջ է ներարկվում նոր էներգիա,— բանվոր դասակարգի էներգիան, և ես հավատում եմ նրա հաղթանակին։

Հավատում եմ, որովհետև գիտեմ»։

М. Горький, Публицистические статьи, Огиз—Лениздат, 1933, էջ 31, 32։

Հոկտեմբերի 22-ին

Խմբագիրների համամիութենական խորհրդակցության բացումը։

Խորհրդակցությանը զեկուցում է Վ. Մ. Մոլոտովը։

Խորհրդակցության՝ գրականության վերաբերող նյութերից.

«IV. Մասսաների կուլտուրական պահանջների սպասարկումը

Մասսաների կուլտուրական դաստիարակության խնդիրներին մամուլը բավարար ուշադրություն չի դարձնում։ Լրագրերի և ժուռնալների փորձերը արձագանքել մասսաների աճած և աճել շարունակող կուլտուրական պահանջներին՝ մտցնելով «գրական էջեր», քննադատական-գրախոսական բաժիններ, արվեստի բաժիններ, գիտության ու տեխնիկայի բաժիններ և այլն,— առայժմ չեն տվել բավարար չափով դրական արդյունքներ։ Այդ բաժինները որպես կանոն դրված են ծայրահեղորեն անբավարար։

Կուլտուրական շինարարության հարցերի լուսաբանման հիմնական թերությունները հանդիսանում են.

ա. Միանգամայն անբավարար լուսաբանություն կուլտուրական շինարարության այնպիսի բնագավառների, որոնք առանձնապես են հուզում լայն մասսաներին (պայքար անգրագիտության դեմ, դպրոցական շինարարության, ակումբների, գրադարանների, խրճիթ-ընթերցարանների աշխատանքը և այլն)։

բ. Չկա բավականաչափ եռանդուն պայքար՝ դպրոցում, մասսայական այլ կուլտ հիմնարկներում, ինչպես նաև գրականության, արվեստի, կենցաղի մեջ բուրժուական գաղափարախոսության ներթափանցման դեմ։

գ. Կենցաղի հարցերը չափազանց պրիմիտիվ (մեծ մասամբ կարիկատուրաների մեջ և մանր, անբովանդակ հոդվածներում) և հաճախ օբիվատելական լուսաբանություն են գտնում մամուլում։

դ. Արվեստի հարցերի լուսաբանությունն ամենից ավելի հաճախ կենտրոնացված է հին ժուռնալիստների ձեռքում, որոնք սխալ, պսեվդոմարքսիստական, երբեմն գռեհիկ, անսկզբունք, մեշչանական մեկնաբանություն են տալիս երևույթներին ու փաստերին. խմբագրությունների կողմից շատ քիչ բան է արվում կուլտուրական շինարարության լուսաբանման համար ներգրավելու լայն մասսաներին և հատկապես ստեղծելու պարտիկան

հեղինակների կադրեր, որոնք կարող լինեն ակտիվ պայքար մղել պաղպաղարակական խորթ ազդեցությունների դեմ, արվեստի, գրականության, մանկավարժության մեջ և այլն։

ե. Թատրոնի, գրականության, կինոյի, գիտության և տեխնիկայի, ընդհանուր կրթության ու դաստիարակության և այլ բաժինների ողջ պրվածքը, որպես ընդհանուր երևույթ, ստորադրում է նաև այն բանով, որ խմբագրությունները նկատի ունեն մեծ մասամբ բարձր պարգացած, ինտելիգենտ ընթերցողին, և ոչ թե լայն մասսաներին։

13. Մամուլը պետք է արմատական փոփոխության հասնի կուլտուրական շինարարության հարցերի լուսաբանության գործում՝ այդ բնագավառում իր առջև դնելով հետևյալ հարցերը.

ա. Սիստեմատիկորեն բարձրացնել մասսաների կուլտուրականությունը և առաջին հերթին՝ ընդհանուր գրագիտությունը, որի համար աշխատավոր մասսաների մշտական կոնտրոլի տակ պահել մասսայական կրթության դրվածքը։

բ. Պայքար մղել դպրոցից և կուլտուրական շինարարության բոլոր բնագավառներից վտարելու անկոմայնության, ամենովեխականության, կրոնապաշտության, նացիոնալիզմի, հակասեմիտականության երևույթները և պերեդոնովշչինայի մնացորդները։

գ. Հետևողականորեն կիրառել կուլտուրական սովորույթներ բանվորական-գյուղացիական ընտանիքի կենցաղի մեջ, պայքարել հարբեցողության, խուլիգանության, դոմոստրոևշչինայի դեմ և այլն։

դ. Վճռական պայքար՝ հոդվածներում, ֆելիետոններում և ոտդենդիաններում՝ թատրոնի, կինոյի, կերպարվեստի և գրականության մեջ բուրժուական ազդեցությունների ներթափանցման դեմ, քաղքենիության, սոռնոգրաֆիայի դեմ և խալտուրայի բոլոր տեսակների դեմ։

14. Կուլտուրական շինարարության հարցերի լուսաբանումը լավացնելու համար, անհրաժեշտ է, որ լրագրերի խմբագիրներն ավելի խիստ վերաբերմունք ունենան համապատասխան բաժիններին աշխատողներ ընտրելիս։ Իբրև հատուկ նպատակ, լրագրերի խմբագրությունները պետք է իրենց առջև խնդիր դնեն արվեստի բաժինների համար աշխատողներ պատրաստել, հեղինակների կադրեր ստեղծելու միջոցով և իբրև այդ բաժինների ղեկավարներ, ինչպես նաև իբրև ռեցենզենտներ և իբրև դրախտաններ ներդրա-

վելով այնպիսի կոմունիստների, որոնք ունեն անհրաժեշտ տեսական գիտելիքներ և գրական ընդունակություններ,—բուհեր և կոմհամալսարաններ ավարտողների միջից։ Նպատակահարմար է թատրոնական-ակումբային կյանքի լուսաբանման համար ներգրավել բանգյուղթղթակիցներին»։

„Справочник партийного работника", вып. VII, ч. I. էջ 430.

Հոկտեմբեր

Ընկեր Ի. Վ. Ստալինի ճառը «Աջ վտանգի մասին ՀամԿ(բ)Պ մեջ» Մոսկվայի Կոմիտեի և Մոսկվայի վերահսկիչ հանձնաժողովի պլենումում։

Նոյեմբերի 27-ին

«Պրավդա»-յում և «Իզվեստիա»-յում հրապարակվում է Մ. Գորկու «Դարձյալ մեխանիկական քաղաքացիների մասին» հոդվածը։

Մ. Գորկու հոդվածից.

«Պասիվ ռոմանտիզմը՝ դա հոգնած քաղքենիների ռոմանտիզմն է, դա միշտ հայտնվում է կյանքի բեմի վրա հասարակական փոթորկալի տրագեդիաներից հետո, փոխարինելու համար ակտիվ ռոմանտիզմին, որը սովորաբար նախորդում է ռևոլյուցիաներին։ Պասիվ ռոմանտիզմը հայտնվում է թևանցուկ արած աստծու՝ իր քաղաքական խաղի գլխավոր կոզիրներից մեկի հետ։ Նրա մեջ կա որոշ լիրիկական և երիտասարդությանը գայթակղեցնող «գեղեցկություն», ավելի ճիշտ՝ բառային նախշերի գեղեցկավարություն, և նա շատ նման է բորբոսի, թեև բորբոսը պատկանում է ոչ թե քաղաքականությանը, այլ միկոլոգիային՝ սնկագիտությանը։ Բայց պասիվ ռոմանտիզմն այնուամենայնիվ քաղաքականություն է,— մենք դեռ ապրում ենք դասակարգային հասարակության պայմաններում, իսկ այդ պայմաններում, ինչպես հայտնի է, ոչինչ չկա, որը լինի «քաղաքականությունից դուրս»։

М. Горький, Публицистические статьи, Огиз—Ленгихл, 1933, էջ 36.

Նոյեմբեր–դեկտեմբեր

Խորհրդային Հայաստանի Պրոլետարական Գրողների և Աշխատավորական Գրողների Միությունների Ֆեդերացիա կազմակերպող հանձնաժողովի նիստը քննության է առնում և ընդունում Հայաստանի խորհրդային Գրողների Ֆեդերացիայի կանոնադրությունը։

Դեկտեմբերի 28–ին

Համկ(բ)Պ Կենտկոմի որոշումը՝ «Մասսայական ընթերցողին գրքով սպասարկելու մասին»։

Որոշման 1–ին և 2–րդ կետերը.

«1. Սոցիալիստական շինարարության ընթացիկ ժամանակաշրջանը չափազանց մեծացնում է մասսայական գրքի նշանակությունը՝ որպես մասսաների կազմակերպման և կոմունիստական լուսավորության, նրանց կուլտուրական մակարդակի բարձրացման միջոցի։ Մինչդեռ մասսայական գրքի հրատարակումն ու տարածումը ներկայումս խիստ ետ է մնում հատկապես որակով՝ շինարարության կարիքներից և լայն մասսաների պահանջներից։ Անհրաժեշտ է վճռականորեն ուժեղացնել ոչ միայն հրատարակությունների, այլև բոլոր պետական, հասարակական, կոոպերատիվ և հատկապես պարտիական կազմակերպությունների աշխատանքը մասսայական ընթերցողին գրքով սպասարկելու բնագավառում։

2. Գտնելով, որ մասսայական գրքի թեմատիկան չի բավարարում այդ հիմնական խնդիրներին, անհրաժեշտ է.

ա. Հատուկ ուշադրություն դարձնել այնպիսի գրքերի հրատարակության վրա, որոնք մասսայականացնում են մարքսիզմ-լենինիզմը, Համկ(բ)Պ Պատմությունը և ռևոլյուցիոն շարժումը։ բ. Ուժեղացնել մասսայական արտադրական գրականության հրատարակությունը, որը բարձրացնի բանվորների և գյուղացիների տեխնիկական գիտելիքների մակարդակը։ գ. Զարգացնել պետական-հանրամատչելի գրքի հրատարակումը, կապելով այն երկրի տնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրների հետ և համապատասխանեցնելով դա ինքնակրթության պահանջներին։ դ. Ընդլայնել գեղարվեստական գրականության հրատարակումը, հատկապես այն երկների, որոնք շոշափում են ակտուալ քաղաքական թեմաներ և ուղղված են բուրժուական ազդեցությունների,

քաղքենիության, անկումայնության և այլնի դեմ։ ե. Ապահովել մասսայական գրքի մաքսիմալ մատչելիությունը (ըստ ձևի և շարադրման) լայն ընթերցողների համար։

Կենտկոմը գտնում է, որ անհրաժեշտ է ավելի մեծ չափով, քան մինչև այժմ, հասնել այն բանին, որ մասսայական գրավանության միջոց՝ մասսաներին մոբիլիզացնելու հիմնական քաղաքական և տնտեսական խնդիրների շուրջը (առաջին հերթին երկրի ինդուստրացման և արդյունաբերության ռացիոնալիզացիայի, գյուղատնտեսության բերքատվության բարձրացման և սոցիալիստական վերակառուցման). բանվորների և աշխատավոր մասսաների դասակարգային ակտիվ դաստիարակության գործում պայքարել բուրժուական և մանր բուրժուական ազդեցությունների և մնացուկների դեմ, օգնել մասսաներին գիտության և տեխնիկայի նվաճումները տիրապետելու, լենինիզմի պրոպագանդա մղելու և պայքարելու լենինիզմի խեղաթյուրումների դեմ»։

„Справочник партийного работника", вып. VII ч. I, էջ 400—401։

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Առձակ

1. Դ. Դեմիրճյան.— Պատմվածքներ, Պետհրատ, Երևան։
2. Արազի.— Պատմվածքներ, Բաքու։
3. Ստ. Զորյան.— Խուժան Արշոն, Պետհրատ, Երևան։
4. Գ. Սարյան.— Պատմվածքներ, Պետհրատ, Երևան։
5. Արաքս.— Ալվանը, Պետհրատ, Երևան։
6. Արաքս.— Նարդոն, Պետհրատ, Երևան։
7. Արաքս.— Էս ջուրն իր ճամփով կգնա, Պետհրատ, Երևան։
8. Գ. Աբով.— Պատմվածքներ, Պետհրատ, Երևան։
9. Հ. Մելիքյան.— Զղջում, Պետհրատ, Երևան։

Դրամատուրգիա

1. Վ. Միրաքյան.— Խոզարածի կինը, Պետհրատ, Երևան։

Գրականության պատմություն, տեսություն և ննդադատություն

1. Արտ. Կարինյան.— Դեպքեր և դեմքեր, Պետհրատ, Երևան:

Գարբերական մամուլ

1. «Անահտուհի», հակակրոնական գրական-քաղաքական, գիտական, գեղարվեստական մասսայական պատկերազարդ հանդես, Երևան:
2. «Պրոլետար», արվեստի, գրականության, գիտության շաբաթաթերթ, հատվելված «Պրոլետար» օրաթերթի, Թիֆլիս:

Թարգմանություններ

1. Լև Տոլստոյ.— Հաջի Մուրադ, Պետհրատ, Երևան:
2. Լև Տոլստոյ.— Պատմվածքներ, Պետհրատ, Երևան:
3. Մ. Գորկի.— Պատմվածքներ, Պետհրատ, Երևան:
4. Մ. Գորկի.— Հեքիաթներ, Երևան:
5. «Լենինը Տոլստոյի մասին», Պետհրատ, Երևան:

1929

Հունվարի 30-ին

ՀԿ(բ)Պ VI համագումարի բացումը:

Հունվար

Լույս է տեսնում «Նոր ուղի» գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական, տնտեսական և գիտական ամսագրի առաջին համարը:

Ամսագրում տպագրվում են՝ Ե. Չարենցի «Խմբապետ Շահվարշը», Արազու «Կարմիր հարսնացուն», Ալ. Շիրվանզադեի «Մարդը անասունի մեջ», Ալ. Խահակյանի «Երվանդ Միրաբյանը», Դ. Դեմիրճյանի «Երեքը», Ա. Տերտերյանի «Գրական ոճի սոցիոլոգիան»:

Խմբագրության կողմից.

«Նոր ուղի»-ն իր առաջ նպատակ է դնում՝ համախմբելու իր շուրջը բոլոր այն գրողներին, արվեստագետներին և գիտական ուժերին, որոնք իրենց աշխատանքներով լծակցված լինելով ա-

ցիալիստական շինարարության տարբեր բնագավառներին՝ նպաստում և աջակցում են պրոլետարիատին, նրա պայքարի մեծ գործին։

Լայն բաց անելով իր էջերը պրոլետարական և աշխատավորական գրականության առաջ, «Նոր ուղի»-ն միաժամանակ տեղ է տալու և հին գրողների ու արվեստագետների այն շարքին, որոնք անկեղծորեն և ազնվորեն հարել են խորհրդային կարգերին։ Նա համախմբելու է իր շուրջը խորհրդային ինտելիգենցիայի, մեր գիտական, գրական և գեղարվեստական ուժերի լավագույն ներկայացուցիչներին, նա նպաստելու է ինտելիգենցայի շարքերում տատանվողների պրոլետարական ինքնորոշմանը, նա մերկացնելու է թշնամի իդեոլոգիաների էությունը, սրելու է պայքարը նրանց դեմ, աջակցելու է գրականության, արվեստի և գիտության զարգացմանը՝ հօգուտ մասսաների, հօգուտ Հոկտեմբերյան նվաճումների ամրացման և ուժեղացման։

«Նոր ուղի»-ն առանձնապես մեծ տեղ է հատկացնելու գրականության և արվեստի բոլոր ճյուղերին, ինչպես և այդ բնագավառներին վերաբերող տեսական հարցերին։ Նա զգալի տեղ է հատկացնելու թե՛ ռուսական, թե՛ հարևան ժողովուրդների գրական-գեղարվեստական գործերին, և թե՛ արտասահմանյան նորագույն գրականության լավագույն նմուշներին»։

«Նոր ուղի» № 1, 1929։

Փետրվարի 21-ին

Կուլտուրայի Տանը կազմակերպվում է երեկո՝ նվիրված Հ. Թումանյանի ծննդյան 60-ամյակին։

Մարտի 2-ին

Երևանում տեղի է ունենում Ա. Ս. Գրիբոյեդովի մահվան 100-ամյակին նվիրված երեկո։

Մարտի 10-ին

ՀՊԳ Միության Երևանի կազմակերպության ընդհանուր ժողովում Հ. Գյուլիքևխյանը զեկուցում է «Մեր գրականության աճման և քննադատության հերթական խնդիրները» նյութի մասին։

Մտքերի փոխանակությանը մասնակցում են՝ Ն. Զարյանը, Ա.

վշտանին, Ն. Դաբաղյանը, Հ. Մկրտչյանը, Ս. Մելիքսեթյանը, Աբաքսը և ուրիշներ։

Մարտի 29-ին

Տեղի է ունենում պրոլետարական գրողների ստեղծագործությունների երեկո։ Ներածական խոսք է ասում Ն. Դաբաղյանը։

Իրենց ստեղծագործություններով հանդես են գալիս՝ Ն. Զարյանը, Ա. վշտունին, Ս. վահունին, Ս. Տարոնցին, էդ. Խոճիկը։

Մարտ

„На литературном посту“ *ամսագրի № 4—5-ում տպագրվում է Մ. Գորկու «Քաղբննության մասին» հոդվածը։*

Մ. Գորկու հոդվածից.

«Քաղբենին՝ դա—պատմլոգիական դեպք է, երբ մարդու կողմից ամրապես յուրացրած մտածողության տեխնիկան ընդհատում է նրա մտքի աճումը։ Լինում են դեպքեր, երբ քաղբենին դեպքերի բռնության շնորհիվ յուրացնում է իրեն խորթ գաղափարներ, բայց դրանք նրա համար դառնում են տանջանքների աղբյուր, ինչպես օրինակ՝ մաշկի հիվանդությունները, կամ քարը երիկամունքի մեջ, լարդի մեջ։ Այդպիսի դեպքերում նա շատ հաճախ սկսում է բժշկվել «ցավերը մեղմող» միջոցներով՝ կրոնով, հոռետեսությամբ, ալկոհոլով, ասնձարձակությամբ, խուլիգանությամբ և այլն»։

M. Горький, Публицистические статьи, Огиз—Ленгихл, *1933, էջ 87։*

Մարտ

«Գրական դիմքերում» ամսագրի 3-րդ համարում լույս է տեսնում Գ. Սարյանի «Գյուլնարա» պոեմը։

Ապրիլի 7-ին

Երևանում կազմակերպվում է պարոդիայի—երգիծանքի երեկո։

Իրենց պարոդիաներով և երգիծական դրվածքներով հանդես են գալիս՝ Ն. Զարյանը, էդ. Խոճիկը։

Ապրիլի 7-ին

Հայաստանի Սովետների VI համագումարի բացումը։

Ապրիլ

Խորհրդային Հայաստանի պրոլետարական գրողների և աշխատավորական գրողների կողմից հիմնադրվում է Հայաստանի Խորհրդային Գրողների Ֆեդերացիա։

Ֆեդերացիայի խորհրդի անդամներ են ընտրվում՝ Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Ա. Վշտունին, Ն. Դաբաղյանը, Գ. Աբով, Արաքսը և ուրիշները։

Մայիսի 4-ին

Պրոլետ. Գրողների Միության Լենինականի կազմակերպության նախաձեռնությամբ բանվորների համար կազմակերպվում է գրական երեկո։

Իրենց ստեղծագործություններով հանդես են գալիս՝ Գ. Սարյանը, Ս. Տարոնցին, Սարմենը, Արաքսը, Աղավնին, Ղ. Կոմունքին, Արտ. Շահբազը և ուրիշները։

Մայիսի 5-ին

Պետական Թատրոնում Ա. Մռավյանի նախագահությամբ բացվում է թատերական խորհրդակցություն։

Քննության են առնվում պրոլետարական դրամատուրգիայի և ռեպերտուարի հարցը, թատրոնական քննադատության, մանկական թատրոնի, ադրբեջանական թատրոնի, գյուղշրջիկ թատրոնի և բան. շրջիկ թատրոնի հարցերը։

Մայիսի 12-ին

Բաքվում բացվում է Պրոլետարական Գրողների Անդրկովկասյան Ասոցիացիայի (ԶԱՊՊ) երկրորդ պլենումը։ Պլենումը լսում է երեք ռեսպուբլիկաների գրականության մասին զեկուցումներ։

Մայիս

«Նոր ուղի» ամսագրի № 5-ում սկսվում է տպագրվել Դ. Դեմիրճյանի «Ռաշիդ»-ը։

Հունիսի 6-ին

Հայաստան է ժամանում Վրաստանի և Ադրբեջանի Սովետական գրողների պատգամավորությունը։

Հունիսի 7-ին

Կուլտուրայի Տանը տեղի է ունենում հանդիսավոր նիստ Վրաստանի և Ադրբեջանի Սովետական գրողների պատգամավորության։

Բացման խոսք է ասում Ա. Մռավյանը։

ՀԽԳ Ֆեդերացիայի անունից ողջունում է Դ. Դեմիրճյանը, ՀՊԳ Ասոցիացիայի անունից՝ Ա. Վշտունին։

Ելույթներ են ունենում եղբայրական Վրաստանի և Ադրբեջանի գրողները։

Հունիսի 8-ին

Պետական Թատրոնում կազմակերպվում է Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի գրողների հանդիպման երեկո։

Հունիսի 10-ին

ՀԿ(բ)Պ կենտկոմում տեղի է ունենում Վրաստանի, Ադրբեջանի գրողների և Հայաստանից Վրաստան ու Ադրբեջան մեկնող գրական պատգամավորության խորհրդակցություն։ Քննության են առնվում Անդրկովկասյան խորհրդային գրականության ֆրոնտը ուժեղացնելու խնդիրները։

Հունիսի 10-ին

Երևանից մեկնում է Վրաստանի և Ադրբեջանի գրողների պատգամավորությունը, նրանց հետ նաև՝ Հայաստանի Գրողների պատգամավորությունը. Ալ. Շիրվանզադեն (նախագահ), Դ. Դեմիրճյանը (փոխ նախագահ), Նար-Դոսը, Սվ. Խահակյանը, Մ. Սարյանը, Ստ. Զորյանը, Ա. Վշտունին, Գ. Աբովը, Ս. Տարոնցին, Գ. Սարյանը, Վ. Մխրաքյանը, Ան. Վարդանյանը, Էդ. Խոճիկը և ուրիշները։

Հունիսի 12-ին

Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի գրողների պատգամավորությունները ժամանում են Թիֆլիս։

Հայաստանի գրողների պատգամավորությունն այցելում է Վրաստանի դիվիզիայի լազերը և վերցնում հրետանային գնդի շճֆուլյոնը։ Ելույթ են ունենում Ալ. Շիրվանզադեն, Գ. Աբով. Մ. Մանվելյանը, դիվիզիայի գինվոմը և կարմիրբանակայիններ։

Հունիսի 17-ին

Թիֆլիսում տեղի է ունենում հանդիսավոր նիստ նվիրված անդրկովկասյան դրականության. ողջույնի խոսք է ասում Ալ. Շիրվանզադեն։

Հիմնադրվում է Անդրկովկասի ժողովուրդների Կուլտուրական կապի Միության։

Հունիսի 20-ին

Ալ. Շիրվանզադեի նախագահությամբ բաբու. է ժամանում Հայաստանի խորհրդային գրողների պատգամավորությունը։

Սեպտեմբեր

Ռուսաստանի Պրոլետարական Գրողների Ասոցիացիան դիմում է Գրողների Համառուսական Միության անդամներին մի կոչով, որի մեջ դատապարտում է Գրողների Միության Մոսկվայի բաժանմունքի նախագահ Բ. Պիլնյակի և միության անդամ Ե. Զամյատինի ելույթները սպիտակ գվարդիական մամուլում, անվանելով այդ ելույթները «նեոբուրժուական դրականության ակտիվացման ամենավատ ապացույց»։

«Այն, ինչ որ տեղի է ունեցել,— ասված է կոչում,— օրինաչափ է։ Այդ երկրի վերակառուցողական շրջանի դատակարգային պայքարի սրման և Սովետական դրականության դատակարգային ջերտավորման պրոցեսի ուժեղացման հետևանք է։ Այդպիսի ջերտավորում տեղի է ունենում նաև ուղեկցային / գրական ուրիշ խմբավորումների մեջ։ Նա անխուսափելիորեն խորանալու է մոտիկ ժամանակներում։ Սովետական գրողները, սոցիալիզմի կառուցման բարեկամները, պետք է իրենց հաշիվ տան այդ մասին։

Պլանքն ուղեկիցների առաջ հարցը դնում է սուր և շեշտակի։ դամ Պիլնյակի և նրա հովանավորների ետևից կամ նրանց դեմ։ Երրորդը պետք չէ»։

«Գրական վերքեր» № 10, 1929»։

Սեպտեմբերի 13-ին

Լուսժողկոմատի դահլիճում տեղի է ունենում Պրոլետգրողների Ասոցիացիայի Երևանի կազմակերպության արտակարգ դռնբաց ընդհանուր ժողովը:

Ա. Վշտունին զեկուցում է Գրողների Միության Մոսկվայի բաժանմունքի նախագահ Բ. Պիլնյակի և գրող Զամյատինի գրական հակասովետական ելույթների մասին:

Ժողովն իր բուռն զայրույթն ու բողոքն է հայտնում այդ առթիվ. «պահանջվում է անպայմանորեն հեռացնել Պիլնյակին Համառուսական Գրողների Միության Մոսկվայի բաժանմունքի նախագահի պաշտոնից և կոչ է անում այդ Միության ղեկավարությանը, ինչպես նաև առաջավոր անդամներին, նախաձեռնություն վերցնել Միությունը զտման ենթարկելու համար»:

Սեպտեմբերի 29-ին

Վախճանվեց բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը:

Հոկտեմբերի 10-ին

Հայաստանի Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի Երևանի կազմակերպությունը բանաձև է ընդունում «Նոր ուղու» գրական-գեղարվեստական բաժնի մասին.

«Հայաստանի Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի Երևանի կազմակերպությունը՝ լսելով «Նոր ուղի» ամսագրի խմբագրության զեկուցումը ամսագրի գրական բաժնի մասին, գտնում է.

1. «Նոր ուղի» ամսագրի հրատարակությունն ընդհանուր առմամբ համապատասխանում է մեր կուսակցության կողմից դըրված գրական քաղաքականության հիմնական դիրեկտիվներին: «Նոր ուղին» կարողացել է կարճ ժամանակամիջոցում իր շուրջը համախմբել ուղեկից և այլ գրողների լավագույն ուժերին:

2. Համարել անբավարար ամսագրում պրոլետ գրողների մասնակցությունը...

3. Նշել, որ ամսագրում անցել են որոշ գործեր, որոնք զուրկ են իդեոլոգիական կայունությունից և որոշ տեղերում արտահայտում են մեշչանական տրամադրություններ:

4. Ուժեղացնել Ռուսական, Անդրկովկասյան և այլազգի գրականության բաժինը, պարբերաբար տպագրելով հարևան ժողո-

վուրդների գրականությունից լավագույն նմուշներ, առավելապես պրոլետարական գրականությունից։

5. Համարել անբավարար Ասոցիացիայի և խմբագրության կապը և անհրաժեշտ համարել ունենալ Ասոցիացիայի ներկայացուցիչը խմբագրության կազմում։

6. Համարել անբավարար գրախոսական բաժինը — անհրաժեշտ գտնել ուժեղացնել այդ բաժինը մարքսիստական կայուն քննադատությամբ, պայքար մղելով գրականության մեջ հակառակորդ իդեոլոգիաների արտահայտությունների դեմ և ավելի նպաստել պրոլետ գրականության զարգացմանը»։

«Գրական դիրքերում» № 10, 1929։

Հոկտեմբերի 20-ին

Երևան են ժամանում Ռևոլուցիոն Գրողների Միջազգային Բյուրոյի ներկայացուցիչներ՝ Լյուդվիգ Ռեննը, Մատե Զալկան և Ջրանց Վայսկոպֆը, Բելա Իլեշը, Հովհաննես Բեխերը։

Կուլտուրայի Տանը կազմակերպվում է հանդիսավոր երեկո. Հյուրերին ողջունում են՝ Ա. Մռավյանը, Դ. Դեմիրճյանը, Ա. Վշտունին և ուրիշները։

Հոկտեմբեր

Ռևոլուցիոն Գրողների Միջազգային Բյուրոյի պատգամավորությունը մեկնելուց առաջ «Գրական դիրքերում» ամսագրի խմբագրության բլոկնոտում գրում է.

«Հայաստանի բանվորությանը, աշխատավոր գյուղացիությանը՝

Մենք, ռևոլուցիոն գրականության Միջազգային Բյուրոյի պատգամավորներս, ուղարկում ենք մեր սրտագին պրոլետարական ողջույնները Հայաստանի բանվորական և աշխատավոր գյուղացիական մասսաներին։ Այն երկրներում, որտեղից ձեզ մոտ ենք եկել, թող շուտով հասնի այն օրը, երբ աշխատավորական մասսաները կստանան ազատության և իրավունքի այն չափը, որը Սովետական Հայաստանի պրոլետարիատը, խեղակորույս կապիտալիստական սիստեմի դեմ մղած իր

հաղթական ռևոլուցիոն պայքարում սրտին իսկ ձեռք է բե-րել։

Կեցցե՛ Սովետական Հայաստանը։

Կեցցե՛ Սովետական Միության պրոլետարիատի միությունը՝ կապիտալիստական երկրների պրոլետարական մասսաների հետ»։

Բելա Իլեշ, Հովհաննես Բեխեր, Մաթե Զալկա, Ֆրանց Վայսկոպֆ, Լյուդվիգ Ռեննն։

«Գրական պետքերուժ» № 10, 1929։

Հոկտեմբերի 23-ին

Վախճանվեց Ասքանազ Մոռավյանը։

Հոկտեմբեր

Քիֆլիսում հրավիրվում է Պրոլետարական Գրողների Համամիութենական միացյալ Ասոցիացիայի 2-րդ պլենումը։

Պլենումում զեկուցում է տրվում Հայաստանի ժամանակակից գրականության մասին,

Նոյեմբերի 7-ին

«Պրավդա»-յում հրապարակվում է ընկեր Ի. Վ. Ստալինի «Մեծ բեկման տարին» հոդվածը։

Ի. Վ. Ստալինի հոդվածից.

«Անցած տարին սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում մեծ բեկման տարի էր։ Այդ բեկումն ընթանում էր ու շարունակում է ընթանալ քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերի դեմ սոցիալիզմի վճռական հարձակման նշանի տակ։ Այդ հարձակման բնորոշ առանձնահատկությունն այն է, որ նա մեզ արդեն մի շարք վճռական հաջողություններ է տվել մեր ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման (ռեկոնստրուկցիայի) հիմնական բնագավառներում»։

Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, Պետհրատ, 1937, էջ 430։

Դեկտեմբերի 9-ին

Կուլտուրայի Տանը Խորհրդային Գրողների Ֆեդերացիան կազմակերպում է հանդիսավոր երեկո՝ նվիրված Անդրկովկասի

ժողովուրդների կուլտուրական կապին։ Վրաստանում և Ադրբեջանում կատարած ուղևորությունների մասին տպավորություններ են պատմում՝ Ալ. Շիրվանզադեն, Դ. Դեմիրճյանը և ուրիշները։

Դեկտեմբերի 11-ին

Կուլտուրայի Տանը Հայ Ցեղերացիան կազմակերպում է գրական դիսպուտ՝ «Ընթացիկ տարվա գրականությանը» նյումի շուրջը։

Դեկտեմբերի 12-ին

«Իզվեստիա»-յում տպագրվում է Մ. Գորկու «Պատասխան» հոդվածը։

Մ. Գորկու հոդվածից.

«... Կուլտուրայի պատմությունն ասում է մեզ, որ գիտելիքները, որոնք մշակվել են մարդկանց աշխատանքով, կուտակվել են գիտության կողմից, շարունակ աճում են, դառնում են ավելի խորը, սուր և հենարան են հանդիսանում մեր ճանաչողական կարողությունների և ստեղծագործական ուժերի հետագա անսահման զարգացման համար։ Դրանից հետևում է, որ կուլտուրայի արագ և հաջող աճման համար, մենք պետք է լավ գիտենանք նրա պատմությունը»։

M. Горький, Публицистические статьи. Огиз-Ленгихл, *1933, էջ 80։*

Դեկտեմբերի 27-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի ճառը մարքսիստ ագրարագետների կոնֆերենցիայում։

Ի. Վ. Ստալինի ճառից.

«Ես այստեղ չեմ ընդարձակաբանի թեորիայի նշանակության մասին։ Ձեզ այդ բավականաչափ լավ հայտնի է։ Հայտնի է, որ թեորիան, եթե նա իսկապես թեորիա է, պրակտիկներին տալիս է կողմնորոշման ուժ, հեռանկարի պարզություն, վստահություն՝ աշխատանքի մեջ, հավատ գործի հաղթությանը։ Այս ամենը հսկայական նշանակություն ունի— և չի կարող չունենալ— մեր սոցիալիստական շինարարության գործում»։

Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, Պետհրատ, 1940, էջ 338—339։

«Ծանր ինդուստրիայի հիմքը դնելով, պարտիան մոբիլիզացնում է բանվոր դասակարգին և գյուղացիությանը՝ ՍՍՌՄ-ի սոցիալիստական վերակառուցման առաջին հնգամյա պլանը կատարելու համար։ Երկրում ծավալվում է միլիոնավոր աշխատավորների սոցիալիստական մրցումը, ծնունդ է առնում աշխատանքային մի հզոր վերելք, մշակվում է աշխատանքի նոր դիսցիպլինա։

Այդ շրջանը վերջանում է մեծ բեկման տարով, որ նշանակում էր սոցիալիզմի խոշորագույն հաջողությունները արդյունաբերության մեջ, առաջին լուրջ հաջողությունները գյուղատնտեսության մեջ, միջակի շրջադարձ դեպի կոլխոզները, մասսայական կոլխոզային շարժման սկիզբը»։

«ՀամԿ(բ)Պ Պատմություն Համառոտ դասընթաց»։

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Չափածո

1. Ա. Վշտունի.— Բանաստեղծություններ, Պետհրատ, Երևան։

Արձակ

1. Ավ. Իսահակյան.— Համբերանքի չիբուխը, Հրատ. «Հերմես», Երևան։
2. Դ. Դեմիրճյան.— Նրանց ժպիտը, Հրատ. «Հերմես», Երևան։
3. Արազի.— Ասպետները, Պետհրատ, Երևան։
4. Մ. Մանվելյան.— Մի գլխարկի պատմություն, Հրատ. «Հերմես», Երևան։
5. Գ. Սարյան.— Օտար մարդը, Պետհրատ, Երևան։

Դրամատուրգիա

1. Դ. Դեմիրճյան.— Քաջ Նազար, Պետհրատ, Երևան։
2. Էդ. Խոճիկ.— Սերը ջրհորի ափին, Պետհրատ, Երևան։

Թարգմանություններ

1. Ջեկ Լոնդոն.— Ադամից առաջ, Պետհրատ, Երևան։
2. Դ. Ճոնքաձե.— Սուրամի բերդը, Պետհրատ, Երևան։
3. Պ. Սամսոնիձե.— Առաջին փոթորիկը, Պետհրատ։

4. Լ. Արդազիանի.— Սոլոմոն Իսակիչ Մեջղանաշվիլի, Պետհրատ:
5. Բիչըր-Ստոու, Գարիետ.— Քեռի Թոմասի տնակը, Պետհրատ, Երևան:
6. «Բարդմանական պատմվածքներ» պր. 1-ին, Պետհրատ, Երևան:
7. «Բարդմանական պատմվածքներ», պր. 2-րդ, Պետհրատ, Երևան:

1930

«... Կուլակությունն էքսպրոպրիացիայի ենթարկվեց: Նա էքսպրոպրիացիայի ենթարկվեց այնպես, ինչպես 1918 թվականին արդյունաբերության բնագավառում էքսպրոպրիացիայի ենթարկվեցին կապիտալիստները, սակայն այն տարբերությամբ, որ կուլակության արտադրության միջոցներն այս անգամ անցան ո՛չ թե պետության ձեռքը, այլ միավորված դյուղացիների ձեռքը, կոլխոզների ձեռքը:

Այս ուղղությունն ամենախոր հեղաշրջում էր, մի թռիչք հասարակության հին որակական կացությունից դեպի նոր որակական կացությունը, մի հեղաշրջում, որն իր հետևանքներով 1917 թվականի հոկտեմբերի ուղղությանը հեղաշրջմանը հավասար նշանակություն ուներ»:

«Համկ(բ)Պ Պատմություն: Համառոտ դասընթաց»:

Հունվարի 5-ին

Համկ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի որոշումը «Կոլեկտիվացման տեմպի և պետության կողմից կոլխոզային շինարարության օգնելու միջոցառումների մասին»:

Հունվարի 10-ին

Խորհրդային Գրողների Ֆեդերացիան Գրողների Տանը կազմակերպում է հանդիսավոր նիստ նվիրված Մ. Նալբանդյանի ծննդյան 100-ամյակին:

Հունվարի 10—22-ը

Պետական Թանգարանում կազմակերպվում է ցուցահանդես նվիրված Մ. Նալբանդյանի կյանքին և գործունեությանը:

Հունվարի 16-ին

Բաքվում նշվում է Ալ. Շիրվանզադեի գրական գործունեության 50-ամյակը։

Հունվարի 17-ին

Տեղի է ունենում Գրողների Տան հանդիսավոր բացումը։

Ելույթներ են ունենում՝ Ա. Վշտունին, Դ. Դեմիրճյանը, Մ. Սարյանը, Սպ. Մելիքյանը, Մ. Աբեղյանը և ուրիշները։

Հունվար

Թիֆլիսում լույս է տեսնում «Կարիճ» երգիծական ամսաթերթի առաջին համարը («Պրոլետար» թերթի հավելված)։

Հունվար

Երիտասարդ գրողների Անդրկովկասյան խորհրդակցությունն ընտրում է երեք հանրապետությունների ներկայացուցիչներից կազմված բրիգադա Հայաստանում կոլխոզ շարժումն ուսումնասիրելու և օժանդակելու նպատակով։

Փետրվարի 8-ին

Կուլտուրայի Տանը տոնվում է Ալ. Շիրվանզադեի գրական գործունեության 50-ամյակը։

Հոբելյարին ողջունում են՝ Ս. Էսկին, Տ. Տաբիձեն, Դ. Դեմիրճյանը, Ա. Տերտերյանը և ուրիշները։

ՀՍԽՀ ժողկոմխորհի որոշմամբ Ալեքսանդր Շիրվանզադեին շնորհվում է Հանրապետության վաստակավոր գրողի կոչում։

Պետհրատը հրատարակում է Ալ. Շիրվանզադեի կենսագրությունը և երկերի չորս հատորյակը։

Փետրվարի 9-ին

Պետթատրոնում կազմակերպվում է Ալ. Շիրվանզադեի 50-ամյա գրական գործունեությանը նվիրված հոբելյանական երեկո։

Հոբելյարին ողջունում են՝ Գ. Լևոնյանը, Ա. Ոսկանյանը։

Ներկայացվում են մեկական գործողություններ՝ «Պատվի համար», «Չար ոգի» և «Մորգանի խնամին» պիեսներից։

Փետրվար

ՍՍՌՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի որոշմամբ Ի. Վ. Ստալինը պարգևատրվում է Կարմիր Դրոշի երկրորդ շքանշանով՝

սոցիալիստական շինարարության ճակատում մատուցած հսկայական ծառայությունների համար:

Մարտի 2-ին

Հրապարակվում է ընկեր Ի. Վ. Ստալինի հոդվածը՝ «Գլխավորը՝ հաջողություններից»:

Ի. Վ. Ստալինի հոդվածից.

«Ինչի՞ մասին է խոսում-այս ամենը:

Այն մասին, որ գյուղի աոմատական շրջադարձը դեպի սոցիալիզմ կարելի է աոդեն ապահովված համարել:

Կարիք չկա ապացուցելու, որ այդ հաջողությունները մեծագույն նշանակություն ունեն մեր երկրի, բանակի համար, ամբողջ բանվոր դասակարգի՝ որպես մեր երկրի դեկավար ուժի՝ համար, վերջապես, բուն իսկ պարտիայի համար: Էլ չխոսելով ուղղակի գործնական արդյունքների մասին, դրանք, այդ հաջողությունները, հսկայական նշանակություն ունեն բուն իսկ պարտիայի ներքին կյանքի համար, մեր պարտիայի դաստիարակության համար: Սրանք մեր պարտիային արիության և իր ուժերին հավատալու ոգի են ներշնչում: Սրանք բանվոր դասակարգին զինում են հավատով դեպի մեր գործի հաղթությունը: Սրանք մեր պարտիային են մոտեցնում նոր միլիոնավոր ռեզերվներ»:

Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, Քաղհրատ, 1940, էջ 367:

Մարտի 6-ին

ՀՄԳ Ասոցիացիայի ընդհանուր ժողովը զեկուցում է լսում պրոֆ. Վ. Ֆ. Պերեվերզևի գրական-տեսական հայացքների մասին և ընդունում է բանաձև:

Բանաձևից.

«... Միանգամայն տեղին է և այժմեական այն պայքարը, որը մղում են պրոլետարական կազմակերպությունները Պերեվերզևի՝ գրականագիտության ասպարեզում ստեղծված ռևիզիոնիստական թեորիայի դեմ:

Կոմունիստական հարազատ քննադատությունը՝ այդ պրոլետարիատի դասակարգային պայքարի ամենակարևորագույն զեն-

քերից մեկն է: Միայն այդ քննադատությունը, ամբողջովին և հետևողականորեն հիմնվելով մատերիալիստական դիալեկտիկայի մեթոդի վրա, հիմնվելով մարքսիզմի-լենինիզմի ուսմունքի վրա, կկարողանա հիմնովին ջախջախել դրականության մեջ բոլոր տեսակի բշնամական իդեոլոգիաները և կօժանդակի ուղեկիցներին անցնելու պրոլետարական գաղափարախոսության ռելսերի վրա: Միայն այդ ճանապարհն է, որ կօժանդակի պրոլետարական իդեոլոգիայի ամրացմանը, և պրոլետարական դրականության զարգացմանը: Պերիվերզիայի մեթոդոլոգիական սխալմանն ոչ միայն հեռու է կոմունիստական քննադատության սկզբունքներից, այլև բացահայտ բշնամական վերաբերմունք ունի նրա հանդեպ, իր մենշևիկյան էությամբ և մեխանիստական դրույթով»:

«Պրոլետարի Հայաստան» № 61, 1930:

Մարտ

ԽՀՊԳ Ասոցիացիային կից կազմակերպվում է գրական սեմինար. կազմակերպվում են դասախոսություններ՝ «Մարքսիստական գրականության մեթոդոլոգիան» (Հ. Գյուլիքևիչյան), «Հայ նոր գրականության պատմությունը» (Ա. Տերտերյան), «Գրական հոսանքները և քննադատության ուղղությունները» (Հ. Գյուլիքևիչյան), «Գրական երկերի տեսակները» (Մ. Աբեղյան, Ա. Տերտերյան, Գ. Աբով):

Ապրիլի 3-ին

Հրապարակվում է ընկեր Ի. Վ. Ստալինի հոդվածը՝ «Պատասխան ընկեր կոլտնտեսականներին»:

Ի. Վ. Ստալինի հոդվածից.

«Մինչև վերջին ժամանակներս կոլտնտեսային աշխատողները ուշադրության կենտրոնում գտնվում էր կոլեկտիվացման բարձր թվերի հետևից ընկնելը, ըստ որում մարդիկ չէին ուզում տեսնել իրական կոլեկտիվացման և թղթե կոլեկտիվացման միջև եղած տարբերությունը: Այժմ թվերով այդպես տարվելը պետք է դեն նետվի: Այժմ աշխատողների ուշադրությունը պետք է կենտրոնանա կոլտնտեսությունների ամրացման վրա, կոլտնտեսությունների կազմակերպական ձևավորման վրա, կոլտնտեսություններում դործնական աշխատանք կազմակերպելու վրա»:

Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, Պետհրատ, 1940, էջ 392:

Ապրիլի 8-ին

«Սովետական Հայաստան» թերթում հրապարակվում է Համկ (բ)Պ կենտկոմի ապրիլի 2-ի և ապա ՍՍՌՄ կենտգործկոմի ու ժողկոմսովետի որոշումները կոլեկտիվ տնտեսություններին տրվող արտոնությունների մասին։

Ապրիլի 14-ին

Վախճանվեց Վլադիմիր Վլադիմիրովիչ Մայակովսկին։

Ռևոլուցիոն Գրողների Միջազգային Բյուրոյի ցավակցությունից.

«Համաշխարհային պրոլետարիատը չի մոռանա երբեք իր պոետին։ Նա մեկն էր մեր ժամանակի ռևոլուցիոն այն խոշորագույն պոետներից, որի ստեղծագործությունն անսահման ազդեցություն է գործել արևմուտքի երիտասարդ ռևոլուցիոն պոեզիայի վրա։ Դա ծանր հարված է բոլոր երկրների պրոլետարիատի համար, որ հանձին պոետի կորցրեց համաշխարհային ռևոլուցիայի անձնվեր մարտիկներից մեկին»։

Ապրիլ—մայիս

Պերեվերզեվականության մասին Կոմունիստական Ակադեմիայի գրականության, արվեստի և լեզվի սեկցիայի նախագահության ընդունած բանաձևից.

«Գրականագիտական նորերս ավարտված դիսկուսիան կատարյալ պարզորոշությամբ ցույց տվեց, որ Պերեվերզեվի կոնցեպցիայի մեթոդաբանական հիմնական արատը— նրա հակադիալեկտիկական բնույթն է, մատերիալիստական դիալեկտիկայի բացարձակ անհասկացողությունն է։ Փորձելով կառուցել գրական պրոցեսի մատերիալիստական թեորիան, Պերեվերզեվը փաստորեն պղտվում է դեպի էկոնոմիկական մատերիալիզմը, դեպի շուլյատիկոմշչինան, մոռացության տալով մատերիալիստական դիալեկտիկայի հիմնական օրենքը։ Որպես ամբողջություն վերցրած՝ Պերեվերզեվի կոնցեպցիան դուրս է վանում իր տեսադրջանից դասակարգային պայքարը, որի պրոցեսում և կատարվում է բոլոր և ամեն տեսակ իդեոլոգիաների ձևավորումը. Պերեվերզեվի կոնցեպցիան անջատում է գրական գիտությունը քննադատությունից, հենվելով արվեստի օբեկտիվ ըմբռնողության վրա, որպես հասարակական կեցության արտացոլման»։

«Նոր ուղի» № 4—5, 1930։

Մայիսի 10-ին, 11-ին

Պրոլետարական Գրողների Ասոցիացիան Լենինականի բանվորների համար կազմակերպում է գրական երեկոներ։

Մայիսի 18-ին

Տեղի է ունենում Խորհրդային Հայաստանի Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի Կենտրոնական վարչության Կոմֆրակցիայի նիստը. ընդունվում է բանաձև Ասոցիացիայի աշխատանքների մասին։

Բանաձևից.

«Պրոլետգրականությունը Հայաստանում, չնայած մի շարք նվաճումներին, իր ներկա դրությամբ ու զարգացման տեմպով հետ է մնում վերակառուցման շրջանի պահանջներից։ Այդ մինուսը վերացնելու և պրոլետարական գրականության իր արժանի բարձրության վրա դնելու համար պետք է արմատապես բարելավել կազմակերպության աշխատանքները, որպեսզի նրանք ավելի սպասարկեն կենտրոնական խնդրին՝ գրական ստեղծագործության քանակի և մանավանդ որակի բարձրացմանը։ Ելնելով այդ հիմնական դրույթներից, անհրաժեշտ է.

1. Ավելի սրել գրականության բնագավառում բուրժուական, ազգայնական իդեոլոգիայի բոլոր արտահայտությունների դեմ ուղղված պայքարը։ Ավելի ծավալել պայքարը երկու ֆրոնտի վրա, կենտրոնացնելով կրակը պրոլետգրականության ասպարեզում արտահայտված գլխավոր՝ աջ վտանգի դեմ, անողոք հարվածելով «ձախ» խոտորումները։

2. Շեշտելով ինքնաքննադատության միանգամայն թույլ ծավալումը կազմակերպության մեջ, ամեն ջանք գործ դնել ինքնաքննադատությունը դարձնելու Ասոցիացիայի և նրա յուրաքանչյուր անդամի աշխատանքների անբաժան մեթոդը»։...

«4. Արձանագրել «Գրական դիրքերում»-ի գրական-քննադատական բաժնի անբավարար լինելը և թույլ աված մի շարք սխալները (միևնույն հեղինակի մասին հակասական հոդվածներ տպագրելը, Պերեվերզևի մասին ժամանակին եղած սխալ դիրքավորումը չուղղելը, անբավարար պայքարը բուրժուական-ազգայնական գրականության դեմ, որոշ քննադատականների անհանդուրժողական բնույթը և այլն)»։...

«8. Հատկապես ընդգծելով մասսայական աշխատանքի կարևորությունը, նրա ծավալման վրա լուրջ ուշադրություն դարձնել, ամեն մի սերտ կապ հաստատելով բանվորական և աշխատավորական մասսաների հետ (գրական ստեղծագործությունների ընթերցումներն ու ինքնաքննադատությունը, բանվորների և կոլխոզնիկների հավաքույթներում, գրական մասսայական դիսպուտների ավելի հաճախակի կազմակերպումը և այլն)»:

«Գրական դիրքերում» № 7, 1930:

Մայիսի 22-ին

Թիֆլիսի Հայարտասանը տեղի է ունենում Վ.Պ.Գ.Ա. Հայկական ակցիային կից երիտասարդ գրողների և Երևանի երիտասարդ գրողների խմբակի մերձեցման երեկո:

Մայիսի 23-ին

Գրողների Տանը կազմակերպվում է քրդական գրականության երեկո:

Բացման խոսք է ասում Դ. Դեմիրճյանը:

Մայիսի 24-ին

ՀԿ(բ)Պ VII Համագումարի բացումը:

Հունիսի 17-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի նամակը Ստալինգրադի տրակտորային գործարանի բանվորներին:

Հունիսի 19-ին

Բաքվի բանթղթակիցների ակումբում դիսպուտ է կազմակերպվում Արազու ստեղծագործությունների շուրջը:

Հունիսի 26-ին

ՀԿ(բ)Պ XVI Համագումարի բացումը:

Լ. Մ. Կագանովիչի զեկուցումից.

«Կուլտուրայի գծով, գրականության գծով, *հատկապես ազգային ռեսպուբլիկաներում*, արվել է դասակարգային պայքարը և հարկավոր է *մեծագույն աշխուժության այդ ֆրոնտում*»:

„XVI съезд Всесоюзной Коммунистической Партии (б). Стенографический отчет», էջ 142:

Ա. Սերաֆիմովիչի ելույթից.

«Ֆեդերացիայի գրողական մասսան լայն մասնակցություն է ցուցաբերում սոցիալիստական շինարարությանը: Իսկ ինչո՞ւմն է արտահայտվում այդ մասնակցությունը: Նրանում, որ շատ և շատ գրողներ ցրվել են գործարաններում, կոլխոզներում, շինարարությունների վրա, որպեսզի անմիջականորեն տեսնեն, որպեսզի ստեղծագործության մեջ տան կյանքը: Բայց գրողները կլանված են սոցիալիստական շինարարության ոչ միայն վիթխարիությամբ, այլև նրա տեմպով: Եվ ահա, գրողների միջև գնում է գեղարվեստական ստեղծագործության նոր ձևերի, նոր մեթոդների ամենաեռուն մշակումը»:...

«Ընկերներ, բավական է հիշել, թե ինչ կար ընդամենը մի քանի տարի սրանից առաջ, երբ պրոլետարական գրականության մասին, կարելի է ասել, որ նույնիսկ տարօրինակ էր խոսելը, որովհետև նա չկար, երբ ամբողջապես հենվում էին այսպես կոչված ուղեկիցների վրա: Իսկ այժմ պրոլետարական գրականությունն սկսում է գերիշխել: Դուք յուրաքանչյուր քաղաքում, որտեղ կա լրագիր, կհանդիպեք պրոլետարական գրողների բջիջի, որն սպասարկում է տպագիր օրգանին և գլխավորը՝ կուլտուրապես սպասարկում է բանվորական մասսաներին:

Բայց այդ ի՞նչպես պատահեց և ինչո՞ւ: Չէ՞ որ բուրժուական-պրինվալական դասակարգին պետք եղան հարյուրամյակներ՝ ստեղծելու համար այն գրականությունը, որը նա ուներ, իսկ մեզ մոտ, պրոլետարական գրականությունն աճում է արտասովոր արագությամբ: Ինչո՞ւմն է բանը: Ո՞րտեղ են պատճառները: Մի բանում. պրոլետարիատն ստեղծել է սեղմ միջավայր՝ իր գրականությունը, իր գրողներին աճեցնելու համար: Իսկ այդ ի՞նչ գրողական միջավայր է: Դա պրոլետարական և աշխատավորական, գյուղացիական մասսայական ընթերցողն է, այդ հենց նա է դաստիարապես աճեցնում իր գրողին կամ վերափոխում է ուրիշ դասակարգից գոնե եկած գրողներին՝ իրեն ծառայեցնելու համար»:

«XVI съезд Всесоюзной Коммунистической Партии (б). Стенографический отчет», էջ 705, 756:

Հունիս

„Наши достижения“ ամսագրի № 6-ում տպագրվում է Մ. Գորկու «Երիտասրդի մասին» հոդվածը:

Մ. Գորկու հոդվածից.

... «Պարզապես «մարդ»՝ դա դեռ շատ քիչ է։

Պատմությունը պահանջում է, որ հայտնվի Նոր Մարդը՝ ցեղական, ազգային և դասակարգային նախապաշարմունքներից ազատ։ Հնարավոր է արդյո՞ք այդպիսի մարդ. բանվոր դասակարգն արդեն ստեղծում է նրան։ Գործադրեք ձեր բոլոր ուժերը, ձեր կյանքի բոլոր օրերը, իդեալական մարդու այդ ստեղծման համար, և դուք կստեղծեք նրան ինքներդ ձեզնից»։

М. Горький, Публицистические статьи, Огиз—Ленгихл, 1933. էջ 116։

Հուլիսի 25-ին

Համկ(բ)Պ Կենտկոմի որոշումը ընդհանուր, պարտադիր տարրական ուսուցում անցկացնելու մասին։

Օգոստոսի 3-ին

Գրողների տանը ենթաշեֆ գնդի պատգամավորության պատվին կազմակերպվում է հանդիսավոր երեկո։

Օգոստոսի 8-ին

Տեղի է ունենում Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի կենտ. վարչության և «Գրական դիրքերում» ամսագրի խմբկոլի կոմֆրակցիայի նիստը. ընդունվում է բանաձև։

Նիստի բանաձևից.

«Բավարար չափով չի ծավալվել պայքարը երկու ֆրոնտի վրա։ հատկապես աջ թեքման դեմ և կատարվել են աջ և «ձախ» բնույթ կրող մի շարք կոպիտ սխալներ. (Պերեվերզևի ոամունքի մասին սխալ գնահատական տալը, կոլտնտեսարժման նվիրված համարը՝ սոեզիային նվիրված դիսպուտը և այլն), ինչպես նաև մի շարք դեպքերում տուրք է տրվել խմբակայնությանը և ցուցաբերվել է որոշ անհետևողականություն միևնույն հեղինակի մասին հակասական կարծիքներ տպագրելով, անբավարար է ծավալվել պայքարն ազգայնական բուրժուական գաղափարախոսության դեմ, անհրաժեշտ ուշադրություն չի դարձվել բանվորական գրական խմբակների աշխատանքների կազմակերպման ու աշխուժացման, սկսնակ ուժերի ուսուցման հարցերի վրա։

Կոլտնտեսաշարժման նվիրված համարը հանդիսանալով գլխավոր պատկան տրամադրությունների գեղարվեստական իլյուստրացիան, չի կարողացել տալ կոլտնտեսաշարժման իսկական պատկերը, տարվել է ուռա-տրամադրություններով, որոնք երբեմն վերածվել են էժանագին ներբողների և «ձախ» գլխապատումների գովքի: Համարում բավարար չափով չեն տրված կոլտնտեսաշարժման դժվարությունները, դասակարգային պայքարի, կոլտնտեսությունների ամրացման գեղարվեստական համոզիչ փաստերը և այլն»:

«Գրական թերթերում» № 7, 1930:

Սեպտեմբերի 3-ին

Հրապարակվում է Համկ(բ)Պ Կենտկոմի սեպտեմբերի 3-ի դիմումը՝ հնգամյակի 3-րդ, վճռական տարին թևակոխելու մասին:

Խ. Հ. Գ. Ֆեդերացիան այդ առթիվ հրապարակում է կոչ:

Կոչից.

«Համկոմկուսի Կենտկոմի սեպտեմբերի 3-ի դիմումը հանդիսանում է կարևոր վավերագիր և վճռական աղդանշան բանվոր դասակարդի ու աշխատավորական լայն մասսաների ուժերը մոբիլիզացիայի ենթարկելու հնգամյակի երկրորդ տարվա ճեղքվածքները դոցելու և ավելի կազմակերպվածությամբ դիմավորելու հնգամյակի երրորդ տարվանը»...

«Ընկեր խորհրդային դրողնե՛ր, դեպի գործարանները, Համկոմկուսի Կենտկոմի սեպտեմբերի 3-ի դիմումի կենսագործման համար:

Վճռական պայքար սոցիալիստական առօրյայից կտրվածության, ինքնամփոփման դեմ:

Չա՛րի տանք, օժանդակե՛նք, պայքարե՛նք ինդուստրացման և գյուղի սոցիալիստական վերակառուցման, սոցիալիզմի կառուցման համար»:

«Գրական թերթերում» № 8—9, 1930:

Սեպտեմբերի 15-ին

Խորհրդային Հայաստանի Պրոլետարական Դրողների Ասոցիացիայի քարտուղարությունը որոշում է.

«Համկոմկուսի սեպտեմբերի 3-ի դիմումի կենսագործմանը մասնակցելու և օժանդակելու համար անհրաժեշտ գտնել.

1. Խորհրդային Գրողների Ֆեդերացիայի հետ միասին կազմակերպել բրիգադներ և ուղարկել Հայաստանի արդյունաբերական վայրերը։ Բրիգադներին առաջադրել անմիջական մասնակցություն ցուցաբերել Կենտկոմի սեպտեմբերյան դիմումի պարզաբանման և մասսայականացման գործին։ Բանվորական ակումբներում կազմակերպել սոցիալիստական շինարարությանը նվիրված դրական երեկոներ և այլն։

2. Առաջարկել Լենինականի կազմակերպությանը բանվորական գրական խմբակների հետ միասին անմիջապես անցնելու տեքստիլի և դեպոյի արդիֆինպլանների կատարմանը, Կենտկոմի սեպտեմբերի 3-ի դիմումի պարզաբանման ուսումնասիրությանը։

3. Անհրաժեշտ համարել «Բանվոր»-ի հերթական դրական էջը նվիրել այդ ուսումնասիրության փաստական և դեղարվեստական նյութերին։

4. Ալավերդում կազմակերպել բանվորական դրական խմբակ։

5. Առաջարկել Երիտ. Սեկցիայի վարչությանը՝ կազմակերպելու Երևանի «Արարատ» գործարանի և տպարանների արդիֆինպլանների և Կենտկոմի դիմումի պարզաբանման ուսումնասիրությունը։

6. «Ավանգարդ»-ի հերթական դրական էջը նվիրել այդ ուսումնասիրությունների նյութերի տպագրմանը։

7. «Գրական դիրքերում»-ի հոկտեմբերի համարում հատուկ տեղ հատկացնել արդիֆինպլանների կատարմանը, Կենտկոմի սեպտեմբերի 3-ի դիմումի մասսայականացմանը և Հարվածայնության դեղարվեստական վերարտադրմանը»։

«Գրական դիրքերում» № 8—9, 1930։

Հոկտեմբերի 22-ին

ՀԱՄԽ-ը և ՀՊԳ Ասոցիացիան կոչ են հրապարակում բանվոր հարվածայիններին դրականության մեջ ներդրավելու մասին։

Հոկտեմբեր

«Գրական դիրքերում» ամսագրի № 10-ում լույս են տեսնում «Անդրկովկասյան պրոլետ գրողների Ասոցիացիայի 4-րդ պլենումը», և «ՋԱՊՊ»-ի քարտուղարության օգոստոսի 14-ի ընդլայնած նիստի բանաձևը հանրապետական ասոցիացիաների կողմից քննելու հանրագումարների մասին» խմբագրական հոդվածները։

Նոյեմբերի 2-ին

Երևանում տեղի է ունենում Անդրկովկասի ՊԴ Ասոցիացիայի վարչության (ՋԱՊՊ) պլենումը:

Պլենումը քննության է առնում. Անդրկովկասյան պրոլետարական պրոկանությունը վերակառուցման շրջանում, պրոլետգրական ասոցիացիաների վերակառուցումը, Խորհրդային Հայաստանի գրական ֆրոնտը և այլն:

Տեղի է ունենում ինտերնացիոնալ գրական երեկո: Իրենց ստեղծագործություններով հանդես են գալիս Ադրբեջանի, Հայաստանի և վրաստանի պրոլետ. գրողները:

Նոյեմբերի 28-ին

Տեղի է ունենում Հայաստանում սովետական կարգերի հաստատման 10-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ:

Նոյեմբեր

Ժողկոմխորհի որոշմամբ Հայաստանի Գիտության և Արվեստի ինստիտուտը վերակառուցվում և դառնում է Գիտությունների ինստիտուտ հետևյալ սեկցիաներով.

1) Գրականության և լեզվագիտության, 2) Փիլիսոփայության, 3) Պատմության, 4) Սովետական էկոնոմիկայի, 5) Բուսաբանության, 6) Կենդանաբանության, 7) Մաթեմատիկայի և ֆիզիկայի, 8) Քիմիայի, 9) Շինարարության և տեխնիկայի, 10) Կենսաբանության:

Նոյեմբերի 15-ին

«Պրավդա»-յում և «Իզվեստիա»-յում տպագրվում է Մ. Գորկու «Եթե թշնամին չի հանձնվում՝ նրան ոչնչացնում են» հոդվածը:

Մ. Գորկու հոդվածից.

«Մարքսի և Լենինի ուսմունքով կազմակերպված բանվորների և գյուղացիների առաջավոր ջոկատների էներգիան, Սովետների Միության աշխատավոր ժողովրդի մասսային տանում է դեպի մի նպատակ, որի իմաստն արտահայտվում է երեք պարզ խոսքեով. ստեղծել նոր աշխարհ: Սովետների Միության մեջ նույն-

իսկ պիոներ երեխաները հասկանում են, որ ստեղծելու համար նոր աշխարհ, կյանքի նոր պայմաններ, հարկավոր է անհնար դարձնել առանձին անհատների ձեռքերում և դրպաններում հսկայական հարստությունների կուտակումը, հարստություններ, որոնք ամենուր քամվում են և միշտ քամվել են բանվորների, գյուղացիների արյունից ու քրտնքից. ոչնչացնել մարդկանց բաժանումը պասակարգերի, ոչնչացնել փոքրամասնության կողմից մեծամասնության աշխատանքային և ստեղծագործական էներգիան շահագործելու որևէ հնարավորություն. մերկացնել թունավոր կեղծիքը կրոնական և ազգային նախապաշարումների, որոնք անջատում են մարդկանց՝ նրանց դարձնելով իրար անհասկանալի, խորթ մյանց հանդեպ, աշխատավորների կյանքից ջնջել դարավոր ստրկությամբ սուվորեցրած բոլոր վայրենի և կեղտոտ կենցաղային սովորույթները. ոչնչացնել այն ամենը, ինչ աշխատավոր ժողովրդի մեջ դժվարացնելով նրա կենսական շահերի միասնության գիտակցման աճը, կապիտալիստներին հնարավորություն է տալիս ստեղծել մարդկային սպանդանոցներ՝ միլիոնավոր աշխատավորների ուղարկելով իրար դեմ պատերազմի՝ այնպիսի պատերազմների, որոնց հիմնական նպատակը միշտ միևնույնն է. հաստատել կապիտալիստների կողոպուտի իրավունքը, ամրապնդել շահույթի նրանց անիմաստ ծարավը, նրանց իշխանությունը աշխատավորության վրա:

Վերջին հաշվով, այդ նշանակում է. բոլոր մարդկանց և յուրաքանչյուր անհատի համար ստեղծել իրենց ուժերի և ընդունակությունների զարգացման աղատ պայմաններ, ստեղծել բոլորի համար հավասար հնարավորություն՝ հասնելու այն բարձրությանը, որին հասնում են ծախսելով ավելորդ շատ էներգիա, միայն բացառիկ, այսպես կոչված «մեծ մարդիկ»:...

«Երկրի ներսում, խիստ խորամանկ թշնամիները մեր դեմ կազմակերպում են սննդի սով, կուլակները կոլեկտիվիստ գյուղացիներին ահաբեկում են սպանություններով, հրդեհներով, զանազան ստորություններով,— մեր դեմ է այն ամենը, որն ապրել անցել է պատմության կողմից նրան հատկացված ժամկետները, և դա իրավունք է տալիս մեզ դեռևս համարվելու քաղաքացիական պատերազմի դրության մեջ: Այստեղից բխում է բնական եզրակացություն — եթե թշնամին չի հանձնվում՝ նրան ոչնչացնում են:

Դրսից, Սովետների Միության ստեղծագործական աշխատանքի դեմ է եվրոպական կապիտալը: Նա ևս ապրել է իր ժամկետը և դատապարտված է անկման: Բայց նա դեռևս ուզում է և դեռևս ուժ ունի դիմադրելու անխուսափելիին: Նա կապված է այն դավաճանների հետ, որոնք վնասարարություն են անում Միության ներսում, և նրանք, ըստ իրենց ստորության չափի, օգնում են նրա ավազակային մտադրություններին»:...

«Մենք ապրում ենք անընդհատ պատերազմի պայմաններում աղջ բուրժուազիայի հետ: Դա բանվոր դասակարգին պարտադրում է եռանդուն պատրաստվել ինքնապաշտպանության, պատրաստվել պաշտպանելու այն ամենը, որը նոր աշխարհի կառուցման հերոսական ինքնամոռաց աշխատանքի 13 տարիների ընթացքում ստեղծել է իր համար և իբր օրինակ բոլոր երկրների պրոլետարիատի համար:

Բանվոր դասակարգն ու գյուղացիությունը պետք է սպառազինվեն՝ հիշելով, որ արդեն մի անգամ կարմիր բանակի հզոր ուժը հաղթականորեն դիմադրել է համաշխարհային պատերազմի դրոհին՝ ինքը լինելով անզեն, սոված, բոբիկ, մերկ և ղեկավարվելով իր ընկերների կողմից, որոնք այնքան էլ ծանոթ չէին ռազմական գործողությունների հնարքներին: Այժմ մենք ունենք կարմիր բանակ, բանակ՝ մարտիկների, որոնցից յուրաքանչյուրը լավ գիտե, թե ինչի համար է նա կռվելու:

Ցվ եթե, անխուսափելի ապագայի սարսափից վերջնականապես խելագարվելով, Եվրոպայի կապիտալիստներն, այնուամենայնիվ, հանդգնեն մեր դեմ ուղարկել իրենց բանվորներին ու գյուղացիներին, անհրաժեշտ է, որ խոսքի ու գործի այնպիսի մի հարված դիմավորի նրանց հիմար գլուխներին, որը դառնա կապիտալի դեմ ուղղված վերջին հարված և նրան նետի գերեզման, որը միանգամայն իր ժամանակին փորել է նրա համար պատմությունը»:

М. Горький, Публицистические статьи, Огиз-Ленгихл, 1933, էջ 138—139, 140, 141:

Նոյեմբեր

Հայերեն լեզվով լույս է տեսնում Վ. Ի. Լենինի երկերի լիակատար ժողովածուի առաջին հատորը:

Դեկտեմբեր

«Գրական դիրքերում» ամսագրի խմբագրությունը դիմում է գրողներին, քննադատներին, արվեստագետներին, բանվորներին հետևյալ անկետայով՝

1. Ի՞նչ է Ձեր կարծիքը սրոլետարական գրականության 10-ամյա նվաճումների մասին:

2. Ի՞նչ է Ձեր կարծիքը ուղեկցային գրականության 10-ամյա նվաճումների մասին:

3. Ի՞նչ պահանջներ կառաջադրեք մեր գրականության առաջիկայում:

4. Ի՞նչ է Ձեր կարծիքը մեր քննադատության մասին և ի՞նչ կառաջադրեք նրան:

Անկետային պատասխանում են՝ Ալ. Շիրվանզադեն, Նար-Դոս, Ստ. Զորյանը, Ն. Զարյանը և ուրիշները:

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Ձափաձո

1. Ավ. Իսահակյան.— Բանաստեղծություններ, Պետհրատ, Երևան:
2. Ե. Չարենց.— Էպիքական լուսաբաց, Պետհրատ, Երևան:
3. Ն. Զարյան.— Ռուշանի քարափը, Պետհրատ, Երևան:
4. Գ. Սարյան.— Երկիր խորհրդային, Պետհրատ, Երևան:
5. Ս. Տարոնցի.— Առավոտ, Պետհրատ, Երևան:
6. Ս. Վահունի.— Երկու երգ, Պետհրատ, Երևան:
7. Աղավնի.— Արտերի լիրիկան, Պետհրատ, Երևան:
8. Վ. Գրիգորյան.— Անիվի երգը, Պետհրատ, Երևան:

Սրձակ

1. Ալ. Շիրվանզադե.— Կյանքի բովից, Պետհրատ, Երևան:
2. Ալ. Շիրվանզադե.— Մորգանի վնասին, Պետհրատ, Երևան:
3. Դ. Դեմիրճյան.— Նրանց ժպիտը, Պետհրատ, Երևան:
4. Ստ. Զորյան.— Վարպետների կոմունը, Պետհրատ, Երևան:
5. Ստ. Զորյան.— Առաջին օրեր, Պետհրատ, Երևան:

6. Վ. Միրաքյան.— Երրորդության պաղտնիքը, Պետհրատ, Երևան:
7. Ծ. Թորգոմյան.— Պատմվածքներ, Թիֆլիս:
8. Վ. Աարյան.— Ջրահարդնացքը, Պետհրատ, Երևան:
9. Մ. Պետրոսյան.— Պատմվածքներ, Պետհրատ, Երևան:
10. Հ. Մելիքյան.— Պատմվածքներ, Պետհրատ, Երևան:
11. Վ. Անանյան.— Կրակե օղակի մեջ, Պետհրատ, Երևան:
12. Գ. Բեև.— Կյանքի երգը, Պետհրատ, Երևան:
13. Արմ. Թամազյան.— Հայացքներ, Պետհրատ, Երևան:

Գրականության պատմություն, տեսություն և քննադատություն

1. Խ. Սարգսյան.— Լևոն Շանթ, Պետհրատ, Երևան:

1931

Հունվարի 25-ին

Գրողների Տանը Հ. Մկրտչյանը դեկուցում է Ն. Զարյանի «Քուշանի քարափը» պոեմի մասին:

Հունվար

Խարկովում տեղի է ունենում Միջազգային Ռևոլուցիոն Գրողների Բյուրոյի պլենումը: Հ. Հակոբյանն ընտրվում է Բյուրոյի Նախագահության անդամ:

Հունվար

«Գրական դիրքերում» ամսագրի առաջին համարում լույս են տեսնում ՎԱՊՊ-ի քարտուղարության կոմֆրակցիայի, ՋԱՊՊ-ի ընդլայնած քարտուղարության դեկտեմբերի 6-ի, ՀՊԳԱ Կենտվարչության և ակտիվի դեկտեմբերի 14-ի, Հայաստանի Կենտվարչության կոմֆրակցիայի դեկտեմբերի 13-ի բանաձևերը:

Հունվար

ՀՊԳ Ասոցիացիան կազմակերպում է գրական 18 խմբակներ, որոնցից 8-ը բանվորական, 1-ը կարմիր բանակային, 4-ը դպրոցական և 5-ը գյուղական: Բոլոր խմբակներին տրվում է աշխատանքի ծրագրեր, կցվում են դեկավարներ:

Փետրվարի 3-ին

Տեղի է ունենում Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի Կից Գրական Ստուդիայի հանդիսավոր բացումը։

Փետրվարի 4-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի ճառը՝ «Տնտեսավարների խնդիրների մասին» Սոցիալիստական արդյունաբերության աշխատողների Համամիութենական առաջին կոնֆերենցիայում։

Փետրվարի 14-ին

ՀՍՍՌ Սովետների VII համագումարի բացումը։

Փետրվարի 19-ին

Կուլտուրայի Տանը Ե. Չարենցը զեկուցում է «Ներկա պրոլետարական պոեզիայի հիմնական տենդենցները» նյութի մասին։

Զեկուցման շուրջը ծավալվում է լայն դիսկուսիա։

Մարտ

ՎԱՊՊ-ի 2-րդ պլենումը դիմում է ընկեր Ի. Վ. Ստալինին՝ «ՍՍՌՄ պրոլետարական դրականությունը զեկուցում է ընկեր Ստալինին»։

Մարտ

ՀՆԳ Ֆեդերացիան կազմակերպում է միտինգ—ցույց, նվիրված Մ. Գորկու դեմ ուղղված հարձակումներին։

Ընդունվում է բանաձև, որով գրողները իրենց բուռն զայրույթն են հայտնում բուրժուազիայի ու նրա լակեյների նկատմամբ, Մ. Գորկու՝ պրոլետարիատի լավագույն բարեկամի դեմ ծավալած հալածանքի առթիվ և կոչ են անում՝ պայքարել իմպերիալիստական ինտերվենցիոնիստների դեմ հանուն Սովետական Միության։

Մարտ

Հաստատվում է Հայաստանի ՊԳ Ասոցիացիայի նոր վարչությունը։

Վարչության կազմը՝ Ե. Չարենց, Ն. Զարյան, Հ. Գյուլիքեվխյան, Ա. Վշտունի, Գ. Աբով, Ան. Վարդանյան, Արագի, Գ. Սարյան, Աղավնի, Ա. Ոսկերչյան և ուրիշներ։

Ապրիլ

Մոսկվայում գումարվում է ԼՕԿԱՖ-ի կենտրոնական խորհրդի առաջին պլենումը:

Բացման խոսք է ասում Ա. Սերաֆիմովիչը:

Մայիս

Կոմունիստական Ակադեմիայում կազմակերպվում է դիսպուտ «Մենշևիզմը և գրական քննադատությունը» նյութի շուրջը:

Մայիս

Տեղի է ունենում Հայաստանի արվեստագետների միացյալ մի-տինգ դաշնակցության ինտերվենցիոնիստական ոտնձգության-ների դեմ:

2. Գյուլիքեվխյանը զեկուցում է կարդում «Ինտերվենցիայի վտանգը, դաշնակցությունը և մեր գրականության ու արվեստի անելիքները» նյութի մասին: Ընդունվում է բանաձև:

Բանաձևից.

«Միացյալ միտինգը գտնում է, որ պրոլետարական և աշխա-տավորական գրողներն ու արվեստագետները հարկ եղած ուշա-դրությունը չեն դարձրել՝ իրենց ստեղծագործության թեմատիկա-յի մեջ դաշնակցության անցյալն ու ներկան, էջմիածինն ու հո-գևորականությունը, ազգայնական տրամադրություններն ու մտայ-նությունները ընդգրկելու խնդրին, միաժամանակ անտես է արվել մասսաների ռազմականացումը, Հայաստանի կարմիր բանակի ան-ցյալը, նրա դերն ու նշանակությունը: Ըստ այնմ միացյալ մի-տինգն անհրաժեշտ է գտնում առաջարկել բոլոր խորհրդային ար-վեստագետներին՝ բեկում առաջացնել թեմատիկայի բնագավա-ռում, վերոհիշյալ բացերն ու թերությունները շտապ լրացնելու և շտկելու նպատակով»:

Բանաձևը ստորագրում են Հայաստանի խորհրդային Գրողնե-րի Ֆեդերացիայից՝ Դ. Դեմիրճյան, Ստ. Զորյան, Ե. Չարենց, Արշ. Խոնդկարյան, Խ. Սարգսյան. արվեստագետներից՝ Մ. Սարյան, Արա Սարգսյան, Ս. Առաքելյան, Կ. Զաքարյան, Ա. Ոսկերչյան, Ս. Գասպարյան, Տ. Հախումյան, Ռ. Մելիքյան:

Հունիսի 14-ին

Թիֆլիսի Ռուսթավելու թատրոնում նշվում է Նար-Դոսի գրական գործունեության 45-ամյակը:

Վրաստանի ժողկոմսովետը Նար-Դոսին շնորհում է վաստակավոր գրողի կոչում, Ախալքալաքի շրջանի Ալաստան գյուղի դպրոցը վերանվանվում է Նար-Դոսի դպրոց:

Հունիսի 20-ին

Կուլտուրայի Տանը նշվում է Դ. Դեմիրճյանի գրական գործունեության 35-ամյակը:

Հունիսի 23-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի ճառը տնտեսավարների խորհրդակցության՝ «Նոր իրադրություն — տնտեսական շինարարության նոր խնդիրներ»:

Հուլիսի 7-ին

Երևան է ժամանում ուկրաինական գրողների պատգամավորությունը:

Կուլտուրայի Տանը ուկրաինական գրականության պատվին կազմակերպվում է հանդիսավոր նիստ:

Հուլիսի 8-ին

Ուկրաինական գրականության պատգամավորությունը մեկնում է Երևանից, թողնելով հետևյալ նամակը.

«Երեք օր մնալով Սովետական Երևանում՝ մենք անջնջելի տպավորություններ ստացանք: Տեսանք, թե ինչպես հին քաղաքի ավերակների վրա պլանայնորեն աճում են նոր, սոցիալիստական թաղերը, թե ինչպես կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ զարգանում է ԱՍՖՍՌ-ի և ամբողջ ՍՍՌՄ-ի բաղկացուցիչ մասը կազմող Սովետական Հայաստանի տնտեսական զորությունը: Մեզ առանձնապես ապշեցրեց ձևով ազգային, բովանդակությամբ պրոլետարական, սոցիալիստական կուլտուրայի բուռն ու բազմակողմանի աճումը ձեզ մոտ»:

Հուլիսի 12-ին

Գրողների Տանը Խ. Սարգսյանը զեկուցում է «Վ. Տերյանի ստեղծագործության մասին»:

Հուլիսի 25-ին

Հիմնադրվում է Հայաստանի ԼՕԿԱԾ-ը։

Հիմնադրմանը մասնակցում են կարմիրբանակային գրողները, բաղաշխատողները, ՀՊԳ Ասոցիացիայի և ՀԽԳ Ֆեդերացիայի ներկայացուցիչները։

Հուլիսի 31-ին

«Պրավդա»-յում և «Իզվեստիա»-յում տպագրվում է Մ. Գորկու «Քաղաքացիական պատերազմի մասնակիցներին» հոդվածը։

Մ. Գորկու հոդվածից.

...«Պատմությունն» իրեն նպատակ է դնում ցույց տալ բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության փառավոր մարտերը, ցույց տալ առանձին գործարանների ու ֆաբրիկանների, կարմիր գվարդիական ու պարտիզանական ջոկատների և կարմիր բանակային գնդերի սխրագործությունները, երիտասարդ սերնդին ավանդել պրոլետարական պայքարի լավագույն տրադիցիաները»։

M. Горький. Публицистические статьи, Огиз-Ленгихл, 1933, էջ 270։

Օգոստոսի 3-ին

Հրապարակվում է ՀՊԳԱ խորհրդակցության որոշումը.

«Սոցիալիստական շինարարության ներկա բուռն վերելքին, պրոլետարական դրական կազմակերպությունների վրա, որպես բանվոր դասակարգի գրական առաջավոր ջոկատի, խիստ կարևոր և պատասխանատու պարտականություն է դրված — դեղարվեստական դրականության միջոցով դրսևորել սոցիալիզմի հաղթանակի համար մղվող հերոսական մարտերը, տալ այդ մարտերի առանձին հերոսների — լավագույն հարվածայինների և էնտուզիաստների, դեմքը։ Գեղարվեստական պատկերի միջոցով անխնա պայքար մղել դասակարգային թշնամու — կուլակի, դաշնակի դեմ, մերկացնել նրանց պայքարի բոլոր արատահայտությունները։ Մերկացնել ու հարվածել կոալակցության լենինյան գծից շեղվողներին, դասակարգային թշնամու սոցիալական պատվերը կատարող աջ օպորտունիստներին, «ձախ» խոտորողներին և խուճապողներին։ Պայքար մղել բոլշևիզմի մեծ արվեստի կերտման համար»։

«Գրական դիրքերում» № 7, 1931։

Սեպտեմբերի 6-ին

Թիֆլիսում բացվում է ԶԱՊՊ-ի վարչության պլենումը։

Ընտրվում է ԶԱՊՊ-ի նոր քարտուղարություն և „На рубеже Востока“ ժուռնալի խմբագրություն։

Սեպտեմբերի 7-ին

«Պրավդա»-յում և «Իզվեստիա»-յում տպագրվում է Մ. Գորկու «Ֆաբրիկանների և գործարանների պատմությունը» հոդվածը։

Մ. Գորկու հոդվածից.

...«Մեր նվաճումների, մեր տնտեսական հաջողությունների հրաշքային նշանակությունը հասկանալու համար, բանվոր դասակարգը պետք է գիտենա նաև անցյալը՝ այն խստապես աղտոտված դետինը, որի վրա նա սկսեց կառուցել իր նոր պետությունը։ Ամեն ինչ ճանաչվում է համեմատության միջոցով, և ներկան ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է գիտենալ անցյալը։ Մեր մեջ քիչ չեն այնպիսի մարդիկ, որոնք բոլորովին չգիտեն անցյալի տաժանակրությունը և դրա համար էլ չեն կարող ճիշտ գնահատել ներկան»։...

«Մենք պետք է անխոնջ պայքարենք հին հիմարության մնացորդների դեմ, քաղաքական և այլ տեսակի ամեն տգիտության դեմ, հանուն սոցիալիզմի կուլտուրայի։ Մեզ անհրաժեշտ է ուսումնասիրել մեր իրականությունն իր ողջ ծավալով, մենք պետք է անձամբ ճանաչենք մեր բոլոր գործարաններն ու ֆաբրիկանները, բոլոր ձեռնարկությունները, պետության կառուցման բոլոր աշխատանքները։ Պետք է մանրամասն, բազմակողմանի գիտենալ այն ամենը, ինչ մենք ժառանգել ենք անցյալից և այն ամենը, ինչը որ ստեղծված է 14 տարիներում, ստեղծվում է ներկայումս։ Հարկավոր է գիտենալ արտադրության յուրաքանչյուր բնագավառի, յուրաքանչյուր ամենից ավելի տիպիկ գործարանի դերը,— գործարանի՝ իբրև արդյունաբերության շարժիչի, իբրև տեխնիկների դպրոցի և ուսուցիոնների դպրոցի. գործարանի, որպես բանվորների դասակարգային, ուսուցիոն ինքնադիտակցության դասակարգի և որպես քաղաքացիական պատերազմի կազմակերպչի, մասնակցի։ Պետք է գիտենալ գործարանն իր ժամանակակից

նշանակության մասին, որպես սոցիալիստական գիտակցության և սոցիալիստական արդյունաբերության կազմակերպչի։

М. Горький, Публицистические статьи, Огиз-Ленгихл, 1933, էջ 272, 273։

Սեպտեմբերի 20-ին

Բաքվի 26 կոմունարների գնդակահարման օրը Երևանի Շահումյանի հրապարակում բացվում է Ստ. Շահումյանի արձանը (պրոֆ. Մերկուրովի)։

Հոկտեմբեր

Համկ(բ)Պ Կենտկոմի հատուկ հրահանգով ազգային կենտրոնական կոմներին կից կազմակերպվում են ազգային անցյալ ու ներկա կոմպարտիան ուսումնասիրող բրիգադներ։

Հոկտեմբերի 10-ին

Կուլտուրայի Տանը պոետ վ. Կամենսկին զեկուցում է ռուսական պոեզիայի մասին։

Հոկտեմբերի 11-ին

Ընկեր Ի. վ. Ստալինի մակագրությունը Մ. Գորկու «Աղջիկը և Մահը» հեքիաթի վերջին էջի վրա՝ «Այս գործն ավելի ուժեղ է, քան Գյոթեի «Faustus»-ը (սերը հաղթում է մահին)»։

Հոկտեմբերի 12-ին

Լենինականում Հ. Գյուլիքեվխյանը զեկուցում է կարդում «Պրոլետարական գրականության արդի դրությունը և հեռանկարները» նյութի մասին։

Նոյեմբերի 13-ին

Ընկեր Ի. վ. Ստալինի նամակը „Пролетарская революция“ ամսագրի խմբագրությանը՝ «Բոլշևիզմի պատմության մի քանի հարցերի մասին»։

Ի. վ. Ստալինի նամակից.

«Տրոցկիզմը հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատն է։

Ահա թե ինչու լիբերալիզմը տրոցկիզմի նկատմամբ, թեկուզ

և ջախջախված ու դիմակավորված տրոցկիզմի, քյալլապյոզության է, որը սահմանակցում է ոճրագործության հետ, բանվոր դասակարգին դավաճանելու հետ։

Ահա թե ինչու որոշ «գրականագետների» ու «պատմագետների» փորձերը՝ մաքսանենգորեն մեր գրականության մեջ ներքաշելու դիմակավորված տրոցկիստական հնոտին՝ պետք է բոլշևիկների կողմից վճռական հակահարվածի հանդիպեն»։

Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, Պետհրատ, 1940, էջ 440—441։

Նոյեմբերի 17-ին և 18-ին

Թիֆլիսում տեղի է ունենում ՀԱՊՊ-ի քարտուղարության ընդլայնած նիստը։

Օրակարգ. *Բանվոր հարվածականներին գրականության մեջ ընդգրկելու կոչի արդյունքներն ու հերթական խնդիրները Անդրկոմկուսում։*

Նոյեմբեր—դեկտեմբեր

«Կարմիր Ջինվոր» թերթը 15 օրը մեկ անգամ տալիս է գրական էջ, տպագրվում են կարմիրբանակային գրողները։

Նոյեմբեր—դեկտեմբեր

«Գրական դիրքերում» ամսագրի խմբագրության որոշմամբ «Գրական դիրքերում» ամսագիրը տրամադրում է էջեր ԼՕԿԱՖ-ին՝ նյութեր տպագրելու համար։

Դեկտեմբերի 22-ին

Գրողների Ֆեդերացիան կազմակերպում է դիսպուտ Հայկինոյի խնդիրների շուրջը։

Դեկտեմբերի 23-ին և 24-ին

«Ավանգարդ» թերթի խմբագրության նախաձեռնությամբ Երևանի կոմերիտմիության ՀՊԳՍ Երիտասարդական Սեկցիայի և քաղվորական գրական խմբակների ակտիվի համար կազմակերպվում է գրական դիսպուտ՝ կոմերիտական գրողների ստեղծագործության շուրջը։

Դեկտեմբեր

«Գրական դիրքերում» ամսագրի № 11—12-ում տպագրվում է «Բոլշևիզմի կենսական շահերի համար գրականության ֆրոնտում» վերնագրով խմբագրականը։

Խմբագրականից.

«Ընկեր Ստալինը՝ մարքսիստ ագրարագետների կոնֆերենցիայում (1929 թ. դեկտեմբերի 27-ին արտասանած պատմական նշանակություն ունեցող իր ճառում)՝ մեծագույն խնդիրներ. դրեց սոսկական ֆրոնտի աշխատողների առաջ՝ կապված սոցիալիստական շինարարության նոր էտապի խնդիրների հետ, երբ «նոր ձևով են դրված ՆԷՊ-ի, դասակարգերի, շինարարության տեմպերի, զորման, կուսակցության քաղաքականության խնդիրները»։...

«Հայաստանի պրոլետ գրողների ասոցիացիան ընդունել է, և պետք է ընկեր Ստալինի ցուցումների հիման վրա, Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի բոլշևիկյան ղեկավարությամբ, վճռական շրջադարձ կատարի իր աշխատանքներում և պայքար ծավալի հակահեղափոխական տրոցկիզմի, ֆաշիստական դաշնակցության, հակապրոլետարական գաղափարախոսության բոլոր տեսակի արտահայտությունների, աջ և «ձախ» օպորտունիզմի, փտած լիբերալիզմի ու հաշտվողականության դեմ, «հանուն բոլշևիզմի կենսական շահերի» (Ստալին) գրականության ֆրոնտում»։

«Գրական դիրքերում» № 11—12, 1931։

Նույն համարում տրվում է նաև ՎՕԱՊՊ-ի քարտուղարության որոշումը՝ «Ընկեր Ստալինի նամակը և ՎՕԱՊՊ-ի խնդիրները»։

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Ջափածո

1. *Հ. Հակոբյան.— Լենինգրադյան պոեմ, Սախալտամի, Թիֆլիս։*
2. *Ակ. Վշտունի.— Խոսում է ռադիո Ալժիրը, Պետհրատ, Երևան։*
3. *Խ. Հրաչյան. —Մկաննների լիրիկան, Պետհրատ, Երևան։*
4. *Խ. Հրաչյան.— Շեփորներ, Պետհրատ, Երևան։*

5. Ա. Լուսենց.— Բանաստեղծություններ ժողովածու, Հյուս. Կովկ. Երկ. հրատ.:
6. Ա. Լուսենց.— Երգեր հայրական վերելքի, Հյուս. Կովկ. Երկ. հրատ.:
7. Աշփալ.— Ճամբարում, Պետհրատ, Երևան:

Ուրձակ

1. Դ. Դեմիրճյան.— Երկերի ժողովածու, 1-ին հատ., Պետհրատ, Երևան:
2. Ստ. Զորյան.— Երկերի ժողովածու, 1-ին հատ., 2-րդ լրացրած հրատ., Պետհրատ, Երևան:
3. Ստ. Զորյան.— Նովելներ, Պետհրատ, Երևան:
4. Արազի.— Լուսերը, Պետհրատ, Երևան:
5. Մ. Մանվելյան.—Աշնան ճանճեր, Պետհրատ, Երևան:
6. Ծ. Թորգոմյան.— Հորձանքում, Պետհրատ, Երևան:
7. Մ. Պետրոսյան.— Վերելքի ճամփին:
8. Վեսպեր.— Կենդանի և կրակե մարդկանց հետ, Թիֆլիս:
9. Սիրաս.— Հարցրեք նրանց, Մոսկվա:
10. Վ. Անանյան.— Պատկերներ կոլխոզի դաշտից, Պետհրատ, Երևան:
11. Վ. Անանյան.— Զորաշարժ, Պետհրատ, Երևան:
12. Վ. Անանյան.— Բամբակի ֆրոնտը պայքարի ֆրոնտ..., Պետհրատ, Երևան:
13. Պայազատ.— Մանր մարդիկ, Պետհրատ, Երևան:
14. Արաքս.— Զիմմի, Պետհրատ, Երևան:
15. Գ. Հովնան.— Առաջին ժպիտը, Մոսկվա:

Դրամատուրգիա

1. Ան. Վարդանյան.— Ազդանշան, Պետհրատ, Երևան:
2. Ան. Վարդանյան.— Դիրքերում, Պետհրատ, Երևան:

Գրականության պատմություն, տեսություն և ճնճղատություն

1. «Պրոլետ գրականության ֆրոնտում» (հոդվածների ժողովածու), Պետհրատ, Երևան:

Ժողովածուներ

1. *«Բոլշևիկյան գարնանացան» (գրական ժողովածու), Պետհրատ, Երևան։*

Թարգմանություններ

1. *Ի. Տուրգենև.— Ընտիր երկեր, 1-ին հատ., Պետհրատ, Երևան։*
2. *Մարկ Տվեն.— Թոմ Սոյերի արկածները, Պետհրատ, Երևան։*

1932

Ընկեր Ստալինը սահմանում է սովետական գրականության և արվեստի մեթոդը՝ սոցիալիստական ռեալիզմը։

Ընկեր Ստալինը բնորոշում է սովետական գրողի դերը սոցիալիստական հասարակակարգում որպես՝ «Մարդկային հոգու ճարտարապետ»։

Հունվարի 7-ին

Բաթում է ժամանում Խորհրդային Հայաստան ներգաղթող հայերի քարավանը։

Հունվարի 17-ին

ՀԿ(բ)Պ VIII համագումարի բացումը։

Հունվարի 30-ին

ՀամԿ(բ)Պ XVII կոնֆերենցիայի բացումը։

Փետրվարի 18-ին և 21-ին

Երևանի Մարքսիզմ-լենինիզմի Ինստիտուտում տեղի է ունենում ինստիտուտի գրական ու գեղարվեստի սեկցիայի նիստը։ Պլեխանովի գրականագիտական ժառանգության մասին զեկուցում է կարդում Ս. Հարությունյանը։

Փետրվարի 23-ին

Լույս է տեսնում «Գրական թերթ»-ի առաջին համարը՝ օրգան Հայաստանի ԽԳ Ֆեդերացիայի։

Խմբագրականից.

«Սոցիալիստական տնտեսության վերակառուցման և դասակարգային սուր պայքարի այս պերիոդը պահանջում է ողջ գրական ստեղծագործական ճակատի ամբատական վերակառուցում: Մեր գրականության առջև դրվում են անհամեմատ ավելի մեծ ու բարդ խնդիրներ— պատկերել բանվոր դասակարգի սոցիալիստական տնտեսության ճակատում տարած հեղափոխական պայքարի ու հաղթանակի նվաճումները, հանդիսանալ սոցիալիզմի շինարարության զարգացման կարևորագույն լծակներից մեկը»:

«Գրական թերթ», 23 փետր., 1932:

„Литературная газета“-յի ողջույնը «Գրական թերթին».

„Литературная газета“-յի խմբագրությունը ջերմ բարեկյան ողջույն է հղում Հայկական երիտասարդ «Գրական թերթին», իր գինակցին գրական ֆրոնտի պայքարում՝ հանուն մեր էպոխային արժանի երկի, հանուն գրական կադրերի քաղաքական գաստիարակման և ակտիվացման»:

Փետրվարի 23—24-ին

Թիֆլիսում տեղի է ունենում Հանրապետական Դրամկոմների Անդրկովկասյան 2-րդ կոնֆերենցիան:

Մարտի 22-ին

«Պրավդա»-յում և «Իզվեստիա»-յում տպագրվում է Մ. Գորկու «Ո՞ւմ հետ եք դուք, «կուլտուրայի վարպետներ»» հոդվածը:

Մ. Գորկու հոդվածից.

«Դուք, ինտելիգենտներդ, «կուլտուրայի վարպետներդ», պետք է հասկանաք, որ բանվոր դասակարգն իր ձեռքը վերցնելով քաղաքական իշխանությունը, ձեր առջև բաց է անում կուլտուրական ստեղծագործության ամենալայն հնարավորություններ»:...

«Բուրժուազիան թշնամի է կուլտուրային և արդեն չի կարող լինել թշնամի,— ահա այն ճշմարտությունը, որը հաստատում է բուրժուական իրականությունը, կապիտալիստական պետությունների պրակտիկան: Բուրժուազիան մերժեց Սովետների Միության հախագիծը՝ ընդհանուր զինաթափության մասին, և միայն դա լիապես բավարար է՝ ասելու համար.— կապիտալիստները սոցիա-

չպես վտանգավոր մարդիկ են, նրանք նախապատրաստում են համաշխարհային նոր սպանդանոց: Նրանք Սովետների Միությունը պահում են պաշտպանության լարված դրության մեջ՝ բանվոր դասակարգին հարկադրելով ահագին քանակությամբ թանկագին ժամանակ և մատերիալ ծախսել պաշտպանության գործիքներ պատրաստելու՝ կապիտալիստների հանդեպ, որոնք պատրաստվում են՝ Սովետների Միության վրա հարձակվելու համար, հսկայական երկիրն իրենց գաղութը, իրենց շուկան դարձնելու համար: Եվրոպայի կապիտալիստներից ինքնապաշտպանվելու համար Սովետների Միության ժողովուրդները ծախսում են հսկայական քանակությամբ ուժ և միջոցներ, որոնք անվիճելի օգտավետությամբ կարելի է գործածել մարդկության կուլտուրական վերածնության գործին, որովհետև Սովետների Միության շինարարության պրոցեսն ունի համամարդկային նշանակություն»:

«Նույնպես և ձեզ համար ժամանակն է՝ վճռել մի հասարակ հարց.— ո՞ւմ հետ եք դուք, «կուլտուրայի վարպետներ»: Կուլտուրայի սևագործ բանվորների ուժի հե՞տ՝ հանուն կյանքի նոր ձևերի, թե՞ դուք դեմ եք այդ ուժին՝ հանուն անպատասխանատու գիշատիչների կաստայի պահպանման, կաստայի, որը հոտել է գլխից և շարունակում է գործել ըստ իներցիայի»:

М Горький, Публицистические статьи, Огиз-Ленгихл, 1933, էջ 344, 345:

Մարտի 31-ին

Երևան է ժամանում գերմանական պրոլետգրող Վիլլի Բրեդելը:

Մարտ

Անդրֆեդերացիայի 10-ամյակի առթիվ ՀԳ Ֆեդերացիան Անդրկովկասի արդյունաբերական կենտրոններն է գործուղում մի շարք գրողների. Գ. Դեմիրճյանին (Թիֆլիս, Ջագէս), Ստ. Զորյանին (Նախիջևան), Աղավնուն (Գանձակ), Գ. Սարյանին (Բաքու):

Մարտ

Հրապարակվում է ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղարության որոշումը ՀՊԳ Ասոցիացիայի աշխատանքների մասին:

Որոշումից.

«... Պրոլետարական գրականությունից պահանջվում է գեղարվեստորեն վերարտադրել բանվոր դասակարգի հերոսական պայքարը սոցիալիզմի կառուցման, դասակարգային պայքարի ֆրոնտում, տալ հնգամյակի հերոսների դեմքը գրականության մեջ, կերտել բոլշևիզմի մեծ արվեստը։

Հայաստանի Պրոլետարական Գրողների կազմակերպությունը, որպես համամիութենական պրոլետ-գրականության ջոկատներից մեկը, կենսագործելով կուսակցության գլխավոր գիծը գրականության ասպարեզում՝ ձեռք է բերել որոշ հաջողություններ պրոլետգրականության հեգեմոնիայի նվաճման ուղղությամբ, պայքար ծավալելով դասակարգային թշնամու դաղափարախոսության դեմ, համախմբելով պրոլետ-գրական կադրերին կուսակցության գլխավոր գծի շուրջը»։...

4. «Նշելով պրոլետ-գրականության նվաճումները՝ քարտուղարությունն արձանագրում է, որ հնգամյակի հերոսների ցուցադրման, սոցիալիստական շինարարության ակտուալ խնդիրները գեղարվեստականորեն վերարտադրելու բնագավառում Ասոցիացիայի աշխատանքները հեռու են բավարար լինելուց։ Պրոլետարական գրականությունը Հայաստանում իր արտադրանքով դեռևս չափազանց հետ է մնում սոցիալիստական շինարարության բոլշևիկյան տեմպից։ Պրոլետ-գրականությունը դեռ մինչև այժմ չի կարողացել գեղարվեստորեն արտացոլել մեր պայքարն ու շինարարությունն իր ամբողջ ծավալով և խորությամբ»։

«6. Չնայած ՀԿ(բ)Կ կենտկոմի մի շարք որոշումներին, ՀՊԳՄ ղեկավարությունը վճռականապես ձեռնամուխ չի եղել անակրբունք համբակայնությունն արմատախիլ անելու գործին։ Այդ իսկ պատճառով, գրական ստեղծագործական սկզբունքային վեճերը հաճախ իրենց վրա կրել են համբակայնության կնիք և պրոլետգրողների ուշադրությունը հեռացրել են ստեղծագործական լուրջ խնդիրներից ու դասակարգային թշնամու դեմ մղվող ծավալուն պայքարից։ ՀՊԳՄ-ն իր աշխատանքներում հաճախ մոռանալով իր կազմակերպության գրական, դաստիարակչական, ստեղծագործական դերը տարվել է վարչարարական տենդենցներով։

7. Կենտկոմն արձանագրում է, որ մեզ մոտ մարքս-լենինյան գրական քննադատությունն ակնառու կերպով հետ է մնում քննա-

պատուիրյան լենինյան էտապի կարևորագույն և բարդ խնդիրներն ընդգրկելուց։ Պրոլետարական քննադատությունը կատարել է քաղաքական կոպիտ սխալներ, որոնք հանդես են եկել դեպի Պլեխանովի գրականությունն ունեցած ոչ-քննադատական վերաբերմունքով, մենշևիկող իդեալիզմին—դեբորինականությանը, պերեվերզևականությանը տուրք տալով, ինչպես նաև աջ ու «ձախ» օպորտունիզմի կոնկրետ արտահայտություններով»։

«Պրոլետարական ողջ ակտիվի ուշադրությունը մոբիլիզացիայի ենթարկել հնդամյակի հերոսների, սոցիալիստական շինարարության դեղարվեստական վերարտադրման, բոլշևիզմի մեծ արվեստի ստեղծման ուղղությամբ, մասնավորապես ընկ. Ստալինի վեց յուցումների կենսագործման դեղարվեստական վերարտադրությունը պետք է հանդիսանա պրոլետարական գրականության ուշադրության հիմնական կենտրոնը։ Այս նպատակով ՀՊԳ Ասոցիացիայի և Գրողների Ֆեդերացիայի ստեղծագործական հիմնական կադրերին ազատել զանազան աշխատանքներից և հիմնականում ամրացնել գրական ստեղծագործության աշխատանքի»։

«Գրական պլոքերում» № 3, 1932։

Մարտ—ապրիլ

Թիֆլիսում լույս է տեսնում «Արշալ» ամսագիրը, օրգան Վրաստանի Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի հայկական սեկցիայի։

Պատ. խմբագիր՝ Վ. Ատրյան։

Ապրիլի 1-ին

Գրողների Տանը Վիլլի Բրեդելը զեկուցում է գերմանական պրոլետարական գրականության մասին։

Ապրիլի 23-ին

Համկ(բ)Պ կենտկոմի որոշումը գրական-գեղարվեստական ֆազմակերպությունների վերակառուցման մասին։

Համկ(բ)Պ կենտկոմի որոշումը.

«Կենտկոմն արձանագրում է, որ վերջին տարիների ընթացքում սոցիալիստական շինարարության զգալի հաջողությունների հիման

վրա, տեղի է ունեցել գրականության և արվեստի խոշոր թե՛ քանակական և թե՛ որակական աճում:

Մի քանի տարի սրանից առաջ, երբ գրականության ասպարեզում դեռևս առկա էր անհարազատ տարրերի նշանակալից ազդեցություն, որոնք առանձնապես աշխուժացան Նէպի առաջին տարիներում, իսկ պրոլետարական գրականության կադրերը դեռևս թույլ էին, պարտիան ամեն կերպ աջակցում էր գրականության և արվեստի բնագավառում հատուկ պրոլետարական կազմակերպությունների ստեղծմանն ու ամրապնդմանը, նպատակ ունենալով ամրացնել պրոլետարական գրողների և արվեստի աշխատողների դիրքը:

Ներկայումս, երբ արդեն աճել են պրոլետարական գրականության և արվեստի կադրերը, առաջ են եկել նոր գրողներ ու դեղարվեստագետներ գործարաններից, ֆաբրիկաներից, կոլտնտեսություններից, գոյություն ունեցող պրոլետարական գրական-գեղարվեստական կազմակերպությունների (ՎՕԱՊՊ, ՌԱՊՊ, Ռ-ԱՄՊ և այլն) շրջանակներն արդեն նեղ են դարձ և արգելակում են գեղարվեստական ստեղծագործության լուրջ թափը: Այդ հանգամանքն ստեղծում է վտանգ, որ այդ կազմակերպությունները կարող են սովետական գրողներին և գեղարվեստագետներին սոցիալիստական շինարարության խնդիրների շուրջը մեծագույն չափով մոբիլիզացնելու միջոցից դառնալ իմբաքային ներփակության, արդիականության խնդիրներից և սոցիալիստական շինարարության համակրող գրողների ու գեղարվեստագետների նշանակալից խմբերից կտրված լինելու երևույթը կխրատող միջոց:

Այստեղից բխում է գրական-գեղարվեստական կազմակերպությունների համապատասխան վերակառուցման, նրանց աշխատանքի պատվանդանի ընդարձակման անհրաժեշտությունը:

Դրանից ելնելով, Համկ(բ)Պ ԿԿ որոշում է՝

1. Լիկվիդացնել պրոլետարական գրողների ասոցիացիան (ՎՕԱՊՊ-ը, ՌԱՊՊ-ը):

2. Սովետական իշխանության պլատֆորմը պաշտպանող և սոցիալիստական շինարարությանը մասնակցելու ձգտող բոլոր գրողներին միավորել Սովետական գրողների միասնական միության մեջ, ունենալով նրանում կոմունիստական ֆրակցիա:

3. Կիրառել համանման փոփոխության արվեստի մյուս առանձների բնագավառում:

4. Հանձնարարել Կապմ-ցյուրոյին՝ մշակելու գործնական միջոցառումներ այս որոշման կիրառման համար:

Ապրիլ

Թիֆլիսում լույս է տեսնում «Գրոհ» ամսաթերթը Վ. Ատրյանի խմբագրությամբ:

Նյութեր ունեն՝ Ս. Զարեանցը, Դ. Դեմիրճյանը, Գ. Սարյանը և ուրիշները:

Մայիսի 2-ին

Վախճանվեց Պյոտր Սեմյոնովիչ Կոգանը:

Մայիսի 5-ին

Տոնվում է «Պրավդա»-յի 20-ամյակը:

Մայիսի 9-ին

Ի կենսագործումն Համկ(բ)Պ Կենտկոմի ապրիլի 23-ի որոշման, ՀԿ(բ)Պ Կենտկոմը որոշում է լիկվիդացնել ՀՊԳ Ասոցիացիան, ՆԳ Ֆեդերացիան, երաժիշտների, կերպարվեստագետների ասոցիացիաները:

Ընտրվում են գրողների, կերպարվեստագետների և երաժիշտների կազմակերպչական կոմիտեներ:

Մայիսի 14-ին

Գրողների Տանը Համկ(բ)Պ Կենտկոմի ապրիլի 23-ի և ՀԿ(բ)Պ Կենտկոմի մայիսի 9-ի որոշումների առնչությամբ, տեղի է ունենում գրողների, նկարիչների, երաժիշտների և ճարտարապետների ընդհանուր ժողով:

Ելույթներ են ունենում՝ Ալ. Շիրվանզադեն, Մ. Սարյանը, Ե. Զարենցը, Փ. Թերլեմեզյանը, Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Հ. Գյուլիքեվխյանը և ուրիշները:

Հոկտեմբերի 26-ին

Բացվում է Ստալինի անվան ջրանցքը:

Հուլիսի 12-ին

Լենինգրադում տեղի է ունենում Խորհրդային Գրողների և դրական համբակների միացյալ նիստ։ Զեկուցում է տրվում դրական գեղարվեստական կազմակերպությունների աշխատանքի մասին։

Հուլիսի 25-ին

Լուսաշխի Տանը սկսվում է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի տասնօրյակը։

Առաջին նիստում ակադ. Ի. Ի. Մեշչանինովը զեկուցում է «Նյութական կուլտուրայի պատմության խնդիրները» նյութի մասին։

Ելույթներ են ունենում՝ Հ. Մանանդյանը, Գ. Ղափանցյանը, Գ. Լևոնյանը, Ա. Ղարիբյանը և ուրիշները։

Սեպտեմբերի 17-ին

ՍՍՌՄ Կենտգործկոմի Նախագահության որոշումը Մաքսիմ Գորկուն Լենինի շքանշանով պարգևատրելու մասին։

Սեպտեմբերի 27-ին

Մոսկվայի Մեծ Թատրոնում կազմակերպվում է Մաքսիմ Գորկու գրական-գեղարվեստական և հասարակական գործունեության 40-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ։

Նիստին ներկա են լինում՝ ընկեր Ի. Վ. Ստալինը, ընկ. ընկ. Վ. Մ. Մոլոտովը, Մ. Ի. Կալինինը, Ա. Ի. Միկոյանը, Լ. Մ. Կագանովիչը և ուրիշները։

Բացման խոսք է ասում Մ. Ի. Կալինինը։

Ընկեր Ի. Վ. Ստալինի ողջույնը Մ. Գորկուն.

«Թանկագի՛ն Ալեքսեյ Մաքսիմովիչ,

Սրտանց ողջունում եմ Ձեզ և պինդ սեղմում եմ Ձեր ձեռքը։ Յանկանում եմ Ձեզ երկար կյանք ու աշխատանք՝ ի ուրախություն բոլոր աշխատավորների և ի սարսափ բանվոր դասակարգի բոլոր թշնամիների»։

Համկ(բ)Պ կենտկոմի ողջույնը Մ. Գորկուն.

«Համկ(բ)Պ կենտկոմը ջերմագին ողջունում է պրոլետարական մեծ գրող Մաքսիմ Գորկուն։ Իր ականավոր գեղարվեստական ստեղծագործություններով դառնալով միլիոնավոր մասսաների

անփականությունը, Գորկին ամուր կապեց իրեն Ռուսաստանի և ամբողջ աշխարհի բանվորական շարժման հետ» (Լենին)։ Մաքսիմ Գորկու անունը թանկ ու մոտ է Սովետական երկրի աշխատավորներին և այդ երկրի սահմաններից շատ հեռու, որպես մեծագույն գեղարվեստագետ ռևոլյուցիոների անունը, որպես մարտնչողի ցարիզմի դեմ, կապիտալիզմի դեմ, միջազգային պրոլետարական ռևոլյուցիայի համար, բոլոր երկրների աշխատավորներին կապիտալիզմի լծից ազատելու համար։

ՀամԿ(բ)Պ Կենտկոմը համոզված է, որ Գորկու մեծ տաղանդը և նրա ռևոլյուցիոն էներգիան դեռ երկար ժամանակ ծառայելու են բանվոր դասակարգի գործին»։

«Գրական թերթ» № 20, 1932։

Սեպտեմբերի 28-ին

Երևանի Բանվորական Թատրոնում կազմակերպվում է Մ. Գորկու գրական-գեղարվեստական և հասարակական գործունեության 40-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ։

Մ. Գորկու գործունեության մասին զեկուցում է Հ. Գյուլիքևխյանը։

Սեպտեմբեր

Բաքվում լույս է տեսնում «Խորհրդային գրող» գրական-գեղարվեստական, մասսայական-գրաքննադատական ամսագրի առաջին համարը։

Հ. Հակոբյանը ողջունում է «Խորհրդային գրողի» լույս ընծայումը.

«Ջերմ ողջո՛ւյն «Խորհրդային գրող» ամսագրին։

Իմ անդրանիկ լավագույն երկը, որ զետեղված է 1888 թվին Բաքվա ուսանողական թերթ «Հույս»-ում՝ գրել եմ Բաքու։ Իմ պատանեկական լավագույն զգացմունքները ծլել են Բաքվում. իմ երիտասարդական լավագույն խոհերն ու իղձերը սկիզբ են առել դարձյալ Բաքվում։ Այժմ ուրախ եմ անչափ, որ 45 տարի անցնելուց հետո, ինձ վիճակվում է մասնակցել Բաքվում հրատարակվող անդրանիկ ամսագրում, քայլել նրա ջահել աշխատակիցների հետ միասին և նրանց հետ միասին մասնակցել սոցիալիզմի կառուցմանը՝ գրական արվեստի ֆրոնտում։

Ողջունում եմ «Խորհրդային գրող»-ի առաջին համարի մուտքը Բաքվում»:

«Խորհ. գրող» № 1, 1932:

Սեպտեմբեր

Երևանում լույս է տեսնում «Նոյեմբեր» գրական-գեղարվեստական, գրաքննադատական և քաղաքական-հասարակական հանդեսը (մեկ համար):

Խմբագրականից.

«ՀՍԽՀ Խորհրդային Գրողների Միության օրգան «Նոյեմբեր» հանդեսի հրապարակումը անմիջական արդյունք է գրական և գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին՝ Համկոմկուսի Կենտկոմի 1932 թ. ապրիլի 23-ի և Հայկոմկուսի Կենտկոմի մայիսի 9-ի ընդունած պատմական որոշումների:

Պայքարելով կուսակցության գծի համար գրականության մեջ՝ «Նոյեմբերը» նախ և առաջ պետք է ծավալուն քննադատության ենթարկի այն կոպիտ տեսական-քաղաքական սխալները, որ կուսակցության գծի հիմնականում ճիշտ կենսագործման ընթացքում ՌԱՊՊ-ի հետ միասին կատարել է նաև Խորհրդային Հայաստանի Պրոլետարական Գրողների Ասոցիացիայի ղեկավարությունը»:

«Նոյեմբեր», 1932:

Հոկտեմբերի 11-ին

Բացվում է աշխարհի հզորագույն՝ Լենինի անվան Դնեպրի հիդրոէլեկտրոկայանը:

Հոկտեմբերի 28-ին

Ավարտվում է ԼՕԿԱՖ-ի կենտրոնական խորհրդի 3-րդ պլենումը:

Հոկտեմբերի 29-ին

Տեղի է ունենում ՍՍՌՄ Սովետական Գրողների Միության Կազմկոմիտեի ընդլայնած պլենումը: Զեկուցումներ են տրվում՝ Սովետական գրականությունը և հոկտեմբերի 15-ամյակը թեմայով և Համկոմ. Պարտիայի ապրիլի 23-ի որոշման ռեալիզացիայի ընթացքի մասին:

Հոկտեմբեր

Լույս է տեսնում «Խորհրդային արվեստ» հասարակական-քաղաքական, գեղարվեստական ամսագրի առաջին համարը։ Օրգան՝ ՀՍԽՀ Լուսժողկոմատի։

Պատ. խմբագիր՝ Ա. Վշտունի։

Խմբագրականից.

«Մեծագույն չափով մոբիլիզացիայի ենթարկել խորհրդային արվեստագետների ամենալայն զանգվածներին սոցիալիստական շինարարության խնդիրների շուրջը, ծավալել մեր կադրերի ըստեղծագործական տեսական-գաղափարակշռական աշխատանքը, աոաջ քաշել, գնահատել բանվոր դասակարգի և կոլտնտեսականների առաջավոր շարքերից հրապարակ եկող երիտասարդ ստեղծագործողներին։

«Խորհրդային արվեստ»-ը լիովին արտահայտելու է արվեստի տարբեր բնագավառների խնդիրներն ու անելիքները և հանդիսանալու է միաժամանակ արվեստի լավագույն ինֆորմատոր»։

«Խորհ. Արվեստ» № 1, 1932։

Նոյեմբերի 10-ին

Տեղի է ունենում ՀԽԳ Կազմկոմիտեի ընդլայնած նիստը։

Քննության է առնվում Կազմկոմիտեի աշխատանքը։

Նոյեմբերի 14-ին

Վախճանվում է Լևոն (Առաքել Բաբախանյանը)։

Նոյեմբերի 20-ին

Գործարկվում է Զորագէսը։

ՀՍԽՀ կենտգործկոմի նախագահությունը Մարիետտա Շահինյանին այդ առթիվ պարգևատրում է Աշխատանքի Կարմիր Դրոշի շքանշանով։

Դեկտեմբերի 2-ին

ՀԽԳ Կազմկոմիտեի նախաձեռնությամբ Ի. Սելվինսկին զեկուցում է ռուս ժամանակակից պոեզիայի մասին։

Դեկտեմբերի 7-ին

ՀՍԽՀ կենտգործկոմի նախագահությունը Գարեգին Լևոնյանին շնորհում է ՀՍԽՀ Արվեստի վաստակավոր գործչի կոչում։

Դեկտեմբերի 13-ին

Գրողների Տանը տեղի է ունենում Գարեգին Լևոնյանի գործունեության 40-ամյակին նվիրված պատվո երեկո։

Դեկտեմբերի 19-ին

Երևան է ժամանում Սովետական Գրողների Համամիութենական Կազմկոմիտեի բրիգադան։

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻՍ.

Չափածո

1. Ե. Չարենց.— Երկեր, Պետհրատ, Երևան։
2. Թ. Հուրյան.— Հողի արյունը, Պետհրատ, Երևան։
3. Խ. Դաշտենց.— Երգերի գիրք, Պետհրատ, Երևան։
4. Խնկո-Ապեր.— Սրտ կառուցման մասին, Պետհրատ, Երևան։
5. Խնկո-Ապեր.— Լենինը Հնդկաստանում, Պետհրատ, Երևան։
6. Վ. Արամոնի.— Առաջին վորձեր, Պետհրատ, Երևան։
7. Ղ. Կոմունի.— Խնդություն, Պետհրատ, Երևան։
8. Գ. Հայրյան.— Վերելքի երգեր, Պետհրատ, Երևան։

Արձակ

1. Ստ. Զորյան.— Սպիտակ քաղաք, Պետհրատ, Երևան։
2. Ստ. Զորյան.— Կարմիր արագիլ, Պետհրատ, Երևան։
3. Վ. Աորյան.— Գրոհում, Պետհրատ, Թիֆլիս։
4. Լ. Թարգյուլ.— Ճակատում, Պետհրատ, Երևան։
5. Բ. Ստաֆֆի.— Կանաչ քաղաք, Պետհրատ, Երևան։
6. Գ. Հովնան.— Յիվա, Պետհրատ, Մոսկվա։

Թարգմանություններ

1. Մ. Գորկի.— Ընտիր երկեր, Պետհրատ, Երևան։
2. Մ. Շահինյան.— Հիդրոցենտրալ, Պետհրատ, Երևան։

1933

Հունվարի 6-ին

Թիֆլիսում տեղի է ունենում Վրաստանի ՍԳ Միության հայկական սեկցիայի վարչության պլենումը։

Օրակարգ՝ Համամիութենական կազմակերպչական Կոմիտեի պլենումի արդյունքները, կազմակերպչական հարցեր։

Հունվարի 7-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի զեկուցումը՝ «Առաջին հնգամյակի հանրագումարները» Համկ(բ)Պ ԿԿ ու ԿՎՀ Միացյալ Պլենումում։

Ի. Վ. Ստալինի զեկուցումից.

«Մենք չունեինք սև մետաղագործություն, երկրի ինդուստրացման հիմքը։ Այժմ մենք ունենք այն։

Մենք չունեինք տրակտորային արդյունաբերություն։ Այժմ մենք ունենք այն։

Մենք չունեինք ավտոմոբիլային արդյունաբերություն։ Այժմ մենք ունենք այն։

Մենք չունեինք դաշտյահաշինություն։ Այժմ մենք ունենք այն։

Մենք չունեինք լուրջ և ժամանակակից քիմիական արդյունաբերություն։ Այժմ մենք ունենք այն։

Մենք չունեինք իսկական և լուրջ արդյունաբերություն՝ ժամանակակից գյուղատնտեսական մեքենաների արտադրության համար։ Այժմ մենք ունենք այն։

Մենք չունեինք ավիացիոն արդյունաբերություն։ Այժմ մենք ունենք այն։

Էլեկտրական էներգիա արտադրելու իմաստով մենք կանգնած էինք ամենավերջին տեղում։ Այժմ մենք առաջ ենք անցել առաջին տեղերից մեկը։

Նավթամթերքների ու ածխի արտադրության իմաստով մենք կանգնած էինք վերջին տեղում։ Այժմ մենք առաջ ենք անցել առաջին տեղերից մեկը։

Մենք ունեինք միմիայն մեկ միակ ածխա-մետաղագործական բազա—Ուկրաինայում, մի բազա, որ դժվարությամբ էինք կառավարում։ Մենք հասանք այն բանին, որ ո՛չ միայն բարձրացրինք այդ բազան, այլև ստեղծեցինք մի նոր ածխա-մետաղագործական բազա—Արևելքում, որ մեր երկրի հպարտությունն է կազմում։

Մենք ունեինք տեքստիլ արդյունաբերության միմիայն մեկ-միակ բազա—մեր երկրի Հյուսիսում։ Մենք հասանք այն բանին, որ ամենամոտ ժամանակում կունենանք տեքստիլ արդյունաբերու-

թյան երկու նոր բազա—Միջին Ասիայում ու Արևմտյան Սիբիրում։

Եվ մենք ո՛չ միայն ստեղծեցինք արդյունաբերության այդ նոր վիթխարի ճյուղերը, այլև մենք ստեղծեցինք դրանք այնպիսի մասշտաբով ու այնպիսի չափերով, որոնց առաջ նահանջում են եվրոպական ինդուստրիայի մասշտաբներն ու չափերը։

Իսկ այդ ամենի հետևանքն այն եղավ, որ կապիտալիստական էլեմենտները վերջնականապես ու անվերադարձ կերպով դուրս են մղված արդյունաբերությունից, իսկ սոցիալիստական արդյունաբերությունը դարձել է ինդուստրիայի միակ ձևը ՍՍՌՄ-ում։

Իսկ այդ ամենի հետևանքն այն եղավ, որ մեր երկիրն ագրարային երկրից դարձավ ինդուստրիալ երկիր, որովհետև արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը գյուղատնտեսական նեղ նկատմամբ հնգամյակի սկզբի (1928 թ.) 48 %-ից հնգամյակի չորրորդ տարվա (1932 թ.) վերջերին բարձրացավ-հասավ 70 %-ի»։

Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, Պաղրատ, 1940, էջ 456—457։

Հունվարի 11-ին

Հրապարակվում է Համկ(բ)Պ Կենտկոմի և ԿՎՀ-ի Միացյալ պլենումի բանաձևը ընկեր Ստալինի և ընկերներ Մոլոտովի ու Կույբիշևի զեկուցումների առթիվ. «Առաջին հնգամյակի արդյունքները, ժողովրդական տնտեսության 1933 թվականի՝ երկրորդ հնգամյակի առաջին տարվա պլանը»։

Հունվարի 19-ին

Նշվում է Ա. Ս. Սերաֆիմովիչի ծննդյան 70-ամյակը։

ՍՍՌՄ Կենտգործկոմի Նախագահությունը Ա. Ս. Սերաֆիմովիչին պարգևատրում է Լենինի շքանշանով։

Հունվարի 20-ին

Երևանի Մ. Գորկու անվան Բանվորական Թատրոնի շենքում բացվում է Հայաստանի Օպերային Թատրոնը։

Բեմադրվում է «Ալմաստ» օպերան։

Հունվարի 30-ին

Գրողների Տանը տեղի է ունենում մանկական գրականության նվիրված խորհրդակցություն:

Փետրվարի 12-ին

Մոսկվայում հրավիրվում է ՍԳ Համամիութենական Կազմկոմիտեի պլենում: Օրակարգ.

1. *Առաջին հնգամյակի արդյունքները և սովետական գրականության անելիքները,*
2. *Անդրկովկասյան կազմ. կոմիտեների զեկուցումները,*
3. *Դրամատուրգիայի խնդիրները,*
4. *ՍԳ Միության կանոնադրության քննումն ու հաստատումը:*

Փետրվարի 16-ին

Հրատարակվում է Մ. Գորկու կոչը՝ «Կոմսոմոլսկայա Պրավդային» և կոմերիտմիության:

Կոչից.

«Շատ կարճ են իմ բարեկամական ցանկությունները կոմերիտմիության՝ ավելի՛ մեծ ուշադրություն գիտության: Աշխարհիս վրա իշխանության նվաճելու համար պրոլետարիատի մյուծ պայքարում, գիտությունն ամենաուժգոր զենքն է»:

«Խորհրդային Հայաստան» № 39, 1933:

Փետրվարի 17-ին

ՍՍՌՄ ժողկոմսովետի որոշումը «Վալադույն պիեսների մրցանակաբաշխության» հայտարարելու մասին:

Փետրվարի 19-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի ճառը Հարվածային կոլտնտեսականների Համամիութենական առաջին համագումարում:

Ի. Վ. Ստալինի ճառից.

«... Անցել են այն ժամանակները, երբ առաջնորդները համարվում էին պատմության միակ ստեղծողները, իսկ բանվորներն ու գյուղացիները հաշվի չէին առնվում: Ժողովուրդների և պետությունների բախտը հիմա վճռում են ո՛չ միայն առաջնորդները, այլ ամենից առաջ և գլխավորապես՝ աշխատավորների միլիոնա-

վոր մասսաները։ Բանվորներն ու գյուղացիները, որոնք առանց աղմուկի և ճարճատյունի կառուցում են գործարաններ ու ֆաբրիկաններ, հանքահորեր ու երկաթուղիներ, կոլտնտեսություններ ու խորհտնտեսություններ, ստեղծում են կյանքի բոլոր բարիքները, կերակրում ու հագցնում են ամբողջ աշխարհին,— ահա թե ովքեր են նոր կյանքի իսկական հերոսներն ու ստեղծողները»։

Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, Բաղդրատ, 1940, էջ 516։

Հարվածային կոլտնտեսականների համագումարին ողջունում է Մ. Գորկին։

Մ. Գորկու ողջույնից.

«Հոգու արիություն, ձեր ուժերի աճումն եմ ցանկանում ես, բանվորին ընկերնե՛ր։ Աշխատեցեք, սովորեցեք, հարգեցեք միմյանց։ Ձեզանից ամեն-մեկն արժանի է հարգանքի, որովհետև ձեզանից ամեն մեկը հերոս է իր գործում։

Կեցցե՛ հարվածայնությունը, կեցցե՛ն հարվածայիններն, աշխատանքի իսկական հերոսները»։

«Խորհրդային Հայաստան» № 41, 1933։

Համագումարը դիմում է ուղղում Սովետական Միության բոլոր կոլտնտեսականներին։

Մարտի 14-ին

Տեղի է ունենում ՀՍԳ Միության Կազմկոմիտեի ընդլայնած նիստը։

Զեկուցումներ են տրվում ՍԳ Միության Համամիութենական Կազմկոմիտեի երկրորդ պլենումի արդյունքների մասին։

Ընտրվում է Կազմ. Կոմիտեի նախագահություն, որի մեջ մտնում են՝ Ալ. Շիրվանզադե, Ե. Չարենց, Դ. Դեմիրճյան Ն. Զարյան, Ն. Դաբաղյան, Ա. Վշտունի և ուրիշներ։

Մարտի 23-ին

Կուլտուրայի Տանը կազմակերպվում է Հ. Թումանյանի մահվան 10-ամյակին նվիրված երեկո։

Ապրիլի 15-ին

Գրողների Տանը նշվում է Մարիետտա Շահինյանի գրական գործունեության 30-ամյակը։

Ապրիլի 21-ին

ՀՍհՀ ժողկոմխորհի որոշմամբ հայտարարվում է լավագույն պիեսների կոնկուրս։

Ապրիլի 21-ին

Հրապարակվում է ՀԿ(բ)Պ կենտկոմի որոշումը «Գրողների և արվեստագետների դրության բարելավման մասին»։

Ապրիլ

Լույս է տեսնում ՀԽԳ Միության օրգան «Վէրնէք» ամսագրի առաջին համարը։ Դատարկում է յոթ համարից հետո, 1934 թվին։

Մայիսի 3-ին

Բաքվի «Կոմունիստ» թերթի խմբագրատունը տեղի է ունենում խորհրդակցության, Ադրբեջանի ՍԳ Հայկական սեկցիայի անդամների մասնակցությամբ։

Մայիս

ՍՍՌ Միության կառավարության որոշմամբ սկսվում է Կիրովի անվան կոմբինատի կառուցումը Երևանում։

Հունիսի 15-ին

Հայաստանի Հարվածային կոլտնտեսականների Համագումարում ողջույնի խոսք է ասում Ալ. Շիրվանզադեն։

Ալ. Շիրվանզադեի ողջույնի խոսքից.

«Մենք գրողներս ողջունում ենք կոլխոզային տնտեսության հաղթանակները գյուղում, այն հաղթանակները, որոնք գալիս են վերջնականապես ջախջախելու մանավոր սեփականությունը, այդ սեփականության զզվելի կարգերից բխող շահագործումը, նախանձն ու առելությունը»։

Հունիսի 19-ին

Դ. Դեմիրճյանը, Արազին, Ն. Զարյանը այցելում են սովետական գրողների ենթաշեֆ Արտաշատի կոլխոզը։

Հունիսի 21-ին

Գրողների Տանը տեղի է ունենում Երևան—Քանաքեռգէս երկաթգծի հարվածային բանվորների, մասնագետների և գրողների հանդիպում։

688—25

Հունիսի 23-ին

Գրողների Տանը ՀԽՍՀ ժողկոմխորհը հրավիրում է խորհրդակցության՝ նվիրված Կիրովի անվան Կոմբինատի կառուցման խնդիրներին։

Մասնակցում են՝ Ալ. Շիրվանզադեն, Ե. Չարենցը, Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Ն. Զարյանը, Ա. Վշտունին, Տ. Հախումյանը և ուրիշները։

Հունիսի 25-ին

Մոսկվայից Զորագէս է գալիս Մարիետտա Շահինյանը։

Հունիս

Լույս է տեսնում «Երիտ-Գրող» գրական գեղարվեստական ամսագրի առաջին համարը։

Օրգան՝ ՀԽԳՄ Կազմկոմխոհեին կից Կոոպարի գրական խմբակի։

Հունիս

ՀԽԳ Մխոբյունը կոմսոմոլի 15-ամյակի առթիվ, կոմսոմոլի կյանքը գեղարվեստորեն պատկերելու համար, հայտարարարում է մրցանակաբաշխություն։

Հուլիսի 3-ին

Գրողների Տանը տեղի է ունենում Քանաքեռգէսի ղեկավար կազմի և գրողների հանդիպում, որը նպատակ ուներ կազմակերպել գրողների մասնակցությունը Քանաքեռգէսի կառուցման աշխատանքներին։

Հուլիսի 6-ին

Երևանում տեղի է ունենում Ե. Աբովյանի արձանի հանդիսավոր բացումը։

Հուլիսի 7-ին

Լրանում է ՍՍՌՄ Կոնստիտուցիայի 10 տարին։

Ալ. Շիրվանզադեն այդ կապակցությամբ գրում է.

«Ի՞նչ է տվել մեզ՝ Անդրկովկասում Սահմանադրության 10-ամյակը։

Շատ և շատ։ Նա վերջնականապես փոխել է երկրի դեմքը։

Ակնհայտ, որ առաջ փլատակներ էին՝ ցարիզմի տխուր այդ ժառանգությունը, ստեղծվել են նորանոր գործարաններ ու ֆաբրիկաներ։

Ակնհայտ, որ առաջ եղել է անթափանց խավար, բացվել են դպրոցներ, համալսարաններ, թատրոններ, թանգարաններ»։

«Գրական թերթ» № 12, 1933։

Հուլիսի 13-ին

Վախճանվեց Նար-Դոսը (Միքայել Հովհաննիսյան)։

Օգոստոսի 10-ին

Գյուղացու տանը տեղի է ունենում հրիտասարդ ընթերցողների կոնֆերենցիա։

Լավում է զեկույցում՝ «Սոցիալիստական շինարարությունը և մեր գրականությունը» նյութի մասին։

Մտքերի փոխանակությանը մասնակցում են՝ Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Գ. Սարյանը, Հ. Գյուլիքեվխյանը։

Օգոստոսի 15-ին

Մոսկվայում տեղի է ունենում ՍԳ Կազմկոմիտեի նիստը. առաջիկա համամիութենական համագումարի վերաբերյալ ճառով հանդես է գալիս՝ Մ. Գորկին։

Կազմ. Կոմիտեի նախագահ է ընտրվում Մ. Գորկին։

Կազմ. Կոմիտեն հաստատում է ՍՍՌՄ սովետական գրողների Համագումարի աշխատանքների հետևյալ օրակարգը.

1. Սովետական գրականությունը և նրա անելիքները. զեկուցող՝ Մ. Գորկի։
2. Համաշխարհային գրականության նոկա վիճակը և սովետական գրականության դերը նրանում։
3. Զեկուցումներ Ուկրաինայի, Բելոռուսիայի, Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի, Տաջիկստանի, Թաթարստանի գեղարվեստական գրականության մասին։
4. Սովետական դրամատուրգիայի անելիքները։
5. Սովետական պոեզիան։
6. Երիտասարդ գրողների մեջ կատարվելիք աշխատանքը։
7. Սովետական Գրողների Միության կանոնադրությունը։

Օգոստոսի 20-ին

ՀԿ(բ)Պ կենտկոմի քարտուղարությունը որոշում է ընդունում Հայաստանի խորհրդային Գրողների Միության մասին։

Օգոստոսի 23-ին

Տեղի է ունենում Կազմկոմիտեի պլենար նիստը։

Քննության է առնվում ՀԿ(բ)Պ կենտկոմի Օգոստոսի 20-ի որոշումը։

Օգոստոսի 28-ին

Գրողների Տանը լսվում է «Գրական թերթի» խմբագրության հաշվետվությունը։

Օգոստոս

ՀԼԿԵՄ Քաղկոմին կից կազմակերպվում է գրական շտաբ, որը զբաղվում է գրական խմբակների և երիտասարդ գրողների աշխատանքներով։

Սեպտեմբերի 21-ին

ՀԽԳ Կազմ. Կոմիտեի բրիգադան՝ Դ. Դեմիրճյան, Ստ. Զորյան, Ն. Զարյան, Մ. Մանվելյան, Ս. Տարոնցի, Խ. Սարգսյան և ուրիշները մեկնում են Արտաշատի շրջանը, ծանոթանալու բամբակի բերքահավաքին, ինչպես նաև օգնելու կոլխոզների ամրապնդմանը և աշխատանքների վերակառուցմանը։

Հոկտեմբեր

ՍՍՌՄ ՍԳ Միության Կազմ. Կոմիտեի քարտուղարությունը որոշում է ընդունում ստեղծել Կազմ. Կոմիտեի նոր օրգաններ. ունենալ չորս սեկցիա՝ երիտասարդ գրողների մեջ աշխատանք կատարելու համար, գրողների ստեղծագործական աշխատանքը կազմակերպման համար, ազգային գրականության և կազմ. հրատ. հանգչական բաժին։

Հոկտեմբերի 13-ին

ՀԽԳ Միության Կազմ. Կոմիտեն Հայաստանի խորհրդային գրողների առաջին համագումարի աշխատանքները նախապատրաստելու նպատակով ստեղծում է հետևյալ կոմիսիաները՝ սոցիալիստական ռեալիզմի, դրամատուրգիայի, պոեզիայի, երիտա-

սարդ գրողների մեջ աշխատանք տանող և մանկական գրականության:

Նոյեմբերի 24-ին

Գրողների Տանը տեղի է ունենում ՀԽԳՄ Կազմ. Կոմիտեի ընդլայնած նիստը մասնակցությամբ՝ Վ. Կիրպոտինի, Ա. Գատովի և Կավերինի:

Նոյեմբերի 29-ին

Գործարկվում է Կիրովականի քիմիական կոմբինատը և Արարատի ցեմենտի գործարանը:

Դեկտեմբերի 1-ին

Տեղի է ունենում Հայաստանի խորհրդային գրողների ընդհանուր ժողովը մասնակցությամբ Համամիութենական Կազմ. Կոմիտեի բրիգադայի և Վրաստանի ՍԳ Միության պատգամավորության: Վ. Կիրպոտինը զեկուցում է բրիգադայի աշխատանքների մասին:

Դեկտեմբերի 11-ին

Գրողների Տանը տեղի է ունենում երիտասարդ գրողների ակումբի բացման հանդեսը:

«Երիտասարդ գրողների գրական ուսուցման խնդիրները» նյութի մասին զեկուցում է կարդում Հ. Գյուլիքևխյանը:

Դեկտեմբերի 16-ին

Թիֆլիսում տեղի է ունենում Վրաստանի ՍԳ Միության քարտուղարության նիստը՝ նվիրված Հայաստանի և Վրաստանի սովետական գրականության փոխադարձ ծանոթացմանը և մերձեցմանը:

Դեկտեմբերի 26-ին

Ֆրանսիայի Մենտոն բուժավայրում վախճանվեց Անատոլի Վասիլևիչ Լունաչարսկին:

Դեկտեմբերի 29-ին

Լուսաշխի Տանը տեղի է ունենում գրողների և լուսավորության աշխատողների միացյալ նիստը՝ նվիրված Ա. Վ. Լունաչարսկու հիշատակին:

Լունաչարսկու կյանքի և գործունեության մասին զեկուցում են՝ Ա. Կարինյանը, Հ. Գյուլիքեվխյանը և Ն. Դոբրաղյանը։

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Ընդհանուր

1. Ն. Զարյան.— Հարվածներ, Պետհրատ, Երևան։
2. Գ. Սարյան.— Երկաթե ոտնաձայներ, Պետհրատ, Երևան։
3. Ս. Տարոնցի.— Սերունդների երգը, Պետհրատ, Երևան։
4. Ազավնի.— Արթիկի տուֆը, Պետհրատ, Երևան։

Արձակ

1. Արազի.— Եկվորները, Պետհրատ, Երևան։
2. Մ. Մանվելյան.— Անապատը կծաղկի, Պետհրատ, Երևան։
3. Մ. Դավթյան.— Առաջին կինը, Պետհրատ, Երևան։
4. Գ. Բես.— Արձակ բանաստեղծություններ, Պետհրատ, Երևան։

Ժողովածուներ

1. «Ադրբեջանի ժամանակակից խորհրդային գրականություն» (անտոլոգիա), Պետհրատ, Երևան։
2. «Վրաստանի ժամանակակից խորհրդային գրականությունը» (անտոլոգիա), Պետհրատ, Երևան։

Գրականության պատմություն, տեսություն և ճնճաղատություն

1. Մ. Աբեղյան.— Տաղաչափություն, «Մելք. Ֆոնդի» հրատ., Երևան։

1934

Հունվարի 10-ին

ՀԿ(բ)Պ IX համագումարի բացումը։

Հունվարի 16-ին

Ս. Մ. Կիրովի զեկուցումը Լենինգրադի Մարզկոմի 5-րդ պարտկոնֆերենցիայում ՀամԿ(բ)Պ կենտկոմի աշխատանքների մասին։

Ս. Մ. Կիրովի զեկուցումից.

«Ընկերնե՛ր, խոսելով մեր պարտիայի ծառայությունների մասին, մեր պարտիայի հաջողությունների մասին, չի կարելի չխոսել մեր ունեցած վիթխարի հաղթահակերի մեծ կազմակերպչի մասին: Խոսքս ընկեր Ստալինի մասին է:

Ես պետք է ձեզ ասեմ, որ դա իրոք լիակատար, իրոք բաղմակողմանի հետևորդը, շարունակողն է այն բանի, ինչ մեզ թողել է մեր պարտիայի մեծ հիմնադիրը, որին մենք կորցրինք ահա արդեն տասը տարի սրանից առաջ:

Դժվար է պատկերացնել այն հսկայի կերպարը, որպիսին հանդիսանում է Ստալինը: Վերջին տարիների ընթացքում, այն ժամանակից ի վեր, երբ մենք աշխատում ենք առանց Լենինի, մենք չգիտենք մեր աշխատանքում ոչ մի շրջադարձ, ինչ որ շատ խոշոր ոչ մի ձեռնարկում, լուրջ, ուղղություն մեր հաղաքականության մեջ, որի հեղինակը լիներ ոչ թե ընկեր Ստալինը, այլ՝ մեկ ուրիշը: Ամբողջ հիմնական աշխատանքը— այդ պետք է գիտենա պարտիան— կատարվում է ընկեր Ստալինի ցուցումներով, նրա նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ: Միջազգային քաղաքականության ամենամեծ հարցերը որոշվում են նրա ցուցումով և ոչ միայն այդ մեծ հարցերը, այլև թվում է թե երրորդական ու նույնիսկ տասերորդական հարցերը հետաքրքրում են նրան, երբ պրանք վերաբերում են մեր երկրի բանվորներին, գյուղացիներին և բոլոր աշխատավորներին:

Ես պետք է ասեմ, որ այդ վերաբերում է ոչ միայն ամբողջությամբ վերցրած սոցիալիզմի կառուցմանը, այլև մեր աշխատանքի առանձին հարցերին: Օրինակ, եթե վերցնենք մեր երկրի պաշտպանության հարցերը, ապա պետք է ամբողջ ուժով ընդգծել, որ մեր բոլոր հաջողությունների համար, որոնց մասին ես խոսեցի, մենք ամբողջապես ու լիովին պարտական ենք Ստալինին:

Այդ մարդու զորեղ կամքը, վիթխարի կազմակերպական տաղանդը պարտիայի համար ապահովում է սոցիալիզմի հաղթական կառուցման հետ կապված պատմական մեծ շրջադարձերի ժամանակին կատարումը:

Վերցրեք ընկեր Ստալինի լոզունգները՝ «Կոլխոզնիկին դարձնել ունևոր», «Կոլխոզները դարձնել բոլշևիկյան», «Տիրապետել տեխնիկային», ընկեր Ստալինի պատմական վեց պայմանները,—

ամեն բան, ինչ ուղղություն է տալիս սոցիալիզմի կառուցմանը մեր աշխատանքի ամբողջ ասպարեզում, բխում է այդ մարդուց, և ամեն բան, ինչ մենք նվաճել ենք առաջին հնգամյակում, ձեռք է բերված նրա ցուցումների հիման վրա»։

С. М. Киров, Избранные статьи и речи 1912—1934, 1939, էջ *609—610*։

Հունվարի 27-ին

ՀամԿ(բ)Պ XVII համագումարի բացումը։

Ի. Վ. Ստալինի հաշվետու զեկուցումից.

«Մեր պարտիայի XVII կոնֆերենցիան ասաց, որ երկրորդ հնգամյակն իրականացնելիս՝ քաղաքական հիմնական խնդիրներից մեկը «կապիտալիզմի մնացուկներն էկոնոմիկայում և մարդկանց գիտակցության մեջ հաղթահարելն է»։ Այս միանգամայն ճիշտ միտք է։ Բայց կարելի՞ է արդյոք ասել, թե մենք արդեն հաղթահարել ենք կապիտալիզմի բոլոր մնացուկներն էկոնոմիկայում։ Ո՛չ, այդ չի կարելի ասել։ Առավել ևս չի կարելի ասել, թե մենք հաղթահարել ենք կապիտալիզմի մնացուկները մարդկանց գիտակցության մեջ։ Այդ չի կարելի ասել ո՛չ միայն այն պատճառով, որ մարդկանց գիտակցությունն իր զարգացման մեջ հետ է մնում նրանց տնտեսական դրությունից, այլև այն պատճառով, որ մինչև այժմ էլ գոյություն ունի կապիտալիստական շրջապատումը, որն աշխատում է աշխուժացնել ու պաշտպանել կապիտալիզմի մնացուկները ՍՍՌՄ-ի էկոնոմիկայում և մարդկանց գիտակցության մեջ, և որի դեմ մենք, բոլշևիկներս, պետք է վառոդը շարունակ չոր պահենք»։...

«Իդեական-քաղաքական աշխատանքի բնագավառում մեր խնդիրներն են.

1) Պատշաճ բարձրության հասցնել պարտիայի թեորիական մակարդակը.

2) Ուժեղացնել իդեոլոգիական աշխատանքը պարտիայի բոլոր օղակներում.

3) Լենինիզմի անդադրում պրոպագանդա մղել պարտիայի շարքերում.

4) Պարտկազմակերպությունների ու նրանց շրջապատող ան-

պարտիական ակտիվը դաստիարակել լենինյան ինտերնացիոնալիզմի ոգով

5) Չկոծկել, այլ համարձակ կերպով քննադատել ընկերներից ոմանց շեղումները մարքսիզմ-լենինիզմից.

6) Սիստեմատիկորեն մերկացնել լենինիզմին թշնամի հոսանքների իդեոլոգիան ու իդեոլոգիայի մնացորդները»։

Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, Քաղհրատ, 1940, էջ 570, 581—582։

Ընկեր Լ. Մ. Կագանովիչի զեկուցումից.

... «Ինչպես հայտնի է, կոմունիստ գրողների մի խմբակ, օգտվելով ՌԱՊՊ-ի կազմակերպչական գործիքից, սկսել օգտագործեց իր կոմունիստական ազդեցության ուժը գրական ֆրոնտում, և փոխանակ ՌԱՊՊ-ի շուրջը միացնելու և գրողների լայն կադրեր ներգրավելու, ռապպական ընկերների այդ խմբակն արգելակում, խանգարում էր գրողների ստեղծագործական ուժերի ծավալումը։ Կենտկոմը տվյալ դեպքում գործ ուներ մի շարք կոմունիստ գրողների քաղաքական սխալ գծի հետ գրական ֆրոնտում, ընդ որում՝ այդ ընկերներն ունեին կազմակերպչական ապարատ— ՌԱՊՊ։

Իհարկե կարելի էր մի մեծ բանաձև հանել կոմունիստների խնդիրների մասին գրականության մեջ, կարելի էր առաջարկել ռապպականներին՝ փոխել իրենց կուրսը։ Բայց դա կարող էր մնալ բարի ցանկություն։ Ընկեր Ստալինը հարցն այլ կերպ դրեց. պետք է,— ասաց նա,— կազմակերպչորեն փոխել դրությունը։

Եվ ահա այդ ժամանակ հարց դրվեց ՌԱՊՊ-ը լիկվիդացնելու մասին, ստեղծելու գրողների միասնական միություն։ Հարցի այդ կազմակերպչական լուծումից հետո ստեղծագործական ուժերը բարձրացան, զարգացան, և գործը գրականության մեջ լավանում է։ Այդպիսով, կազմակերպչական հարցի լուծումով, ապահովվեց պարտիայի գիծը գրականության մեջ ճիշտ անցկացնելը»։

„XVII с'езд Всесоюзной Коммунистической партии (б). Стенографический отчет", *էջ 565։*

Ժ. Ի. Պաճֆերովի ելույթից.

«Ընկեր Ստալինն ամեն անգամ խորհուրդ էր տալիս մեզ՝ չփոխադրել գրականության մեջ վարչարարական մեթոդներ, իսկ մեզ մոտ, դրա փոխարեն, հրամանատարություն էին անում գրող-

ների վրա։ Ընկեր Ստալինն ամեն անգամ մեզ հետ զրուցելիս մեզ դուրս էր հանում գործունեության լայն ասպարեզ, իսկ մենք նորից իրար գլխի էինք հավաքվում։ Եվ իր վերջին զրույցի ժամանակ ընկեր Ստալինն ասաց պարզ և իմաստուն.— «Պող գրողը սովորի կյանքից։ Եթե նա բարձր գեղարվեստական ձևով արտահայտի կյանքի ճշմարտությունը, նա անպայմանորեն կհանգի մարքսիզմին»։

Ընկեր Ստալինի այդ իմաստուն ցուցումը որոշ սխեմատիկների թվաց պարզեցում։ Նրանք՝ այդ սխեմատիկները, մինչև հիմա ոչ մի կերպ չեն կարողանում հասկանալ, որ ասել կյանքի ճշմարտությունը՝ դա չափազանց դժվար գործ է և ամեն մարդու ուժը չի պատի։ Ավելի հեշտ է երևակայել, սարքել, հնարել, բայց շատ ավելի դժվար է ասել կյանքի ճշմարտությունը, որովհետև կյանքի ճշմարտությունն ասելու համար հարկավոր է լավ դիտենալ այն, դիտենալ կենցաղը, բարքերը, հոգեբանությունն այն մարդկանց, որոնց մասին դու գրում ես, հասկանալ պարտիայի քաղաքականությունը, տեսնել երկրի և ամբողջ աշխարհի վաղվա օրը»։

„XVII съезд Всесоюзной Коммунистической партии (б). Стенографический отчет", էջ 624։

Հունվարի 16-ին

Վախճանվեց էդուարդ Գյորգիևիչ Բագրիցկին։

Հունվարի 28-ից—31-ը

Լենինականում աշխատում է սովետական գրողների բրիգադան։

Փետրվարի 5-ին

ՀԿԳՄ կազմ. կոմիտեն որոշում է ընդունում Լենինականի ԽԳ կազմակերպության և բանվորական գրական խմբակների աշխատանքների մասին։

Փետրվարի 6-ին

„Литературная газета"-յում հրապարակվում է ընկ. Ա. Ա. Ժդանովի «Հետամուտ լինել Գորկու հերոսների և քաղաքների Հակատագրին» հոդվածը։

Ա. Ա. Ժդանովի հոդվածից.

«... Գորկու երկրամասի աշխատանքը դեռ անբավարար է պատկերված գեղարվեստական գրականության մեջ: *Եթե վերցնենք Գորկու երկրամասը, կուլտուրան, ապա ամենից առաջ դրա մասին գրել է ինքը՝ Գորկին:* Հսկայական բանակությամբ վառ տիպեր է վերցրել Գորկին իր երկերի համար մեր երկրամասից: Բայց սովետական գրողներից ոչ մեկը չի փորձել հետամուտ լինել Գորկու հերոսների հետագա բախտին— *«Մայրի»-ի Պավելի, Ցոմա Գորդեևի, Արտամանովների և այլոց հետագա ճակատագրին: Բայց չէ՞ որ* մինչև հիմա Գորկու հոչակավոր «Մայր» երկի հերոս Պավելը ֆիզիկապես կենդանի է,— *դա Պյոտր Զալոմովն է՝ հայտնի ռևոլուցիոներ:*

Իսկ մինչե՞ սովետական գրողի համար հետաքրքիր չէր լինի հետամուտ լինել այդ մարդկանց կյանքին մինչև մեր ժամանակը, տեսնել այդ մարդկանց կյանքը մինչև մեր ժամանակը, տեսնել, թե ինչ է դարձել այժմ «Օկուրով քաղաքը», ինչի է վերածվել նույն այդ Արզամասը»:...

«Մենք սովետական գրողներից սպասում ենք գեղարվեստական մեծ երկեր, որոնք արտացոլեն մեր սոցիալիստական շինարարությունը քաղաքում և գյուղում»:

„Лит. газета", *6 փետրվարի, 1934:*

Փետրվարի 11-ին

Կարմիր Բանակի Տանը տեղի է ունենում Հայաստանի խորհրդային գրողների և Կարմիր Բանակի գրական խմբակների հանդիպման երեկո:

Փետրվարի 28-ին

«Իզվեստիա»-յում տպագրվում է Մ. Գորկու «Ճարպկության մասին» հոդվածը:

Մ. Գորկու հոդվածից.

«Ժամանակը հրամայաբար պահանջում է ձևակերպումների խստագույն ճշտություն, և մենք ոչնչանք որտեղ և ումնից սովորելու այդ ճշտության արվեստը: Մենք ապրում ենք նոր աշխարհի կառուցման լարված, հերոսական և հաջող աշխատանքի մեջ, և ապրում ենք անընդհատ պատերազմի վիճակում հին աշխարհի

դեմ, որի գաղանային ատելությունն աճում է մեր հաղթությունների հետ միասին, բոլոր երկրների պրոլետարիատի վրա ավելի ու ավելի արագորեն աճող մեր ազդեցության հետ միասին։ Ինչպես մեր պարտիայի ամբողջ աշխատանքը՝ մեր գրականությունն էլ մարտական ռևոլյուցիոն գործ է։ Նրա խնդիրն է.— պայքարել անցյալի դեմ՝ ներկայումս և ամրացնել ներկայի սոցիալիստական նվաճումները, որպես մի աստիճան դեպի սոցիալիստական ապագայի բարձունքը»...

«... Մեր իրականության գաղափարապես և գեղարվեստորեն ճիշտ պատկերումը գրականության մեջ՝ պահանջում է լեզվի հարստություն, պարզություն, պայծառություն ու հստակություն»։

«Գրական թերթ», մարտի 20, 1934։

Փետրվար

Շեֆական աշխատանքները ղեկավարելու համար ՀԽԳՄ Կազմ. Կոմիտեն հաստատում է շեֆկոմիսիա։

Փետրվար

Վախճանվեց բանաստեղծ Ռոստոմ Ռոստոմյանը։

Մարտի 1-ին

Վախճանվեց Թորոս Թորամանյանը։

Մարտի 11-ին

Տեղի է ունենում Համամիութենական ՍԳ Կազմ. Կոմիտեի 3-րդ պլենումը։

Զեկուցում է լսվում նաև սովետահայ գրականության մասին։ Պլենումն ընդունում է բանաձև։

Բանաձևից.

«1. Առաջարկել բոլոր կազկոմիտեներին Համամիութենական Համագումարի նախապատրաստման հիմք ընդունել պլենումի աշխատանքների նյութերը։

2. Հանձնարարել բոլոր կազմկոմիտեներին մինչև ռեսպուբլիկական կոնֆերենցիաներն ու համագումարները, հրավիրել կազմկոմիտեների պլենումներ, ուր դնել զեկուցումներ պլենումի արդյունքների մասին՝ հետևյալ տեսանկյունով.—

Ա. Պայքար՝ գրականության բարձր գաղափարա-գեղարվեստական որակի համար,

Բ. Սոցիալիստական շինարարության կոնկրետ իրականության խոր և բազմակողմանի ուսումնասիրությունը գրողների կողմից,

Գ. Գեղարվեստական երկերի կոնկրետ վերլուծության հիման վրա՝ բոլշևիկյան ինքնաքննադատության ձավալում,

Դ. Վճռական պայքար անսկզբունք համբակայնության ամեն մի արտահայտության դեմ:

3. Գրողների Համամիութենական համագումարի նախապատրաստական աշխատանքի կարգով, կազմկոմիտեների պլենումներում պետք է քննության առնվեն ռեսպուբլիկաների, երկրների և մարզերի գրողների հիմնական երկերը, արտադրված վերջին տարիներում:

4. Առաջարկել կազմկոմիտեներին հիմնովին վերակառուցել իրենց աշխատանքի սիստեմը, պարտիայի XVII համագումարի որոշումների հիման վրա, վերացնել ֆունկցիոնալականության տարրերը: Կազմկոմիտեների աշխատանքի ամբողջ էությունը պետք է լինի սովետական գրականության սկզբունքային հարցերի շուրջը ստեղծագործական դիսկուսիաների ձավալումը, գրողների երկերի ուսումնասիրությունը և ամեն կերպ օժանդակությունը գրողներին՝ իրենց ստեղծագործական աշխատանքների մեջ:

5. Հանձնարարել՝

«Լիտերատուրնի կրիտիկ» հանդեսին, պլենումի նյութերից կազմել հատուկ համար՝ նվիրված ՍՍՌՄ-ի գրականությանը:

Գրական-գեղարվեստական հանդեսներին,— պլենումի նյութերից կազմակերպել հատուկ քննադատական բաժիններ»:

«Գրական թերթ», 30 մարտի, 1934:

Մարտի 16-ին

„Литературная газета" -ի 32-րդ համարի ամբողջ մի էջը նվիրվում է Սովետական Հայաստանի գրականությանը:

Տպագրվում են վ. կիրպոտինի «Դեպի նոր վերելք», Հ. Մկրտչյանի «Մեր արձակը» և այլ նյութեր:

Մարտի 18-ին

Գրողների Տանը կազմակերպվում է Արագու ստեղծագործությունների երեկո: Զեկուցում է վ. Թերզիբաշյանը:

Ելույթներ են ունենում՝ Գ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Խ. Սարգսյանը։ Վերջում ելույթ է ունենում՝ Արադին։

Մարտի 19-ին

Կենինականում կազմակերպվում է դիսպուտ Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» կոմեդիայի շուրջը։

Զեկուցում է Հմ. Սիրասը։

Մարտի 22-ին

Հայկինոյում տեղի է ունենում սովետական գրողների և կինեմատոգրաֆիայի աշխատողների հանդիպում։

Կինո-ռեժիսոր Հ. Բևկնազարյանը զեկուցում է Գ. Սունդուկյանի «Պեպո» հնչուն ֆիլմի սցենարիայի մասին։

Մտքերի փոխանակությանը մասնակցում են՝ Ստ. Զորյանը, Ն. Զարյանը, Գ. Սարյանը, Ա. Գուլակյանը, Ս. Հարությունյանը և ուրիշները։

Մարտի 30-ին

Պետական Համալսարանում կազմակերպվում է դիսպուտ Ս. Տարոնցու «Սերունդների երգը» բանաստեղծությունների գրքի շուրջը։

Ապրիլի 4-ին

Գրողների Տանը Հայաստանի Կուլտուր-Պատմական Թանգարանի գրական սեկտորի վարիչ Խ. Սարգսյանը զեկուցում է գրական սեկտորի աշխատանքների մասին։

Ապրիլի 6-ին

Գրողների Տանը տեղի է ունենում ՀԽԳՄ կազմկոմիտեի ընդլայնած նիստը։ Քննության է առնվում Համամիութենական կազմկոմիտեի 3-րդ պլենումի արդյունքները։

Ապրիլի 9-ին

Հայկինոյի ակումբում կազմակերպվում է «Գիքոր» կինոնկարի շուրջը խորհրդակցություն։

Ապրիլի 15-ին

Երևանում ՀԼԿԵՄ կենտկոմը հրավիրում է Հայաստանի երիտասարդ արվեստագետների առաջին կոնֆերենցիան։

Խոսում է պիոներության պարտիայի XVII համագումարի որոշումների և երիտասարդ արվեստագետների անելիքների մասին:

Ապրիլի 17-ին

Գրողների Տանը կազմակերպվում է խորհրդակցություն նվիրված „На рубеже Востока“ *ամսագրին:*

Խորհրդակցությանը մասնակցում են՝ Ալ. Շիրվանզադեն, Մ. Սարյանը, Դ. Դեմիրճյանը և ուրիշները:

Ապրիլի 22-ին

„Литературная газета“ *թերթում տպագրվում է Մ. Գորկու «Ձրույց երիտասարդների հետ» հոդվածը:*

Մ. Գորկու հոդվածից.

«Մեզ մոտ սիրով և առատորեն գրում են սոցիալիստական ռեալիզմի մասին, և վերջերս հեղինակներից մեկը Գոգոլի մասին հոդվածում հրապարակեց հետաքրքիր դյուտ. Գոգոլը եղել է սոցիալիստական ռեալիստ: Այս դյուտը հետաքրքրական է այն պատճառով, որ ցույց է տալիս, թե որքան քիչ պատասխանատվություն է զգում գրողը ընթերցողի առաջ իր խոսքերի համար:

Գրական ռեալիզմը գործ ունի մարդկային կենսական գործունեության ռեալ փաստերի հետ: «Ռևիզոր»-ի և «Մեռած հոգիներ»-ի դարաշրջանում, որքան հայտնի է, Ռուսաստանում ոչ մեկը և ոչ մի տեղ չի դադել սոցիալիստական բնավորության փաստեր: Հենց այս ոչ անկարևոր պատճառով գրականագետ Նիկոլայ Գոգոլը չէր կարող արտահայտել այդպիսի փաստեր Խլեստակովի, Զիչիկովի, Սաբակևիչի, Նոզդրևի, Պլյուշկինի և իր այլ տիպերի սոցիալական կենսագործունեության մեջ»:

M. Горький, О Литературе, *էջ.* „Советский писатель“, *1937, էջ 317—318:*

Ապրիլի 29-ին

Գրողների Տանը տեղի է ունենում խորհրդային գրողների, կերպարվեստագետների և երաժշտագետների կազմ. կոմիտեների միացյալ նիստ նվիրված Համկ(բ)Պ կենտկոմի ապրիլի 23-ի որոշման երկրորդ տարեդարձին:

Ապրիլ

Երևանում լույս է տեսնում «Գրական սերունդ» գրական-գեղարվեստական և քննադատական ամսագրի առաջին համարը։

Խմբագրականից.

«Մենք պետք է անխնա պայքար մղենք մի կերպ «յոլա տալ» նողների դեմ։ Գրողը պետք է ուսումնասիրի իր արվեստը խիստ բազմակողմանիորեն։

Նա պիտի ուշադրությամբ կարդա իր ժամանակակից և դասական (կլասիկ) բոլոր գրողներին։

Գրական որակի համար մղվող պայքարում վճռական դեր ունի խաղալու մեր մարքս-լենինյան քննադատությունը, որը դժբախտաբար գտնվում է ծայրաստիճան ցածր մակարդակի վրա։

«Գրական սերունդ»-ի խնդիրներից մեկն էլ լինելու է՝ զարկ տալ կոնկրետ քննադատությանը, մասնավորապես երիտասարդ գրողների ստեղծագործության մանրամասն վերլուծման գործին»։

«Գրական սերունդ» № 1. 1934։

Մայիսի 3-ին

Ստալինաբադում հրավիրվում է Տաջիկական Սովետական Գրողների առաջին համագումարը։

Հայաստանի ԽԳ Միության անունից ողջույնի խոսք է ասում Մ. Արմենը։

Մայիսի 8-ին

Աշխաբադում հրավիրվում է Թուրքմենստանի Սովետական Գրողների առաջին համագումարը։

Հայաստանի ԽԳ Միության անունից ողջույնի խոսք է ասում Ա. Վշտունին։

Մայիսի 11-ին

Վախճանվեց Մ. Գորկու որդին՝ Մաքսիմ Ալեքսեևիչ Պեշկովը։

Ընկեր Ի. Վ. Ստալինի և իր զինակիցների Մ. Գորկուն ուղղված ցավակցությունը.

«Թանկագին Ալեքսեյ Մաքսիմովիչ. Ձեզ հետ միասին վշտահար ենք և ապրում ենք այն կսկիծը, որն այդպես անսպասելիո-

բեն և դաժանորեն պատեց մեզ բոլորիս։ Վստահ ենք, որ ձեր անխորտակելի գորկիական ոգին և մեծ կամքը կհաղթահարեն այս ծանր փորձությունը։

Մեր խորին ցավակցությունն ենք հայտնում Նադեժդա Ալեքսեևնային»։

Ի. Ստալին
Վ. Մոլոտով
Կ. Վորոշիլով
Ս. Օրջոնիկիձե
Մ. Կալինին
Վ. Կույբիշև
Ա. Միկոյան
Ա. Ժդանով

Մայիսի 16-ին

Մ. Ի. Կալինինը ընդունում է 19 ականավոր հեղինակների։

Մայիսի 20-ին

«Գրական թերթ»-ի 14-րդ համարում լույս է տեսնում ՍՍՌՄ ՍԳ Միության կանոնադրությունը (ժամանակավոր)։

Մայիսի 20-ին

Տեղի է ունենում «Գրական սերունդ» ամսագրի ընթերցողների և աշխատակիցների կոնֆերենցիա։

Ներածական խոսք է ասում Ն. Զարյանը։

Մայիսի 21-ին

Տեղի է ունենում ՀԽԳ կազմ. կոմիտեի նիստը։

Ընտրվում է Խորհրդային Գրողների Միության անդամներ ընդունող հանձնաժողով։

Մայիսի 28-ին

Երևան է ժամանում ֆրանսիացի կոմունիստ գրող Լեոն Մուսինակը։

Մայիսի 30-ին

Երևան է ժամանում Փարիզի «Յումանիտե» թերթի խմբագիր Դառնարը։

Մայիս

Լույս է տեսնում ՀԽԳ կազմկոմիտեի օրգան «Խորհրդային գրականություն» ամսագրի առաջին համարը։

688—26

Հունիսի 8-ին, 9-ին, 10-ին

Գրողների Տանը տեղի է ունենում դիսկուսիա մեր պոեզիայի լեզվի շուրջը։

Զեկուցում է Վ. Թերլեմեզյանը։

Մտքերի փոխանակությանը մասնակցում են՝ Ե. Չարենցը, Ստ. Զորյանը, Ն. Զարյանը, Գ. Սարյանը, Գ. Սևակը, Մ. Հարությունյանը և ուրիշները։

Հունիսի 11-ին, 12-ին, 13-ին

Գրողների Տանը կազմակերպվում է դիսպուտ մեր դրական լեզվի մի քանի խնդիրների շուրջը։

Զեկուցում է Դ. Դեմիրճյանը։

Մտքերի փոխանակությանը մասնակցում են՝ Ե. Չարենցը, Գ. Ղափանցյանը, Գ. Լևոնյանը, Ն. Զարյանը, Խ. Սարոյանը և ուրիշները։

Հունիսի 14-ին

«Իզվեստիա»-յում տպագրվում է Մ. Գորկու «Գրական բարքերի մասին» հոդվածը։

Մ. Գորկու հոդվածից։

«Մեր բարքերը, մեղմ ասած՝ վատ են։ Դրանց վատ լինելը բացատրվում է նախ և առաջ նրանով, որ դեռ չեն վերացվել խորքային տրամադրությունները, որ պրակտիկաները բաժանվում են «մերոնքի» և «ոչ մերոնքի», իսկ դա ստեղծում է այնպիսի մարդիկ, որոնք՝ նայած իրենց պզվիլի շահին, ծառայում են ի՛ «մերոնց», և՛ «ձերոնց»։ Խմբակներն ստեղծվում են ոչ թե «պարտախանության» և «անպարտախականության» նշանաբանով, ոչ թե «ստեղծագործական» տարաձայնություններից բխող անհրաժեշտությունից, այլ «առաջնորդների» դեր խաղալու անպարկեշտ ձգտումից, որ ցուցաբերում են փառասերները։ «Առաջնորդամոլությունը» մի հիվանդություն է, որը պարզունակով կոլեկտիվիզմի էմոցիայի այլասերումից, արտահայտվում է «անհատականության սկզբունքի» հիպերտրոֆիայով։ Մինչդեռ գյուղում արագորեն վերացվում է «ֆերմանճնության», նա ավելի ու ավելի նկատելի է դրականագետների շրջանում»։...

«Ես նույնպես լավ գիտեմ, որ «անվանիներից» շատերը ավելի լավ ու ավելի շատ են խմում, քան դրսում են։ Ավելի լավ կլիներ, որ նրանք իրենց ծարավը հագեցնեին տանը և ոչ թե հրապարակորեն։ Ավելի լավ կլիներ, եթե նրանք փառքի ու ժողովրդականության ձեռք բերելու իրենց ծարավով չփչացնեին երիտասարդության մեջ անժամանակ ճանաչելով խոշոր ձիրքեր այնպիսի մարդկանց մեջ, որոնք իրենց կիսագրագիտությամբ ի վիճակի չեն զարգացնելու այդ ձիրքերը։ Եվ ավելի լավ կլիներ, եթե նրանք, ձգտելով ստեղծել իրենց շուրջը երկրպագուների, հաճոյամոլների ու պնակալեզների խումբ, գրողների միության մեջ չմցկեին ապաշնորհ մարդիկ։ Խմբակայնությունը կենդանի է։ «Առաջնորդամոլության» հիվանդությունը զարգանում է, դառնում է իրոնիկական։ «Կուկուն աքաղաղին գովում է նրա համար, որ աքաղաղը գովում է կուկուին»։ Հիանալով, թե ինչպես արագորեն գործարանն ու կոլտնտեսությունը բանվորի հոգեբանության են արտահայտում դյուզացուն, չեն նկատում, որ գյուղային գրականության ասպարեզում երևան է բերում քարացած «միանձնյայի» իր բուն էությունը։ Եվ նրա համար գրականությունը միայն անձնական գործ է, իսկ նրա սոցիալական, կուլտուրական և ունեցվածքն նշանակությունը բոլորովին անհասկանալի են նրան։ Հատկապես մինատնտեսի այդ հոգեբանությունն է «բարքերի վիշացման» աղբյուրը, մանր ինքնասիրությունների, չարամիտ բամբասանքների, խմբակային խառնակչության և ամեն տեսակ դոհմության աղբյուրը։

Ստեղծվում է վատատողջ, ամոթալի մի մթնոլորտ, որի մասին երևի շուտով տիրաբար կարտահայտեն իրենց կարծիքը մեր բանվորները, մարդիկ, որոնք հասկանում են գրականության նշանակությունը, սիրում են գրականությունը և հանդիսանում են գեղարվեստական խոսքի ու պատկերի ավելի ու ավելի լուրջ գնահատողները»։

«Գրական թերթ», 30 հունիսի, 1934։

Հունիսի 20-ին

Հրապարակվում է ՀԱՄԽ-ի և Հայաստանի խորհրդային Գրողների Միության Կազմկոմիտեի որոշումը գրական խմբակների աշխատանքների մասին։

Հունիս

ՀԽԳ առաջին համագումարի աշխատանքներին մասնակցելու համար Երևան են ժամանում Ադրբեջանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի ՍԳ Միության ներկայացուցիչները։

Հուլիսի 12-ին

Լույս է տեսնում ՀԿ(բ)Պ ԿԿ և Երկոմի օրգան «Կոմունիստ» թերթի (ռուսերեն լեզվով) առաջին համարը։

Հուլիսի 14-ին

ՀԿ(բ)Կ կենտկոմի բյուրոն որոշում է ընդունում՝ «Հայաստանի «Խորհրդային Գրողների Միության մասին»։

Որոշման առաջին կետը.

«1. ՀԿ(բ)Պ Կ-ի կենտկոմը նշում է, որ չնայած Խորհրդային Հայաստանի գրականության զգալի նվաճումներին և խորհրդային գրողների ստեղծագործական արտադրանքի գաղափարական ու քաղաքական աճմանը, վերջին ժամանակներս Հայաստանի Խորհրդային Գրողների Միության Կազմկոմիտեում և գրողների շարքերում աշխուժացել է խմբակային պայքարը, որը կտրում է խորհրդային գրողներին այն հրատապ խնդիրներից, որոնք դրել է խորհրդային գրականության առջև Համկ(բ)Կ-ի կենտկոմն իր 1932 թ. ապրիլի 23-ի որոշմամբ։ Հայաստանի Խորհրդային Գրողների Միության Կազմկոմիտեն և կոմունիստ գրողներն անհրաժեշտ աշխատանք չեն ծավալել և պայքար չեն կազմակերպել կատարելու համար խմբակայնությունը վերացնելու մասին ՀԿ(բ)Կ կենտկոմի տված ուղղակի ցուցումները։ Դրա հետևանքը եղել է այն, որ գրողների շարքերում աշխուժացել են ՀԿ(բ)Կ կենտկոմի կողմից ժամանակին դատապարտված խմբավորումներն ու խմբակային պայքարը»։

«Գրական թերթ», 24 հուլիսի, 1934։

Հուլիսի 20-ին

Կ. Պոլսում վախճանվեց բանաստեղծուհի Սիպիլը (Ջապել Հ. Ասատուր)։

Հուլիսի 23-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի զրույցը անգլիական գրող Հ. Ջ. Ուելսի հետ։

Ի. Վ. Ստալինի պատասխաններից.

«Ստալին: *Անհատի ու կոլեկտիվի միջև, առանձին անձնավորության շահերի ու կոլեկտիվի շահերի միջև անհաշտելի ներհակություն չկա, չպետք է լինի: Դա չպետք է լինի, որովհետև կոլեկտիվիզմը, սոցիալիզմը չի ժխտում, այլ համատեղում է անհատական շահերը կոլեկտիվի շահերի հետ: Սոցիալիզմը չի կարող անտեսել անհատական շահերը: Այդ անձնական շահերին ամենաէական չափով բավարարում տալ կարող է միմիայն սոցիալիստական հասարակությունը: Դեռ ավելին. սոցիալիստական հասարակությունն անձնավորության շահերի պահպանության միակ հաստատուն երաշխիքն է: Այս իմաստով անհաշտելի ներհակություն չկա «ինդիվիդուալիզմի» ու սոցիալիզմի միջև»:...*

«Պատմական հարուստ փորձը ստուգիացնում է, որ մինչև այժմ ոչ մի դասակարգ հոժարակամ չի զիջել ճանապարհը մի այլ դասակարգի: Այդպիսի նախադեպ չկա համաշխարհային պատմության մեջ: Եվ կոմունիստները յուրացրել են այս պատմական փորձը: Կոմունիստները կողջունեին բուրժուազիայի հոժարակամ հեռանալը: Բայց գործերի այդպիսի ուղղություն անհավանական է, ինչպես փորձն է ասում: Այդ պատճառով էլ կոմունիստներն ուզում են պատրաստ լինել վաթթարագույնին և կոչ են անում բանվոր դասակարգին՝ արթուն լինել, պատրաստ լինել մարտի: Ո՞վ է պետք այն զորավարը, որը թմրեցնում է իր բանակի զգաստությունը, այն զորավարը, որը չի հասկանում, թե հակառակորդն անձնատուր չի լինի, որ պետք է նրան բոլորովին ջախջախել: Այդպիսի զորավար լինել— նշանակում է խաբել, դավաճանել բանվոր դասակարգին: Ահա թե ինչու ես կարծում եմ, թե այն, ինչ որ Ձեզ հնազև է թվում, իրականում ուղղակիորեն նպաստակահարմարության միջոց է բանվոր դասակարգի համար»:

Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, Գոսպոլիտ., 1937, էջ 882, 891—892:

Գլուխ 1-ին

Կալուգայի Տանը բացվում է Հայաստանի խորհրդային գրողների առաջին համագումարը:

Համագումարին ողջունում են՝ Ուկրաինայի, Բելոռուսիայի

ՍԳՄ Կազմ. կոմիտեների ներկայացուցիչները, Ալ. Շիրվանզադեն, Հ. Հակոբյանը և ուրիշները։

Համագումարի օրակարգը.

1. Հայաստանի խորհրդային դրականությունը.
2. II հնգամյակը և մեր դրամատուրգիայի խնդիրները.
3. Հայաստանի երիտասարդական դրականությունը.
4. Հայաստանի մանկական դրականության դրությունն ու խնդիրները.
5. ՀԳ Միության կանոնադրության հաստատումը.
6. Կազմակերպչական հարցեր։

Ելույթներ են ունենում՝ Ե. Չարենցը, Դ. Դեմիրճյանը, Արափին, Մ. Սարյանը, Ստ. Զորյանը, Գ. Սարյանը, Հ. Սիրաս, Ա. Վշտունին, Հ. Քոչարը, Ն. Դաբաղյանը, Ս. Տարոնցին, Արաքսը և ուրիշները։

Ընտրվում է ՀԳՄ վարչության, այդ թվում՝ Ալ. Շիրվանզադեն, Ե. Չարենցը, Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Ն. Զարյանը, Ա. Վշտունին, Ն. Դաբաղյանը, Հ. Մկրտչյանը, Հ. Քնդին և ուրիշները։

Ընտրվում է Համամիութենական համագումարի պատգամավորության, այդ թվում՝ Ալ. Շիրվանզադե, Ե. Չարենց, Դ. Դեմիրճյան, Ստ. Զորյան, Ն. Զարյան, Ա. Վշտունի, Ն. Դաբաղյան, Հ. Մկրտչյան և ուրիշները։

Համագումարը ողջույնի հեռագրեր է ուղարկում ընկեր Ի. Վ. Ստալինին և Մ. Գորկուն։

Ի. Վ. Ստալինին ուղղված ողջույնի հեռագիրը.

Համկ(բ)Պ կենտկոմ, ընկեր Ստալինին

«Հայաստանի խորհրդային Գրողների առաջին համագումարն իր բոցավառ ողջույնն է հղում Ձեզ, համաշխարհային ռևոլյուցիայի հանճարեղ առաջնորդիդ, լենինիզմի հսկայիդ, սովետական դրականության և արվեստի մեծ բարեկամիդ, որի իմաստուն ղեկավարությամբ մեր Լենինյան կենտկոմն ընդունեց 1932 թվի ապրիլի պատմական որոշումը, որը վայրկյան հեռանկարներ բաց արեց մեր ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական դրականության զարգացման համար։

Թանկագին ընկեր և բարեկամ Իոսիֆ Վիսսարիոնովիչ, հաճախացած եղեք, որ Սովետական Հայաստանի գրողներն իրենց գրիչն ու տաղանդն ի սպաս են դնում սոցիալիզմի կառուցման այն փառապանծ հերոսականին, որը մաքրում է մարդկությանը կապիտալիզմի կեղտերից և ստեղծում է բոլշևիկյան կամքի, արիության, անձնազոհության այնպիսի մարդկանց, որպիսիք են «Չելյուսկինո»-ի հերոսները, քաջարի Դիմիտրովը և մեր այն միլիոնավոր հարվածայիններն, որոնք փառքի, պատվի և հերոսության գործ են կատարում մեր սոցիալիստական արդյունաբերության մեջ և կոլտնտեսական դաշտում:

Մենք հավատացնում ենք Ձեզ, որ մեր ստեղծագործական ողջ եռանդն ու ավյունը կդործադրենք կիրառելու բոլշևիկյան մեծ էպոսն այն հերոսության, որի մեծագույն օրինակն ու ոգևորիչը Դուք եք, Թանկագին ընկեր Ստալին:

Հատկապես հավատացնում է Ձեզ, սիրելի ղեկավար, որ ղինված Մարքսի, Էնգելսի, Լենինի և Ձեր ուսմունքով, Հայաստանի Սովետական գրողները բոլշևիկյան կենտկոմի ղեկավարությամբ չափաչափիչ հարված կհասցնեն դասակարգային թշնամու իդեոլոգիայի ամեն տեսակ ոտնձգություններին, դաշնակիզմին, տրոցկիզմին, նացիոնալ դեմոկրատիզմին, ինչպես նաև մեծապետական շովինիզմին, «ձախ» ռապպականության արտահայտություններին, և կտանեն գրականության այն ուղիով, որ ցույց եք տվել Լենինը և Դուք»:

Մամսիմ Գորկուն ուղղված ողջույնի ճեռագիրը.

«Թանկագին Ալեքսեյ Մաքսիմովիչ,

Սոցիալիստական Հայաստանի Սովետական գրողների անդրանիկ համագումարը արտաքին ողջույն է հղում Ձեզ, պրոլետարիատի մեծ առվետապետին, սովետական գրականության ավագ ու խոշորագույն վարպետին:

Պատմական կարճ ժամանակամիջոցում Սովետական հողը Հայաստանում անուցել և աճեցրել է մի գրականություն, որ հանդիսանում է երկրի կուլտուրական վերելքի լավագույն ցուցանիշը, Լենինյան-Ստալինյան ազգային քաղաքականության հրաշալի պտուղը:

Մեր մեծ պարտքի և նրա հանճարեղ առաջնորդ ընկեր

Ստալինի ցույց տված ուղիներով զարգացող սոցիալիստական հայրենիքի գրականության հարկական հատվածն արվեստի բարձունքները տիրելու իր պայքարի մեջ միշտ օգտվել է Ձեր հոյակապ ստեղծագործություններից: Ձեր մեծ անունից եկող իմաստուն խորհուրդներից և նրբին մասին ցուցումներից:

Հայաստանի գրականության ստեղծագործական ամբողջ բանակը, խանդավառված սոցիալիզմը կերտող միլիոնների անպարտելի հերոսությամբ համադրամարից հետո ավելի կազմակերպված ու նպատակասլաց կընթանա դեպի մեր մեծ հայրենիքին արժանի բարձր կուլտուրայի գագաթները:

Թող ապրի՛ ամբողջ աշխատավոր մարդկության մեծ հայրենիքը, փա՜ռք այդ հայրենիքը կերտող և առաջ մղող հերոսական բանվոր դասակարգի միլիոնավոր հերոսներին: Թող ծաղկի՛ այդ հերոսների մեծ գրականությունը»:

Օգոստոսի 17-ին

Մոսկվայում բացվում է Սովետական Գրողների Համամիութենական առաջին համագումարը:

Համագումարի ողջույնի հեռագիրը ընկեր Ի. Վ. Ստալինին.

«Թանկագին Իոսիֆ Վիսսարիոնովիչ

Մենք, Սովետական Միության գրականության ներկայացուցիչներս այսօր հավաքվել ենք մեր առաջին համամիութենական համագումարին:

Մեր զենքը խոսքն է: Այդ զենքը մենք մտցնում ենք բանվոր դասակարգի պայքարի զինանոցը: Մենք ցանկանում ենք ստեղծել այնպիսի արվեստ, որը դասակարգի սոցիալիզմ կառուցողներին, առույգություն և ինքնավստահություն կտա միլիոնների սիրտը, ծառայի նրանց որպես բերկրանքի աղբյուր և նրանց գործնի ամբողջ համաշխարհային կուլտուրայի իսկական ժառանգներ:

Մենք կպայքարենք, որպեսզի մեր արվեստը հավատարիմ և սուր զենք դառնա բանվոր դասակարգի ձեռքին՝ թե՛ մեզ մոտ և թե՛ արտասահմանում: Մենք կկանգնենք ամբողջ աշխարհի ուղղության գրականության պահպանության դիրքերում:

Մեր պատմական օրը մենք սկսում ենք Ձեզ ողջունելով, թանկագին Իոսիֆ Վիսսարիոնովիչ, մեր ուսուցչին և բարեկամին:

Ձեզ, Լենինի լավագույն աշակերտին, նրա գործի հավատարիմ

և տոկուն շարունակողին մենք կցանկանայինք ասել մեր ամենահոգեպարար խոսքը, որը միայն գոյություն ունի Միության լեզուներով։ Ձեր անունը դարձել է մեծության, պարզության, ուժի և հաստատակամության սիմվոլ, միացած այն միասնականի և ամբողջականի մեջ, որը բնորոշում է բոլշևիկի տիպն ու բնավորությունը։

Քանկապին և հարազատ Իոսիֆ Վիսսարիոնովիչ, ընդունեցեք մեր ողջույնը, որը լի է սիրով ու հարգանքով Ձեր նկատմամբ, որպես բոլշևիկի, մի մարդու, որը հանճարեղ խորաթափանցությամբ ՍՍՌՄ-ի և ամբողջ աշխարհի կոմունիստական պարտիային ու պրոլետարիատին առաջնորդում է դեպի վերջին ու վերջնական հաղթանակը։

Կեցցե՛ այն դասակարգը, որը ծնել է Ձեզ, և այն պարտիան, որը դաստիարակել է Ձեզ՝ ամբողջ աշխարհի աշխատավորության երջանկության համար»։

«Գրական թերթ» № 22, 1934։

Սովետական Գրողների Համամիութենական առաջին համագումարին բացման խոսք է ասում Ա. Մ. Գորկին։

Ա. Մ. Գորկու բացման խոսքից.

«Հարգելի ընկերներ,

Նախքան գրականության բազմազարյան պատմության մեջ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների գրողների համագումարի բացելը՝ ես, Գրողների Միության Կազմկոմիտեի նախագահի իրավունքով, թույլ եմ տալիս ինձ մի քանի խոսք ասել մեր Միության իմաստի և նշանակության մասին։

Դրա նշանակությունն այն է, որ մեր բոլոր ռեսպուբլիկաների բազմացող ու բազմալեզու գրականությունը հանդես է գալիս, որպես միասնական ամբողջություն Սովետական Երկրի պրոլետարիատի աչքի առաջ, բոլոր երկրների պրոլետարիատի աչքի առաջ, ամբողջ աշխարհի մեր բարեկամ գրողների աչքի առաջ։

Մենք հանդես ենք գալիս ցուցադրելով, հասկանալի է, ոչ միայն մեր աշխարհագրական միասնությունը, այլև ցուցադրելով մեր նպատակի միասնությունը, որը, իհարկե, չի բացառում, չի ՝նշում մեր ստեղծագործական ձգտումների ու պրյումների տարբերությունը։

Մենք հանդես ենք գալիս բուրժուազիայի համընդհանուր վայրենացման, գազանացման և հուսահատության դարաշրջանում՝ հուսահատություն, որը հետևանք է նրա իդեոլոգիական անկարողության, նրա սոցիալական սնանկության այն դարաշրջանում, երբ նա արյունոտ փորձեր է կատարում ֆաշիզմի ուժով վերադառնալու ֆեոդալական միջնադարի մոլեռանդության:

Մենք հանդես ենք գալիս որպես դատավորներ անկման դատապարտված աշխարհի, և որպես մարդիկ, որոնք հաստատում են ռևոլյուցիոն պրոլետարիատի իսկական հումանիզմը, պատմության կողմից կոչված ուժի հումանիզմով ազատագրելու աշխատավորությանը, ամբողջ աշխարհը՝ նախանձից, ագահությունից, ստորությունից, տխմարությունից— բոլոր այլանդակություններից, որոնք դարերի ընթացքում խեղաթյուրել են աշխատանքի մարդկանց: Մենք՝ թշնամիներ ենք սեփականության, բուրժուական աշխարհի սոսկալի և ստոր աստվածուհու, թշնամիներ ենք զոոլոգիական ինդիվիդուալիզմի, որը հաստատվում է այդ աստվածուհու կրոնով:

Մենք հանդես ենք գալիս մի երկրում, ուր պրոլետարիատը և գյուղացիությունը, ղեկավարվելով Լենինի պարտիայով, նվաճել են իրենց բոլոր ունակությունների ու շնորհքների զարգացման՝ իրավունք, և ուր բանվորները և կոլտնտեսականներն ամեն օր, տարբեր ձևերով ցույց են տալիս այդ իրավունքից օգտվելու իրենց կարողությունը:

Մենք հանդես ենք գալիս մի երկրում, որը լուսավորված է Վլադիմիր Իլիչ Լենինի հանճարով, ուր անդուլ և հրաշագործ աշխատում է Իոսիֆ Ստալինի երկաթե կամքը:

Ահա, թե ինչ է հարկավոր մեզ լավ հիշել մեր աշխատանքի մեջ, մեր բոլոր ելույթներում աշխարհի առաջ:

Մեր նպատակն է— կազմակերպել գրականությունը որպես միասնական կուլտուրական-ռևոլյուցիոն ուժ:

Հպարտությամբ և ուրախությամբ բաց եմ անում աշխարհի պատմության մեջ առաջին Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Գրողների համագումարը, Միություն, որն իր սահմանների մեջ ընդգրկում է 170 միլիոն մարդու»:

М. Горький, О литературе, հրատ. „Советский писатель", 1937, էջ 443—444:

Համագումարում ճառ է արտասանում ընկ. Ա. Ա. Ժդանովը։

Ա. Ա. Ժդանովի ճառից.

«*Սովետական գրականության հաջողությունները պայմանավորված են սոցիալիստական շինարարության հաջողություններով։ Նրա աճումը մեր սոցիալիստական կարգի հաջողությունների և նվաճումների արտահայտությունն է։ Մեր գրականությունը հանդիսանում է բոլոր ժողովուրդների և երկրների, բոլոր գրականությունների ամենաերիտասարդը։ Միաժամանակ, նա հանդիսանում է ամենադաղափարական, ամենաառաջավոր և ամենահեղափոխական գրականությունը։ Սովետական գրականությունից բացի չկա, և երբեք չի եղել այնպիսի գրականություն, որն աշխատավորներին և ճնշվածներին կազմակերպեր պայքարի համար՝ վերջնականապես ոչնչացնելու ամեն և ամեն տեսակ շահագործում և վարձու ստրկության լուծ։*

Չկա և երբեք չի եղել այնպիսի գրականություն, որն իր երկերի թեմատիկայի հիմքում դներ բանվոր դասակարգի ու գյուղացիության կյանքը և պայքարը հանուն սոցիալիզմի։ Չկա ոչ մի տեղ, աշխարհի ոչ մի երկրում, այնպիսի գրականություն, որը պաշտպաներ և ամուր պահեր բոլոր ազգերի աշխատավորների իրավահավասարությունը, պաշտպաներ կանանց իրավահավասարությունը։ Չկա և չի կարող լինել բուրժուական երկրում այնպիսի գրականություն, որը հետևողականորեն ջախջախեր ամեն տեսակ խավարամոլություն, ամեն տեսակ միստիկա, ամեն տեսակ տերտերականություն և սատանայապաշտություն, ինչպես այդ անում է մեր գրականությունը։

Այսպիսի առաջավոր, գաղափարական, ռևոլուցիոն գրականություն կարող էր դառնալ և դարձավ իրականում միայն սովետական գրականությունը՝ կազմված մեր սոցիալիստական շինարարության մասից և արյունից։ (ՄԱՓԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ)»։...

«*... Մեր սովետական գրողն իր գեղարվեստական երկերի նյութը, թեմատիկան, պատկերները, գեղարվեստական բառն ու խոսքը վերցնում է Դնեպրոստրոյի, Մագնիտոստրոյի մարդկանց փորձից։ Մեր սովետական գրողն իր նյութը վերցնում է չելյուսկինցիների հերոսական էպոպեայից, մեր կոլտնտեսությունների փորձից, մեր երկրի բոլոր անկյուններում եռացող ստեղծագործական գործունեությունից։*

Մեր երկրում գրական երկերի գլխավոր հերոսները՝ նոր կյանքի ակտիվ կառուցողներն են— բանվորներն ու բանվորուհիները, կոլխոզնիկներն ու կոլխոզնիկուհիները, պարտիականները, առաջավորները, ինժեներները, կոմերիտականները, պիոներները: Ահա մեր սովետական գրականության հիմնական տիպերն ու հիմնական հերոսները: Մեր գրականությունը հագեցած է էներգիայով և հերոսիկայով: Նա օպտիմիստական է, ընդ որում՝ օպտիմիստական է ոչ թե ինչ որ զոլոգիական «ներքին» զգացողությամբ: Նա օպտիմիստական է ըստ էության, որովհետև նա հանդիսանում է բարձրացող դասակարգի՝ պրոլետարիատի, միակ առաջադիմական և առաջավոր դասակարգի գրականությունը: Մեր սովետական գրականությունը նրանով է ուժեղ, որ ծառայում է նոր գործի՝ սոցիալիստական շինարարության գործին:

Ընկեր Ստալինը մեր գրողներին անվանել է մարդկային հոգու ճարտարապետներ: Ի՞նչ է նշանակում այդ: Ի՞նչ պարտականություններ է դնում ձեզ վրա այդ կոչումը:

Այդ նշանակում է, նախ և առաջ, ճանաչել կյանքը՝ կարողանալու համար ճշմարտացի պատկերել այն գեղարվեստական երկերում, պատկերել ոչ թե սխոլաստիկորեն, ոչ թե մեռած, ոչ թե որպես «օբեկտիվ ռեալականություն», այլ պատկերել իրականությունն իր revolutsiyon զարգացման մեջ:

Միաժամանակ, գեղարվեստական պատկերման ճշմարտացիությունը և պատմական կոնկրետությունը պետք է զուգորդվի աշխատավոր մարդկանց սոցիալիզմի ոգով գաղափարապես վերափոխելու և դաստիարակելու խնդրին: Գեղարվեստական գրականության և գրական քննադատության այսպիսի մեթոդն այն է, որը մենք անվանում ենք սոցիալիստական ռեալիզմի մեթոդ:

Մեր սովետական գրականությունը չի վախենում տենդենցիոզության մեջ մեղադրվելուց: Այո՛, սովետական գրականությունը տենդենցիոզ է, որովհետև դասակարգային պայքարի էպոխայում չկա և չի կարող լինել ոչ-դասակարգային, ոչ-տենդենցիոզ, իբր թե՝ ապոլիտիկ գրականություն: (ԾԱՓԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ):

Ես էլ կարծում եմ, որ սովետական գրողներից յուրաքանչյուրը կարող է ասել որևէ բթամիտ բուրժուայի, որևէ ֆիլիստերի, որևէ բուրժուական գրողի՝ ով որ խոսի մեր գրականության տենդենցիոզության մասին.— «Այո, մեր սովետական գրականությունը

տենդենցիոզ է, և մենք հպարտանում ենք նրա տենդենցիոզությամբ, որովհետև մեր տենդենցն է՝ ազատել աշխատավորությանը— ողջ մարդկությանը՝ կապիտալիստական ստրկության լծից» (ՏԱՓԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ):

Լինել մարդկային հոգու ճարտարապետ՝ այդ նշանակում է զույգ ոտքով կանգնել ռեալ կյանքի հողի վրա: Իսկ դա իր հերթին նշանակում է խզումն հին տիպի ռոմանտիզմի հետ, որը պատկերում էր գոյություն չունեցող կյանք և գոյություն չունեցող հերոսներ՝ կյանքի հակասություններից և ճնշումից ընթերցողներին տանելով անիրական աշխարհը, ուտոպիաների աշխարհը: Մեր պրականության համար, որը զույգ ոտքերով կանգնած է սոցիալիստական ամուր հիմքի վրա, խորթ չի կարող լինել ռոմանտիկան, բայց նոր տիպի ռոմանտիկան, ռևոլուցիոն ռոմանտիկան:

Մենք ասում ենք, որ սոցիալիստական ռեալիզմը հանդիսանում է սովետական գեղարվեստական գրականության և գրական քննադատության հիմնական մեթոդը, իսկ դա ենթադրում է, որ ռևոլուցիոն ռոմանտիզմը պետք է մտնի գրական ստեղծագործության մեջ որպես բաղկացուցիչ մաս, որովհետև մեր պարտիայի ողջ կյանքը, բանվոր դասակարգի ողջ կյանքն ու պայքարը կայանում է ամենանախնատ, ամենապզտն պրակտիկ աշխատանքը մեծ հերոիկայի և վիթխարի հեռանկարների հետ զուգորդելու մեջ: Մեր պարտիան միշտ նրանով է եղել ուժեղ, որ նա հույժ գործնականությունն ու պրակտիկությունը միացրել և միացնում է լայն հեռանկարի հետ, պեպի առաջ մշտական ձգտման հետ, կոմունիստական հասարակության կառուցման համար մղվող պայքարի հետ: Սովետական գրականությունը պետք է կարողանա ցույց տալ մեր հերոսներին, պետք է կարողանա նայել մեր վաղվան: Դա ուտոպիա չի լինի, որովհետև մեր վաղը նախապատրաստվում է գիտակցական պլանային աշխատանքով՝ արդեն այսօր»:...

«Լինել մարդկային հոգու ճարտարապետներ՝ այդ նշանակում է ակտիվորեն պայքարել հանուն լեզվի կուլտուրայի, հանուն երկի որակի: Մեր գրականությունը դեռ չի համապատասխանում մեր էպոխայի պահանջներին: Մեր գրականության թուլությունները արտացոլում են գիտակցության հետ ընկնելն էկոնոմիկայից, որից, հասկանալի է, որ ազատ չեն նաև մեր գրողները: Ահա թե ինչու, ինքն իր վրա և իրեն սոցիալիզմի ոգով գաղափարապես զի-

նելու վրա անխոնջ աշխատելը հանդիսանում է այն անվիճելի պայմանը, առանց որի սովետական գրողները չեն կարողանա վերափոխել իրենց ընթերցողների գիտակցությունը և դրանով դառնալ մարդկային հոգու ճարտարապետներ»:...

«... Սովետական գրողներն ունեն բոլոր պայմանները՝ տալու համար, ինչպես ասում են՝ էպոխայի հետ համահնչյուն երկեր, տալու համար այնպիսի երկեր, որոնցով սովորեին ժամանակակիցները և որոնք լինեին ապագա սերունդների հպարտությունը»...

«Ստեղծեցե՛ք բարձր վարպետություն ունեցող, գաղափարական և գեղարվեստական բարձր բովանդակություն ունեցող երկեր:

Եղե՛ք մարդկանց գիտակցությունը սոցիալիզմի ոգով վերափոխելու ամենաակտիվ կազմակերպիչները:

Եղե՛ք անդասակարգ սոցիալիստական հասարակության համար մարտնչողների առաջավոր դիրքերում»: (ԲՈՒՌՆ ԾԱՓԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ)»:

А. Жданов, Советская литература—самая идейная, самая передовая литература в мире, Госиздат „Худ. лит.". 1934, *էջ 7—8, 12—14, 15, 16:*

Մաքսիմ Գորկին զեկուցում է «Սովետական գրականության մասին»:

Մ. Գորկու զեկուցումից.

«Երբեմն, հին ժամանակներում, աշխատավորների բանավոր գեղարվեստական ստեղծագործությունը հանդիսանում էր նրանց փորձի միակ կազմակերպիչը, գաղափարների մարմնավորումը պատկերների մեջ և կոլեկտիվի աշխատանքային էներգիա առաջացնողը: Այդ պետք է հասկանանք մենք: Մեր երկրում նպատակ է դրված համաչափ կուլտուրական դաստիարակություն տալ բոլոր անհատներին, հասարակության անդամներին համաչափորեն ծանոթացնել աշխատանքի հաջողություններին ու նվաճումներին, ձգտելով վերածել մարդկանց աշխատանքը բնության ուժերի կառավարման արվեստի: Մեզ ավելի կամ պակաս չափով հայտնի է մարդկանց տնտեսական և դրանով իսկ քաղաքական շերտավորման պրոցեսը, աշխատանքի մարդկանց բանականության ազատ զարգացման իրավունքի բռնագրավման պրոցեսը: Երբ աշխարհաճանաչումը քրմերի գործը դարձավ, նրանք կարող էին այդ աշ-

խարհաճանաչման ամրացնել, միմիայն մետաֆիզիկորեն բացատրելով երևույթներն ու բնության տարերային ուժերի դիմադրությունն աշխատանքի մարդկանց նպատակներին և էներգիային։ Աշխարհաճանաչման աշխատանքից միլիոնավոր մարդկանց բացյառելու, հեռացնելու այդ հանցագործ պրոցեսը, որն սկսվել է հին ժամանակներում և շարունակվում է մինչև մեր օրերը, հանգեց այն բանին, որ ցեղի, ազգի, կրոնի գաղափարներով անջատված հարյուր միլիոնավոր մարդիկ մնացել են ամենախորը տգիտության, մտավոր սոսկալի կուրության վիճակում, ամեն տեսակ նախապաշարումների, անտիապաշտությունների և կանխակալ կարծիքների խավարում։ Կոմունիստ-լենինյանների պարտիան, Սոցիալիստական Սովետական Միության բանվորա-գյուղացիական իշխանությունը, ոչնչացնելով կապիտալիզմը ցարական Ռուսաստանի ամբողջ տարածության վրա, հանձնելով քաղաքական իշխանությունը բանվորների ու գյուղացիների ձեռքը, կազմակերպելով ազատ, անդասակարգ հասարակություն՝ իրենց խիզախ, իմաստուն, անդուլ աշխատանքի նպատակն են դրել՝ ազատագրել աշխատավոր մասսային կուլտուրայի կապիտալիստական զարգացման հին, իր դարն ապրած պատմության բազմադարյան ճրնշումից, մի կուլտուրա, որն այժմ բացահայտորեն դրսևորից իր բոլոր արատները և իր ստեղծագործական անզորությունը։ Այդ մեծ նպատակի բարձունքից մենք, Սովետական Միության ազնիվ դրածանագետներս, պետք է դիտենք, գնահատենք ու կազմակերպենք մեր գործունեությունը։

Մենք պետք է յուրացնենք, որ հենց մասսաների աշխատանքն է կուլտուրայի հիմնական կազմակերպիչը և բոլոր իդեաների ստեղծողը՝ իդեաների, որոնք դարերի ընթացքում նվաստացնում էին աշխատանքի նշանակությունը — մեր դիտելիքների այդ աղբյուրի վճռական նշանակությունը, և Մարքսի-Լենինի-Ստալինի այն իդեաների նշանակությունը, որոնք մեր ժամանակներում դաստիարակում են բոլոր երկրների պրոլետարների ռևոլյուցիոն իրավիպատակությունը և մեր երկրում աշխատանքը հագցնում են այն ուժի բարձրության, որը հանդիսանում է գիտության, արվեստի ստեղծագործության հիմքը։ Մեր աշխատանքի հաջողության համար մեզ անհրաժեշտ է հասկանալ, ղեկավարել այն փաստը, որ մեր հայրենիքում կիսապրոլետար բանվորների և պրիմիտիվ գյուղացիու-

Բյան սոցիալիստորեն կազմակերպվող աշխատանքը կարճ ժամանակամիջոցում՝ տասնվեց տարում, ստեղծեց վիթխարի արժեքներ և հիանալի կերպով զինվեց՝ Բշնամու հարձակումից պաշտպանվելու համար։ Այդ փաստի ճիշտ գնահատումը մեզ ցույց կտա ամբողջ աշխարհի պրոլետարիատին միացնող ուսմունքի կուլտուրական-revolutionն ուժը։

Մենք բոլորս՝ գրականագետներս, գործարանների բանվորները, կոլտնտեսականները, դեռևս վատ ենք աշխատում և չենք կարողանում դեռ ամբողջովին յուրացնել այն ամենը, ինչ ստեղծել ենք մենք և մեզ համար։ Մեր աշխատավոր մասսան դեռևս վատ է հասկանում, որ նա աշխատում է իր վրա և իր համար։ Այդ գիտակցությունն ամենուրեք առկայծում է, դեռ չի բոցավառվել, որպես հզոր ու բերկրալից կրակ։ Սակայն ոչինչ չի կարող բոցավառվել նախքան տաքության որոշ աստիճանի հասնելը, և ոչ ոք երբեք չի կարողացել այնքան հիանալի կերպով բարձրացնել աշխատանքային եռանդի ջերմաստիճանը, ինչպես այդ կարողանում է անել Վլադիմիր Լենինի հանճարով կազմակերպված պարտիան և այդ պարտիայի՝ մեզ ժամանակակից առաջնորդը։

Մեր գրքերում, որպես գլխավոր հերոս, մենք պետք է ընտրենք աշխատանքը, այսինքն՝ աշխատանքի պրոցեսներով կազմակերպվող մարդուն, որը մեզ մոտ գինվում է արդի տեխնիկայի ամբողջ կարողությամբ, այն մարդուն, որն իր հերթին կազմակերպում է աշխատանքը, դարձնելով վերջինս ավելի հեշտ, արդյունավետ, հասցնելով նրան արվեստի աստիճանին։ Մենք պետք է ստեղծենք ըմբռնել աշխատանքը, որպես ստեղծագործություն»։...

«Այնուհետև, ես անհրաժեշտ եմ համարում մատնանշել, որ սովետական գրականությունը միմիայն ռուսական լեզվով գրականություն չէ, դա համամիութենական գրականություն է։ Որովհետև եղբայրական ռեսպուբլիկաների գրականությունները տարբերվելով մեզնից միայն լեզվով, ապրում ու աշխատում են նույն այն գաղափարի բարերար ազդեցությամբ, որը միացնում է վապիտալիզմի կողմից անջատված աշխատավորական ամբողջ աշխարհը,— պարզ է, որ մենք իրավունք չունենք անտեսելու ազգային փոքրամասնությունների գրական ստեղծագործությունը, միայն այն պատճառով, որ մենք ավելի բազմաթիվ ենք»։

«... Ես միայն կասեմ, որ ամեն մի անաչառ գնահատողի հա-

մար միանգամայն պարզ է. մեր գրականությունն աբևմտյան գրականությանը գերազանցեց թեմանների նորությունով, և հիշեցնում եմ, որ մեր գրականագետներից շատերն Արևմուտքում ավելի բարձր են գնահատված, քան իրենց մոտ՝ հայրենիքում»...:

«Պրոլետարների պետությանը պետք է դաստիարակի հաղթական հիանալի «կուլտուրայի վարպետներ», «հոգիների ինժեներներ»: Այդ անհրաժեշտ է նրա համար, որ հնարավոր լինի բանվոր ժողովրդի ամբողջ մասսային վերադարձնել աշխարհում ամենաբնական նրանից խլված իրավունքը՝ զարգացնելու բանականությունը, տաղանդն ու ընդունակությունը:

Պրակտիկորեն գործադրելի այս նկատառումը պարտավորեցնում է մեզ՝ գրականագետներիս՝ մեր աշխատանքի և սոցիալական վարքագծի նկատմամբ խիստ պատասխանատվության անհրաժեշտության:

Այդ հանգամանքը մեզ դնում է ոչ միայն ռեալիստական գրականության համար տրոտիզիոն «աշխարհի և մարդկանց դատավորների», «կյանքի քննադատների» դիրքերում, այլև մեզ իրավունք է տալիս անմիջականորեն մասնակցելու նոր կյանքի շինարարությանը՝ «աշխարհի փոփոխման» պրոցեսում: Իրավունք ունենալն ամեն մի գրականագետի պետք է ներշնչի գիտակցություն, պարտավորության և պատասխանատվության ամբողջ գրականության համար, և այն բոլոր երևույթների համար, որոնք չպետք է լինեն նրա մեջ»:

M. Горький, О литературе, հրատ. „Советский писатель", 1937, էջ 462—463, 467, 472, 473:

Համագումարում զեկուցում է տրվում Սովետական Հայաստանի գրականության մասին:

Համագումարում ելույթներ են ունենում Ալ. Շիրվանզադեն, Ե. Չարենցը, Ն. Զարյանը:

Ալ. Շիրվանզադեի ելույթից.

«Ես պատրաստ եմ իմ վերջին, ո՛չ նախավերջին ուժերը նվիրել սոցիալիզմի կառուցման մեծ գործին»:

ՍՍՌՄ Սովետական Գրողների առաջին համագումարն ընդունում է բանաձև:

Համագումարի բաճածնե.

«Սովետական գրողների առաջին համամիութենական համագումարը, լսելով և քննելով Ա. Մ. Գորկու զեկուցումը՝ սովետական գրականության մասին, համագեկուցումներ՝ Ադրաինայի, Բելոռուսիայի, Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի, Տաջիկստանի, Թուրքմենիայի, Ուզբեկստանի և Թաթարիայի ինքնավար ռեսպուբլիկայի գրականությունների մասին և համագեկուցում՝ մանկական գրականության մասին, գտնում է, որ Սովետական Միության ժողովուրդների սովետական գեղարվեստական գրականությունը, հաղթական սոցիալիստական շինարարության և Սովետական Միության աշխատավորների ու պրոլետարիատի դասակարգային թշնամիների ջախջախման հետևանքով դարձել է սոցիալիստական կուլտուրայի և աշխատավոր մասսաներին սոցիալիզմի ոգով դաստիարակելու հզոր ուժ:

Հերոսական Համկոմկուսի Պարտիայի ղեկավարությամբ՝ ընկեր Ստալինի գլխավորությամբ և շնորհիվ պարտիայի ամենօրյա հոգության, Սովետական Միության բոլոր ժողովուրդների գրողներն ունեն իրենց առաջին համագումարը՝ իբրև պարտիայի և սովետական իշխանության շուրջը դաղափարապես, կազմակերպչորեն ու ստեղծագործորեն՝ գրողների միասնական միության մեջ միաձուլված կոլեկտիվ:

Համագումարը հավանություն է տալիս սովետական գրողների միության կազմկոմիտեի գործունեությանը, որն իրականացրեց սովետական գրողներին սովետական գրողների միության մեջ հաճախմբելու և նրանց առաջին համագումարը նախապատրաստելու խնդիրը:

Համագումարը մատնանշում է այդ գործում պրոլետարական մեծ գրող Մաքսիմ Գորկու ցույց տված աչքի ընկնող դերը:

Համագումարը հանձնարարում է սովետական գրողների միության ղեկավար մարմիններին, հաշվի առնելով համագումարում ձարդացված ղեկուցումները և տեղի ունեցած մտքերի փոխանակությունը, մշակել սովետական գրողներին՝ նրանց ստեղծագործական աշխատանքում՝ աջակցելու, սկսնակ երիտասարդ գրողներին օգնելու և գրողների կապն աշխատավոր մասսաների հետ ամրապնդելու գործնական միջոցառումներ, այն հաշվով, որպեսզի սովետական գրողների միության ամբողջ գործունեությունն ապա-

Հոյի ստեղծագործական աշխատանքի հետագա վերելքը սովետական պրակտիկայի բոլոր բնագավառներում և սոցիալիզմի ոգով համակված բարձր գեղարվեստական գրվածքների ստեղծումը»:

«Գրական թերթ», 5 սեպտեմբերի, 1934:

Օգոստոսի 23-ին

«Պրավդա»-ն առաջնորդող է նվիրում ՍՍՌՄ Սովետական Գրողների Համամիութենական առաջին համագումարին՝ «Բոլոր լեզուներով հնչում է սոցիալիզմի հաղթական երգը». առաջնորդողը սկսվում է Ս.լ. Շիրվանզադեի՝ Սովետական Գրողների Համամիութենական առաջին համագումարում արտասանած ճառով:

Առաջնորդողից.

«Ես 76 տարեկան եմ, բայց երբեք ինձ այնքան ազատ չեմ զգացել, այնքան երջանիկ, ինչպես վերջին տարիներս, ինձ երբեմն հարցնում են. ինչո՞ւ ես չեմ ծերանում:

Միամիտ հարց: Չեմ ծերանում, որովհետև ապրում ու ստեղծագործում եմ սովետական երկրում»:

Այս բառերով ավարտեց իր ելույթը համամիութենական համագումարում Հայաստանի սովետական գրող Ալեքսանդր Շիրվանզադեն: Այս բառերում արտացոլված է մեր մեծ ժամանակի յուրահատկությունը»:...

«Բազմալեզու, բազմազգի սովետական գրականությունը ներկայանում է այսօր նույնպես իղեպես միաձույլ ու միասնական, ինչպիսին է այդ գրականություն ստեղծող ժողովուրդների ուժեղ միասնությունը, ինչպես ուժեղ ու անխորտակելի է իմը՝ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միությունը»:...

«Պարծյալ սպասվում է պայքար, *դաժան պայքար կուլտուրայի աճման համար. մեր ժողովուրդների սովետական կուլտուրայի համար, նրան կապիտալիզմի և անցած շահագործող ֆորմացիաների դարավոր ինդոից մաքրելու համար: Բայց միթե՞ կարող է որևէ մեկը կանգնեցնել սոցալիզմի հիանալի վազքը: Միթե՞ կարող է որևէ բնդամական ուժ կանգնեցնել մեր հերոսական ժողովուրդներին: Միթե՞ կան այնպիսի ամրոցներ՝ գիտության, տեխնիկայի, կուլտուրայի— որոնք չկարողանան նվաճել բոլշևիկները:*

Չկա այդպիսի ուժ, չկան այդպիսի ամրոցներ»:

„Правда", 23 օգոստոսի, 1934:

Սեպտեմբերի 21–ին

Պետական օպերայի դահլիճում տեղի է ունենում պարտիական, պրոֆմիութենական ակտիվի և կուլտուրական ֆրոնտի աշխատողների միացյալ հանդիսավոր նիստ՝ նվիրված Սովետական Գրողների Համամիութենական առաջին համագումարին։

Սեպտեմբերի 25–ին

Երևան է ժամանում ֆրանսիացի վիպասան և բանաստեղծ Ժան-Ռիշար Բլոկը։

Սեպտեմբերի 25–ին

Լենինականում կազմակերպվում է հանդիսավոր նիստ՝ նվիրված Սովետական Գրողների Համամիութենական առաջին համագումարին։

Հոկտեմբերի 6–ին

«Պրավդա»-ն անդրադառնում է ժրնեվում լույս տեսնող «Տրավայ» թերթում տպագրված Ա. Բեռնարի հոդվածին՝ նվիրված Սովետական Հայաստանի Գրողների առաջին համագումարին։

Հոկտեմբերի 11–ին

Երևան է ժամանում ակադեմիկոս Ի. Ի. Մեշչանինովը, ուսումնասիրելու Հայաստանում Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալ կազմակերպելու հարցը,

Հոկտեմբերի 13–ին

Երևանում կազմակերպվում է ռադիո-երեկո՝ նվիրված Ֆիզգուսու ծննդյան 1000-ամյակին։

Հոկտեմբերի 18–ին

Լենինականի Տեքստիլ գործարանի ակումբում Սովետական Գրողների Համամիութենական առաջին համագումարի արդյունքների մասին զեկուցում է տրվում տեքստիլի բանվորների համար։

Հոկտեմբերի 19–ին

«Հայաստանի պոեզիան» ժողովածուի թարգմանության աշխատանքները կազմակերպելու նպատակով, Երևան են ժամանում ռուս պոետ-թարգմանիչներ՝ Ա. Շիրվինսկին և Պ. Անտոկոլսկին։

Հոկտեմբերի 26-ին

Գրողների Տանը երեկո է կազմակերպվում նվիրված Վ. Բրյուսովի մահվան 10-ամյակին:

Վ. Բրյուսովի մահվան 10-ամյակի առնչությամբ Երևանի 4-րդ Անանուն փողոցը վերանվանվում է «Վալերի Բրյուսովի» փողոց:

Նոյեմբերի 4-ին

Պետթատրոնում բեմադրվում է Դ. Դեմիրճյանի «Նապոլեոն Կորկոցյան» կոմեդիան:

Նոյեմբերի 5-ին

Գրողների Տանը տեղի է ունենում դրական երեկո, նվիրված «Հայաստանի պոեզիան» ժողովածուի թարգմանչական աշխատանքներին:

Նոյեմբերի 7-ին

«Գրական թերթ»-ում լույս է տեսնում Ալ. Շիրվանզադեի «Վերջին շատրվանը» կինո լիբրետոն:

Նոյեմբերի 10-ին

Հայաստանի խորհրդային Գրողների Միության Վարչության, Երևաբեգծի 5-րդ Հանդույցի Քաղաքժնի և «Գրական թերթ»-ի խմբագրության նախաձեռնությամբ սկսվում է գրողների ռեյդը Երևանբեգծում:

Նոյեմբերի 13-ին

Երևան է ժամանում ռուբինական բանաստեղծ Միկոլա Բաժանը:

Նոյեմբեր

Քաղխորհրդի որոշմամբ Երևանի նորաբաց փողոցը կոչվում է Հ. Հակոբյանի անվամբ, նրա գրական գործունեության 40-ամյակի կապակցությամբ:

Դեկտեմբերի 1-ին

Ժողովրդի Բշնամիների ձեռքով չարաննդորեն սպանվից բոլշևիկյան պարտիայի և Սովետական պետության ականավոր գործիչ Սերգեյ Միրոնովիչ Կիրովը:

Դեկտեմբերի 10-ին

«Գրական թերթ»-ում հրապարակվում է ՍՍՌՄ ժողկոմատների որոշումը «ՍՍՌՄ գրական ֆոնդի մասին»։

Որոշումից.

«1. ՍՍՌՄ Սովետական Գրողների Միության կից կազմակերպել գրականության աշխատողներին օգնելու հատուկ կազմակերպություն՝ «ՍՍՌՄ գրական ֆոնդ» անունով։

2. «ՍՍՌՄ Գրական ֆոնդի» հիմնական նպատակն է օժանդակության ցույց տալ ՍՍՌՄ-ի Սովետական Գրողների Միության անդամներին, բարելավելով նրանց կուլտուրական-կենցաղային սպասարկումն ու նյութական դրությունը, ինչպես և օգնության ցույց տալ աճող գրական կադրերին, ստեղծելով նրանց համար անհրաժեշտ նյութական կենցաղային պայմաններ։

3. «ՍՍՌՄ գրական ֆոնդի» գործունեությունը ղեկավարում է նրա վարչությունը, որին նշանակում է ՍՍՌՄ-ի Սովետական Գրողների Միության վարչությունը»։

«Գրական թերթ», 10 դեկտեմբերի, 1934։

Դեկտեմբերի 13-ին

Երևանի Գրողների Տանը կազմակերպվում է դիսպուտ Դ. Դեմիրճյանի «Նապոլեոն Կորկոտյան» կոմեդիայի և նրա բեմադրության շուրջը։

Զեկուցում է Ս. Հարությունյանը։

Վերջում ընդարձակ ելույթ է ունենում Դ. Դեմիրճյանը։

Դեկտեմբերի 20-ին

Վախճանվեց Նիկոլայ Յակովլևիչ Մառը։

Դեկտեմբերի 25-ին

Խորհուրդների Համահայաստանյան համագումարի պատգամավորներ են ընտրվում գրողներ Ալ. Շիրվանզադեն, Ե. Չարենցը և Ա. Վշտունին։

Դեկտեմբերի 27-ին

Կուլտուրայի Տանը Հայկինոյի նախաձեռնությամբ կազմակերպվում է «Զապաև» կինոնկարին նվիրված երեկո։

«Որպես առաջին հնգամյա պլանի կատարման արդյունք, մեր երկրում կառուցված է սոցիալիստական էկոնոմիկայի անսասան հիմքը — առաջնակարգ սոցիալիստական ծանր ինդուստրիա և մեքենայացված կոլեկտիվ հողագործություն, ոչնչացված է գործազրկությունը, ոչնչացված է մարդու շահագործումը մարդու կողմից, պայմաններ են ստեղված մեր հայրենիքի աշխատավորության նյութական ու կուլտուրական դրության անընդհատ բարելավման համար։

Այս վիճակի հաջողությունները մեր երկրի բանվոր դասակարգը, կոլխոզնիկները և բոլոր աշխատավորները ձեռք են բերել շնորհիվ պարտիայի ու կառավարության համարձակ ուղղությունն և իմաստուն քաղաքականության»։

«Համ(բ)Կ Պատմություն Համառոտ դասընթաց»։

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Ջութաձո

1. Ե. Չարենց.— Գիրք Ճանապարհի, Պետհրատ։
2. Գ. Գեմիրճյան.— Պուլպուլ մուկիկը, Պետհրատ, Երևան։
3. Ս. Տարոնցի.— Դարերի լեգենդը, Պետհրատ, Երևան։
4. Թ. Հուրյան.— Հատակ, Ազերնեշեր, Բաքու։
5. Ազատվի.— Մանթաշ, Պետհրատ, Երևան։
6. Խ. Դաշտենց.— Գարնանային երգեր, Պետհրատ, Երևան։
7. Հ. Հայրապետյան.— Կոլխոզի համար, Պետհրատ, Երևան։

Աւձակ

1. Ալ. Շիրվանզադե.— Վարդան Ահրումյան, Պետհրատ, Երևան։
2. Սիրաս.— Կյանքի կարոտը, Պետհրատ, Երևան։
3. Սիրաս.— Մամեն ու Աշեն, Պետհրատ, Երևան։
4. Հր. Քոչար.— Վահան Վարդյան, Պետհրատ, Երևան։
5. Սրաբս.— Կոմերիատուհու նամակները, Պետհրատ, Երևան։
6. Գ. Հովնան.— Էմմա, Պետհրատ, Երևան։

Դրամատուրգիա

1. Ալ. Շիրվանզադե.— Մորգանի խնամին, Պետհրատ, Երևան։

Ժողովածուներ

1. «Աշխարհի պոետները Լենինի մասին», Պետհրատ, Երևան:
2. «Ֆիրդուսու 1000-ամյակին», ժողովածու, Պետհրատ, Երևան:

Գրականության պատմություն, տեսություն և ճննադատություն

1. Արտ. Կարինյան.— Երկերի ժողովածու, 1-ին հատ., Պետհրատ, Երևան:
2. Ս. Հարությունյան.— Գ. Սունդուկյանի կյանքն ու ստեղծագործությունը, Պետհրատ, Երևան:
3. Ս. Մելիքսեթյան. —Երևանի Պետական թատրոնը, Պետհրատ, Երևան:
4. Գ. Հովնան.— Ստեփան Շահումյանը և Մաքսիմ Գորկին, Պետհրատ, Երևան:

Թարգմանություններ

1. Ֆիրդուսի.— Ռուստամ և Սոհրապ, Պետհրատ, Երևան:
2. Ջոնաթան Սվիֆտ.— Գուլիվերի ճանապարհորդությունը, Պետհրատ, Երևան:
3. Ն. Գոգոլ.— Տարաս Բուլբա, Պետհրատ, Երևան:
4. Ա. Չեխով.— Ընտիր պատմվածքներ, Պետհրատ, Երևան:
5. Մ. Գորկի.— Ընտիր երկեր, 2-րդ հատ., Պետհրատ, Երևան:
6. Մ. Գորկի.— Բանաստեղծություններ և լեգենդներ, Պետհրատ, Երևան:
7. Մ. Շոլոխով.— Հերկած խոպան, Պետհրատ, Երևան:
8. Ա. Ֆադեև.— Ջարնջախտամ, Պետհրատ, Երևան:
9. «Լենինը և Արվեստը», Պետհրատ, Երևան:
10. Մ. Գորկի.— Խորհրդային գրականության մասին, Պետհրատ, Երևան:

1935

«Ժողովրդական մասսաների նյութական դրության և կուլտուրական զարգացման վերելքի մեջ Երևան եկավ մեր սովետական ռեալության ուժը, հզորությունը, անպարտելիությունը: Ռևոլու-

գիտնների անցյալում կրթանվել են նրանից, որ նրանք, ժողովրդին ազատություն տալով, հնարավորություն չէին ունենում միաժամանակ նրան տալու նյութական և կուլտուրական դրության լուրջ բարելավում: Այս էր նրանց հիմնական թուլությունը: Մեր հեղուկյան մյուս բոլոր հեղուցիաներից տարբերվում է նրանով, որ նա ժողովրդին տվեց ո՛չ միայն ազատություն ցարիզմից, կապիտալիզմից, այլև նրա նյութական և կուլտուրական դրության արմատական բարելավում: Այս է մեր հեղուցիայի ուժն ու անպարտելիությունը»:

«Համ(բ)Կ պատմություն Համառոտ դասընթաց».

Հունվարի 8-ին

Կուլտուրայի Տանը տեղի է ունենում հանդիսավոր երեկո՝ նվիրված վ. Տերյանի ծննդյան 50 և մահվան 15-ամյա տարելիցին:

Հունվարի 10-ին

Նշվում է սովետական կինոյի 15-ամյակը:

Ընկեր Ի. Վ. Ստալինի ողջույնը Սոյուզկինոյին.

«Ողջույն և լավագույն բարեմաղթություններ սովետական կինեմատոգրաֆիայի աշխատողներին— նրա փառապանծ 15-ամյակի օրը:

Կինոն Սովետական իշխանության ձեռքում հսկայական, անգնահատելի ուժ է ներկայացնում:

Ունենալով մասսաների վրա հոգևոր ազդեցություն գործելու բացառիկ հնարավորություններ, կինոն օգնում է բանվոր դասակարգին և նրա պարտիային— դաստիարակելու աշխատավորներին սոցիալիզմի ոգով, մասսաներին պայքարի կազմակերպելու սոցիալիզմի համար, բարձրացնելու նրանց կուլտուրական և քաղաքական մարտունակությունը:

Սովետական իշխանությունը ձեզանից սպասում է նորանոր հաջողություններ և այնպիսի նոր ֆիլմեր, որոնք «Զապաևի» նման փառաբանեն Սովետական Միության բանվորների ու գյուղացինների պատմական գործերի և իշխանության համար նրանց մղած պայքարի վեհությունը, որոնք մոբիլիզացիայի ենթարկեն նոր

խնդիրներ իրագործելու համար և հիշեցնեն սոցիալիստական շինարարության թե՛ դժվարությունները, թե՛ նվաճումները։

Սովետական իշխանությունը ձեզանից սպասում է, որ ձեր վարպետները խիղախորեն կթափանցեն արվեստների մեջ «ամենակարևոր» (Լենին) և ամենամասսայական արվեստի — կինոյի նորանոր բնագավառները»։

Հունվարի 14-ին

Գրողների Տանը տեղի է ունենում խորհրդային գրողների, կերպարվեստի, երաժշտության և թատերական արվեստի ներկայացուցիչների հանդիպումը ամերիկյան 20-ի պատվիրակներ Պ. Սեյջանի և Օ. Սարյանի հետ։

Հունվարի 22-ին

Գրողների Տանը տեղի է ունենում գրողների և արվեստագետների հանդիպում 2-րդ Գեոթեատրոնի արտիստների հետ։

Հունվարի 25-ին

Վախճանվեց Վալերիան Վլադիմիրովիչ Կույբիշևը։

Փետրվարի 11-ին

Հարվածային կոլտնտեսականների համամիութենական 2-րդ համագումարի բացումը։

Մարտի 7-ին

Մ. Գորկու ճառը Սովետական Գրողների վարչության պլենումում։

Մ. Գորկու ճառից.

«Իրականությունը աչքի չի զարնվում, սակայն մեզ անհրաժեշտ է պիտենալ ոչ միայն երկու իրականություն՝ անցյալը և ներկան, այն, որի ստեղծմանը մենք ունենք որոշ մասնակցություն։ Մեզ անհրաժեշտ է պիտենալ նաև երրորդ իրականությունը՝ ապագայի իրականությունը։ Այս խոսքերը երրորդ իրականության մասին արտաբերում եմ ոչ հանուն սրամտության, ամենևին ո՛չ։ Ես այն զգում եմ, որպես վճռական հրամանի, որպես դարաշրջանի ուղղության հրամանի։ Մենք պետք է այս երրորդ իրականությունը

հենց այժմ գործածության մեջ դնենք, պետք է պատկերել այն. առանց նրան մենք չենք հասկանա, թե որն է սոցիալիստական ռեալիզմի մեթոդը»։

М. Горький, О литературе, հրատ. „Советский писатель", 1937, էջ 499։

Մարտի 10-ին

Գրողների Տանը տեղի է ունենում Հայաստանի ԼԳ Միության հանդիսավոր նիստը, նվիրված սովետական կինոյի 15-ամյակին։

Մարտի 11-ին

Գրողների Տանը, Միության վարչության նիստում, ստեղծագործական հաշվետվության է տալիս Ն. Զարյանը։

Մարտի 24-ին

Գրողների Տանը ՀԼԳ Միության քննադատական սեկցիան կազմակերպում է երեկո՝ նվիրված Մ. Մեծարենցի արվեստին։

Մարտի 30-ին

Վախճանվեց երաժշտագետ Ռոմանոս Մելիքյանը։

Մարտի 30-ին

Գրողների Տանը քննության է առնվում Ս. Տարոնցու «Դարերի լեգենդը» ժողովածուն։

Ապրիլի 12-ին

Գրողների Տանը Ադրբեջանում սովետական կարգերի հաստատման 15-ամյակի կապակցությամբ կազմակերպվում է երեկո՝ նվիրված Ադրբեջանի սովետական գրականությանը։

Ապրիլի 14-ին

Նշվում է Վ. Մայակովսկու մահվան 5-րդ տարեդարձը։

Ընկեր Ի. Վ. Ստալինը Վ. Մայակովսկու մասին.

«Մայակովսկին եղել է և մնում է մեր սովետական էպոխայի լավագույն, տաղանդավոր բանաստեղծը»։

Մայիսի 4-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի ճառը Կրեմլում՝ Կարմիր Բանակի ակադեմիականների ավարտման առթիվ կազմակերպված հանդեսին։

Ի. Վ. Ստալինի ճառից.

«... Պետք է, վերջապես, հասկանալ, որ աշխարհում գոյություն ունեցող բոլոր արժեքավոր կապիտալներից ամենաարժեքավորը ու ամենավճռական կապիտալը մարդիկ են, կադրերը»։

Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը. Փաղդրատ, 1940, էջ 600։

Մայիսի 12-ին

Մոսկվայում ՍԳ Միությունը կազմակերպում է ռուս և հայ գրողների հանդիպման երեկո։

Ողջույնի խոսք է ասում Վ. Կիրպոտինը։

Մայիսի 13-ին

Հայ գրողների պատվիրակությանն այցելում է Մոսկվայի «Շարիկոպոդշիպնիկ» գործարանը։

Մայիսի 13-ին

Երիտասարդ գրողների ակումբում Սա. Զորյանը զեկուցում է «Լեզուն մեր երիտասարդ գրողների երկերում» նյութի մասին։

Մայիս

ՀԽԳ Միության պատվիրակությանը մեկնում է Լենինգրադ։ „Литературный Ленинград“-ի թղթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ Ն. Տիխոնովն ասում է. «Բանվորների և գյուղացիների իշխանության 15 տարում Սովետական Հայաստանը դարձավ բարգավաճ, հարուստ երկիր։ Նա նոր ձևով են հնչում այսօր հայ բանաստեղծների ձայները»։...

«Սովետական Հայաստանի պոեզիան ես համարում եմ նշանակալից ու հետաքրքրական բանաստեղծական երևույթներից մեկը։...

Ես ուրախությամբ ենք մենք դիմավորում մեր հայ բարեկամներին Լենինի քաղաքում։ Ուրախությամբ մենք կլսենք նրանց ձայները մեր տանը, որը կրում է ռևոլյուցիայի բանաստեղծի անունը։

«Հայ պոեզիայի լավագույն երկերը, սկսած հին ժամանակներից մինչև ժամանակակից բանաստեղծների ստեղծագործությունը, հավաքվելու են «Հայաստանի պոեզիան» անթոլոգիայի մեջ։...

Սովետական Հայաստանի բանաստեղծներին ընկերական ջերմ ողջույն»։

«Գրական թերթ» № 12, 1931 թ.

Հունիսի 1-ին

Գրողների Տանը Ս. Հարությունյանը զեկուցում է «Պուշկինի 100-ամյա կյանքը հայ գրականության մեջ» նյութի մասին։

Ելույթներ են ունենում՝ Արազին, Խ. Սարգսյանը և ուրիշները։

Հունիսի 21-ին

Փարիզում բացվում է Կուլտուրայի պաշտպանության Համաշխարհային կոնգրեսը։

Կոնգրեսին մասնակցում է սովետական պատվիրակությունը։

Հունիսի 23-ին

Ռ. Ռոլլանը ժամանում է Մոսկվա։

Հունիսի 28-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինը ընդունում է Ռ. Ռոլլանին։

Հունիսի 29-ին

Ռ. Ռոլլանը հանդիպում է ունենում Մ. Գորկու հետ։

Հուլիսի 8-ին

Գրողների Միության բրիգադան՝ Ստ. Զորյան, Ն. Զարյան, Եղ. Սարգսյան, Գ. Սարյան մեկնում է Զանգեզուրի շրջանը։

Հուլիսի 15-ին

«Իզվեստիա»-յում տպագրվում է Մ. Գորկու «Կուլտուրաների մասին» հոդվածը։

Մ. Գորկու հոդվածից.

«Ֆաշիզմը ծնունդ է բուրժուական կուլտուրայի, որն արդեն դատապարտված է նեխման և անկման վիճակում։ Ֆաշիզմը նրա ճակատագրական ուռուցքն է. ֆաշիզմի տեսաբանները և պրակտիկները արկածախնդիրներ են, որոնց իր միջավայրից առաջ է մղել բուրժուազիան։ Իտալիայում, Գերմանիայում բուրժուազիան քաղաքական և ֆիզիկական իշխանությունը հանձնել է ֆաշիստների ձեռքը, հրամայելով նրանց համարյա նույն մաքիավելյական-

հիմքակումով, ինչպես իտալական քաղաքների միջնադարյան բուրժուազիան հրամայում էր կոնդոտիերներին։ Նա բավարարված դիտում և խրախուսում է ոչ միայն ֆաշիստների կողմից պրոլետարներին ոչնչացնելը, այլ և թույլատրում է հետապնդել և դուրս շպրտել հայրենիքի սահմաններից գրականագետներին, այլ խոսքով նրա մտավոր ուժի ներկայացուցիչներին, որոնցով նա նորերս հպարտանում էր և պարծենում»։

М. Горький, О литературе, հրատ. «Советский писатель», *1937, էջ 413։*

Հուլիսի 21-ին

Մոսկվայից մեկնում է Ռ. Ռոլլանը։

Ռ. Ռոլլանի Ի. Վ. Ստալինին ուղղած նամակից

«Ես մեկնում եմ այն համոզմունքով, որը ես կանխազգում էի այստեղ գալով— որ միակ և իսկական համաշխարհային պրոգրեսը անխզելիորեն կապված է ՍՍՌՄ-ի ճակատագրի հետ»։...

Օգոստոսի 1-ին

ՀՍԽՀ Ժողկոմխորհը Հայաստանում սովետական կարգերի հաստատման 15-րդ տարեդարձի առնչությամբ հայտարարում է լավագույն արձակ և չափածո երկերի մրցանակաբաշխություն։

Օգոստոսի 7-ին

Վախճանվեց Ալեքսանդր Շիրվանզադեն։

Օգոստոսի 30-ին

Վախճանվեց Հանրի Բարբյուսը։

Ի. Վ. Ստալինի հեռագիրը.

«Փարիզ, «Յումանիտե»-ին, Կաշենին, Թորեզին, Կուտյուրիեին, պատճենը՝ Մոսկվա, «Պրավդա»-յին

«Ձեզ հետ միասին վշտացած եմ մեր բարեկամի, Ֆրանսիայի բանվոր դասակարգի բարեկամի, ֆրանսիական ժողովրդի արժանավոր զավակի, բոլոր երկրների աշխատավորների բարեկամի, իմպերիալիստական պատերազմի ու ֆաշիզմի դեմ աշխատավորների միասնական ճակատի մունետիկի— ընկեր Հանրի Բարբյուսի մահվան առթիվ։

Թող նրա կյանքը, նրա պայքարը, նրա իղձերն ու հետանկարները բոլոր երկրների աշխատավորության երիտասարդ սերնդի համար օրինակ ծառայեն կապիտալիստական ստրկությունից մարդկության ազատագրելու գործում»:

Սեպտեմբերի 27-ին

Հ. Ս. Գ. Միության անդամները մեկնում են զանազան վայրեր Մ. Գորկու նամբապրության լույս տեսնող «Աշխարհի օրը» (սեպտեմբերի 27-ը) խորագրով ժողովածուի համար նյութեր հավաքելու:

Հոկտեմբերի 1-ին

ՍՍՌՄ կենտգործկոմի Նախագահության որոշումը Նիկոլայ Օստրովսկուն Լենինի շքանշանով պարգևատրելու մասին:

«Իզվեստիա»-յում հրապարակվում է Ի. Վ. Ստալինին ուղղված Ն. Ա. Օստրովսկու նամակը:

Ն. Ա. Օստրովսկու նամակը.

«Թանկագին, սիրելի ընկեր Ստալինին.

Ես ուզում եմ Ձեզ, ղեկավարիդ և ուսուցչիդ, ինձ համար ամենաթանկագին մարդուն, ասել այս մի քանի բոցաշունչ, ողջ սրտից բխած խոսքերը:

*Կառավարությունն ինձ պարգևատրեց Լենինի շքանշանով: Դա դեռ ապագան պարգևն է: Ինձ պատիվ է Լենինյան կոմերիտմիությունը՝ պարտիայի հավատարիմ օգնականը, և քանի բարե

Հոկտեմբերի 12-ին

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 15-ամյակի կապակցությամբ Երևան է ժամանում Ադրբեջանի ՍԳ Միության պատգամավորությունը։

Հոկտեմբերի 15-ին

Թիֆլիսի Գրողների Պալատում տեղի է ունենում ՎՍԳՄ Հայկական սեկցիայի ընդհանուր ժողովը։

Օրակարգ.

Թիֆլիսում Հայկական կուլտուրայի տուն կազմակերպելու հարցը և Հայկական սեկցիայի աշխատանքի մասին Վրաստանի Կ(բ)Պ Կենտկոմի որոշման ուսումնասիրությունը։

Հոկտեմբերի 22-ին

Փարիզում վախճանվեց Կոմիտասը։

Նոյեմբերի 17-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի ճառը ստախանովականների առաջին համամիութենական խորհրդակցությանը։

Ի. Վ. Ստալինի ճառից.

«... Ստախանովյան շարժումը բանվորների ու բանվորուհիների մի այնպիսի շարժում է, որ իրեն նպատակ է դնում հաղթահարել տեխնիկական այժմյան նորմաները, հաղթահարել գոյություն ունեցող նախագծային կարողությունները, հաղթահարել գոյություն ունեցող արտադրական պլաններն ու հաշվեկշիռները։ Հաղթահարել, որովհետև դրանք, հենց այդ նորմաներն արդեն հնացել են մեր օրերի համար, մեր նոր մարդկանց համար։ Այդ շարժումը խորտակում է տեխնիկայի վերաբերյալ հին հայացքները, խորտակում է տեխնիկական հին նորմաները, նախագծային հին կարողությունները, արտադրական հին պլանները և պահանջում է նոր, ավելի բարձր տեխնիկական նորմաներ, նախագծային կարողություններ, արտադրական պլաններ ստեղծել։ Նա կոչված է ռևոլուցիա կատարելու մեր արդյունաբերության մեջ։ Այդ իսկ պատճառով նա, ստախանովյան շարժումը, իր հիմքում խորապես ռևոլուցիոն է»...

«Ստալինյան շարժման երկրորդ աղբյուրը մեզ մոտ շահագործման բացակայությունն է հանդիսանում։ Մարդիկ մեզ մոտ ո՛չ թե շահագործողների համար, ո՛չ թե պորտաբույծներին հարստացնելու համար են աշխատում, այլ իրենց համար, իրենց պետականության համար, իրենց՝ սովետական հասարակության համար, որտեղ իշխանության գլուխ են կանգնած բանվոր. գյուղացի մարդիկ յավագույն մարդիկ։ Այդ պատճառով էլ աշխատանքը մեզ մոտ հասարակական նշանակություն ունի, այն հանդիսանում է պատվի ու փառքի գործ»...

Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, Պետհրատ, 1940, էջ 603, 609—610։

Նոյեմբերի 17-ին

Թիֆլիսի Սրվեսոի վարպետների ակումբում ՎՍԳՄ Հայկական սեկցիան կազմակերպում է հանդիսավոր երեկո՝ նվիրված Ա. Ի. Ցուցիկյանի ծննդյան 60-ամյակին։

Նոյեմբերի 28-ին

Երևան է ժամանում Մ. Ի. Կալինինը։

Նոյեմբերի 29-ին

Տոնվում է Հայաստանում սովետական կարգերի հաստատման 15-ամյակը։ Հայաստանի աշխատավորությունը այս առթիվ նամակ է ուղղում ընկեր Ի. Վ. Ստալինին։ Նամակը ստորագրում են Հայաստանի 150.000 բանվորներ, կոլտնտեսականներ և մտավորականներ։

Նամակից.

«Թանկագին ընկեր Ստալին, մեր կուրծքն ուռչում է ուրախությունից։ Չէ՞ որ երբեմնի դառն ժամանակներն անցել են, և եղավ այն «աղգային վերածնունդը», որը Դուք նախատեսում էիք։

Իրոք, նորից է ծնվել մեր երկիրը։ Չկա այլևս, մեր հիշողությունից հեռանում է փլատակների, մոխրի, սուվի ու հեծեծանքի Հայաստանը։ Սովետական Միության ժողովուրդների ընտանիքում բարձրացել է Սովետական Հայաստանն իր կենսուրախ ու երջանիկ ժողովրդով։

Եվ, իսկապես, ո՞ւր էինք և ո՞ւր հասանք այս 15 տարում»։

«Հայաստանը հետամնաց ագրարային երկիր էր՝ արդյունաբե-

688—28

ռուբլյան 7 տոկոս տեսակարար կշռով։ Այժմ նա արդյունաբերական-ագրարային երկիր է՝ արդյունաբերության 63 տոկոս տեսակարար կշռով։

Իսկ գյո՞ւղը, նա, որ լեռնալանջերին ու քարափների տակ ցնցոտիապատ կուչ էր եկել։

Մենք գյուղում դարեր շարունակ հող էինք երազում ու ապրում էինք աչքներս կարիքին։ Մենք պապենական արորով ու մանգաղով շահագործողների ու բնության լիակատար ձերին էինք և կակիծը արտներումս տեսնում էինք, թե ինչպես նրանք տանում էին մեր հալալ քրտինքի պտուղները։

Նախախորհրդային մեր կյանքը ճիշտ է նկարագրել հայ ժողովրդական պոետ Հ. Թումանյանը.

«Ձեռս պակաս, ուժս հատած,
Հազար ու մի ցավի տեր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ»։

Լենինի-Ստալինի մեծ պարտիան վերջ տվեց աշխատավոր գյուղացիության դարավոր աղքատությանը. մենք ազատագրվեցինք կուլակային ստրկության շղթաներից։ Բոլշևիկների հզոր պարտիայի ղեկավարությամբ մենք հիմնովին հեղաշրջեցինք մեր տնտեսության ձևը։

Սովետական Հայաստանի 80 տոկոսով կոլեկտիվացած գյուղատնտեսությունը հիմնվում է լայն մեքենայացման՝ տրակտորի, ավտոյի, կալսիչի ու կոմբայնի վրա։ Ստալինի անվան ջրանցքը, Սարդարաբադի, Շիրակի, Շահումյանի, Կարճեվանի և այլ ջրանցքները ոռոգում են անապատները և մերկ աղուտները վեր են ածում փարթամ այգիների ու բամբակի դաշտերի»։

Նոյեմբերի 29-ին

Պետական Օպերայի դահլիճում բացվում է ՀՍԽՀ կենտգործկոմի հոբելյանական սեսիան, նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 15-ամյակին։

Ներկա է լինում Մ. Ի. Կալինինը։

Դեկտեմբերի 1-ին

Երևանից Մոսկվա է մեկնում Մ. Ի. Կալինինը։

Դեկտեմբերի 3-ին

Գրողների Տանը կազմակերպվում է Հայաստանում սովետական կարգերի հաստատման 15-ամյակին նվիրված հանդիսավոր երեկո։

Մասնակցում են՝ Կ. Ֆեդինը, Ս. Սպասսկին, Է. Պոլոնսկայան (Լենինգրադ), Մ. Շահինյանը, Պ. Անտակոլսկին, Լ. Բախը (Մոսկվա), պոետ-ակադեմիկոս Պ. Տիչինան, Միկոլա Բաժանը (Ուկրաինա), Բրուկո (Բելոռուսիա), Կ. Լորդկիպանիձեն և Ա. Մաշաշվիլին (Վրաստան)։

Հյուրերին ողջունում են՝ Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Ե. Չարյանը, Գ. Սարյանը և ուրիշները։

Դեկտեմբերի 14-ին

«Լիտերատուրնայա գազետա»-յում տպագրվում է Մ. Գորկու «Նոր մարդու մասին» հոդվածը։

Մ. Գորկու հոդվածից.

«Ստախանովյան շարժումը մասսաների էներգիայի բոցեղեն պայթյուն է, պայթյուն կոչված աշխատանքի վիթխարի հաջողությունների, նրա կուլտուրական նշանակության գիտակցման, նրա ուժերի, որն ազատագրում է աշխատավոր մարդկությանը անցյալի ճնշումից։ Ստախանովյան շարժումը— սոցիալիստական մրցության է աշխատանքի մեջ, հասցված ավելի մեծ բարձրության։ Ինձ թվում է, որ «մրցություն» հասկացողությունը, այժմ լցվում է նոր բովանդակությամբ, և պետք է որ բավականաչափ բարենպաստ ազդեցություն ունենա կենցաղի վրա, օգնելու Սովետների Երկրի մարդկանց միմյանց մեջ հաստատելու նոր փոխհարաբերություններ»։

M. Горький, О литературе, Гослит. „Советский писатель", 1937, էջ 429։

Դեկտեմբերի 30-ին

Սովետական Հայաստանի պատվիրակության ընդունելությունը կրեմլում։

Ողջույնի խոսք է ասում ընկեր Վ. Մ. Մոլոտովը։

Վ. Մ. Մոլոտովի խոսքից.

«Մենք հիշում ենք, թե որքան չարիքներ ու դժվարություններ

ևն բաժին ընկել հայ ժողովրդին, որը մի շարք դարերի ընթացքում գտնվում էր օտար լծի տակ: Երկար տարիների ընթացքում, համարյա մի ամբողջ դար, ընդհատ մինչև սովետների իշխանության հաղթանակը, տաղանդավոր հայ ժողովուրդը գտնվում էր ռուսական ցարիզմի կրունկի տակ: Ծանր հիշողություններ ցարական ինքնակալության ճնշման մասին, այն ճնշման, որին ենթարկվում էր հայ ժողովուրդը ռուսական կալվածատերերի, կապիտալիստների, գեներալների, սերտաների ու չինովնիկների կողմից, դեռ երկար ժամանակ կապրեն Հայաստանի աշխատավորների մեջ»:...

«Մենք գիտենք, որ հայ ժողովրդի շարքերում վաղուց ի վեր հասունանում էին երազներ և ապրում հույսեր իր ազատագրման նկատմամբ: Հայ ժողովրդի շատ ռևոլյուցիոն մարտիկներ զոհել են իրենց, իրենց կյանքն են տվել՝ իրենց ժողովրդի համար ազգային-ազատ կյանք ձեռք բերելու համար:

Մենք գիտենք նաև, որ հայ ժողովրդի ազգային ազատագրման գաղափարը փորձում էին իրենց շահերի համար օգտագործել հայ բուրժուական նացիոնալիստները— դաշնակները, որոնք ռուսական մենշևիկների ու էսերների, ինչպես նաև մյուս ազգությունների մենշևիկների ու էսերների նման դավաճանական դեր խաղացին իրենց ժողովրդի վերաբերմամբ: Բայց դաշնակները դրանով հենց խայտառակության ու կործանման դատապարտեցին իրենց, բաժանելով՝ ինչպես այդ ցույց տվեց պրոլետարական ռևոլյուցիայի փորձը՝ բուրժուազիայի բոլոր ու ամեն տեսակի գործակալների ճակատագիրը, լինեին դրանք ռուսական, հայկական, վրացական, թուրքական, ուկրաինական կամ որևէ այլ բուրժուա-

գիա: Հենց այդ է նրանց ճանապարհը»:...

«Ո՞ւմ համար այժմ պարզ չէ, որ դաշնակը մեր տնից ավելով դեն շպրտված սպիտակ գվարդիականության և դրա հետ միասին արտասահմանյան բուրժուազիայի խղճուկ գործակալն է»:...

«Մենք հասանք այն բանին, որ բազմազգ Անդրկովկասում, որտեղ երկար ժամանակվա ընթացքում կատաղի կռիվ էր տեղի ունենում տարբեր ազգությունների աշխատավորների միջև, մի կռիվ, որն ամեն կերպ բորբոքում էին կապիտալիստները և ցարական սպասավորները, որ ներկայումս այդ կռիվը վերջնական-

պես վերացել է և որ այդ կովի փոխարեն ծավալվում է Անդրկովկասի բոլոր աշխատավորների համերաշխ կյանքը»...

В. М. Мо отов, Статьи и речи. Партиздат, 1937, էջ 210, 21 , 214։

Երևում է ունենում Ստ. Զորյանը։

Ն. Զարյանը կարդում է «Ստալին» բանաստեղծությունը.

«Ընկերնե՛ր, ես պատվիրակության անդամ չեմ։ Ես խնդրեցի, որ ինձ Կրեմլ բերեն. վաղուց էի երազում տեսնել ընկեր Ստալինին։ Եվ ահա իմ կյանքի այդ երջանիկ, ամենաբերկրալից օրը հասավ։

Ես կկարդամ հայերեն իմ «Ստալին» բանաստեղծությունը։

ՍՏԱԼԻՆ

Աքիլլեսին Հոմերն երգեց, Ռուստամ Զալին՝ Ֆիրդուսին,
Ոսկեզօծվեց հազար երգով Բոնապարտի փառքը սին,
Հազար կայծակ փայլատակեց մրրիկներում արնաներկ,
Ու շողացին գիշերներում հազար աստղ, հազար երգ։
Բայց տառապած մարդու համար չէր ծառագել մի արև,
Մարքսի նման ճաճանչափայլ, Էնգելսի պես հանճարեղ,
Լենինի պես բոցակորով, Լենինի պես լուսահորդ,
Եվ քեզ նման հստակ ու մեծ, ո՛վ պողպատե Առաջնորդ։
Չի խավարի ծիրանավառ հորիզոնում պատմության
Ձեր հանճարի արեգնային շողորդությունը տիտան։
Կծավալվի նա անսահման, հավերժաբեր կա՛րևի,
Եվ կպատռի մշուշն անցյալ և ապագա դարերի։
Հազար Հոմեր ու Ֆիրդուսի կառնեն գրիչ ու քնար,
Ու երգելով չեն սպառի Ձեր մեծությունն անհնար։
Կերգեն բոլոր լեզուներով բանաստեղծներ նորանոր,
Կտան դարերը Ձեզ վայել հուշարձաններ փառավոր։
Իսկ ես, զինվորդ խանդավառ, հայ լենինյան բանաստեղծ,
Բերում եմ քեզ ժողովրդիս երախտապարտ սիրտը մեծ։
Երգում եմ քեզ, մեծ Ստալին, դու հարազատ ամենքին,
Դու՝ ազգերի երջանկության ճարտարապետ ու դարբին։
Կանգնած էր նա, իմ ժողովուրդը, խոր վիհի եզերքին՝
Իր հանճարի հազարամյա մարգարիտները ձեռքին,

Կանգնած էր նա անդունդի մոտ, անօդնական ու հյուծված,
Արյունակից և այլ ազգի ոսոխներից հալածված,
Մահվան մթին մրրիկների ամենակուլ բերանում՝
Նա, հոշոտված բազուկներով, մի նոր ելք էր որոնում։
Ազատարար Հոկտեմբերի քայլերն այն ժամ թնդացին,
Հնչեց քո ձայնը լենինյան, Լենինի հետ միասին.
Դուք օգնության լույս նետեցիք ժողովրդին իմ չոքած,
Դուրս կոչեցիք մահվան վիհից դեպի կյանքի դուռը բաց։
Նա վեր կացավ գոտեպնդված, ոտնեց թափով ահագին
Ու միացավ կոմունիզմի աշխարհաների քանակին։
Մեռավ Լենինն ու պատմության սիրտը մի պահ դադարեց
Ու շողացիր հորիզոնում դու արևի նման մեծ,
Նախորդներիդ հզոր լույսով և քո լույսով սեփական
Տանում ես դու երկիրն ահա դեպի պայծառ ապագան։
Անունդ խոր երգի նման մարդկանց հոգին ողողում,
Թևեր տալիս ու հիասքանչ հերոսության է մղում։
Եվ իմ չքնաղ Հայաստանի ծաղկածիծաղ լեռներում
Իր նոր աշխարհն է կառուցում քեզնով լեցուն մի սերունդ։
Եվ ես, նրա ծոցից ելած մի խանդավառ բանաստեղծ,
Բերում եմ քեզ իմ երջանիկ ժողովրդի սերը մեծ։
Երգում եմ քեզ, մեծ Ստալին, դո՛ւ հարազատ ամենքին,
Դու մարդկային երջանկության ճարտարապետ ու դարբին»։

Գեկաեմբեր

ՀՍՆՀ ժողկոմխորհի 1935 թ. օգոստոսի 1-ի հայտարարած քրցանակաբաշխության ժյուրիի որոշմամբ 2-րդ մրցանակին է արժանանում Դ. Դեմիրճյանի «Ընկերներ» պատմվածքը, 3-րդ մրցանակի՝ Հ. Շիրազի «Արևի երկիր» պոեման և Հ. Պողոսյանի «Պատրաստ»-ը։

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Ջափածո

1. Ն. Զարյան.— Ամրոց, Պետհրատ, Երևան։
2. Ն. Զարյան.— Սաքո Միկինյան, Պետհրատ, Երևան։
3. Գ. Սարյան.— Միջօրե, Պետհրատ, Երևան։
4. Գ. Սարյան.— Գյուղնարա, Պետհրատ, Երևան։

5. Սարմեն.— Թուիչք, Պետհրատ, Երևան—Մոսկվա։
6. Հ. Շիրազ.— Գարնանամուտ, Պետհրատ, Երևան։
7. Հ. Շիրազ.— Սիամանթո և Խճեզարե, Պետհրատ, Երևան։
8. Ա. Գրաշի.— Մուտք, Ազերնեշեր, Բաքու։

Արձակ

1. Ստ. Զորյան.— Մի կյանքի պատմություն, Ա. գիրք, Պետհրատ, Երևան։
2. Արագի.— Արձակ պոեմներ, Պետհրատ, Երևան։
3. Արագի.— Նոր իներով, Պետհրատ, Երևան։
4. Մ. Մանվելյան.— Պատկերներ ցարական բանակից, Պետհրատ, Երևան։
5. Ծ. Թորգոմյան.— Կանաչ բարձունքներ, Վրպետհրատ, Թիֆլիս։
6. Ծ. Թորգոմյան.— Մռայլ օրեր, Վրպետհրատ, Թիֆլիս։
7. Մ. Պետրոսյան.— Մանկություն, Վրպետհրատ, Թիֆլիս։
8. Սիրաս.— Լաթիֆե, Պետհրատ, Երևան։
9. Վ. Անանյան.— Որս, Պետհրատ, Երևան։
10. Վ. Անանյան.— Երկրի վերածնունդը, Պետհրատ, Երևան։

Դրամատուրգիա

1. Վ. Վաղարշյան.— Օղակում, Պետհրատ, Երևան։

Ժողովածուներ

1. «Ստեփան Շահումյան» (ժողովածու՝ գրողները Շահումյանի մասին), Պետհրատ, Երևան։

Գրականության պատմություն, տեսություն և քննադատություն

1. Մ. Աբեղյան.— Հայ միջնադարյան առակները ու սոցիալական հարաբերությունները նրանց մեջ, Պետհրատ, Երևան։
2. Ս. Հարությունյան.— Պուշկինի 100-ամյա կյանքը հայ գրականության մեջ, Պետհրատ, Երևան։

Թարգմանություններ

1. «Մարքսը և Էնգելսը արվեստի մասին», Պետհրատ, Երևան։
2. Սերվանտես.— Դոն Կիխոտ, Պետհրատ, Երևան։
3. Հ. Հայնե.— Երգերի գիրք, Պետհրատ, Երևան։

4. Լ. Տոլստոյ.— Պատերազմ և խաղաղություն, 1-ին հատոր, Պետհրատ, Երևան։
5. Մ. Լերմոնտով.— Մեր ժամանակի հերոսը, Պետհրատ, Մոսկվա։
6. Սալտիկով Շչեդրին.— Հեքիաթներ, Պետհրատ, Երևան։
7. Գի դը Մոպասան.— Ընտիր պատմվածքներ, Պետհրատ, Երևան։
8. Մ. Գորկի.— Կլիմ Սամգինի կյանքը, 1-ին գիրք, Պետհրատ, Երևան։
9. Հ. Բարբյուս.— Կրակ, Պետհրատ, Երևան։
10. Դ. Ֆուրմանով.— Չապաև, Պետհրատ, Երևան։
11. Դ. Ֆուրմանով.— Խռովություն, Պետհրատ, Երևան։

1936

Հունվարի 12-ին

Գրողների Տանը տեղի է ունենում գրողների և արվեստագետների հանդիպում Երևանի արդյունաբերական ձեռնարկությունների ստախանովականների հետ։

Հունվարի 17-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի և ընկեր Վ. Մ. Մոլոտովի գրույցը «Խաղաղ Դոն» օպերայի ստեղծագործական կոլեկտիվի հետ։

Հունվարի 17-ին

ՍՍՌՄ Կենտգործկոմի և Ժողկոմսովետի որոշումը ՍՍՌՄ Ժողկոմսովետին կից Արվեստի Գործերի Կոմիտեն ստեղծելու մասին։

Հունվարի 19-ին

ՀԿ(բ) Կ Կենտկոմում տեղի է ունենում Ա. Ս. Պուշկինի մահվան 100-ամյակին անցկացնող հանձնաժողովի առաջին նիստը։

Հունվարի 19-ին

Ընկեր Ա. Անդրեևի ճառը «Մանկական դրականության մասին» Համ ԼԿԵՄ Կենտկոմին կից մանկական դրականության հարցերին նվիրված խորհրդակցությանը։

Հունվարի 20-ին

Գրողների Տանը լսվում է Մոսկվա մեկնած Հայաստանի պատվիրակության անդամ Ստ. Զորյանի զեկուցումը:

Հունվարի 26-ին

Համկ(բ)Պ Կենտկոմի և ՍՍՌՄ ժողկոմսովետի որոշմամբ՝ «Պատմության վերաբերյալ արդեն գոյություն ունեցող դասագրքերը վերանայելու, ուսումնասիրելու, իսկ անհրաժեշտ դեպքում նաև վերափոխելու համար հանձնաժողով ստեղծելու մասին»:

Հունվարի 27-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի և ընկերներ Ս. Կիրովի և Ա. Ժդանովի դիտողությունները «ՍՍՌՄ-ի պատմության» դասագրքի կոնսպեկտի և «Նոր պատմության» դասագրքի կոնսպեկտի վերաբերյալ:

«ՍՍՌՄ-ի պատմության» դասագրքի կոնսպեկտի վերաբերյալ ընկեր Ի. Վ. Ստալինի և ընկերներ Կիրովի և Ժդանովի դիտողություններից.

«Հանդերձ խմբակը չի կատարել առաջադրանքը և նույնիսկ չի ըմբռնել բուն առաջադրանքը: Նա կազմել է ոուսաց պատմության, և ոչ թե ՍՍՌՄ-ի պատմության կոնսպեկտ— այսինքն Ռուսաստանի պատմության կոնսպեկտ, բայց առանց այն ժողովուրդների պատմության, որոնք մտել են ՍՍՌՄ-ի կազմի մեջ (հաշվի չեն առնված Ուկրաինայի, Բելոռուսիայի, Ֆինլանդիայի և Մերձբալթյան այլ ժողովուրդների, Հյուսիսային-Կովկասյան ու Կովկասյան ժողովուրդների, Միջին Ասիայի ու Հեռավոր Արևելքի ժողովուրդների, ինչպես նաև Վոլգայի ու Հյուսիսային ժողովուրդների— Թաթարներ, բաշկիրներ, մորդվիններ, չուվաշներ և այլն—պատմության տվյալները):

Կոնսպեկտի մեջ ընդգծված չէ ռուսական ցարիզմի անեկտինիստական դաղութացման դերը՝ ռուսական բուրժուազիայի ու կալվածատերերի հետ միասին («ցարիզմը — ժողովուրդների բանտ»):

Կոնսպեկտի մեջ ընդգծված չէ ռուսական ցարիզմի հակառեւոլյուցիոն դերը արտաքին քաղաքականության մեջ, սկսած Եկատերինա 2-րդի ժամանակներից մինչև 19-րդ դարի 50-ական թվականները և նրանից հետո («ցարիզմը որպես միջազգային ժանդարմ»):

Կոնսպեկտի մեջ մեկ կույտի են վերածված ֆեոդալիզմը և նախաֆեոդալական ժամանակաշրջանը, երբ դյուղացիները դեռ ճորտացված չէին, պետության միահեծան իրավակարգը և ֆեոդալական իրավակարգը, երբ Ռուսաստանը բաժանված էր բազմաթիվ ինքնուրույն կիսապետություններին:

Կոնսպեկտի մեջ մեկ կույտի են վերածված ռեակցիա և կոնտռևոլուցիա, ռևոլուցիա «առհասարակ», բուրժուական ռևոլուցիա և բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիա հասկացողությունները:

Կոնսպեկտի մեջ տրված չեն Ռուսաստանի՝ ցարիզմի կողմից հնազանդեցված ժողովուրդների ազգային ազատագրական շարժման պայմանները ու ակունքները և այդպիսով Հոկտեմբերյան ռևոլուցիան, որպես այդ ժողովուրդների ազգային ճնշումից ազատող ռևոլուցիա մնում է չպատճառաբանված, ինչպես որ չպատճառաբանված է մնում նաև ՍՍՌ Միության ստեղծումը:

Կոնսպեկտի մեջ առատորեն կան ամեն տեսակի մաշված տրաֆարետային բնորոշումներ, ինչպես «Նիկոլայ առաջինի ռազիկանական տեսոր», «ռազնոկանություն», «պուգաչևականություն», «կալվածատիրական հակառևոլուցիոն հարձակումը 19-րդ դարի 70-ական թվականներին», «արդյունաբերական հեղաշրջման առաջին քայլերը», «ցարիզմի ու բուրժուազիայի առաջին քայլերը 1905—1907 թվականների ռևոլուցիայի դեմ մղվող պայքարում» և այլն: Կոնսպեկտի հեղինակները կուրորեն պատճենահանում են ամեն տեսակի բուրժուական պատմաբանների մաշված ու մխանգամայն ոչ պիտական բնորոշումները, մոռանալով, որ իրենք պարտավոր են մեր երիտասարդությանը մատուցել մարքսիստական, գիտականորեն հիմնավորված բնորոշումներ:

Կոնսպեկտը չի արտացոլում արևմտա-եվրոպական բուրժուական-ռևոլուցիոն ու սոցիալիստական շարժումների դերն ու ազդեցությունը Ռուսաստանի բուրժուական-ռևոլուցիոն շարժման և պրոլետարական սոցիալիստական շարժման կազմակերպման վրա: Կոնսպեկտի հեղինակները ըստ երևույթին մոռացել են, որ ռուս ռևոլուցիոներները իրենց համարում էին Արևմուտքի բուրժուական-ռևոլուցիոն ու մարքսիստական մտքի հայտնի կորիֆեների աշակերտները ու հետևորդները:

Կոնսպեկտի մեջ հաշվի չեն առնված առաջին իմպերիալիստական պատերազմի արմատները և ցարիզմի դերն այդ պատե-

բաժնում՝ իբրև ռեզերվ արևմտա-եվրոպական իմպերիալիստական պետությունների համար, ինչպես նաև հաշվի չի առնված, ինչպես ռուսական ցարիզմի, այնպես և ռուսական կապիտալիզմի կախյալ դերը արևմտա-եվրոպական կապիտալից, որի հետևանքով Հոկտեմբերյան ռևոլյուցիայի նշանակությունը, որպես Ռուսաստանը կիսագաղութային վիճակից ազատագրողի մնում է չպատճառաբանված։

Կոնսպեկտի մեջ հաշվի չեն առնված համաեվրոպական քաղաքական ճգնաժամի առկայությունը համաշխարհային պատերազմի նախօրյակին, որն, ի միջի այլոց, արտահայտվեց բուրժուական դեմոկրատիայի և պառլամենտարիզմի անկման մեջ, որի հետևանքով սովետների նշանակությունը համաշխարհային պատմության տեսակետից, որպես պրոլետարական դեմոկրատիայի կրողներ և բանվորներին ու գյուղացիներին կապիտալիզմից ազատագրող մարմիններ,— մնում է չպատճառաբանված։

Կոնսպեկտի մեջ հաշվի չի առնված ՍՍՌՄ-ում կառավարող կոմունիստական պարտիայի ներսում եղած հոսանքների պայքարը և պայքարը տրոցկիզմի, որպես մանր բուրժուական դեմոկրատիայի արտահայտության դեմ։

Եվ այլն, և այլն»։...

«Մեզ հարկավոր է ՍՍՌՄ-ի պատմության այնպիսի դասագիրք, որտեղ Վելիկոռուսիայի պատմությունը չանջատվի ՍՍՌՄ-ի մյուս ժողովուրդների պատմությունից— այդ առաջին, և որտեղ ՍՍՌՄ-ի ժողովուրդների պատմությունը չանջատվի համաեվրոպական պատմությունից և առհասարակ համաշխարհային պատմությունից— այդ երկրորդ»։

«Խորհ. Հայաստան», 28 հունվարի, 1936։

«Նոր պատմության» դասագրքի կոնսպեկտի վերաբերյալ ընկեր Ի. Վ. Ստալինի և ընկերներ Ս. Կիրովի և Ա. Ժդանովի դիտողություններից.

«Կոնսպեկտի գլխավոր թերությունը մենք համարում ենք այն հանգամանքը, որ նա բավականաչափ խիստ կերպով չի ընդգծում ֆրանսիական ռևոլյուցիայի (բուրժուական ռևոլյուցիա) և Ռուսաստանի Հոկտեմբերյան ռևոլյուցիայի (սոցիալիստական ռևոլյուցիա) միջև եղած տարբերության և հակադրության ողջ խորությունը։ Նոր պատմության դասագրքի հիմնական առանցքը պետք է լինի

հենց այդ հակադրությունը՝ բուրժուական ռևոլյուցիայի և սոցիալիստական ռևոլյուցիայի միջև։ Ցույց տալ, որ ֆրանսիական և (ամեն մի այլ) բուրժուական ռևոլյուցիա ժողովրդին ազատելով ֆեոդալիզմի ու աբսոլյուտիզմի շղթաներից՝ նոր շղթաներ է դրել նրա վրա— կապիտալիզմի ու բուրժուական դեմոկրատիայի շղթաներ, մինչդեռ Ռուսաստանի սոցիալիստական ռևոլյուցիան ջախջախեց բոլոր ու ամեն տեսակի շղթաները և ժողովրդին ազատեց շահագործման բոլոր ձևերից— ահա թե որը պետք է լինի նոր պատմության դասագրքի արմատական թելը։ Ուստի և չի կարելի թույլ տալ, որ ֆրանսիական ռևոլյուցիան անվանեն պարզապես «մեծ». այն պետք է անվանել ու մեկնաբանել որպես **բուրժուական** *ռևոլյուցիա։*

Ճիշտ այդպես էլ, չի կարելի Ռուսաստանի մեր սոցիալիստական ռևոլյուցիոն անվանել պարզապես Հոկտեմբերյան ռևոլյուցիա— այն հարկավոր է անվանել ու մեկնաբանել որպես **սոցիալիստական** *ռևոլյուցիա,* **սովետական** *ռևոլյուցիա»։*

«Խորհրդային Հայաստան» 28 հունվարի, 1936։

Հունվարի 27-ին

ՍՍՌՄ Կենտգործկոմի Նախագահության որոշումը Նաիրի Եղիազարի Զարյանին Լենինի շքանշանով պարգևատրելու մասին։

Հունվարի 28-ին

«Պրավդա»-յում տպագրվում է խմբագրական հոդված՝ «Երաժշտության փոխարեն սումբուր» («Մցենսկ գավառի Լեդի Մակբեթ» օպերայի մասին)։

Խմբագրականից.

«... Դա մի երաժշտություն է, որը դիտավորյալ կերպով «թարս է շուռ տրված», որպեսզի ոչինչ չհիշեցնի կլասիկական օպերային երաժշտությանը, ոչ մի ընդհանուր բան չունենա սիմֆոնիկ հնչեղության հետ, պարզ, հանրամատչելի երաժշտական խոսքի հետ։ Դա մի երաժշտություն է, որը կառուցված է օպերան ժխտելու նույն սկզբունքով, որով ձախլիկ արվեստն ընդհանրապես ժխտում է թատրոնի պարզությունը, ռեալիզմը, կերպարի հասկանալիությունը, խոսքի բնական հնչեղությունը։ Դա «մեյերխոլդովշչինայի» առավել բացասական գծերի փոխադրումն է օպերայի, երաժշտության մեջ՝ բազմապատկված ձևով։ Դա

ձախլիկ սումբուր է՝ բնական, մարդկային երաժշտության փոխարեն։ Լավ երաժշտության հատկությունը՝ գրավել մասսաներին, զոհաբերվել է էժան օրիգինալապաշտության պրիոմներով օրիգինալություն ստեղծելու մանր բուրժուական ֆորմալիստական ճկրտումներին, պրետենզիաներին։ Դրանք խելքից դուրս խաղեր են, որոնք կարող են շատ վատ վերջանալ։

Այդպիսի ուղղության վտանգը սովետական երաժշտության մեջ պարզ է։ Ձախլիկ այլանդակությունն օպերայի մեջ, աճում է նույն այն ակունքից, որտեղից և ձախլիկ այլանդակությունը՝ նկարչության, պոեզիայի, մանկավարժության, գիտության մեջ։ Մանր բուրժուական «նովատորությունը» տանում է դեպի խզումն իսկական արվեստից, իսկական գիտությունից, իսկական գրականությունից»։...

«Այն ժամանակ, երբ մեր քննադատությունը,—այդ թվում նաև երաժշտական քննադատությունը,— երդվում է սոցիալիստական ռեալիզմի անունով, բեմը մեզ հրամցնում է Շոստակովիչի հորինած կոպիտ նատուրալիզմը։ Միակերպ, գազանային տեսքով են ներկայացված բոլորը՝ և՛ վաճառականները, և՛ ժողովուրդը։ Գիշատիչ-վաճառականուհին, որն սպանությունների միջոցով հասել է հարստության և իշխանության, ներկայացված է բուրժուական հասարակության ինչ որ «զոհի» տեսքով։ Լեսկովի կենցաղային վիպակի վրին փաթաթվել է այնպիսի իմաստ, որպիսին այնտեղ չկա։

Եվ այդ ամենը կոպիտ, պրիմիտիվ, գռեհիկ։ Երաժշտությունը կռանչում է, տնքում, փնչում, խեղդվում, որպեսզի որքան հնարավոր է նատուրալիստորեն պատկերի սիրային տեսարանները։ Եվ «սերը» քսմսված է ամբողջ օպերայի մեջ ամենագռեհիկ ձևով»։

„Правда", 28 հունվարի, 1936։

Հունվարի 30-ին

Գրողների Տանը տեղի է ունենում Ռ. Ռոլլանի ծննդյան 70-ամյակին նվիրված հանդիսավոր երեկո։

Հունվարի 31-ին

Լենինգրադի Մայակովսկու Տանը տեղի է ունենում Հայկական հին և նոր պոեզիայի երեկո։ Հայկական պոեզիայից կատարած իրենց թարգմանություններով հանդես են գալիս՝ Ն. Տիխոնովը,

Պ. Անտակոլսկին, Ս. Շերվինսկին, Ս. Սպասսկին, Ռոժդեստվենսկին և Երլիխը։

Եզրափակման խոսք է ասում՝ Կ. Ֆեդինը։

Փետրվարի 5-ին

Գրողների Տանը տեղի է ունենում Ն. Ա. Դոբրոլյուբովին նըվիրված երեկո։

Բացման խոսք է ասում՝ Հ. Գյուլիքեւխյանը։

Զեկուցում է՝ Ս. Հարությունյանը։

Փետրվարի 10—15-ը

Մինսկում տեղի է ունենում ՍՍՌՄ Գրողների Միության Վարչության 3-րդ պլենումը։

Բացման խոսք է ասում Ա. Ս. Շչերբակովը։

Հայաստանից մասնակցում են՝ Ն. Զարյանը, Գ. Սարյանը և ուրիշները։

Սովետական պոեզիայի դրության և խնդիրների մասին զեկուցում է՝ Ա. Սուրկովը։

Փետրվարի 20-ին

Վախճանվեց ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը։

Մարտի 1-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի զրույցը Ամերիկյան «Սկրիպպս-Հոուարդ Նյուզփեյփըրզ» լրագրային միավորման նախագահ պ. Ռոյ Հոուարդի հետ։

Մարտի 5-ին

Գրողների Տանը տեղի է ունենում Ն. Զարյանի երեկո՝ Լենինի շքանշանով պարգևատրվելու առթիվ։

Մարտի 10-ին

Գրողների Տանը կազմակերպվում է դիսպուտ Գ. Սարյանի «Միջօրե» գրքի շուրջը։

Զեկուցում է Հ. Մկրտչյանը։

Ելույթներ են ունենում՝ Ս. Տարոնցին, Տ. Հախումյանը, Վ. Թերզիբաշյանը և ուրիշները։

Մարտի 15—17-ը

Գրողների Տանը տեղի է ունենում մանկական գրականությանը նվիրված ռեսպուբլիկական խորհրդակցություն:

Մարտի 17-ին

Ալավերդում, Մանանի նորակառույց թատրոնում տեղի է ունենում Ն. Զարյանի հանդիսումը ստախանովականների և պարտիական ու կոմերիտական ակտիվի հետ:

Ն. Զարյանը պատմում է իր տպավորությունները Կիմլից:

Մարտ

Լույս է տեսնում հայկական ժողովրդական էպոս «Սասնա Ծռեր»-ի առաջին հատորը:

Ապրիլի 9-ին

«Պրավդա»-յում հրապարակվում է Մ. Գորկու՝ «Ֆորմալիզմի մասին» հոդվածը:

Մ. Գորկու հոդվածից.

«Ֆորմալիզմն իբրև «մանիրա», իբրև «գրական պրիոմ», ամենից ավելի ծառայում է ծածկելու համար հոդու դատարկությունը կամ աղքատությունը: Մարդն ուզում է խոսել մարդկանց հետ, բայց ասելու բան չունի, և հոգնեցուցիչ, խոսքառատ, քիկոտ և երբեմն դեղեցիկ ու ճարպկորեն ընտրած խոսքերով, խոսում է այն ամենի մասին, ինչը որ տեսնում է, բայց ինչը որ չի կարող, չի ուզում կամ վախենում է հասկանալ: Ֆորմալիզմից օգտվում են հաստարակ, պարզ և երբեմն կոպիտ խոսքից սարսափելուց, սոսկալով այդպիսի խոսքի պատասխանատվությունից: Որոշ հեղինակներ ֆորմալիզմից օգտվում են որպես միջոց աչքողել իրենց մտքերն այնպես, որպեսզի անմիջապես պարզ չդառնա նրանց այլանդակ քշնամական վերաբերմունքը դեպի իրականությունը, պարզ չդառնա նրանց մտադրությունը՝ աղավաղել փաստերի ու երևույթների իմաստը: Բայց այդ արդեն, վերաբերում է ոչ թե խոսքի արվեստին, այլ ժուլիկության արվեստին»:

„Правда", 9 апреля, 1936:

Ապրիլի 18—26-ը

Տեղի է ունենում Սայաթ-Նովագիտության կոնֆերենցիա:

Ներածական խոսք է ասում՝ Հ. Գյուլիքեվխյանը:

Ելույթներ են ունենում պրոֆ.-դոկտ. Մ. Աբեղյանը, պրոֆ. Մելիքսեթ-Բեկը, Ն. Զարյանը, Գ. Լևոնյանը, Ս. Հարությունյանը, վ. Թերզիբաշյանը և ուրիշները։

Ապրիլի 26-ին

Կուլտուրայի Տանը կազմակերպվում է դիսպուտ ֆորմալիզմի և նատուրալիզմի շուրջը։

Մայիսի 3-ին

Հիմնադրվում է Գրքի Պալատը։

Մայիսի 27-ին

Երևան է փոխադրվում Կոմիտասի աճյունը։

Հունիսի 3-ին

Գրողների Տանը տեղի է ունենում վ. Գ. Բելինսկու ծննդյան 125-ամյակին նվիրված երեկո։

Բացման խոսք է ասում՝ Հ. Գյուլիքեվիչյանը։

Զեկուցում է՝ Ս. Հարությունյանը։

Հունիսի 6-ին

Գրողների Տանը տոնվում է Հ. Հակոբյանի ծննդյան 70-ամյակը։

Հունիսի 8-ին

Ընկեր Ի. վ. Ստալինը և ընկերներ վ. Մ. Մոլոտովն ու կ. Ե. Վորոշիլովը այցելում են ծանր հիվանդ Մ. Գորկուն։

Հունիսի 18-ին

Վախճանվեց Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկին։

Համկ(բ)Պ կենտկոմի և ՍՍՌՄ ժողկոմսովետի ցավակցությունը.

«Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և ՍՍՌՄ ժողովրդական Կոմիսարների Սովետը խոր վշտով հայտնում են ռուսական մեծ գրող, խոսքի հանճարեղ արվեստագետ, աշխատավորների անձնազոհ բարեկամ, կոմունիզմի հաղթանակի համար մարտնչող ընկեր Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկու մահը, որ տեղի ունեցավ Գորկայում, Մոսկվայի մոտ, հունիսի 18-ին»։

ՍՍՌՄ Սովետական Գրողների Միության վարչության ցավակցությունը.

«ՍՍՌՄ Սովետական Գրողների Միության վարչությունը խոր վշտով հաղորդում է ռուսական մեծ գրող և ՍՍՌՄ ժողովուրդների գրականության ղեկավար, խոսքի հանճարեղ արվեստագետ, կոմունիզմի բոցավառ մարտիկ, բոլոր աշխատավորների անձնուրաց բարեկամ Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկու մահը»:

Հայաստանի Խորհրդային Գրողների Միության ցավակցությունը.

«Հայաստանի Խորհրդային Գրողների Միությունն իր խոր վիշտն է հայտնում արվեստի և գրականության մեծ ուսուցիչ, ռուս մեծ ժողովրդի հանճարեղ գրող, համաշխարհային պրոլետարական գրականության վետերան— Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկու մահվան առթիվ:

Մեծ է նրա կորուստը, խոր է այն վիշտը, որ պատճառում է մեզ նրա անժամանակ մահը:

Բայց անխախտ է մեր հույսն ապագայի վերաբերմամբ, մեր մեծ ժողովրդի՝ Լենինի-Ստալինի կուսակցության աճեցրած շարվածները միշտ կենդանի պահելով Գորկու պատկերը, կտան՝ մեր պարտաշրջանին և Գորկուն արժանի վարպետներ»:

Ընկեր Վ. Մ. Մոլոտովի ճառից՝ «Ա. Մ. Գորկու հիշատակին».

«... Այսօր հրաժեշտ տալով Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկուն, մենք, նրա բարեկամներս, անթիվ ընթերցող-երկրպագուներս այնպիսի զգացում ենք ապրում, որ կարծեք թե մեզանից յուրաքանչյուրից մեր սեփական կյանքի ինչ-որ մի պայծառ մասնիկ ընդմիշտ գնում է անցյալի գիրկը: Միլիոնավոր մարդիկ այժմ ապրում են այդ զգացումով: Այդչափ հոգեպես խորը, անմիջականորեն մոտ էր կանգնած Գորկին մեզ, իր դարաշրջանի մարդկանց, որոնց նա այնչափ շատ բան է տվել հանճարեղ գեղարվեստական խոսքով, աշխատավորների նկատմամբ ունեցած իր անսահման սիրով և մարդկության ազատագրման համար մղած պայքարով, իր ամբողջ հիանալի, անկրկնելի կյանքի օրինակով»:...

«Լենինից հետո, Գորկու մահն ամենածանր կորուստն է մեր երկրի համար ու մարդկության համար»:...

«Մեր ուժը այն է, որ Սովետական երկրի ժողովուրդը, որին նվիրել էր Գորկին իր ողջ մեծ տաղանդը, մեծ սիրտը, արդեն կանգնել է իր զորեղ ոտքերի վրա, ասպարեզ է տվել իր անսահման ուժերի ու տաղանդների աճմանը և դրանով իսկ հաղթականորեն մարմնավորում է կյանքում մարդկության լավագույն ներհայացուցիչների հույսերն ու երազները»։

В. М. Молотов, Статьи и речи, Партиздат, 1937, էջ 237։

Օգոստոսի 19-ին

«Պրավդա»-յում լույս է տեսնում ընկ. Լ. Պ. Բերիայի հոդվածը՝ «Փոշիացնել, հողմացրիվ անել տրոցկիզմի թշնամիներին»։

Լ. Պ. Բերիայի հոդվածից.

«Մեր հզոր սովետական երկիրը հաստատ առաջ է ընթանում դեպի երջանիկ և խնդումնալից կյանքի գագաթնները։

ՍՍՌՄ ստալինյան Կոնստիտուցիայի նախագիծը, որ մեծագույն խանդավառությամբ քննարկում են մեր երկրի աշխատավորները, մարմնացնում է սոցիալիզմի պատմական հաջողությունները, որ ձեռք են բերել Սովետական Միության ժողովուրդները բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ, աշխատավոր մասսաների և պարտիայի սիրելի առաջնորդ մեծ Ստալինի հանճարեղ ղեկավարությամբ։

Ամբողջ աշխարհը իրազեկ է այդ հաջողություններին. այդ գիտեն և գնահատում են աշխատավոր մարդկության միլիոնները։ Սոցիալիզմի ամենաչարագուշակ թշնամիներն անգամ հարկադրված են ընդունել սովետական իշխանության հաջողությունները։

Այդ հաջողությունները ձեռք են բերված բոլշևիկների և ՍՍՌՄ աշխատավոր մասսաների կողմից կոնտրռևոլուցիոն ուժերը լիկվիդացիայի ենթարկելու հետևանքով, հակապարտիական խմբակների և օպոզիցիաների անողոք ջախջախման հետևանքով։ Նրանք ձեռք են բերված մեր երկրի աշխատավոր մասսաների հերոսական պայքարի ու աշխատանքի շնորհիվ և հանդիսանում են մեր պարտիայի գծի հաղթանակի արտահայտությունը, նրա ստալինյան ղեկավարության հաղթանակի արտահայտությունը։

„Միայն Լենինի—Ստալինի պարտիան է, որ՝ հանդիսանալով պրոլետարիատի դիկտատուրայի առաջավոր ուժը, ղեկավարելով

Համկ(բ)Պ ստալինյան Կենտրոնական Կոմիտեի կողմից, անհաշտորեն պաշտպանելով իր գլխավոր դիծը Բշնամիների հարձակումներից, ապահովեց այդ պատմական հաջողությունները։

Այդ պատճառով սոցիալիզմի Բշնամիների ջախջախված տղամելի բեկորները ջանում են այժմ իրենց բոլոր հարվածներն ուղղել ամենից առաջ Լենինի—Ստալինի պարտիայի դեմ, նրա ղեկավարության դեմ— ուղիղ դեպի նրա սիրտը, իրենց ամբ դավաճանական և քանդարար աշխատանքում ընտրելով ամենանողկալի, ամենաստոր միջոցների և մեթոդների ճանապարհը։

«Պետք է նկատի ունենալ,— ասում է ընկեր Ստալինը,— որ Սովետական պետության հզորության աճումն ուժեղացնելու է ճնշող դասակարգերի վերջին մնացորդների դիմադրությունը։ Հենց այն պատճառով, որ նրանք մեռնում և իրենց վերջին օրերն են ապրում, նրանք հարձակման մի ձևից անցնելու են այլ, ավելի սուր հարձակման ձևերի՝ դիմելով բնակչության հետամնաց խավերին և մոբիլիզացիայի ենթարկելով նրանց սովետական իշխանության դեմ։ Չկա այնպիսի մի ստորություն և զրպարտություն, որ այդ նախկին մարդիկ չբարդեին սովետական իշխանության վրա և նրանց շուրջը չփորձեին մոբիլիզացիայի ենթարկել հետամնաց տարրերին։ Այդ հողի վրա կարող են վերակենդանանալ ու շարժվել կոնտրռևոլուցիոն հին պարտիաների՝ էսերների, մենշևիկների, կենտրոնի ու ծայրերկրների բուրժուական նացիոնալիստների ջախջախված խմբերը, կարող են վերակենդանանալ ու շարժվել կոնտրռևոլուցիոն օպոզիցիոն տարրերի բեկորները տրոցկիստներից և աջ-ունլլոնիստներից»։

Ընկեր Ստալինի այս հանճարեղ նախատեսությունը լիովին ու ամբողջապես հաստատեց իրական կյանքը»։...

«Վերջին ժամանակներս, պարտիական փաստաթղթերի ստուգման և փոխանակման շրջանում, հայտնաբերված և մերկացված են Անդրկովկասում կոնտրռևոլուցիոն տրոցկիստական-զինովևյանական առանձին խմբակներ»։...

«Հայտնաբերված խմբակներին մասնակցողների մեծ մասը խոստովանեց իր կոնտրռևոլուցիոն աշխատանքը։ Նրանք խոստովանեցին այն բանը, որ տրոցկիստական-զինովևյան բլոկի կենտրոնի առաջադրանքի համաձայն, ստեղծել են սերմանել կոնտրռևոլուցիոն խմբակների մասնակիցների մեջ Համկ(բ) Պ ղե-

կավարության նկատմամբ, դաստիարակել են տեռորիստների կադրեր, վնասարարական աշխատանք կատարել արտադրության մեջ և նախապատրաստել են դիվերսիոն ակտեր։

Իրենց աշխատանքում այդ սրիկաները սերտ կապ էին հաստատել մենշևիկյան, դաշնակցական, մուսավաթական, սպիտակգվարդիական և կուլակային կոնտրռևոլյուցիոն տարրերի հետ։

Տրոցկիստ-զինովևյան կոնտրռևոլյուցիոներները իրենց նպատակներով և պայքարի միջոցներով ոչ միայն կապվել էին Անդրկովկասյան ռեսպուբլիկաներից վտարված մենշևիկյան, դաշնակցական, մուսավաթական սպիտակ գվարդիականների և նրանց ընդհատակյա ագենտուրայի հետ, այլև նրանց կազմակերպիչ ուժն էին հանդիսանում, գլխավորելով նրանց պայքարը սոցիալիզմի հաղթանակների դեմ Անդրկովկասի ռեսպուբլիկաներում»...

«Շատ հաճախ պարտիայի ու սովետական իշխանության թշնամիներն ազգային ռեսպուբլիկաների պայմաններում քողարկվում են ազգային կենցաղային առանձնահատկություններով և տրադիցիաներով։

Բնավ պատահական չէ, որ առանձին տրոցկիստական-զինովևյան կոնտրռևոլյուցիոն տարրեր իրենց վնասակար ու անտիսովետական աշխատանքը քողարկելու համար Անդրկովկասի ռեսպուբլիկաների աշխատավոր ժողովուրդների «ազգային իղձերի» արտահայտողների դիմակ են հագնում»...

«Նացիոնալիստական տարրերը շատ հաճախ նացիոնալ-շովինիստական շաղակրատությունից գլորվում են սովետական իշխանության դեմ պայքարելու դիրքերը և բլոկ են կնքում կոնտրռևոլյուցիոն տրոցկիստական-զինովևյան, մենշևիկյան, դաշնակցական ու մուսավաթական տարրերի հետ։ Այսպես է բոլշևիկների պարտիայի դեմ, սովետական իշխանության դեմ մղվող պայքարի տրամաբանությունը։

Անդրկովկասի ռեսպուբլիկաների պարտիական կազմակերպությունները լավ են հիշում իրենց աշխատանքի այդ առանձնահատկությունների մասին։

Նրանք անողոք պայքար են մղում կոնտրռևոլյուցիոն, նացիոնալիստական տարրերի և նացիոնալ-ուկլոնիզմի ռեցիդիվների դեմ իրենց սեփական շարքերում։

Նրանք շատ լավ գիտեն, թե ինչով վերջացավ նացիոնալ-ուկլոնիզմի դավաճանական ուղին։

Նացիոնալ-ուկլոնիստները վրացական մենշևիկների, ազնվականների, կալվածատերերի և կուլակների արտահայտիչներն ու գործի շարունակողները հանդիսանալով, իրենց զգալի մասով հետագայում սահեցին կոնտրռևոլյուցիոն տրոցկիզմի ճահիճը և տրոցկիստների ու զինովևականների հետ միասին կանգնեցին լրտեսության, դիվերսիայի և տեռորի ուղու վրա՝ պարտիայի և սովետական իշխանության դեմ մղվող պայքարում։

Անդրֆեդերացիայի լիկվիդացիայի կապակցությամբ Անդրկովկասում նացիոնալիստական տարրերը փորձում են աշխուժացնել իրենց աշխատանքը։

Գտնվում են մարդիկ, որոնք պարտիայի և կառավարության որոշումը Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի անմիջականորեն Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության մեջ մտնելու և այդ առնչությամբ Անդրկովկասյան Ֆեդերացիայի լիկվիդացիայի մասին փորձում են գնահատել, որպես իրենց անցյալ նացիոնալ-ուկլոնիստական սխալների արդարացում։ Այդ մարդիկ, ինչպես երևում է, չեն հասկացել իրենց անցյալ սխալները, չեն հասկանում այն, ինչ պարտիան կատարում է այսօր, և պետք է անողոքաբար մերկացվեն։

Ընկեր Ստալինը ՀամԿ(բ)Պ Կենտկոմի պլենումում «Նոր Կոնստիտուցիայի նախագծի մասին» իր զեկուցման մեջ այդ մարդկանց համեմատում էր 1917 թվականի ապրիլին Պետերբուրգում եղած մի բոլշևիկյան խմբակի հետ, որին Լենինն ավանտյուրիստական էր անվանում, որովհետև նա պահանջում էր սովետական իշխանություն հաստատել 1917 թվի ապրիլին, երբ դրա համար պայմանները դեռ չէին հասունացել և վաղաժամ շտապողականությունը կարող էր կատաստրոֆով վերջանալ պարտիայի համար։ Իսկ երբ 1917 թվականի հոկտեմբերին պարտիան վերցրեց իշխանությունը և սովետական կարգեր հաստատեց, այդ խմբակի մարդիկ հաղթական տեսքով ասում էին, որ նրանք իրավացի էին, երբ դեռ 1917 թվականի ապրիլին պահանջում էին սովետական իշխանություն հաստատել։ Լենինն այդ կոմունիստներին անվանում էր փոքրիկ մարադյորներ։ Այսօր այդ փոքրիկ մարադյորներին են նմանվում այն նացիոնալ-ուկլոնիստները, որոնք փորձում են Ան-

դրկովկասյան Ֆեդերացիայի վերացման մասին պարտիայի և կառավարության որոշմամբ արդարացնել իրենց նախկին սխալները։

Նացիոնալ-ոպպոնիտանները մեր պարտիային վնասել են այն ժամանակ, երբ հարկավոր էր Անդրկովկասում ջախջախել բուրժուական նացիոնալիստներին և ամրապնդել ժողովուրդների բռնկամության կապերը։ Նրանք փորձում են մեզ վնասել նաև այսօր, աշխատելով խարխլել անդրկովկասյան ժողովուրդների ստալինյան բարեկամությունը։

Վրացական և հայկական ինտելիգենցիայի հին կադրերի որոշ մասի մեջ դեռևս ուժեղ են նացիոնալիստական տրամադրությունները։ Թշնամին շատ հաճախ փորձում է օգտագործել այդ։ Առանձին կոմունիստներ, իսկ երբեմն էլ նաև ղեկավար աշխատողներ փոխանակ համառորեն աշխատելու ինտելիգենցիայի այդ խմբերի ինտերնացիոնալ դաստիարակության վրա, իրենք հաճախ շատ քիչ խորամուտ լինելով պարտիայի ազգային քաղաքականության հարցերում, տեղի են տալիս հետամնաց նացիոնալիստական տրամադրություններին, շփոթեցնում են իրենց և ուրիշներին, իսկ երբեմն էլ նացիոնալիստական վնասակար տրամադրությունները փոխադրում են պարտիական կազմակերպությունների շարքերը։ Կոմունիստը պետք է ազդի շրջապատողների վրա, իր հետևից տանի, իսկ մի շարք կոմունիստների մոտ հակառակն է կատարվում,— նրանց վրա ազդում են նացիոնալիստական և թշնամական տարրերը, օգտագործելով նրանց իրենց նպատակների համար։

Անդրկովկասում պարտիական կազմակերպությունները հսկայական աշխատանք են կատարել ազգային ինտելիգենցիայի կադրերը սովետական իշխանության և պարտիայի շուրջը համախմբելու գործում։ Այդ գործում նրանք անվիճելի և մեծ հաջողություններ ունեն։

Մեր խնդիրն է՝ է՛լ ավելի բարձրացնել զգաստությունը՝ պարտիայի ազգային քաղաքականության իրականացման գործում, է՛լ ավելի լավ կազմակերպել մասսաների ինտերնացիոնալ դաստիարակության աշխատանքը և այդ առաջարիզում ևս վերջնականապես ջախջախել թշնամուն»...

«Այդ բոլոր փաստերը կրկին ու կրկին անգամ հաստատում են ռևոլուցիոն զգաստության բարձրացման անհրաժեշտության մա-

ին, սոցիալիզմի թշնամիների և նրանց գլխավոր ջոկատի — գարշելի կոնտրռևոլուցիոներներ՝ տրոցկիստների-զինովևականների դեմ անողոք պայքար մղելու անհրաժեշտության մասին ընկեր Ստալինի ցուցումների հանճարեղությունը։

Ռևոլուցիոն հարձակողական բոլշևիկյան զգաստություն պետք է իր արտահայտությունը գտնի ո՛չ թե զգաստության մասին արտասանված պատռնոսական ճառերում, ո՛չ թե ամպագորգոռ բառաձևերում, այլ կոմունիստի յուրաքանչյուր գործողության մեջ այն աշխատամասում, որտեղ նա դրված է պարտիայի կողմից, այն հրապարության մեջ, որտեղ նա գտնվում է, կոմունիստի գործնական աշխատանքի յուրաքանչյուր քայլափոխում և ամենօրյա կյանքում ու կենցաղում։

Ռևոլուցիոն զգաստությունը պետք է հանդես գա այն մարդկանց ուշադիր ստուգման մեջ, որոնց հետ աշխատում է կոմունիստը, որոնք շրջապատում են նրան և որոնց հետ նա շփվում է։

Զգաստությունը պետք է արտահայտվի բոլշևիկյան ինքնաքննադատության ծավալման մեջ, ինքնաքննադատության, որն օգնում է մերկացնելու մեր թերությունները և թշնամիների մեքենայություններն։

Զգաստությունը պետք է հանդես գա այն բանում, որ կոմունիստը լինի աշխուժ և իր պարտիական աչքով աշխատի ներթափանցել բոլոր անկյուններն ու ճեղքերը, հետաքրքրվի ամեն բանով։

Զգաստությունը պետք է արտահայտվի յուրաքանչյուր կոմունիստի, յուրաքանչյուր կոմերիտականի, յուրաքանչյուր ոչ պարտիական բոլշևիկի աշխատանքի բարելավման մեջ, աշխատանք, որի նպատակն է իրագործել պարտիայի խնդիրները և ընկեր Ստալինի ցուցումները»։...

«Սոցիալիզմի միջազգային և ներքին թշնամիները մի անգամ չէ, որ իրենց կոնտրռևոլուցիոն ոտնձգությունների համար փորձել են հույս դնել Անդրկովկասի վրա։

Անդրկովկասը մի շարք առանձնահատկություններ ունի, որոնք նրան տարբերում են Սովետական Միության շատ երկրներից ու ռեսպուբլիկաններից։

Անցյալում Անդրկովկասում ուժեղ են եղել մենշևիկների, դաշնակների և մուսավաթիստների հակասովետական պարտիանները.

սովետական իշխանության առաջին տարիներին Անդրկովկասյան ռեսպուբլիկաներում ուժեղ էր նացիոնալիզմը, նացիոնալ-ուկլոնիստական խմբակցությունները պարտիական կազմակերպությունների ներսում:

Այդ առանձնահատկությունները հանդես են գալիս նմանապես տնտեսական, ազգային բարդ հյուսվածքում, որը լրացուցիչ դժվարություններ է ստեղծել սոցիալիստական շինարարության համար:

Թշնամին հաճախակի աշխատել է օգտագործել Անդրկովկասի բոլշևիկների աշխատանքի այդ առանձնահատկությունները ու դժվարությունները՝ պարտիայի և սովետական իշխանության դեմ պայքարելու համար: Տրոցկիստները և զինովևականները պարտիայի դեմ մղած իրենց պայքարի ամբողջ ընթացքում դավաճանությունների և մատնությունների իրենց ամբողջ ստոր ճանապարհին փորձել են իրենց համար հենարան դառնել Անդրկովկասի ազգային կետերում»:...

«Անդրկովկասի բոլշևիկները հիանալի կերպով գիտեն իրենց աշխատանքի առանձնահատկությունները ու դժվարությունները:

Անդրկովկասի և Վրաստանի բոլշևիկները, դաստիարակված մեծ առաջնորդ ընկեր Ստալինի կողմից, նրա հանճարեղ առաջնորդությամբ ջախջախել են կոնտրռևոլուցիոն պարտիանների—մենշևիկների, դաշնակների և մուսավաթիստների ուժերը, ջախջախել են նացիոնալ-ուկլոնիզմը, անխորտակելի խաղաղություն են ստեղծել Անդրկովկասի ժողովուրդների միջև և վիթխարի հաջողությունների են հասել սոցիալիզմի շինարարության գործում:

Ամբողջ պարտիայի հետ միասին նրանք ջախջախել են իրենց սեփական շարքերում եղած ամեն տեսակի օպոզիցիաներն ու խմբակավորումները: Ամբողջ պարտիայի հետ միասին նրանք ջախջախել են կոնտրռևոլուցիոներներին, տրոցկիստներին և զինովևականներին:

Եվ այսօր, երբ տրոցկիստական-զինովևական կոնտրռևոլուցիոն գարշելի թափթփուկները աշխատում են նոր հարձակումներ գործել սոցիալիզմի երկրի դեմ, Անդրկովկասի բոլշևիկները, բարձրացնելով բոլշևիկյան զգաստությունը, ամուր կանգնած են Լենինի—Ստալինի պարտիայի գործի պաշտպանության դիրքերում:

Նրանք անողոքաբար մերկացնում և իրենց շարքերից վտարում են բոլոր նրանց, ովքեր թուլացնում են պետությունը և դործակցում են թշնամուն:

Ամբողջ պարտիայի հետ միասին նրանք պայքարում են ազգ բանի համար, որպեսզի հողի երեսից արրեն և վերջնականապես ոչնչացնեն սոցիալիզմի թշնամիներին»...

«Սոցիալիզմի նկատմամբ, Լենինի—Ստալինի պարտիայի նկատմամբ, պարտիայի և ՍՍՌՄ կառավարության դեկավարների նկատմամբ ուաժած իրենց գազանային ատելության մեջ, դիտակցելով իրենց անզորությունը և ողորմելիությունը, թշնամիները կարիերիստների, մարիոնետների և մատադրների տող ուղղ թևակոխել են տեսրի ուղին՝ ընդդեմ սոցիալիզմի դործի մարտիկների:

Այդ նրանք— տրոցկիստներն ու պինովևիևականներն են, որ կազմակերպում են պետի առաջավոր կոլտնտեսություններին ատելի ահաբեկչությունների և ատոնձին դեկավարների՝ տող սպանություններ անկյունից:

Այդ նրանք են, որ կապ են հաստում բանվորական առաձնին հաշտանների կերակուրների մեջ, որպեսզի թունավորեն դործարանների բանվորներին:

Այդ նրանք են լրտեսական և դիվերսիոն խմբակներ կազմակերպում, որպեսզի օդնեն ֆաշիստներին և իմպերիալիստներին սովետական իշխանության դեմ մղվող պայքարում:

Այդ նրանք են տեռորիստական խմբակներ կազմակերպում պարտիայի և կառավարության դեկավարների դեմ մահափորձեր կազմակերպելու համար:

Սակայն նրանք չարաչար սխալվում են իրենց հաշիվներում:

Նրանք իրենց հոդեվարքային ջղաձդումների մեջ այդ սպառնապիքներով ոչ ոքի չեն վախեցնի, ոչ ոքի չեն տատանի:

Մեր երկրի բոլշևիկներն ու աշխատավորները, բարձրացնելով ստալինյան պետության, կոչնչացնեն թշնամուն:

Ընկեր Ստալինն ասում է, որ թշնամիները «...ևմպադրում էին վախեցնել մեզ և հարկադրել մեզ շեղվելու լենինյան ուղուց: Այդ մարդիկ ակնհայտորեն մոռացել են, որ մենք, բոլշևիկներս, ատանձին կերտվածքի մարդիկ ենք: Նրանք մոռացել են, որ բոլշևիկներին չես վախեցնի ո՛չ դժվարություններով, ոչ սպառնալիքներով:

նրանք մոռացել են, որ մեզ կոփել է Լենինը, մեր առաջնորդը, մեր ուսուցիչը, մեր հայրը, որը վախ չգիտեր և չէր ընդունում պայքարի մեջ։ Նրանք մոռացել են, թե որքան ավելի ուժեղ դաղափարն բշնամիները, և որքան ավելի շատ հիստերիկայի մեջ ընկնեն պարտիայի ներսում եղած հակառակորդները, բոլշևիկներն այնքան ավելի են շիկանում նոր պայքարի համար և այնքան ավելի արագ են շարժվում դեպի առաջ»։

Բոլշևիկյան պարտիայի և սովետական իշխանության թշնամիները մոռացել են, որ մեր պարտիան և երկիրը ղեկավարում են ստալինյան կենտրոնական Կոմիտեն և հանճարեղ մեծ առաջնորդ Ստալինը — մեր ուսուցիչը, մեր հայրը, որը չի վախենում պայքարում, մեզ տանում է միայն դեպի առաջ, որը բոլշևիկյան զգաստության օրինակներ է տալիս, պրոլետարական ռևոլյուցիայից դեն մղելով բշնամիների հարվածները, որպես ժամապահ կանգնած մեր պարտիայի և մեր երկրի հզորության դիրքերում:

Անդրկովկասյան բոլշևիկները ամբողջ պարտիայի հետ միասին է՛լ ավելի կբարձրացնեն հարձակողական զգաստությունը և կուժեղացնեն անողոք պայքարը երկերեսանիների, ստոր դավաճանների ու մատնիչների, կոնտրռևոլուցիոն տրոցկիստների-զինովևյևականների և նրանց գործակիցների դեմ, հողմերին կտան սոցիալիզմի բշնամիների փոշին։

Անդրկովկասի բոլշևիկները յուրաքանչյուր կոմունիստի և կոմերիտականի մեջ, յուրաքանչյուր աշխատավորի մեջ անդուլ կերպով խորին ատելություն կդաստիարակեն բշնամու նկատմամբ, մասսաների ցասումը բարձրացնելով ջախջախված շահագործող դասակարգերի ու նրանց գործակալության մնացորդների կոնտրռևոլուցիոն ոտնձգությունների դեմ։

Անդրկովկասի բոլշևիկները հետագայում ևս Անդրկովկասյան ռեսպուբլիկաների աշխատավորության սրտերում անդուլ կերպով սիրո և նվիրվածության ջերմ զգացմունք կդաստիարակեն իրենց ծաղկող հայրենիքի նկատմամբ, բոլշևիկյան պարտիայի և ՍՍՌՄ կառավարության նկատմամբ, ժողովուրդների առաջնորդ հարազատ Ստալինի նկատմամբ, որի իմաստուն ղեկավարությամբ ՍՍՌՄ-ում ձեռք են բերված մարդկային պատմության մեջ չտեսնված՝ սոցիալիզմի հաղթանակները, որի ղեկավարությամբ ամբողջ աշխարհի

աշխատավորները կապիտալիզմի դեմ մղվող վճռական գոտեմարտներում մեծ հաղթանակներ ձեռք կբերեն»։

Սեպտեմբերի 23-ին

Ուլան-Ուդեից արևմուտք է ժամանում Բուրյաթ-Մոնղոլական պրոզնների պատվիրակությունը։

Նոյեմբերի 14-ին

Հրապարակվում է ՍՍՌՄ ժողկոմսովետին կից Արվեստի Գործերի Վարչության որոշումը Դեմյան Բեդնու «Բոգատիրներ» պիեսի մասին։

Որոշումը.

«Նկատի ունենալով, որ Դեմյան Բեդնու «Բոգատիրներ» օպերա-ֆարսը, որը բեմադրվել է Ա. Յա. Տաիրովի ղեկավարությամբ Կամերային Թատրոնում, Բորոդինի երաժշտության օգտագործմամբ.

Ա. Այդ մեծարման փորձ է հանդիսանում կիևյան Ռուսի ռազմիկների՝ որպես դրական, ուղղորդիչ տարրի, որը հակասում է պատմությանը և ամբողջովին կեղծ է իր քաղաքական տենդենցով.

Բ. Անխտիր սևացնում է ռուսական բիլինաների էպոսի բոգատիրներին, մինչդեռ բոգատիրներից ամենագլխավորները ժողովրդի պատկերացման մեջ հանդիսանում են ռուս ժողովրդի հերոսական գծերի կրողները.

Գ. Հակապատմական և ծաղրական կերպով է պատկերում Ռուսի մկրտությունը, որն իրականում հանդիսացել է դրական էտապ ռուս ժողովրդի պատմության մեջ, որովհետև դա օժանդակել է սլավոնական ժողովուրդների մերձեցմանը՝ ավելի բարձր կուլտուրա ունեցող ժողովուրդների հետ.

ՍՍՌՄ Միության ժողկոմսովետին կից Արվեստի Գործերի Կոմիտեն որոշեց՝

«Բոգատիրներ» պիեսը ռեպերտուարից հանել որպես սովետական արվեստին խորթ պիես»։

„Известия", 14 նոյեմբերի, 1936։

Նոյեմբերի 25-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի ղեկուցումը Սովետների 8-րդ Արտա-

կարգ համագումարում Նոր Կոնստիտուցիայի նախագծի մասին։

Ի. Վ. Ստալինի զեկուցումից.

«ՍՍՌՄ-ի էկոնոմիկայի բնագավառում տեղի ունեցած այդ փոփոխություններին համապատասխան՝ փոխվեց նաև մեր հասարակության դասակարգային կառուցվածքը։

Կալվածատերերի դասակարգը, ինչպես հայտնի է, արդեն վերացված էր քաղաքացիական պատերազմի հաղթական ավարտման հետևանքով։ Ինչ վերաբերում է մյուս շահագործող դասակարգերին, ապա նրանց բաժին ընկավ կալվածատերերի դասակարգի բախտը։ Չկա այլևս կապիտալիստների դասակարգն արդյունաբերության բնագավառում։ Չկա այլևս կուլակների դասակարգը գյուղատնտեսության բնագավառում։ Չկան այլևս վաճառականներն ու սպեկուլանտները ապրանքաշրջանառության բնագավառում։ Այդպիսով, բոլոր շահագործող դասակարգերը վերացվեցին։

Մնաց բանվոր դասակարգը։
Մնաց գյուղացիների դասակարգը։
Մնաց ինտելիգենցիան»։...

«Մեր սովետական հասարակությունը հասավ այն բանին, որ նա արդեն հիմնականում իրականացրեց սոցիալիզմը, ստեղծեց սոցիալիստական հասարակարգ, այսինքն՝ իրականացրեց այն, ինչ որ մարքսիստների մոտ այլ կերպ կոչվում է կոմունիզմի առաջին կամ ստորին փուլ։ Նշանակում է՝ մեզ մոտ արդեն հիմնականում իրականացված է կոմունիզմի առաջին փուլը՝ սոցիալիզմը։ (Երկարատև ծափահարություններ)։ Կոմունիզմի այդ փուլի հիմնական սկզբունքն է, ինչպես հայտնի է, հետևյալ ֆորմուլան. «յուրաքանչյուրից՝ ըստ նրա ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ նրա աշխատանքի»։ Արդյոք մեր կոնստիտուցիան պե՞տք է արտացոլի այդ փուլը, սոցիալիզմի նվաճման փուլը։ Նա պե՞տք է արդյոք հիմնվի այդ նվաճման վրա։ Անպայման պետք է հիմնվի։ Պետք է, որովհետև սոցիալիզմը ՍՍՌՄ-ի համար այն է, ինչ որ արդեն ձեռք է բերվել և նվաճվել»։...

«Իր հեքիաթ-պատմվածքներից մեկի մեջ ռուսական մեծ դրող Շչեդրինը տալիս է շատ սահմանափակ ու բթամիտ, բայց չափա-

զանց ինքնավստահ և տաքարյուն բյուրոկրատ սամոդուր մարդու տիպը։ Այն բանից հետո, երբ այդ բյուրոկրատն իրեն «վստահած» մարդում «կարդ ու անդորրություն» հաստատից, բնաջինջ անելով հպարտամոլ բնակիչների և հրկիզելով տասնյակ քաղաքներ, նա նայեց իր շուրջը և հորիզոնի վրա նկատեց Ամերիկան, մի երկիր, որն, իհարկե, քիչ է հայտնի, որտեղ, բանից դուրս է գալիս, որ կան ժողովրդին շփոթեցնող ինչ-որ աղատություններ և որտեղ պետությունն ուրիշ մեթոդներով են կառավարում։ Բյուրոկրատը նկատեց Ամերիկան և վրդովվեց. այդ ի՞նչ երկիր է, ո՞րտեղից լուսընկավ նրան, այդ ի՞նչ հիման վրա է, որ գոյություն ունի այնպես (Ընդհանուր ծիծաղ, ծափահարություններ)։ Իհարկե, այդ երկիրը պատահաբար հայտնագործել էին մի քանի դար առաջ, բայց մի՞թե չի կարելի այն նորից փակել, որպեսզի նրա հոտն անգամ չմնա։ (Ընդհանուր ծիծաղ)։ Եվ այս ասելով՝ մակագրեց. «Նորից փակե՛լ Ամերի՛կան»։ (Ընդհանուր ծիծաղ)»։...

«Տարակույս չի կարող լինել, որ այդ պարոնները վերջնականապես խճճվել են Կոնստիտուցիայի նախագծի իրենց քննադատության մեջ և խճճվելով՝ շփոթել են աջը ձախի հետ։

Այդ առթիվ չի կարելի չհիշել ճորտ տնային «աղջիկ» Պելագեային— Գոգոլի «Մեռյալ հոգիներից»։ Նա, ինչպես պատմում է Գոգոլը, հանձն առավ մի անգամ ճանապարհ դուրս տալ Չիչիկովի կառապան Սելիֆանին, բայց չկարողացավ տարբերել ճանապարհի աջ կողմը նրա ձախ կողմից, շփոթվեց և անհարմար դրության մեջ ընկավ։ Պետք է ընդունել, որ մեր քննադատները լինկան Ինրիների, չնայած նրանց ամբողջ ամբիցիային, այնուամենայնիվ հետու չեն գնացել «Մեռյալ հոգիների» ճորտ տնային «աղջիկ» Պելագեայի հատկացողության մակարդակից։ (Ծափահարություններ)։ Սրեն կհիշենք, կառապան Սելիֆանը հարկավոր համարեց հրապուրել Պելագեային՝ աջը ձախի հետ շփոթելու համար, ասելով նրան. «Էյ, դու, սևաուռուկ... չգիտես, թե որտեղ է աջը, որտեղ՝ ձախը»։ Ինձ թվում է, որ հարկավոր է հենց այդպես էլ հրապուրել մեր ձախադեմ քննադատներին; ասելով նրանց. Էյ, դուք, վա՛յ-քննադատներ... չգիտեք, թե որտեղ է աջը, որտեղ՝ ձախը։ (Երկարատև ծափահարություններ)։...

«Մի քանի օրից Սովետական Միությունը կունենա նոր, ծավալուն սոցիալիստական դեմոկրատիզմի սկզբունքների վրա կառուցված սոցիալիստական Կոնստիտուցիա։

Այդ կլինի մի պատմական փաստաթուղթ, որը պարզ ու տեղմ, համարյա արձանագրական ոճով, կխոսի ՍՍՌՄ-ում սոցիալիզմի տարած հաղթության փաստերի մասին, կապիտալիստական ստրկությունից ՍՍՌՄ-ի աշխատավորների ազատագրման փաստերի մասին, ՍՍՌ Միությունում ծավալուն, մինչև վերջը հետևողական դեմոկրատիայի հաղթության փաստերի մասին:

Այդ կլինի մի փաստաթուղթ, որ կվկայի, թե այն, ինչի մասին երազել են և շարունակում են երազել միլիոնավոր ազնիվ մարդիկ կապիտալիստական երկրներում, — արդեն իրականացվել է ՍՍՌՄ-ում: (Բուռն ծափահարություններ):

Այդ կլինի մի փաստաթուղթ, որը կվկայի, թե այն, ինչ որ իրականացված է ՍՍՌՄ-ում, լիովին կարող է իրականացվել նաև մյուս երկրներում: (Բուռն ծափահարություններ)»:

Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, Քաղհրատ, 1940, էջ 622, 627, 633—634, 637—638, 650:

Դեկտեմբերի 5-ին

Ֆրանսիայից Երևան է ժամանում Ալ. Իսահակյանը:

Բանաստեղծին դիմավորում են՝ Ստ. Զորյանը, Ն. Զարյանը, Գ. Աբովը:

Դեկտեմբերի 22-ին

Վախճանվեց Նիկոլայ Ալեքսեևիչ Օստրովսկին:

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Ջափածո

1. Հ. Հակոբյան.— Նոր երգեր, Թիֆլիս—Երևան:
2. Ե. Չարենց.— Պոեմներ, Պետհրատ, Երևան:
3. Գ. Սարյան.— Երեք երգ, Պետհրատ, Երևան:
4. Ա. Վշտունի.— Բանաստեղծություններ և պոեմներ, Պետհրատ, Երևան:
5. Ա. Վշտունի.— Ռամ-Ռոյ, Պետհրատ, Երևան:
6. Վ. Տեպեր.— Պայծառություն, Պետհրատ, Երևան:
7. Ս. Տարոնցի.— Ադավիա, Պետհրատ, Երևան:
8. Ադամնի.— Բանաստեղծություններ, Պետհրատ, Երևան:
9. Հ. Պողոսյան.— Մայրական, Պետհրատ, Երևան:
10. Ա. Սենալ.— Արյուն և հաղթանակ, Պետհրատ, Երևան:

Արձակ

1. Դ. Դեմիրճյան.— Ռաշիդ, Պետհրատ, Երևան:
2. Դ. Դեմիրճյան.— Նիգյար, Պետհրատ, Երևան:
3. Մ. Մանվելյան.— Ընտիր երկեր, Հայպետհրատ, Երևան— Մոսկվա:
4. Ծ. Թորգոմյան.— Ժպտացող կյանքը, Պետհրատ, Երևան:
5. Ծ. Թորգոմյան.— Կապուտակ ջրերի մոտ, Պետհրատ, Երևան:
6. Սիրաս.— Չգրված օրենք, Պետհրատ, Երևան:
7. Սիրաս.— Թալխաման, Պետհրատ, Երևան:
8. Սիրաս.—Ասմար, Պետհրատ, Երևան:
9. Հ. Մելիքյան.— Աղջիկը մորու փունջը ձեռքին, Պետհրատ, Երևան:
10. Վ. Անանյան.— Քարանձավի բնակիչները, Պետհրատ, Երևան:

Ժողովածու

1. «Մեր մանուկ և պատանի ստեղծագործողները» (գրական-գեղարվեստական ժողովածու), Պետհրատ, Երևան:

Թարգմանություններ

1. Հ. Բալզակ.— Հայր Գորիո, Հայպետհրատ, Երևան:
2. Ա. Ս. Պուշկին.— Բանաստեղծություններ, հեքիաթներ, Պետհրատ, Երևան:
3. Ա. Ս. Պուշկին.— Կապիտանի աղջիկը, Պետհրատ, Երևան:
4. Լ. Տոլստոյ.— Աննա Կարենինա, 1-ին և 2-րդ հատ., Պետհրատ, Երևան:
5. Լ. Տոլստոյ.— Պատերազմ և խաղաղություն, 2-րդ հատ., Պետհրատ, Երևան:
6. Ն. Օստրովսկի.— Ինչպես էր կոփվում պողպատը, Հայպետհրատ, Երևան:
7. Վ. Գարշին.— Պատմվածքներ, Պետհրատ, Երևան:
8. Նովիկով-Պրիբոյ.— Յուսիմա, Պետհրատ, Երևան:
9. Իպ. Տեն.— Գեղարվեստի փիլիսոփայությունը, Պետհրատ, Մոսկվա:

Հունվարի 8-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինը ընդունում է գերմանական պրոլ. Ֆեյխտվանգերին։

Փետրվարի 9-ին

ՀՍՍՀ Կենտգործկոմի որոշումը ռուսական մեծ բանաստեղծ Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկինի հիշատակը հավերժացնելու մասին.

«Ռուսական մեծ բանաստեղծ Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկինի հիշատակը հավերժացնելու նպատակով, նրա մահվան 100-ամյակի կապակցությամբ Հայկական ԽՍՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն որոշում է՝

1. Ստեփանավանի շրջանի ռուսական Գերդեր գյուղը վերանվանել Պուշկինո։

2. Դվալի լեռնանցքը վերանվանել Պուշկինյան լեռնանցք։

3. Դվալի լեռնանցքի վրա գտնվող աղբյուրը, որի մոտ տեղի է ունեցել Պուշկինի հանդիպումը Դրիբոյեդովի աճյունին՝ համապատասխան կարգով ձևավորել, կանգնեցնելով այդ տեղում ձեմորիալ տախտակ։

4. Ժողկոմխորհի միջոցով կազմակերպել Պուշկինյան մրցանակ՝ լավագույն բանաստեղծական ստեղծագործության համար։

5. Պետհամալսարանում պահել Պուշկինի անվան երկու թոշակառուններ՝ գրականության ֆակուլտետի լավագույն ուսանողներից։

6. Երևանի նորակառույց № 6 դպրոցը կոչել Պուշկինի անվան դպրոց։

7. Առաջարկել Երքաղխորհրդին՝ Երևան քաղաքի փողոցներից մեկը վերանվանել Պուշկինի անվան։

8. Առաջարկել Լենքաղխորհրդին՝ Լենինական քաղաքի փողոցներից մեկը և դպրոցներից մեկը կոչել Պուշկինի անվան»։

«Գրական թերթ», 10 փետրվարի, 1937։

Փետրվարի 10-ին

ՍՍՌՄ Մեծ Ակադեմիական թատրոնում հրավիրվում է հանդիսավոր նիստ նվիրված Ա. Ս. Պուշկինի մահվան 100-ամյակին։

Ներկա են լինում՝ ընկեր Ի. Վ. Ստալինը, ընկ. ընկ. Վ. Մ. Մոլոտովը, Լ. Մ. Կագանովիչը, Կ. Ե. Վորոշիլովը, Գ. Կ. Օրջոնիկիձեն, Ա. Ա. Անդրեևը, Ա. Ի. Միկոյանը, Ա. Ա. Ժդանովը, Ն. Ս. Խրուշչևը և Գ. Դիմիտրովը:

Փետրվարի 11-ին

Հայֆիլհարմոնիայում տեղի է ունենում Պուշկինի մահվան 100-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ:

Զեկուցում է Գ. Աբովը:

Ելույթներ են ունենում՝ Ավ. Իսահակյանը՝ «Պուշկինի 100-ամյակին», Ստ. Զորյանը՝ «Պուշկինի պրոզան», Ն. Զարյանը՝ «Պուշկինը և հայկական պոեզիան»:

Փետրվարի 17-ին

Մոսկվայում հրավիրվում է կարմիր բանակի և պաշտպանական թեմայի վրա աշխատող գրողների խորհրդակցություն:

Փետրվարի 18-ին

Վախճանվեց Գրիգորի Կոնստանտինովիչ Օրջոնիկիձեն:

Փետրվարի 22-ին

ՀԽՍՀ կենտգործկոմը որոշում է հավանություն տալ Հայկական ԽՍՀ Սահմանադրության նախագծին և ներկայացնել Հայկական ԽՍՀ Խորհուրդների IX արտակարգ համագումարին քննության և հաստատության:

Փետրվարի 22-ից—26-ը

Մոսկվայում տեղի է ունենում ՍԳՄ վարչության Պուշկինյան պլենումը:

Պլենումում տրվում են հետևյալ զեկուցումները.

1. «Պուշկինը և սովետական պոեզիան» (Ն. Տիխոնով):
2. «Պուշկինի պրոզան» (Տինյանով):
3. «Պուշկինի դրամատուրգիան» (Ալտման):

Մարտի 3—5-ը

Ընկեր Ի. Վ. Ստալինը զեկուցում է ՀամԿ(բ)Պ Կենտկոմի պլենումում «Պարտիական աշխատանքի թերությունների մասին»:

Ի. Վ. Ստալինի զեկուցումից:

«Կարելի է, որպես կանոն, ընդունել, որ քանի բոլշևիկները պահպանում են կապը ժողովրդի լայն մասսաների հետ, նրանք

անպարտելի կլինեն։ Եվ, ընդհակառակը, բավական է, որ բոլշևիկները կտրվեն մասսաներից և կորցնեն նրանց հետ ունեցած կապը, բավական է, որ նրանք ծածկվեն բյուրոկրատական ժանգով, որպեսզի նրանք զրկվեն ամեն մի ուժից և դատարկ բանի վերածվեն։

Հին հույներն իրենց առասպելաբանության սիստեմում ունեին մի հռչակավոր հերոս— Անթեյը, որը ինչպես ասում է առասպելաբանությունը, եղել է ծովերի աստված Պոսեյդոնի և հողի աստվածուհի Գեյայի որդին։ Նա իրեն հատկապես կապված էր զգում իր մոր հետ, որը ծնել, կիրակրել և դաստիարակել էր նրան։ Չկար այնպիսի հերոս, որին նա, այդ Անթեյը, չհաղթեր։ Նա համարվում էր անպարտելի հերոս։ Ինչո՞ւմն էր նրա ուժը։ Այդ ուժն այն բանի մեջ էր, որ ամեն անգամ, երբ հակառակորդի դեմ կռվելիս նա նեղն էր ընկնում, նա հպվում էր հողին, իր մորը, որը ծնել ու կերակրել էր նրան, և նոր ուժ էր ստանում։ Բայց նա, այնուամենայնիվ, ուներ իր թույլ տեղը— այդ որևէ կերպ հողից կտրվելու վտանգն էր։ Թշնամիները հաշվի էին առնում նրա այդ թուլությունը և դարանակալում էին նրան։ Եվ ահա գտնվեց մի թշնամի, որն օգտագործեց նրա այդ թուլությունը և հաղթեց նրան։ Այդ Հերքուլեսն էր։ Բայց Հերքուլեսն ի՞նչպես հաղթեց նրան։ Նա Անթեյին կտրեց հողից, բարձրացրեց օդի մեջ, խլեց նրանից հպվելու հնարավորությունը և այդպիսով խեղդեց նրան օդի մեջ։

Ես կարծում եմ, որ բոլշևիկները մեզ հիշեցնում են հունական առասպելաբանության հերոս Անթեյին։ Նրանք նույնպես, ինչպես և Անթեյը, ուժեղ են նրանով, որ կապ են պահպանում իրենց մոր հետ, մասսաների հետ, որոնք ծնել, սնել և դաստիարակել են նրանց։ Եվ քանի նրանք կապ են պահպանում իրենց մոր հետ, ժողովրդի հետ, նրանք անպարտելի մնալու բոլոր հրաշխիքներն են։

Այս է բոլշևիկյան ինքնաքննադատության անպարտելիության բանալին»։

И. Сталин, О недостатках партийной работы..., 1938, էջ 42—48։

Մարտի 18-ին

Վրաստանի ՍԴ Միությունը նշում է Մ. Պետրոսյանի գրական գործունեության 40-ամյակը։

Մարտի 23-ին

Հայկական ՍՍՌ Սովետների IX արտակարգ համագումարը հաստատում է ՀՍՖՀ նոր Սահմանադրությունը՝ Հիմնական Օրենքը։

Մարտի 30-ին

Գրողների Տանը կազմակերպվում է երեկո նվիրված Գ. Սունդուկյանի մահվան 25-ամյակին։

Զեկուցում է Գ. Աբովը։

ՀՍՀՀ Կենտգործկոմի Նախագահության որոշմամբ Երևանի Կաթմբատրոշ Պետական Թատրոնը կոչվում է Գ. Սունդուկյանի անվան։

Մարտ

ՀՍԳ Միության կից կազմակերպվում է երիտասարդ գրողների սեկցիա։

Ապրիլի 2—5-ը

Մոսկվայում տեղի է ունենում սովետական գրողների ընդհանուր ժողով։

Համկ(բ)Պ կենտկոմի պլենումի արդյունքները և Սովետական Գրողների Միության մոտակա խնդիրների մասին զեկուցում է Վ. Ստավսկին։

Ապրիլի 9-ին

ՀՍՀՀ ժողկոմխորհի որոշումը լավագույն բանաստեղծական ստեղծագործության համար Պուշկինյան մրցանակ սահմանելու մասին։

Ապրիլի 13-ին

Վախճանվեց Իլյա Իլֆը։

Ապրիլի 17—21-ը

Գրողների Տանը տեղի է ունենում Գրողների Միության ընդհանուր ժողով։

Օրակարգ.

Համկ(բ)Պ կենտկոմի Պլենումի արդյունքները և Գրողների Միության անելիքները։

Ապրիլի 25-ին

Երևանի Ջավեա Ինստիտուտում Վ. Կիրպոտինը զեկուցում է Հայաստանի պոեզիայի մասին։

Մայիսի 5-ին

Նշվում է «Պրավդա»-յի 25-ամյակը։

ՀամԿ(բ)Պ Կենտկոմի ողջույնը «Պրավդա»-յին.

«Բոլշևիկյան ողջույն «Պրավդա»-յին՝ բոլշևիկյան պարտիայի մարտական օրգանին, մարքսիզմ-լենինիզմի գործի անխոնջ մարտիկին, բոլշևիկյան տրադիցիաների հավատարիմ պահապանին — նրա պանծալի քսանհինգամյակի օրը։

Լենինյան «Պրավդա»-յի պատմությունն անխզելիորեն կապված է բոլշևիզմի պատմության հետ։ «Պրավդա»-ն, ծնված 1912 թվականին՝ ռևոլյուցիոն վերելքի ալիքում, խոշորագույն դեր խաղաց բոլշևիզմի և բանվոր դասակարգի ուժերը համախմբելու համար, պրոլետարիատի դիկտատուրայի և սոցիալիզմի հաղթանակի համար մղվող պայքարում։

ՀամԿ(բ)Պ Կենտկոմը համոզված է, որ «Պրավդա»-ն այսուհետև ևս բարձր կպահի Մարքսի-Էնգելսի-Լենինի դրոշը, համախմբելով պարտիական և ոչ պարտիական բոլշևիկների միլիոնավոր մասսաներին, օգնելով նրանց և մեր հայրենիքի բոլոր աշխատավորներին՝ տիրապետելու բոլշևիզմին, առաջ տանելով նրանց ժողովրդի թշնամիների դեմ այդ վճռական պայքարի ճանապարհով — հանուն կոմունիզմի հաղթանակի»։

Մայիսի 9-ին

Գրողների Տանը քննության է առնվում Հմ. Սիրասի «Զըրված օրենք» վեպը։

Մայիսի 26-ին

ՀԿ(բ)Պ X համագումարի բացումը։

Մայիսի 29—հունիսի 15-ը

Թիֆլիսում տեղի է ունենում Ի. Ճավճավաձեի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական օրեր։

Հոբելյանական պլենումում ելույթներ են ունենում՝ Ն. Զարյանը և Հ. Գյուլիքեվխյանը։

Մայիս

ՀԽՍՀ Կենտգործկոմի Նախագահության որոշումը Միքայել Նալբանդյանի մահվան 70-ամյակը հավերժացնելու մասին։

Մայիս

ՀԽՍՀ Կենտգործկոմի Նախագահության որոշումը Պերճ Պռոշյանի ծննդյան 100-ամյակը հավերժացնելու մասին։

Հունիսի 16-ին

Կուլտուրայի Տանը Գ. Սունդուկյանի մահվան 25-ամյակի առթիվ տեղի է ունենում հանդիսավոր նիստ։

Գ. Սունդուկյանի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցում է Հ. Գյուլիքեխվյանը։

Ելույթներ են ունենում՝ Շ. Դադիանին, Ս. Օրդուբադին, Դ. Դեմիրճյանը, Օ. Գուլազյանը և ուրիշները։

Հուլիսի 4-ին

Մադրիդում (Իսպանիա) բացվում է Կուլտուրայի Պաշտպանության Գրողների Միջազգային Ասոցիացիայի 2-րդ կոնգրեսը։

Կոնգրեսին մասնակցում է սովետական գրողների պատգամավորությունը։

Օգոստոսի 1-ին

Գրողների Տանը տեղի է ունենում ՀԽ Գրողների և արվեստագետների ընդհանուր ժողով։

Գրողների միջազգային 2-րդ կոնգրեսի արդյունքների մասին զեկուցում է Հ. Գյուլիքեխվյանը։

Ելույթներ են ունենում՝ Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Ն. Զարյանը, Ա. Վշտունին, Արազը և ուրիշները։

Օգոստոս

Մոսկվայում լույս է տեսնում Մ. Գորկու նախաձեռնությամբ պատրաստված «Աշխարհի օրը» գիրքը։

«Աշխարհի օրը» գրքի հրատարակությունը ձեռնարկված է այն բանի համար, որպեսզի մեր ընթերցողին ցույց տրվի, թե ինչով է լցված քաղքենիության օրը և այդ բովանդակության պատկերը հակադրվի մեր սովետական օրվան» (Մ. Գորկի)։

Հոկտեմբերի 16-ին

Գրողների Տանը տեղի է ունենում Երևանի երիտասարդ սկս-

նակ պրոզների և պրական խմբակների անդամների ընդհանուր ժողով։

Նոյեմբերի 13-ին

Վախճանվեց Հակոբ Հակոբյանը։

Նոյեմբերի 23-ին

Վախճանվեց Սուլեյման Ստալսկին։

Նոյեմբեր

Հոկտեմբերյան ռևոլուցիայի 20-ամյակի առթիվ Երևանում բացվում են՝ Ստալինյան Սահմանադրությանը նվիրված Կերպարվեստի ցուցահանդեսը և ժողովրդական ստեղծագործություններին ու Հայաստանի արդյունաբերությանը նվիրված ցուցահանդեսները։

Նոյեմբեր

Սովետական կարգերի հաստատման 20-ամյակի կապակցությամբ Մ. Գորկու և Շչերբակովի ստորագրությամբ կոչ է ուղղվում «ՍՍՌՄ Գրողների Միության բոլոր կազմակերպություններին»։

Դեկտեմբերի 6-ին

Համկ(բ)Պ Կենտկոմի դիմումը բոլոր ընտրողներին՝ բանվորներին, բանվորուհիներին, գյուղացիներին և գեղջկուհիներին, Կարմիր Բանակին, սովետական ինտելիգենցիային։

Դեկտեմբերի 9-ին

Ընկեր Ա. Ի. Միկոյանի ճառը Երևան քաղաքի Ստալինյան ընտրական օկրուգի նախընտրական ժողովում։

Ա. Ի. Միկոյանի ճառից.

«Սովետական Հայաստանը մյուս ժողովուրդներից ավելի է պարտական Սովետական Իշխանությանը։ Նա հայ ժողովրդին տվեց ոչ միայն ազատագրում, այլև խաղաղ գոյություն, որից նա զուրկ էր առաջ»։...

«Ռուսաց լեզուն— այդ Լենինի և Ստալինի լեզուն է։ Դա այն լեզուն է, որով գրված են Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի պատմական փաստաթղթերի բնագրերը, Լենինյան-Ստալինյան ռևոլուցիոն թեորիայի մեծագույն ստեղծագործությունների բնագրերը։ (Բուռն ծափահարություններ, լոզունգներ տեղերից՝ «կեցցե՛ ռուս մեծ ժողովուրդը»)։

Ռուսերեն լեզվով ստեղծված են պրականության, արվեստի, գիտության՝ աշխարհում լավագույն կլասիկ երկերը։

Ով ուզում է կուլտուրական լինել, նա չի կարող յոլա գնալ առանց ռուսաց լեզուն իմանալու։ Ով ուզում է լինել կրթված, նա չի կարող հաղորդակից չլինել ռուսական կուլտուրային, ռուսական գրականության երկերին։

Ահա՛ թե ինչու, ընկերներ, թույլ տվեք ձեզ բոլորիդ և հանձին ձեր՝ Հայաստանի բոլոր աշխատավորներին — բանվորներին, կոլտնտեսականներին ու ամբողջ ինտելիգենցիային ցանկանալ լրջորեն ձեռնամուխ լինել ռուսաց լեզվի ուսումնասիրությանը»։

«Գրական թերթ», 18 դեկտեմբերի, 1937։

Դեկտեմբերի 11-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի ճառը Մոսկվա քաղաքի Ստալինյան ընտրական օկրուգի ընտրողների նախընտրական ժողովում։

Ի. Վ. Ստալինի ճառից.

«Ընտրողները, ժողովուրդը պետք է իրենց պատգամավորներից պահանջեն, որպեսզի նրանք մնան իրենց խնդիրների բարձրության վրա, որպեսզի նրանք աշխատանքում չիջնեն մինչև քաղաքական օբիվատելների մակարդակը, որպեսզի նրանք մնան լենինյան տիպի քաղաքական գործիչների պոստում, որպեսզի նրանք լինեն նույնպիսի պարզ ու որոշակի գործիչներ, ինչպես Լենինն էր (ծափահարություններ), որպեսզի նրանք մարտում լինեն նույնպիսի անվեհերներ և անողոք՝ ժողովրդի թշնամիների նկատմամբ, ինչպիսին էր Լենինը (ծափահարություններ), որպեսզի նրանք ազատ լինեն ամեն տեսակ խուճապից, խուճապի նման ամեն տեսակ բանից, երբ գործն սկսում է բարդանալ և հորիզոնի վրա ուրվագծվում է որևէ վտանգ, որպեսզի նրանք նույնպես ազատ լինեն խուճապի նման ամեն բանից, ինչպես ազատ էր Լենինը (ծափահարություններ), որպեսզի նրանք լինեն նույնպես իմաստուն և ոչ հապճեպ՝ բարդ հարցերի լուծման ժամանակ, որտեղ հարկավոր է բազմակողմանի կողմնորոշում և բոլոր պլյուսների ու մինուսների բազմակողմանի հաշվառում, ինչպիսին էր Լենինը (ծափահարություններ), որպեսզի նրանք լինեն նույնպես ճշմարտացի ու ազնիվ, ինչպիսին էր Լենինը (ծափահարություններ), որպեսզի նրանք նույնպես սիրեն իրենց ժողովուրդը, ինչպես սիրում էր նրան Լենինը (ծափահարություններ)»։

«Правда», 12 դեկտեմբերի, 1937։

Դեկտեմբերի 12-ին

Տեղի են ունենում ՍՍՌՄ Գերագույն Սովետի ընտրությունները։

Դեկտեմբերի 30-ին

Թբիլիսիում տեղի է ունենում Քաղսովետի հանդիսավոր նիստը նվիրված Շ. Ռուսթավելու «Վագրենավոր» պոեմի 750-ամյակին։

Դեկտեմբերի 30-ին

Պետօպերայում տեղի է ունենում հանդիսավոր նիստ նվիրված Շ. Ռուսթավելու «Վագրենավոր» պոեմի 750-ամյակին։

Դեկտեմբեր

Թբիլիսիում տեղի է ունենում ՍՍՌՄ Դրոշների պլենումը՝ նվիրված Շ. Ռուսթավելու «Վագրենավոր» պոեմի 750-ամյակին։ Ելույթներ են ունենում Ավ. Խահակյանը և Ն. Զարյանը։

Ավ. Խահակյանի ելույթից.

«Շ. Ռուսթավելի, Նիզամի, Պուշկին, Շևչենկո, Հովհաննես Թումանյան, Սուլեյման Ստալսկի, Ջամբուլ մեզ ներշնչում են հերոսություն, զոհաբերություն, հայրենասիրություն։

Այս զենքով պիտի զինենք մենք մեր աշխատավորությանը, մեր երիտասարդությանը։ Նրանց պատգամները մենք պիտի մասսայականացնենք մեր գրչով, մեր խոսքով»։

«Գրական թերթ» № 1, 1938թ.

«ՍՍՌՄ-ի աշխատավորները— բանվորները, գյուղացիները, ինտելիգենցիան— սոցիալիստական շինարարության տարիների ընթացքում խիստ փոխվեցին։

Բանվոր դասակարգը դադարեց արտադրության միջոցներից զրկված շահագործվող դասակարգ լինելուց, ինչպես այդ տեղի ուներ կապիտալիզմի ժամանակ։ Բանվոր դասակարգը ոչնչացրեց կապիտալիզմը, կապիտալիստներից խլեց արտադրության միջոցները, դրանք դարձրեց հասարակական սեփականություն։ Նա դադարեց պրոլետարիատ լինելուց՝ այս բառի բուն, հին իմաստով։ ՍՍՌՄ-ի պրոլետարիատը, որը պետական իշխանություն ունի, դարձավ բո-

լորովին նոր դասակարգ։ Նա դարձավ շահագործումից ազատագրված բանվոր դասակարգ, որը ոչնչացրել է տնտեսության կապիտալիստական սիստեմը և հաստատել է արտադրության գործիքների սոցիալիստական սեփականություն, այսինքն՝ այնպիսի բանվոր դասակարգ, որպիսին մարդկության պատմությունը դեռ չէր տեսել։

Ոչ պակաս խոր փոփոխություններ տեղի ունեցան նաև ՍՍՌՄ-ի գյուղացիության դրության մեջ։ Հնումն ավելի քան երկու տասնյակ միլիոն ցրված առանձին գյուղացիական մանր ու միջակ տնտեսություններ անհատաբար փորում էին իրենց հողաբաժինները։ Նրանք օգտվում էին հետամնաց տեխնիկայով, նրանց շահագործում էին կալվածատերերը, կուլակները, վաճառականները, սպեկուլյանտները, վաշխառուները և այլն։ Այժմ ՍՍՌՄ-ում աճել է բոլորովին նոր գյուղացիություն. չկան այլևս կալվածատերեր և կուլակներ, վաճառականներ և վաշխառուներ, որոնք կարողանային շահագործել գյուղացիությանը։ Գյուղացիական տնտեսությունների ամենահսկայական մեծամասնությունը մտել է կոլխոզները, որոնց հիմքը կազմում է արտադրության միջոցների ո՛չ թե մասնավոր սեփականությունը, այլ կոլեկտիվ սեփականությունը, որն աճել է կոլեկտիվ աշխատանքի հիմքի վրա։ Այդ գյուղացիության նոր տիպն է; ամեն տեսակ շահագործումից ազատագրված գյուղացիության տիպը։ Այդպիսի գյուղացիություն նույնպես դեռ չէր տեսել մարդկության պատմությունը։

Փոխվել է ՍՍՌՄ-ի նաև ինտելիգենցիան։ Իր մասսայով նա դարձել է միանգամայն նոր ինտելիգենցիա։ Իր մեծամասնությամբ նա բանվորական ու գյուղացիական միջավայրից է դուրս եկել։ Նա ծառայում է ո՛չ թե կապիտալիզմին, ինչպես հին ինտելիգենցիան, այլ սոցիալիզմին։ Ինտելիգենցիան դարձել է սոցիալիստական հասարակության իրավահավասար անդամը։ Այդ ինտելիգենցիան բանվորների ու գյուղացիների հետ միասին կառուցում է նոր, սոցիալիստական հասարակություն։ Այդ ինտելիգենցիայի նոր տիպն է, ժողովրդին ծառայող և ամեն տեսակ շահագործումից ազատագրված ինտելիգենցիայի տիպը։ Այդպիսի ինտելիգենցիա մարդկության պատմությունը դեռ չէր տեսել։

Այսպիսով, ՍՍՌՄ-ի աշխատավորների միջև ջնջվում են դասակարգային սահմանները, չքանում է հին դասակարգային բա-

ցառիկությունը։ Կորչում ու ջնջվում են տնտեսական ու քաղաքական հակասությունները բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի միջև։ Ստեղծվել է հասարակության բարոյական-քաղաքական միասնության հիմքը»։

«Համկ(բ)Կ պատմություն Համառոտ դասընթաց»։

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Գափաձո

1. «Լենին փաշա», Հայպետհրատ, Երևան։
2. Խնկո-Ապեր.— Առակներ, Հայպետհրատ, Երևան։
3. Սարմեն.— Լենին հսկան, Հայպետհրատ, Երևան։
4. Սարմեն.— Նվաճված երջանկություն, Հայպետհրատ, Երևան։
5. Գ. Բորյան.— Բանաստեղծություններ, Հայպետհրատ, Երևան։
6. Մ. Կորյուն.— Կյանքի և սիրո երգեր, Հայպետհրատ, Երևան։

Աբծակ

1. Արազի.— Երկեր, 1-ին հատոր, Պետհրատ, Երևան։
2. Ն. Զարյան.— Հացավան, Պետհրատ, Երևան։
3. Հր. Քոչար.— Օգանն Վասպուրի ճանապարհորդությունը, Պետհրատ, Երևան։
4. Ք. Թափալյան.— Վիկտորիա, Պետհրատ, Երևան։
5. Արաքս.— Մանկական պատմվածքներ, Պետհրատ, Երևան։
6. Լ. Բարգյուլ.— Հսկաների շարքում, Պետհրատ, Երևան։
7. Գ. Հովնան.— Կյանքը փակ նամակներում, Պետհրատ, Երևան։

Դրամատուրգիա

1. Ան. Վարդանյան.— Դրամատիկական երկեր, Պետհրատ, Երևան։

Ժողովածուներ

1. «Լենինը հայկական ֆոլկլորում», Պետհրատ, Երևան։

2. «Դեկտեմբերի 12» (բանաստեղծությունների ժողովածու)։ Պետհրատ, Երևան։

Գրականության պատմություն, տեսություն և ճննադատություն

1. Վ. Թևրիկյանց.— Պուշկինը և Արևելքը, Պետհրատ, Երևան։
2. Հ. Մուրադյան.— Պուշկինի կյանքը, Պետհրատ, Երևան։

Թարգմանություններ

1. Ա. Ս. Պուշկին.— Հեքիաթներ, Պետհրատ, Երևան։
2. Մ. Գորկի.— Իմ համալսարանները, Պետհրատ, Երևան։
3. Ալ. Տոլստոյ.— Պետրոս առաջին, 1-ին գիրք, Պետհրատ, Երևան։
4. Վերհաեն.— Պուշկինի կյանքը, Պետհրատ, Երևան։

1938

Հունվարի 6-ին

Կարմիր Բանակի Տանը տեղի է ունենում գրողների և Կարմիր Բանակի հրամանատարների հանդիպում։

Հունվարի 11-ին

Հայֆիլհարմոնիայի դահլիճում տեղի է ունենում երեկո նվիրված Ն. Ա. Նեկրասովի մահվան 60-ամյակին։

Հունվարի 12-ին

ՍՍՌՄ Գերագույն Սովետի առաջին գումարման առաջին սեսիայի բացումը։

Հունվարի 15-ին

ՀՆԳ Միության քարտուղարությունը քննության է առնում ուսանց լեզվին տիրապետելու խնդիրը։

Հունվար

Վրացական ՍՍՌ Կենտգործկոմի Նախագահության որոշմամբ «Վագրենավոր» պոեմի թարգմանության համար պարգևատրվում են մի շարք գրողներ։ Այդ թվում շնորհակալության են արժանանում Ն. Զարյանն ու Գ. Սարյանը, Գ. Ասատուրի վրացերենից

Քարգմանած Շոթա Ռուսթավելու «Վագրենավոր» պոեմի խմբագրման համար։

Փետրվարի 7-ին

Հրավիրում է Հայ Գրողների ընդհանուր ժողով։

Քննության է առնվում Սովետական Գրողների Միության վարչության կոչը՝ Կարմիր Բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի 20-րդ տարեդարձի կապակցությամբ ուղղված Սովետական Միության բոլոր գրական աշխատողներին։

Կոչից.

«Մենք դիմում ենք գրականության բոլոր աշխատողներին և հոչ ենք անում է՛լ ավելի ակտիվորեն մասնակցելու գրական-պաշտպանողական շարժմանը, կոչ ենք անում՝ ուսումնասիրելու ռազմական գիտությունները»։...

«... Սովետական Գրողների Միությունը պարտավոր է նախապատրաստված լինել ամբողջությամբ՝ իր պարտականությունները պատերազմի դեպքում կատարելու համար։

Սովետական գրողները պարտավոր են պատերազմի դեպքում ամբողջովին ապահովել պատերազմող ժողովրդի պահանջները գեղարվեստական խոսքի առպարեզում։ Գրողները պետք է տան ռազմական հրատապ պիեսներ, տեսություններ, գրքեր, բրոշյուրներ, կոչեր, ռադիոտեքստեր, կինո-սցենարիաներ։

Գրողները, ինչպես ցույց տվեց աքանչելի գինված ուժերի պայքարի փորձը Իսպանիայում և Չինաստանում, պետք է նախ անձամբ մասնակցեն գինված պայքարին սոցիալիստական աշխարհի անհաշտ թշնամու— ֆաշիզմի դեմ։ Եթե հարկավոր լինի, մեր գրողը պետք է դառնա հրացանաձիգ, հրամանատար, կոմիսար, պետք է կարողանա կատարել ամեն տեսակ մարտական հանձնարարություն։

Սովետական Միության ընկե՛ր գրականագետներ։ Թող Կարմիր Բանակի և Ռազմական Նավատորմի փառավոր հոբելյանի օրերը լինեն մեր գրական-ռազմական ստուգման օրերը»։

«Գրական թերթ», 18 փետրվարի, 1938։

Փետրվարի 8-ին

Գրողների Տանը հրավիրվում է աշուղների հանրապետական

խորհրդակցություն։ «Հայ աշուղները» նյութի մասին զեկուցում է Ն. Զարյանը։

Նյութեր են ունենում՝ Գ. Լեոնյանը, Հ. Մելիքյանը, Հ. Ջրնդին, աշուղ Վերդին և ուրիշները։

Փետրվարի 12-ին

Պետական Համալսարանում կազմակերպվում է հուշերի երեկո նվիրված Հ. Թումանյանին։

Հուշեր են պատմում՝ Ավ. Իսահակյանը, Ստ. Զորյանը, Գ. Լեոնյանը։

Փետրվարի 12-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի պատասխանը Ի. Ֆ. Իվանովի նամակին։

Մարտի 20-ին

ՀՍՍՀ Ժողկոմխորհին կից Արվեստի Գործերի Վարչությունը հայտարարում է լավագույն պիեսների մրցանակաբաշխություն։

Մարտի 22-ին

Հայֆիլհարմոնիայում կազմակերպվում է հանդիսավոր երեկո նվիրված Հ.Թումանյանի մահվան 15-ամյակին։

Բացման խոսք է ասում՝ Ն. Զարյանը։

Զեկուցում է՝ Ա. Ինճիկյանը։

Հուշեր են պատմում՝ Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Գ. Լեոնյանը։

Մարտի 28-ին

Հայֆիլհարմոնիայում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Մ. Գորկու ծննդյան 70-ամյակին։

Բացման խոսք է ասում՝ Ա. Փիրուզյանը։

Զեկուցում է՝ Գ. Հովնանը։

Ապրիլի 10-ին

Տեղի է ունենում ՀԽԳ Միության ժողովը նվիրված Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ընտրություններին։

Ապրիլի 12-ին

«Գրական թերթ»-ի 17-րդ համարը նվիրվում է «Ստալինը հայ աշուղների երգերում» թեմային։

Ապրիլի 16-ին

Գրողների Տանը կազմակերպվում է երեկո նվիրված Ե. Աբովյանի անհայտացման 90-ամյակին։

Ջեկուցում է Հ. Մելիքյանը։

Ապրիլի 21-ին

Հենինականի Պետթատրոնում տեղի է ունենում գրական-գեղարվեստական երեկո նվիրված Ավ. Իսահակյանին։

Ապրիլի 29-ին

Գրողների Տանը Դ. Դեմիրճյանը զեկուցում է «Հովհ. Թումանյանի ստեղծագործությունների մասին»։

Մայիսի 15-ին

Գրողների տանը բացվում է երիտասարդ գրողների հանրապետական խորհրդակցություն։

Ջեկուցում են. Հ. Մելիքյանը՝ «Երիտասարդ գրողների ստեղծագործությունների և գրական կադրերի աճման մասին» և Ս. Միքայելյանը՝ «Կոմերիտմիությունը և երիտասարդ գրական կադրերի դաստիարակման խնդիրները»։

Խորհրդակցությունը հանձնարարում է երիտասարդ գրողներին նամակ-բանաստեղծություն գրել Առաջնորդին։

Մայիսի 17-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի ճառը բարձրագույն դպրոցների աշխատողների ընդունելության՝ Կրեմլում։

Ի. Վ. Ստալինի ճառից.

«Ընկերնե՛ր։

Թույլ տվեք առաջարկել դիտության կենացը, նրա ծաղկման կենացը, դիտության մարդկանց կենացը։

Գիտության ծաղկման կենացը, այն գիտության, որը չի պարապվում ժողովրդից, ժողովրդից հեռու չի պահում իրեն, այլ պատրաստ է ծառայելու ժողովրդին, պատրաստ է ժողովրդին հաղորդելու գիտության բոլոր նվաճումները, որն ապատարկում է ժողովրդին ոչ թե հարկադրաբար, այլ կամավոր կերպով, հաճույքով։ (Ծափահարություններ)։

Գիտության ծաղկման կենացը, այն գիտության, որն իր հին

ու ճանաչված գնկավարներին թույլ չի տալիս կամայականորեն պարփակվել գիտության քուրմերի կեղևի մեջ, գիտության մոնոպոլիստների կեղևի մեջ, որը հականում է գիտության երիտասարդ աշխատողների հետ գիտության հին աշխատողների դաշինքի իմաստը, նշանակությունը, ամենազորությունը, որը կամավոր կերպով ու հաճույքով գիտության բոլոր դռները բաց է անում մեր երկրի երիտասարդ ուժերի առաջ և հնարավորություն է տալիս նրանց՝ նվաճելու գիտության բարձունքները, որն ընդունակ է, որ ապագան պատկանում է գիտության երիտասարդություններ (Ապահարություններ):

Գիտության ծաղկման կենացը, այն գիտության, որի մարդիկ հասկանալով գիտության մեջ հաստատված տրադիցիաների ուժն ու նշանակությունը և համորեն օգտագործելով դրանք հօգուտ գիտության շահերի, այնուամենայնիվ չեն ուզում լինել այդ տրադիցիաների ստրուկները, որն ունի հին տրադիցիաները, նորմաները, դրույթները փշրելու համարձակություն, վճռականություն, երբ դրանք դառնում են հնացած, երբ դրանք արգելակի են վերածվում առաջխաղացման համար, և որը կարողանում է ստեղծել նոր տրադիցիաներ, նոր նորմաներ, նոր դրույթներ: (Ապահարություններ):

Գիտությունն իր զարգացման մեջ գիտե ոչ քիչ թվով քաջարի մարդկանց, որոնք կարողանում էին փշրել հինը և ստեղծել նորը, չնայած ամեն տեսակ խոչընդոտներին, հակառակ ամեն բանի: Գիտության այնպիսի արիներ, ինչպես Գալիլեյը, Դարվինը և շատ ուրիշները՝ հանրածանոթ են: Ես կուզեի կանգ առնել գիտության այնպիսի կորիֆեյներից մեկի վրա, որը միևնույն ժամանակ հանդիսանում է մեր ժամանակի մեծագույն մարդը: Ես նկատի ունեմ Լենինին, մեր ուսուցչին, մեր դաստիարակին (Ապահարություններ): Հիշեցեք 1917 թիվը: Ռուսաստանի հասարակական զարգացման գիտական անալիզի հիման վրա, միջազգային դրության գիտական անալիզի հիման վրա Լենինն այն ժամանակ եկավ այն հետևության, որ դրությունից միակ ելքը հանդիսանում է սոցիալիզմի հաղթանակը Ռուսաստանում: Այդ, ավելի քան անսպասելի հետևություն էր այն ժամանակվա գիտության շատ մարդկանց համար: Պլեխանովը, գիտության աշքի ընկնող մարդկանցից մեկը, այն ժամանակ արհամարհանքով էր խոսում Լենինի մասին, պըն-

դելով, թե Լենինը գտնվում է «զառանցանքի մեջ»: Գիտության այդ ոչ պակաս հայտնի մարդիկ պնդում էին, թե «Լենինը խելագարվել է», թե նրան հարկավոր է թաքցնել որևէ հեռու տեղ: Այդ ժամանակ Լենինի դեմ ոռնում էին գիտության բոլոր ու ամեն տեսակի մարդիկ, որպես մի մարդու, որը քանդում է գիտությունը: Բայց Լենինը չվախեցավ դեմ գնալ հոսանքին, դեմ գնալ քարացածությանը: Եվ Լենինը հաղթեց: (Ծափահարություններ)»:...

«Ես խոսեցի գիտության մասին: Բայց լինում է ամեն տեսակ գիտություն: Այն գիտությունը, որի մասին ես խոսեցի, կոչվում է առաջավոր գիտություն:

Մեր առաջավոր գիտության ծաղկման կենացը:

Առաջավոր գիտության մարդկանց կենացը:

Լենինի և լենինիզմի կենացը:

Ստալինի և ստալինովականների կենացը:

Պապանինի և պապանինականների կենացը: (Ծափահարություններ)»:

«Գրական թերթ», մայիսի 20, 1938:

Մայիսի 20-ին

Երևանի Պետական Գրական Թանգարանում բացվում է Մ. Գորկու ծննդյան 70 և մահվան 2-րդ տարելիցին նվիրված ցուցահանդես:

Մայիսի 20-ին

Գրողների Տանը տեղի է ունենում հանդիսավոր երեկո՝ նվիրված Ջամբուլի գրական գործունեության 75-ամյակին:

Մայիսի 31-ին

Գրողների Տանը տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված «Ասք Իգորի արշավանքի մասին» երկի 750-ամյակին:

Հունիսի 2-ին

ՀԿ(բ)Պ XII համագումարի բացումը:

Հունիսի 12-ին

Տեղի են ունենում Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունները:

Հրապարակվում է Հայաստանի երիտասարդ բանաստեղծներից նամակն ուղղված ընկեր Ի. Վ. Ստալինին:

նամակից.

«Մեր ձայնը քեզ, անմար արև, մեր սերը քեզ, ո՛վ իմաստուն,
Ողջույն քեզ հայ ժողովրդից, որ վառ գարուն ունի սրտում,
Դու ես գրել Օրենքը մեծ ժողովրդի կյանքի ծաղկման,
Ազատության, հոխ վայելքի ոսկի Օրենքն արեգական,
Այդ Օրենքն է նոր ուժ տալիս մեր աշխարհի հզոր վազքին,
Ծաղիկների բույրով լցնում մեր այսօրը և ապագան։
Ջերմ ենք սիրում հայրենիքը, նա մեզ տվեց և՛ կյանք և՛ սեր,
Մեր նորաբաց ճամփաներին վառեց կյանքի անմար լույսեր։
Ով դու մեծ հայր, մեր Թանկագին, այս պատմությունը դարերի,
Մեզ ասում է՝ խորհրդային հայրենիքը միշտ ջերմ սիրիր։
Եվ մեր սիրտն է հյուսված ամուր հայրենիքին հերոսական,
Որին լույսով է ողողում քո անունը արեգական»։

«Գրական թերթ», 12 հունիսի, 1938։

Հուլիսի 12-ին

Բացվում է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի առաջին սեսիան։

Բացման խոսք է ասում Արագին։

Հուլիսի 29-ին

Կարմիր Բանակի հերոսական մարտերի սկիզբը Խասան լճի շրջանում, որ վերջացավ ճապոնական զորքերի լիակատար ջախջախումով։

Օգոստոսի 3-ին

Վախճանվեց Ալեքսանդր Գեորգիևիչ Մալիշկինը։

Օգոստոսի 20-ին

Տեղի է ունենում ՀԽԳՄ վարչության նիստ։ Քննության են առնվում գրականության մեջ նացիոնալիզմի-դաշնակիզմի-ռապպականության մնացորդների դեմ պայքարն ուժեղացնելու խնդիրները։

Օգոստոսի 25-ին

Վախճանվեց Ալեքսանդր Իվանովիչ Կուպրինը։

Սեպտեմբերի 7-ին

ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը՝ ««Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսի 1000-ամյա հոբելյանն անցկացնելու մասին»։

Որոշումը.

«Հաշվի առնելով հայ ժողովրդի նշանավոր գրական հուշարձանի՝ «Սասունցի Դավիթ» էպոսի մեծագույն նշանակությունը, որտեղ բացառիկ պայծառությամբ արտահայտված է ժողովրդի ազատասիրական ոգին ու հերոսությունը, նրա պայքարն օտարերկրյա նվաճողների դեմ, Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմը որոշում է.—

1939 թվի մայիսին անցկացնել «Սասունցի Դավիթ» էպոսի հազարամյա հոբելյանը»։

«Գրական թերթ», 14 սեպտեմբերի, 1938։

Սեպտեմբեր

ՀԽՍՀ Ժողկոմխորհի որոշումը «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսի 1000-ամյա հոբելյանն անցկացնելու մասին։

Որոշումը.

«1939 թվի մայիս ամսում «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսի 1000-ամյա հոբելյանն անցկացնելու կապակցությամբ կազմակերպել հոբելյանն անցկացնող հանրապետական կոմիտե։ Կոմիտեի կազմի մեջ մտնում են՝ Փիրուզյան Ա. Ս. (նախագահ), Օրբելի Հ. Ա., Աբով Գ. (նախագահի տեղակալներ) և կոմիտեի անդամներ՝ Հարությունյան Գր., Արագի, Ջավախաշվիլի (Թբիլիսիի Պետհամալսարանի պրոֆեսոր), Աբեղյան Մ., Մանանդյան Հ., Դեմիրճյան Դ., Նաիրի Զարյան, Գրիգորյան Հ., Առուշանյան Շ., Մելիքյան Հ., Միքայելյան Ս., Մարտիրոսյան Բ., Տերտերյան Ա., Քոչարյան Ս., Բեկնազարյան Ա., Տերտերյան Ա., Կարապետյան Ս., Կոչոյան Հ., Ռիզաեվ Ս., Վաղարշյան Վ., Շիրազ Հովհ., Հարությունյան Արև, Աղբալյան Գ., Սահակյան Սիմակ, Կիրպոտին Վ., Շիգանյան Բ.»։

«Գրական թերթ», 14 սեպտեմբերի, 1938։

Սեպտեմբերի 19-ին

«Պրավդա»-ն առաջնորդող է նվիրում «ՀամԿ(բ)Պ պատմության համառոտ դասընթացին»։

Առաջնորդողից.

«Այսօր «Պրավդա»-յում հրապարակվում են «Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի Պատմության»

12-րդ գլուխը և եզրափակումը: Ավարտված է հիանալի գիտական աշխատությունը. Պարտիայի ձեռքը նրա Կենտրոնական Կոմիտեն, նրա ուսուցիչ ընկեր Ստալինը տվել են վիթխարի ուժի տեսական զենք: Այդ գիտական աշխատության մեջ սեղմ ու վառ կերպով տպավորված է Լենին-Ստալինի պարտիայի ողջ բազմամյա պանծալի պատմական ուղին ու փորձը:

Ծանրագույն պայմաններում տասնյակ տարիներ մեր պարտիան, բանվոր դասակարգի գլուխն անցած, պայքարել է կապիտալիստական կարգերի տապալման համար, մարդու կողմից մարդու շահագործումը ոչնչացնելու համար, սոցիալիզմի համար: Պայքարեցե՛ք և հաղթանակեցե՛ք»:...

«Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի պատմությունը» «Եզրափակում» բաժնի մեջ ամփոփում է բոլշևիկյան պարտիայի անցած պանծալի պատմական ուղու հիմնական արդյունքները: Այստեղ ցույց է տրված թե ինչ է սովորեցնում ՀամԿ(բ)Պ պատմությունը, վառ ու սեղմ ձևով տրվում է բոլշևիկյան ղեկավարության անպարտելիության պատճառների ու պայմանների մարքսիստական խոր բացատրությունը, այստեղ տրվում է Լենին-Ստալինի պարտիայի ամբողջ պատմական իմաստության ըմբռնման ու յուրացման բանալին»:...

«Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի պատմությունը», որը հավանություն է գտել ՀամԿ(բ)Պ Կենտկոմի կողմից, արժեքավորագույն ավանդ է լենինիզմի գանձարանի մեջ, առաջավոր թեորիայի մեջ, որը կերպարանափոխում է աշխարհը»:

«Խորհրդային Հայաստան», 22 սեպտեմբերի, 1938:

Սեպտեմբերի 22-ին

Տեղի է ունենում ՀԽԳ Միության ընդհանուր ժողովը. քննության են առնվում «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյա հոբելյանի նախապատրաստման խնդիրները:

Սեպտեմբերի 27-ին

ՀՍԽՀ ժողկոմխորհում տեղի է ունենում «Սասունցի Դավիթ» էպոսի հանրապետական հոբելյանական կոմիտեի առաջին ընդլայնված նիստը:

Ծրակարգ.

1. «Սասունցի Դավիթ» էպոսի գիտական-ակադեմիական հրատարակության տեքստի պատրաստումը» (Գ. Աբով):

2. «Սասունցի Դավթի» էպոսյան պատկերազ ցուցահանդեսի կազմակերպումը» (Ս. Կարապետյան և Հ. Մելիքյան):

Հոկտեմբերի 1-ին

Լույս է տեսնում «ՀամԿ(բ)Պ պատմություն: Համառոտ դասընթացը»:

Ներածությունից.

«Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) պարտիան անցել է մի երկար և փառապանծ ուղի առաջին մարքսիստական փոքրիկ խմբակներից ու խմբերից, որոնք հրապարակ եկան Ռուսաստանում անցյալ դարի 80-ական թվականներին, մինչև բոլշևիկների մեծ պարտիան, որն այժմ ղեկավարում է բանվորների և գյուղացիների՝ աշխարհիս առաջին սոցիալիստական պետությունը»:...

«ՀամԿ(բ)Պ-ն ամրապնդվել ու կոփվել է՝ ռևոլյուցիոն պայքար մղելով բանվոր դասակարգի բոլոր թշնամիների դեմ, աշխատավորության բոլոր թշնամիների— կալվածատերերի, կապիտալիստների, կուլակների, վնասարարների, լրտեսների դեմ, կապիտալիստական շրջապատման բոլոր վարձկանների դեմ:

ՀամԿ(բ)Պ-ի պատմությունը երեք ռևոլյուցիաների պատմություն է՝ 1905 թվականի բուրժուական-դեմոկրատական ռևոլյուցիայի, 1917 թվականի փետրվարի բուրժուական-դեմոկրատական ռևոլյուցիայի և 1917 թվականի հոկտեմբերի սոցիալիստական ռևոլյուցիայի պատմությունն է:

ՀամԿ(բ)Պ-ի պատմությունը ցարիզմի տապալման, կալվածատերերի և կապիտալիստների իշխանության տապալման պատմությունն է, քաղաքացիական պատերազմի ժամանակ օտարերկրյա զինված ինտերվենցիայի ջախջախման պատմությունն է, մեր երկրում Սովետական պետության և սոցիալիստական հասարակության կառուցման պատմությունն է»:

«ՀամԿ(բ)Պ պատմություն: Համառոտ դասընթաց»:

Հոկտեմբերի 5-ին

Տեղի է ունենում Գրականության և Լեզվի Ինստիտուտի Գիտ. խորհրդի ընդլայնված նիստ՝ նվիրված Հովհ. Թումանյանի երկերի ակադեմիական հրատարակությանը։

Հոկտեմբեր

Մոսկվայում Ա. Ֆադեևի նախագահությամբ տեղի է ունենում ՍՍՌՄ Գրողների Միության Վարչության նիստ. քննություն է առնվում «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյա հոբելյանի տոնակատարության խնդիրը։

Կազմվում է հոբելյանական կոմիտե. Ա. Տոլստոյ, Կ. Ֆեդին, Հր. Գրիգորյան, Ավ. Իսահակյան, Դ. Դեմիրճյան, Ն. Զարյան, Մ. Շագինյան, Ա. Ֆադեև, Ա. Կորնեյչուկ, Մ. Բաժան, Պ. Տիչինա, Յա. Կուպալա, Ա. Մաշաշվիլի, Ս. Վուրղուն, Գերասիմովա, Վ. Կիրպոտին, Վ. Լուգովսկոյ, Պ. Մարկիշ, Կ. Սիմոնով, Ա. Տվարդովսկի, Մ. Լաղովսկի, Պ. Անտակոլսկի, Ջամբուլ և Մ. Լոզինսկի։

Հոկտեմբեր

· *Հրապարակվում է Չեխոսլովակյան գրողների կոչը՝ «Ամբողջ մարդկության խղճին»։*

Չեխոսլովակյան գրողների կոչից.

«Այս ահավոր ժամին, երբ վճռվում է աշխարհի բախտը, մենք, ներքոստորագրյալներս, չեխոսլովակյան Գրողների Միության ներկայացուցիչներս, ձեր, մարդկային խիղճ կրողներիդ՝ ուշադրությունն ենք հրավիրում մեզ վրա, մեր այս խորը, կշռադատված խոսքերով։

Դարերի ընթացքում մենք ապրել ենք կողք-կողքի հայրենակիցների հետ, գերմաներեն լեզվով խոսողների հետ։ Եղել է ժամանակ միատեղ արդյունավետ կյանքի և կուլտուրայի փոխանակության։ Մեր ազգային անկախությունը նորից ձեռք բերելու համար կռիվ մղելով ֆրանսիական, սերբական և իտալական ճակատներում, մենք հույս ունեինք, որ մեր երկիրը, մեր ընդհանուր հայրենիքը կհանդիսանա նոր Եվրոպայի օջախներից մեկը, լավագույն և ավելի երջանիկ. և մենք աշխատեցինք այդ ուղղությամբ։ Բարձր գիտակցության պատասխանատվությամբ կանգնած պատմության առաջ, Կենտրոնական Եվրոպայում ընկած

դեմոկրատիայի մի կղզյակ, այս կոչով հայտարարում ենք, որ մեր ժողովուրդը մեղավոր չէ և մեղավոր չի լինի բռնկվող համաշխարհային կատաստրոֆի մեջ:

Մենք մեր ամբողջ ուժով կձգտենք պաշտպանել խաղաղությունը, մեր ընդհանուր խաղաղությունը: Բայց մենք մեր ամբողջ եռանդով նույնպես կպայքարենք հանուն մեր հայրենիքի ազատության:

Եվ մենք դիմում ենք ձեզ, որովհետև դուք ավելի քան մի ուրիշը, կոչված եք պաշտպանելու այն, ինչ որ մինչև այժմ եղել է Եվրոպայի պատիվը և պատիվը ամբողջ կուլտուրական աշխարհի՝ հարգանք տածել դեպի ճշմարտությունը, դեպի ազատության ոգին և մաքուր խիղճը: Մենք խնդրում ենք ձեզ, դատեցեք ինքներդ, թե ո՛մ կողմն է խաղաղության և արդարության ձգտումը, և ում կողմն է՝ բռնությամբ և կեղծիքի բոլոր միջոցներով հափշտակելու ձգտումը: Մենք խնդրում ենք պարզ դարձնել ձեր երկրի հասարակական կարծիքին, որ եթե մենք, մի փոքր ժողովուրդ, ստորված խաղաղության ձգտումով, հարկադրված լինենք խստագույն կռվի մտնել՝ դժվարին պայքար կմղենք ոչ միայն մեզ համար, այլև ձեզ համար հանուն բարոյական և մտավոր արժեքների, հանուն բոլոր ազատասեր և խաղաղասեր ժողովուրդների: Թող ոչ ոք չտարվի իլյուզիայով. մեզանից հետո հերթը կհասնի ուրիշ ժողովուրդների, ուրիշ երկրների:

Մենք խնդրում ենք բոլոր գրողներին, մտավոր աշխատանքի բոլոր աշխատավորներին, բոլորին, մեզ հավատացողներին, ամեն հնարավոր միջոցներով հասցնել այս կոչը ամբողջ աշխարհի ժողովուրդների գիտակցությանը»:

«Գրական թերթ», 22 հոկտեմբերի, 1938։

Կոչին պատասխանում են և սովետական գրողները.

«Այն օրվանից, երբ կատարվեց սարսափելի դավաճանությունը՝ և ֆաշիստական բարբարոս բանակները Անգլիական և Ֆրանսիական կառավարությունների օժանդակությամբ, կտրատեցին ձեր խաղաղասեր դեմոկրատիկ երկրի կենդանի մարմինը, մենք, սովետական գրողներս մեր սրտի ամբողջ խորությամբ— արտահայտում ենք ձեզ մեր եղբայրական համերաշխությունը, մեր սերը:

Այս ահավոր ժամին իմացեք որ մենք ձեզ հետ ենք, ձեր քաջարի երկրի հետ, որը կրում՝ է ծանր զոհեր:

Մարդկային խնդիրը, որին դիմում եք դուք, չի կարող չցնցվել ազազակից, կսկծալի անարդարությունից, որ կատարվեց ձեր երկրի հետ։

Մենք զմայլված ենք ձեր ժողովրդի առկունությամբ և արիությամբ, զմայլված ենք ձեր հավատով ձեր երկրի նկատմամբ։

Թող ֆաշիստական բարբարոսներն իմանան, որ ոչ մի զրկանք ու զոհ չեն կարող ընկճել չեխոսլովակյան ժողովրդի ոգին։ Դուք մենակ չեք լինի, մենք ձեզ չենք մոռանա, մենք կօգնենք ձեզ»։

«Գրական թերթ», 22 հոկտեմբերի, 1938։

Նոյեմբերի 14-ին

Համկ(բ)Պ կենտկոմի որոշումը «Պարտիական պրոպագանդայի դրվածքի մասին «Համկ(բ)Պ պատմության համառոտ դասընթացի» լույս ընծայման կապակցությամբ»։

Որոշումից.

«Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի պատմության համառոտ դասընթացի» լույս տեսնելը խոշոր քաղաքական իրադարձություն է հանդիսանում բոլշևիկյան պարտիայի գաղափարական կյանքում։ «Համ կ(բ)Պ պատմության համառոտ դասընթացի» լույս ընծայումով պարտիան ստացավ բոլշևիզմի մի նոր, հզոր գաղափարական զենք, մարքսիզմ-լենինիզմի բնագավառում հիմնական գիտելիքների մի էնցիկլոպեդիա։ Պարտիայի պատմության դասընթացը— բոլշևիզմի գիտական պատմությունն է։ Նրա մեջ շարադրված և ընդհանրացված է կոմունիստական պարտիայի վիթխարի փորձը, որի հավասարը չի ունեցել և չունի աշխարհում ոչ մի պարտիա։

«Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի պատմության համառոտ դասընթացը» կարևորագույն միջոց է հանդիսանում բոլշևիզմին տիրապետելու, պարտիայի անդամներին մարքս-լենինյան թեորիայով, այսինքն՝ հասարակական զարգացման ու քաղաքական պայքարի օրենքների իմացությամբ զինելու խնդրի լուծման գործում, պարտիական և անպարտիական բոլշևիկների քաղաքական զգաստությունը բարձրացնելու միջոց, մարքսիզմ-լենինիզմի պրոպագանդայի գործը հարկ եղած տեսական բարձրության հասցնելու միջոց»։

«Գրական թերթ», 25 նոյեմբերի, 1938։

Դեկտեմբերի 27-ին

ՀՍԽՀ Գերագույն խորհրդի Նախագահության որոշմամբ Ալավերդու շրջանի Դսեղ գյուղը վերանվանվում է Թումանյան։

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Չափածո

1. *Ավ. Իսահակյան.— Սասմա Մհեր, Պետհրատ, Երևան։*
2. *Հ. Շիրազ.— Արևի երկիր, Պետհրատ, Երևան։*
3. *Ս. Վահունի.— Ռազմի երգեր, Պետհրատ, Երևան։*
4. *Աղավնի.— Կաքավաձոր, Պետհրատ, Երևան։*
5. *Մ. Խերանյան.— Մոկաց Միրզա, Պետհրատ, Երևան։*
6. *Մ. Խերանյան.— Խնդություն, Պետհրատ, Երևան։*
7. *Վ. Արամունի.— Կանաչ երգեր, Պետհրատ, Երևան։*
8. *Խ. Հրաչյան.— Զվարթ երգեր, Պետհրատ, Երևան։*
9. *Ս. Գրիգորյան.— Հայրենիքի համար, Ազերնեշր, Բաքու։*
10. *Ս. Գրիգորյան.— Ժողովրդի հետ, Ազերնեշր, Բաքու։*

Արձակ

1. *Դ. Դեմիրճյան.— Պատմվածքներ, Պետհրատ, Երևան։*
2. *Ստ. Զորյան.— Հազարան բլբուլ, Պետհրատ, Երևան։*
3. *Արազի.— Ակունքներ, Պետհրատ, Երևան։*
4. *Արազի.— Մանկական պատմվածքներ, Պետհրատ, Երևան։*
5. *Գ. Սևունց.— Ծովախորշում, Ազերնեշր, Բաքու։*
6. *Բ. Ստաֆֆի.— Նովելներ, Պետհրատ, Երևան։*
7. *Ա. Հովսեփյան.— Մուտք, Պետհրատ, Երևան։*
8. *Ջ. Դարյան.— Պատմվածքներ, Պետհրատ, Երևան։*

Դրամատուրգիա

1. *Վ. Վաղարշյան.— Սասունցի Դավիթ, Պետհրատ, Երևան։*

Ժողովածուներ

1. *«Հայրենիքի սերը», Պետհրատ, Երևան։*
2. *«Ժողովրդի ընտրյալները», Պետհրատ, Երևան։*
3. *«Հայկական խորհրդային ֆոլկլորը», Պետհրատ, Երևան։*
4. *«Ալմանախ»— Հայաստանի խորհրդային գրողների, Պետհրատ, Երևան։*

Գրականության պատմություն, տեսություն և քննադատություն

1. Հ. Մկրտչյան.— Ալ. Ծատուրյան, Պետհրատ, Երևան։
2. Ա. Ղանալանյան.— Պուշկինը և ժողովրդական բանահյուսությունը, Պատմության և Գրականության Ինստիտուտ, Երևան։
3. Ն. Թումանյան.— Հ. Թումանյանի մանկությունը և պատանեկությունը, Մանկ. հրատ., Երևան։

Թարգմանություններ

1. Վ. Շեքսպիր.— Արքա Լիր, Պետհրատ, Երևան։
2. Գի դը Մոպասան.— Ծովի վրա, Պետհրատ, Երևան։
3. Ռ. Ռոլլան.— Ժան Քրիստոֆ, 2-րդ գիրք, Պետհրատ, Երևան։
4. Ալ. Գերցեն.— Ո՞վ է մեղավոր, Պետհրատ, Երևան։
5. Լ. Տոլստոյ.— Պատերազմ և խաղաղություն, Պետհրատ, Երևան։
6. Լ. Տոլստոյ.— Պատմվածքներ, Պետհրատ, Երևան։
7. Ա. Չեխով.— Ձիու ազգանունը, Պետհրատ, Երևան։
8. Ն. Տիխոնով.— Պատերազմ, Պետհրատ, Երևան։

1939

Հունվարի 9-ին

Մ. Ի. Կալինինի ելույթը Մոսկվա քաղաքի արվեստի աշխատողների ժողովում՝ նվիրված մարքս-լենինյան թեորիային տիրապետելու հարցին։

Մ. Ի. Կալինինի ելույթից.

Ռուսաց գրականությունը խիստ պատվավոր տեղ է գրավում համաշխարհային գրականության մեջ և շատ բան է տվել համամարդկային կուլտուրայի ու մտքի զարգացմանը։ Այնպիսի ռուս գրողներ, ինչպես Պուշկինը, Բելինսկին, Չերնիշևսկին, Դոբրոլյուբովը, Նեկրասովը, Գորկին և շատ ուրիշները, լինելով մի կողմից մեծ արվեստագետներ, մյուս կողմից մտքի տիրակալներ,— նրանց երկերը լի էին սոցիալական խոր բովանդակությամբ։ Ռուսական առաջավոր գրականությունը մեծ ուժով ու պայծառությամբ մերկացրել է կալվածատիրական ու կապիտալիստական իրավակար-

դի բացասական կողմերը, արմնացրել ու քաղաքականապես զարգացրել է մարդկանց և նրանց մղել ակտիվ գործունեության։ Նա հարց է դրել, ինչպե՞ս բարելավել ճնշվածների, աշխատավոր մասսաների, չքավորների կյանքը։ Նա ներդրավել է առաջավոր մարդկանց։ Իր էությամբ նա եղել է խորապես ժողովրդական գրականություն»...

«Յուրաքանչյուր հասարակական ակտիվ գործչի համար պետք է ռոմանտիկա լինի՝ այս բառի լավ իմաստով։ Մեր պայմաններում ռոմանտիկան ակտիվ, գործունյա քաղաքացի, սովետական պետության մեծ օգուտ բերող, սոցիալիստական շինարարության առաջ մղող գործիչ լինելու ձգտումն է։ Միթե մեզանից յուրաքանչյուրի գլխի մեջ այս մտքերը չե՞ն նստած (ձափեր)։ Կարծում եմ, որ նստած են»...

«Արվեստն իր զարգացման մեջ ճանաչել է շատ մեթոդներ.— լուսանկարչություն, որ պատկերը տալիս է անշարժ ձևով. նատուրալիզմ— նույն լուսանկարչությունն է, բայց մի քիչ աշխուժացած. ֆորմալիզմ, երբ բովանդակությունը զոհաբերվում է ձևին, ռեալիզմ և այլն։

Այս բոլոր մեթոդներից ամենալավը կանգնած է, իհարկե, ռեալիզմը, որ պահանջում է ձևի ու բովանդակության միասնություն։ Բայց կա տարբեր ռեալիզմ, որ համապատասխանում է մարդկային պատմության տարբեր դարաշրջաններին։

Սոցիալիստական ռեալիզմը պետք է համապատասխանի մեր սոցիալիստական հասարակության պայմաններին։ Նա արվեստի ամենաբարձր սկզբունքն է։ Նա բնավորություններն ու տիպերը նկարելու այլ մոտեցում է պահանջում։ Նա այլ պահանջներ է առաջադրում գեղարվեստական երկի ողջ կոմպոզիցիային։ Ինչքան բարձր լինի երկն իր ձևով, իր գեղարվեստական արժանիքներով, այնքան ավելի հարուստ պետք է լինի իր բովանդակությամբ, այսինքն՝ այնքան ավելի լրիվ կերպով պետք է արտացոլի նոր սոցիալիստական աշխարհը՝ իր բուռն առաջխաղացումով, իր գրավիչ հեռանկարներով։ Եվ ընդհակառակը, ինչքան հարուստ է երկն իր սոցիալիստական բովանդակությամբ, այնքան ավելի կատարյալ պետք է լինի նա իր ձևով, իր գեղարվեստական արժանիքներով»։...

«... նոր սոցիալիստական հարաբերությունները պահանջում են իրենց գեղարվեստական վառ արտացոլումը վեպի, վիպակի,

պիեսի, բեմական պատկերի, նկարչության, քանդակագործության և այլնի մեջ։ Ըստ որում սոցիալիստական ռեալիզմը երևան է գալիս և նրանով, որ գծում է ոչ միայն նոր, ամենքի աչքին խփող գծեր, այլ նաև այնպիսի գծեր, որ ամեն մարդ չի նկատում, բայց որ այնուամենայնիվ տիպիկ են, ընդլայնում են տեսադաշտը և նոր հեռանկարներ են բաց անում։

Յուրաքանչյուր արվեստագետ ձգտում է իր երկի մեջ անցկացնել որոշ մտքեր։ Սոցիալիստական ռեալիստը պետք է նկարի գոյություն ունեցող սոցիալիստական իրականությունը, բայց դրա հետ միասին պետք է իր երկով մարդուն մղի դեպի մարդկային մտքի զարգացումը, դեպի լավագույն ձգտումների զարգացումը։ Նախկին ռուսական առաջավոր գրականությունը հենց նրանով էր արժեքավոր, որ արթնացնում էր մարդկային միտքը, աճեցնում ազնիվ զգացումներ, դեպի աշխատավոր մարդկությունը տածվող սիրո զգացումներ։ Ուստի իսկական արվեստագետ չի կարելի անվանել նրան, ով այս նպատակները չի դնում իր առջև։

Սոցիալիստական ռեալիստն իր երկերով մարդկանց պետք է մղի դեպի լավագույնը, ազնիվը, վսեմը։ Իսկ մեզ մոտ լավագույնը, վսեմագույնը և ազնվագույնը սերն է դեպի հայրենիքը իր բոլոր արտահայտություններով։

Իր երկերով մարդկանց մեջ լավագույն գծեր դաստիարակելը նշանակում է սոցիալիստական հասարակության առաջավոր մարտիկի դեր կատարել, նշանակում է լինել սոցիալիստական ռեալիստ։

Սովետական իրավակարգն արդեն թևակոխել է իր գոյության երրորդ տասնամյակը։ Մեր հասարակության ղեկավար դասակարգի գաղափարախոսությունը՝ մարքսիզմ-լենինիզմը պետք է ամենից ավելի լրիվ կերպով յուրացվի մեր ինտելիգենցիայի կողմից։ Մարքսիզմ-լենինիզմը այնպիսի թեորիա է, որն արտակարգ կերպով հարստացնում է մարդու միտքը, ընդլայնում է նրա ստեղծագործական հորիզոնները»։

«Գրական թերթ», 20 հունվարի, 1939։

Հունվարի 14-ին

«Խորհրդային Վրաստան» թերթի խմբագրատանը տեղի է ունենում Վրաստանի հայ գրողների խորհրդակցություն նվիրված գրողների ստեղծագործական հետագա աշխատանքներին։

Ելույթներ են ունենում՝ Ծ. Թորգոմյանը, Պահարեն, Բ. Սեյրանյանը, Է. Խոճիկը, Գ. Մելոյանը և ուրիշները։

Հունվար

«Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակը Ադրբեջանում անցկացնելու համար Ադրբեջանի ՍԳՄ վարչությունը կազմում է հոբելյանական հանձնաժողով։

Հանձնաժողովի կազմը՝ Մամեդ Ռահիմ (նախագահ), Սամեդ Վուրղուն, Գ. Սևունց, Ռասուլ Ռզա, Ռաֆիլի։

Հունվար

Երևանի Քաղխորհուրդը հայտարարում է համամիութենական կոնկուրս Հ. Թումանյանի արձանի նախագիծը կազմելու համար։

Հունվարի 31-ին

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագիրը սովետական գրողների պարգևատրման մասին։ Պարգևատրվածների թվում են՝ Դ. Դեմիրճյանը՝ Լենինի շքանշանով, Գ. Սարյանը՝ «Աշխատանքային Կարմիր Դրոշի» շքանշանով, Արազին, Ստ. Զորյանը, Ն. Զարյանը, Հ. Շիրազը և Գ. Բորյանը «Պատվո նշան» շքանշանով։

Փետրվարի 1-ին

Գրողների Տանը միտինգ է կազմակերպվում ի պատիվ ՍՍՌՄ կառավարության կողմից պարգևատրված գրողների։

Փետրվարի 3-ին

«Պրավդա»-յի առաջնորդողը՝ «Սովետական ժողովրդի առաջավոր ինտելիգենցիան»։

Առաջնորդողից.

«ՍՍՌՄ-ում ծաղկում է բոլոր ժողովուրդների կուլտուրան։ Յոթ մղոնանոց քայլերով փառքի ուղիով առաջ են գնում ուկրաինական, բելոռուսական, վրացական, հայկական, ուզբեկական, տաջիկական. ղազախական գրականությունները»։...

«Սովետական գրողների և սովետական կինեմատոգրաֆիայի աշխատողների բարձր պարգևը, անտարակույս կհանդիսանա ոգեշնչված ստեղծագործական աշխատանքի նոր խթան՝ մեր մեծ հայրենիքին, մեր մեծ ժողովրդին վայել, ստալինյան դարաշրջանին

վայել արվեստի երկեր ստեղծելու համար։ Շատ բան է արված, բայց դա միայն սկիզբն է արվեստի այն ծաղկման, որը հարկավոր է դնել կոմունիզմն ընթացող մեր մեծ երկրին»։...

«Բոլ ապրի ու բարգավաճի սովետական դրականությունը, սովետական արվեստ։ Բոլ այսուհետև է՛լ հրճվանքով ստեղծագործեն մեր գրողները, «մարդկային հոգիների ճարտարապետները», որոնք հաղթանակած սոցիալիզմի՝ աշխարհում առաջին երկրի արվեստագետներն են, որոնք աշխատում են ժողովրդի համար և հանուն ժողովրդի։ Բոլ նրանք նոր ուժիններ բանան դրականության և արվեստի մեջ, ամբողջ մարդկության արվեստագետներին տալով բարձր վարպետության ու դաղափարականության օրինակ, հիշելով, որ սովետական դրականությունն ամենաառաջավորն է, ամենահեղափոխականը, ամենահետևողականը»։

«Գրական թերթ», 7 փետրվարի, 1939։

Փետրվարի 15-ին

Բրյուսովի Պատանի Հանդիսատեսի Թատրոնում կազմակերպվում է գրողների և «Կարմիր Ծիլեր» ամսագրի ընթերցողների հանդիպման կոնֆերենցիա։

Փետրվարի 19-ին

Մոսկվայի Գրողների Ակումբում երեկո է կազմակերպվում նվիրված Հ. Թումանյանի ծննդյան 70-ամյակին։

Հ. Թումանյանի կյանքի և դրական ժառանգության մասին զեկուցում է Ս. Շերվինսկին։

Փետրվարի 27-ին

Վախճանվեց Նադեժդա Կոնստանտինովնա Կրուպսկայան։

Փետրվարի 27-ին

Բաքվում Հ. Թումանյանի հիշատակին կազմակերպվում է դրական-երաժշտական երեկույթ։

Բացման խոսք է ասում՝ Ս. Օրդուբադին։

Մարտի 9-ին

Բրյուսովի Գրողների Պալատում քննարկվում է Բ. Սեյրանյանի «Գևոի ծանոթ լեռները» վիպակը։

Մարտի 10-ին

ՀամԿ(բ)Պ XVIII համագումարի բացումը։

Ընկեր Ի. Վ. Ստալինի հաշվետու զեկուցումից.

«Ժողովրդի կուլտուրական զարգացման տեսակետից հաշվետու ժամանակաշրջանը եղել է իրոք կուլտուրական ռևոլյուցիայի ժամանակաշրջան։ Ընդհանուր-պարտադիր տարրական կրթության կենսագործում ՍՍՌՄ-ի ազգությունների լեզուներով, դպրոցների և բոլոր աստիճանների սովորողների թվի աճում, բարձրագույն դպրոցների տված մասնագետների թվի աճում, նոր, սովետական ինտելիգենցիայի ստեղծում ու ամրապնդում,— այս է ժողովրդի կուլտուրական վերելքի ընդհանուր պատկերը»։...

«Այս ամբողջ վիթխարի կուլտուրական աշխատանքի հետևանքով մեզանում ծնունդ առավ և կազմավորվեց նոր, սովետական բազմաթիվ ինտելիգենցիան, որը դուրս է եկել բանվոր դասակարգի, գյուղացիության, սովետական ծառայողների շարքերից, որը մարմին է մեր ժողովրդի մարմնից և արյուն նրա արյունից,— ինտելիգենցիա, որը չգիտե շահագործման լուծը, ատում է շահագործողներին և պատրաստ է հավատով ու ճշմարտությամբ ծառայելու ՍՍՌՄ-ի ժողովուրդներին։

Ես կարծում եմ, որ այս նոր, ժողովրդական, սոցիալիստական ինտելիգենցիայի ծնունդը հանդիսանում է մեր երկրում կատարված կուլտուրական ռևոլյուցիայի ամենակարևոր արդյունքներից մեկը»։

Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, Պետհրատ, 1940, էջ 714։

Եմ. Յարոսլավսկու ելույթից.

«Պարտիայի Կենտկոմը և անձամբ ընկեր Ստալինը շատ մեծ ուշադրություն են նվիրում սոցիալիստական կուլտուրայի հարցերին։ Մենք իրավունք ունենք ասելու, որ Սովետական պետության մեջ արվեստը կանգնած է՝ հատկապես գաղափարական տեսակետից, այնպիսի բարձրության վրա, որի վրա նա չի կարող կանգնել ոչ մի կապիտալիստական երկրում։ Այնտեղ՝ գիտության և արվեստի անկումն է»։...

«Այս հինգ տարիների ընթացքում, հատկապես արվեստը՝ ինչպես թատրոնական, այնպես և կերպարվեստի, հատկապես կինոյի

և ժողովրդական երգ ստեղծելու բնագավառում, ՍՍՌՄ-ում ձեռք են բերված հսկայական հաջողություններ։ Եվ այստեղ պետք է նշել, որ ընկեր Ստալինի ցուցումները, նրա մշտական, չթուլացող հետաքրքրությունը դեպի այդ գործը, հանդիսանում է ղորեղ շարժիչ մեր նկարիչների, դերասանների, կինո-աշխատողների, բանաստեղծների և գրողների համար։ Աճել և ծաղկել են հիանալի թատրոններ Ուկրաինայում, Ուզբեկստանում, Ղազախստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Հայաստանում և մի շարք այլ ռեսպուբլիկաներում ու մարզերում։ Այնպիսի հիանալի ֆիլմեր, ինչպես «Լենինը Հոկտեմբերին», «Լենինը 1918 թվին», «Մեծ հրացոլք», «Վիբորգյան կողմը», «Բալթիկայի դեպուտատ», «Ալեքսանդր Նևսկի», «Չապաև», «Շչորս» և այլն, ստեղծված են մեծ մասամբ ընկեր Ստալինի ցուցումով։ Ընկեր Ստալինը ոգեշնչում է արվեստագետներին, նրանց տալիս է դեկավարող գաղափարներ, և շնորհիվ դրա, արվեստագետներն ստեղծել են այնպիսի երկեր, որոնք կմտնեն մարդկության պատմության մեջ որպես հիանալի հուշարձաններ պատմության, մեր էպոխայի արվեստի պատմության, որով սկսվում է արվեստների սոցիալիստական վերածնության դարը»։

„XVIII Съезд Всесоюзной коммунистической партии (б). Стенографический отчет", էջ 136։

Վ. Շոլոխովի ելույթից.

... «Ինչպես մեր կյանքի բոլոր մարզերը, այնպես էլ սովետական գրականությունը, ազատվելով բշնամիներից դարձել է և ավելի առողջ և ավելի հաստատուն։ Սովետական գրողների հիմնական կադրերը՝ աճեցվելով ռևոլուցիայի ձեռքով և դաստիարակվելով պարտիայի ու սովետական իշխանության կողմից՝ Լենինի-Ստալինի դործին անհունորեն նվիրված էին, նվիրված են և միշտ էլ նվիրված կլինեն (ծափահարություններ)»։...

«... ամենամեծ հաջողություններից մեկը, իմ կարծիքով, ոչ թե մեր առանձին հաջողություններն են, այլ այն, որ գրականության մեջ պայծառ կերպով ծաղկում է Լենինյան-Ստալինյան ազգային քաղաքականության հաղթանակը»։...

«... Սովետական գրողները չեն պատկանում արևմտյան Եվրոպայի պացիֆիստների սենտիմենտալ ցեղին։ Մենք ապրում և աշխատում ենք ընկեր Ստալինի դեկավարությամբ, իսկ դա մեզ

շատ բանի է պատրաստվում և շատ բան արդեն սովորեցրել է: Եթե թշնամին հարձակվի մեր երկրի վրա, մենք՝ սովետական գրողներս, պարտիայի ու կառավարության կոչով՝ մի կողմ կդնենք գրիչը և մի ուրիշ զենք կվերցնենք մեր ձեռքը, որպեսզի հրաձիգ կորպուսի համազգեստի մեջ, որի մասին խոսեց ընկեր Վորոշիլովը, թափի ու խոցի թշնամուն և մեր ծանր ու հրաշեկ կապարը, ինչպես ծանր ու հրաշեկ է մեր ատելությունը դեպի ֆաշիզմը (ծափահարություններ)»:

«Գրական թերթ», 25 մարտի, 1939:

Մարտի 10-ին

Գրողների Տանը կազմակերպվում է Տ. Շևչենկոյի ծննդյան 125-ամյակին նվիրված երեկո: Բացման խոսք է ասում Արազին:

Զեկուցում է Էդ. Թոփչյանը:

Ապրիլի 1-ին

Վախճանվեց Անտոն Սեմյոնովիչ Մակարենկոն:

Ապրիլի 7-ին

Վրաստանի Գրողների Ակումբում տեղի է ունենում Հ. Թումանյանի ծննդյան 70-ամյակին նվիրված հոբելյանական երեկո:

Բացման խոսք է ասում Կ. Լորդկիպանիձեն:

Զեկուցում է Բ. Ժղենտին:

Ապրիլի 15-ին

Երևանի Օպերայի և Բալետի թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Հ. Թումանյանի ծննդյան 70-ամյակին:

Բացման խոսք է ասում՝ Սիմակը:

Ելույթներ են ունենում՝ Ի. Սելվինսկին, Վ. Իմբերը, Ն. Ռիբակը, Ս. Էուլին, Ի. Գրիշաշվիլին, Մ. Ռահիմը, Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը:

Ապրիլի 16-ին

Մոսկվայում տեղի է ունենում սովետական գրողների ժողով:

ՀամԿ(բ)Պ 18-րդ համագումարի արդյունքների և սովետական գրականության խնդիրների մասին զեկուցում է Ա. Ա. Ֆադեևը:

Ապրիլի 19-ին

Գրողների Տանը տեղի է ունենում Հայաստանի Խորհրդային Գրողների Միության վարչության նիստ։

Նիստին ներկա է լինում ընկ. Գր. Հարությունյանը։

Նիստը զբաղվում է Միության ղեկավար օրգանների վերակազմության հնդրով։

Ապրիլի 20-ին

Նշվում է „Литературная газета"-յի 10-ամյակը։

Մայիսի 5-ին

Տեղի է ունենում «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյա տոնակատարության հոբելյանական կոմիտեի հերթական նիստը։

Նիստում լսվում է էպոսի գիտական տեքստը մշակող բրիգադի հաղորդումը։

Մայիսի 17-ին

Հայֆիլհարմոնիայում կազմակերպվում է Սալոմեկով-Շչեդրինի մահվան 50-ամյակին նվիրված երեկո։

Բացման խոսք է ասում Դ. Դեմիրճյանը։

Ջեկուցում է Ս. Հարությունյանը։

Հունիսի 25-ին

Մոսկվայում տեղի է ունենում «Սասունցի Դավիթ» էպոսի հոբելյանական կոմիտեի նիստ։

Հուլիսի 10—15-ը

Տեղի է ունենում Արմֆանի 4-րդ գիտական սեսիան՝ նվիրված «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակին։

Ջեկուցում են.

Գ. Լևոնյան՝ *«Հայ ժողովրդի կուլտուրան «Սասունցի Դավիթ» էպոսի դարաշրջանում».*

Հ. Հարությունյան՝ *«Սասունցի Դավիթ» էպոսի դարաշրջանը».*

Գ. Դեմիրճյան՝ *«Սասունցի Դավիթ» էպոսի գեղարվեստական առանձնահատկությունները».*

Ա. Ղարիբյան՝ *«Սասունցի Դավիթ» էպոսի լեզուն».*

Ա. Ասատրյան՝ *«Սասունցի Դավիթ» էպոսը հայ պոեմների մշակման մեջ».*

Մ. Աբեղյան՝ «Սասունցի Դավիթ» էպոսի վարիանտները հավաքելու, հետազոտելու և լուսաբանելու պատմական ակնարկ».

Հ. Մելիքյան՝ «Սասունցի Դավիթ» էպոսի դեմոկրատիզմը և ինտերնացիոնալիզմը»։

Հուլիսի 20-ին

Հրապարակվում է «Երգերն ու հեքիաթներն իր ստաս ժողովրդին» բանասացների մոսկովյան հավաքի մասնակիցների դիմումը՝ ուղղված Սովետական Միության բոլոր բանասացներին։

Դիմումից.

«Ընկե՛ր բանասացներ, մենք կոչ ենք անում ձեզ՝ իր գործ դրե՛ք ձեր իմաստությունն այն ամենին, ինչ տեսնում են ձեր աչքերը և լսում ձեր ականջները։ Դիպուկ խոսքով խայտառակեցեք չոդրերին և դատարկապորտներին, կոլտնտեսային բարիքի շահամոլ սիրողներին, երգերում ու հեքիաթներում մերկացրեք թաքուն չարակամներին ու բացահայտ թշնամիներին և ծխահան արեք նրանց բոլոր ճեղքերից, արմատախիլ արեք հին ժամանակի մնացուկները, պայքարեցեք տերտերական ցնդաբանության դեմ, ինչպես պայքարում էին նրա դեմ բոլոր դարերի ու ժողովուրդների բանասացները։

Երգերում ու հեքիաթներում փառաբանեցեք մեր սովետական ժողովրդի մեծուրախ կյանքը, գովերգեցեք բոլոր նշանավոր մարդկանց...».

«Երգեցեք մեր առաջնորդների և նրանցից առաջինի, լավագույններից լավագույն, հարազատ ընկեր Ստալինի գերիմաստության փառքը։ Մենք՝ նրա փառքի ու իմաստության ականատեսներս, կհորինենք նրա մեծ գործերին արժանի երգեր, այնպիսի երգեր, որ լիաթոք շարունակեն երգել մեր թոռների թոռները և մեր ծոռների ծոռները։

Ստալինյան երրորդ հնգամյակի տարիներին, մենք՝ բանասացներս պետք է է՛լ ավելի բարձր աստիճանի հասցնենք մեր երգերի խոսքը, նոր առասպելներ, երգեր, հեքիաթներ, պատմություններ հորինենք ի սպաս և ի ցնծություն ողջ ժողովրդի։

Թող մեր երգերն է՛լ ավելի մեծարեն մեր ժամանակի փառքը. Թող պատմեն մեր անշափելի ուրախության մասին, և Մեծ

Ստալինի փառապանծ ժամանակաշրջանում ապրող մարդկանց անընդգրկելի երջանկության մասին»։

«Գրական թերթ», 20 հուլիսի, 1939։

Հուլիսի 20-ին

Գրողների Տանը տեղի է ունենում պաշտպանական գրականությանը նվիրված խորհրդակցություն։

Օգոստոսի 1-ին

Բացվում է Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսը։

Օգոստոսի 16-ին

Պետական Կոնսերվատորիայում տեղի է ունենում «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակին նվիրված համաքաղաքային ակտիվի հավաք։

«Սասունցի Դավիթ» էպոսի մասին զեկուցում է Մ. Աբեղյանը։

Սեպտեմբերի 11-ին

Հայֆիլհարմոնիայում բացվում է Արմֆանի հոբելյանական գիտական սեսիան նվիրված «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակին։

Ներկա են լինում՝ ընկ. ընկ. Գր. Հարությունյանը, Մ. Գապյանը, Ա. Փիրուզյանը, Հ. Օրբելին, Հ. Մանանդյանը, Մ. Աբեղյանը, Մ. Սարյանը, Ա. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Վ. Կիրպոտինը, Պ. Անտակոլսկին, Ի. Աբուլաձեն և ուրիշները։

Բացման ճառ է ասում՝ ընկ. Ս. Կարապետյանը։

Զեկուցում են.

Հ. Օրբելի՝ «Սասունցի Դավիթ» մեծ էպոսը».

Հ. Մանանդյան՝ «Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ».

Ս. Հարությունյան՝ «Սասունցի Դավիթ» էպոսի դարաշրջանը հայ պատմավիպագրության մեջ».

Մ. Տոկարսկի՝ «Հայկական ճարտարապետությունը «Սասունցի Դավիթ» էպոսի դարաշրջանում»։

Ողջույնի խոսք են ասում՝ Ի. Աբուլաձեն, պրոֆ. Հ. Կուսիկյանը։

Եզրափակման խոսք է ասում՝ ակադեմիկոս Հ. Օրբելին։

Սեպտեմբերի 15-ին

«Պրավդա»-ն առաջնորդող է նվիրում «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակին։

«Պրավդա»-յի առաջնորդողից.

«Հայ ժողովուրդը տոնում է իր հերոսական էպոսի, մեծագույն երկի— «Սասունցի Դավիթ» հիանալի պոեմի հազարամյակը։ Այդ տոնակատարությանը մասնակցում է ամբողջ Սովետական ժողովուրդը։ Պոեմի հերոսական կերպարները մտել են սովետական գրականության և կուլտուրայի ընդհանուր գանձարանը։ Դրանք հարստացնում են գրողների, պոետների, նկարիչների ստեղծագործությունը մեր Միության բոլոր ռեսպուբլիկաներում։ Սովետական կուլտուրայի միջոցով «Սասունցի Դավիթը» մտնում է համաշխարհային կուլտուրայի օրբիտի մեջ և դառնում է մարդկության հերոսական մեծ էպոսի մի մասը— «Իլիականի» և «Ոդիսականի», ռուս ժողովրդի դյուցազնական բիլինային էպոսի, «Կալևվալայի» և Հյուսիսի սագաների, «Նիբելունգների երգի» և ժողովրդական ստեղծագործության շատ այլ գանձերի կողքին»։...

«Նոր, սոցիալիստական Հայաստանում նոր ձևով սկսեց կենդանություն առնել ալեզարդ հնությունը։ Հերոսական ներկայի համար՝ մոտիկ և հասկանալի են անցյալի հերոսական կերպարները։ Հայ ժողովուրդը հոգատար և սիրալիր հավաքել է ավանդությունները, և «Սասունցի Դավիթի» հիանալի կերպարներն իրենց ամբողջ դյուցազնական հասակով աճեցին սովետական երկրի առջև։

Սոցիալիզմի երկրի ժողովուրդները հերոսական անցյալն ի սպաս են դնում հիանալի, հերոսական ներկային։ Ի սպաս են դնում է՛լ ավելի հիանալի, հերոսական ապագայի համար մղվող պայքարին։ Սովետական Միության ժողովուրդները տոնում են իրենց հաղթանակը, իրենց ծաղկումը։ Հողը հաղթող ժողովուրդներին է նվիրում իր հարուստ ընդերքը։ Ծովը և օդը ծառայում են նրանց։ Եվ բազմադարյան կուլտուրան բաց է անում իր բոլոր գանձերը՝ գրականության, արվեստի հարստացման համար, ամբողջ կյանքն ազգային գույների, կերպարների, հնչյունների շողշողուն խաղով հագեցնելու համար»։...

«... Կապիտալիզմի ոչնչացումը, սոցիալիստական հասարա-

կարգի ստեղծման ուղիներ բաց արին դեպի ժողովուրդների եղբայրական գաշինքը, դեպի նրանց համերաշխությունը, դեպի նրանց կուլտուրական ծաղկումը,— նշանակում է, նաև դեպի ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի ծաղկումը։ Ընկեր Ստալինը մշակեց Սովետական Իշխանության ազգային քաղաքականության ռեսպական հիմքերը և անմիջականորեն ղեկավարեց այդ քաղաքականության կենսագործումը։ Ազգային կուլտուրաների ծաղկումը, նրանց եղբայրական փոխներգործությունը— սոցիալիզմի հաղթանակի համար մղված մեծ պայքարի օրինական պտուղն է։

Սովետական ժողովուրդների կուլտուրական տոներն իրենց նշանակությամբ շատ հետու են գնում սովետական երկրի սահմաններից։ Լենինի-Ստալինի պարտիան լայնորեն բաց արեց կուլտուրական աշխարհի շրջանակները։ Իմպերիալիզմն արհեստականորեն ու. շար դիտավորությամբ սեղմում էր այդ շրջանակները, սահմանափակելով այն Եվրոպայով և մասամբ Ամերիկայով։ Մնացած ամբողջ աշխարհը դասված էր անկուլտուրականության բնագավառը։ Իմպերիալիստները բարբրից ու արհամարհանքով են վերաբերվում Ասիայի ժողովուրդներին։ Իմպերիալիստական դրականությունը, որը ծառայում է դաղութային քաղաքականությանը, ամբողջ աշխարհը բաժանում է «Արևմուտքի» և «Արևելքի», կապիտալիստական «Արևմուտքին» սիրապետություն շնորհելով և՛ քաղաքականության, և՛ էկոնոմիկայի, և՛ կուլտուրայի ասպարիզում։

Բոլոր երկրների և բոլոր դարերի լավագույն մարդիկ գտել են, որ Արևելքում, Ասիայում մարդկության կուլտուրական հայրենիքում բաքնված են կուլտուրայի անհամար գանձեր, որ այդտեղ ապրում են հնադարյան գրականություն ունեցող տաղանդավոր ժողովուրդներ։ Մեծ գրողները և պոետները— Վոլտերը, Գյոթեն, Պուշկինը— բազմիցս թանկագին ադամանդներ են գտել Արևելքի ժողովուրդների էպոսի և լիրիկայի մեջ։ Բայց իմպերիալիզմը փութաջանորեն կոնսերվացիայի էր ենթարկում Ասիայի և «արևելյան» մյուս երկրների ժողովուրդների ստեղծագործությունն իբրև «էկզոտիկա» հղփացած բուրժուազիայի զվարճության համար։ Քիչ էր, թե կորցված է Ասիայի կուլտուրական գանձերի բանալին։

Այդպիսի բանալի հանդիսացավ սոցիալիզմը։ Ավազուտներով ձանձիկված ընդարձակ երկրամասերը կենդանություն են ստանում

այն բանից հետո, երբ Սովետական Իշխանության օրով կառուցված ջրանցքների ցանցը հրաշագործ խոնավություն է տալիս ժողովրդին ու երկրին: Կոլտնտեսականների հերոսական աշխատանքը Ֆերգանում, ցույց է տալիս, թե գործնականում ինչպես են ստեղծվում պոեմները, որոնք այնուհետև մտնում են պոետների բանաստեղծությունների և ժողովրդական կոմպոզիտորների երգերի մեջ: Տաղանդավոր ժողովուրդները մտնում են ժամանակակից կուլտուրան ստեղծողների շարքը, դեն շպրտելով կեղծ բաժանումը «Արևելքի» և «Արևմուտքի»: Չկա այլևս արևելյան «էկզոտիկան», որը քողարկում էր կուլտուրական ստրկությունը: Կա ժողովուրդների եղբայրական մասնակցություն սոցիալիզմի միասնական մեծ կուլտուրայի ստեղծմանը:

Հայ ժողովրդի տոնը, որը դարձել է ամբողջ սովետական ժողովրդի տոն, վկայում է նոր կուլտուրայի այդ հզոր աճման մասին, սոցիալիզմի ստեղծած նոր աշխարհի ամենահաղթ ուժի մասին: Ժողովուրդների եղբայրության՝ լայնորեն ծավալված կարմիր դրոշով կանգնած է մեծ Սովետական Միությունն ընդդեմ կապիտալիզմի կեղծ, խճճված, մինչև ուղն ու ծուծը նեխած աշխարհի:

«Գրական թերթ», 20 սեպտեմբերի, 1939:

Սեպտեմբերի 15-ին

Պետթատրոնում տեղի է ունենում «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյա հոբելյանին նվիրված հանդիսավոր նիստ:

Ներկա են լինում՝ ընկ. ընկ. Գր. Հարությունյանը, Մ. Պապյանը, Ա. Փիրուզյանը, Ա. Ֆադեևը, Հ. Օրբելին, Վ. Կիրպոտինը, Յա. Կուպալան, Օլգա Ֆորշը, Շ. Դադիանին, Ա. Կարավաևան, Ս. Չիկովանին, Վ. Իվանովը, Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը և ուրիշները:

Բացման խոսք է ասում՝ Ա. Փիրուզյանը:

Զեկուցում է՝ Հր. Գրիգորյանը:

Ն. Զարյանը ընթերցում է մի խումբ բանաստեղծների ողջույնի չափածո-նամակը ուղղված Առաջնորդին:

Սեպտեմբերի 16-ին

Պետթատրոնում բացվում է ՍՍՌՄ ՍԳ Միության Վարչության

Հոբելյանական պլենումը՝ նվիրված «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյա հոբելյանին։

Ծրակարգ.

1. «Հայկական ժողովրդական էպոս «Սասունցի Դավիթը» (զեկուցողներ՝ Գ. Աբով, Վ. Կիրպոտին, Պ. Տիշինա, Պ. Ինգորոգվա, Ս. Վուրղուն, Ալիմջան Համիդ)։

2. «Սասունցի Դավթի» պոետիկան և պատկերները (Դ. Դեմիրճյան)։

3. «Սասունցի Դավիթը» և ՍՍՌՄ ժողովուրդների էպոսը» (Յա. Մ. Սոկոլով)։

4. «Սասունցի Դավիթը» և համաշխարհային էպոսը» (Հ. Օրբելի)։

Սեպտեմբերի 17-ին

Կարմիր Բանակը մտնում է Արևմտյան Ուկրաինա և Արևմտյան Բելոռուսիա։

Սեպտեմբերի 23-ին

Տեղի է ունենում ՀԽԳՄ վարչության ընդլայնած նիստը։

Սովետական գրականության և Գրողների Միության հերթական խնդիրների մասին զեկուցում է Ա. Ժադեևը։

Ելույթներ են ունենում՝ Դ. Դեմիրճյանը, Ն. Զարյանը, Սիրաքը, Հր. Քոչարը, Հ. Շիրազը, Գ. Բորյանը և ուրիշները։

Հոկտեմբերի 1-ին

Գրողների Տանը Հ. Հովհաննիսյանի մահվան 10-րդ տարեդարձի առթիվ տեղի է ունենում հանդիսավոր նիստ։

Բացման խոսք է ասում Դ. Դեմիրճյանը։

Զեկուցում է Ս. Հարությունյանը։

Հոկտեմբերի 6-ին

«Պրավդա»-յում լույս է տեսնում ընկեր Գր. Ա. Հարությունյանի հոդվածը՝ «Հայ ժողովրդի արվեստը»։

Հոդվածից.

«Այժմ հզոր աղբյուրի պես հորդում է հայ ժողովրդի ստեղծա-

գործական կյանքը, աճում է ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական նրա արվեստը։

Հայ ժողովրդի պատմության մեջ առաջին անգամ ստեղծված է Օպերայի և Բալետի թատրոն։ Ժողովրդական պոեզիայի և ժողովրդական երաժշտական ստեղծագործության հիման վրա բեմադրվում են օպերաներ, սիմֆոնիաներ։ Ներկայումս Հայաստանի երիտասարդ օպերային թատրոնն իր ռեպերտուարի մեջ ունի 8 ազգային օպերա և 3 բալետ»։...

«Սովետական Հայաստանն ստեղծել է Պետական Կոնսերվատորիա, Պետական Սիմֆոնիկ օրկեստր, Պետական Ջա՛ղ, Պետական երգեցիկ Կապելլա, մի շարք գործիքային կվարտետներ, որոնց թվումն է Կոմիտասի անվան լայնորեն հայտնի կվարտետը։ Սովետական Հայաստանի ժողովուրդը երկրին տվել է ոչ քիչ թվով տաղանդավոր կոմպոզիտորներ։

Լայն զարգացում է ստացել դեղարվեստական ընթերցման արվեստը։ Դեղարվեստական ինքնագործունեության երգեցիկ ու երաժշտական խմբակներից աճել են այնպիսի հիանալի անսամբլներ, ինչպես Հայկական Ֆիլհարմոնիայի՝ ժողովրդական երգի ու պարի անսամբլը, Լենինականի երգի ու պարի անսամբլը, աշուղական անսամբլը և այլն։

Հայ ժողովրդի արվեստի մեջ առաջին տեղերից մեկն անտարակույս պատկանում է թատրոնին։ Այստեղ առաջատար են հանդիսանում Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնը և Լենինականի պետական թատրոնը։

Հայկական ՍՍՌ մայրաքաղաքում ներկայումս գործում են՝ ռուսական և ադրբեջանական դրամատիկական թատրոնները, Պետական շրջիկ թատրոնը, Պատանի հանդիսատեսի թատրոնը, Տիկնիկային թատրոնը։ Համարյա բոլոր շրջանային կենտրոններում կան պետական կոլտնտեսային-սովխոզային թատրոններ»։

«Գրական թերթ», 20 հոկտեմբերի, 1939։

Հոկտեմբերի 8-ին

Գրողների Տանը Մ. Յու. Լերմոնտովի ծննդյան 125-ամյակի առթիվ տեղի է ունենում հանդիսավոր նիստ։

Ջեկուցում է Ս. Հարությունյանը։

Հոկտեմբերի 11-ին

Գրողների Տանը վ. Յա. Բրյուսովի մահվան 15-ամյակի պատկերավում է հանդիսավոր երեկո։

«Բրյուսովը և հայ պոեզիան» նյութի մասին զեկուցում է Եղ. Թոփչյանը:

Հուշեր են պատմում՝ Դ. Դեմիրճյանը և Ստ. Զորյանը:

Հոկտեմբերի 20-ին

Մոսկվայում սկսվում է հայկական արվեստի տասնօրյակը:

«Պրավդա»-ն առաջնորդող է նվիրում տասնօրյակին:

Առաջնորդողից.

«Հայաստանի ժողովուրդը հասակ է առել անհամար մարտերում: Ինչպես հեքիաթային Ֆենիքսը, նա վերածնվում էր մոխրից, բոցից, որը, թվում է թե, սպառնում էր ոչնչացնել նրա գոյության հետքերն իսկ: Ավերակների էին վերածվում հնադարյան տաճարները ու պալատները, ամբողջ աշխարհով մեկ ցիր ու ցան էր արվում քաղաքների ու գյուղերի բնակչությունը, հայրենի երկրում լռում էր հայկական խոսքը... Բայց կրկին ու կրկին վերածնվում էր հնադարյան կուլտուրան, աննկարագրելի սքանչելիությամբ շնչում էր հայկական պոեզիան ու երաժշտությունը, նոր գույներով փայլում էր գեղանկարչությունը և անդուլ կերպով աշխատում էին իմաստուն-գիտնականները, վերականգնելով կորցրածը, հավաքելով ժողովրդի պատմության ցիր ու ցան եղած թերթիկներն ու էջերը»...

«Իրականացավ հայ ժողովրդի իղձը: Ժողովրդական մասսաների մեջ կուտակված հզոր ուժերը ելք ու գործադրում գտան: Խնամքով պահպանելով անցյալի կլասիկ արվեստի հուշարձանները, հայ ժողովուրդը ստեղծում է նոր, հիանալի արվեստ»...

«... Սովետական Հայաստանի արվեստի ծաղկումն իրոք որ հոյակապ է:

Մեծ Սովետական Միության բոլոր ռեսպուբլիկաները հպարտանում են իրենց հիանալի քույր— Հայաստանով:

Փա՜ռք հայ ժողովրդին: Փա՜ռք նրա մեծ արվեստին: Փա՜ռք ու ողջույն Սովետական Հայաստանի արվեստի աշխատողներին»:

«Գրական թերթ», 30 հոկտեմբերի, 1939:

Նոյեմբերի 4-ին

Պարտիայի և կառավարության ղեկավարները Կրեմլում ընդունում են հայկական արվեստի տասնօրյակի մասնակիցներին:

Նոյեմբերի 23-ին

Հայֆիլհարմոնիայում կազմակերպվում է հանդիսավոր երեկո նվիրված օսեթական բանաստեղծ Կոստա Խետագուրովի ծննդյան 80-ամյակին։

Բացման խոսք է ասում Ստ. Զորյանը։

Զեկուցում է Գ. Բորյանը։

Դեկտեմբերի 17-ին, 18-ին

Տեղի է ունենում ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի գիտական սեսիան նվիրված ընկեր Ի. Վ. Ստալինի ծննդյան 60-ամյակին։

Զեկուցում են.

1. *Ս. Բուդումյան՝ «Ստալինը որպես պատմաբան».*
2. *Մ. Ներսիսյան՝ «Ստալինը և հայ ժողովրդի ազատագրումը».*
3. *Էդ. Թումչյան՝ «Ստալինը և գրականությունը».*
4. *Ա.ա. Ասատրյան՝ «Ստալինը հայ ժողովրդի ստեղծագործության մեջ»։*

Դեկտեմբերի 20-ին

ՍՍՌ Միության ժողկոմսովետի որոշումը «Ստալինի անվան մրցանակներ և թոշակներ հաստատելու մասին»։

Դեկտեմբերի 20-ին

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագրով Ի. Վ. Ստալինին շնորհվում է Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կոչում։

Դեկտեմբերի 20-ին

Սպենդիարովի անվան Օպերայի և Բալետի Պետական թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված ընկեր Ի. Վ. Ստալինի ծննդյան 60-ամյակին։

Ընկեր Ստալինի կյանքի և գործունեության մասին զեկուցում է ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Գր. Հարությունյանը։

Դեկտեմբերի 21-ին

Լրանում է ընկեր Ի. Վ. Ստալինի ծննդյան վաթսունամյակը։

Դեկտեմբերի 22-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինը ընտրվում է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի պատվավոր անդամ։

Դեկտեմբեր

Սովետական Միության ժողովուրդները տոնում են ընկեր Ի. Վ. Ստալինի ծննդյան 60-ամյակը։

Ընկեր Ի. Վ. Ստալինին ուղղված Համկ(բ)Պ կենտկոմի ողջույնից.

«Թանկագին բարեկամ և մարտական ընկեր,

Բոլշևիկյան պարտիայի կենտրոնական Կոմիտեն ջերմորեն ողջունում է քեզ, Լենինի բարեկամիդ և նրա գործի մեծ շարունակողիդ, պարտիայի և սովետական ժողովրդի առաջնորդ՝ քո վաթսունամյակի օրը»։...

«*Տալով քո բոլոր ուժերը ժողովրդի մեծ ծառայության համար, դու, ընկեր Ստալին, ճիշտ այնպես, ինչպես և Լենինը, սիրում ես քո ժողովրդին և անբաժան ես նրանից։ Ճիշտ այնպես, ինչպես Լենինը, դու շրջապատված ես Սովետական Միության և ամբողջ աշխարհի աշխատավորների ջերմ սիրով»։...*

«*Ապրիր երկար տարիներ, մեր հարազատ Ստալին, ի բերկրանք պարտիայի, բանվոր դասակարգի, սովետական երկրի և ամբողջ աշխարհի ժողովուրդների*»։

ՀԿ(բ)Պ կենտկոմի ողջույնի հեռագիրը.

«Թանկագին Իոսիֆ Վիսսարիոնովի՛չ։

Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն Ձեր ծննդյան 60-ամյակի օրն իր բոլշևիկյան բուռն ողջույնն է հղում Ձեզ, բոլշևիկյան պարտիայի մեծ հիմնադրին, ամբողջ աշխարհի աշխատավորների իմաստուն առաջնորդին։

Մեծ Սովետական Միության հոյակապ հաղթանակները անխզելիորեն կապված են Ձեր պանծալի անվան հետ, որը հաղթականի պրոշ է դարձել ամբողջ աշխարհի ճնշված ժողովուրդների համար։ Ձեր անվան հետ է կապված հայ ժողովրդի ազատագրության և վերածնունդը։

Ձեր կյանքի աքանչելի ուղին, ընկեր Ստալին, ծառայել և ծա-

ռայում է որպես լենինյան-ստալինյան տիպի կադրերի դաստիարակման ամենալավագույն օրինակը։

Ձեր ծննդյան 60-ամյակի օրը, Հայաստանի բոլշևիկները հավատիացնում են Ձեզ, որ իրենք բարձր բռնած առաջ կտանեն Լենինի-Ստալինի մեծ, անպարտելի դրոշը և Ձեր իմաստուն ղեկավարությամբ՝ կգնան դեպի կոմունիզմի նորանոր հաղթանակներ։

Յանկանում ենք Ձեզ ամուր առողջություն և երկար տարիների կյանք՝ ի ուրախություն ամբողջ աշխարհի աշխատավորների»։

ՍՍՌՄ Սովետական Գրողների Միության նախագահության ողջույնից.

«Դուք հոգատարությամբ եք աճեցնում սովետական գրականությունն ու արվեստը։ Դուք մատնանշեցիք սովետական գրողին, նրա բարձր կոչումը— լինել «մարդկային հոգիների ճարտարապետ»։ Դուք սովորեցնում եք մեզ լինել ստեղծագործության մեջ ճշմարտացի։ Դուք նշեցիք սոցիալիստական ռեալիզմը, որպես մեր աշխատանքի հիմնական մեթոդ։ Ձեր մեծ ուշադրությունը կուլտուրական ժառանգության նկատմամբ, Ձեր բարեկամությունը Գորկու հետ, ցույց են տալիս ամբողջ աշխարհին, թե որքան վիթխարի նշանակություն եք Դուք տալիս նոր սոցիալիստական հարաբերությունների ստեղծման գործում— կուլտուրային ու նրա լավագույն վարպետներին»։...

«Ձեր 60-ամյակի օրը, մենք՝ սովետական գրողներս, մեր անկեղծ ձայնն ենք միացնում ամբողջ աշխարհի միլիոնավոր աշխատավորության ձայնին։ Մենք ցանկանում ենք Ձեզ արիություն, նորանոր ուժեր, երկար կյանք։

Մենք համոզված ենք այն բանում, որ Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի մատնանշած ուղին կհասցնի մեզ դեպի հաղթականը— կոմունիզմ»։

Նիկոտեմբեր

Լույս է տեսնում «Խորհրդային գրականություն» հանդեսի № 6-ը նվիրված ընկեր Ի. Վ. Ստալինի ծննդյան 60-ամյակին։

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Ջափածո

1. Ն. Ջարյան.— Հավերժական գագաթներ, Պետհրատ, Երևան:
2. Ն. Ջարյան.— Ստալին, Պետհրատ, Երևան:
3. Ա. Վշտունի.— Լուսադեմին, Պետհրատ, Երևան:
4. Հ. Շիրազ.— Մեր երջանկությունը, Պետհրատ, Երևան:
5. Գ. Բորյան.— Արևի համբույրը, Պետհրատ, Երևան:
6. Հռ. Պողոսյան.— Բանաստեղծություններ, Պետհրատ, Երևան:
7. Հ. Հայրապետյան.— Իմ երգերը, Պետհրատ, Երևան:
8. Գ. Արտունի.— Բանաստեղծություններ, Պետհրատ, Երևան:
9. Վ. Արամունի.— Երգեր, Պետհրատ, Երևան:
10. Ղ. Կոմունի.— Հայրենիք, Պետհրատ, Երևան:
11. Հեն. Թումանյան.— Հայրենիքիս հետ, Պետհրատ, Երևան:
12. Հ. Աղաբաբ.— Մանկական երգեր, Պետհրատ, Երևան:
13. Վ. Վարդանյան.— Դերձակն ու մոծակը, Պետհրատ, Երևան:

Արձակ

1. Ստ. Ջորյան.— Մի կյանքի պատմություն, 1-ին—2-րդ գիրք, Պետհրատ, Երևան:
2. Մ. Մանվելյան.— Ջարթոնք, Պետհրատ, Երևան:
3. Սիրաս.— Սասունցի Դավիթ, Պետհրատ, Երևան:
4. Ք. Թաթուլյան.— Կյանքի արշալույսին, Պետհրատ, Երևան:
5. Ա. Մուրվալյան.— Պատմվածքներ, Պետհրատ, Երևան:
6. Ա. Թամազյան.— Մայիսի 1-ը, Պետհրատ, Երևան:

Ժողովածուներ

1. «Ստալինը հայ աշուղների երգերում», Հայպետհրատ, Երևան:
2. «Ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինին», Պետհրատ, Երևան:
3. «Լենին», Պետհրատ, Երևան:

4. «Սաթինը հայ ժողովրդի ստեղծագործության մեջ», Պետհրատ, Երևան:

Գրականության պատմություն, տեսություն և ճննադատություն

1. Հ. Մուրադյան.— Խաչատուր Աբովյան, Մանկ. Ինստիտ. հրատ., Երևան:
2. Հ. Ղանալանյան.— Սվ. Իսահակյանի լիրիկան, Պետհրատ, Երևան:
3. «Սասունցի Դավիթ», Արմֆանի հրատ., Երևան:
4. «Սասունցի Դավիթ», Պետհամալսարանի հրատ., Երևան:

Թարգմանություններ

1. Մ. Գորկի.— Մայրը, Պետհրատ, Երևան:
2. Ռ. Ռոլլան.— Ժան Քրիստոֆ, 3-րդ և 4-րդ գիրք, Պետհրատ, Երևան:
4. Ալ. Տոլստոյ.— Հաց, Պետհրատ, Երևան:
5. «Պատմվածքներ Լենինի մասին», Պետհրատ, Երևան:

1940

Հունվարի 3-ին

ՀԽԳ Միության ակումբում Աս. Ասատրյանը զեկուցում է կարդում «Սաթինը հայ գեղարվեստական գրականության և ֆոլկլորի մեջ» նյութի մասին:

Հունվարի 9-ին

Գրողների Տանը կազմակերպվում է երեկո նվիրված վ. Տերյանի մահվան 20-ամյակին:

Զեկուցում է Հ. Ղանալանյանը:

վ. Տերյանի մասին հուշեր են պատմում Սվ. Իսահակյանը, Ստ. Զորյանը:

Հունվար

ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի հրատարակությամբ՝ լույս է տեսնում «Սաթինը հայ ժողովրդի

պոեզիայում» ռուսերեն ժողովածուն, նվիրված Ի. Վ. Ստալինի ծննդյան 60-ամյակին:

Փետրվարի 1-ին

ՍՍՌՄ ժողկոմսովետը, ի լրացում իր 1939 թ. դեկտեմբերի 20-ի որոշման՝ «Ստալինի անվան մրցանակներ և թոշակներ հատկացնելու մասին», որոշում է.

«Հաստատել Ստալինի անվան չորս մրցանակ, յուրաքանչյուրը 100.000-ական ռուբլի, որոնք ամեն տարի տրվելու են գրականության և արվեստի ասպարեզում աչքի ընկնող երկերի հեղինակներին:

Որոնցից՝

մեկը— պոեզիայի գծով
մեկը— արձակի գծով
մեկը— դրամատուրգիայի գծով
մեկը— գրական քննադատության գծով»:

Փետրվարի 8-ին

Գրողների Տանը կազմակերպվում է երեկո նվիրված Ե. Արևշատյանի «Վերք Հայաստանի» վեպի 100-ամյակին:

Բացման խոսք է ասում Ստ. Զորյանը:

Զեկուցում է Ռ. Զարյանը:

Ելույթ է ունենում Ավ. Իսահակյանը:

Փետրվարի 9-ին

Գրողների Տանը Գ. Կուպոլյանը զեկուցում է Ն. Զարյանի «Հացավան» վեպի և «Ռուշանի քարափ» ու «Սաքո Մխկինյան» պոեմների մասին:

Ելույթներ են ունենում՝ Հ. Մկրտչյանը, Գ. Սարյանը. վերջում՝ Ն. Զարյանը:

Փետրվարի 17-ին

Մոսկվայում տեղի է ունենում ՍԳ Միության Նախարդահության հրավիրած խորհրդակցությունը:

Քննարկվում է Սովետական Գրականության պատմություն ստեղծելու հարցը:

Զեկուցում է Մ. Սերեբրյանսկին:

Փետրվարի 29-ին

Գրողների Տանը կազմակերպվում է գրողների համդիպումը ստախանովական բանվորների հետ։

Մարտի 9-ին

Լրանում է ընկեր վ. Մ. Մոլոտովի ծննդյան 50-ամյակը։ Այդ կապակցությամբ ընկեր վ. Մ. Մոլոտովը պարգևատրվում է Լենինի շքանշանով։

Պերմ քաղաքն իր մարզով վերանվանվում է Մոլոտովի անուանում— Մոլոտով քաղաք, Մոլոտովի մարզ։

Մարտի 11-ին

ՀԿ(բ)Պ XIII համագումարի բացումը։

Համագումարում հաշվետու զեկուցումով հանդես է գալիս ՀԿ(բ)Պ կենտկոմի քարտուղար ընկ. Գր. Հարությունյանը։

Ընկ. Գր. Հարությունյանի հաշվետու զեկուցումից.

«Այն մեծ աշխատությունը և հաղորդակցումը Սովետական Միության գրական աշխարհի հետ, որ տեղի ունեցավ «Սասունցի Դավիթ» էպոսի հազարամյակի առնախատարության կապակցությամբ, ստեղծագործական վերելք առաջացրեց Հայաստանի գրողների մեջ։

Պոեմներն ու գրողներն այս ժամանակաշրջանում տվին մի շարք լավ երկեր —Գ. Դեմիրճյանի «Երկիր հայրենի» պիեսը, Սա. Զորյանի «Մի կյանքի պատմություն» վեպը, Սրապու «Ամեն ինչ շարժվում է» պատմվածքները, Սիրասի՝ «Վարդենի» պատմվածքը, Ն. Զարյանի «Դյուցազնապիրք» պոեմը, երիտասարդ պոետներ Հ. Շիրազի, Գ. Բորյանի բանաստեղծությունների ժողովածուները, Թափալչյանի «Կյանքի արշալույսին» վեպը։ Պատրաստված է և լույս է տեսնում «Հայկական պոեզիայի անտոլոգիան»։

Պետք է նշել, որ այդ բնագավառում կատարված աշխատանքը շատ հետ է մնում մեր ընթերցողների կուլտուրական աճից և պահանջներից։

Եղած ստեղծագործական վերելքի արդյունքները կլինեին շատ ավելի մեծ, եթե մեր գրողների ու պոետների մեջ բավարար չափով զարգացած լիներ նորի զգացումը, եթե նրանք իրենց երկերի մեջ արմատավորեին գրական ստեղծագործության հիմնական ձևը—

սոցիալիստական ռեալիզմը և եթե մեր գրական քննադատությունը դառնվեր իր կոչման բարձրության վրա։

Այս բոլոր թերությունները վերացված կլինեին, եթե Հայաստանի Սովետական Գրողների Միության պարտկազմակերպությունը և կոմունիստ գրողները կարողանային ստեղծագործական աոողջ մթնոլորտ ստեղծել Սովետական Գրողների Միության անդամների փոխհարաբերությունների մեջ և նրանց համախմբեին գրական ֆրոնտի հիմնական խնդիրների շուրջը։ Ինտրիգները, բամբասանքը, իրար ոտքի տակ փորելը դեռ լիկվիդացիայի ենթարկված չեն գրողների մի մասի մեջ։

Դեռ ավելին. վերջին ժամանակներս նկատվում են ռապպականության որոշ ռեցիդիվներ։

Այս բոլորը Սովետական Գրողների Միության պարտկազմակերպության կողմից չեն ստանում բավականաչափ հակահարված, իսկ երբեմն էլ պարտկազմակերպությունն աշխատում է լռության մատնել և անցնել այդ երևույթների կողքով։ Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմը քիչ ուշադրություն չի նվիրել մեր գրականության զարգացմանը, գրողների նոր կադրերի ստեղծմանը, անհրաժեշտ նյութական և այլ հնարավորությունների ստեղծմանը մեր գրողների ստեղծագործությունը լայնորեն զարգացնելու համար։

Անհրաժեշտ է, որ Սովետական Գրողների Միության պարտկազմակերպությունը և կոմունիստ գրողները հետագայում ուժեղացնեն պայքարը խմբակայնության դեմ և ռապպականության ռեցիդիվի տարրերի դեմ, Հայաստանի Գրողների Միության մեջ ստեղծելով առողջ, ստեղծագործական մթնոլորտ»։

«Գրական թերթ», 20 մարտի, 1940։

Մարտի 25-ին

Գրողների Տանը տեղի է ունենում Խորհրդային Գրողների Միության պարտիական սկզբնական կազմակերպության ժողովը։

ՀԿ(բ) Պ XIII համագումարի արդյունքների մասին զեկուցում է ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Ս. Կարապետյանը։

Մարտի 31-ին

Կարելո-Ֆիննական ՍՍՌ կազմակերպումը։

688—33

Ապրիլի 14-ին

Լրանում է Վլ. Մայակովսկու մահվան 10 տարին։

Հայաստանում Վլ. Մայակովսկու հիշատակին կազմակերպվում են երեկոներ։

Ապրիլի 22-ին

Լրանում է Վ. Ի. Լենինի ծննդյան 70-ամյակը։

Ապրիլի 27—28-ին

Հնդ Միության ակումբում Արվեստի վարչության, Գրողների Միության և Նորակազմ Թատերական Ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվում է դիսպուտ՝ նվիրված սովետական դրամատուրգիայի խնդիրներին։

Մայիսի 25-ին

Տոնվում է Ան. Վարդանյանի ծննդյան 60 և գրական-հասարակական գործունեության 35-ամյակը։

Մայիսի 28-ին

Լենինական է ժամանում Մ. Ի. Կալինինը։

Մայիսի 28-ին

Կալմիկական ԱՍՍՌ Ռևոլյուցիկայի մայրաքաղաք Էլիստայում հրավիրվում է ՍՍՌՄ ՍԳՄ Վարչության 8-րդ պլենումը, նվիրված կալմիկ ժողովրդի «Ջանգար» էպոսի 500-ամյակին։

Մայիսի 28-ին

ՀՍհՀ ժողկոմխորհը Հայաստանում սովետական կարգերի հաստատման 20-ամյակի առթիվ հայտարարում է գրական և գիտական լավագույն գործերի մրցանակաբաշխություն։

Հունիսի 6-ին

Պետական Համալսարանում Դ. Դեմիրճյանը դեկույցով է «Խորհրդային Հայաստանի պոեզիան» նյութի մասին։

Հունիսի 20-ին

Հայֆիլհարմոնիայում տեղի է ունենում հանդիսավոր երեկո՝ նվիրված Ակակի Շերեմետու ծննդյան 100-ամյակին։

Հունիսի 28-ին

Սովետական կառավարության պահանջով Ռումինիան վերադարձնում է Բեսարաբիան և Սովետական Միությանն է հանձնում Հյուսիսային Բուկովինան։

Հուլիսի 9-ին

Ջկալով քաղաքում (Օրենբուրգ) հանդիսավոր կերպով դրվում է վ. Տերյանի հուշատախտակը։

Հուլիսի 10-ին

Վախճանվեց երդիծաբան Կոստանդին Մելիք-Շահնազարյանը (Տփրլայի խաչան)։

Հուլիսի 21-ին

Լիտվայում, Լատվիայում և Էստոնիայում հաստատվում են սովետական կարգեր։

Օգոստոսի 1-ին

Բացվում է ՍՍՌՄ Գերագույն Սովետի 2-րդ սեսիան։

Օգոստոսի 2-ին

Մոլդավական ՍՍՌ կազմակերպումը։

Օգոստոսի 28-ին

Հրապարակվում է Հայկական ԽՍՀ Լուժոզկոմատի կոլեգիայի որոշումը Հայոց այբուբենի և դրության մեջ «է» և «օ» տառերը վերականգնելու, ինչպես նաև միջապետային դարձած մի շարք տերմինների գործադրման մասին։

Նոյեմբերի 16-ին

Բացվում է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի Տնբելյանական գիտական սեսիան նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 20-ամյակին։

Նոյեմբերի 26-ին

Սովետական Միության ժողովուրդները նշում են Ադամ Միցկևիչի մահվան 85-ամյակը։

Նոյեմբերի 29-ին

Մեծ հանդիսավորությամբ տոնվում է Հայաստանում սովետական կարգերի հաստատման 20-ամյակը։

Լույս է տեսնում սովետահայ գրողների նամակ-ողջույնը «Եղբայրական ռեսպուբլիկաների ժողովուրդներին»։

Ստացվում են ողջույնի հեռագրեր ՍՍՌՄ Սովետական Գրողների Միությունից, Ադրբեջանի ՍԳՄ Նախագահությունից, Շ. Դադիանուց, Ի. Բրյուսովայից, Ի. Գրիշաշվիլուց և ուրիշներից։

Նոյեմբեր

Հայաստանի ՍԳ Միությանը կից կազմակերպվում է ռուսական սեկցիա։

Նոյեմբեր

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 20-ամյակի կապակցությամբ Մոսկվայում Գոսլիտիզդատը հրատարակում է «Հայկական պոեզիայի անթոլոգիան» (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը) շքեղ հրատարակությամբ, Ս. Ս. Հարությունյանի և Վ. Յա. Կիրպոտինի խմբագրությամբ։

Դեկտեմբերի 7-ին

ՍՍՌՄ Գրողների Միության ակումբում տեղի է ունենում երեկո՝ նվիրված «Հայկական պոեզիայի անթոլոգիա»-յին։

Բացման խոսք է ասում Պ. Անտոկոլսկին։

Զեկուցում է Վ. Կիրպոտինը։

Դեկտեմբերի 23-ին

Տոնվում է Ավ. Իսահակյանի ծննդյան 65-ամյակը։

Ստացվում են հեռագրեր՝ ՍՍՌՄ ՍԳՄ Նախագահությունից, ՎՍԳՄ Նախագահությունից, ՌՍԳՄ Վարչությունից, ԿՍԳՄ Վարչությունից, ԼՍՍՌ ՍԳ Միությունից, Ս. Վուրգունից, Վ. Կիրպոտինից, Պ. Տիչինայից, Շ. Դադիանուց և ուրիշներից։

Դեկտեմբերի 27-ին

Պետէստրադայի դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր երեկո նվիրված «Սովետական Հայաստան» թերթի 20-ամյակին։

Դեկտեմբեր

Մոսկվայում տեղի է ունենում համամիութենական խորհրդակ-ցություն՝ նվիրված ֆոլկլորի հարցերին։

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Չափածո

1. *Ն. Զարյան.— Դյուցազնագիրք, Հայպետհրատ, Երևան։*
2. *Գ. Սարյան.— Բանաստեղծություններ, Հայպետհրատ, Երևան։*
3. *Ս. Տարոնցի.— Բանաստեղծություններ, Հայպետհրատ, Երևան։*
4. *Վեսպեր.— Եղևնի, Հայպետհրատ, Երևան։*
5. *Սարմեն.— Երգաստան, Հայպետհրատ, Երևան։*
6. *Սարմեն.— Նվեր, Հայպետհրատ, Երևան։*
7. *Սարմեն.— Հերոսական մահ, Հայպետհրատ, Երևան։*
8. *Հ. Շիրազ.— Երգ Հայաստանի, Հայպետհրատ, Երևան։*
9. *Հ. Շիրազ.— Հատընտիր, Հայպետհրատ, Երևան։*
10. *Գ. Բորյան.— Ճանապարհ դեպի ծով, Հայպետհրատ, Երևան։*
11. *Աղավնի.— Բանաստեղծություններ, Հայպետհրատ, Երևան։*
12. *Վ. Գրիգորյան.— Արևն ազդանշան, Հայպետհրատ, Երևան։*
13. *Մ. Մարգարյան.— Մտերմություն, Հայպետհրատ, Երևան։*
14. *Գ. Էմին.— Նախաշավիղ, Հայպետհրատ, Երևան։*

Արձակ

1. *Ստ. Զորյան.— Ընտիր երկեր, հ. I, Պետհրատ, Երևան։*
2. *Ստ. Զորյան.— Հեքիաթներ, Հայպետհրատ, Երևան։*
3. *Արազի.— Այրվող հորիզոն, I գիրք, Պետհրատ, Երևան։*
4. *Ծ. Թորգոմյան.— Արծաթե ժապավեն, Պետհրատ, Երևան։*
5. *Սիրաս.— Անահիտ, Պետհրատ, Երևան։*
6. *Ա. Հովսեփյան.— Սիրտ, Հայպետհրատ, Երևան։*

Դրամատուրգիա

1. Ան. Վարդանյան.— Արաքսի ափին, Պետհրատ, Երևան:

Ժողովածուներ

1. «Բանաստեղծները 20-ամյակին», Հայպետհրատ, Երևան:
2. «Հայրենի վտակներ», Հայպետհրատ, Երևան:
3. «Վերածնված երկիրը» (ակնարկների և պատմվածքների ժողովածու), Հայպետհրատ, Երևան:
4. «Գրական ժառանգություն», Ա. գիրք, Արմֆանի հրատ., Երևան:
5. Մ. Աբեղյան.— Գուսանական ժողովրդական տաղեր, Արմֆանի հրատ., Երևան:
6. Մ. Աբեղյան.— Ժողովրդական խաղիկներ, Պետհրատ, Երևան:

Գրականության պատմություն, տեսություն և քննադատություն

1. Եր. Շահազիզ.— Դիվան Խ. Աբովյանի, Արմֆանի հրատ., Երևան:
2. Աս. Ասատրյան.— Ստալինի կերպարը սովետական հայկական պոեզիայում և ֆոլկլորում, Արմֆանի հրատ., Երևան:
3. Հ. Մամիկոնյան.— Սերվանտեսի կյանքը և ստեղծագործությունները, Պետհամալսարանի հրատ., Երևան:
4. Վ. Թերզիբաշյան.— Արազի, Հայպետհրատ, Երևան:
5. Գ. Հովհան.— Մաքսիմ Գորկին և հայկական կուլտուրան, Հայպետհրատ, Երևան:
6. Ռ. Զարյան.— Աբովյանի կյանքը, Հայպետհրատ, Երևան:
7. Ա. Ինճիկյան.— Ավետիք Իսահակյան, Պետհրատ, Երևան:
8. Ա. Ինճիկյան.— Ծատուրյանի կյանքը, Պետհրատ, Երևան:
9. Հ. Ջնդի.— Քրդական ժողովրդական հեքիաթներ, Պետհրատ, Երևան:
10. Հ. Ղանալանյան.— Իսահակյանի լիրիկան, Պետհրատ, Երևան:
11. «Հայ գրականության պատմություն», Ա և Բ գիրք, Հայպետհրատ, Երևան:

Թարգմանություններ

1. Վ. Հյուգո.— Թշվառներ, Ա. հատ., Հայպետհրատ, Երևան:
2. Լ. Տոլստոյ.— Պատերազմ և խաղաղություն, Դ. հատ., Պետհրատ, Երևան:
3. Ի. Տուրգենև.— Արձակ բանաստեղծություններ, Հայպետհրատ, Երևան:
4. Վ. Մայակովսկի.— Բանաստեղծություններ և պոեմներ, Հայպետհրատ, Երևան:
5. Վ. Մայակովսկի.— Լենին, Հայպետհրատ, Երևան:
6. Վ. Կիրպոտին.— Հայ ժողովրդի մեծ էպոսը՝ «Սասունցի Դավիթ», Հայպետհրատ, Երևան:

1941

Հունվարի 14-ին

Հայֆիլհարմոնիայում կազմակերպվում է հայ պոեզիայից նվիրված գրական-գեղարվեստական երեկո՝ ռուսերեն լեզվով:

Հունվարի 25-ին

Լրանում է Պետական Համալսարանի հիմնադրման 20 տարին:

Հունվարի 23-ին

Գրողների Տանը տեղի է ունենում գրական դիսպուտ Գ. Մայրյանի «Զրպարտություն» պիեսի շուրջը:

Հունվար

Համկ(բ)Պ Կենտկոմի որոշումը «Գրական քննադատության և բիբլիոգրաֆիայի մասին»:

Համկ(բ)Պ Կենտկոմի որոշումից.

«Թերթերի և ժուռնալների մեծ մասից վերջին ժամանակներս դրեթե անհետացել են գրական-քննադատական նյութերը: Անբավարար է դրված հանձնարարականի բիբլիոգրաֆիան, որը մեծ նշանակություն ունի մասսաների քաղաքական և կուլտուր-տեխնիկական մակարդակը բարձրացնելու գործում: Մինչև հիմա մշակված

չեն բիբլիոգրաֆիական տեղեկագիրներ, գիտության տարբեր ճյուղերի վերաբերյալ ընթերցանության գրքերի հանձնարարական ցուցակներ և տարբեր պրոֆեսիաների վերաբերյալ գրականության ուղեցույցներ։

Գննադատական-բիբլիոգրաֆիական աշխատանքը կտրված է սոցիալիստական շինարարության պրակտիկ պահանջներից»...

«Համկ(բ)Պ Կենտկոմը նշեց, որ ներկայումս ամենաթույլ օղակը գեղարվեստական գրականության քննադատությունն է։ Քննադատների մեծ մասը չի զբաղվում սովետական գրականության հարցերով և չի աղդում նրա ձևավորման վրա»...

«Գրողների Միության կից արվեստականորեն ստեղծված քննադատների սեկցիան պետք է լիկվիդացիայի ենթարկվի։ Քննադատները պետք է գրողների հետ միասին աշխատեն Գրողների Միության համապատասխան ստեղծագործական սեկցիաներում (արձակի, պոեզիայի և դրամատուրգիայի)»։...

«Ռեսպուբլիկական, երկրային և մարզային թերթերը պետք է կանոնավոր կերպով տպագրեն գրքերի հանձնարարական ցուցակներ, և հոդվածներ ամենակարևոր գրական երկերի մասին, ինչպես նաև ապահովեն տեղական հրատարակչությունների ամբողջ գրականությունը ռեցենզիայի ենթարկելը։

Ճյուղային թերթերն ու ժուռնալները պետք է կազմակերպեն քննադատական բիբլիոգրաֆիական մշտական բաժիններ և այնպես դնեն նրանց աշխատանքը, որ ամբողջ լույս տեսնող մասնագիտական գրականությունը գնահատական ստանա մամուլի էջերում։ Արտադրության յուրաքանչյուր ճյուղին վերաբերող գրականության տեսությունների հրապարակումը պետք է տեղի ունենա մեկ տնտեսամից ոչ պակաս։ Ճյուղային թերթերն ու ամսագրերը պետք է կանոնավոր կերպով զետեղեն գրականության հանձնարարական ցուցակներ բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների համար՝ արտադրության և պրոֆեսիաների տարբեր տեսակների վերաբերյալ ինֆորմացիա տան արտասահմանյան տեխնիկական գրականության ամենից ավելի կարևոր երկերի մասին»։

«Գրական թերթ» № 1, 1941։

Հունվար

ՀԿ(բ)Պ Կենտկոմի որոշումը «Գրական քննադատության և բիբլիոգրաֆիայի մասին»։

ՀԿ(բ)Պ կենտկոմի որոշումից.

«ՀԿ(բ)Պ կենտկոմը, վերջերս ընդունած որոշման մեջ մատնանշեց, որ գրական քննադատության և բիբլիոգրաֆիայի աշխատության գոյություն ունեցող սխալները և թերությունները, որ նշված են ՀամԿ(բ)Պ կենտկոմի «Գրական քննադատության և բիբլիոգրաֆիայի մասին» որոշման մեջ՝ ամբողջովին վերաբերում են Հայաստանի գրական, գիտական և հրատարակչական կազմակերպություններին, ինչպես նաև ռեսպուբլիկական մամուլին։ Գրական քննադատությունը և բիբլիոգրաֆիան, հատկապես գեղարվեստական գրականության քննադատությունը դռնվում են խիստ անբավարար և անուշադիր վիճակում։

ՀԿ(բ)Պ կենտկոմն ի իրականացումն ՀամԿ(բ)Պ կենտկոմի որոշման, նշից մի շարք միջոցառումներ գրական քննադատության և բիբլիոգրաֆիայի արմատական բարելավման համար։

Հայաստանի Սովետական Գրողների Միության կից գոյություն ունեցող քննադատների սեկցիան պետք է լիկվիդացիայի ենթարկվի և նրա անդամները պետք է աշխատեն Հայաստանի Սովետական Գրողների Միության համապատասխան ստեղծագործական սեկցիաներում։

«Սովետական Հայաստան», „Коммунист", «Սովետ Էրմանիստան», «Ավանգարդ», „Сталинец", «Բանվոր», «Գրական թերթ» և «Սովետական Դպրոց» թերթերի ու «Պարտաշխատող», «Սովետական Գրականություն», «Սովետական Մանկավարժ», «Սովետական Արվեստ», Արմֆանի «Տնղեկագիր», «Հայաստանի Աշխատավորուհի» և «Ջոկատավար» ժուռնալների խմբագրությունները պետք է իրենց էջերում կազմակերպեն գրական քննադատության և բիբլիոգրաֆիայի բաժիններ»։...

«Հանձնարարական բիբլիոգրաֆիայի պործը այսուհետև կենտրոնացվելու է Մյասնիկյանի անվան Հանրային Գրադարանում։ Հանրային Գրադարանին հանձնվում է Հայկական ՍՍՌ «Լուսժողկոմատի բյուլետենն»-ը՝ վերակառուցելով այն որպես բիբլիոգրաֆիական ամսագիր։

Պետական ամբողջ գրանցման-հաշվառման բիբլիոգրաֆիան և վիճակագրությունը պետք է կենտրոնացվի Հայկական ՍՍՌ Գրադարանում։ Պարտավորեցված է Գրադարանին՝ կատարել Հայաս-

տանում Սովետական իշխանության տարիներին լույս տեսած գրականության լրիվ հաշվառում»։

«Գրական թերթ» № 2, 1941։

Հունվար

Գրողների Միության Նախագահությունն իր ընդլայնված նիստում քննության է առնում ՀամԿ(բ)Պ Կենտկոմի և ՀԿ(բ)Պ Կենտկոմի գրական քննադատության և գրախոսության մասին ընդունած որոշումների մասսայականացման հարցը։

Հունվար

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 20-ամյակի կապակցությամբ Հայաստանի գիտության, գրականության և արվեստի աշխատողները հեռագիր են ուղղում Ամերիկայի հայերին, որին հեռագրով պատասխանում է Ամերիկայի Հայկական Պրոգրեսիվ Լիգան։

Հեռագրից.

«Ամերիկայի հայերը հրճվում են տեսնելով երջանիկ ստեղծագործական կյանքն ու խաղաղությունը հայրենիքում, և հպարտանում են բոլոր ճակատներում նրա ձեռք բերած անօրինակ հաջողություններով։

Կեցցե՛ վերածնված հայ ժողովուրդը։ Կեցցե՛ մեծ Միության ժողովուրդների եղբայրակցությունը»։

Փետրվարի 10-ին

Թբիլիսիի Գրողների Պալատում տեղի է ունենում երեկո՝ նվիրված Ավ. Իսահակյանին։

Բացման խոսք է ասում Աբաշիձեն։

Զեկուցում է Ա. Կարինյանը։

Ողջունում են՝ Շ. Դադիանին, Բ. Ժղենտին, Գ. Լեոնիձեն։

Փետրվարի 15-ին

Բացվում է ՀամԿ(բ)Պ XVIII կոնֆերենցիան։

Փետրվարի 26-ին

Գրողների Տանը կազմակերպվում է բանաստեղծուհի Վ. Աղասյանի երեկո։

Մարտի 1-ին

ՀՍՍՌ ժողկոմսովետին կից Արվեստի գործերի վարչության որոշմամբ հայտարարվում է սովետական թեմայով լավագույն աշխատանքների ռեսպուբլիկական կոնկուրս։

Մարտի 12, 17, 18-ին

Գրողների Տանը կազմակերպվում է դիսպուտ՝ «Մեր գրականության արդի խնդիրները և սովետական մարդու տիպարը հայ արձակագրության մեջ» նյութի շուրջը։

Ջեկուցում են Հմ. Սիրասը և Հ. Մկրտչյանը։

Մտքերի փոխանակությանը մասնակցում են՝ Դ. Դեմիրճյանը, Ավ. Իսահակյանը, Սրապին, Գ. Բորյանը, Ստ. Զորյանը, Վ. Թեքեղիրաշյանը, Հ. Շիրազը, Հ. Մամիկոնյանը և ուրիշները։

Ելույթ է ունենում ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Ա. Կարապետյանը։

Մարտ

ՀՍԳ Միության Նախագահությունն իր ընդլայնած նիստում քննության է առնում Հ. Շիրազի «Թաթուլ Գիլան» պատմավեպի պոեմը։

Ապրիլի 4-ին

Նշվում է Ղ. Աղայանի ծննդյան 100-ամյակը։

Ապրիլի 15-ին

Գրողների Տանը տեղի է ունենում հանդիսավոր նիստ, նվիրված Միք. Նալբանդյանի մահվան 75-ամյա տարեդարձին։

Ապրիլ

ՍՍՌՄ ժողկոմսովետի և Համկ(բ)Պ Կենտկոմի կողմից տրամադրվում է հոբելյաններ տոնելու նոր կարգ։

Մայիսի 4-ին

Հայ գրական տաղավարին մասնակցելու համար Մոսկվա է մեկնում Սովետական Հայաստանի գրողների և քննադատների պատվիրակությունը ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Ս. Կապրոսյանի գլխավորությամբ։ Պատվիրակության կազմը. Ավ. Իսահակյան, Դ. Դեմիրճյան, Ստ. Զորյան, Ն. Զարյան, Հ. Սիրաս,

Գ. Սարյան, Արազի, Հ. Շիրազ, Ան. Վարդանյան, Հռ. Պողոսյան, Մ. Տարոնցի, Սարմեն, Գ. Աբով, Ս. Հարությունյան, Գ. Բորյան, Խ. Սարգսյան, Էդ. Թոփչյան, Լ. Միքայելյան, Աղավնի, Քր. Թափալցյան, Հ. Մկրտչյան, Ա. Հովսեփյան, Ղ. Կոմունի, Հ. Դանոյան։

Մայիսի 6-ին

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագիրը ընկեր Ի. Վ. Ստալինին ՍՍՌՄ Ժողկոմսովետի Նախագահ նշանակվելու մասին։

Մայիսի 10-ին

Մոսկվայում սկսվում է հայ գրականության 10-օրյակը։

«Պրավդա»-յում տպագրվում է ընկ. Ս. Կարապետյանի «Հայ ժողովրդի գրականությունը» հոդվածը։

Ս. Կարապետյանի հոդվածից.

«Հայաստանում Սովետական իշխանության հաղթանակը նոր դարագլուխ բացեց նաև հայ գրականության պատմության մեջ, որ 20 տարվա ընթացքում փարթամորեն ծաղկեց։ Հայաստանի Սովետական գրականությունն անդուլ կերպով գովերգում է մարդկության առաջավոր և վեհ գաղափարները։ Նա ոգեշնչված է սոցիալիստական ռևոլուցիայի առաջնորդների մեծ գաղափարներով, Լենին-Ստալինի գաղափարներով։

Հայաստանի սովետական գրականությունը գովերգում է ժողովրդի երջանիկ կյանքը, սովետական մարդկանց սխրագործությունները և հերոսությունը, սոցիալիստական ստեղծարար աշխատանքը, ժողովուրդների ստալինյան մեծ բարեկամությունը, Կարմիր Բանակի հզորությունն ու անպարտելիությունը, սովետական հայրենասիրությունը և աշխատավորության անհուն սերը դեպի իրենց սոցիալիստական հայրենիքը։ Հայ սովետական պոետների և գրողների ստեղծագործության մեջ կենտրոնական տեղն է գրավում սոցիալիզմի մեծ հաղթանակները կազմակերպողի ու ոգեշնչողի կերպարը՝ Ստալինի կերպարը։ Ստալինը հայ Սովետական պոեզիայի և ֆոլկլորի հոգին է»։...

«Սովետական իշխանության տարիներին Հայաստանում աճեցին պոետների և գրողների բազմաթիվ երիտասարդ կադրեր։ Գործակցելով ավագ սերնդի հետ, հաղթահարելով նոր սովետական

պրականության աճման ու ձևավորման դժվարությունները, բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ անհաշտ պայքար մղելով պրականության մեջ եղած թշնամի հոսանքների, մանավանդ բուրժուական նացիոնալիզմի դեմ, նրանք կարողացան կոփել Հայաստանի սովետական գրողների իսկական ստեղծագործական կոլեկտիվ»։...

«Այսօր Մոսկվայում բացվող հայ գրականության տասնօրյակը օրգանական մի օղակ է վերջին տարիներս հայ ժողովրդի ձեռք բերած հսկայական հաջողությունների ընդհանուր շղթայում»։

«Սովետական գրականություն» № 5—6, 1941։

«Իզվեստիա»-ն առաջնորդող է նվիրում տասնօրյակին. տպագրվում է ակադ. Հ. Օրբելու «Մեծ տրադիցիաներ», Ս. Շերվինսկու «Աշուղների պոեզիան», Պ. Անտոկոլսկու «Սովետական Հայաստանի պոետները», Ս. Վուրղունի «Ստեղծագործական բարեկամություն» հոդվածները։

«Իզվեստիա»-յի առաջնորդողից.

«Հոկտեմբերյան Սոցիալիստական Ռևոլուցիան ֆիզիկական բնաջնջումից փրկեց նաև հայ ժողովրդին՝ աշխարհի ամենակուլտուրական ու տաղանդավոր ժողովուրդներից մեկին։ Հայաստանի սովետիզացիան փոխեց երկրի դեմքը։ Սոցիալիստական ինդուստրիալիզացիան նրան դարձրեց առաջավոր, ծաղկող երկիր։ Կոլեկտիվացումը հավիտյան ոչնչացրեց աղքատությունը գյուղում։

Ստալինյան հնգամյակների տարիներին Հայաստանում ստեղծված է քիմիական, էլեկտրո-էներգետիկ, սննդի, տեքստիլ, թևթև արդյունաբերություն, լիովին վերակառուցվել է պղնձա-հանքային արդյունաբերությունը։ Ժամանակակից Հայաստանը հարուստ է ԲՈՒՀ-երով, գիտա-հետազոտական ինստիտուտներով, պրոֆեսորներով, թատրոններով։

Հիանալի է Հայաստանի ներկան, հիանալի է և նրա ապագան։ Նրան, իր պոետների կողմից քանիցս ողբացած այդ Հայաստանին են ուղղված Ավետիք Իսահակյանի ոգեշնչված տողերը.

«Վառ ու հզո՛ր քո ապագան
Կայծակում է իմ դեմ.
Դո՛ւ, հավերժող իմ Հայաստան,
Անուն քա՛ղցր ու վսե՛մ»։

Սովետական մարդիկ բուրժուական կոսմոպոլիտներ չեն։ Նրանց համար թանկ է իրենց ժողովրդի անցյալը, նրա հերոսական տրադիցիաները։

Հայ ժողովուրդը սիրով հավաքել է իր կուլտուրայի գանձերը, դրանք դարձրել է եղբայրական ժողովուրդների սեփականություն։ «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսը թարգմանված է ՍՍՌՄ ժողովուրդների շատ լեզուներով։ Ռուսի և վրացու, բելոռուսի և ադրբեջանցու, ուկրաինացու և ուզբեկի սրտին թանկ է սքանչելի ավանդությունը Սասնա դյուցազունների հայրենասիրական սխրագործությունների մասին։ Նա պատգամ է տվել «փառքը հաղորդել սերնդից-սերունդ»։

Հայ պոեզիայի անթոլոգիան ռուս ընթերցողին ծանոթացրեց հայ գրականության հարստությանը, գրականություն, որն այնքան հիացմունք է պատճառել Գորկուն, Բրյուսովին և Բլոկին։

Ժամանակակից հայ գրողների՝ Ավետիք Իսահակյանի, Ստեփան Զորյանի, Արազու, Դերենիկ Դեմիրճյանի, Գեղամ Սարյանի, Նաիրի Զարյանի, Սիրասի անունները լայնորեն հայտնի են սովետական ընթերցողին։

Վերջին 3—4 տարվա ընթացքում հայ գրականությունը հարստացավ նոր երկերով։ Ստեփան Զորյանն ավարտեց «Մի կյանքի պատմություն» մեծ վեպը, որի մեջ նկարագրվում են հայկական գյուղաքաղաքի մինչռևոլյուցիոն կենցաղի պատկերները, ռևոլյուցիոն շարժման սկզբնավորությունը և բոլշևիկյան ընդհատակի աշխատանքը։

«Այրվող հորիզոն» մեծ վեպով հանդես եկավ գրող Արազը։ Նոր թեմաներ է առաջ քաշում Դերենիկ Դեմիրճյանը՝ «Կապուտան» և «Երկիր հայրենի» պիեսների մեջ։

Հայաստանի գրականությունը հասել է բարձրագույն աստիճանի։ Հայ գրողների ստեղծագործությունների մեջ սկսել են գերակշռել սովետական հայրենասիրության, հայրենիքի՝ սոցիալիզմի երկրի նկատմամբ ջերմ սիրո մոտիվները»։...

«Հայ գրականության տասնօրյակը պետք է խթան հանդիսանա եղբայրական ժողովուրդների արվեստին լայնորեն ծանոթանալու համար։

Հայ գրականության տասնօրյակը, որ տեղի է ունենում Մոսկվայում, մայրաքաղաքի հասարակայնությանը ցույց կտա բազ-

մոլարյան կուլտուրայի մարդարիտները, որոնք միայն այժմ, սոցիալիզմի օրով է, որ վայելում են իրենց ամբողջ պայծառությամբ»:

«Սովետական գրականություն» № 5—6, 1941:

2. Օրբելու հոդվածից.

«Սովետական Հայաստանի բանաստեղծներն ու արձակագիրները պահպանում են վսեմավոր տրադիցիաները լավագույն հայ բանաստեղծների, որոնք իրենց ներշնչումը փնտռել են ժողովրդական մոտիվների մեջ, ուժի աղբյուրը տեսել են իրենց անքակտելի կապի մեջ՝ ժողովրդական մասսաների հետ:

Ուժի այդ աղբյուրը չի սպառվում, ինչպես անսպառ է ժողովրդական ստեղծագործությունը, ինչպես չի սպառվում հայկական ֆոլկլորը, որը դարերի խորքից բերում է մեզ Սասունի հսկաների հազարամյա կերպարանքները: Այդ կերպարանքները սիրով պահպանվում են ժողովրդի հիշողության մեջ և այսօրվա ժողովրդական երգիչներին սովորեցնում են երգել ու փառաբանել այն հսկաներին, որոնց անունները հաղթականորեն հնչում են մեր ողջ երկրում»:

„Известия", 10 մայիսի, 1941:

ՍՍՌՄ Սովետական Գրողների միությունում կազմակերպվում է հայ դրականության տասնօրյակի բացման հանդիսավոր երեկոն: Բացման խոսք է ասում Վ. Վիշնևսկին:

Հայ դրականության մասին զեկուցում է Վ. Կիրպոտինը:

Ելույթներ են ունենում՝ Ավ. Իսահակյանը, Ն. Զարյանը:

Ս. Շերվինսկին, Վ. Դերժավինը, Լիպսկերովը, Վ. Զվյագինցևան, Գորոդեցկին, Ալ. Բեզիմենսկին կարդում են հայ գրողների ստեղծագործություններից կատարած իրենց թարգմանությունները:

Մայիսի 11-ին

«Լիտերատուրնայա գազետա»-ն առաջնորդող է նվիրում տասնօրյակին:

«Լիտերատուրնայա գազետա»-յի առաջնորդողից.

«Արվեստի և գրականության տասնօրյակները ժողովուրդների կուլտուրական շփման դուռ սովետական ձև են: Դրանք ցույց են տալիս սովետական պետության առաջնակարգ սկզբունքը՝ ժողո-

վորդների բարեկամության. նրանք ստեղծում են եղբայրական կուլտուրաների փոխադարձ հարստացման այն ստեղծագործական մթնոլորտը, որն առատ պտուղներ է տալիս բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային արվեստի զարգացման մեջ:

Մայիսի 10-ից տեղի ունեցող Հայ դրականության տասնօրյակը, ճիշտ այնպես, ինչպես անցած տարի տեղի ունեցած Ադրբեջանի դրականության տասնօրյակը, կուլտուրական խոշոր իրադարձություն է մեր հայրենիքի կյանքում»:...

«... Հայ դրականության հիմնական թեման իր զարգացման ողջ ընթացքում եղել է ազգային և սոցիալական լծից ժողովրդի ազատագրման թեման»:...

«... Ռուս մեծ ժողովրդի օգնությամբ ցարիզմից և կոնտրռևոլյուցիոն դաշնակների իշխանությունից ազատագրված ու վերածնված հայ ժողովուրդը այժմ ապրում է իր ստեղծագործական ուժերի ծաղկումը: Միանալով ՍՍՌՄ ժողովուրդների միասնական ընտանիքին՝ նա կառուցում է իր՝ ձևով ազգային բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան: Հասա՛վ սոցիալիստական վերածնության դարաշրջանը:

Ազատ ժողովուրդը կոմունիզմ է կառուցում ազատագրված հայ երկրում: Եվ այս մեծ ժամանակը, որի մասին այնքան լրջորեն կերպով երազել են հայ կուլտուրայի լավագույն մարդիկ՝ գալիս են իրենց աքանչելի բանաստեղծություններին մեջ Սովետական Հայաստանի պոետները: Դրանք հաղթանակի և երջանկության երգեր և բանաստեղծություններ են: Դա ստեղծման ու լավատեսության պոեզիա է»:

„Лит. газета", 11 մայիսի 1941:

Տասնօրյակի եզրափակիչ երեկոն տեղի է ունենում Հայկական ՍՍՌ Կուլտուրայի Տանը:

Բացման խոսք է ասում Ա. Լապտինը:

Ջեկուցում է Ս. Հարությունյանը:

Իրենց ստեղծագործություններով հանդես են գալիս՝ Ավ. Իսահակյանը, Ն. Զարյանը, Գ. Սարյանը, Մ. Մանվելյանը, Գ. Բոյաջյանը, Հռ. Պողոսյանը:

Հայ դրողների կատարած իրենց թարգմանություններով հանդես են գալիս՝ Վ. Թերժավինը, Վ. Ջվանգինցևան, Ս. Շերվինսկին:

Մայիսի 12-ին

Տասնօրյակի երրորդ երեկոն տեղի է ունենում Վ. Ի. Լենինի անվան Համամիութենական գրադարանում։

Ջեկուցում է Ս. Հարությունյանը։

Ողջույնի խոսք է ասում Արազին։

Իրենց ստեղծագործություններով հանդես են գալիս՝ Ս. Տերոնցին, Աղամալին։

Մայիսի 13-ին

«Իզվեստիա»-յի խմբագրատանը տեղի է ունենում հայ գրականության տասնօրյակի մասնակիցների և թարգմանիչների, հրատարակչությունների ներկայացուցիչների, գիտական աշխատողների, քննադատների և գրականագետների հանդիպում։

Քննարկվում է հայ գրականության մասսայականացման խնդիրը։

Մոքերի փոխանակմանը մասնակցում են՝ Ավ. Իսահակյանը, Հ. Օրբելին, Գ. Դեմիրճյանը, Արազին, Ստ. Զորյանը, Ն. Զարյանը, Գ. Սարյանը, Հ. Սիրասը, Ս. Շերենցին, Վ. Թերյանը, Հ. Խաչատրյանը, Մ. Մանվելյանը, Վ. Զվյագինցևան, Հ. Գրիգորյանը։

Հայկական գրականության տասնօրյակի չորրորդ երեկոն տեղի է ունենում Միտիշչիի վագոնաշինական գործարանում։

Ճառով հանդես է գալիս Ա. Ֆադեևը։

Ջեկուցում է Ս. Հարությունյանը։

Իրենց բանաստեղծություններով հանդես են գալիս՝ Ն. Զարյանը, Հռ. Պողոսյանը, Գ. Բորյանը, Սարմենը, Ղ. Կամունին։

Մայիսի 14-ին

Տասնօրյակի հինգերորդ երեկոն տեղի է ունենում Մոսկվինկայի ուսանողական քաղաքի ակումբում։

Ջեկուցում է Խ. Սարգսյանը։

Իրենց բանաստեղծություններով հանդես են գալիս՝ Ն. Զարյանը, Գ. Սարյանը, Գ. Բորյանը, Ա. Գրաշին, Գ. Աբովը։

Մայիսի 15-ին

Ֆրունզեի անվան գործարանի ակումբում և Գորբունովի ան-

688—34

վան պալատում կազմակերպվում է տասնօրյակի մասնակիցների հանդիպումը բանվորների հետ։

Մայիսի 16-ին

Չայկովսկու անվան համերգային դահլիճում կազմակերպվում է հայ գրականության տասնօրյակի համաքաղաքային երեկոն։

Բացման խոսք է ասում Ա. Ֆադեևը։

Ջեկուցում է Հ. Օրբելին։

Մայիսի 17-ին

Կարմիր Բանակի Ֆրունզեի անվան կենտրոնական տունը կազմակերպվում է տասնօրյակի մասնակիցների հանդիպումը Մոսկվայի կայազորի հրամանատարների և քաղաշխատողների հետ։

Բացման խոսք է ասում Լեբեդև-Կումաչը։

Ջեկուցում է Ս. Հարությունյանը։

Իրենց բանաստեղծություններով հանդես են գալիս՝ Գ. Սահյանը, Ա. Գրաշին, Գ. Բորյանը։

Գիտությունների Ակադեմիայի Գիտնականների Տանը կազմակերպվում է գրական երեկո։

Բացման խոսք է ասում Աննա Կարապետյան։

Ջեկուցում է Հ. Մկրտչյանը։

Իրենց բանաստեղծություններով հանդես են գալիս՝ Ավ. Իսահակյանը, Ն. Զարյանը, Աղավնին, Ս. Շերվինսկին, Լիպակերովը։

Թատերական ընկերության դահլիճում տեղի է ունենում հայ գրամատուրգիային նվիրված ժողով։

Ջեկուցում է Գ. Աբովը։

Մտքերի փոխանակությանը մասնակցում են պրոֆ. Գրիգորևը, Դ. Դեմիրճյանը և ուրիշները։

Մայիսի 18-ին

Վ. Ի. Լենինի անվան Ռազմա-քաղաքական Ակադեմիայում կազմակերպվում է հանդիսավոր երեկո։

Բացման խոսք է ասում Ալ. Բեզիմենսկին։

Ջեկուցում է Հ. Գրիգորյանը։

Իրենց բանաստեղծություններով հանդես են գալիս՝ Գ. Սա-

մյանը, Ն. Զարյանը, Աղավնին, Գ. Բորյանը, Ա. Գրաշին, Հր. Քոչարյանը, Զվյագինցևան, Սպենդիարովան, Գատովը, Դլիգաչը, Բեզիմենսկին։

Մայիսի 19-ին

Գորկու անվան Համաշխարհային Գրականության Ինստիտուտում տեղի են ունենում հայ գրականությանը նվիրված գիտական նիստեր։

Նախագահում է Սերեբրյանսկին։

Զեկուցում են.

1. Էդ. Թոփչյան՝ «Սովետահայ պոեզիայի մասին»։

2. Հ. Մկրտչյան՝ «Սովետահայ արձակի մասին»։

Մտքերի փոխանակությանը մասնակցում են՝ Կ. Զելինսկին, Սիմոնովսկին, Վարդազարյանը, Ղազանչյանը, Սերեբրյանսկին։

ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայում տեղի է ունենում Գորկու անվան Գրականության Ինստիտուտի և Սովետական Գրողների Միության միացյալ գիտական նիստը։

Ներածական խոսք է ասում ակադ. Ա. Կ. Ջիվիլեգովը։

Զեկուցում են՝ Ի. Օրբելին՝ «XII և XIII դարերի վերածնունդի գեղարվեստական գրական ազդեցությունները», պրոֆ. Շ. Նուցուբիձեն՝ «Հայաստանը և արևելյան վերածնունդը»։

Մայիսի 19-ին

Մոսկվայի գրողների ակումբում կազմակերպվում է Ավ. Իսահակյանի ստեղծագործություններին նվիրված երեկո։

Բացման խոսք է ասում Ա. Ֆադեևը։

Ավ. Իսահակյանի ստեղծագործությունների մասին զեկուցում է Կ. Զելինսկին։

Ողջույնի խոսք են ասում՝ Հ. Կուսիկյանը, Վ. Բրյուսովան, Ն. Զարյանը։

Իր բանաստեղծություններով հանդես է գալիս Ավ. Իսահակյանը։

Իրենց թարգմանություններով հանդես են գալիս՝ Արսենևան, Զվյագինցևան, Ս. Մառ, Ս. Շերվինսկին, Ռումերը, Սպենդիարովան։

Մայիսի 20-ին

Միության Տան Սյունազարդ դահլիճում տեղի է ունենում հայ գրականության տասնօրյակի եզրափակիչ երեկոն։

Բացման խոսք է ասում Ալ. Տոլստոյը։

Զեկուցում է ակադ. Հ. Օրբելին։

Հանդես են գալիս՝ Ն. Զարյանը, Հռ. Պողոսյանը, Գ. Սարյանը, Գ. Բորյանը և թարգմանիչներ՝ Վ. Զվյագինցևան, Ա. Բեզիմենսկին, Դ. Դերժավինը։

Մայիսի 22-ին

Տասնօրյակի մասնակիցները «Պրավդա»-յի խմբագրատանը զրույց են ունենում «Պրավդա»-յի աշխատակիցների հետ։

Բացման խոսք է ասում Եմ. Յարոսլավսկին։

Մտքերի փոխանակությանը մասնակցում են՝ Ն. Զարյանը, Ա. Հարությունյանը, Գ. Բորյանը, Հմ. Սիրասը, Դ. Դեմիրճյանը, Հ. Գրիգորյանը, ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Ս. Կարապետյանը։

Մայիս

Գրողների Տանը կազմակերպվում է դիսպուտ Ն. Զարյանի «Դյուցազնագիրք» գրքի շուրջը։

Հունիսի 3-ին

Մոսկվայում սկսում է իր գաստրոլները Սունդուկյանի անվան Պետթատրոնը։

Հունիսի 13-ին

Հայպետէստրադայի ամառային թատրոնում կազմակերպվում է հանդիսավոր երեկո՝ նվիրված հայ գրականության տասնօրյակին։

Զեկուցում է Հմ. Սիրասը։

Իրենց ստեղծագործություններով հանդես են գալիս՝ Գ. Սարյանը, Գ. Բորյանը, Հ. Շիրազը, Ա. Վշտունին, Սարմենը, Աղավնին, Վեսպերը, Հռ. Պողոսյանը, Ս. Վահունին։

Հունիսի 22-ին

Ֆաշիստական Գերմանիայի ուխտադրուժ հարձակումը Սովետական Միության վրա։ Սովետական ժողովրդի Հայրենական Մեծ Պատերազմի սկիզբը։

Ռադիո ելույթ է ունենում ընկեր Վ. Մ. Մոլոտովը։

Վ. Մ. Մոլոտովի ռադիո ելույթից.

«Այսօր, առավոտյան ժամը 4-ին, առանց Սովետական Միությանը որևէ պրետենզիա ներկայացնելու, առանց պատերազմ հայտարարելու, գերմանական զորքերը հարձակվեցին մեր երկրի վրա, զրոհեցին մեր սահմանները շատ տեղերում և իրենց ինքնաթիռներից ռմբակոծման ենթարկեցին մեր քաղաքները՝ Ժիտոմիրը, Կիևը, Սևաստոպոլը, Կաունասը և մի քանի այլ քաղաքներ, ըստ որում սպանվել և վիրավորվել է ավելի քան 200 մարդ։ Թշնամու ինքնաթիռների հարձակումներ և հրետանային ռմբակոծություն կատարվեցին նաև ռումինական ու ֆինլանդական տերիտորիաներից։

Այս լսված հարձակումը մեր երկրի վրա, քաղաքակիրթ ժողովուրդների պատմության մեջ անօրինակ մի ուխտադրժություն է։ Մեր երկրի վրա հարձակում է կատարվել, չնայած այն բանին, որ ՍՍՌՄ-ի ու Գերմանիայի միջև կնքված է մինչև վրա չհարձակվելու պայմանագիր և Սովետական Կառավարությունն ամենայն բարեխղճությամբ կատարում էր այդ պայմանագրի բոլոր պայմանները։ Մեր երկրի վրա հարձակում է կատարվել չնայած այն բանին, որ այդ պայմանագրի գործողության ամբողջ ժամանակաշրջանում գերմանական կառավարությունը ոչ մի անգամ չէր կարող ՍՍՌՄ-ին ներկայացնել որևէ պրետենզիա՝ պայմանագրի կատարման վերաբերյալ։ Սովետական Միության վրա կատարված այս ավազակային հարձակման ողջ պատասխանատվությունն ամբողջապես ու լիովին ընկնում է գերմանական ֆաշիստական կառավարության վրա»։

«Սովետական Հայաստան» № 147, 1941։

Հունիսի 23-ին

«Սովետական Հայաստան» թերթում տպագրվում է Հովհ. Շիրազի «Նզովք» բանաստեղծությունը։

Հունիսի 24-ին

«Սովետական Հայաստան» թերթում տպագրվում է Աբաղու «Գրիչը կդարձնենք սվին» հոդվածը։

Հունիսի 24-ին

Գրողների Տանը տեղի է ունենում միտինգ՝ նվիրված Սովետական Հայրենիքի պաշտպանությանը։

Միտինգն ընդունում է բանաձև։

Հունիսի 25-ին

«Սովետական Հայաստան» թերթում տպագրվում է Գ. Սարյանի «Ծառք՝ բարի երթի» բանաստեղծությանը։

Հունիսի 30-ին

Ստեղծվում է ՍՍՌՄ Պաշտպանության Պետական Կոմիտեն Ի. Վ. Ստալինի նախագահությամբ։

Հուլիսի 3-ին

Պաշտպանության Պետական Կոմիտեի Նախագահ ընկեր Ի. Վ. Ստալինի ճառը ռադիոյով։

Ի. Վ. Ստալինի ճառից.

«Ընկերնե՛ր։ Քաղաքացինե՛ր։ Եղբայրնե՛ր և քույրե՛ր։

Մեր բանակի և նավատորմի մարտիկներ

Ձեզ եմ դիմում ես, իմ բարեկամնե՛ր։

Հիտլերյան Գերմանիայի ուխտադրուժ ռազմական հարձակումը մեր Հայրենիքի վրա, որ սկսվեց Հունիսի 22-ին, շարունակվում է։ Չնայած Կարմիր Բանակի հերոսական դիմադրությանը, չնայած որ թշնամու լավագույն դիվիզիաներն ու նրա ավիացիայի լավագույն զորամասերն արդեն ջախջախված են և իրենց գերեզմանն են գտել ճակատամարտի դաշտերում, թշնամին շարունակում է առաջ խոյկվել, ռազմաճակատ նետելով նոր ուժեր։ Հիտլերյան զորքերին հաջողվեց գավթել Լիտվան, Լատվիայի գրեթե մասը, Բելոռուսիայի արևմտյան մասը, Արևմտյան Ուկրաինայի մի մասը։ Ֆաշիստական ավիացիան ընդլայնում է իր ռմբակոծիչների գործողության շրջանները, ռմբակոծության ենթարկելով Մուրմանսկը, Օրշան, Մոգիլյովը, Սմոլենսկը, Կիևը, Օդեսան, Սևաստոպոլը։ Մեր Հայրենիքի վրա կախվել է լուրջ վտանգ»...

«Ի՞նչ է պահանջվում, որպեսզի վերացնենք մեր Հայրենիքի վրա կախված վտանգը, և ի՞նչ միջոցներ է հարկավոր ձեռք առնել թշնամուն ջախջախելու համար։

Ամենից առաջ անհրաժեշտ է, որ մեր մարդիկ, սովետական մարդիկ, հասկանան այն վտանգի ամբողջ խորությունը, որն ըսպասում է մեր երկրին, և հրաժարվեն բարեհոգությունից, անհոգությունից, խաղաղ շինարարության տրամադրություններից, որոնք միանգամայն հասկանալի էին նախապատերազմյան ժամանակաշրջանում, բայց կործանիչ է ներկայումս, երբ պատերազմն արմատապես փոխել է դրությունը։ Թշնամին դաժան է և անողոք։ Նա իրեն նպատակ է դնում զավթել մեր քրտինքով ոռոգված մեր հողերը, զավթել մեր հացը և մեր նավթը, որոնք ձեռք են բերված մեր աշխատանքով։ Նա իրեն նպատակ է դնում կալվածատերերի իշխանության վերականգնումը, ցարիզմի վերականգնումը, ռուսների, ուկրաինացիների, բելոռուսների, լիտվացիների, լատիշների, էստոնացիների, ուզբեկների, թաթարների, մոլդավացիների, վրացիների, Հայերի, ադրբեջանցիների և Սովետական Միության մյուս ազատ ժողովուրդների ազգային կուլտուրայի և ազգային պետականության կործանումը, նրանց գերմանացումը, նրանց գերմանական իշխանների և բարոնների սեփականեր դարձնելը։ Այսպիսով, խոսքը վերաբերում է Սովետական Պետության կյանքին ու մահվանը, ՍՍՌՄ-ի ժողովուրդների կյանքին ու մահվանը, այն բանին, թե Սովետական Միության ժողովուրդներն ազա՞տ պետք է լինեն, թե՞ ընկնեն սարկության մեջ։ Պետք է, որ սովետական մարդիկ հասկանան այդ և դադարեն անհոգ լինելուց, որ նրանք մոբիլիզացնեն իրենց և իրենց ամբողջ աշխատանքը վերակառուցելու նոր, ռազմական ձևով, որը թշնամուն խնայել չգիտե»։

Ի. Ստալին, Սովետական Միության Հայրենական Մեծ Պատերազմի մասին, Հայպետհրատ, 1945, էջ 9, 13—14։

Հուլիսի 3-ին

«Սովետական Հայաստան» ֆիլմում տպագրվում է Ն. Զարյանի «Մահ բորենուն» բանաստեղծությունը։

Հուլիսի 7-ին

Կազմակերպվում է Երևան քաղաքի ինտելիգենցիայի հակաֆաշիստական միտինգ։

Ջեկուցում է ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Ս. Կարապետյանը։

Ելույթներ են ունենում՝ Դ. Դեմիրճյանը, Սիմակը, Ն. Զարյանը

նը, Վ. Վաղարշյանը, Հ. Դանիելյանը, Ա. Ոսկանյանը, Գ. Բորյանը և ուրիշները։

Դ. Դեմիրճյանի խոսքից.

«... Ես ինձ մարտիկ եմ զգում և չեմ պլանա մեր հայրենիքի ազատության համար թափել արյանս վերջին կաթիլը։

Ստալինը դուրս քաշեց սուրը։ Այդ սուրը պատյանի մեջ կդրվի միայն այն ժամանակ, երբ ձեռք կբերվի վերջնական ու լրիվ հաղթանակ դաժան թշնամու նկատմամբ։

Եվ այն ժամանակ, հաղթանակի օրը մենք նորից կհավաքվենք մեր ցնծալի միտինգին։ Սկսք արտացոլենք այդ օրվա գալուստը։

Ես ուզում եմ խոսքս վերջացնել իմ «Երկիր հայրենիք» պիեսի հերոսի խոսքերով. «Թշնամին դալիս է ջնջելու մեզ, բայց պետք է ջնջվի ի՛նքը, թշնամին»։

«Սովետական դրականություն» № 7, 1941, էջ 27։

Նաիրի Զարյանի չափածո խոսքից.

Ես տեսնում եմ պարզ աշխարհատարած այս թոհուբոհում
Հիտլերի դուռը երկաթե հորդան պիտի ջախջախվի։
Ճիվաղն օրհասի պարանը ձեռքին պատրաստ է պահում—
Նա պիտի կախվի՛։
Ծածկելու համար իր ոճիրների մերկությունը բիրտ՝
Նա չի գտնելու արար-աշխարհում և ոչ մի տերև,
Չի լինի տանջված երկրի երեսին մարդկային մի սիրտ,
Որ նրան ներեր։
. . . . . .
Եվ նա կթողնի գալիք դարերին մի դարշ հիշատակ,
Թե մարդ եղել է այսքան մարդակեր և այսքան տխեղծ։
Առանց նողկանքի չի հիշի նրան այս արևի տակ
Ոչ մի բանաստեղծ։

Միտինգի բանաձևից.

«Երևան քաղաքի ինտելիգենցիան հավաքվելով համաքաղաքային միտինգի՝ մեր հայրենիքի վրա կախված այս լուրջ վտանգի պահին՝ սովետական ժողովրդի և ամբողջ աշխարհի առաջավոր մարդկության հետ միասին անարգանքի այունին է դատում Հիտ-

ների ֆաշիստական արյունակզակ ոհմակի ոտնատրոփ հարձակումը մեր երջանիկ սոցիալիստական հայրենիքի վրա»։...

«Երևան քաղաքի ողջ ինտելիգենցիան՝ գիտնականներն ու ինժեներները, արվեստի գործիչներն ու գրողները, բժիշկներն ու ուսուցիչները, արձագանքելով սիրելի առաջնորդի կոչին՝ սովետական բոլոր ժողովուրդների հետ միասին ավելի սերտ համախմբված Լենին-Ստալինի պարտիայի շուրջը, մեր ստալինյան կառավարության շուրջը, կուռ շարքերով պատրաստ կանգնած է մեր պանծալի Կարմիր Բանակին և Կարմիր Նավատորմին անձնվիրաբար աջակցելու համար, թշնամուն ջախջախելու համար, հաղթանակի համար։...

«Ընե՛նք հայրենական պատերազմի, կատարե՛նք հայրենիքի հանդեպ մեր սրբազան պարտականությունը։

Մեր գործն արդար է։ Թշնամին կջախջախվի։

Հանուն հայրենիքի, հանուն Ստալինի, հառաջ դեպի հաղթանակ»։

«Սովետական գրականություն» № 7, 1941, էջ 33—34.

Հուլիսի 18-ին

«Սովետական Հայաստան» թերթում տպագրվում է Հովհ. Շիրազի «Կաղ զինվորը» բանաստեղծությունը։

Հուլիսի 19-ին

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագիրը ՍՍՌՄ Ժողկոմսովետի նախագահ Ի. Վ. Ստալինին Պաշտպանության Ժողովրդական Կոմիսար նշանակելու մասին։

Հուլիսի 23-ին

«Սովետական Հայաստան» թերթում տպագրվում է Ն. Զարյանի «Միցկևիչ և Հիտլեր» բանաստեղծությունը։

Հուլիսի 25-ին

«Սովետական Հայաստան» թերթում տպագրվում է Հր. Քոչարի «Հարազատների նամակները» ակնարկը։

Հուլիսի 26-ին

«Սովետական Հայաստան» թերթում տպագրվում է Ն. Զարյանի «Գերմանիա» բանաստեղծությունը։

Հոկտեմբերի 30-ին

«Սովետական Հայաստան» թերթում տպագրվում է Դ. Դեմյանի «Հայրենիքի հետ» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 8-ին

«Սովետական Հայաստան» թերթում տպագրվում է Ավ. Իսահակյանի «Ճարշիզմը պիտի խորտակվի» հոդվածը:

Նոյեմբերի 10-ին

Համամոլդովական առաջին միտինգը Մոսկվայում:

Նոյեմբերի 25-ին

«Պրավդա»-յում լույս է տեսնում «Հայ ժողովուրդը Սովետական Միության ազատագրական պատերազմի մարտական մասնակիցն է» առաջնորդողը:

Առաջնորդողից.

«Հայ ժողովուրդը հաստատապես իր մարտական տեղն է գրավել իրենց անկախության և ազատության համար Սովետական Միության բոլոր ժողովուրդների մղած ընդհանուր պայքարում: Անվեհեր մարտիկներ օդաչու Գազազյանի, մայոր Ասրեսյանի և հայ ժողովրդի ուրիշ շատ զավակների պանծալի անունները, մարտիկներ, որոնք հռչակվեցին Հայրենական Պատերազմի ճակատներում իրենց ցուցաբերած անձնուրաց անվեհերության և արիության համբ,— հայտնի են ամբողջ Սովետական Միությանը: Հայ ժողովուրդը, ինչպես և Սովետական Միության մյուս բոլոր ազատ ու իրավահավասար ժողովուրդները, առավել խորապես զգացին մեր երկրի վրա կախված մահացու վտանգն այն պատճառով, որ նա իր քաղաքակրթության պատմության մեջ քանիցս ենթարկվել է օտար բռնակալների հարձակումներին: Նա գիտե, թե ինչ բան են կոտորածը, ավերը, սովը, բռնությունները: Հայ ժողովուրդը չի մոռացել հայերի ֆիզիկական ոչնչացումը, որ կազմակերպել էր արյունռուշտ Հիտլերի նախորդ Վիլհելմ կայսրը՝ առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին:

Այդ պատճառով, երբ արյունալի հրդեհի պես բռնկվեց պատերազմը, որ սկսել է մարդակեր Հիտլերը Սովետական Միության դեմ, ամբողջ հայ ժողովուրդը մի մարդու պես ոտքի կանգնեց հայրենիքը պաշտպանելու: Սովետական Միության վրա ավազա-

կային, ուխտադրուժ հարճակում գործելու լուրը ստիպից զգայուն կերպով արթուն կենալ հայ ժողովրդի նաև այն զավակներին, որոնք ապրում են ՍՍՌՄ-ի սահմաններից դուրս։ Նրանց ամբողջ սերը, նրանց ամբողջ համակրանքը Սովետական Միության կողմն է։

ԱՄՆ-ում ապրող հայերի մասսայական միտինգը սովետական դեսպանությանն ուղարկել է հետևյալ հեռագիրը. «Մենք, ամերիկահայերս, որոնց հայրենի երկիրը պաշտպանում է Կարմիր Բանակը, զգում ենք, որ պարտավոր ենք օգնելու Սովետական Միությանը նրա մղած պայքարում, մինչև որ ֆաշիզմը ոչնչանա ամբողջ աշխարհում»։

«Սովետ. Հայաստան», 27 օգոստոսի, 1941։

Օգոստոս

«Սովետական գրականություն» հանդեսի № 8—9 տպագրվում է Ս.վ. Խահակյանի «Ռազմակոչ» բանաստեղծությունը։

Հոկտեմբերի 15-ին

Հայֆիլհարմոնիայում տեղի է ունենում Երևանի գիտության աշխատողների միտինգ։

Միտինգի բանաձևից.

«Մենք, Երևան քաղաքի գիտական հաստատությունների և ԲՈՒՀ-երի աշխատողներս, հակաֆաշիստական միտինգի հավաքվելով, մեր ձայնը միացնում ենք ամբողջ աշխարհին ուղղված սովետական գիտության լավագույն ներկայացուցիչների դիմումին և Հայաստանի բոլոր գիտական աշխատողներին կոչ ենք անուժ լարել բոլոր ուժերը և իրենց բոլոր գիտելիքները նվիրել մեր երկրին, նենգորեն ներխուժած թշնամուն ջախջախելու մեծ գործին։ Ահեղ օրեր է ապրում մեր հայրենիքը։ Թշնամին դաժան է և անողոք։ Նա ուզում է ավերել մեր քաղաքները և գյուղերը, ստրկացնել մեր ազատ ժողովրդին։ Մեզ վրա են արշավում ժամանակակից ամենամոլի ուժերը, քաղաքականության և կուլտուրայի ամենամոլի թշնամիները»։

Նոյեմբերի 6-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի զեկուցումը աշխատավորների դեպուտատների Մոսկվայի Սովետի հանդիսավոր նիստում։

Ի. Վ. Ստալինի զեկուցումից.

«Եվ խղճից ու պատվից զուրկ այդ մարդիկ, անասնակա՛ն բարոյականության տեր այդ մարդիկ լկտիություն ունեն ռուս մեծ ազգի, Պլեխանովի և Լենինի, Բելինսկու և Չերնիշևսկու, Պուշկինի և Տոլստոյի, Գլինկայի և Չայկովսկու, Գորկու և Չեխովի, Սեչենովի և Պավլովի, Ռեպինի և Սուրիկովի, Սուվորովի և Կուտուզովի ազգի բնաջնջման կոչ անելու...

Գերմանական զավթիչներն ուզում են ՍՍՌՄ-ի ժողովուրդների դեմ բնաջնջող պատերազմ ունենալ։ Ի՛նչ կա որ, եթե գերմանացիներն ուզում են ունենալ բնաջնջող պատերազմ, նրանք այդ կստանան։ (Բուռն, երկարատև ծափահարություններ)»:...

«Լենինը տարբերում էր երկու տեսակ պատերազմ՝ զավթողական ու հետևապես՝ անարդարացի պատերազմ և ազատագրական, արդարացի պատերազմ։

Գերմանացիներն այժմ զավթողական, անարդարացի պատերազմ են մղում, որի նպատակն է ուրիշի տերիտորիայի զավթումը և ուրիշ ժողովուրդների նվաճումը։ Ուստի բոլոր ազնիվ մարդիկ պետք է ոտքի ելնեն ընդդեմ գերմանական զավթիչների, իբրև թշնամիների։

Ի տարբերություն հիտլերյան Գերմանիայից Սովետական Միությունը և նրա դաշնակիցները մղում են ազատագրական, արդարացի պատերազմ, որի նպատակն է Եվրոպայի և ՍՍՌՄ-ի ստրկացված ժողովուրդներին ազատագրել հիտլերյան բռնակալությունից։ Ուստի բոլոր ազնիվ մարդիկ պետք է աջակցեն ՍՍՌՄ-ի, Մեծ Բրիտանիայի և մյուս դաշնակիցների բանակներին, իբրև ազատարար բանակների։

Մենք չունենք և չենք կարող ունենալ պատերազմի այնպիսի նպատակներ, ինչպես ուրիշի տերիտորիաների գրավումը, ուրիշ ժողովուրդների նվաճումը,— միևնույն է՝ խոսքը վերաբերում է Եվրոպայի ժողովուրդներին ու տերիտորիաներին, թե Ասիայի, այդ թվում նաև Իրանի, ժողովուրդներին ու տերիտորիաներին։ Մեր առաջնահերթ նպատակն է՝ մեր տերիտորիաներն ու մեր ժողովուրդներին ազատագրել գերմանա-ֆաշիստական լծից։

Մենք չունենք և չենք կարող ունենալ պատերազմի այնպիսի նպատակներ, ինչպես մեր կամքի ու մեր ռեժիմի փաթաթումը Եվրոպայի սլավոնական և այլ ստրկացված ժողովուրդների վրին,

որոնք օգնություն են ստանում մեզանից։ Մեր նպատակն է՝ օգնել այդ ժողովուրդներին հիտլերյան բռնակալության դեմ մղվող նրանց ազատագրական պայքարում և ապա նրանց հնարավորություն տալ միանգամայն ազատորեն կարգավորելու իրենց հողի վրա այնպես, ինչպես իրենք են ուզում։ Ո՛չ մի միջամտություն այլ ժողովուրդների ներքին գործերին։

Բայց այդ նպատակները իրականացնելու համար հարկավոր է խորտակել գերմանական զավթիչների ռազմական ուժը, հարկավոր է մինչև վերջը բնաջնջել բոլոր գերմանական օկուպանտներին, որոնք ներխուժել են մեր Հայրենիքը՝ նրան ստրկացնելու համար (Բուռն, երկարատև ծափահարություններ)»։...

«Այս է այժմ խնդիրը։

Մենք կարո՞ղ ենք և մենք պե՞տք է կատարենք այս խնդիրը»։

Ի. Ստալին, Սովետական Միության Հայրենական Մեծ Պատերազմի մասին, Հայպետհրատ, 1945, էջ 32—33, 37—38։

Դեկտեմբերի 1-ին

ՀԿ(բ)Պ Կենտկոմի Պրոպագանդայի և Ագիտացիայի բաժինը հրավիրում է մամուլի և գրականության աշխատողների խորհրդակցություն, նվիրված մամուլի և գրականության հարցերին։

Բացման խոսք է ասում ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Ս. Կարապետյանը։

Հաղորդում է կատարում ընկ. Զ. Գրիգորյանը։

Ելույթներ են ունենում՝ Ն. Զարյանը, Գ. Աբովը, Հմ. Սիրասը, Ա. Հարենցը, Հ. Մամիկոնյանը, Ռ. Զարյանը, Հ. Ասլանյանը և ուրիշները։

Վերջում հանդես է գալիս ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Ս. Կարապետյանը։

Դեկտեմբերի 9-ին

Գրական Թանգարանում բացվում է «Հայրենիքը հայ գրականության մեջ» ցուցահանդեսը։

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Գափաճո

1. Ն. Զարյան.— Մարտակոչ, Պետհրատ, Երևան։
2. Ն. Զարյան.— Արշակ և Շապուհ, Պետհրատ, Երևան։
3. Գ. Սարյան.— Հայրենիքի համար, Պետհրատ, Երևան։
4. Խնկո-Ապեր.— Ընտիր երկեր, Պետհրատ, Երևան։
5. Ա. Վշտունի.— Ընտիր երկեր, Պետհրատ, Երևան։
6. Ա. Վշտունի.— Վիլլի Վոլֆ, Հայպետհրատ, Երևան։
7. Ս. Տարոնցի.— Ռազմի շեփոր, Հայպետհրատ, Երևան։
8. Ս. Տարոնցի.— Երջանկություն, Պետհրատ, Երևան։
9. Գ. Բորյան.— Մարտիկի երդումը, Պետհրատ, Երևան։
10. Թ. Հուրյան.— Պոեմներ, Ազերնեշեր, Բաքու։
11. Վ. Գրիգորյան.— Մարտական հանդիպում, Պետհրատ, Երևան։
12. Բ. Կարապետյան.— Լիրիկա, Հայպետհրատ, Երևան։

Սրձակ

1. Ստ. Զորյան.— Հեքիաթներ, Պետհրատ, Երևան։
2. Հր. Քոչար.— Ժամանակներ, Պետհրատ, Երևան։
3. Սրաքս.— Լիպո, Պետհրատ, Երևան։
4. Նոր-Այր.— Փրկության վարոցը, Պետհրատ, Երևան։

Ժողովածուներ

1. «Քրդական ժողովրդական հեքիաթներ», Պետհրատ, Երևան։
2. «Ալմանախ» (Վրաստանի հայ գրողների), Վր. Պետհրատ, Թիֆլիս։

Գրականության պատմություն, տեսություն և ճնճաղատություն

1. Ա. Տերտերյան.— Աբովյանի ստեղծագործությունը, Պետհամալսարանի հրատ., Երևան։
2. Գ. Լևոնյան.— Թատրոնը հին Հայաստանում, Պետհրատ, Երևան։
3. Ռ. Հովհաննիսյան.— Լերմոնտովի կյանքը և գործունեությունը, Պետհրատ, Երևան։
4. Ա. Զանալանյան.— Աբովյանը և ժողովրդական քանահյուսությունը, Արմֆանի հրատ., Երևան։

5. Հ. Մուրադյան.— Դաղարոս Աղայան, Հայպետհրատ, Երեվան:
6. Հ. Մուրադյան.— Ժամանակակիցները Խ. Աբովյանի մասին, Արմֆանի հրատ., Երևան:
7. Գ. Հովնան.— Մ. Գորկին և հայկական կուլտուրան, Պետհրատ, Երևան:
8. Հ. Ջնդի.— Կուռ ու քալակե, Արմֆանի հրատ., Երևան:
9. Մ. Բազյան.— Երեք ուրվագիծ, Հայպետհրատ, Երևան:
10. Է. Պետրոսյան.— Բայրոնի կյանքը և ստեղծագործությունը, Պետհամալսարանի հրատ., Երևան:

Թարգմանություններ

1. Նիզամի.— Ընտիր գազելներ, Պետհրատ, Երևան:
2. Մ. Լերմոնտով.— Ընտիր երկեր, Հայպետհրատ, Երևան:
3. Մ. Գորկի.— Կլիմ Սամգինի կյանքը, 2-րդ մաս, Պետհրատ, Երևան:
4. Վ. Բրյուսով.— Փորձություն, Հայպետհրատ, Երևան:
5. Լ. Ֆեյխտվանգեր.— Օպպենհայմների ընտանիքը, Հայպետհրատ, Երևան:

1942

Հունվարի 28-ին

Գրողների Տանը Հ. Դանալանյանը զեկուցում է «Հայրենասիրության դերը որպես հայ կլասիկ գրականության հիմնական մոտիվ» նյութի մասին:

Փետրվարի 3-ին

Գրողների Տանը կազմակերպվում է հակաֆաշիստական գրական երեկո:

Փետրվարի 23-ին

Պաշտպանության ժողովրդական Կոմիսար ընկեր Ի. Վ. Ստալինի հրամանը:

Ի. Վ. Ստալինի հրամանից.

«Ընկեր կարմիրբանակայիններ՝ և կարմիրնավատորմայիններ, հրամանատարներ և քաղաշխատողներ, պարտիզաններ և պարտիզանուհիներ

Կարմիր Բանակի 24-րդ տարեդարձը մեր երկրի ժողովուրդները դիմավորում են մեր Հայրենիքի կյանքի և ազատության վրա լկտիաբար և առար կերպով ձեռք բարձրացրած ֆաշիստական Գերմանիայի դեմ մղվող Հայրենական Պատերազմի դաժան օրերին։ Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսից մինչև Սև ծովը ձգված հրակայական ռազմաճակատի երկարությամբ Կարմիր Բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի մարտիկները կատաղի մարտեր են մղում, որպեսզի մեր երկրից վռնդեն գերմանա-ֆաշիստական գավթիչներին և պաշտպանեն մեր Հայրենիքի պատիվն ու անկախությունը։

Առաջին անգամը չէ, որ Կարմիր Բանակին վիճակվում է մեր Հայրենիքը պաշտպանել թշնամիների հարձակումից։ Կարմիր Բանակը ստեղծվեց 24 տարի առաջ՝ պայքարելու համար օտարերկրյա ինտերվենտ-գավթիչների զորքերի դեմ, որոնք ձգտում էին մասնատել մեր երկիրը և ոչնչացնել նրա անկախությունը։ Կարմիր Բանակի երիտասարդ ջոկատները, առաջին անգամ մտնելով պատերազմի մեջ, 1918 թվականի փետրվարի 23-ին Պսկովի և Նարվայի մոտ կվախվին ջախջախեցին գերմանական գավթիչներին։ Հենց դրա համար էլ 1918 թվականի փետրվարի 23-ի օրը հայտարարվեց Կարմիր Բանակի ծննդյան օր։ Այդ ժամանակից ի վեր Կարմիր Բանակն աճել ու ամրապնդվել է օտարերկրյա ինտերվենտ-գավթիչների դեմ մղվող պայքարում։ Նա պաշտպանեց մեր Հայրենիքը 1918 թվականին գերմանական գավթիչների դեմ մղված մարտերում, նրանց վռնդելով Ուկրաինայի, Բելոռուսիայի սահմաններից։ Նա պաշտպանեց մեր Հայրենիքը 1919—1921 թվականներին Անտանտայի օտարերկրյա զորքերի դեմ մղված մարտերում, նրանց վռնդելով մեր երկրի սահմաններից։

Օտարերկրյա ինտերվենտ-գավթիչների ջախջախումը քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում՝ Սովետական Միության ժողովուրդների համար ապահովեց երկարատև խաղաղության և խաղաղ շինարարության հնարավորություն։ Խաղաղ շինարարության այդ երկու տասնամյակների ընթացքում մեր երկրում

առաջ եկավ սոցիալիստական արդյունաբերություն և կոլխոզային գյուղատնտեսություն, ծաղկեցին գիտությունը և կուլտուրան, ամրապնդվեց մեր երկրի ժողովուրդների բարեկամությունը։ Բայց սովետական ժողովուրդը երբեք չէր մոռանում մեր հայրենիքի վրա թշնամիների նոր հարձակման հնարավորությունը։ Ուստի՝ արդյունաբերության և գյուղատնտեսության, գիտության և կուլտուրայի վերելքի հետ միաժամանակ աճում էր նաև Սովետական Միության ռազմական հզորությունը։ Այդ հզորությունն արդեն իրենց մեջքի վրա զգացել են ուրիշի հողերի որոշ սիրահարներ։ Այդ այժմ զգում է գերմանա-ֆաշիստական գովաբանված բանակը»։

Ի. Ստալին, Սովետական Միության Հայրենական Մեծ Պատերազմի մասին, Հայպետհրատ, 1945, էջ 44—45

Մարտի 1-ին

Վախճանվեց Վահան Միրաքյանը։

Ապրիլի 16-ին

Գրողների Տանը կազմակերպվում է Վ. Մայակովսկու հիշատակին նվիրված երեկո։

«Հայրենասիրությունը Մայակովսկու ստեղծագործություններում» նյութի մասին զեկուցում է Հր. Գրիգորյանը։

Մայիսի 1-ին

Պաշտպանության ժողովրդական Կոմիսար ընկեր Ի. Վ. Ստալինին հրամանը։

Ի. Վ. Ստալինի հրամանից.

«Ընկեր կարմիրբանակայիննե՛ր և կարմիրնավատորմայիննե՛ր, հրամանատարնե՛ր և քաղաշխատողնե՛ր, պարտիզաննե՛ր և պարտիզանուհինե՛ր, բանվորնե՛ր և բանվորուհինե՛ր, գյուղացինե՛ր և գեղջկուհինե՛ր, մտավոր աշխատանքի մարդի՛կ, ռազմաճակատի մյուս կողմում՝ գերմանա-ֆաշիստական զորքերի թիկունքում գտնվող եղբայրնե՛ր և քույրե՛ր, որ ժամանակավորապես ընկել եք գերմանական կեղեքիչների լծի տակ։

Սովետական Կառավարության և մեր բոլշևիկյան պարտիայի անունից ողջունում և շնորհավորում եմ ձեզ Մայիսի 1-ի օրվա առթիվ։

688 –35

Ընկերնե՛ր. մեր երկրի ժողովուրդներն այս տարի Մայիսի 1-ի Միջազգային Օրը դիմավորում են գերմանա-ֆաշիստական գավթիչների դեմ մղվող Հայրենական Պատերազմի պայմաններում։ Պատերազմն իր կնիքն է դրել մեր կյանքի բոլոր կողմերի վրա։ Նա կնիք է դրել նաև այս օրվա, Մայիսի 1-ի տոնի վրա։ Մեր երկրի աշխատավորները, հաշվի առնելով պատերազմական իրադրությունը, հրաժարվեցին տոնական հանդստից, որպեսզի այս օրն անցկացնեն մեր հայրենիքի պաշտպանության համար կատարվող լարված աշխատանքի մեջ։ Ապրելով մեր ռազմաճակատի մարտիկների հետ միասնական կյանքով, նրանք Մայիսի 1-ի տոնը դարձրին աշխատանքի և պայքարի օր, որպեսզի ռազմաճակատին ցույց տան առավել մեծ օգնություն և նրան տան ավելի շատ հրացան, գնդացիր, հրանոթ, ականանետ, տանկ, ինքնաթիռ, ռազմամթերք, հաց, միս, ձուկ, բանջարեղեն։

Այդ նշանակում է, որ ռազմաճակատը և թիկունքը մեզ մոտ ներկայացնում են միասնական ու անրաժանելի մարտական ուժեր, որը պատրաստ է հաղթահարելու ամեն տեսակ դժվարության ջնջամոլ դեմ հաղթանակ տանելու համար»։

Ն. Տաալին, Սովետական Միության Հայրենական Մեծ Պատերազմի մասին, Հայպետհրատ, 1945, էջ 53—54։

Մայիսի 5-ին

Արմֆանի դահլիճում բացվում է Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի պետական սեսիան, նվիրված «Պրավդա»-յի 30-ամյակին։

Ներածական խոսք է ասում՝ Հ. Օրբելին։

Զեկուցում են. Մ. Պետրոսյան՝ «Պրավդա»-յի հիսնամյա ուղին», Հ. Գյուլբեկիյան՝ «Պրավդա»-յի պայքարը սոցիալիստական կուլտուրայի և գիտության համար», Ե. Սարդսյան՝ «Գեղարվեստական խոսքը «Պրավդա»-յի էջերում Հայրենական Պատերազմի օրերին», Աս. Ասատրյան՝ «Մինչ-Հոկտեմբերյան «Պրավդա»-ն և դրականությունը»։

Հուլիսի 3-ին

Գրողների Տանը տեղի է ունենում Յանկա Կուպալայի հիշատակին նվիրված երեկո։

Բացման խոսք է ասում՝ Դ. Դեմիրճյանը։

Զեկուցում է՝ Տ. Հախումյանը։

Հիշողություններ է պատմում՝ Ն. Զարյանը։

Հուլիսի 6-ին, 7-ին

Գրողների Տանը տեղի է ունենում Հայաստանի սովետական գրողների խորհրդակցություն։

«Հայաստանի գրողները Հայրենական Պատերազմի մեկ տարում» թեմայով զեկուցում է Գ. Աբովը։

Ելույթներ են ունենում՝ Հ. Դանիելյանը, Խ. Սարգսյանը, Մ. Հարությունյանը, Վ. Թերզիբաշյանը, Մ. Մկրյանը, Ն. Զարյանը, Հ. Շիրազը, Ա. Վշտունին, Ռ. Հովհաննիսյանը։

Վերջում հանդես է գալիս Հկ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Մ. Կարապետյանը։

Օգոստոսի 23-ին

Երեւանում տեղի է ունենում Անդրկովկասի ժողովուրդների հակաֆաշիստական միտինգ։

Միտինգում ելույթներ են ունենում՝ Հ. Օրբելին, Ն. Զարյանը, Հ. Դանիելյանը, Սիմակը։

Հ. Օրբելու ելույթից.

«Երջանիկ աշխատանքի ավելի քան քսան տարվա ընթացքում կուտվել է ամենաքանչելի պողպատի, ամենաամուր, ամենաճկուն, երբեք չխոնացող, արևի նման շողշողուն պողպատի մի ձուլվածք, պողպատ, որից իմաստուն դարբնի փորձված ձեռքը իր մուրճով կարողացել է կռել և մանգաղ՝ խաղաղ աշխատանքի համար և սուր՝ պայքարի ահեղ ժամվա համար։ Այդ սքանչելի, արևի նման շողշողուն պողպատը ժողովուրդների ստալինյան եղբայրությունն է։

Սովետի եղբայրնե՛ր. դարեր ի վեր մեր նախնիները, Կովկասի առանց բացառության բոլոր ժողովուրդների նախնիները, ցանկանալով լինել ամենաամուր, ամեն ինչ տոդորող, հավիտյան անխախտ դաշինք, ցանկանալով իրենց միացնել ամենաարբազան եղբայրության կապերով,— իրենց արյունից մի քանի կաթիլ եղբայրության սրբազան բաժակի մեջ խառնում էին հիշյալ եղբայրության հետ, և այդ կապերը իրոք որ անխզելի էին։

Իսկ որքան ամուր, ընդմիշտ համար որքան սարսափելի պետք է լինեն այն եղբայրության կապերը, որոնք ստեղծվել են մեր պա-

վախճանի թափած պայծառ, մաքուր արյան միախառնումից, այն անհուն տառապանքների մեծ բաժակի մեջ, որ պատճառել են մեր հայրենիքին հիտլերյան հրոսակախմբերը»։

«Սովետական Հայաստան», 24 օգոստոսի, 1942։

Ն. Զարյանի ելույթից.

«Գերմանական բարբարոսների խաժամուժը, սեփական արյան հեղեղները ճողփելով, սողում է դեպի հարավ, դեպի մեր հարուստ ու գեղեցիկ Անդրկովկասը։ Նավթի, նարինջի ու դինու բույրը գեռ հեռվից հարբեցրել է հիտլերյան բղկտված գիշատիչներին։ Նրանք ձգտում են Անդրկովկասն անջատել Սովետական Միության կենսաբոլոքներից, որպեսզի մեզ ոչնչացնեն։ Նրանք ուզում են անջատել մեզ ռուս մեծ ժողովրդից, որի հետ միասին մենք հզոր և անհաղթ ենք, որը սիրում և հարգում է մեր աղգային կուլտուրան, մեր պատմությունը, մի ժողովուրդ, որի օգնությամբ ծաղկել ու հարստացել է Անդրկովկասը, վերածնվել է մեր Հայաստանը՝ աշխարհում մեկ ցիր ու ցան ազատասեր բոլոր հայերի հույսն ու հանդրվանը։ Նրանք ուզում են մեզ զրկել մեր հանդրվանից, զրկել մեզ պատմից և աղատությունից, աչնչացնել մեր ժողովրդին»...

«Անդրկովկասի զավակնե՛ր, մեր հայրենիքին սպառնացող վտանգն անմիջականորեն կախվել է մեր հարազատ Անդրկովկասի դլխին։ Մեր բարձրագահ լեռների վրա կախված ահեղ վտանգի այս օրերին ավելի բարձր ծածանենք Ստալինյան բարեկամության դրոշը, մեր եղբայրության դրոշը։

Կարե՛նք մեր բարեկամության ու սիրո վրա բարձրացող ձեռքը, որպես միասնական համերաշխ ընտանիք նետվենք թշնամու վրա, ինչպես նետվել ու հաղթել ենք Մոսկվայի մոտ։ Հերոսների արյունը վրեժ է պահանջում։ Հաղթանակը մերը կլինի և վա՛յ նրան, ով կասասանվի և կդանդաղեցնի մեր հաղթանակը»։

«Սովետական Հայաստան», 24 օգոստոսի, 1942թ.

Միտինգը դիմում է ընդունում ուղղված Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի ժողովուրդներին։

Դիմումից.

«Հայ եղբայրնե՛ր:

Բազմաչարչար է եղել հայ ժողովրդի ուղին, ծանր են եղել նրան վիճակված փորձությունները:

Միայն Սովետական Իշխանության օրով Հայաստանը ձեռք բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն: Միայն Սովետական Իշխանությունը, միայն նրա Լենինյան-Ստալինյան իմաստուն ազգային քաղաքականությունը հայ ժողովրդի համար բերեցին նրա տնտեսական և կուլտուրական կյանքի հսկայական ծաղկումը:

Այսօր թշնամին իրեն նպատակ է դրել նորից արյամբ ներկել Հայաստանի ծաղկուն դաշտերը, նորից հայ ժողովրդին գցել կարիքի և աղքատության մեջ, նրան զրկել իր հնադարյան կուլտուրան ինքնուրույն կերպով զարգացնելու իրավունքից, կուլտուրա, որը տոգորված է արիությամբ, կամքով, ատելությամբ դեպի ազատության թշնամիները:

Հիտլերականները — 20-րդ դարի այդ բարբարոսները խարույկների վրա այրում են մեծ գրողների և մարդկության մեծ մտածողների՝ Տոլստոյի և Հայնեի, Պուշկինի և Հյուգոյի, Գորկու և Բայրոնի հանճարեղ ստեղծագործությունները:

Նրանք մտադիր են ոտնակոխ անել և կրակի մատնել Շոթա Ռուսթավելու, Նիզամի Գյանջևիի անմահ երկերը, ժողովրդական ստեղծագործության այնպիսի մարգարիտները, ինչպես՝ «Սասունցի Դավիթը», «Քյոռ Օղլին», այն ամենը, ինչ թանկ է մեզ համար, ինչ հանդիսանում է Անդրկովկասի ժողովուրդների ազգային ոգին, պատիվն ու հպարտությունը, ժողովուրդներ, որոնք դեռ հնուց ի վեր ունեցել են իրենց պետական ու կուլտուրական բուռն ծաղկման տարիները:

Մենք թույլ չենք տա, որ մեզ ահաբեկի արյունարբու թշնամին, որը կեղծիքի և պրովոկացիայի միջոցով ձգտում է թուլացնել պայքարի ու հաղթանակի մեր կամքը»:

«Սովետական Հայաստան», 24 օգոստոսի, 1942:

Սեպտեմբերի 8-ին

Բաքվում Ինտելիգենցիայի Տանը տեղի է ունենում Սովետական Հայաստանի և Ադրբեջանի գրողների հանդիպում:

Հայ գրողներից մասնակցում են՝ Աբաղին, Գ. Սարյանը, Ա. Միշտունին, Գ. Աբովը, Գ. Բորյանը, Վ. Գրիգորյանը։

Բացման խոսք է ասում Սամեդ Վուրղունը։

Չեկուցում են՝ Գ. Աբովը և Մ. Դադաշզադեն։

Հոկտեմբերի 10—նոյեմբերի 10-ը

Գ. Սարյանը և Վ. Գրիգորյանը լինում են ռազմաճակատում։

Նոյեմբերի 6-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինն զեկուցումը աշխատավորների պեպուտատների Մոսկվայի Սովետի հանդիսավոր նիստում։

Ի. Վ. Ստալինի զեկուցումից.

«Մեր զենիավար օրգանների խաղաղ շինարարական աշխատանքն այդ ժամանակաշրջանում արտահայտվեց մեր ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական արդյունաբերության վերաբազավորմամբ դեպի մեր երկրի արևելյան շրջանները, բանվորների ու ձեռնարկությունների տարբավորման էվակուացիայով և տեղավորումով նոր վայրերում, ցանքերի տարածության ընդարձակմամբ և աշնանացանի հողերի ավելացմամբ արևելքում, վերջապես՝ ռազմաճակատի համար աշխատող մեր ձեռնարկությունների աշխատանքի արմատական բարելավմամբ և աշխատանքային կարգապահության ամրացմամբ թիկունքում՝ ինչպես գործարաններում, այնպես էլ կոլխոզներում ու սովխոզներում։ Պետք է ասել, որ դա մեր բոլոր տնտեսական և վարչական ժողկոմատների, այդ թվում մեր երկաթուղային տրանսպորտի կազմակերպչական մեծ ջանաշատարի դժվարագույն և ամենաբարդ աշխատանքն էր։ Սակայն դժվարությունները հաջողվեց հաղթահարել։ Եվ այժմ մեր գործարանները, կոլխոզներն ու սովխոզները, չնայած պատերազմի ժամանակվա բոլոր դժվարություններին, աշխատում են անվիճելիորեն բավարար։ Մեր ռազմական գործարանները և նրանց հարակից ձեռնարկությունները Կարմիր Բանակին ապնվորեն և ճշտապահությամբ մատակարարում են հրանոթներ, ականանետներ, ինքնաթիռներ, տանկեր, գնդացիրներ, հրացաններ, ռազմամթերք։ Մեր կոլխոզները և սովխոզները նույնպես ապնվորեն ու ճշտապահությամբ մատակարարում են բնակչությանը և Կարմիր Բանակին պարենամթերք, իսկ մեր արդյունաբերությանը՝ հումք։ Պետք է

խոստովանել, որ մեր երկիրը դեռ երբեք չի ունեցել այսպիսի ամբողջական և կազմակերպված թիկունք»։

Ի. Ստալին, Սովետական Միության Հայրենական Մեծ Պատերազմի մասին, Հայպետհրատ, 1945, էջ 66—67։

Նոյեմբերի 7—29-ը

Տեղի է ունենում ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի 12-րդ պիտական սեսիան։

Զեկուցում են.

Հ. Օրբելի՝ «Հոկտեմբերյան ռևոլուցիայի 25 տարին և հայկական կուլտուրան».

Գ. Գեմիրճյան՝ «Վարդան Մամիկոնյանի մասին»։

Ռ. Վարդազարյան՝ «Հերոսության հասկացողությունը և սովետական գրականությունը».

Ա. Ղանալանյան՝ «Ժողովուրդը թշնամու մասին»։

Դեկտեմբերի 3-ին

Գրողների Տանը կազմակերպվում է գրական երեկո նվիրված Ն. Զարյանի Հայրենական պատերազմի շրջանի ստեղծագործություններին։

Զեկուցում է վ. Թերզիբաշյանը։

Ելույթներ են ունենում՝ Հ. Օրբելին, Ա. Կարինյանը, Ն. Զարյանը, Ռ. Վարդազարյանը, Հ. Շիրազը, Արաքսը։

Եզրափակման խոսք է ասում Գ. Աբովը։

Դեկտեմբերի 9-ին

Արմֆանի դահլիճում ակադեմիկոս Հ. Օրբելին զեկուցում է կարդում «Շոթա Ռուսթավելին և նրա պոեմը» նյութի մասին։

Դեկտեմբերի 20-ին

Գրողների Տանը Խ. Այվազյանը զեկուցում է Արաքսի Հայրենական պատերազմի շրջանի ստեղծագործությունների մասին։

Ելույթներ են ունենում՝ Ա. Կարինյանը, վ. Թերզիբաշյանը, Ա. Ալշուտինին, Հ. Շիրազը, Արաքսը։

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Ջափածո

1. Զարյան. —Վրեժ, Հայպետհրատ, Երևան:
2. Ա. Վշտունի.— Երբ կայծակը փայլատակում է, Հայպետհրատ, Երևան:
3. Ս. Տարոնցի.— Կրակ, Հայպետհրատ, Երևան:
4. Ս. Տարոնցի.— Պատերազմ, Հայպետհրատ, Երևան:
5. Հ. Շիրազ.— Բանաստեղծի ձայնը, Հայպետհրատ, Երևան:
6. Հ. Շիրազ.— Երդերի գիրք, Հայպետհրատ, Երևան:
7. Գ. Բորյան. —Կրակին լեզվով, Հայպետհրատ, Երևան:
8. Սարմեն.— Աստղեր, Հայպետհրատ, Երևան:
9. Հռ. Պողոսյան.— Որդիների հետ, Հայպետհրատ, Երևան:
10. Հ. Հայրապետյան.— Կապավորը, Հայպետհրատ, Երևան:
11. Վ. Գրիգորյան.— Հայրենական, Հայպետհրատ, Երևան:
12. Վ. Գրիգորյան.— Լենինի մոտ, Հայպետհրատ, Երևան:
13. Աղամնի.— Ռազմի երգեր, Հայպետհրատ, Երևան:
14. Գ. Էմին.— Հաղաղության ծխամորճը, Հայպետհրատ, Երևան:
15. Ս. Կապուտիկյան.— Հատուցում, Հայպետհրատ, Երևան:
16. Աշ. Գրաշի.— Ռազմի երգեր, Աղերնեշեր, Բաքու-Երևան:

Արձակ

1. Արադի.— Հայրենիքի կանչը, Հայպետհրատ, Երևան:
2. Հր. Քոչար.— Հերոսների ծնունդը, Հայպետհրատ, Երևան:
3. Ք. Թափալցյան. —Հայրենիք, Հայպետհրատ, Երևան:
4. Արաքս.— Տափաստանի առյուծը, Հայպետհրատ, Երևան:
5. Լ. Թարդյուլ.— Մայրեր, Հայպետհրատ, Երևան:
6. Ա. Սահինյան.— Վայելք, Հայպետհրատ, Երևան:
7. Ա. Շայրոն.— Գիշերային ծխածան, Հայպետհրատ, Երևան:
8. Գ. Հովնան.— Ջրաս նովել, Հայպետհրատ, Երևան:

Դրամատուրգիա

1. Պիեսներ նվիրված Հայրենական Մեծ Պատերազմին (ժողովածու), Հայպետհրատ, Երևան:

Ժողովածուներ

1. «Հայրենիքի հետ», Հայպետհրատ, Երևան:
2. «Հայրենի վտակներ», գիրք II, Հայպետհրատ, Երևան:
3. «Մինը Հայրենական պատերազմում», Հայպետհրատ, Երևան:

Գրականության պատմություն, տեսություն և ճեճադատություն

1. Ա. Տերտերյան.— Հայ հայրենասեր գրողներ, Պետհամալսարանի հրատ., Երևան:
2. Ա. Զանազանյան.— Հայ ժողովրդի հերոսապատումները, Հայպետհրատ, Երևան:
3. Ռ. Հովհաննիսյան.— Հայրենիքը և ռուս դրականությունը, Հայպետհրատ, Երևան:

Թարգմանություններ

1. Մա. Տվենգ.— Ընտիր նովելներ, Հայպետհրատ, Երևան:
2. «Խիզախություն», Հայպետհրատ, Երևան:
3. «Հարձակում», Հայպետհրատ, Երևան:

1943

Հունվարի 14-ին

Գրողների Տանը Ս. Բագյանը զեկուցում է Ս. Տարոնցու Հայրենական Պատերազմին նվիրված բանաստեղծությունների մասին:

Հունվարի 15-ին

Ժողկոմսովետին կից Արվեստի վարչությունը հայտարարում է լուսաբռնչն պիեսների կոնկուրս:

Հունվարի 25-ին

Թերագույն Գլխավոր Հրամանատար ընկեր Ի. Վ. Ստալինի հրամանը՝ Հարավ-արևմտյան, Հարավային, Դոնի, Վորոնեժի, Հյուսիսային Կովկասի, Կալինինի, Վոլխովի և Լենինգրադի ռազմաճակատների զորքերին:

Ի. Վ. Ստալինի հրամանից.

«Երկու ամսվա հարձակողական մարտերի հետևանքով Կարմիր Բանակը լայն ճակատով ճեղքեց գերմանա-ֆաշիստական զորքերի պաշտպանությունը, չախչախեց հակառակորդի հարյուրերկու դիվիզիա, վերցրեց ավելի քան 200.000 գերի, գրավեց 13.000 հրանոթ և ուրիշ շատ տեխնիկա ու առաջ շարժվեց մոտ 400 կիլոմետր։ Մեր զորքերը լուրջ հաղթանակ տարան։ Մեր զորքերի հարձակումը շարունակվում է»։

Ի. Ստալին, Սովետական Միության Հայրենական Մեծ Պատերազմի մասին, Հայպետհրատ, 1945, էջ 93։

Հունվար

Սովետական գրողների և նկարիչների մի բրիգադա՝ Ն. Ջաբյան, Ա. Վշտունի, Ս. Տարոնցի, Տ. Հախումյան մեկնում է առաջնամարտ։

Փետրվարի 2-ին

Ամբողջովին ավարտվում է Ստալինգրադի տակ շրջապատված գերմանա-ֆաշիստական զորքերի լիկվիդացիան։

Փետրվարի 23-ին

Գերագույն Գլխավոր Հրամանատար ընկեր Ի. Վ. Ստալինի հրամանը։

Ի. Վ. Ստալինի հրամանից.

«Ընկե՛ր կարմիրբանակայիննե՛ր և կարմիրնավատորմայիննե՛ր, հրամանատարնե՛ր և քաղաշխատողնե՛ր, պարտիզաննե՛ր և պարտիզանուհինե՛ր։ Այսօր մենք տոնում ենք Կարմիր Բանակի գոյության 25-րդ տարեդարձը։

Քառորդ դար է անցել այն ժամանակից, երբ ստեղծվեց Կարմիր Բանակը։ Նա ստեղծվեց պայքարելու օտարերկրյա զավթիչների դեմ, որոնք ձգտում էին ստրկացնել մեր երկիրը։ 1918 թվականի փետրվարի 23-ը, երբ Կարմիր Բանակի ջոկատները Պսկովի և Նարվայի մոտ պլխովին ջախջախեցին գերմանական զավթիչների զորքերին, հայտարարվեց Կարմիր Բանակի ծննդյան օր։

1918—1921 թվականներին օտարերկրյա զավթիչների դեմ

մղված համառ պայքարում Կարմիր Բանակը պաշտպանեց մեր Սովետական Հայրենիքի պատիվը, ազատությունն ու անկախությունը, պաշտպանեց մեր երկրի ժողովուրդների իրավունքը՝ կառուցելու իրենց կյանքն այնպես, ինչպես սովորեցնում էր մեծ Լենինը։

Երկու տասնամյակի ընթացքում Կարմիր Բանակը պահպանում էր սովետական ժողովրդի խաղաղ ստեղծարար աշխատանքը։ Մեր երկրի ժողովուրդները երբեք չէին մոռանում օտարերկրյա զավթիչների ոտնձգությունները մեր հողի դեմ և անդուլ կերպով հոգ էին տանում Կարմիր Բանակի հզորությունն ամրապնդելու համար, զինում էին նրան առաջնակարգ մարտական տեխնիկայով և սիրով աճեցնում սովետական ռազմիկների կադրեր։

Կարմիր Բանակը բոլոր երկրների ժողովուրդների միջև խաղաղության և բարեկամության պաշտպանող բանակ է։ Նա ստեղծվել է ոչ թե օտար երկրներ նվաճելու, այլ Սովետական Երկրի սահմանները պաշտպանելու համար։ Կարմիր Բանակը միշտ հարգանքով է վերաբերվել բոլոր ժողովուրդների իրավունքներին և անկախությանը։

Բայց 1941 թվականի հունիսին հիտլերյան Գերմանիան ուխտադրժորեն հարձակվեց մեր երկրի վրա, կոպիտ կերպով և ստորաբար խախտելով չհարձակվելու պայմանագիրը։ Եվ Կարմիր Բանակն ստիպված եղավ ռազմարշավի ելնելու, որպեսզի պաշտպանի իր Հայրենիքը գերմանական զավթիչներից և վռնդի նրանց մեր երկրի սահմաններից։ Այդ ժամանակից ի վեր Կարմիր Բանակը դարձավ հիտլերյան զորքերի դեմ մահացու պայքար մղող բանակ, վրիժառուների բանակ այն անարգանքի և բռնությունների համար, որ գերմանա-ֆաշիստական սրիկաները պատճառել են մեր եղբայրներին ու քույրերին մեր Հայրենիքի օկուպացված շրջաններում։

Կարմիր Բանակն իր գոյության 25-րդ տարեդարձը դիմավորում է հիտլերյան Գերմանիայի և նրա կամակատարներ իտալացիների, հունգարացիների, ռումինացիների, ֆինների դեմ մղվող Հայրենական Պատերազմի վճռական պահին»։

Ի. Ստալին, Սովետական Միության Հայրենական Մեծ Պատերազմի մասին, Հայպետհրատ, 1945, էջ 96—97։

Փետրվարի 27-ին

«Պրավդա»-յում հրապարակվում է «Հայ ժողովրդի նամակը Հայ մարտիկներին»։

Հայ ժողովրդի նամակից.

«Մեր ժողովրդի սիրելի զավակներ, մեր քաջարի մարտիկներ և հրամանատարներ.

Այս նամակով ամբողջ Հայ ժողովուրդը հղում է ձեզ՝ իր հարազատ զավակներին սրտագին բոցավառ ողջույն։

Ահա արդեն 20 ամիս է, ինչ դուք կատարելով մեր սրբազան պարտքը Հայրենիքի հանդեպ, եղբայրական ժողովուրդների զավակների հետ ուս-ուսի տված՝ մարտնչում եք գերմանա-ֆաշիստական արյունարբուների դեմ, կրծքով պաշտպանում Սովետական Հայրենիքը, նրա ազատությունը և անկախությունը, ձեր հայրերի, մայրերի, երեխաների կյանքը, ձեր կանանց ու քույրերի պատիվը։

Մեր հարազատ զավակներ,

Այդ ամբողջ ժամանակվա ընթացքում, թե հաղթանակների ուրախալի օրերին, թե անհաջողությունների ծանր օրերին, մեր սրտերը, մեր մտքերը միշտ ձեզ հետ են եղել։ Ձեր կատարած սխրագործությունների յուրաքանչյուր լուրը հրճվանքով է լցնում մեր սրտերը, ոգևորում է մեզ՝ անդուլ, անձնազոհ աշխատանքի։ Մենք անխոնջ աշխատանքով գործարաններում, կոլխոզներում, սովխոզներում, գիտական լաբորատորիաներում օգնում ենք ռազմաճակատին մոտեցնելու մեր արդար գործի հաղթանակի ժամը։

Մեր մեծ առաջնորդ և սիրելի ղեկավար ընկեր Ստալինը 1942 թվականի նոյեմբերի 7-ի իր պատմական հրամանում ասաց. «Հեռու չէ այն օրը, երբ Չինաստին կիմանա Կարմիր Բանակի նոր հարվածների ուժը»։

Այդ օրը հասավ։ Հյուսիսում, Լենինգրադի մոտ, Դոնբասում, Ռժևի և Սև ծովի ափերին Կարմիր Բանակը հզոր հարվածներ է հասցնում հիտլերյան ավազակներին։

Մենք հպարտանում ենք, որ հարձակվող Կարմիր Բանակի շարքերում կռվում եք նաև դուք, մեր ժողովրդի հավատարիմ զավակներդ։

Մեր զավակներ, Կարմիր Բանակի մարտիկներ.

Մենք մեծագույն խանդավառությամբ հետևում ենք ձեր պայ-

քարին։ Եղեք ձեր ժողովրդին արժանի, մեր զավակներ։ Սուպլինեի հրամանով սկսված գործը մինչև վերջը հասցրեք, մինչև վերջը չարդեցեք ու մեր հողից դուրս շպրտեք գերմանական զազրելի հրեշին։

Ո՛չ մի րոպե մի մոռացեք, որ հիտլերյան արյունարբու բռնակալի դեմ մղվող պատերազմում վճռվում է Սովետական Միության բախտը, հայ ժողովրդի բախտը։ Բազմապատկեք ձեր զինքի ուժը, է՛լ ավելի կոփեցեք ձեր սրտերը, կանգ մի առեք ոչ մի դրժավարության առաջ, քար ու բանդ արեք ֆաշիստական ամրությունները, ոչնչացրեք նրանց տեխնիկան ու կենդանի ուժը։ Անընդհատ շարժվեցե՛ք դեպի Արևմուտք։ Դուք կենդանի պահեք ձեր սրտում մեր Ներոնի բանաստեղծի հավատով լի խոսքը.

... «Երևում է կատարն անամպ ու հստակ,
Բայց եթե չհասնենք այնտեղ մենք այսօր,
վաղն այնտեղ ենք անշուշտ, մերն է հաղթանակ...
Դեպի վեր, սարն ի վեր, անվեհեր զինվոր»։

Նամակին է նվիրված նաև «Պրավդա»-յի նույն օրվա առաջնորդողը — «Հայ ժողովրդի խոսքը ռազմաճակատում գտնվող իր զավակներին»։

«Պրավդա»-յի առաջնորդողից.

«Չի եղել և չկա մի հայ, որը չգիտակցի, թե ինչ է բերում իր հետ օտարերկրացիների՝ զավթիչների, բռնակալների ու բանդիտների արշավանքը։ Հիտլերյան կոալիցիայի ծրագիրը հայտնի էր։ Դա ռասայական ատելություն է, «ընտրյալ» ազգերի տիրապետություն, մյուս ազգերի հնազանդեցում և նրանց տերիտորիաների գավթում, հնազանդեցված ազգերի տնտեսական • ստրկացում և նրանց ազգային ոսնձելվածքի հափշտակում, դեմոկրատական ազատությունների ոչնչացում, հիտլերյան ռեժիմի ստոր բռնություն, վայրագ ջարդերի, գազանային դաժանության ռեժիմի ամենուրեք հաստատում։

Այդ բոլորի հետ վաղ է ծանոթ հայ ժողովուրդը։ Այդ բոլորը նա զգացել է իր բազմադարյան պատմության ընթացքում։ Հնադույն ազգերից մեկը լինելով, նա բազմիցս կանգնած է եղել ֆիզիկական լիակատար բնաջնջման, իր ազգային կուլտուրայի լիա-

կատար կործանման եղրին։ Մեծ է նրա թշնամիների ցուցակը։ Դրա սկիզբը հասնում է մինչև դարավոր հնություն։ Գևրմանացի զավթիչները եղրափակում են հայկական վշտի, հայկական թախծի դառն տարեգրությունը։ Հիշողության մեջ կենդանի են գերմանական իմպերիալիստների զազանություններն առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ։ Այդ են հիշեցնում իրենց զավակներին՝ հայ ժողովրդի մարտիկներին այսօր հրապարակվող նամակում։ Այժմ նույն այդ թշնամին, ավելի ևս գազանացած, կորցրած մարդկային ամեն մի կերպարանք, իր գիշատիչ թաթն է մեկնում դեպի Հայաստանի արդյավանդ արտերը, դեպի նրա ծաղկուն գյուղերը, դեպի բարեկարգ քաղաքները, կուլտուրայի հիշատակարանները։

Այդ ահեղ րոպեներին սովետական հողը պաշտպանելու համար մեկ մարդու պես ոտքի կանգնեց ամբողջ հայ ժողովուրդը։ Նա հասկացավ, որ թշնամին սպառնում է սովետական երկրի բոլոր ժողովուրդներին, սպառնում է աղատ Հայաստանին։ Հայ ժողովուրդն իր ամբողջ պատմության ընթացքում առաջին անգամ Սովետական պետության մեջ ղգաց հանգստի ու անվտանգության բարիքը։ Ստալինյան Կոնստիտուցիայի արևի տակ նա վերականգնեց իր պետականությունը։ Ժողովուրդների բարեկամության լենինյան-ստալինյան քաղաքականությունը հարստացրեց ազգային կուլտուրան։ Կոլխոզային կարգերում երկրին վերադարձավ նրա հինավուրց արդավանդությունը, որի մասին գրել է մեր Պուշկինը, հիանալով Արարատյան հովտից՝ «Հիանալի հողից, որի արդավանդությունն առած է դարձել Արևելքում»։

Սովետական երկրի բոլոր ժողովուրդները հիանում են ծաղկած Հայաստանով, հպարտանում նրա հաջողություններով, եղբայրաբար նպաստում նրա կուլտուրայի զարդացմանը...

«Հայ ժողովուրդը, Սովետական երկրի բոլոր ժողովուրդների նման, համակված է հայրենասիրական մեծ ոգևորումով։ Ժողովուրդը գիտե, թե ինչպես փոխվեց նրա կյանքը Սովետական Իշխանության տարիներին։ Անճանաչելի է Հայաստանը։ Աղքատ, ավերված երկիր լինելով, հետ ընկած քաղաքներով, թշվառ գյուղերով, նա դարձավ մի առաջադեմ պետություն՝ ծաղկուն կոլխոզային հողագործությամբ, նոր քաղաքներով, ինդուստրիաներով, ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Ֆիլիալով, դպրոցներով ամեն մի գյուղում, հարուստ գրականությամբ, ազգային դունեղ արվեստով։

Այդ ամենը ձեռք բերեց Հայաստանը պատմական կարճ ժամանակամիջոցում, ձեռք բերեց իր աշխատանքով, Սովետական երկրի եղբայրական ժողովուրդների օգնությամբ, առաջին հերթին ռուս մեծ ժողովրդի օգնությամբ։ Պերճախոս է Հայաստանի լավագույն այն մարդկանց ցուցակը, որոնք իրենց անուններն են դրել հայ ժողովրդի նամակի տակ։ Այդտեղ կան կոլխոզային դաշտերի հիանալի վարպետներ, ստախանովական բանվորներ, գիտնականներ, ինժեներներ ու բժիշկներ, նկարիչներ, արտիստներ։ Դրանք արդարև հայ ժողովրդի ծաղիկն են»։

«Սովետ. Հայաստան», 28 փետր., 1943։

Մարտի 6-ին

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագիրը Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինին Սովետական Միության Մարշալի պինվորական կոչում շնորհելու մասին։

Մարտի 6-ին

Գրողների Տանը կազմակերպվում է Գ. Բոյանի ստեղծագործությունների երեկոն։

Ջեկուցում է Աս. Ասատրյանը։

Ելույթներ են ունենում՝ Հ. Օրբելին, Ա. Կարինյանը, վ. Թերլիքաշյանը և Արաքսը։

Մարտի 11-ին

Արմֆանի դահլիճում Գ. Ա. Բեյ-Մամիկոնյանը պեկուցում է «Ակադեմիկոս Աբիխը Աբովյանի մասին» թեմայով։

Ելույթներ են ունենում՝ Հ. Օրբելին, Ավ. Իսահակյանը, Մ. Սարյանը և ուրիշները։

Մարտի 15-ին

Թբիլիսիի Գրողների Պալատում տոնվում է Պահարեի գրական-գործունեության 30-ամյակը։

Ջեկուցում է Աշ. Հայրապետյանը։

Ելույթներ են ունենում՝ Ս. Էուլին, Ա. Կարինյանը, վ. Աբրահանը, Ս. Ավչյանը և ուրիշները։

Մարտի 23-ին

Գրողների Տանը տեղի է ունենում Հ. Թումանյանի մահվան

20-ամյակին նվիրված երեկո։ Բացման խոսք է ասում՝ Գ. Սարով։

Զեկուցում են՝ Ա. Կարինյանը և Ա. Ղանալանյանը։

Հիշողություններ են պատմում՝ Ավ. Իսահակյանը, Իմեգաշվիլին, Ստ. Զորյանը։

Նյութ է ունենում Սովետական Միության Հերոս Նելսոն Ստեփանյանը։

Հ. Թումանյանին նվիրված իրենց բանաստեղծություններով հանդես են գալիս Սարմենը և Հո. Պողոսյանը։

Մարտի 28-ին

Գրողների Տանը նշվում է Մ. Գորկու ծննդյան 75-ամյակը։

Ապրիլի 14-ին

Գրողների Տանը Վ. Մայակովսկու հիշատակին կազմակերպվում է հանդիսավոր երեկո։

Ապրիլի 22-ին

Երևան է ժամանում Ստալինգրադի հերոսական պաշտպանների դելեգացիան։

Ապրիլ—մայիս

«Սովետական գրականություն» ամսագրի № 4—5-ում սկսված է տպագրվել Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» վեպը։

Ապրիլ—մայիս

«Սովետական գրականություն» ամսագրի № 4—5-ում սկսված է տպագրվել Ն. Զարյանի «Ձայն Հայրենական» պոեմը։

Մայիսի 1-ին

Գերագույն Գլխավոր Հրամանատար ընկեր Ի. Վ. Ստալինի հրամանը։

Ի. Վ. Ստալինի հրամանից.

«Մեր երկրի ժողովուրդները Հայրենական Պատերազմի դաժան օրերին են դիմավորում Մայիսի մեկի օրը։ Նրանք իրենց բախտը վստահեցին Կարմիր Բանակին և չսխալվեցին իրենց հույսերի նկատմամբ։ Սովետական մարտիկները կրծքով պաշտպան կանգնեցին Հայրենիքին և ահա արդեն համարյա երկու տարի է,

որ պաշտպանում են Սովետական Միության ժողովուրդների պատիվն ու անկախությունը»։

Ի. Ստալին, Սովետական Միության Հայրենական Մեծ Պատերազմի մասին, Հայպետհրատ, 1945, էջ 105։

Մայիսի 19-ին

Գրողների Տանը հրավիրվում է Հայրենական պատերազմի ժամանակաշրջանի սովետական դրականության նվիրված ստեղծագործական-քննադատական խորհրդակցություն։

«Հայ սովետական գրականության վիճակը Հայրենական պատերազմի ժամանակամիջոցում» նյութի մասին զեկուցում է Գ. Աբրոյը։

Մտքերի փոխանակությանը մասնակցում են՝ Ավ. Իսահակյանը, Ստ. Զորյանը, Ն. Զարյանը, Հր. Քոչարը, Տ. Հախումյանը, Հ. Գյուլիքեվխյանը, Ա. Կարինյանը, Զ. Գրիգորյանը, Հ. Շիրազը, Ա. Կարապետյանը, Ռ. Վարդազարյանը, Վ. Թերզիբաշյանը։

Վերջում ելույթ է ունենում ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Ս. Կարապետյանը։

Մայիսի 21-ին

Գրողների Տանը Ռ. Զարյանը զեկուցում է «Շիրազի լիրիկան» նյութի մասին։

Մտքերի փոխանակությանը մասնակցում են՝ Գ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Գ. Սևակը, Ս. Հարությունյանը, Ա. Կարապետյանը։

Մայիսի 23-ին

Հրապարակվում է Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի հայ մարտիկների նամակը հայ ժողովրդին։

Նամակից.

«Շատ ժամանակ չի անցել այն օրից, երբ մենք ստացանք և մեծ սիրով ու հաճույքով կարդացինք ձեր այնքան սրտագին նամակը։

Այդ նամակը գրված էր մեր մայր ժողովրդի սրտի ավյունով, մեր թանկագին մայրերի, քույրերի, կանանց, երեխաների, եղբայրների ու հայրերի բուռն զգացումներով ու գալիք հաղթանակի պայծառ հավատով։ Ահա թե ինչու ձեր գրած նամակի ամեն մի բառն անջնջելի տառերով դրոշմվեց մեր սրտի մեջ։ Ահա թե ինչու

688—36

էլեկտրական հոսանքի արագությամբ անցավ խրամատից-խրամատ; բլինդաժից-բլինդաժ և մեզ բոլորիս ոգևորեց նորանոր սխրագործություններին:

Այդ նամակը մեզ է՛լ ավելի խոր ատելությամբ վրեժի գոչեց հայ ժողովրդի ամենաոխերիմ թշնամիների՝ գերմանական օկուպանտների դեմ:

Հերոսական Կարմիր Բանակը Ստալինգրադի պատերի տակ, Միջին Դոնի, Կենտրոնական, Կովկասի ռազմաճակատներում և այլ հատվածներում ցույց տվեց անօրինակ սխրագործություններ: Կարմիր Բանակի այդ հաղթանակներով հրճվեցին ու ոգեշնչվեցին ոչ միայն Սովետական Միության ժողովուրդները, այլև ազատության համար մարտնչող աշխարհի ամբողջ մարդկությունը: Հերոսական այդ դրվագներից բաժին ունեն նաև ձեր հարազատ զավակները, որոնք այսօր զենքը ձեռքներին անվեհերությամբ կրում են հիտլերյան կատաղած բորենիների դեմ:

Կովկասի ազատագրման համար մղվող մարտերում վառոդի ու բոցերի միջից բարձրացան հերոսական կերպարներ, որոնցով կարող է պարծենալ հայ ժողովուրդը»:...

«Թանկագին հայրենակիցնե՛ր. մենք խորապես գիտակցում ենք, որ հայրենիքի առաջ մեր սրբազան պարտքը լիովին կատարելու համար մենք պետք է ազատագրենք սովետական տերիտորիայի մի ղպալի մասը, որը դեռևս գտնվում է հիտլերյան բռնակալության սրնոտ լծի տակ: Պայքարը գերմանական արնախում դավիչների դեմ դեռ չի ավարտված, այն միայն ծավալվում է, բոցավառվում: Կարմիր Բանակին սպասվում են համառ ու դժվարին մարտեր շարունակ, դաժան և տակավին ուժեղ թշնամու դեմ:

Կարմիր Բանակը, որի շարքերումն ենք և մենք, պատրաստ է այդ դժվարությունները հաղթահարել, ոչնչացնել և դուրս վռնդել մեր մայր հայրենիքից գերմանա-ֆաշիստական ավազակ օկուպանտներին: Այդ բանը մենք կանենք պատվով՝ ուսա մեծ ժողովրդի, սովետական եղբայրական մյուս ժողովուրդների քաջարի զավակների հետ ուս-ուսի տված»:...

«Մենք երդվում ենք մեր պատվով, մեր ղոհված ընկերների արյամբ, բարբարոս ֆաշիստների կողմից անարգված ու խաչտանգված մայրերի, քույրերի, մանուկների արցունքով ու արյամբ, որ վրիժառու կլինենք դահիճ հիտլերականների նկատմամբ»:...

«Այո՛, հայրենի՛ք, մենք կվերադառնանք մեր երդումը կատարելով, հաղթանակն ապահովելուց հետո»:

Մայիսի 28-ին

Գրողների Տանը Ա. Կարինյանը զեկուցում է Ա. Վշտունու Հայրենական պատերազմի շրջանի ստեղծագործությունների մասին:

Հունիսի 12-ին և 16-ին

Գրողների Տանը Գ. Սևակը զեկուցում է սովետահայ գրականության լեզվի մասին:

Մտքերի փոխանակությանը մասնակցում են՝ Գ. Սարյանը, Էդ. Թոփչյանը, Ն. Զարյանը, Դ. Դեմիրճյանը, Հ. Գյուլիքեվխյանը, Ար. Ղարիբյանը, Ա. Վահունին:

Վերջում հանդես է գալիս ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Մ. Կարապետյանը:

Հունիսի 14-ին

Գրողների Տանը տեղի է ունենում գրական երեկո՝ նվիրված Նար-Դոսի մահվան 15-ամյակին:

Զեկուցում է Մ. Մկրյանը:

Հուշերով հանդես են գալիս Արազին և Ստ. Զորյանը:

Հունիսի 14-ին և 21-ին

Գրողների Տանը Հ. Գյուլիքեվխյանը զեկուցում է «Սովետական հայ դրամատուրգիան Հայրենական պատերազմի օրերին» նյութի մասին:

Ելույթներ են ունենում Ն. Զարյանը, Շամիրխանյանը և ուրիշները:

Հունիսի 19-ին

Գրողների Տանը տեղի է ունենում գրական երեկո՝ նվիրված Վ. Մայակովսկու ծննդյան 50-ամյակին:

Մայակովսկու կյանքի և ստեղծագործության մասին զեկուցում է Ռ. Վարդազարյանը:

Հունիսի 28-ին

Արմֆանի դահլիճում Դ. Ի. Պիսարևի մահվան 75-ամյակի

կապակցությամբ Հ. Գյուլբենկյանը դեկուցում է «Գ. Ի. Պետրոսի գրական-էսթետիկական հայացքները» նյութի մասին։

Օգոստոսի 8-ին

Պրոֆ. Արսեն Տերտերյանին շնորհվում է փիլոլոգիական գիտությունների դոկտորի կոչում։

Օգոստոսի 12-ին

Գրողների Տանը տեղի է ունենում Մ. Շահինյանի գրական գործունեության 40-ամյակին նվիրված երեկո։

Զեկուցում է Վ. Թերզիբաշյանը։

Նոյեմբերի 6-ին

Հոկտեմբերյան Սոցիալիստական Revolutionայի 26-րդ տարեդարձը։

Պաշտպանության Պետական Կոմիտեի Նախագահ ընկեր Ի. Վ. Ստալինի զեկուցումը աշխատավորների դեպուտատների Մոսկվայի Սովետի հանդիսավոր նիստում։

Ի. Վ. Ստալինի զեկուցումից.

«Անցած տարին՝ Հոկտեմբերի 25-րդ տարեդարձից մինչև 26-րդը՝ Հայրենական պատերազմի բեկման տարի է։

Այդ տարին բեկման տարի էր ամենից առաջ նրա համար, որ այս տարի Կարմիր Բանակին պատերազմի ընթացքում առաջին անգամ հաջողվեց ամառային մեծ հարձակում իրականացնել գերմանական զորքերի դեմ, ըստ որում գերմանա-ֆաշիստական զորքերը մեր զորքերի հարվածների տակ հարկադրված եղան հապճեպորեն թողնել իրենց գավթած տերիտորիան, հաճախ փախուստի դիմելով փրկվել շրջապատումից և մարտադաշտում թողնել մեծ քանակությամբ տեխնիկա, սպառազինության և ռազմամթերքի պահեստներ, վիրավոր զինվորներ և սպաներ։

Այսպիսով, այս տարվա երկրորդ կիսում մեր ամառային կամպանիայի հաջողությունները հանդիսացան այս տարվա սկզբի մեր ձմեռային կամպանիայի հաջողությունների շարունակությունը և ավարտումը»։...

«Սովետական Միության բոլոր ժողովուրդները միահամուռ պաշտպան կանգնեցին իրենց Հայրենիքին, իրենց համարելով

ներկայիս Հայրենական պատերազմը բոլոր աշխատավորների ընդհանուր գործը՝ առանց ազգության և դավանանքի խտրության: Այժմ արդեն հիտլերյան քաղաքագետներն իրենք տեսնում են, թե ինչպես անհուսալի կերպով հիմար էին նրանց այն հաշիվները, թե պառակտում և ընդհարումներ կլինեն Սովետական Միության ժողովուրդների միջև: **Մեր երկրի ժողովուրդների բարեկամությունը** դիմացավ պատերազմի բոլոր դժվարություններին ու փորձություններին և է՛լ ավելի կոփվեց սովետական բոլոր մարդկանց կողմից ֆաշիստական զավթիչների դեմ մղվող ընդհանուր պայքարում:

Այդ է Սովետական Միության ուժի աղբյուրը: **(Բուռն, երկարատև ծափահարություններ):**

Ինչպես խաղաղ շինարարության տարիներին, այնպես էլ պատերազմի օրերին, սովետական ժողովրդի ղեկավար և ուղղություն տվող ուժը հանդիսացավ Լենինի պարտիան, բոլշևիկների պարտիան: Ոչ մի պարտիա չի ունեցել և չունի այնպիսի հեղինակություն ժողովրդական մասսաների մեջ, ինչպես մեր բոլշևիկյան պարտիան: Եվ դա հասկանալի է: Բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ մեր երկրի բանվորները, գյուղացիները և ինտելիգենցիան իրենց համար ազատություն նվաճեցին և կառուցեցին սոցիալիստական հասարակություն: Հայրենական պատերազմի օրերին պարտիան մեր առաջ կանգնեց որպես ֆաշիստական զավթիչների դեմ մղվող համաժողովրդական պայքարի ոգեշնչողն ու կազմակերպողը: Պարտիայի կազմակերպչական աշխատանքը միավորեց և դեպի ընդհանուր նպատակն ուղղեց սովետական մարդկանց բոլոր ջանքերը, ենթարկելով մեր բոլոր ուժերն ու միջոցները թշնամու ջախջախման գործին: Պատերազմի ժամանակաշրջանում պարտիան է՛լ ավելի հարազատ դարձավ ժողովրդին, է՛լ ավելի սերտորեն կապվեց աշխատավորների լայն մասսաների հետ:

Այդ է մեր պետության ուժի աղբյուրը: **(Բուռն, երկարատև ծափահարություններ):**

Ներկա պատերազմը ամբողջ ուժով հաստատեց Լենինի այն հայտնի ցուցումը, որ պատերազմն ամեն մի ժողովրդի նյութական և հոգևոր բոլոր ուժերի բազմակողմանի քննությունն է: Պատերազմների պատմությունն ուսուցանում է, որ այդ քննությունը բռնել են միայն այն պետությունները, որոնք իրենց հակառակոր-

դից ավելի ուժեղ են եղել տնտեսության զարգացմամբ և կազմակերպմամբ, իրենց զորքերի փորձառությամբ, հմտությամբ և մարտական ոգով, ժողովրդի տոկունությամբ և միասնությամբ պատերազմի ամբողջ ընթացքում: Հենց այդպիսի պետություն է մեր պետությունը:

Սովետական պետությունը երբեք այնքան ամրակուռ և անսասան չի եղել, ինչպես այժմ՝ Հայրենական պատերազմի երրորդ տարում: Պատերազմի դասերն ասում են, որ սովետական հասարակարգը հանդիսացավ ոչ միայն երկրի տնտեսական և կուլտուրական վերելքի կազմակերպման լավագույն ձևը խաղաղ շինարարության տարիներին, այլև պատերազմի ժամանակ թշնամուն հակահարված տալու համար ժողովրդի բոլոր ուժերը մոբիլիզացնելու լավագույն ձևը: 26 տարի առաջ ստեղծված Սովետական իշխանությունը պատմական կարճ ժամանակամիջոցում անխորտակելի բերդ դարձրեց մեր երկիրը: Կարմիր Բանակն ունի աշխարհիս բոլոր բանակների մեջ ամենից ավելի ամրակուռ և վստահելի թիկունք:

Այդ է Սովետական Միության ուժի աղբյուրը: (Երկար, երկարատև ծափահարություններ)»:

Ի. Ստալին, Սովետական Միության Հայրենական Մեծ Պատերազմի մասին, Հայպետհրատ, 1945, էջ 118—119, 127—129:

Նոյեմբերի 25-ին

Կազմակերպվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիա:

Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետը հաստատում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամների առաջին կազմը՝ Հ. Ա. Օրբելի, Մ. Խ. Աբեղյան, Լ. Ա. Օրբելի, Հ. Հ. Մանանդյան, Ա. Ի. Ալիխանով, Ս. Ս. Մալխասյան, Ի. Վ. Եղիազարով, Ա. Ս. Իսահակյան, Հ. Հ. Աճառյան, Խ. Ս. Կոշտոյանց, Վ. Հ. Համբարձումյան, Գ. Ա. Ղափանցյան, Ա. Հ. Տերտերյան, Լ. Ա. Օգանեսով, Ս. Ջ. Թամամշև, Մ. Գ. Թումանյան, Ա. Ա. Հակոբյան, Ա. Ի. Ալիխանյան, Ս. Կ. Կարապետյան, Կ. Ն. Պաֆֆենգոլց, Վ. Հ. Գուլքանյան, Հ. Ք. Բունիաթյան, Վ. Ի. Իսագուլյան:

Նոյեմբերի 29-ին

Տեղի է ունենում Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամների առաջին ժողովը։

Նոյեմբերի 29-ին

Հայ ինտելիգենցիան շնորհակալական հեռագիր է ուղղում ընկեր Ի. Վ. Ստալինին, Հայաստանում Գիտությունների Ակադեմիա ստեղծվելու առթիվ։

Հեռագրից.

«Թանկագի՛ն Իոսիֆ Վիսսարիոնովիչ.

Այսօր Սովետական Հայաստանում մեծ տոն է։ Հայաստանում սովետական իշխանության հաստատվելու 23-րդ տարեդարձի օրը հանդիսավ Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գիտությունների Ակադեմիայի բացման հետ։

Հայաստանի Գիտությունների Ակադեմիա կազմակերպելու միտքը հայկական ինտելիգենցիան, ամբողջ հայ ժողովուրդն ընդունեց իորը բերկրանքի զգացումով։ Ակադեմիայի ստեղծումը ժողովուրդը միահամուռ կերպով գնահատեց իբրև մի մեծ պատիվ, ցույց տրված իրեն, իր ինտելիգենցիային, իր կուլտուրային։

Ընդունելով սովետական կառավարության, բոլշևիկյան պարտիայի այդ մեծ նվերը՝ հայկական ինտելիգենցիան իր հայացքը, իր առաջին խոսքերը ուղղում է դեպի Ձեզ՝ իր մեծ առաջնորդին ու բարեկամին և Ձեզ է բերում իր անհուն շնորհակալությունը այն ամենի համար, ինչ Դուք արել եք հայ ժողովրդի փրկության և վերածնության համար, այն ամենի համար, ինչ Դուք անում եք նրա կուլտուրայի և գիտության զարգացման համար»։...

«Բանվության ու կամպայականության անհատ գիտնականներից տասնյակ սերունդներ դարերի ընթացքում հնարավորություններ չունենալով գիտությունը զարգացնելու հայրենիքում, ձգտել են գիտական օջախներ ստեղծել օտարության մեջ, որպեսզի պահպանեն իրենց ժողովրդի կուլտուրական ամենահարուստ ժառանգությունը, որպեսզի թույլ չտան, որ մարի գիտական միտքը։

Հարազատ հողում, հարազատ ժողովրդի մեջ գիտական գործունեության հնարավորություն ունենալու մասին հայ գիտնական-

ների շատ սերունդների երազները կենսագործվեցին միայն այն իմաստով, մարդասեր քաղաքականության հաղթանակի դարաշրջանում, որը կոչվում է լենինյան-ստալինյան ազգային քաղաքականություն»:...

«Մեր Ակադեմիան ծնվեց ֆաշիստական խավարամոլների գարշելի հրոսակախմբերի դեմ մեր սովետական մեծ Հայրենիքի կողմից մղվող կատաղի գոտեմարտերի ժամանակաշրջանում: Մեր Ակադեմիան ծնվեց հրետանային համազարկերի դղրդյունի մեջ: Գիտության պատմության մեջ այդ նշանավոր փաստը դարձյալ մի նոր ապացույց է մեր Սովետական պետության հզորության և ամրության»:...

«Նոր խանդավառությամբ ձեռնամուխ լինելով աշխատանքի՝ մենք մեր աչքի առջև ունենք գիտության երկու կորիֆեյների՝ Լենինի և Ձեր կերպարը, թանկագի՛ն Իոսիֆ Վիսսարիոնովիչ, և այդ մեզ համար ոգևորության անսպառ աղբյուր է ծառայում:

Մենք հայրենիքի տաճարին կնվիրաբերենք մեր բոլոր ուժերն ու շնորհքը, որպեսզի մոտեցնենք ատելի թշնամու դեմ լիակատար և անխուսափելի հաղթանակը, հանուն մեր մեծ ու անպարտելի Սովետական Հայրենիքի ծաղկման, որը՝ Ձեր հանճարով ղեկավարվելով համարձակորեն ընդառաջ է գնում իր լուսաշող ապագային»:

«Սովետական Հայաստան» № 243, 1943:

Դեկտեմբերի 14-ին

N *զորաբաժանման մարտիկները նամակ են ուղարկում հայ գրողներին իրենց ուղարկած նվեր-ծանրոցների առթիվ:*

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Չափածո

1. *Ն. Զարյան.— Շիկացած հողով, Հայպետհրատ, Երևան:*
2. *Ն. Զարյան.— Լսե՛ք դարեր, Հայպետհրատ, Երևան:*
3. *Թ. Հուրյան.— Աստղ, Ազերնեշր, Բաքու:*
4. *Աղավնի.— Ցրունգեի աղան, Հայպետհրատ, Երևան:*
5. *Ռ. Ղարիբյան.— Իվան Կուզմիչ, Պետհրատ, Երևան:*

Արձակ

1. Գ. Գեմիրճյան.— վարպանանք, Ա հատոր, Հայպետհրատ, Երևան:
2. Հր. Քոչար.— Նախօրյակին, Հայպետհրատ, Երևան:
3. Գ. Աբով.— Ճակատում և թիկունքում, Հայպետհրատ, Երևան:

Ժողովածուներ

1. «Հայ աշուղները և հորինողները Հայրենական պատերազմի օրերին», Հայպետհրատ, Երևան:
2. «Հայրենիքի համար», Հայպետհրատ, Երևան:
3. «Ո՞վ է ձեզ հրամիրել», Հայպետհրատ, Երևան:
4. «Շեֆը», Հայպետհրատ, Երևան:

Գրականության պատմություն, տեսություն և ճնճադատություն

1. Մ. Մկրյան.— Հայրենիքի պաշտպանության գաղափարը և նրա ծնած հերոսները 5-րդ դարի հայ պատմիչների գործերում, Պետհամալսարանի հրատ., Երևան:
2. Ա. Ղանալանյան.— Թշնամու կերպարը հայկական հին բանահյուսության մեջ, Արմֆանի հրատ., Երևան,
3. Ա. Ղանալանյան.— Հայ քաջորդիներ, Արմֆանի հրատ., Երևան:

1944

Հունվար

ՀՍԳ Միության կից կազմակերպվում է պաշտպանական պրակտիկան կոմիսիա Ն. Զարյանի նախագահությամբ. անդամներ՝ Մ. Քալաո, Հր. Քոչար, Գ. Բորյան:

Հունվար

«Սովետական գրականություն» ամսագրի № 1-ում սկսվում է տպագրվել Ստ. Զորյանի «Պապ Թադավոր» վեպը:

Փետրվարի 20-ին

Գրողների Տանը նշվում է Հ. Թումանյանի ծննդյան 75-ամյակը:

Ջեկուցում է Հ. Գրիգորյանը:

Հիշողություններով հանդես են գալիս՝ Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Գ. Լեոնյանը, Ստ. Չորյանը:

Փետրվարի 21-ին

Իր 22 մարտական ընկերների հետ Փարիզում դիպակոծարվեց Միսակ Մանուշյանը:

Փետրվարի 23-ին

Գերագույն Գլխավոր Հրամանատար ընկեր Ի. Վ. Ստալինի հրամանը:

Ի. Վ. Ստալինի հրամանից.

«Ընկեր կարմիրբանակայիննե՛ր, կարմիրնավատորմայիննե՛ր, սերժանտնե՛ր, սպանե՛ր և զինեթայնե՛ր: Ընկեր պարտիզաննե՛ր և պարտիզանուհինե՛ր.

Մեր հայրենիքի ազատության և անկախության համար մղվող ազատագրական մեծ պատերազմում դուք հերոսության հրաշքներ գործեցիք: Կարմիր բանակը վճռական շրջադարձ առաջ բերեց պատերազմի մեջ մեր օգտին և այժմ հաստատ գնում է դեպի վերջնական հաղթանակ ընդդեմ թշնամու: Թշնամին կրում է պարտության պարտության ետևից: Սակայն նա դեռևս չի ջախջախված: Հիտլերյան ավազակները տեսնելով իրենց կործանման մոտենալը և հատուցման անխուսափելիությունը մեր հողում իրենց կատարած բոլոր հրեշավոր չարագործությունների համար, դիմադրում են դատապարտվածի կատաղությամբ: Նրանք մարտի են նետում վերջին ուժերն ու ռեզերվները, կառչում են սովետական հողի յուրաքանչյուր մետրին, յուրաքանչյուր նպաստավոր բնածին:

Հենց դրա համար, որքան էլ մեծ են մեր հաջողությունները, մենք առաջվա նման պետք է լրջմտորեն գնահատենք թշնամու ուժերը, լինենք զգաստ, թույլ չտանք մեր շարքերում պարծենկոտություն, ինքնահանգստացում, անհոգություն: Պատերազմների պատմության մեջ դեռևս դեպք չի եղել, որ թշնամին ինքը յատկի անդունդը: Պատերազմը շահելու համար պետք է հակառակորդին մոտեցնել անդունդի եզրին և հրել նրան այնտեղ: Միայն իրենց ուժով անշեղորեն հարաճուն խորտակիչ հարվածները կարող են

կոտրել Բշնամու դիմադրությունը և մեզ հասցնել վերջնական հաղթանակի։ Դրա համար անհրաժեշտ է շարունակել կատարելագործել մեր բանակի մարտիկների մարտական ուսուցումը և հրամանատարների ռազմական հմտությունը։ Կարմիր Բանակը պարտքն է՝ յուրաքանչյուր օր բարձրացնել իր ռազմական արվեստը, անդուլ կերպով և ուշադիր ուսումնասիրել Բշնամու տակտիկան, հմտորեն և ժամանակին գուշակել նրա նենգ մտքերությունները, Բշնամու տակտիկային հակադրել մեր ավելի կատարյալ տակտիկան։ Անհրաժեշտ է, որ Կարմիր Բանակի առաջավոր զորամասերի և միավորումների մարտական փորձն ունեցածները դառնան մեր բոլոր զորքերի սեփականությունը, որպեսզի ամբողջ Կարմիր Բանակը, նրա բոլոր մարտիկներն ու սպաները սովորեն Բշնամուն խփել ժամանակակից ռազմական գիտության բոլոր կանոններով»։

Ի. Մաոլին. Սովետական Միության Հայրենական Մեծ Պատերազմի մասին, Հայպետհրատ, 1945, էջ 149—150։

Ապրիլի 28—30-ը

Երևանում տեղի է ունենում Շեքսպիրագիտության համամիութենական 6-րդ գիտա-հետազոտական կոնֆերենցիան։

Լսվում են հետևյալ զեկուցումները.

«Շեքսպիրագիտությունը Սովետական Միության մեջ» (զեկ. Մորոզով)։

«Վերածննդի շրջանի մարդու կերպարը» (զեկ. Ս. Կ. Ջիվիլեգով)։

«Շեքսպիրը և հայ թատրոնը» (զեկ. Լ. Քալանթար և Ս. Հարությունյան)։

«Շեքսպիրյան կերպարները Պ. Ադամյանի կատարմամբ» (զեկ. Ս. Մելիքսեթյան)։

«Շեքսպիրը հայ թատերագետների ընահատությամբ» (զեկ. Հ. Գյուլիքեվիչյան)։

«Շեքսպիրի երկերի հայերեն թարգմանությունները» (զեկ. Վ. Թերզիբաշյան)։

«Շեքսպիրյան պոետիկայի սկզբունքները երաժշտության մեջ» (զեկ. Ադամյան)։

«Շեքսպիրյան ֆեստիվալային ներկայացումների քննությունը» (զեկ. Յուզովսկի)։

Ֆեստիվալի կապակցությամբ Ստանդուկյանի անվան Պետ-

թատրոնում բացվում է ցուցահանդես «Շեքսպիրը և հայ թատրոնը» նյութի շուրջը։

Մայիսի 1-ին

Գերագույն Գլխավոր Հրամանատար ընկեր Ի. Վ. Ստալինի հրամանը։

Ի. Վ. Ստալինի հրամանից.

«Ընկեր կարմիրբանակայիննե՛ր և կարմիրնավատորմայիննե՛ր, սերժանտնե՛ր, սպանե՛ր ու գեներալնե՛ր, պարտիզաննե՛ր ու պարտիզանուհինե՛ր։ Սովետական Միության աշխատավորնե՛ր։ Գերմանական կեղեքիչների լծի տակ ժամանակավորապես ընկած և բռնի կերպով Գերմանիա Ֆաշիստական տաժանակրության քշված եղբայրնե՛ր ու քույրե՛ր։

Սովետական Կառավարության և մեր բոլշևիկյան պարտիայի անունից ողջունում և շնորհավորում եմ ձեզ Մայիսի 1-ի օրվա առթիվ։

Մեր երկրի ժողովուրդները Մայիսի 1-ի օրը դիմավորում են Կարմիր Բանակի նշանավոր հաջողությունների իրադրության մեջ։

Ստալինգրադի մոտ գերմանական դիվիզիաները ջախջախելու ժամանակից ի վեր Կարմիր Բանակը համարյա անընդհատ հարձակում է գործում։ Այդ ժամանակամիջոցում Կարմիր Բանակը մարտերով անցավ Վոլգայից մինչև Սերետը, Կովկասի նախալեռներից մինչև Կարպատները, ոչնչացնելով թշնամական աղտեղությունը և մաքրելով նրան սովետական հողից։

1943—1944 թ. թ. ձմեռային կամպանիայի ընթացքում Կարմիր Բանակը շահեց Դնեպրի ու Աջափնյա Ուկրաինայի համար մղված պատմական ճակատամարտը, խորտակեց գերմանացիների պաշտպանողական հզոր ամրությունները Լենինգրադի մոտ և Ղրիմում, հմուտ և սրընթաց գործողություններով հաղթահարեց գերմանական պաշտպանությունը Հարավային Բուգի, Դնեստրի, Պրուտի, Սերետի ջրային բնագծերի վրա։ Համարյա ամբողջ Ուկրաինան, Մոլդավիան, Ղրիմը, Լենինգրադի ու Կալինինի մարզերը, Բելոռուսիայի զգալի մասը մաքրված են գերմանական զավթիչներից։ Հայրենիքին են վերադարձվել Հարավի մետալուրգիան, Կրիվոյ Ռոգի, Կերչի և Նիկոպոլի հանքերը, Դնեպրի և Պրուտի միջև

ընկած արգավանդ հողերը։ Ֆաշիստական ստրկությունից ազատագրվել են տասնյակ միլիոնավոր սովետական մարդիկ։

Կատարելով հարազատ հողը ֆաշիստական զավթիչներից ազատագրելու մեծ գործը, Կարմիր բանակը հասավ Ռումինիայի ու Չեխոսլովակիայի հետ եղած մեր պետական սահմաններին և այժմ շարունակում է բշնամու զորքերին ջախջախել Ռումինիայի տերիտորիայում։

Ի. Ստալին, Սովետական Միության Հայրենական Մեծ Պատերազմի մասին, Հայպետհրատ, 1945, էջ 153—154։

Մայիսի 24—26-ին

Տեղի է ունենում Հայաստանի Սովետական Գրողների Միության պլենումը։

«Հայրենական պատերազմի շրջանի սովետահայ գրականության մասին» զեկուցում է Գ. Աբովը։

Ելույթներ են ունենում՝ Դ. Դեմիրճյանը, Ավ. Իսահակյանը, Մ. Շահինյանը, Էդ. Թոփչյանը, Ն. Զարյանը, Հ. Գրիգորյանը, Հ. Մամիկոնյանը և ուրիշները։

Վերջում ելույթ է ունենում ընկ. Զ. Գրիգորյանը։

Պլենումի աշխատանքներին մասնակցում է ՀԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Ս. Միքայելյանը։

Պլենումն ընտրում է Գրողների Միության Նախագահության հետևյալ կազմով՝ Ավ. Իսահակյան, Գ. Դեմիրճյան, Ն. Զարյան (նախագահ), Ստ. Զորյան, Գ. Սարյան, Էդ. Թոփչյան (պատ. քարտուղար), Գ. Բորյան, Արապի, Հ. Գրիգորյան, Հ. Մամիկոնյան, Վ. Գրիգորյան, Արաքս, Ա. Հովհաննիսյան։

Հունիսի 3-ին

Գրողների Տանը կազմակերպվում է Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» վեպի քննարկումը։

Զեկուցում է Էդ. Թոփչյանը։

Ելույթներ են ունենում՝ Ավ. Իսահակյանը, Գ. Լևոնյանը, Հ. Գյուլիքեվխյանը, Ս. Վահունին, Գ. Սևակը, Հ. Շիրազը, Հ. Մամիկոնյանը, Հ. Հարությունյանը, Ռ. Վարդազարյանը, Հ. Մելիքյանը, Ս. Տարոնցին, Ա. Կարապետյանը, Ս. Այվազյանը, Վ. Թերզիբաշյանը։

Նիսան ամփոփում է Ն. Զարյանը։

Հունիսի 3-ին

Գրողների Տանը Մ. Շահինյանը զեկուցում է «Սովետական պրոզի աշխատանքը պատերազմի օրերին» նյութի մասին։

Ելույթներ են ունենում՝ Ավ. Իսահակյանը, Ստ. Զորյանը և Ն. Զարյանը։

Հունիսի 5-ին

Հայկական ՍՍՌ Գիտ. Ակադեմիայի Գրականության Ինստիտուտում Մ. Շահինյանը զեկուցում է «Գրողի աշխատանքի մեթոդոլոգիան գիտական թեմայի վրա» նյութի մասին։

Հունիսի 12-ին

Երևան է ժամանում 89-րդ Թամանյան դիվիզիայի պատվիրակությանը դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի գլխավորությամբ։

Հուլիսի 15-ին

Նշվում է Ա. Պ. Չեխովի մահվան 40-ամյակը։

Բացման խոսք է ասում Ստ. Զորյանը։

Զեկուցում է Տ. Հախումյանը։

Ելույթներ են ունենում՝ Ե. Սարգսյանը, Ռ. Հովհաննիսյանը, Թիգալը։

Հուլիսի 21-ին

Գրողների Տանը Վելեդնիցկին զեկուցում է հրեական սովետական պոեզիայի մասին։

Հուլիսի 29-ին

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինին պարգևատրում է «Հաղթանակ» շքանշանով։

Օգոստոսի 2-ին

Գրողների Տանը կազմակերպվում է Գ. Սարյանի «Բալլադներ» գրքի քննարկումը։

Զեկուցում է Ռ. Վարդազարյանը։

Ելույթներ են ունենում՝ Աս. Ասատրյանը, Վ. Թերպիքաշյանը, Էդ. Թոփչյանը, Գ. Հովսեփյանը։

Օգոստոսի 15-ին

Մոսկվայի գրողների ակումբում կազմակերպվում է Ն. Զարյանի ստեղծագործական երեկոն։

Ներածական խոսք է ասում Մ. Շահինյանը։

Զեկուցում է Պ. Անտոկոլսկին։

Ն. Զարյանից կատարած իրենց թարգմանություններով հանդես են գալիս՝ Ս. Լիսկինը, Վ. Զվյագինցևան, Մ. Պետրովիխը, Պ. Անտակոլսկին, Վ. Դերժավինը։

Վերջում Ն. Զարյանը կարդում է «Զայն հայրենական» պոեմից մի գլուխ։

Օգոստոսի 26-ին

Գրողների Տանը կազմակերպվում է Հր. Հովհաննիսյանի ստեղծագործական երեկոն։

Ներածական խոսք է ասում Ա. Գողոսյանը։

Մտքերի փոխանակությանը մասնակցում են՝ Ստ. Զորյանը, Հ. Մելիքյանը, Գ. Էմինը, Վ. Խեչումյանը, Ս. Տարոնցին, Վ. Թերզիբաշյանը։

Սեպտեմբերի 6-ին

Գրողների Տանը տեղի է ունենում Հ. Մկրտչյանի ստեղծագործական երեկոն։

Մտքերի փոխանակությանը մասնակցում են՝ Ա. Սարգսյանը, Ստ. Զորյանը, Գ. Սարյանը, Հ. Մելիքյանը, Գ. Աբովը, Մ. Մանվելյանը, Ա. Արաքսմանը և ուրիշները։

Սեպտեմբերի 19-ին և 21-ին

Գրողների Տանը Ա. Սարգսյանը դեկուցում է «Սովետահայ արդի գրականության մի քանի խնդիրների» նյութի մասին։

Մտքերի փոխանակությանը մասնակցում են՝ Աղայենին, Ս. Տարոնցին, Ա. Այվազյանը, Աս. Ասատրյանը, Վ. Թերզիբաշյանը, Հ. Գյուլիքեվխյանը, Հ. Մամիկոնյանը, Էդ. Թոփչյանը։

Ամփոփում է Ն. Զարյանը։

Սեպտեմբերի 25-ին

Վախճանվեց Մանուկ Աբեղյանը։

Հոկտեմբերի 1-ին

Հրապարակվում է ՀՍՍՌ ժողկոմսովետի որոշումը հանգույցյալ

ակադեմիկոս Մ. Խ. Աբեղյանի հիշատակը հավերժացնելու մասին։

Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետի որոշումով Գիտությունների Ակադեմիայի Գրականության Ինստիտուտը անվանվում է Մ. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտ։

Հոկտեմբերի 7-ին

Վախճանվեց Մինաս Մանվելյանը։

Հոկտեմբերի 29-ին

Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտը կազմակերպում է դիտական սեանս՝ նվիրված Վ. Բրյուսովի մահվան 20-ամյակին։

Բացման խոսք է ասում Խ. Սարգսյանը։

Զեկուցում են.

1. Լ. Այվազյան՝ «Վ. Բրյուսովի ստեղծագործական ուղին».

2. Ս. Երեմյան՝ «Վ. Բրյուսովը հայ ժողովրդի պատմաբան».

3. Ռ. Վարդազարյան՝ «Վ. Բրյուսովը հայ գրականության պատմաբան»։

Հոկտեմբերի 30-ին

Գրողների Տանը կազմակերպվում է Հովհ. Հովհաննիսյանին հիշատակին նվիրված երեկո։

Զեկուցում է Ռ. Զարյանը։

Հուշեր է պատմում Ավ. Իսահակյանը։

Նոյեմբերի 2-ին

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի 27-րդ տարեդարձը։

Պաշտպանության Պետական Կոմիտեի Նախագահ ընկեր Ի. Վ. Ստալինի զեկուցումը Աշխատավորների Դեպուտատների Մոսկվայի Սովետի հանդիսավոր նիստում։

Ի. Վ. Ստալինի զեկուցումից.

«Եթե կարմիր բանակը կարողացավ հաջողությամբ կատարել իր պարտքը Հայրենիքի հանդեպ և գերմանացիներին դուրս վռնդեց սովետական հողի սահմաններից, ապա նա այդ արեց շնորհիվ այն բանի, որ թիկունքից նրան անձնվիրաբար պաշտպանում էին մեր ամբողջ երկիրը, մեր երկրի բոլոր ժողովուրդները։ Սովետական

բոլոր մարդկանց՝ բանվորների, գյուղացիների, ինտելիգենցիայի անձնվեր աշխատանքը, ինչպես նաև մեր պետական և պարտիական օրգանների ղեկավարող գործողությունը անցած տարում ընթանում էր «ամեն ինչ ռազմաճակատի համար» դրոշով:

Անցած տարին նշանավորվեց արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի նորանոր հաջողություններով, մեր ռազմական տնտեսության նոր վերելքով:

Պատերազմի չորրորդ տարում մեր գործարանները մի քանի անգամ ավելի շատ տանկ, ինքնաթիռ, հրանոթ, ականանետ, ռազմամթերք են արտադրում, քան պատերազմի սկզբում: Հետևում է մնացել գյուղատնտեսության վերականգնման առավել դժվարին ժամանակաշրջանը: Դոնի և Կուբանի արգավանդ դաշտերը երկրին վերադարձվելուց հետո, Ուկրաինայի ազատագրումից հետո, մեր գյուղատնտեսությունն արագ կազդուրվում է կրած ծանր կորուստներից: Սովետական երկաթուղային տրանսպորտը դիմացավ այնպիսի ծանրաբեռնվածության, որին հազիվ թե դիմանար ուրիշ երկրի տրանսպորտ: Այս բոլորը վկայում է, որ սովետական պետության տնտեսական հիմքը անհամեմատ ավելի կենսունակ դուրս եկավ, քան թշնամի պետությունների էկոնոմիկան:

Հոկտեմբերյան revolutsiայի շնորհիվ ստեղծված սոցիալիստական հասարակակարգը մեծ և անպարտելի ուժ տվեց մեր ժողովրդին և մեր բանակին: Չնայած պատերազմի ծանր լծին, չնայած երկրի շատ մեծ և տնտեսապես կարևոր շրջանների ժամանակավոր օկուպացմանը գերմանացիների կողմից, սովետական պետությունը պատերազմի ընթացքում չէր կրճատում, այլ տարեցտարի ավելացնում էր սպառազինության ու ռազմամթերքի մատակարարումը ռազմաճակատին: Այժմ Կարմիր Բանակը ո՛չ թե պակաս, այլ ավելի շատ տանկ, հրանոթ, ինքնաթիռ ունի, քան գերմանական բանակը: Ինչ վերաբերում է մեր մարտական տեխնիկայի որակին, ապա այդ տեսակետից նա շատ բանով գերազանցում է թշնամու սպառազինությունից: Ճիշտ այնպես, ինչպես Կարմիր Բանակը մեկ ընդդեմ մեկի մղվող երկարատև ու ծանր պայքարում ռազմական հաղթանակ տարավ ֆաշիստական զորքերի դեմ, սովետական թիկունքի աշխատավորները հիտլերյան Գերմանիայի ու նրա գործակիցների դեմ իրենց մենամարտում տնտեսական հաղթանակ տարան թշնամու նկատմամբ: (Բուռն ծափահարություններ): Ս-

688—37

վետական մարդիկ զրկում էին իրենց շատ անհրաժեշտ բաներից, դիտակցաբար դիմում էին նյութական լուրջ զրկանքների, որպեսզի ավելի շատ բան տան ռազմաճակատին: Ներկայիս պատերազմի անօրինակ դժվարությունները չընկճեցին, այլ է՛լ ավելի կոփեցին սովետական ժողովրդի երկաթե կամքը և առնական ոգին: Մեր ժողովուրդը իրավամբ նվաճեց հերոսական ժողովրդի հռչակ:

Մեր բանվոր դասակարգն իր բոլոր ուժերը նվիրաբերում է հաղթանակի գործին, անընդհատ կատարելագործում է արտադրության տեխնիկան, ավելացնում արդյունաբերական ձեռնարկությունների կարողությունը, կառուցում նորանոր ֆաբրիկաներ ու գործարաններ: Սովետական Միության բանվոր դասակարգը աշխատանքային մեծ սխրագործություն կատարեց ներկայիս պատերազմում:

Մեր ինտելիգենցիան համարձակ կերպով ընթանում է նավատորության ուղիով տեխնիկայի ու կուլտուրայի ասպարեզում, հաջողությամբ զարգացնում և առաջ է տանում ժամանակակից գիտությունը, ստեղծագործորեն կիրառում է նրա նվաճումները Կարմիր Բանակի համար ռազմատեխնության արտադրության մեջ: Սովետական ինտելիգենցիան իր ստեղծագործ աշխատանքով անդնահատելի ավանդ ներդրեց թշնամուն ջախջախելու գործում:

Բանակը չի կարող պատերազմել և հաղթել առանց ժամանակակից ռազմատեխնության: Սակայն նա չի կարող նաև պատերազմել և հաղթել առանց հացի, առանց պարենամթերքի: Կարմիր Բանակը պատերազմի չորրորդ տարում, կոլխոզային գյուղացիության հոգատարության շնորհիվ, պարենամթերքի պակաս չի զգում: Կոլխոզնիկները և կոլխոզնիկուհիները բանվորներին և ինտելիգենցիային մատակարարում են պարենամթերք, իսկ արդյունաբերությանը՝ հումք, ապահովում են ռազմաճակատի համար սպառազինության և հանդերձանք պատրաստող գործարանների ու ֆաբրիկանների նորմալ աշխատանքը: Մեր կոլխոզային գյուղացիությունը ակտիվորեն և Հայրենիքի հանդեպ իր պարտքն լիակատար գիտակցությամբ Կարմիր Բանակին օգնում է թշնամու դեմ հաղթանակ տանելու գործում:

Պատմության մեջ ընդմիշտ կմտնեն ֆաբրիկաներում ու գործարաններում, կոլխոզներում ու սովխոզներում աշխատանքի հիմնական ծանրությունն իրենց ուսերի վրա կրած սովետական կա-

նանց ու մեր պանծալի երիտասարդության աշխատանքային անօրինակ սխրագործությունները։ Հանուն Հայրենիքի պատվի և անկախության սովետական կանայք, պատանիներն ու աղջիկները արիություն ու հերոսություն են հանդես բերում աշխատանքի ճակատում։ Նրանք արժանի գտնվեցին իրենց հայրերին ու զավակներին, ամուսիններին ու եղբայրներին, որոնք Հայրենիքը պաշտպանում են գերմանա-ֆաշիստական ճիվաղներից։

Թիկունքում սովետական մարդկանց աշխատանքային սխրագործությունների, ինչպես նաև ռազմաճակատում մեր ռազմիկների մարտական անթառամ սխրագործությունների աղբյուրը սովետական ջերմ և կենսատու հայրենասիրությունն է։

Սովետական հայրենասիրության ուժն այն է, որ նրա հիմքը ո՛չ թե ռասայական կամ նացիոնալիստական նախապաշարմունքներն են, այլ ժողովրդի խորին նվիրվածությունն ու հավատարմությունը իր սովետական Հայրենիքին, մեր երկրի բոլոր ազգերի աշխատավորության եղբայրական համագործակցությունը։ Սովետական հայրենասիրության մեջ ներդաշնակորեն զուգակցվում են ժողովուրդների ազգային տրադիցիաները և Սովետական Միության բոլոր աշխատավորների ընդհանուր կենսական շահերը։ Սովետական հայրենասիրությունը մեր երկրի բոլոր ազգերին ու ժողովուրդներին չի բաժանում, այլ ընդհակառակը՝ համախմբում է եղբայրական միասնական ընտանիքի մեջ։ Դրա մեջ պետք է տեսնել Սովետական Միության ժողովուրդների անխորտակ և ավելի ու ավելի ամրապնդվող բարեկամության հիմքերը։ Միևնույն ժամանակ ՍՍՌՄ ժողովուրդները հարգում են արտասահմանյան երկրների ժողովուրդների իրավունքներն ու անկախությունը և շարունակ պատրաստակամություն են ցույց տվել հաշտ ու համերաշխ ապրելու հարևան պետությունների հետ։ Դրա մեջ պետք է տեսնել ազատասեր ժողովուրդների հետ մեր պետության աճող և ամրապնդվող կապերի հիմքը։

Սովետական մարդիկ ատում են գերմանական զավթիչներին ո՛չ թե նրա համար, որ նրանք օտար ազգի մարդիկ են, այլ նրա համար, որ նրանք անթիվ-անհամար աղետներ ու տառապանքներ բերեցին մեր ժողովրդին և բոլոր ազատասեր ժողովուրդներին։ Մեր ժողովրդի մեջ հնուց ի վեր ասում են. «Գայլին սատկեցնում են ոչ թե նրա համար, որ ունի գորշ ագի, այլ նրա համար, որ կերել է մաքի» (Ծիծաղ: Երկարատև ծափահարություններ):

Գերմանական ֆաշիստները իրենց համար իդեոլոգիական դեներ են դարձրել ռասայական մարդատյաց տեսությունը, այն հույսով, որ գազանային նացիոնալիզմի քարոզը բարոյական-քաղաքական նախապրյալներ կստեղծի ստրկացված ժողովուրդների վրա գերմանական զավթիչների տիրապետությունը հաստատելու համար: Սակայն հիտլերականների վարած ռասայական տեսության քաղաքականությունը դատնակնում դարձավ գերմանա-ֆաշիստական պետության ներքին թուլության և արտաքին-քաղաքական մեկուսացման աղբյուրը: Ռասայական տեսության իդեոլոգիան ու քաղաքականությունը հիտլերյան ավազակային բլոկի քայքայման գործոններից մեկն են հանդիսանում: Պատահական չէ այն փաստը, որ գերմանական իմպերիալիստների դեմ ոտքի կանգնեցին ո՛չ միայն Ֆրանսիայի, Հարավսլավիայի, Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Հունաստանի, Բելգիայի, Դանիայի, Նորվեգիայի, Հոլանդիայի ստրկացված ժողովուրդները, այլ նաև Հիտլերի նախկին վասալները՝ իտալացիները, ռումինացիները, ֆիննները, բուլղարները: Հիտլերյան կլիկն իր մարդատյաց քաղաքականությամբ Գերմանիայի դեմ հանեց աշխարհի բոլոր ժողովուրդներին, իսկ այսպես կոչված «գերմանական ընտրյալ ռասան» դարձավ ընդհանուր ատելության առարկան:

Պատերազմի ընթացքում հիտլերականները կրեցին ո՛չ միայն ռազմական, այլև բարոյա-քաղաքական պարտություն: Մեր երկրում հաստատված բոլոր ռասաների ու ազգերի իրավահավասարության իդեոլոգիան, ժողովուրդների բարեկամության իդեոլոգիան հավատարի հաղթանակ տարավ հիտլերականների գազանային նացիոնալիզմի և ռասայական տեսության իդեոլոգիայի դեմ:

Այժմ, երբ Հայրենական պատերազմը գնում է դեպի հաղթական վախճանը, ամբողջ մեծությամբ երևան է գալիս սովետական ժողովրդի պատմական դերը:

Այժմ ամենքը խոստովանում են, որ սովետական ժողովուրդը իր անձնազոհ պայքարով Եվրոպայի քաղաքակրթությունը փրկեց ֆաշիստական ջարդարարներից: Այդ է սովետական ժողովրդի մեծ ծառայությունը մարդկության պատմության առաջ»:

Ի. Ստալին, Սովետական Միության Հայրենական Մեծ Պատերազմի մասին, Հայպետհրատ, 1945, էջ 166—171:

Նոյեմբերի 13-ին

Գրողների Տանը Մ. Շահինյանը զեկուցում է Ա. Ի. Կռիլովի ստեղծագործության մասին։

Նոյեմբերի 20-ին

Տեղի է ունենում արտասահմանի հետ Կուլտուրական Կապի Հայկական Ընկերության ժողովը։

Ընտրվում է ընկերության վարչություն. Վ. Համբարձումյան, Ջ. Բաշինջաղյան, Հ. Դանիելյան, Խ. Գյուլբեկյան, Հ. Գրիգորյան, Ա. Մելիք-Ադամյան, Մ. Պետրոսյան, Եղ. Թոփչյան, Ա. Շավարշյան։

Նոյեմբերի 21-ին

Հայֆիլհարմոնիայի դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր նիստ նվիրված Ա. Ի. Կռիլովի մահվան 100-ամյակին։

Բացման խոսք է ասում Ավ. Իսահակյանը։

Զեկուցում է Ա. Տերտերյանը։

Դեկտեմբեր

Սկսում է վերահրատարակվել «Գրական թերթը»։

Դեկտեմբերի 13-ին

Գիտությունների Ակադեմիայի դահլիճում կազմակերպվում է գիտական սեսիա՝ նվիրված Վոլտերի ծննդյան 250-ամյակին։

Զեկուցում են.

1. Խ. Սամճյան՝ «Վոլտերը՝ ֆրանսիական 18-րդ դարի լուսավորության կորիֆեյ»։

2. Հ. Մամիկոնյան՝ «Վոլտերը որպես գրող»։

Դեկտեմբերի 30-ին

Վախճանվեց Ռոմեն Ռոլլանը։

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Չափածո

1. *Գ. Սարյան.— Բալլադներ, Հայպետհրատ, Երևան։*
2. *Գ. Սարյան.— Փառքի տաճարը, Հայպետհրատ, Երևան։*
3. *Վեսպեր.— Այգն է բացվում, Հայպետհրատ, Երևան։*

4. Ս. Տարոնցի.— Կրակի քառուղիներով, Հայպետհրատ, Երևան:
5. Ս. Տարոնցի.— Ասպետ Լիպարիտ, Հայպետհրատ, Երևան:
6. Սարմեն.— Հայրենիք, Հայպետհրատ, Երևան:
7. Ա. Գրաշի.— Կռունկ, Սպերնիշներ, Բաքու:
8. Աղամնի.— Իմ տաղարանը, Հայպետհրատ, Երևան:
9. Ս. Գրիգորյան.— Մոր սիրտը, Հայպետհրատ, Երևան:
10. Ա. Շայբոն.— Հայրենական լիրիկա, Հայպետհրատ, Երևան:
11. Սերինե.— Հազարան բլբուլ, Պետհրատ, Երևան:

Արձակ

1. Մտ. Չորյան.— Պապ թագավոր, Հայպետհրատ, Երևան:
2. Մտ. Չորյան.— Փոքրիկ պատմվածքներ, Հայպետհրատ, Երևան:
3. Արաքի.— Անհաղթները, Հայպետհրատ, Երևան:
4. Մ. Դավթյան.— Ծիրանի ծառ, Սպերնիշներ, Բաքու:
5. Արաքս.— Ամենակրտսերը, Հայպետհրատ, Երևան:
6. Լ. Թարդյուլ.— Լուսնի սոնատ, Հայպետհրատ, Երևան:
7. Գ. Բես.— Կրակ, Հայպետհրատ, Երևան:
8. Ա. Սահինյան.— Բարեկամներ, Հայպետհրատ, Երևան:
9. Բ. Շահումյան.— Աստղերը կմնան երկնքում, Հայպետհրատ, Երևան:

Գրականության պատմության, տեսության և ճնճաղատության

1. Մ. Աբեղյան.— Հայոց հին գրականության պատմության, I հ., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երևան:
2. Ա. Տերտերյան.— Վալերի Բրյուսովը և հայ կուլտուրան, Հայպետհրատ, Երևան:
3. Ա. Տերտերյան.— Ռուս մեծ առաձախոս-բանաստեղծը, Հայպետհրատ, Երևան:
4. Ա. Տերտերյան.— Հայ կլասիկներ, Հայպետհրատ, Երևան:
5. Գ. Լևոնյան.— Աշուղները և նրանց արվեստը, Հայպետհրատ, Երևան:

7. Գ. Սահինյան.— Պ. Ադամյան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երևան։

Թարգմանություններ

1. Վ. Շեքսպիր.— Հուլիոս Կեսար, Հայպետհրատ, Երևան։
2. Ի. Կռիլով. —Առակներ, Հայպետհրատ, Երևան։
3. Ի. Էրենբուրգ.— Փարիզի անկումը, Հայպետհրատ, Երևան։

1945

Հունվարի 8-ին

Գրողների Տանը կազմակերպվում է երեկո նվիրված Վ. Տեր-
յանի մահվան 25-ամյակին։

Զեկուցում է Էդ. Թոփչյանը։

Ելույթներ են ունենում Ստ. Զորյանը և Ն. Զարյանը։

Հունվարի 13-ին

Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտը կազմակերպում է պիտակի սեսիա՝ նվիրված Ա. Ս. Գրիբոյեդովի ծննդյան 150-ամյակին։

Զեկուցում են.

Ռ. Վարդազարյան՝ «Գրիբոյեդովը՝ ռուս մեծ դրամատուրգ»։

Գ. Աբով՝ «Գրիբոյեդովի գեղարվեստական խոսքը և Սունդուկյանը»։

Հունվարի 15-ին

Տոնվում է Ա. Ս. Գրիբոյեդովի ծննդյան 150-ամյակը։

Բացման խոսք է ասում Ստ. Զորյանը։

Զեկուցում է Տ. Հախումյանը։

Հունվարի 24-ին

Նշվում է Ա. Վշտունու գրական-գործունեության 30-ամյակը։

Զեկուցում է Աս. Ասատրյանը։

Փետրվարի 23-ին

Վախճանվեց Ալեքսեյ Նիկոլաևիչ Տոլստոյը։

Մարտի 3-ին

Գրողների Տանը Ալ. Տոլստոյի հիշատակին կազմակերպվում է սգո երեկո։

Զեկուցում է Ռ. Վարդազարյանը։

Մարտի 4-ին

Գրողների Տանը Ալ. Սուրխովը զեկուցում է «Литературная газета» յի խմբագրության անելիքների մասին։

Ելույթներ են ունենում՝ Ն. Զարյանը, Տ. Հախումյանը, Մ. Հարությունյանը և ուրիշներ։

Մարտի 5-ին

Գրողների Տանը տոնվում է Գ. Սարյանի գրական գործունեության 25-ամյակը։

Բացման խոսք է ասում Ստ. Զորյանը։

Զեկուցում է Տ. Հախումյանը։

Ելույթներ են ունենում՝ Ն. Զարյանը, Ալ. Սուրխովը, Արաքին, Աղայենին, Ս. Վահունին, Ս. Տարոնցին.

Գ. Սարյանին նվիրված իրենց բանաստեղծություններով հանդես են գալիս Սարմենն ու Ս. Կապուտիկյանը։

Մարտի 8-ին

Պետհամալսարանում Ալ. Սուրխովը զեկուցում է «Հայրենական պատերազմի լիրիկան» նյութի մասին։

Մարտի 15-ին

Գրողների Տանը կազմակերպվում է պոեզիայի երեկո։

Իրենց բանաստեղծություններով հանդես են գալիս Գ. Բոյանը, Ս. Տարոնցին, Գ. Էմինը, Ս. Կապուտիկյանը, Հ. Շիրազը։

Ապրիլի 26-ին

Պետթատրոնում տոնվում է Գ. Դեմիրճյանի գրական գործունեության 50-ամյակը։

Բացման խոսք է ասում Ն. Զարյանը։

Զեկուցում է Էդ. Թումյանը։

Ելույթներ են ունենում՝ Գ. Սարյանը, Վ. Համբարձումյանը, Գ. Ջանիբեկյանը, Ս. Հարությունյանը, Ա. Ալեխսյանը, Հայ-Արտյանը և ուրիշները։

Ժողկոմատների որոշմամբ Երևանի № 27 իգական դպրոցը անվանվում է Դ. Դեմիրճյանի անվան դպրոց։

Ապրիլի 30-ին

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագրով դեղարվեստական գրականության ասպարեզում ունեցած ընկնող ծառայությունների համար, իր գրական գործունեության 50-ամյակի կապակցությամբ, Գևորգիկ Դեմիրճյանը պարգևատրվում է Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով։

Մայիսի 8-ին

Ցաշխատական Գերմանիան իրեն պարտված է ճանաչում և հայտարարում է անվերապահ կապիտուլյացիա։

Մայիսի 9-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի դիմումը ժողովրդին։

Ի. Վ. Ստալինի դիմումից.

«Մեր Հայրենիքի ապատության և անկախության համար մեր մեծ զոհաբերությունները, պատերազմի ընթացքում մեր ժողովրդի կրած անթիվ-անհամար զրկանքներն ու տառապանքները, Հայրենիքի զոհասեղանին նվիրված լարված աշխատանքը թիկունքում և ռազմաճակատում՝ ապարդյուն չանցան և պսակվեցին լիակատար հաղթանակով ընդդեմ թշնամու։ Իրենց գոյության և իրենց անկախության համար սլավոնական ժողովուրդների մղած. դարավոր պայքարը վերջացավ հաղթանակով ընդդեմ գերմանական զավթիչների և գերմանական բռնապետության։

Այժմվանից Եվրոպայի վրա կծածանվի ժողովուրդների ապատության և ժողովուրդների միջև խաղաղության մեծ դրոշը»...

«Ընկերնե՛ր։ Հայրենական մեծ պատերազմը ավարտվեց մեր լիակատար հաղթանակով։ Պատերազմի ժամանակաշրջանը Եվրոպայում վերջացավ։ Սկսվեց խաղաղ զարգացման ժամանակաշրջանը»։

«Սովետական Հայաստան», 10 մայիսի, 1945։

Մայիսի 15-ին

Մոսկվայում բացվում է ՍՍՌՄ Սովետական Գրողների Միության 10-րդ պլենումը։

Պլենումում ելույթ են ունենում Ն. Զարյանը («Սովետական գրականության մեծ խոսքը») և Էդ. Թոփչյանը («Սովետական Հայաստանի գրականությունը Հայրենական Պատերազմի շրջանում»)։

Մայիսի 24–ին

Մ. Շոլոխովի ծննդյան 40-ամյակի կապակցությամբ Գրողների Տանը կազմակերպվում է հանդիսավոր երեկո։

Բացման խոսք է ասում Սրապիոն։

Զեկուցում է Ռ. Համզաթովը։

Մայիսի 24–ին

Կարմիր Բանակի գործերի հրամանատարների ընդունելությունը կրեմլում։

Մայիսի 24–ին

Մոսկվայի Հայկական Կուլտուրայի տանը կազմակերպվում է հայ պոեզիայի երեկո։

Ներածական խոսք է ասում Մ. Շահինյանը՝ «Հայ պոեզիան Հայրենական Պատերազմի տարիներին»։

Բարդմանիչներ Մ. Պետրովիխն ու Վ. Զվյագինցեվան և արտիստներ Բալաշևն ու Օբուխովան կարդում են հայ պոետների բանաստեղծությունները՝ ռուսերեն թարգմանությամբ։

Մայիսի 25–ին

Վախճանվեց Դեմյան Բեդնին (Ծֆիմ Ալեքսեևիչ Պրիդվորով)։

Հունիսի 24–ին

Հաղթանակի զորահանդեսը Մոսկվայի Կարմիր Հրապարակում։

Հունիսի 26–ին

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագիրը Սովետական Միության Մարշալ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինին «Հաղթանակ» շքանշանով պարգևատրելու մասին։

Հունիսի 26–ին

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագիրը

Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին։

Հունիսի 27-ին

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագիրը Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինին Սովետական Միության Գեներալիսիմուսի զինվորական բարձրագույն կոչում շնորհելու մասին։

Հուլիսի 15-ին

Թումանյան գյուղում բացվում է Հովհ. Թումանյանի արձանը (գործ Ուլուխանովի)։

Հուլիսի 26-ին

Ավ. Իսահակյանին Լենինի շքանշանով պարգևատրելու առթիվ Գրողների Տանը կազմակերպվում է միտինգ։

Բացման խոսք է ասում Ն. Զարյանը։

Ելույթներ են ունենում՝ Գ. Սարյանը, Ստ. Զորյանը, Հ. Զատնալանյանը, Արագին, Գ. Էմինը, Հ. Շիրազը, Ս. Կապուտիկյանը։ Վերջում ելույթ է ունենում Ավ. Իսահակյանը։

Ավ. Իսահակյանի խոսքից.

«Ես մեծ հպարտությամբ պիտի կրեմ սովետական կառավարության կողմից ինձ տրված Լենինի շքանշանը։

Փա՛ռք Մեծ Ստալինին»։

Հուլիսի 30-ին

Օպերայի և Բալետի Պետթատրոնում տոնվում է Ավ. Իսահակյանի ծննդյան 70-ամյակը։

Բացման խոսք է ասում Ստ. Զորյանը։

Զեկուցում է Ս. Հարությունյանը։

Ելույթներ են ունենում՝ Ս. Սահակյանը, Ա. Տերտերյանը, Ն. Զարյանը, Հ. Դանիելյանը, Արա Սարգսյանը, Գ. Զանիբեկյանը, Հ. Ստեփանյանը և ուրիշները։

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության որոշմամբ Ղաղարապատ գյուղը վերանվանվում է՝ Իսահակյան։

Օգոստոսի 12-ին

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահությունը հատուցաց Հայկական ՍՍՌ Պետական Հիմնը։

Սեպտեմբերի 2-ին

Ճապոնիայի պետական և զինվորական ներկայացուցիչները ստորագրում են անվերապահ կապիտուլյացիայի ակտը։

Ընկեր Ի. Վ. Ստալինի դիմումը ժողովրդին։

Ի. Վ. Ստալինի դիմումից.

«Մեր սովետական ժողովուրդը ուժ և աշխատանք չի խնայել հանուն հաղթանակի։ Մենք ապրել ենք ծանր տարիներ։ Բայց այժմ մեզնից յուրաքանչյուրը կարող է ասել՝ մենք հաղթեցինք։ Այժմյանից մենք կարող ենք մեր Հայրենիքը տրկված համարել Արևմուտքում՝ գերմանական արշավանքի և Արևելքում՝ ճապոնական արշավանքի սպառնալիքից։ Հասավ բաղձալի խաղաղությանը ամբողջ աշխարհի ժողովուրդների համար։

Շնորհավորում եմ Ձեզ, իմ քաջարի հայրենակիցնե՛ր և հայրենակցուհինե՛ր, մեծ հաղթանակի առթիվ, պատերազմի հաջող ավարտման, ամբողջ աշխարհում խաղաղության հաստատման առթիվ»։

Սեպտեմբերի 25-ին

Օպերայի և բալետի Պետական թատրոնում նշվում է Սայաթ-Նովայի մահվան 150-ամյակը։

Բացման խոսք է ասում Գ. Աբովը։

Զեկուցում է Ս. Հարությունյանը։

Ելույթներ են ունենում՝ Ա. Տերտերյանը, Գ. Լևոնյանը, Հ. Ստեփանյանը, Ի. Գրիշաշվիլին, Աբաշին։

Սեպտեմբերի 26-ին, 27-ին

Մ. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտի և Գրողների Միության նախաձեռնությամբ կազմակերպվում է գիտական սեսիա՝ նվիրված Սայաթ-Նովայի մահվան 150-ամյակին։

Զեկուցում են.

Ս. Հարությունյան՝ «Սայաթ-Նովան գրական-հասարակական մտքի պատմության մեջ».

Ս. Դանալյան՝ «Սայաթ-Նովայի պոեմիկայի ֆոլկլորային աղբյուրները».

Ա. Դարիբյան՝ «Սայաթ-Նովայի լեզուն».

Բարսամիձե՝ «Սայաթ-Նովան քսան վրացական աղբյուրներում».

Գ. Արասլի՝ «18-րդ դարի ազրբեջանական պոեզիան և Սայաթ-Նովան».

Մ. Հասրաթյան՝ «Սայաթ-Նովայի ազրբեջանական երգերը»։

Սեպտեմբերի 30-ին

Թբիլիսիի ս. Գևորգ եկեղեցու բակում կազմակերպվում է միտինգ նվիրված Սայաթ-Նովայի մահվան 150-ամյակին։

Ջնկուցում է Ս. Ավչյանը։

Սայաթ-Նովայի գերեզմանի վրա դրվում են պսակներ։

Հոկտեմբերի 18-ին

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի դահլիճում կազմակերպվում է Մ. Աբեղյանի հիշատակին նվիրված երեկո։

Բացման խոսք է ասում Ա. Սարգսյանը։

Ջեկուցում է Ն. Տեր-Մինասյանը։

Հիշողություններով հանդես են գալիս՝ Ս. Սահակյանը, Տեր-Պողոսյանը և Ն. Զարյանը։

Հոկտեմբերի 22-ին

Գրողների Տանը կազմակերպվում է Վ. Խեչումյանի «Զվարթնոց» դրքի քննարկումը։

Ջեկուցում է Ռ. Զարյանը։

Ելույթ են ունենում՝ Ա. Սարգսյանը, Ն. Զարյանը, Էդ. Թոփչյանը։

Հոկտեմբերի 25-ին

Երևան է ժամանում անգլիացի գրող Ջոն Բոյտոն Պրիստլին։

Նոյեմբերի 6-ին

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի 28-րդ տարեդարձը։

Ընկեր Վ. Մ. Մոլոտովի ղեկուցումը Մոսկվայի Սովետի հանդիսավոր նիստում։

Վ. Մ. Մոլոտովի զեկուցումից.

«Ընկերնե՛ր, մի քանի տարիների ծանր պատերազմից հետո Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի 28-րդ տարեդարձը մենք այսօր առնում ենք խաղաղ իրադրության մեջ և ֆա-

չիզմի դեմ տարած փառավոր հաղթանակի պայմաններում։ (Ստափահարություններ)։

Անցյալի դիրքին են անցել պատերազմի չորս տարիները հիտլերյան Գերմանիայի դեմ, որ խոշտանգում էր մեր երկիրն ու ամբողջ Եվրոպան, ինչպես նաև պատերազմն Արևելքում ագրեսիվ Ճապոնիայի դեմ, որի մեջ մենք պետք է մտնեինք այս տարվա աշնանը։ Հերոսական պայքարում, որի մեջ սովետական ժողովրդին վճռական տեղ է պատկանում, խաղաղություն նվաճելից ամբողջ աշխարհի ժողովուրդների համար, լիկվիդացվեցին համաշխարհային ֆաշիզմի և համաշխարհային ագրեսիայի գլխավոր օջախները Արևմուտքում և Արևելքում։ Այժմ մենք հնարավորություն ենք ստացել վերադառնալու խաղաղ աշխատանքի, որպեսզի ամրապնդենք մեր հաղթանակը։

Ինչպես ասել է ընկեր Ստալինը.

«Մեր սովետական ժողովուրդը ուժ ու աշխատանք չի խնայել հանուն հաղթանակի։ Մենք ապրել ենք ծանր տարիներ։ Բայց այժմ մեզնից յուրաքանչյուրը կարող է ասել՝ մենք հաղթեցինք։ Այժմյանից մենք կարող ենք մեր հայրենիքը փրկված համարել Արևմուտքում՝ գերմանական արշավանքի և Արևելքում՝ ճապոնական արշավանքի սպառնալիքից։ Հասավ բուզձալի խաղաղություն ամբողջ աշխարհի ժողովուրդների համար»։

«Սովետական Հայաստան», 7 նոյեմբերի, 1945։

Նոյեմբեր

Հանրային գրադարանում բացվում է Հայաստանում սովետական կարգերի հաստատման 25-ամյակին նվիրված ցուցահանդես։

Նոյեմբեր

Տեղի է ունենում Գիտությունների Ակադեմիայի ընդհանուր և հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական նախաները՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 25-ամյակին։

Զեկուցում են.

Գիտ. Ակադեմիայի ընդհանուր գիտական նախագահ՝ Ա. Տերտերյան՝ «Սովետահայ գրականությունը»։

Հասարակական գիտությունների բաժանմունքի նիստում. Մ. Ներսիսյան՝ «Պատմությունը Սովետական Հայաստանում»։

Է. Աղայան «Հայ լեզվաբանությունը 25 տարում»։

Գ. Սևակ «Հայոց լեզվի զարգացման սովետական շրջանը»։

Աս. Ասատրյան «Սովետահայ գրականությունը 25 տարում»։

Նոյեմբեր

ՍՍՌՄ ժողովրդական Կոմիսարների Սովետի որոշումը «Արտասահմանից հայերի Սովետական Հայաստան վերադառնալու կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումների մասին»։

Նոյեմբերի 18-ից—դեկտեմբերի 19-ը

Տեղի է ունենում Հայաստանում սովետական կարգերի հաստատման 25-ամյակին նվիրված գրականության երեկո։

Մանկավարժական Ինստիտուտում կազմակերպվում է գրական երեկո։

«Սովետահայ գրականությունը 25 տարում» թեմայով զեկուցում է Էդ. Թոփչյանը։

Նոյեմբերի 19-ին

Կիրովի անվան գործարանում կազմակերպվում է գրական երեկո՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 25-ամյակին։

«Սովետահայ գրականությունը 25 տարում» թեմայով զեկուցում է Ն. Զարյանը։

Նոյեմբերի 22-ին

Հայֆիլհարմոնիայում կազմակերպվում է սովետահայ գրականության երեկո, նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 25-րդ տարեդարձին։

Բացման խոսքը է ասում Ավ. Իսահակյանը։

Զեկուցում է Էդ. Թոփչյանը։

Իրենց ստեղծագործություններով հանդես են գալիս՝ Ն. Զարյանը, Ս. Վահունին, Մ. Կապուտիկյանը, Հ. Շիրազը, Գ. Բորյանը, Ա. Գրաշին։

«Սովետահայ գրականության տասնօրյակի 5 և 6-րդ երեկոները կազմակերպվում են Արտաշատի և Էջմիածնի շրջաններում։

«Սովետահայ գրականությանը նվիրված երեկո է կազմակերպ-

վում Լենինականում. էք. Բուիչյանը զեկուցում է «Սովետահայ գրականությունը 25 տարում» նյութի մասին:

Ելույթներ են ունենում՝ Ն. Զարյանը, Լ. Բարսեղյանը, Սլավինին, Մ. Կարյանը:

Տանտօրյակի 8 և 9-րդ երեկոները կազմակերպվում են Լենինականի Տեքստիլ կոմբինատում և Ուսուցիչների տանը:

10-րդ երեկոն կազմակերպվում է Լենինականի Պետթատրոնում. Ն. Զարյանը զեկուցում է «Սովետահայ գրականությունը 25 տարում» նյութի մասին:

Նոյեմբերի 24-ին

Պետական Օպերայում հրավիրվում է Հայկական ՍՍՌ Գեբգուշն Սովետի հոբելյանական սեսիան՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 25-ամյակին:

ՍՍՌՄ ժողկոմսովետի և Համկ(բ)Պ կենտկոմի ողջույնի հեռագիրը.

«ՍՍՌ Միության ժողովրդական կոմիսարների Սովետը և Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն Սովետական Հայաստանի 25-ամյակի օրը ողջունում են Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի բանվորներին, կոլխոզնիկներին և ինտելիգենցիային:

1920 թվի նոյեմբերին Հայաստանի աշխատավորները ռուս ժողովրդի օգնությամբ տապալեցին դաշնակների ռեակցիոն հակաժողովրդական կառավարությունը և հաստատեցին սովետական իշխանություն: Սովետական հասարակարգի հիման վրա Հայաստանն ազատ զարգացման և ազգային վերածնության հնարավորություն ստացավ: Անդրկովկասի ժողովուրդների միջև հաստատվեցին բարեկամության և եղբայրական համերաշխության հարաբերություններ:

Սովետական իշխանության տարիներին Հայաստանի աշխատավորները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ կառուցեցին սոցիալիստական առաջավոր ռեսպուբլիկա՝ զարգացած արդյունաբերությամբ, կոլխոզային գյուղատնտեսությամբ և բարձր կուլտուրայով: Ռեսպուբլիկայում կառուցված են արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ՝ Ալավերդու և Զափանի պղնձի կոմբինատները, Կիրովականի և Ալավերդու գյուղատնտեսական արտադրատանյութերի գործարանները, Երևանի Դազգահաշինական

գործարանը, Լենինականի Տեքստիլ կոմբինատը, սննդի արդյունաբերության ձեռնարկություններ. կառուցված են Քանաքեռի էլեկտրակայանը, Զորագետի հիդրոկայանը և կոլխոզային տասնյակ հիդրոկայաններ:

Կոլխոզային կարգերը վերափոխել են Հայաստանի գյուղատնտեսությունը: Ռեսպուբլիկայում կատարված է խոիդացիոն կառույցվածքների շինարարության մեծ աշխատանք: Ոռոգելի տարածությունն ընդարձակվել է մինչև 200.000 հեկտարի: Կոլխոզնիկները և սովխոզները նշանակալից հաջողություններ են ձեռք բերել բուսաբուծության, այգեգործության զարգացման ասպարեզում, մերձարևադարձային և տեխնիկական կուլտուրաների յուրացման գործում:

Իսկական ծաղկման է հասել հայ ժողովրդի կուլտուրան: Նախքան Հոկտեմբերյան Ռևոլյուցիան Հայաստանում կար միայն 446 տարրական և 7 միջնակարգ դպրոց: Այժմ ռեսպուբլիկայում գործում են 869 տարրական և բերի միջնակարգ և 300 միջնակարգ դպրոց, 48 տեխնիկում, 13 բարձրագույն ուսումնական հաստատություն, 43 գիտա-հետազոտական հիմնարկություն, Հայկական Գիտությունների Ակադեմիա: Հայկական ՍՍՌ գրողները, պոետները, նկարիչները, կոմպոզիտորները ստեղծել են գրականության և արվեստի նշանավոր գործեր:

Հայրենական պատերազմի տարիներին հայ ժողովուրդը պատվով կատարեց իր պարտքը Հայրենիքի հանդեպ: Հայ ռազմիկները Սովետական Միության մյուս ժողովուրդների զավակների հետ միասին անձնվիրաբար պաշտպանում էին մեր Հայրենիքի ազատությունը և անկախությունը: Հայաստանի բանվորները, կոլխոզնիկները և ինտելիգենցիան անդուլ կերպով աշխատում էին թշնամուն դեմ հաղթանակ նվաճելու համար:

ՍՍՌ Միության ժողովրդական Կոմիսարների Սովետը և Համկ(բ)Պ կենտրոնական Կոմիտեն հատուկ համոզմունք են հայտնում, որ Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի աշխատավորներն այսուհետև ևս կպայքարեն Հայաստանի տնտեսության ու կուլտուրայի զարգացման նորանոր հաջողությունների համար, Սովետական պետության հզորության հետագա ամրապնդման համար:

«Սովետական Հայաստան», 25 նոյեմբերի, 1945:

688—38

Սեսիան ողջույնի հեռագիր է ուղարկում՝ ընկեր Ստալինին և ընկերներ Վ. Մ. Մոլոտովին, Մ. Ի. Կալինինին, Ա. Ի. Միկոյանին, Լ. Պ. Բերիային։

Ի. Վ. Ստալինին ուղղված ողջույնի հեռագրից.

«Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 25-րդ տարեդարձը մենք նշում ենք խաղաղ պայմաններում, երբ լիակատար հաղթանակ է տարված թշնամու դեմ և լիկվիդացված են պատերազմի օջախները Արևմուտքում և Արևելքում։

Բայց մենք, սովետական մարդիկ, լավ հիշում ենք Ձեր խմաստուն ցուցումները՝ երբեք չհանգստանալ ձեռք բերված հաջողություններով։ Այս հանդիսավոր օրը մենք երդվում ենք Ձեզ, ընկեր Ստալին, որ չենք խնայի ո՛չ ուժ, ո՛չ եռանդ և ամեն բան կանենք ամրապնդելու համար մեր հաղթանակը, որ սովետական ժողովուրդը ձեռք է բերել կատաղի պայքարում և որը ճանապարհ է բաց արել մեր Սովետական հայրենիքի նոր մեծ վերելքի և սովետական ժողովրդի բարեկեցության հետագա բարձրացման համար»...

«Մենք հավատացնում ենք Ձեզ, ընկեր Ստալին, որ Հայաստանը եղել է, հանդիսանում է և կլինի անառիկ ֆորպոստ Սովետական Միության հարավային սահմանապահին։

Մենք մեծ խանդավառությամբ ձեռնամուխ կլինենք ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման նոր հնգամյա պլանի իրագործմանը։ Արագ կբուժենք պատերազմի կողմից երկրին պատճառված վերքերը։ Մեր ինդուստրիզացիան անդուլ կերպով կաշխատի սովետական գիտության ու տեխնիկայի հետագա զարգացման համար։ Կաշխատենք այնպես, ինչպես Դուք սովորեցնում եք մեզ, ընկեր Ստալին»։

«Սովետական Հայաստան», 25 նոյեմբերի, 1945։

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Գափաձո

1. Գ. Գեմիրճյան։— Բանաստեղծություններ, Հայպետհրատ, Երևան։
2. Ն. Զարյան.— Երկեր, հատ. 1-ին, Հայպետհրատ, Երևան։
3. Գ. Սարյան.— Հատընտիր, Հայպետհրատ, Երևան։

4. Ստրմին.— Ծաղկանք, Հայպետհրատ, Երևան:
5. Գ. Բորյան.— Հրացոլք, Հայպետհրատ, Երևան:
6. Ս. Կապուտիկյան.— Օրերի հետ, Հայպետհրատ, Երևան:
7. Մ. Մարգարյան.— Բանաստեղծություններ, Հայպետհրատ, Երևան:
8. Վ. Արամոնի.— Բալենիներ, Հայպետհրատ, Երևան:
9. Ղ. Կամոնի.— Այգաբաց, Հայպետհրատ, Երևան:
10. Յ. Շողենց.— Հայրենի լեռներում, Հայպետհրատ, Երևան:
11. Բ. Կարապետյան.— Ռազմի ճնար. Հայպետհրատ, Երևան:
12. Մ. Քարամյան.— Յաստան կրակ, Հայպետհրատ, Երևան:
13. Հ. Աղաբաբ.— Մանուկների հետ, Պետհրատ, Երևան:

Աւրձակ

1. Ստ. Զորյան.— Պարզ հոգիներ, Հայպետհրատ, Երևան:
2. Մ. Մանվելյան.— Պատմվածքներ, Հայպետհրատ, Երևան:
3. Գ. Սևունց.— Վիշապասարի աղբիւրը, Ակերնեշեր, Բաքու:
4. Արաքս.— Ազատության հրթիռներ, Հայպետհրատ, Երևան:
5. Վ. Անանյան.— Գժոխքի դռան պաշտնիքը, Հայպետհրատ, Երևան:
6. Արաքսման.— Ճանապարհ դեպի Կամիշին, Հայպետհրատ, Երևան:
7. Հ. Մկրտչյան:— Նովելներ և ակնարկներ, Հայպետհրատ, Երևան:
8. Գ. Ստեփանյան.— Մղձավանջային օրեր, Հայպետհրատ, Երևան:
9. Վ. Խեչոսյան.— Զվարթնոց, Հայպետհրատ, Երևան:
10. Ա. Հովհաիյան.— Կյանքի սերը, Հայպետհրատ, Երևան:

Գրամատուրգիա

1. Ն. Զարյան.— Արա Գեղեցիկ, Հայպետհրատ, Երևան:
2. Բ. Հուրյան.— Ցրիկ, Հայպետհրատ, Երևան:
3. Ա. Գրաշի.— Ամպաբերդ, Ակերնեշեր, Բաքու:

Գրականության պատմություն, տեսություն և ճնճաղատություն

1. Ավ. Իսահակյան.— Հանուն հայրենիքի և կուլտուրայի պաշտպանության, Հայպետհրատ, Երևան:

2. Ե. Շահազիզ.— Խ. Աբովյանի կենսագրությունը, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երևան։
3. Գ. Աբով.— Սիրո և արդարության մեծ երգիչը (Սայաթ-Նովան), Հայպետհրատ, Երևան։
4. Հ. Գուլազյան.— Հուշեր, Հայպետհրատ, Երևան։
5. Տ. Հախումյան.— Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոյեդով, Հայպետհրատ, Երևան։
6. Հ. Մամիկոնյան.— Արևմտյան Եվրոպայի վերածնության դարաշրջանի գրականության պատմություն, Պետհամալսարանի հրատ., Երևան։
7. Էդ. Թոփչյան.— Վահան Տերյան, Հայպետհրատ, Երևան։
8. Ս. Մելիքսեթյան.— Թատերական ակնարկներ, Հայպետհրատ, Երևան։
9. Ռ. Նանումյան.— Հայ-ռուս գրական կապերի շուրջը, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երևան։

1946

Հունվարի 3-ին

Երևանի Դ. Դեմիրճյանի անվան դպրոցում կազմակերպվում են աշակերտների հանդիպում Դ. Դեմիրճյանի հետ։

Զեկուցում է վ. Թերզիբաշյանը։

Հունվարի 12-ին

Հայկական ՍՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտը կազմակերպում է հանդիսավոր նիստ նվիրված Շահազիզի գիտա-հետազոտական գործունեության 60-ամյակին։

Բացման խոսք է ասում Խ. Սարգսյանը։

Զեկուցում է Ռ. Զարյանը։

Հունվարի 15-ին

Գրողների Տանը կազմակերպվում է Ստ. Զորյանի «Պապ Քա-գավոր» վեպի քննարկումը։

Զեկուցում է վ. Թերզիբաշյանը։

Ելույթներ են ունենում՝ Գ. Սարյանը, Էդ. Թոփչյանը, Սրապիոն, Ա. Կարապետյանը, Մ. Հյուսյանը։ Վերջում ելույթ է ունենում՝ Ստ. Զորյանը։

Հունվարի 25-ին

Գիտությունների Ակադեմիայի դահլիճում Ռ. Զարյանը դիկու-

ցած է «Սովետահայ պատմավեպը» (Չորյանի «Պապ Թադևոս» վեպը) նյութի մասին։

Հունվար

Հայաստանի Գրողների Միության բանաստեղծների բրիգադան գինում է Արտաշատի շրջանում։

Փետրվարի 2-ին

Հրապարակվում է Համկ(բ)Պ Կենտկոմի դիմումը բոլոր բնակչներին։

Փետրվարի 6-ին

Ընկեր Ա. Ի. Միկոյանի հանդիպումը Երևանի Ստալինյան բնտրական օկրուգի բնտրողների հետ։

Փետրվարի 9-ին

Ընկեր Ի. Վ. Ստալինի ճառը Մոսկվա քաղաքի Ստալինյան բնտրական օկրուգի բնտրողների ժողովում։

Ի. Վ. Ստալինի ճառից.

«Ներ հնգամյա պլանի հիմնական խնդիրներն են՝ վերականգնել երկրի տուժած շրջանները, վերականգնել արդյունաբերության և գյուղատնտեսության նախապատերազմյան մակարդակը և այնուհետև քիչ թե շատ զգալի չափով գերազանցել այդ մակարդակը»։...

«Ես չեմ տարակուսում, որ մեզ պատշաճ օգնության ցույց տանք մեր գիտնականներին, նրանք կկարողանան մոտիկ ժամանակներս ո՛չ միայն հասնել, այլև անցնել մեր երկրի սահմաններից դուրս գիտության ունեցած նվաճումներին»։ (Երկարատև ծափահարություններ)։»...

«Ասում են, որ հաղթողներին չեն դատում (ծիծաղ, ծափահարություններ), *որ նրանց չպետք է քննադատել, չպետք է ստուգել։ Դա ճիշտ չէ։ Հաղթողներին կարելի է և պետք է դատել* (ծիծաղ, ծափահարություններ), *կարելի է և պետք է քննադատել և ստուգել։ Դա օգտակար է ո՛չ միայն գործի համար, այլև հենց հաղթողների համար* (ծիծաղ, ծափահարություններ), *ավելի քիչ անապարծության և ավելի շատ համեստության կլինի։* (Ծիծաղ, ծափահարություններ)։ *Ես գտնում եմ, որ բնտրական կամպանիան բնտրողների դատն է կոմունիստական պարտիայի նկատմամբ,*

որպես կառավարող պարտիայի նկատմամբ։ Իսկ ընտրությունների արդյունքները նշանակելու են ընտրողների դատավճիռը։ (Ծիծաղ, ծափահարություններ): *Քիչ արժեք կունենար մեր երկրի կոմունիստական պարտիան, եթե նա վախենար քննադատությունից, ստուգումից։ Կոմունիստական պարտիան պատրաստ է ընդունելու ընտրողների դատավճիռը։* (Բուռն ծափահարություններ)»:

«Սովետական Հայաստան», 10 փետրվ., 1946։

Փետրվարի 10-ին

Տեղի են ունենում ՍՍՌՄ Գերագույն Սովետի ընտրությունները։

Փետրվարի 25-ին

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագիրը ՍՍՌՄ Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարիատը ՍՍՌՄ Զինված Ուժերի Ժողովրդական Կոմիսարիատ վերակազմելու մասին։

Փետրվարի 25-ին

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագրով Սովետական Միության Գեներալիսիմուս Ի. Վ. Ստալինը նշանակվում է ՍՍՌ Միության Զինված Ուժերի Ժողովրդական Կոմիսար և Զինված Ուժերի Գերագույն Գլխավոր Հրամանատար։

Փետրվար

Գրողների Տանը «1941—1945 թ. թ. Հայրենական պատերազմում քաջարի աշխատանքի համար» մեդալներ են հանձնվում՝ Ավ. Իսահակյանին, Դ. Դեմիրճյանին, Ն. Զարյանին, Արազուն, Ստ. Զորյանին, Գ. Սարյանին և ուրիշներին՝ թվով 53 մարդու։

Փետրվարի 28-ին

Գրողների Տանը կազմակերպվում է Մ. Մանուշյանի մահվան 2-րդ տարեդարձին նվիրված երեկո։

Ներածական խոսք է ասում Ավ. Իսահակյանը։

Զեկուցում է Հ. Հովհաննիսյանը։

Հուշերով հանդես են գալիս Մելինե Մանուշյանը և Արմ. Կոթիկյանը։

Մեծարման խոսքով հանդես են գալիս՝ Գ. Սարյանը, Հ. Քոչարը, Հ. Շիրազը, Ա. Գրաշին և Գ. Էմինը։

Փետրվար

Հայաստանի Սովետական Գրողների Միության Նախագահությունը Հայաստանի Գրողների Միության նախագահ է ընտրում Ավ. Իսահակյանին, պատ. քարտուղար՝ Հր. Գրիգորյանին։

Մարտի 11-ին

Գրողների Տանը Տ. Հախումյանը զեկուցում է Մարո Մարգարյանի ստեղծագործությունների մասին։

Մարտի 12-ին

ՍՍՌՄ Գերագույն Սովետի առաջին սեսիայի բացումը։

Մարտի 15-ին

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության որոշումը ՍՍՌՄ ժողովրդական Կոմիսարների Սովետը ՍՍՌՄ Մինիստրների Սովետ և ՍՍՌՄ ժողովրդական Կոմիսարիատները ՍՍՌՄ Մինիստրությունների վերակազմելու մասին։

Մարտի 18-ին

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման 1946—1950 թ. թ. հնգամյա պլանի մասին օրենքի հաստատումը ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության կողմից։

Մարտի 19-ին

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության որոշումը ՍՍՌՄ Կառավարության ՍՍՌՄ Մինիստրների Սովետ կազմելու մասին։ ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Նախագահ և Զինված Ուժերի Մինիստր է նշանակվում Ի. Վ. Ստալինը։

Մարտի 22-ին

Մոսկվայում, Գրողների ակումբում ՍՍՌՄ Գերագույն Սովետի դեպուտատ Գ. Սարյանի պատվին կազմակերպվում է երեկո։

Բացման խոսք է ասում Պ. Անտոկոլսկին։

Ջեկուցում է Վ. Կիրպոտինը։

Գ. Սարյանը կարդում է իր «Հրաժեշտ» քալադան ու «Կարոտ» բանաստեղծությունը։

Վերջում Վ. Ջվյագինցեվան, Մ. Սվետլովը, արտիստուհի

Օքուխովան կարդում են Գ. Սարյանի թարգմանված բանաստեղծություններից:

Ապրիլի 17-ին

Հայֆիլհարմոնիայի դահլիճում կազմակերպվում է Մից. Նալբանդյանի մահվան 80-ամյակին նվիրված երեկո:

Ներածական խոսք է ասում Ավ. Իսահակյանը:

Զեկուցում է Ա. Սարգսյանը:

Ապրիլ

Ալ. Մյասնիկյանի անվան Հանրային Գրադարանը Մից. Նալբանդյանի մահվան 80-ամյակի առթիվ կազմակերպում է ցուցահանդես:

Ապրիլի 15-ին

Գրողների Տանը Տ. Հախումյանը զեկուցում է «Մեր պոեզիայի քննադատությունը և Սիլվա Կապուտիկյանի լիրիկան» նյութի մասին:

Ապրիլի 23-ին

Սկսվում է Պետհամալսարանի հոբելյանական գիտական սեսիան՝ նվիրված համալսարանի հիմնադրման 25-ամյակին:

Զեկուցում են.

1. Ա. Տերտերյան՝ «Լենինը որպես գրական քննադատ»:

2. Ա. Սարգսյան՝ «Մ. Աբեղյանը որպես հայ հին գրականության պատմաբան»:

3. Հ. Կոսիկյան՝ «Ռ. Պատկանյանի բառարանը»:

Ապրիլի 25-ին

Սպենդիարովի անվան Պետական Օպերայի և Բալետի թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր նիստ նվիրված Պետական Համալսարանի հիմնադրման 25-ամյակին:

Ապրիլի 29-ին

Թատերական Ինստիտուտում կազմակերպվում է Ստ. Ջորյանի ստեղծագործությունների երեկո:

Ներածական խոսք է ասում Վ. Վարդանյանը:

Ելույթ են ունենում ինստիտուտի ուսանողները:

Վերջում ելույթ է ունենում Ստ. Ջորյանը:

Մայիսի 9-ին

Սկսվում է վերահրատարակվել «Պիոներ Կանչ» թերթը:

Մայիսի 15-ին

Գրողների Տանը կազմակերպվում է Հ. Շիրազի ստեղծագործական երեկո:

Ներածական խոսք է ասում Արտ. Կարինյանը:

Մայիսի 25-ին

Գրողների Տանը Ա. Ինճիկյանը զեկուցում է Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգության մասին:

Մայիսի 30-ին

Հայֆիլհարմոնիայում տեղի է ունենում հանդիսավոր նիստ, նվիրված Հ. Հակոբյանի ծննդյան ութսունամյակին:

Բացման խոսք է ասում Գ. Սարյանը:

Զեկուցում է Աս. Ասատրյանը:

Հուշերով հանդես են գալիս՝ Արազին և Ն. Զարյանը:

Մայիսի 30-ին

Մոսկվայի Հայկական Կուլտուրայի Տանը կազմակերպվում է Հ. Հակոբյանի ծննդյան 80-ամյակին նվիրված երեկո:

Զեկուցում է Վ. Կիրպոտինը:

Հ. Հակոբյանից կատարած իրենց թարգմանություններով հանդես են գալիս՝ Վ. Զվյագինցևան, Սուսաննա Մարր, Ալ. Բեզիմենսկին, Ալ. Գատովը:

Հունիսի 3-ին

Վախճանվեց բոլշևիկյան պարտիայի և սովետական պետության ականավորագույն գործիչ Միխայիլ Իվանովիչ Կալինինը:

Հունիսի 18-ին

Մ. Գորկու մահվան 10-ամյակի կապակցությամբ Սունդուկյանի անվան Թատրոնում տեղի է ունենում հանդիսավոր նիստ:

Ներածական խոսք է ասում Ստ. Զորյանը:

Զեկուցում է Ս. Արեշյանը:

Վերջում բեմադրվում է Մ. Գորկու «Եգոր Բուլըչովը և ուրիշները»:

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության որոշմամբ Մ. Գորկու մահվան 10-ամյակի կապակցությամբ Սովետական Գրողների Միության Գրական Ինստիտուտը կոչվում է Ա. Մ. Գորկու անունով։

Հունիսի 27-ին

Բաթումի է ժամանում արտասահմանից Սովետական Հայաստան ներգաղթող հայերի առաջին քարավանը։

Հունիսի 28-ին

Ավետիք Իսահակյանին շնորհվում է Ստալինի անվան առաջին աստիճանի մրցանակ՝ «Իմ հայրենիքին», «Մեծ Ստալինին», «Մարտակոչը», «Իմ սիրտն այն տեղ է...», «Մեր պայքարը», «Ս. Գ. Զաքյանի անմահ հիշատակին» բանաստեղծությունների համար։

Հուլիսի 5-ին

Գրողների Տանը նշվում է Խնկո Ապոր ծննդյան 85-ամյակը։

Զեկուցում է Վ. Թերզիբաշյանը։

Հուլիսի 16-ին

Գրողների Տանը Հ. Ղազարյանը զեկուցում է Ն. Զարյանի «Ձայն Հայրենական» պոեմի պոետիկայի մասին։

Հուլիսի 27-ին

Կոմպոզիտորների Տանը կազմակերպվում է Գ. Սարյանի հանդիպման երեկո «Ավանգարդ»-ի թղթակիցների և արտասահմանից վերադարձած հայ երիտասարդների հետ։

Հուլիս

Մոսկվայի Գրողների ակումբում կազմակերպվում է գրական երեկո նվիրված Գ. Էմինի և Ս. Կապուտիկյանի ստեղծագործություններին։

Ներածական խոսք է ասում Ս. Եվգենովը։

Գ. Էմինն ու Ս. Կապուտիկյանը կարդում են իրենց ստեղծագործություններից։ Նրանց բանաստեղծությունների թարգմանություններով հանդես են գալիս՝ Լ. Դլիգաչը, Վ. Զվյագինցևան, Մ. Պետրովիխը, Արսենևան։

Հուլիս

Գրողների Տանը կազմակերպվում է պոեզիայի երեկո։

Իրենց բանաստեղծություններով հանդես են գալիս՝ Ա. Վշտունին, Գ. Կոմունին, Հեն. Թումանյանը, Շ. Սաֆյանը, Մ. Հարությունյանը, Ա. Շեմսը և ուրիշները։

Հուլիս

Սկսում է վերահրատարակվել «Հոկտեմբերիկ» ամսագիրը։

Օգոստոսի 7–ին

Մոսկվայում նշվում է Ալ. Բլոկի մահվան 25-ամյակը։

Բացման խոսք է ասում Ն. Տիխոնովը։

Ջեկուցում է Պ. Անտակոլսկին։

Օգոստոսի 14–ին

Համկ(բ)Պ կենտկոմի որոշումը «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին։

Համկ(բ)Պ կենտկոմի որոշումից.

«Համկ(բ)Պ կենտկոմը նշում է, որ Լենինգրադում հրատարակվող գրական-գեղարվեստական «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերը տարվում են միանգամայն անբավարար։

«Զվեզդա» ամսագրում վերջին ժամանակներս, սովետական գրողների նշանակալից և հաջող երկերի կողքին, հայտնվել են իդեադատարկ, իդեոլոգիապես վնասակար շատ երկեր։ «Զվեզդայի» կոպիտ սխալն է հանդիսանում գրական տրիբուն տրամադրելը դրող Զոշչենկոյին, որի երկերը խորթ են սովետական գրականությանը։ «Զվեզդայի» խմբագրությանը հայտնի է, որ Զոշչենկոն վաղուց է մասնագիտացել դատարկ, անբովանդակ և ստոր բաներ գրելու, փտած գաղափարազրկություն, ստորություն և ապլիտկություն քարոզելու մեջ, որոնք կատարում է մեր երիտասարդության դաստիարակության գործին։ Ամսագրի խմբագրությունը չի ձգտել Զոշչենկոյին օրիենտացիայից զրկելու, նրա գիտակցությունը թունավորելու հաշվով։ Զոշչենկոյի հրապարակած պատմվածքներից վերջինը՝ «Կապկի արկածները» («Զվեզդա», № 5—6, 1946 թ.), հանդիսանում է գռեհիկ պասկվիլ սովետական կենցաղի և սովետական մարդկանց մասին։ Զոշչենկոն սովետական կարգերն ու սովետական մարդկանց պատկերում է այլանդակ կարիկատուրային ձևով, գրպարտչորեն ներկայացնելով սովետական մարդկանց որպես պրի-

Ֆիտիվ, քիչ-կուլտուրական, հիմար, օբիվատելական ճաշակներով ու բարքերով: Զոշչենկոյի կողմից մեր իրականության չարամիտ իռւլիգանային պատկերամբ զուգակցվում է հակասովետական հարձակումներով:

«Զվեզդայի» էջերը տրամադրելն այդպիսի ստորներին և պրոկյանության տականքներին, ինչպիսին Զոշչենկոն է, առավել ևս անթույլատրելի է, քանի որ «Զվեզդայի» խմբագրությանը լավ հայտնի է Զոշչենկոյի ֆիզիոնոմիան և նրա անարժան վարմունքը պատերազմի ժամանակ, երբ Զոշչենկոն ոչնչով չօգնելով սովետական ժողովրդին՝ գերմանական զավթիչների դեմ նրա մղած պայքարում, գրեց այնպիսի քամնելի բան, ինչպիսին «Արևածագից առաջ»-ն է, որի գնահատությունը, ինչպես և Զոշչենկոյի պրակտիկ ողջ «ստեղծագործության» գնահատությունը արված էր «Բոլշևիկ» ամսագրի էջերում:

«Զվեզդա» ամսագիրն ըստ ամենայնի ժողովրդականացնում է նաև գրողուհի Ախմատովայի երկերը, որի պրակտիկ և հասարակական-քաղաքական ֆիզիոնոմիան շատ վաղուց հայտնի է սովետական հասարակությանը: Ախմատովան հանդիսանում է մեր ժողովրդին խորթ, իդեալզուրկ, անամիջ պոեզիայի տիպիկ ներկայացուցիչը: Հագեցված պեսիմիզմի և անհուսայնության ոգով, հին սալոնային պոեզիայի ճաշակները արտահայտող նրա բանաստեղծությունները, որոնք կանգ են առել բուրժուա-արիստոկրատական էսթետայնության և դեկադենտության— «արվեստը արվեստի համար» դիրքերի վրա, չցանկանալով հաճախել իր ժողովրդի հետ, վնասում են մեր երիտասարդության դաստիարակության գործին և չեն կարող հանդուրժվել սովետական գրականության մեջ:

Զոշչենկոյին և Ախմատովային ամսագրում ակտիվ դեր տրամադրելն, անկասկած, իդեական ցրվածության և անկազմակերպվածության տարրեր է մտցրել լենինգրադյան գրողների միջավայրում: Ամսագրում սկսել են հայտնվել այնպիսի երկեր, որոնք ներծծում են սովետական մարդկանց ոչ հատուկ ստորաքարշության ոգի՝ Արևմուտքի ժամանակակից բուրժուական կուլտուրայի հանդեպ: Սկսել են հրապարակվել երկեր, որոնք թափանցված են վախիծով, հոռետեսությամբ և կյանքի նկատմամբ հիասթափությամբ (Սադոֆևի և Կոմիսարովայի բանաստեղծությունները

1946 թ. № 1-ում և այլն)։ Ջնջելով այդ երկերը, խմբագրությունը խորացրել է իր սխալները և էլ ավելի իջեցրել ամսագրի իդեական մակարդակը։

Թույլ տալով, որ թափանցեն ամսագրի մեջ իդեական տեսակետից խորթ երկեր, խմբագրությունն իջեցրել է նաև պահանջկոտությունը տպագրվող գրական նյութի գեղարվեստական որակի նկատմամբ։ Ամսագիրն սկսել է լցվել սակավ-գեղարվեստական պիեսներով և պատմվածքներով (Յագդֆելդի «Ժամանակի ճանապարհը», Շտեյնի «Կարապի լիճը» և այլն)։ Այդպիսի անխտրականությունը տպագրվող նյութի ընտրության մեջ, հասցրել է ամսագրի գեղարվեստական մակարդակի իջեցմանը։

Կենտկոմը նշում է, որ առանձնապես վատ է տարվում «Լենինգրադ» ամսագիրը, որը շարունակ տրամադրել է իր էջերը Զոշչենկոյի սնոտի և զրպարտչական հոդվածներին, Ախմատովայի դատարկ և ապոլիտիկ բանաստեղծություններին։ «Զվեզդայի» խմբագրության նման, «Լենինգրադ» ամսագրի խմբագրությունը ևս թույլ է տվել խոշոր սխալներ՝ հրատարակելով մի շարք երկեր, որոնք թափանցված են ստորաքարշության ոգով՝ օտարերկրյա ամեն ինչի նկատմամբ։ Ամսագիրը տպագրել է մի շարք վրիպակ երկեր (Վարշավսկու և Ռեստի «Դեպք Բեռլինի վրա», Սլոնիմսկու «Ուղեկալի վրա»)։ Խազինի «Օնեգինի վերադարձը» բանաստեղծությունների մեջ, գրական պարոդիայի տեսքով, զրպարտություն է արված ժամանակակից Լենինգրադի հասցեին։ «Լենինգրադ» ամսագրում զետեղված են գլխավորապես անբովանդակ, ցածրորակ գրական նյութեր։

Ինչպես է պատահել, որ «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերը, որոնք հրատարակվում են Լենինգրադում՝ հերոս-քաղաքում, որը հայտնի է իր առաջավոր ռևոլյուցիոն տրադիցիաներով, այն քաղաքում, որը միշտ հանդիսացել է առաջավոր իդեաների և առաջավոր կուլտուրայի օրրան, թույլ են տվել ամսագրերի մեջ խցկելու սովետական գրականությանը խորթ անիդեականություն և ապոլիտիկություն։

Ինչո՞ւմն է «Զվեզդայի» և «Լենինգրադի» խմբագրությունների սխալների իմաստը։

Ամսագրերի ղեկավար աշխատողները և առաջին հերթին դրանց խմբագիրները՝ ընկ. ընկ. Սայանովը ու Լիխարևը մոռացել

ևն լենինիզմի այն դրույթը, որ մեր ամսագրերը լինեն գիտական, ինչ գեղարվեստական, չեն կարող լինել ապոլիտիկ։ Նրանք մոռացել են, որ մեր ամսագրերը հանդիսանում են Սովետական պետության զորեղ միջոցը՝ սովետական մարդկանց և առանձնապես երիտասարդության դաստիարակելու գործում, և դրա համար էլ, պետք է զենքավարվեն այն բանով, որը կազմում է սովետական կարգի կենսական հիմքը՝ նրա քաղաքականությամբ։ Սովետական կարգը չի կարող հանդուրժել, որ երիտասարդությունը դաստիարակվի անտարբերության ոգով դեպի սովետական քաղաքականությունը, արհամարհանքի և անիդեականության ոգով։

Սովետական գրականության՝ աշխարհի ամենառաջավոր գրականության ուժն այն է, որ նա այնպիսի գրականություն է, որը չունի և չի կարող ունենալ այլ շահեր, քան ժողովրդի շահերը, պետության շահերը։ Սովետական գրականության խնդիրն այն է, որ օգնի պետությանը՝ ճիշտ դաստիարակելու երիտասարդությանը, պատրաստելու նրա պահանջներին, դաստիարակելու նոր սերունդը առույգ, իր գործին հավատացող, արգելքներից չվախեցող, բոլոր արգելքները հաղթահարելու պատրաստ։

Դրա համար էլ անիդեականության, ապոլիտիկության, «գեղագիտը գեղարվեստի համար» ամեն մի քարոզ խորթ է սովետական գրականությանը, վնասակար է սովետական ժողովրդի ու պետության շահերի համար և տեղ չպետք է ունենա մեր ամսագրերում։

«Զվեզդայի» և «Լենինգրադի» աշխատողների իդեականության պակասը հասցրել է նաև այն բանին, որ այդ աշխատողները գրողների հետ ունեցած իրենց հարաբերությունների հիմքում դրել են ոչ թե սովետական մարդկանց ճիշտ դաստիարակման և գրողների գործունեության քաղաքական ուղղության շահերը, այլ անձնական, բարեկամական շահերը։ Բարեկամական հարաբերությունները չփչացնելու ցանկության հետևանքով բացել է քննադատությունը։ Բարեկամներին վշտացնելու վախի հետևանքով տպագրության են թույլատրվել որոշակիորեն անպետք երկեր։ Այդ կարգի լիբերալիզմը, որի դեպքում ժողովրդի ու պետության շահերը, մեր երիտասարդության ճիշտ դաստիարակման շահերը զոհաբերվում են բարեկամական հարաբերություններին, և որի դեպքում խլանում է քննադատությունը, հասցնում է այն բանին, որ գրողները դադարում են կատարելագործվելուց, կորցնում են իրենց պատասխա-

նատվության գլացումը ժողովրդի հանդեպ, պետության հանդեպ, պարտիայի հանդեպ, դադարում են շարժվել առաջ։

Վերոհիշյալ այդ ամենը վկայում է այն մասին, որ «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի խմբագրությունները չեն կարողացել կատարել իրենց վրա դրած գործը և ամսագրերը դեկավարելու մեջ թույլ են տվել քաղաքական լուրջ սխալներ։

Կենտկոմը գտնում է, որ Սովետական Գրողների Միության վարչությունը և մասնավորապես նրա նախագահ ընկ. Տիխոնովը ոչ մի միջոց ձեռք չեն առել լավացնելու «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերը, և ոչ միայն պայքար չեն մղել Զոշչենկոյի, Ախմատովայի և նրանց նման ոչ-սովետական գրողների վնասակար ազդեցության դեմ՝ սովետական գրականության վրա, այլ նույնիսկ թույլ են տվել ամսագրերի մեջ սովետական գրականությանը խորթ տենդենցների և բարքերի մուտք գործելը։

Համկ(բ)Պ Լենինգրադի Քաղկոմն աչքաթող է արել ամսագրերի խոշորագույն սխալները, մի կողմ է քաշվել ամսագրերը դեկավարելուց և հնարավորություն է ընձեռնել Զոշչենկոյի և Ախմատովայի նման սովետական գրականությանը խորթ մարդկանց դեկավարող դերը գրավել ամսագրերում։ Ավելին,— գիտենալով պարտիայի վերաբերմունքը դեպի Զոշչենկոն և նրա «ստեղծագործությունը» Լենինգրադի Քաղկոմը (ընկ. ընկ. Կապուստին և Շիրոկով), չունենալով իրավունք այդ բանի համար, Քաղկոմի ս. թ. 26/VI որոշումով հաստատել է «Զվեզդա» ամսագրի խմբ. կոլեգիայի նոր կազմ, որի մեջ մտցվել է Զոշչենկոն։ Դրանով իսկ, Լենինգրադի Քաղկոմը թույլ է տվել քաղաքական կոպիտ սխալ։ «Լենինգրադսկայա Պրավդան» թույլ է տվել սխալ՝ գնահատելով Յուրի Գերմանի կասկածելի գործաբանական ռեցենզիան Զոշչենկոյի բոլշևիկյան մասին ս. թ. հուլիսի 6-ի համարում։

Համկ(բ)Պ Կենտկոմի Պրոպագանդայի Վարչությունը հարկ եղած կոնտրոլը չի տարհոսել լենինգրադյան ամսագրերի աշխատանքի վրա։

Համկ(բ)Պ Կենտկոմը որոշում է.

1. Պարտավորեցնել «Զվեզդա» ամսագրի խմբագրությանը, Սովետական Գրողների Միության Վարչությանը և Համկ(բ)Պ Կենտկոմի Պրոպագանդայի Վարչությանը՝ միջոցներ ձեռք առնել անպատմանոթեն վերացնելու ներկա որոշման մեջ նշված ամսա-

պրի սխալներն ու թերությունները, շտկել ամսագրի դիծը և ապահովել ամսագրի բարձր իդեական և գեղարվեստական մակարդակը՝ դաստիարակելով ամսագրի մեջ Զոշչենկոյի, Ախմատովայի և նրանց նմանների երկերի մուտք գործելը։

2. Նկատի ունենալով այն, որ Լենինգրադում երկու գրական-գեղարվեստական ամսագրի հրատարակելու համար ներկայումս չկան համապատասխան պայմաններ, դադարեցնել «Լենինգրադ» ամսագրի հրատարակությունը՝ Լենինգրադի գրական ուժերը կենտրոնացնելով «Զվեզդա» ամսագրի շուրջը։

3. «Զվեզդա» ամսագրի խմբագրության աշխատանքի մեջ հարկ եղած կարգ հաստատելու և ամսագրի բովանդակությունը լրջորեն լավացնելու նպատակով, ամսագրում ունենալ գլխավոր խմբագիր և նրան կից՝ խմբ. կոլեգիա։ Դտնել, որ ամսագրի գլխավոր խմբագիրը լիակատար պատասխանատվություն է կրում ամսագրի գաղափարական-քաղաքական ուղղության և ամսագրի մեջ հրապարակվող երկերի որակի համար։

4. «Զվեզդա» ամսագրի գլխավոր խմբագիր հաստատել ընկ. Ա. Մ. Սգուլինին՝ պահպանելով նրա՝ Համկ(բ)Պ կենտկոմի Պրոպագանդայի Վարչության պետի տեղակալի պաշտոնը։

Օգոստոսի 26-ին

Համկ(բ)Պ կենտկոմի որոշումը՝ «Դրամատիկական թատրոնների ռեպերտուարի և նրա բարելավման միջոցառումների մասին

Քննարկելով դրամատիկական թատրոնների ռեպերտուարի և դրա բարելավման միջոցառումների հարցը՝ Համկ(բ)Պ կենտկոմը անբավարար է գտնում թատրոնների ռեպերտուարի վիճակը։

Դրամատիկական թատրոնների ռեպերտուարի այժմյան դրության գլխավոր թերությունն այն է, որ ժամանակակից թեմաներով պրված սովետական հեղինակների պիեսները փոքրաթիվ են և մղված երկրի խոշորագույն դրամատիկական թատրոնների ռեպերտուարից։ Մոսկվայի Գեղարվեստական Թատրոնում բեմադրվող 20 ներկայացումից միայն 3-ն է նվիրված ժամանակակից սովետական կյանքին, Փոքր Թատրոնում՝ 20 ներկայացումից 3-ը, Մոսսովետի անվան Թատրոնում՝ 9-ից 2-ը, Վախթանգովի անվան Թատրոնում՝ 10-ից 2-ը, Կամերային Թատրոնում՝ 11-ից 3-ը, Լենինպրադի Պուշկինի անվան Թատրոնում՝ 10-ից 2-ը, Կիևի Ֆրանկոյի անվան դրամատիկական Թատրոնում՝ 11-ից 3-ը, Խարկովի Շևչեն-

կոչի անվան թատրոնում՝ 11-ից 2-ը, Սվերդլովսկի դրամատիկական թատրոնում՝ 17 ներկայացումից 5-ն է ժամանակակից սովետական թեմայով բեմադրվում:

Ռեպերտուարի բացահայտորեն անընդմեջ դրությունը էլ ավելի է խորանում նրանով, որ թատրոնների բեմադրած ժամանակակից թեմաներով պիեսների փոքրաթիվ քանակում կան թույլ, դաղափարազուրկ (Վոդոպյանովի ու Լապտևի «Հարկադիր վայրէջքը», Տուր եղբայրների «Ծննդյան օրը», Ռիբակի ու Սավչենկոյի «Ինքնաթիռն ուշանում է մեկ օրով», Ա. Գլադկովի «Նոր տարվա պիշերը», Տուր եղբայրների «Արտակարգ օրենքը», Ռախմանովի և Ռիսի «Պատուհան անտառում»-ը, Պոպովինի «Մակուչկավարուհին» և մի քանի ուրիշները): Որպես կանոն՝ այդ պիեսներում սովետական կյանքն մարդիկ պատկերվում են այլանդակ-ծաղրանկարային ձևով, պրիմիտիվ և կիսակիրթ, քաղքենիական հաշակներով ու բարքերով, իսկ բացասական պերսոնաժները օժտված են քնավորության ցայտուն գծերով, ցույց են տրվում ուժեղ, կամային և ճարպիկ: Այդպիսի պիեսներում իրադարձությունները պատկերվում են հակասական մտացածին ու կեղծ, որով և այդ պիեսներն ստեղծում են սովետական կյանքի մասին ոչ ճիշտ, աղավաղված պատկերացում: Թատրոններում բեմադրվող ժամանակակից թեմաներով պիեսների զգալի մասը հակագեղարվեստական է ու պրիմիտիվ, գրված է անվարժ, անգրագետ, դրանց հեղինակները բավականաչափ չգիտեն գրական ու ժողովրդական լեզուն: Բացի դրանից՝ շատ թատրոններ անպատասխանատու են վերաբերվում սովետական կյանքին վերաբերող ներկայացումներին: Հաճախ թատրոնների ղեկավարները այդ ներկայացումները հանձնարարում են բեմադրիչ երկրորդական ռեժիսյորների, խաղի մեջ են ներդրավում թույլ ու անփորձ արտիստների, անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում բատերական բեմադրությունների ձևավորմանը, որի հետևանքով ժամանակակից թեմաներով ներկայացումներն ստացվում են անգույն ու նվազ դեղարվեստական: Այս ամենը հանգում է այն բանին, որ շատ դրամատիկական թատրոններ իրականում կուլտուրայի, սովետական առաջավոր գաղափարախոսության ու բարոյականության օջախներ չեն: Դրամատիկական թատրոնների ռեպերտուարի այդ դրությունը չի համապատասխանում աշխատավորների պատիարակության շահերին և չի կարող հանդուրժելի լինել սովետական թատրոնում:

688—39

Արվեստի Գործերի Կոմիտեի և դրամատիկական թատրոնների գործունեության մեջ եղած դլխավոր թերությունը պատմական թեմաներով պիեսների բեմադրությամբ չափից դուրս հրապուրվելն է։ Այժմ թատրոններում բեմադրվող մի շարք պիեսներում, որոնք պատմական ու դաստիարակչական ոչ մի նշանակություն չունեն, իդեալականացվում է թագավորների, խաների, տոհմիկ իշխանների կյանքը (Սկրիբի «Մարգարիտ Նավառացի նավելները», Հաջի Շուբթաբովի «Խորեզմը», Կասբոմովի «Թախտաս Ծոջենթցին», Տաջիբաևի «Մենք դաշտաններ ենք», Բուրունդուկովի «Իդուկայ և Մուրադըմ»)։

Համկ(բ)Պ Կենտկոմը գտնում է, որ Արվեստի Գործերի Կոմիտեն սխալ դիծ է տանում՝ թատրոնների ռեպերտուարի մեջ արմատավորելով արտասահմանյան բուրժուական դրամատուրգների պիեսները։ «Խակուատով» հրատարակչությունը Արվեստի Գործերի Կոմիտեի առաջադրանքով լույս է ընծայել ժամանակակից անգլիական ու ամերիկյան դրամատուրգների մեկ գործողությամբ պիեսների մի ժողովածու։ Այդ պիեսները նմուշ են արտասահմանյան ցածրակ ու դեհիկ դրամատուրգիայի, որը բացահայտորեն բուրժուական հայացքներ ու բարոյականություն է քարոզում։ Վերջին ժամանակս Արվեստի Գործերի Կոմիտեն երկրի դրամատիկական թատրոններին է ուղարկել՝ Մորիսոնի «Միստըր Պարկերի սպանությունը», Պիներոյի «Վտանգավոր տարիք», Մոգեմի «Շրջանակը» և «Պենելոպան», Բեռնարի «Իմ կաֆեն», Լաբիշի ու Դելակուրի «Փոշի փչել աչքերին», Կաուֆմանի ու Հարթի «Ճաշին հյուր եկավ», Դյուրանի «Նշանավոր Մերի», Օժիոյի և Սանդրոյի «Կոռնիկյան վրեժ կամ քեռու քմայքները» և այլ պիեսներ։ Այս պիեսների մի մասը բեմադրվել է դրամատիկական թատրոններում։ Թատրոնների կոլեկտիվ արտասահմանյան բուրժուական հեղինակների պիեսների բեմադրումն ըստ էության եղել է՝ սովետական բեմը տրամադրել բուրժուական ռեակցիոն գաղափարախոսության ու մորալը պրոպագանդելու համար, սովետական հասարակության թշնամի աշխատավոր հայացքով սովետական մարդկանց գիտակցությունը թունավորելու, գիտակցության և կենցաղի մեջ կապիտալիզմի մնացուկները կենդանացնելու փորձ։ Արվեստի Գործերի Կոմիտեի կողմից նման պիեսների լայն տարածումը թատրոնների աշխատողների մեջ և այդ պիեսների բեմ հանելը եղել է Արվեստի Գործերի Կոմիտեի քաղաքական ամենամոտիտ սխալը։

Համկ(բ)Պ Կենտկոմը նշում է, որ Արվեստի Գործերի Կոմիտեն

դերի է եղել թատերական աշխատողների հետամնաց մասի ձեռքին, բաց է թողել իր ձեռքից կենտրոնական ու տեղական թատրոնների համար ռեպերտուարի ընտրությունը՝ ինքնահոսի մատնելով ռեպերտուարի կազմումը:

ՀամԿ(բ)Պ Կենտկոմը գտնում է, որ դրամատիկական թատրոնների ռեպերտուարի խոշոր թերությունների կարևոր պատճառներից մեկը դրամատուրգների անբավարար աշխատանքն է: Շատ դրամատուրգներ արդիականության արմատական հարցերից մեկուսի են քաշված, չեն ճանաչում կյանքը և ժողովրդի պահանջմունքները, չեն կարողանում պատկերել սովետական մարդու լավագույն գծերն ու հատկությունները: Այդ դրամատուրգները մոռանում են, որ սովետական թատրոնը կարող է կատարել իր կարևոր դերը աշխատավորների դաստիարակման գործում միայն այն դեպքում, եթե ակտիվորեն պրոպագանդի ենթարկի սովետական պետության քաղաքականությունը, որը սովետական իրավակարգի կենսական հիմունքն է:

Դրամատուրգների աշխատանքում բացակայում է անհրաժեշտ կապն ու ստեղծագործական աշխատակցությունը թատրոնների հետ: Սովետական Գրողների Միության Վարչությունը, որի պարտականությունն է ուղղել դրամատուրգների ստեղծագործությունը դեպի արվեստի ու գրականության հետագա զարգացման շահերը, փաստորեն հեռացել է դրամատուրգների գործունեությունը ղեկավարելուց, ոչինչ չի անում նրանց ստեղծած երկերի գաղափարագեղարվեստական մակարդակը բարձրացնելու համար, չի պայքարում դրամատուրգիայում եղած գռեհկության ու խալտուրայի դեմ:

Դրամատիկական թատրոնների ռեպերտուարի անբավարար վիճակը բացատրվում է նաև բոլշևիկյան թատերական սկզբունքային. քննադատության բացակայությամբ: Սովետական մամուլում թատերական քննադատների դերում հանդես են գալիս չափազանց փոքրաթիվ մասնագետներ: Լրագիրները, գրական-գեղարվեստական և թատերական հանդեսները քիչ են առաջ քաշում պիեսներն ու թատերական բեմադրությունները օբյեկտիվորեն ու անաչառ կերպով քննարկելու ընդունակ քննադատներ: Առանձին քննադատներ պիեսների ու ներկայացումների իրենց գնահատականներում ղեկավարվում են ոչ թե սովետական դրամատուրգիայի ու թատերական արվեստի գաղափարական ու գեղարվեստական

զարգացման շահերով, այսինքն պետության ու ժողովրդի շահերով, այլ խմբակային, բարեկամական, անձնական շահերով։ Ներկայացումների մասին հրապարակվող հոդվածները հաճախ գրվում են արվեստին քիչ իրազեկ անձեր, նոր ներկայացումների գործնական քննարկումը այդ հոդվածներում նենգափոխվում է ներկայացումների իսկական նշանակությանն ու մակարդակին չհամապատասխանող սուբյեկտիվ ու կամայական գնահատականներով։ Պիեսների ու ներկայացումների մասին հաճախ ռեցենզիաներ են գրվում ընթերցողներին քիչ մատչելի ճամարտակային մի լեզվով։ «Պրավդա», «Իզվեստիա», «Կոմսոմոլսկայա Պրավդա», «Տրուդ» թերթերը թերագնահատում են թատերական բեմադրությունների դաստիարակչական հսկայական նշանակությունը և արվեստի հարցերին խիստ աննշան տեղ են հատկացնում։

Բոլորովին անբավարար են աշխատում «Սովետսկոե իսկուստվո» թերթը և «Տյատր» ամսագիրը։ «Սովետսկոյե իսկուստվոն» և «Տյատրը», որ կոչված են օգնելու դրամատուրգներին ու թատրոնի աշխատողներին ստեղծելու գաղափարապես ու գեղարվեստորեն լիարժեք պիեսներ ու ներկայացումներ, ամոթխածորեն ու անշնորհք կերպով պաշտպանում են լավ պիեսները, միևնույն ժամանակ անզուսպ գովաբանում միջակ ներկայացումները, լռությամբ են անցնում թատրոնների ու Արվեստի Գործերի Կոմիտեի սխալների վրայով՝ դրանով էլ սովետական մամուլին խորթ տենդենցներ ու բարքեր աճեցնելով։ «Սովետսկոե իսկուստվո»-ի էջերում թատերական քննադատությունը կրում է գերատեսչական բնույթ, քննադատների ու թատերական աշխատողների բարեկամական հարաբերությունները, մասնավոր շահերը դրա մեջ գերադասվում են հասարակական շահերին։ «Սովետսկոե իսկուստվո» թերթը չի կարողացել ճիշտ ու սկզբունքային դիրք գրավել դրամատուրգիական երկերը և թատրոնների աշխատանքը գնահատելիս և դրանով էլ ոչ միայն չի նպաստել, այլ նույնիսկ խոչընդոտ է հանդիսացել բոլշևիկյան քննադատության ծավալմանը։ Այս տիպի թատերական «քննադատության» առկայությունը հանգում է այն բանին, որ մեր քննադատներ, դրամատուրգներ և թատերական աշխատողներ կորցնում են պատասխանատվությունը ժողովրդի առաջ, դադարում են առաջ շարժվել և չեն նպաստում սովետական արվեստի հետագա զարգացմանը։

ՀամԿ(բ)Պ Կենտկոմը որոշում է.

1. Պարտավորեցնել Արվեստի Գործերի Կոմիտեի նախագահ ընկ. Խրապչենկոյին ամենակարճ ժամկետում վերացնել ներկա որոշման մեջ նշված լուրջ թերություններն ու սխալները։

2. Հաշվի առնելով թատրոնի նշանակությունը ժողովրդի կոմունիստական դաստիարակության գործում՝ ՀամԿ(բ)Պ Կենտկոմը պարտավորեցնում է Արվեստի Գործերի Կոմիտեին և Սովետական Գրողների Միության Վարչությանը ուշադրությունը կենտրոնացնել ժամանակակից սովետական ռեպերտուար ստեղծելու վրա։

ՀամԿ(բ)Պ Կենտկոմը դրամատուրգների ու թատրոնի աշխատողների առաջ խնդիր է դնում՝ ստեղծել գեղարվեստական տեսակետից վառ, լիարժեք երկեր սովետական հասարակության կյանքի, սովետական մարդու մասին։ Դրամատուրգներն ու թատրոնները պետք է պիեսներում ու ներկայացումներում արտացոլեն սովետական հասարակության կյանքը նրա անընդհատ առաջխաղացման մեջ, ամեն կերպ նպաստեն սովետական մարդու բնավորության լավագույն կողմերի հետագա զարգացմանը, որոնք առանձին ուժով երևան եկան Հայրենական Մեծ Պատերազմի ժամանակ։ Մեր դրամատուրգներն ու ռեժիսորները կոչված են ակտիվորեն մասնակցելու սովետական մարդկանց դաստիարակման գործին, պատասխանելու նրանց կուլտուրական բարձր պահանջմունքներին, դաստիարակելու սովետական երիտասարդությանն առույգ, կենսուրախ, հայրենանվեր և մեր գործի հաղթանակին հավատացող, խոչընդոտներից չվախեցող, ամեն տեսակ դժվարություններ հաղթահարելու ընդունակ։ Դրա հետ միասին սովետական թատրոնը կոչված է ցույց տալու, որ այս հատկությունները հատուկ են ոչ թե առանձին, ընտրյալ մարդկանց, հերոսներին, այլ բազում միլիոն սովետական մարդկանց։

Անհրաժեշտ է, որ դրամատուրգիայի երկեր ստեղծելու ընդունակ բոլոր գրողները ակտիվորեն, ստեղծագործորեն ներգրավվեն թատրոնների այնպիսի ռեպերտուար ստեղծելու կենսական գործի մեջ, որ իր որակով արժանի լինի ժամանակակից հանդիսատեսին։

3. Արվեստի Գործերի Կոմիտեի առաջ դնել որպես հիմնական գործնական խնդիր՝ ամեն մի դրամատիկական թատրոնում ամեն տարի կազմակերպել ժամանակակից սովետական թեմայով գրո-

ված, գաղափարական ու գեղարվեստական տեսակետից բարձրարակ ոչ պակաս 2—3 պիեսի բեմադրության:

Պարտավորեցնել Թատրոններին արմատապես բարելավել ժամանակակից սովետական պիեսների բեմադրության որակը, այդ պիեսների բեմադրության համար առանձնացնել լավագույն ռեժիսորներին ու արտիստներին, հասնել ներկայացումների գեղարվեստական ձևավորման բարձր որակի:

4. Առաջարկել Արվեստի Գործերի Կոմիտեին ռեպերտուարից հանել գաղափարազուրկ ու նվազ գեղարվեստական պիեսները, միշտ հետևել, որ մեծ, դասական ու գաղափարազուրկ, ինքնարժեք երկերը չթափանցեն Թատրոնները:

5. Ընդունելով քննադատության կարևոր դերը խորհրդային արվեստի զարգացման գործում՝ պարտավորեցնել «Պրավդա», «Իզվեստիա», «Կոմսոմոլսկայա Պրավդա», «Տրուդ», «Սովետսկոե իսկուստվո» և «Լիտերատուրնայա գազետա» Թերթերի խմբագրություններին՝ Թերթերի աշխատանքին ներգրավել քաղաքականապես հասուն, որակավորված Թատերական ու գրական քննադատներին, սիստեմատիկորեն հոդվածներ հրապարակել նոր պիեսների ու ներկայացումների մասին, վճռական պայքար մղել Թատերական քննադատության ապոլիտիկության ու գաղափարազրկության դեմ:

Պարտավորեցնել ռեսպուբլիկական, երկրային և մարզային Թերթերի խմբագրություններին՝ սիստեմատիկ կերպով հոդվածներ ու ռեցենզիաներ գետեղել տեղական Թատրոնների նոր բեմադրությունների մասին:

6. Համկ(բ)Պ Կենտկոմը նշում է, որ սովետական պիեսները Թատրոններին հասցնելու համար լուրջ խոչընդոտ է պիեսները ուղղելու և տպագրելու ու Թատրոններում բեմադրելու իրավունք ունեցող ինստանցիաների ու առանձին անհատների մեծ քանակի առկայությունը: Պիեսների քննարկմամբ են զբաղվում Արվեստի Գործերի տեղական վարչությունները, Արվեստի Գործերի տեղական կոմիտեները, Գլխռեպերտկոմը, Արվեստի Գործերի Կոմիտեի Թատերական Գլխավոր վարչությունը, Կոմիտեի Գեղարվեստական խորհուրդը, Թատրոնների ղեկավարները, խմբագրությունների ու հրատարակչությունների աշխատողները: Սա վնասակար քաշքշուկ

ու անպատասխանատվություն է ստեղծում և խանգարում է, որ պիեսներն արագ շարժվեն դեպի թատրոնների բեմերը:

Առաջարկել Արվեստի Գործերի Կոմիտեին վերացնել այն խոչընդոտները, որոնք խանգարում են սովետական դրամատուրգների պիեսները հրատարակելուն, տարածելուն և թատրոններում բեմադրելուն, մինչև մինիմումը կրճատել պիեսների քննարկմամբ զբաղվող ինստանցիաների քանակը: Անձնական պատասխանատվություն դնել ընկ. Խրապչենկոյի վրա՝ սովետական դրամատուրգների գրած պիեսները Կոմիտեում ժամանակին, արագ քննարկելու համար:

7. ՀամԿ(բ)Պ Կենտկոմը հաստատում է, որ Արվեստի Գործերի Կոմիտեին կից Գեղարվեստական խորհուրդը չի կատարում իր դերը ռեպերտուարի որակը բարելավելու, նրա գաղափարական ու գեղարվեստական մակարդակը բարձրացնելու գործում, աշխատանքը կատարում է ինքնամփոփ, նրա գործունեության արդյունքները չեն դառնում թատերական հասարակության լայն շրջանների սեփականություն, չեն լուսաբանվում մամուլում:

Պարտավորեցնել Արվեստի Գործերի Կոմիտեին լրջորեն բարելավել Գեղարվեստական խորհրդի աշխատանքը: Գեղարվեստական խորհրդի նիստերում քննադատական վերլուծման ենթարկել նոր պիեսներն ու թատերական բեմադրությունները: Գեղարվեստական խորհրդի աշխատանքին վերաբերող նյութերը հրապարակել «Սովետսկոե իսկուսստվո» թերթում:

8. Արվեստի Գործերի Կոմիտեին թույլ տալ Սովետական Գրողների Միության Վարչության հետ միասին կազմակերպել 1946—1947 թվերին ժամանակակից սովետական լավագույն պիեսների Համամիութենական կոնկուրս:

9. Հաշվի առնելով միութենական ու ավտոնոմ ռեսպուբլիկաների թատրոնների ռեպերտուարի ծայրահեղ սահմանափակությունը և տեղական դրամատուրգների տարվելը հեռավոր անցյալի թեմաներով՝ պարտավորեցնել Արվեստի Գործերի Կոմիտեին միջոցներ ձեռք առնել ՍՍՌՄ ժողովուրդների լեզուներով թարգմանելու և ռեսպուբլիկաների թատրոնների ռեպերտուարի մեջ մտցնելու սովետական դրամատուրգների լավագույն երկերը:

10. Հանձնարարել Արվեստի Գործերի Կոմիտեին Սովետական Գրողների Միության Վարչության հետ միասին ընթացիկ տարվա

աշնանը անց կանցնել պրամատուրդների և թատերական արվեստի գործիչների խորհրդակցություն ռեպերտուարի, դրամատուրգների ու թատրոնների ստեղծագործական համատեղ աշխատանքի հարցի մասին:

Ոգոստոս

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Արվեստի Գործերի Վարչությունը հայտարարում է Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 30-ամյակին նվիրված լավագույն պիեսների մրցանակաբաշխության:

Ոգոստոս

Ընկեր Ա. Ա. Ժդանովի զեկուցումը Լենինգրադի պարտիական ակտիվի ժողովում և գրողների ժողովում Համկ(բ)Պ Կենտկոմի «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին» որոշման հիմքերի մասին:

Ա. Ա. Ժդանովի զեկուցումից.

«Ընկերներ, մեր սովետական գրականությունը ապրում է և պիտի ապրի ժողովրդի շահերով, հայրենիքի շահերով: Գրականության ժողովրդի հարատև գործն է: Սհա թե ինչու ձեր ամեն մի հաջողությունը, ամեն մի նշանակալից ստեղծագործություն ժողովուրդը դիտում է որպես իր հաղթանակը, ահա թե ինչու յուրաքանչյուր հաջող երկ կարելի է համեմատել շահած ճակատամարտի հետ, կամ թե անհաջող ճակատում տարած խոշոր հաղթանակի հետ: Ընդհակառակը, սովետական գրականության յուրաքանչյուր անհաջողություն վիրավորական և դառն է ժողովրդի, պարտիայի, պետության համար: Հենց այդ էլ նկատի ունի իր որոշմամբ Կենտկոմը, որը հոգ է տանում ժողովրդի շահերի մասին, նրա գրականության շահերի մասին և խիստ անհանդրժողությամբ»:...

«Բուրժուական աշխարհին դուր չեն գալիս մեր հաջողությունները ինչպես մեր երկրի ներսում, այնպես էլ միջազգային ասպարեզում: Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով ամբապնդվեցին սոցիալիզմի դիրքերը: Սոցիալիզմի հարցը օրակարգում է դրված Եվրոպայի շատ երկրներում: Դա դուր չի գալիս ամեն գույնի իմպերիալիստներին, նրանք վախենում են սոցիալիզմից, վախենում են մեր սոցիալիստական երկրից, որն օրինակ է

հանդիսանում ամբողջ առաջավոր մարդկության համար: Իմպերիալիստները, նրանց գաղափարական կամակատարները, նրանց գրականագետներն ու ժուռնալիստները, նրանց քաղաքագետներն ու դիվանագետներն ամեն կերպ ձգտում են զրպարտել մեր երկիրը, այն ներկայացնել ոչ ճիշտ լույսի տակ, զրպարտել սոցիալիզմը: Այս պայմաններում սովետական գրականության խնդիրն է՝ ոչ միայն հարվածին պատասխանել հարվածով ընդդեմ այդ ամբողջ նողկալի զրպարտության ու հարձակումների մեր սովետական կուլտուրայի, սոցիալիզմի վրա, այլև համարձակորեն խարազանել և հարձակում գործել հյուծախտի ու նեխման վիճակում գտնվող բուրժուական կուլտուրայի վրա»:...

«Մեզ, սովետական առաջավոր կուլտուրայի ներկայացուցիչներիս, սովետական հայրենասերներիս վայե՞լ է արդյոք բուրժուական կուլտուրայի առաջ խոնարհվելու դերը, կամ թե աշակերտի դերը: Իհարկե, մեր գրականությունը, որն արտացոլում է ավելի բարձր հասարակակարգ, քան որևէ բուրժուական-դեմոկրատական հասարակակարգ, արտացոլում է այն կուլտուրան, որը շատ անգամ ավելի բարձր է, քան բուրժուական կուլտուրան,— իրավունք ունի, որ ուրիշներին սովորեցնի համամարդկային նոր բարոյականությունը: Ուրիշ որտե՞ղ կգտնեք դուք այնպիսի ժողովուրդ և այնպիսի երկիր, ինչպես մեզ մոտ: Որտե՞ղ դուք կգտնեք մարդկանց այնպիսի հոյակապ հատկություններ, ինչպիսիք մեր սովետական ժողովուրդը ցույց տվեց Հայրենական Մեծ Պատերազմում և ինչպիսիք նա յուրաքանչյուր օր դրսևորում է աշխատանքային գործերում, անցնելով տնտեսության ու կուլտուրայի խաղաղ զարգացմանը և վերականգնմանը: Յուրաքանչյուր օրը մեր ժողովրդին բարձրացնում է ավելի ու ավելի վեր: Մենք այսօր այն չենք, ինչ որ երեկ էինք և վաղը այն չենք լինի, ինչ որ այսօր ենք: Մենք արդեն այն ռուսները չենք, ինչ որ մինչև 1917 թվականն էինք, և Ռուսիան էլ արդեն այն չէ, և մեր բնավորությունն էլ այն չէ: Մենք փոխվել և աճել ենք այն մեծագույն վերափոխությունների հետ միասին, որոնք արմատապես փոխեցին մեր երկրի դեմքը:

Ցույց տալ սովետական մարդկանց այս նոր բարձր հատկությունները, ցույց տալ մեր ժողովրդին ո՛չ միայն նրա այսօրվա վիճակում, այլև տեսնել նրա վաղվան օրը, օգնել լուսարձակով լուսավորելու առաջընթաց ուղին,— այս է յուրաքանչյուր բարե-

խիղճ սովետական գրողի խնդիրը։ Գրողը չի կարող իրադարձությունների պոչից քարշ գալ, նա պարտավոր է ընթանալ ժողովրդի առաջավոր շարքերում, ժողովրդին ցույց տալով նրա զարգացման ուղին։ Ղեկավարվելով սոցիալիստական ռեալիզմի մեթոդով, բարեխղճորեն և ուշադիր ուսումնասիրելով մեր իրականությունը, աշխատելով ավելի խորը ներթափանցել մեր զարգացման պրոցեսների էության մեջ, գրողը պետք է դաստիարակի ժողովրդին և գաղափարապես զինի նրան։ Ընտրելով սովետական մարդու լավագույն զգացմունքները և հատկությունները, նրա առաջ բաց անելով նրա վաղվան օրը, մենք պետք է միևնույն ժամանակ մեր մարդկանց ցույց տանք, թե նրանք ինչպիսին չպետք է լինեն, պետք է խարազանենք երեկվա մնացուկները, որոնք սովետական մարդկանց խանգարում են առաջ ընթանալ։ Սովետական գրողները պետք է օգնեն ժողովրդին, պետությանը, պարտիային՝ դաստիարակելու մեր երիտասարդությանը, դարձնելով նրան առույգ, իր ուժերին հավատացող, ոչ մի դժվարությունից չվախեցող»։

Սեպտեմբերի 2-ին

Մոսկվայի Գրողների ակումբում տեղի է ունենում ՍԳՄ պարտիական կազմակերպության դռնբաց ժողովը, նվիրված ընկ. Ա. Ժդանովի «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին արված զեկուցմանը։

Զեկուցում է Ա. Ֆադեևը։

Սեպտեմբերի 4-ին

ՀամԿ(բ)Պ Կենտկոմի որոշումը «Մեծ կյանք» կինոֆիլմի մասին.

«ՀամԿ(բ)Պ Կենտկոմը նշում է, որ ՍՍՌՄ Կինեմատոգրաֆիայի մինիստրության կողմից պատրաստված «Մեծ կյանք» կինոֆիլմը (երկրորդ սերիա, ռեժիսյոր Լ. Լուկով, սցենարիայի հեղինակ Պ. Նիլին), արատավոր է իդեական-քաղաքական տեսակետից և ծայրահեղ թույլ գեղարվեստականորեն։

Ո՞րոնք են «Մեծ կյանք» ֆիլմի արատներն ու թերությունները։

Ֆիլմում պատկերված է Դոնբասի վերականգնման ձեռնար-

կելու միայն մի աննշան էպիզոդը, որը ճիշտ պատկերացում չի տալիս սովետական պետության կողմից Դոնեցյան ավազանում անցկացվող վերականգնման աշխատանքների իրական թափի և նշանակության մասին։ Միաժամանակ, Դոնբասի վերականգնումը ֆիլմում գրավում է աննշան տեղ, իսկ գլխավոր ուշադրությունը նվիրված է ամեն տեսակ անձնական ապրումների և կենցաղային տեսարանների պրիմիտիվ նկարագրության։ Դրա հետևանքով ֆիլմի քովանդակությունը չի համապատասխանում նրա անվանը։ Ավելին — ֆիլմի «Մեծ կյանք» անունը հրնչում է որպես ծաղր սովետական իրականության հասցեին։

Ֆիլմում ակնհայտորեն իրար են խառնված մեր արդյունաբերության զարգացման երկու տարբեր էպոխաներ։ «Մեծ կյանք» ֆիլմի մեջ ցույց տրված արտադրության տեխնիկայի ու կուլտուրայի մակարդակի համաձայն, կինոնկարն արտացոլում է ավելի շուտ Դոնբասի վերականգնման ժամանակաշրջանը քաղաքացիական պատերազմի ավարտումից հետո, և ոչ թե ժամանակակից Դոնբասն իր առաջավոր տեխնիկայով ու կուլտուրայով, որ ստեղծված է ստալինյան հնգամյակների տարիներում։ Ֆիլմի հեղինակները դժոտղի մեջ ստեղծում են կեղծ պատկերացում, իբր թե Դոնբասի շախտերի վերականգնումը՝ գերմանացի զավթիչներից Դոնբասն ազատագրելուց հետո և ածուխի հանույթը Դոնբասում իրագործվում են ոչ թե ժամանակակից առաջավոր տեխնիկայի և աշխատանքային պրոցեսների մեխանիզացիայի հիման վրա, այլ կոպիտ ֆիզիկական ուժի գործադրման, վաղուց հնացած տեխնիկայի և աշխատանքի կոնսերվատիվ մեթոդների միջոցով։ Դրանով իսկ, ֆիլմում խեղաթյուրվում է առաջավոր տեխնիկայի և արտադրության բարձր կուլտուրայի վրա հիմնված մեր արդյունաբերության հետպատերազմյան վերականգնման հեռանկարը։

«Մեծ կյանք» ֆիլմում Դոնբասի վերականգնման գործն այնպես է պատկերված, իբր թե բանվորների կողմից շախտերը վերականգնելու նախաձեռնությունը ոչ միայն օժանդակության չի հանդիպել պետության կողմից, այլև շախտյորներն այդ անցկացրել են պետական կազմակերպությունների հակադեցության պայմաններում։ Պետական կազմակերպությունների և բանվորների կոլեկտիվի փոխհարաբերությունների այդպիսի պատկերումը հանդիսանում է ամբողջովին կեղծ և սխալ, որովհետև հայտնի է, որ մեր

երկրում բանվորների ամեն մի ինիցիատիվա ու նախաձեռնություն լայն աջակցություն են ստանում պետության կողմից:

Այդ կապակցությամբ, ֆիլմի մեջ կեղծ են պատկերված պարտիական աշխատողները: Վերականգնվող շախտի պարտկազմակերպության քարտուղարը ցույց է տրված միտումնավոր անհեթեթ դրության մեջ, քանի որ բանվորների կողմից շախտերը վերականգնելու նախաձեռնությանը նրա ցույց տված աջակցությունն, իբր թե նրան կարող է գնել պարտիայի շարքերից դուրս: Ֆիլմի բեմադրողները գործը պատկերում են այնպես, իբր թե պարտիան իր շարքերից կարող է հեռացնել անտեսության վերականգնման մասին հոգատարություն ցուցաբերող մարդկանց:

Դոնբասի վերականգնման հանգամանքները սխալ են պատկերված ֆիլմում այնպես, որ տպավորություն է ստացվում, իբր թե Հայրենական Պատերազմն ավարտվել է գերմանական զավթիչներից Դոնբասն ազատագրելով: Ֆիլմը գործն այնպես է պատկերացնում, կարծես Դոնբասի վերականգնման սկզբում կատարվել է բանակի զորացրում և բոլոր զինվորներն ու պարտիզանները վերադարձել են խաղաղ զբաղմունքներին: Պատերազմի մասին, որն այդ ժամանակաշրջանում եռման մեջ էր, ֆիլմի մեջ խոսվում է որպես հեռավոր անցյալի:

«Մեծ կյանք» ֆիլմը քարոզում է հետամնացություն, անկուլտուրականություն և տգիտություն: Ֆիլմի բեմադրողները բոլորովին չեն պատճառաբանել և սխալ են ցույց տվել հետամնաց հայացքներ և տրամադրություններ ունեցող տեխնիկապես անգրագետ բանվորների մասսայական առաջքաշումը ղեկավար պաշտոններում: Ֆիլմի ռեժիսյորն ու սցենարիստը չեն հասկացել, որ մեր երկրում բարձր են գնահատվում և համարձակորեն առաջ են քաշվում կուլտուրական, ժամանակակից մարդիկ, որոնք լավ գիտեն իրենց գործը, և ոչ թե հետամնաց ու անկուլտուրական մարդիկ, և որ այժմ, երբ սովետական իշխանությունն ստեղծել է սեփական ինտելիգենցիա, անհեթեթ և վայրենի բան է՝ որպես դրական երևույթ պատկերել հետամնաց և անկուլտուրական մարդկանց առաջքաշումը ղեկավար պաշտոններում:

«Մեծ կյանք» ֆիլմում տրված է սովետական մարդկանց կեղծ, խեղաթյուրված պատկերումը: Դոնբասը վերականգնող

բանվորներն ու ինժեներները ցույց են տրված որպես հետամնաց և քիչ կուլտուրական մարդիկ, բարոյական շատ ցածր հատկություններով։ Ֆիլմի հերոսներն իրենց ժամանակի մեծ մասը վատնում են անգործությամբ, զբաղվում են դատարկ շատախոսությամբ և հարբեցողությամբ։ Ըստ ֆիլմի մտահղացման ամենալավ մարդիկ հանդիսանում են անընդհատ հարբեցողներ։ Իբրև ֆիլմի հիմնական հերոսներ, հանդես են գալիս գերմանական ոստիկանության մեջ ծառայած մարդիկ։ Ֆիլմում պատկերված է սովետական կարգին բացահայտորեն խորթ տիպ (Ռաինին), որը գերմանացիների ժամանակ մնացել է Դոնբասում, որի քայքայիչ և պրովոկացիոն գործունեությունը մնում է անպատիժ։ Ֆիլմը սովետական մարդկանց օժտում է մեր հասարակությանը բոլորովին ոչ-հատուկ բարքերով։ Այսպես՝ շախտի աղատադրման համար մղած կռվում վիրավորված կարմիր բանակայիններն առանց որևէ օգնության թողնված են կռվի դաշտում, իսկ շախտյորի կինը (Սոնյա), անցնելով վիրավոր մարտիկների մոտով, հանդես է բերում լիակատար անհոգություն և անտարբերություն նրանց հանդեպ։ Ֆիլմում պատկերված է անհոգի ծաղրական վերաբերմունք Դոնբաս եկած երիտասարդ բանվորուհիների նկատմամբ։ Բանվորուհիներին տեղավորել են կեղտոտ, կիսաքանդ բարակի մեջ և հանձնում են մոլի բյուրոկրատի և սրիկայի (Ռաինինի) խնամքին։ Շախտի ղեկավարությունը սարրական հոգատարություն չի ցուցաբերում բանվորուհիների նկատմամբ։ Փոխանակ կարգի բերելու խոնավ, անձրևից կաթող շենքը, որտեղ տեղավորված են աղջիկները, կարծես ծաղրելու համար՝ նրանց մոտ ուղարկվում են վարձացնողներ՝ գաղմոշկապով և կիթառով։

Ֆիլմը վկայում է այն մասին, որ արվեստի որոշ աշխատողներ, ապրելով սովետական մարդկանց մեջ, չեն նկատում նրանց իդեալական և բարոյական բարձր հատկությունները, չեն կարողանում ճշմարտացի պատկերել նրանց արվեստի երկերում։

Ֆիլմի գեղարվեստական մակարդակը նույնպես քննադատության չի դիմանում։ Ֆիլմի առանձին կադրերը ցրիվ են եկած և կապված չեն ընդհանուր կոնցեպցիայով։ Ֆիլմում առանձին էպիզոդները կապելու համար ծառայում են հաճախակի կոնծաբանությունները, գռեհիկ ռոմանսները, սիրային արկածները, դիշերային մնծախոսությունները անկողնում։ Ֆիլմում մտցված երգերը (կո-

պոզիտոր՝ Ն. Բոգոսլովսկի, երգերի տեքստերի հեղինակներ՝ Ա. Ֆատյանով, Վ. Ագատով) թափանցված են կաբակային մելամաղձությամբ և խորթ են սովետական մարդկանց։ Բեմադրողների բոլոր այդ ցածրաճաշակ պրիոմները, որոնք կատարված են ամենատարբեր տեսակի ճաշակների համար և հատկապես՝ հետամնաց մարդկանց ճաշակների համար, հետին պլան են մղում ֆիլմի հիմնական թեման՝ Դոնբասի վերականգնումը։ Սովետական տաղանդավոր արտիստների կոլեկտիվը ֆիլմի բեմադրողների կողմից սխալ է օգտագործված։ Արտիստների վզին փաթաթել են անհեթեթ դերեր, նրանց տաղանդն ուղղված է պատկերելու պրիմիտիվ մարդկանց և իրենց բնույթով կասկածելի կենցաղային տեսարաններ։

ՀամԿ(բ)Պ Կենտկոմը գտնում է, որ Կինեմատոգրաֆիայի մինիստրությունը (ընկ. Բոլշակով), վերջին ժամանակներս, բացի արատավոր «Մեծ կյանք» նկարից, նախապատրաստել է մի շարք այլ անհաջող և սխալներով լի ֆիլմեր — «Իվան Ահեղ» ֆիլմի երկրորդ սերիան (ռեժիսյոր Ս. Էյզենշտեյն), «Ադմիրալ Նախիմով» (ռեժիսյոր Վ. Պուդովկին), «Հասարակ մարդիկ» (ռեժիսյորներ Գ. Կոզինցև և Լ. Տրաուբերգ)։

Ինչո՞վ են բացատրվում կեղծ և սխալներով լի ֆիլմերի արտադրության այդքան հաճախակի դեպքերը։ Ինչո՞ւ են անհաջողություն կրել սովետական հայտնի ռեժիսյորներ ընկ. ընկ. Լուկովը, Էյզենշտեյնը, Պուդովկինը, Կոզինցևը և Տրաուբերգը, որոնք անցյալում ստեղծել են բարձր-գեղարվեստական նկարներ։

Բանն այն է, որ Կինեմատոգրաֆիայի շատ վարպետներ՝ բեմադրողներ, ռեժիսյորներ, սցենարիաների հեղինակներ թեթևամիտ և անպատասխանատու են վերաբերվում դեպի իրենց պարտականությունները, անբարեխիղճ են աշխատում կինոֆիլմեր ստեղծելու վրա։ Նրանց աշխատանքի գլխավոր թերությունն այն է, որ նրանք չեն ուսումնասիրում այն գործը, որին ձեռնարկում են։ Այսպես՝ կինոռեժիսյոր Վ. Պուդովկինը ձեռնարկել է բեմադրել ֆիլմ Նախիմովի մասին, բայց չի ուսումնասիրել գործի դետալները և խեղաթյուրել է պատմական ճշմարտությունը։ Ստացվել է ֆիլմ ոչ թե Նախիմովի մասին, այլ պարահանդեսների և պարերի մասին՝ Նախիմովի կյանքից վերցված էպիզոդներով։ Դրա հետևանքով ֆիլմից դուրս են մնացել այնպիսի կարևոր պատմական փաստեր, որ ռուսները եղել են Սինոպում, և որ Սինոպի կռվի մեջ գերի են

վերցվել մի ամբողջ խումբ թուրքական ծովակալներ՝ հրամանատարի գլխավորությամբ։ Ռեժիսոր Ս. Էյզենշտեյնն «Իվան Ահեղ» ֆիլմի երկրորդ սերիայի մեջ ոգեւորություն է հանդես բերել պատմական փաստերի պատկերման մեջ՝ Իվան Ահեղի օպրիչնիկների պոգրեբով գործը ներկայացնելով որպես դեպեներատների շայկա, նման ամերիկական Կու-Կլուքս-Կլանին, իսկ Իվան Ահեղին՝ ուժեղ կամքի և բնավորության տեր մարդուն,— թույլ բնավորությամբ և կամազուրկ, Համլետի նման ինչ որ բան։ «Մեծ կյանք» ֆիլմի հեղինակները ոգեւորություն են հանդես բերել ժամանակակից Դոնբասի և նրա մարդկանց թեմայի ուսումնասիրության նկատմամբ։

Առարկան չդիտենալու, սցենարիստների և ռեժիսորների կողմից դեպի իրենց գործը թեթեւամիտ վերաբերվելու մեջ է անպետք ֆիլմեր թողարկելու հիմնական պատճառներից մեկը։

Համկ(բ)Պ կենտկոմը գտնում է, որ կինեմատոգրաֆիայի մինիստրությունը և ամենից առաջ՝ նրա ղեկավար բնկ. Բոլշակովը, վատ է ղեկավարում կինոստուդիաների, ռեժիսորների և սցենարիստների աշխատանքը, քիչ է հոգում լավացնելու թողարկվող ֆիլմերի որակը, անօգուտ ծախսում է մեծ միջոցներ։ Կինեմատոգրաֆիայի մինիստրության ղեկավարներն անպատասխանատու են վերաբերվում դեպի հանձնարարված գործը և անհոգություն ու անփութություն են ցուցաբերում ֆիլմի իդեական-քաղաքական բովանդակության և գեղարվեստական արժեքների նկատմամբ։

Համկ(բ)Պ կենտկոմը գտնում է, որ կինեմատոգրաֆիայի մինիստրությանը կից Գեղարվեստական խորհրդի աշխատանքը սխալ է կազմակերպված և խորհուրդը չի ապահովում թողարկման նախապատրաստվող ֆիլմերի անաչառ և գործնական քննադատությունը։ Գեղարվեստական խորհուրդը հաճախ ապրիորիկություն է հանդես բերում նկարների մասին իր դատողություններում, քիչ է ուշադրություն դարձնում դրանց իդեական բովանդակության վրա։ Գեղարվեստական խորհրդի շատ անդամներ սկզբունքայնություն չեն ցուցաբերում ֆիլմերի գնահատության մեջ, նկարների մասին դատողություններ են արտահայտում՝ ելնելով կինոֆիլմերի բեմադրողների հետ ունեցած իրենց անձնական, բարեկամական հարաբերություններից։ Միայն դրանով կարելի է բացատրել, որ Գեղարվեստական խորհուրդը «Մեծ կյանք» ֆիլմի

քննարկության ժամանակ չկարողացավ ըմբռնել պրա իդեական բովանդակությունը, ցուցաբերեց վնասակար լիբերալիզմ՝ բոլորովին անհիմն բարձր գնահատություն տալով ֆիլմին։ Քննադատության բացակայությունը կինեմատոգրաֆիայի բնագավառում, բնականաբար մթնոլորտը կինոյի ստեղծագործական աշխատողների միջավայրում, հանդիսանում են վատ կինոֆիլմեր արտադրելու գլխավոր պատճառներից մեկը։

Արվեստի աշխատողները պետք է հասկանան, որ նրանցից այնպիսիք, ովքեր առաջինությամբ և անպատասխանատու և թեթևամիտ կվերաբերվեն դեպի իրենց գործը, հեշտությամբ կարող են դուրս գտնվել սովետական առաջավոր արվեստից և շարքից դուրս դալ, որովհետև սովետական դիտողն աճել է, նրա կուլտուրական կարիքներն ու պահանջները մեծացել են, իսկ պարտիան ու պետությունը հետագայում ևս ժողովրդի մեջ դաստիարակելու են լավ ճաշակ և բարձր պահանջկոտություն դեպի արվեստի երկերը։

Համկ(բ)Պ Կենտկոմը որոշում է.

1. Նկատի ունենալով շարադրվածը «Մեծ կյանք» ֆիլմի երկրորդ սերիայի թողարկումն էկրանի վրա՝ արգելել։

2. Առաջարկել ՍՍՌՄ-ի Կինեմատոգրաֆիայի մինիստրությանը և մինիստրությանը կից Գեղարվեստական խորհրդին՝ անհրաժեշտ դասեր և եզրակացություններ հանել «Մեծ կյանք» կինոֆիլմի մասին Համկ(բ)Պ Կենտկոմի որոշումից և գեղարվեստական կինեմատոգրաֆիայի աշխատանքն այնպես կազմակերպել, որպեսզի առաջիկայում բացառվի նման ֆիլմեր թողարկելու որևէ հնարավորություն։

Սեպտեմբերի 4-ին

ՍՍՌՄ Սովետական Գրողների Միության վարչության Նախագահության բանաձևը՝ Համկ(բ)Պ Կենտկոմի «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին» որոշման կապակցությամբ։

Բանաձևից.

«Համկ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն նշեց, որ սովետական գրականության՝ աշխարհի ամենաառաջավոր գրականության ուժն այն է, որ նա մի գրականություն է, որ շունչ և չի կարող ունենալ

այլ շահեր, բացի ժողովրդի շահերը, պետության շահերը։ Սովետական գրականության խնդիրն է՝ օգնել պետությանը ճիշտ դաստիարակելու երիտասարդությանը, պատասխանել նրա պահանջնելին, դաստիարակել նոր սերունդը առույգ, իր գործին հավատացող, խոշընդոտներից չվախեցող, ամեն տեսակ դժվարություններ հաղթահարելու պատրաստ։

Դրա համար էլ դաղափարազրկության, ապոլիտիկության, «արվեստը արվեստի համար»-ի ամեն մի քարոզ դատապարտված է Համկ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի կողմից որպես սովետական գրականությանը խորթ, սովետական ժողովրդի ու պետության շահերի համար վնասակար։ Այդպիսի քարոզը չպետք է տեղ ունենա մեր ամսագրերում, գրքերում և գրական կազմակերպություններում։

Միության Նախագահությունն անհրաժեշտ է գտնում իր հետագա աշխատանքի հիմքում դնել Համկ(բ)Պ Կենտկոմի ցուցումները, որ տրված են «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի վերաբերյալ որոշման մեջ, և վճռականապես փոխել գաղափարա-գեղարվեստական ղեկավարման մեթոդները։ Գրականության մեջ խորթ ազդեցությունների դեմ, ամեն տեսակ գաղափարազրկության և ապոլիտիկության դրսևորումների դեմ պայքարելը, սովետական գրողի, որպես ժողովրդի, սովետական պետության շահերի հավատարիմ ու զգայուն արտահայտչի, ժողովրդի կոմունիստական դաստիարակության գործում պարտիայի օգնականի դաստիարակության գործում պարտիայի օգնականի դաստիարակությունը պետք է դառնա Գրողների Միության ամբողջ աշխատանքի գլխավոր բովանդակությունը։

ՍԳՄ Նախագահությունը իր կարևորագույն խնդիրն է համարում թե՛ Գրողների Միության ղեկավար օրգանների, նրա ամսագրերի ու հրատարակչության, և թե՛ բոլոր գրողների ուշադրությունը դարձնել դեպի ժամանակակից թեմաները, դեպի մեր ժողովրդի՝ սոցիալիստական տնտեսության վերականգնման ու զարգացման ուղղությամբ ցուցաբերած հերոսական աշխատանքի և սովետական մարդու լավագույն կողմերի ու հատկությունների արտացոլման թեմաները, հատկություններ, որ նա դրսևորեց Հայրենական Մեծ Պատերազմում և նոր ուժով հանդես է բերում սոցիալիստական հայրենիքի հզորության ամրապնդման ուղղությամբ կատարած ներկայիս շինարարական աշխատանքում։

688—40

Անհրաժեշտ է գրողների շրջանում սիստեմատիկ պրոպագանդա մղել ներքին և միջազգային կյանքի հիմնական հարցերի վերաբերյալ պարտիայի քաղաքականության մասին, լայն ինֆորմացիա տալ գրողներին պարտիայի ու կառավարության որոշումների մասին:

Այս ամբողջ աշխատանքը պետք է համակել կոմունիզմի ոգով, հարձակողական գաղափարախոսության մարտական ոգով:

Խարազանելով այն երկերը, որոնց մեջ արտահայտվում են բուրժուական Արևմուտքին ստորաքարշության անելու այս կամ այն դրսևորումները, որոնք հատուկ չեն սովետական մարդկանց, Լենինի-Ստալինի ուսմունքով զինված գրողները պետք է իրենց երկերում մերկացնեն կապիտալիստական շրջապատման բնույթը, պայքարեն նրա քայքայող ազդեցության դեմ, բացատրեն ժամանակակից իմպերիալիզմի բնույթը, իմպերիալիզմ, որ նոր արյունահեղ պատերազմների սպառնալիք է թաքցնում իր մեջ:

Գրողների Միության Նախագահությունը անհրաժեշտ է համարում, որ բոլոր գրական կազմակերպությունները, ամսագրերը և հրատարակչությունները բարձրացնեն իրենց պահանջկոտությունը երկերի գեղարվեստական որակի նկատմամբ, թույլ չտան, որ լույս տեսնեն անփույթ, վնիթի, ոչ լուրջ, շտապ կատարված և գրական լեզուն կեղտոտող երկեր»:

Սեպտեմբեր

ՍԳ Միության աշխատանքների ղեկավարման համար ՍՍՌՄ Գրողների Միության Նախագահության որոշմամբ ստեղծվում է քարտուղարություն. Ա. Ա. Ժդանով (գլխավոր քարտուղար), Կ. Մ. Սիմոնով, վ. վ. Վիշնևսկի, Ն. Ս. Տիխոնով, Ա. Ե. Կորնեյչուկ (գլխավոր քարտուղարի տեղակալներ) և քարտուղարության անդամներ՝ Բ. Լ. Գորբատով, Լ. Մ. Լեոնով, Ի. Գ. Սելվինսկի, Ա. Մ. Ֆադեև, Ա. Տ. Վինոգրադով, Ս. Ի. Զիկովանի, Այբեկ Մուսա և Յաշկուլ Կուլաև:

Սեպտեմբերի 10-ին

Երևան է ժամանում Հյուսիսային Կորեայի Կուլտուրայի և Հասարակական կազմակերպությունների գործիչների դելեգացիան:

Սեպտեմբերի 13-ին

Հայաստանի Սովետական Գրողների 2-րդ համագումարի աշխատանքներին մասնակցելու համար Նյու-Յորքից Երևան է ժամանում բանաստեղծ Կ. Սիտալը:

Սեպտեմբերի 20-ին

Հայաստանի Սովետական Գրողների 2-րդ համագումարի աշխատանքներին մասնակցելու համար Բեյրութից Երևան են ժամանում՝ «Ժողովրդի ձայն» թերթի խմբագիր Հ. Աղբաշյանը, «Անի» ամսագրի խմբագիր բանաստեղծ Վ. Վահյանը և բանաստեղծ Ա. Տերունյանը:

Սեպտեմբերի 22-ին

Հայաստանի Սովետական Գրողների 2-րդ համագումարի աշխատանքներին մասնակցելու համար Փարիզից Երևան են ժամանում՝ գրողներ Ա. Զարըգը, Լ. Մեսրոպը, Զ. Որբունին:

Սեպտեմբերի 22-ին

Հայաստանի Սովետական Գրողների 2-րդ համագումարի աշխատանքներին մասնակցելու համար Մոսկվայից Երևան են ժամանում՝ Ն. Տիխոնովը, Ս. Բորոդինը, Ս. Շերվինսկին, Վ. Զվյագինցևան, Մ. Պետրովիխը, Ի. Ալտմանը, Ի. Դեևը, Ս. Եվգենովը:

Սեպտեմբերի 22-ին

Խնկո Ապոր անվան գրադարանում կազմակերպվում է սովետական և արտասահմանի հայ գրողների հանդիպումը աշակերտների հետ:

Ելույթ են ունենում Ս. Բորոդինը, Հ. Աղբաշյանը, Հ. Գարագաշը, Կ. Սիտալը և ուրիշները:

Սեպտեմբերի 25-ին

Բացվում է Հայաստանի Սովետական Գրողների 2-րդ համագումարը:

Բացման խոսք է ասում Ավ. Իսահակյանը:

Զեկուցում են.

Հր. Գրիգորյան՝ «Սովետական հայ գրականությունը և նրա հետագա զարգացման ուղիները»:

Մ. Մկրյան՝ «Սովետահայ արձակը և նրա զարգացման հեռանկարները»։

Ռ. Վարդազարյան՝ «Սովետահայ պոեզիայի անցած ուղին»։

Ս. Հարությունյան՝ «Սովետահայ դրամատուրգիայի զարգացման հարցերը»։

Դ. Դեմիրճյան՝ «Հայ պրոլետարիատը Հայրենական Պատերազմի օրերին»։

Հ. Մամիկոնյան՝ «Գրական քննադատության արդի վիճակը և նրա խնդիրները»։

Տ. Հախումյան՝ «Սովետահայ դրականության չեզոքի մասին»։

Էդ. Թոփչյան՝ «Արտասահմանյան ժամանակակից հայ գրականությունը»։

Մտքերի փոխանակությանը մասնակցում են ընկերներ՝ Զ. Գրիգորյանը, Ս. Կարապետյանը, Հ. Սիրասը, Աբաքսը, Վ. Խեչումյանը, Ալ. Աբաքսմանը, Ն. Զարյանը, Գ. Սևունցը, Կ. Գրիգորյանը, Հ. Զնդին, Ստ. Զորյանը, Ար. Դավթյանը, Շ. Դադիանին, Ն. Տիխոնովը, Ս. Գրիգորյանը, Ք. Թափալցյանը, Ա. Բարսեղյանը, Ար. Գուլակյանը, Արազին, Հ. Մելիքյանը, Ռ. Զարյանը, Հ. Աղբաշյանը, Ի. Ալթմանը, Բ. Կարապետյանը, Ս. Մելիքսեթյանը, Հ. Շիրազը, Շերվինակին, Հ. Քոչարը, Լ. Մեսրոպը, Կ. Սիտալը, Հ. Գարագաշը, Ա. Երեմյանը, Վ. Վահյանը, Հ. Ղուկասյանը, Ս. Տերունյանը, Զ. Որբունին։

Համագումարը ընդունում է բանաձև։

Բանաձևից.

1. Գրական քննադատությունն իր այժմյան վիճակից դուրս բերելու և նրա հասարակական դերն ու հեղինակությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է, որ նա իր ամենօրյա աշխատանքներին մարտական ծրագիր դարձնի Համկ(բ)Պ Կենտկոմի օգոստոսի 14-ի, 26-ի և սեպտեմբերի 4-ի պատմական որոշումները և դուրս գա բոլշևիկյան սկզբունքայնության և պարտիականության լայն ասպարեզ։

2. Համագումարը պարտավորեցնում է մեր քննադատներին՝ սիստեմատիկորեն զբաղվել սովետահայ գրականության հարցերով, դրանք դարձնելով իրենց զբաղմունքի հիմնական առարկան։

3. Գրական քննադատությունը պետք է դուրս գա մակերեսային գրախոսությունների սահմաններից և զբաղվի սովետական

պրակտիկայի մարմնավորման հարցերով, նրա նոր օրինաչափությունների, զարգացման առանձին էտապների, առանձին հեղինակների ստեղծագործությունների ամբողջական ուսումնասիրությամբ: Գրական մամուլը պետք է կազմակերպի և լայն տեղ տա քննադատական հոդվածներին, տարեկան և վեցամսյա տեսություններին, գրական տեսական հոդվածներին:

4. Համագումարը քննադատների հիմնական խնդիրներից մեկը համարում է անողոք պայքար ծավալել դեկադենտական, անկումային, հոռետեսական, միստիկ, բուրժուա-նացիոնալիստական տրամադրությունների, գաղափարազուրկ, ապոլիտիկ գործերի, ֆորմալիստական տենդենցների, գրական խոտանի, ինչպես նաև սովետական իրականության և սովետական մարդու կերպարը աղավաղող ամեն մի փորձի դեմ:

5. Համագումարը գտնում է, որ միայն մարքսիստական-լենինյան առաջավոր տեսության ու կյանքի խորը և բազմակողմանի իմացության վրա հիմնված քննադատությունը կկարողանա տեսնել այն նորը, որ տեղի է ունենում մեր կյանքում և արվեստի ու գրականության մեջ, օբեկտիվորեն գնահատել գրական երկերը, վճռական պայքար մղել կեղծիքի, շաբլոնի, ֆորմալիզմի ու ինքնամպատակ էքսպերիմենտի դեմ, գաղափարազուրկ, ապոլիտիկ և անարվեստ գործերի դեմ: Միայն այդպիսի քննադատությունը կկարողանա լուրջ ազդեցություն գործել սովետական գրականության զարգացման ընթացքի վրա»:

«Գրական թերթ», 17 հոկտեմբերի, 1946:

Սեպտեմբերի 28-ին

Հանրային գրադարանում բացվում է հայ տպագիր գրքի ցուցահանդեսը:

Սեպտեմբեր

Ի. վ. Ստալինը պատասխանում է «Սընդեյ Թայմսի» Մոսկվայի թղթակից պ-ն Ալեքսանդր Վերտի հարցերին:

Սեպտեմբեր

Գրողների Միության Լենինականի բաժանմունքի գրողների ժողովը քննարկում է Համկ(բ)Պ Կենտկոմի որոշումը «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին:

Հոկտեմբերի 2-ին

ՍՍՌՄ Սովետական Գրողների Միության պարտիական կազմակերպության ժողովում Ա. Ա. Ֆադեևը զեկուցում է «Ընկ. Ա. Ա. Ժդանովի զեկուցումը և մեր մոտակա խնդիրները» հարցի մասին:

Ա. Ա. Ֆադեևի զեկուցումից.

«Ես ուզում եմ խոսել մեր սոցիալիստական ռեալիզմի մի քանի առանձնահատկությունների մասին, որոնց մենք բուն երևույթին բավարար ուշադրություն չենք դարձրել նախկին տեսական աշխատանքի մեջ — «ռևոլյուցիոն ռոմանտիկայի» մասին: Տգիտության մեծագույն ինքնավստահության բերմամբ, որը մասամբ կարելի է արդարացնել ջահելությամբ, մեզնից մի քանիսը, այդ թվում և ես, ՌԱՊՊ-ի գոյության շրջանում բավական վճռականորեն հանդես ենք եկել ռոմանտիկայի դեմ: Մինչդեռ սովետական գրողների պրակտիկան հակասում էր այդ տեսությանը: Մեր ետևը կանգնած է ռուս կլասիկ մեծ գրականությունը, որը բովանդակ աշխարհում հռչակվել է իր ռեալիզմով: Սակայն իր զգալի մասով նա ռոմանտիկ է բառի ամենալավ իմաստով: Տարօրինակ է պատկերացնել, որ քննադատական ռեալիզմը ապրել է միայն բացասման պաթոսով, թե ինքը ոչինչ չի հավատացել: Ռուս գրականությունը նրանով է պանծալի ու նշանավոր, որ լի է դրական հերոսներով»...

«Դարաշրջանի հիմնական կոնֆլիկտը՝ նորի, սոցիալիստականի կոնֆլիկտը՝ հնի, վերապրածի իր բոլոր դրսևորումներով, ունենում է ամենաբազմազան ձևեր: Հնի, եթե պայմանականորեն խոսենք, չարի պատկերման մեջ այնուամենայնիվ կան մեծ տրադիցիաներ, քան թե նորի պատկերման մեջ: Սակայն առայժմ գրողը չի տիրապետում նորին, այսինքն դրականին, ինչպե՞ս կարող է նա լուծել այդ կոնֆլիկտը իր երկի մեջ: Նա կոնֆլիկտի ստրուկն է: Մինչդեռ պետք է լինել նրա տերն ու տնօրենը: Միայն նա, ով ժամանակակից դրական սկզբունքով է սպառազինված և առաջ է նայում, միայն նա կարող է ամենայն ուժով ցույց տալ պայքարի մեծությունը, լարումը և դժվարությունները դարաշրջանի կոնֆլիկտում: Սրանումն է «ռևոլյուցիոն ռոմանտիկայի» մեծ նշանակությունը սոցիալիստական ռեալիզմի մեջ:

Այն գրողը, որ չի հասկանում սովետական մարդուն, պատկերում է նրան գորշ, անհետաքրքիր, շոր, գրքային, հանրահայտ տապալաի ճշմարտություններ ասող, մինչդեռ այդ մարդը կատարել է մեծագույն ուսուցիան, կատուցել է սոցիալիստական պետություն, հաղթանակ է տարել այնպիսի մի պատերազմում, որպիսին մենք ապրեցինք, և տիրապետում է ամենատաղանդավոր աշխատասիրությին, որը երբևիցե գոյություն է ունեցել աշխարհում. եթե գրողը չի տեսնում դա՝ այդ գրողն, իհարկե, ողորմելի է: Եթե գրողը կարող է պատկերել մեր մարդուն նրա հոգեկան հատկությունների ամբողջ ուժով՝ այդ գրողը կոնֆլիկտ տեսն է և նրան ոչ մի բան սարսափելի չէ»...

«Սոցկանդված, ծանր, կեղծ-նշանակալից ձևը մի ծանր ու անօգուտ բեռ է և խանգարում է գրողին:

Շատ բաներ, որոնք հատուկ էին մեծ ռեալիզմին— իրեն, իր մոքերը, զգացմունքներն արտահայտելու լիարժեքությունը— լիրիկան, պաթետիկան, հրապարակախոսությունը մեկ երկի մեջ, իր գեղարվեստական ներկապնակը դրսևորելու հնարավորությունների ճոխությունը ֆորմալիստական-էսթետիկական դպրոցը հանդեցրեց ողորմելի սուբեկտիվիզմին կամ այն կեղծ «օբեկտիվությանը», որտեղ անձնավորությունը դրսևորելու տեղ չկա, հնարավոր չէ արտահայտել իր համակրանքն ու հակակրանքը, չի կարելի դրսևորել տենդենցը իր լիարժեք գեղարվեստական արտահայտությամբ: Մինչդեռ մի՞թե կարելի է պատկերացնել որևէ ավելի «տենդենցիոզ» և միաժամանակ ավելի ազատ, ուստի և իսկական ներազդական բան, քան Պուշկինը, Գոգոլը, Տոլստոյը, Բալզակը, Նեկրասովը, Սալտիկով-Շչեդրինը և անցյալի ուրիշ շատ մեծ դուն ռեալիստներ: Իսկ ինչպիսի՜ արտահայտման մեծագույն ազատություն ու լիություն կա Գորկու մոտ:

Ուրեմն խոսքը ոչ թե ձևի թափթփվածության, այլ նոր մոքի, նոր բովանդակության ազատ ու կատարյալ արտահայտման մասին է»:

«Գրական թերթ», 27 հոկտեմբերի, 1946:

Հոկտեմբերի 5-ին

Քանաքեռում տեղի է ունենում Խ. Աբովյանի արձանի հանդիսավոր բացումը (գործ Ա. Սարգսյանի):

Ելույթ են ունենում՝ Ն. Տիխոնովը, Կ. Սիմոնովը:

Հոկտեմբեր

Թբիլիսիում կազմակերպվում է Գ. Սարյանի և Գ. Բորյանի ստեղծագործություններին նվիրված գրական երեկո։

Բացման խոսք է ասում՝ Ռ. Աղաբաբը։

Զեկուցում է Գ. Գրիգը։

Հոկտեմբեր

Տեղի է ունենում ՀՍԳՄ Վարչության նիստ։

Վարչությունը քննարկում է Գրողների Միության եռամսյա ծրագիրը, հաստատում «Գրական թերթ» և «Սովետական գրականություն և արվեստ» ամսագրի խմբագրական կոլեգիաներ։

Հոկտեմբերի 22-ին

Երևան է ժամանում Լիտվական ՍՍՌ Գրողների պատվիրակություն, որի մեջ մտնում են՝ Պետրաս Ցվիրկա, Ժոմանտաս-Վենուոլիս, Ալբինաս Ժուկաուսկաս, Իոզաս Պաաշկինսկաս-Պաուկշտելիս։

Հոկտեմբերի 27-ին

Գրողների Տանը կազմակերպվում է հանդիպում լիտվական ՍՍՌ գրողների հետ։

Բացման խոսք է ասում Ավ. Իսահակյանը։

Հայաստանի գրողների և արվեստի աշխատողների անունից ողջույնի խոսք է ասում Գ. Բորյանը։

Հանդես են գալիս՝ Պ. Ցվիրկան, Դ. Դեմիրճյանը, Ի. Պաաշկինսկաս-Պաուկշտելիսը, Ս. Տարոնցին, Աղավնին, Հ. Ղուկասյանը, Հ. Պողոսյանը, Ա. Գրաշին, Գ. Էմինը և Հ. Քոչարը։

Հոկտեմբերի 23-ին

Մոսկվայում հրավիրվում է Արվեստի Աշխատողների Պրոֆմիության Կենտկոմի պլենում։

Սովետական արվեստի վերականգնման և զարգացման 5-ամյա պլանի մասին զեկուցում է Մ. Խրապչենկոն։

Հոկտեմբեր

Տեղի է ունենում Լենինականի գրողների և արվեստի աշխատողների ժողով։

Հայաստանի Սովետական Գրողների 2-րդ համագումարի արդյունքների մասին զեկուցում է Ա. Հովսեփյանը:

Հոկտեմբերի 30-ին

Հրատարակվում է Ի. Վ. Ստալինի պատասխանը ամերիկյան Յունայտեդ Պրես գործակալության սրբագրիչ պ-րն Հյու Բեյլիի հարցերին:

Հոկտեմբեր

Տեղի է ունենում Վրաստանի Սովետական Գրողների Միության հոբելյանական սեկցիայի ժողով:

Հաշվետու զեկուցումով հանդես է գալիս Ռ. Ազաբաբը:

Մոքերի փոխանակությանը մասնակցում են՝ Ա. Կարինյանը, վ. Ատրյանը, Ծ. Թորգոմյանը, Ս. Ավչյանը և ուրիշները:

Ընտրվում է քարտուղարություն՝ Ռ. Ազաբաբ, վ. Ատրյան և Մ. Ասլանյան:

Նոյեմբերի 6-ին

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայի 29-րդ տարեդարձը:

Ընկեր Ա. Ա. Ժդանովի զեկուցումը Մոսկվայի Սովետի հանդիսավոր նիստում:

Ա. Ա. Ժդանովի զեկուցումից.

«Պատերազմի տարիներին մենք չէինք կարող, իրավունքյան բերումով, լիովին բավարարել սովետական ժողովրդի դաղափարական և կուլտուրական պահանջմունքները: Նրա դաղափարական և կուլտուրական մակարդակը աճել է: Այդ բոլորը հակասական պատմախանատվություն է դնում սովետական ինտելիգենցիայի այն ջոկատի վրա, որը կոչված է սպասարկելու ժողովրդի և պետության կարիքները՝ դաստիարակության, կուլտուրայի և արվեստի ասպարեզում:

Դուք դիտեք, որ պարտիայի Կենտրոնական Կոմիտեն վերջին ժամանակներս դաղափարազրկության և ապոլիտիկության անթույլատրելի փաստեր հայտաբերեց մեր գրականության և արվեստի մեջ: Մենք լավ դիտենք այդ դաղափարազրկության բնույթը: Դրանք կապիտալիզմի այն նույն մնացուկներն են մարդկանց գի-

տակցության մեջ, որ դեռևս հարկադրված ենք հաղթահարել և արմատախիլ անել Գաղափարական-քաղաքական աշխատանքի հարցերի վերաբերյալ Համկ(բ)Կ Կենտկոմի վերջին որոշումները նպատակ ունեն ուժեղացնելու բոլշևիկյան անհաշտությունը գաղափարախոսական ամեն տեսակ խեղաթյուրումների նկատմամբ և նոր, ավելի բարձր մակարդակի հասցնելու մեր սոցիալիստական կուլտուրայի բոլոր միջոցները՝ մամուլը, պրոպագանդան ու ագիտացիան, դիտությունը, գրականությունը և արվեստը»:

Նոյեմբեր

Գրողների Տանը կազմակերպվում է Սովետական Հայաստանի նվիրյալ հայ գրողների ստեղծագործություններին նվիրված երեկո:

Բացման խոսք է ասում Ավ. Իսահակյանը:

Զեկուցում է Գ. Բոյանը:

Ոգջույնի խոսք են ասում Սա. Զորյանը, Մ. Տարոնյանը:

Իրենց ստեղծագործություններով հանդես են գալիս Վ. Թաթևոսյանը, Գ. Գյուլյանը, Ա. Արմանը, Վ. Դաբրինյանը, Հ. Հրահատը, Հ. Գուկասյանը, Մ. Ալաջանյանը:

Նոյեմբերի 28-ին

Սպենդիարովի անվան Լենինի շքանշանակիր Օպերայի և Բալետի Պետական Թատրոնում տեղի է ունենում Աշխատավորների դեպուտատների Երևանի Քաղաքային Սովետի հանդիսավոր նիստը, նվիրված Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 26-րդ տարեդարձին:

Հանդիսավոր նիստը ոգջույնի նամակ է ուղղում ընկեր Ի. Վ. Ստալինին:

Ի. Վ. Ստալինին ուղղված ոգջույնի նամակից.

«Թանկագին ընկեր Ստալին

Հայաստանի աշխատավորները Հայրենական Մեծ Պատերազմը հաղթական կերպով ավարտվելուց հետո, հսկայական ոգևորությամբ ձեռնամուխ եղան ՍՍՌՄ ժողովրդական տնտեսությունը վերականգնելու և զարգացնելու աստիճանով, մեր երկրում կոմունիզմը կառուցելու գործում Ձեր հանճարեղ նախադծումները իրագործելուն:

Ստալինյան նոր հնգամյակը դարձավ մեր պայքարի ու աշխատանքի մարտական ծրագիրը:

Արդյունաբերական ձեռնարկություններն և նորակառույցները, բանվորները ու ինժեներները, կոլխոզնիկներն ու կոլխոզնիկուհիները, մեր Սովետական Հայաստանի ինտելիգենցիան, լայնորեն ծավալելով սոցիալիստական մրցությունը, ներդրում են իրենց բոլոր ուժերն ու միտքերը հնգամյա նոր պլանի առաջին տարվա խնդիրները կատարելու գործում:

Հայ ժողովրդի նկատմամբ Ձեր մշտական և անդուլ հոգատարության շնորհիվ իրականանում են օտար երկրներում թափառող մեր հայ եղբայրների դարավոր իղձերը, այն է՝ վերադառնալ հարազատ երկիրը և ակտիվ մասնակցություն ցույց տալ Սովետական Հայաստանի հետագա բարգավաճման գործին: Եվ այսօր կանգնելով արդյունաբերության, գյուղատնտեսության առաջավոր կանանց, գիտության ու կուլտուրայի աշխատողների շարքերում, արտասահմանից իրենց սիրելի հայրենիքը վերադարձած տասնյակ հազարավոր նոր սովետական քաղաքացիներ առաջին անգամ իրենց նախնիների հողում տոնում են Հայաստանում սովետական իշխանության հաստատվելու վաստակած տարեդարձը»:

ՀԱՄԱՌՈՏ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

Ձափածո

1. Ս. Տարոնցի.— Դավթի երգը, Հայպետհրատ, Երևան:
2. Հ. Շիրազ.— Լիրիկա, Հայպետհրատ, Երևան:
3. Գ. Բորյան.— Մազկնփռնջ, Հայպետհրատ, Երևան:
4. Ա. Գրաշի.— Իմ գարունը, Հայպետհրատ, Երևան:
5. Ս. Կապուտիկյան.— Օրերի հետ, Հայպետհրատ, Երևան:
6. Գ. Էմին.— Նորք, Հայպետհրատ, Երևան:
7. Արմ. Կոթիկյան.— Խոսքեցի Հովնան, Հայպետհրատ, Երևան:
8. Ս. Մարգարյան.— Ջնծաղիկներ, Հայպետհրատ, Երևան:
9. Գ. Հայրյան.— Իմ երգը, Հայպետհրատ, Երևան:
10. Մ. Նարյան.— Կոմիտաս, Հայպետհրատ, Երևան:
11. Միք. Հարությունյան.— Հարսնաքար, Հայպետհրատ, Երևան:

Արձակ

1. Դ. Դեմիրճյան.— Վարդանանք, 2-րդ հատ., Հայպետհրատ, Երևան։
2. Դ. Դեմիրճյան.— Երկեր, 1-ին հատ., Հայպետհրատ, Երևան։
3. Արազի.— Ընտիր երկեր, Հայպետհրատ, Երևան։
4. Հմ. Սիրաս.— Հայր և որդի, Հայպետհրատ, Երևան։
5. Հր. Քոչար.— Սրբազան ուխտ, Հայպետհրատ, Երևան։
6. Մ. Դավթյան.— Վերադարձ, Ազերնեշր, Բաքու։
7. Ք. Թափալցյան.— Պատերազմ, Ա. հատ., Հայպետհրատ, Երևան։
8. Վ. Անանյան.— Մարտի դաշտերում, Հայպետհրատ, Երևան։
9. Գ. Բես.— Հարազատներ, Հայպետհրատ, Երևան։
10. Բ. Ստաֆֆի.— Վեննական անտառի հեքիաթները, Հայպետհրատ, Երևան։
11. Գ. Հովնան.— Նովելներ, Հայպետհրատ, Երևան։
12. Տ. Հախումյան.— Երկու ամիս ռազմաճակատում, Հայպետհրատ, Երևան։
13. Նոր-Այր.— Հյուրանոցի աղջիկը, Հայպետհրատ, Երևան։
14. Ջ. Դարյան.— Պատմվածքներ, Հայպետհրատ, Երևան։
15. Վ. Բեքարյան.— Սուտ հարսը, Հայպետհրատ, Երևան։
16. Արաքսման.— Գյազբել լեռան գաղտնիքը, Հայպետհրատ, Երևան։
17. Բ. Սեյրանյան.— Ծիրանաքար, Հայպետհրատ, Երևան։
18. Ա. Սահինյան.— Խաշուշիներ, Հայպետհրատ, Երևան։

Գրականության պատմություն, տեսություն և քննադատություն

1. Խ. Սարգսյան.— Հայրենական Պատերազմը և գրականությունը, Հայպետհրատ, Երևան։
2. Խ. Սարգսյան.— Մ. Աբեղյանը և հայ հին գրականության պատմությունը, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երևան։
3. Գ. Հովնան.— Մաքսիմ Գորկին և հայ կուլտուրան, Հայպետհրատ, Երևան։
4. Ս. Ոսկերչյան.— Կովկասի հերոսական կերպարը ռուս գրականության մեջ, Հայպետհրատ, Երևան։

5. Ա. Մակարյան.— Մ. Նալբանդյանը և արևմտահայ դեմոկրատիան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ., Երևան։
6. Ն. Թումանյան.— Հովհաննես Թումանյանի մանկությունը, Պետհրատ, Երևան։

Թարգմաեություններ

1. Վ. Շեքսպիր.— Կոմեդիաներ, Հայպետհրատ, Երևան։
2. Գյոթե.— Բանաստեղծություններ, Հայպետհրատ, Երևան։
3. Հոնորե դը Բալզակ.— Պատմվածքներ, Հայպետհրատ, Երևան։
4. Վ. Հյուգո.— Թշվառներ, 2-րդ մաս, Հայպետհրատ, Երևան։
5. Ան. Ֆրանս.— Կարմիր շուշան, Հայպետհրատ, Երևան։
6. Ռ. Ռոլան.— Ժան Քրիստոֆ, 4-րդ գիրք, Հայպետհրատ, Երևան։
7. Ջեկ Լոնդոն.— Սպիտակ ժանիք, Հայպետհրատ, Երևան։
8. Անդերսեն.— Հեքիաթներ, Հայպետհրատ, Երևան։
9. Ա. Դոդե.— Պատիկը, Հայպետհրատ, Երևան։
10. Ալ. Տոլստոյ.— Տառապանքի ուղիներով, Հայպետհրատ, Երևան։
11. Վ. Գրոսման.— Ստալինգրադ, Հայպետհրատ, Երևան։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I

Էջ

Ինստիտուտի կողմից 7

Ա. Ասատրյան.—Սովետահայ գրականության պատմության պարբերացման (պերիոդիզացիայի) հարցի շուրջը 9

Էդ. Թոփչյան.—Սոցիալիստական ռեալիզմի պրոբլեմների շուրջը . . 99

Ս. Հարությունյան.—Գրական հերոսի կերպարը սովետական գրականության մեջ 131

Հ. Գյուլիբեկյան.—Դասիկ ժառանգությունը և սովետական հայ գրականությունը 161

Ա. Կարինյան.—Ռուս գրականության նշանակությունը սովետահայ գրականության համար 203

II

Սովետահայ գրականության ժամանակագրությունը (1920—1946) . 247

СОДЕРЖАНИЕ

I

От института 7

Ас. Асатрян.—Вопросы периодизации советской армянской литературы 9

Эд. Топчян.—Проблемы социалистического реализма, . . . 99

С. Арутюнян.—Образ положительного героя в советской литературе. 131

А. Гюликевхян.—Наследие классиков и советская армянск-литература 161

А. Каринян.—Значение русской литературы для советской армянской литературы 203

II

Хроника советской армянской литературы (1920—1946) . . 247

Տեխնիկական խմբագիր՝ Մ. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ՝ Ա. ԱՐՋԱՔԱՆՅԱՆ
Կոճտող սրբագրիչ՝ Ս. ՇԱՀԲԱԶՅԱՆ

Հանձնված է արտադրության 10/IX 1947 թ., ստորագրված է տպագրության 12/XI 1947 թ. ՎՖ 02612, հրատ. 460, պատվ. 688, տիրաժ 1000. տպագր. 10 մամուլ, մեկ մամուլում 36,500 տպ. նիշ։

Հայկական ՍՍՌ ԳԱ տպարան, Երևան, Աբովյան 104

Գինը 30 Ռ.

[Յոհ]

A II 77548